995

1929

9(47)
Ф-78

1929

Մ. ՊՈԿՐՈՎՍԿԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

XIX ՅԵՎ XX Դ. Դ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

Դասախոսություններ՝ կարդացված Համ. Կ. (բ) Կ. Գավկոմների քարտուղարների դասընթացներում 1923/24 թ. ձմռանը

2004

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.– ՅԵՐԵՎԱՆ. 1929

Գ-78

Մ. ՊՈԿՐՈՎՍԿԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
XIX ԵՎ XX Դ. Դ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

Դասախոսություններ՝ կարդացված Համ. Կ. (բ) Կ. Գավկոմների քարտուղարների դասընթացներում 1923/24 թ. ձմռանը

454 – 5/XII 38

288

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ 1929

38592 ա.

Հր. № 956։ Գրաւեպվար № 1798 (բ)։ Տիրաժ 3000։
Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում։
Պատվեր № 64։

21956-609

ԱՌԱՋԱԲԱՆ

Գրի առնվող պատմությունը յերբեք այնքան յետ չեր մնում այն պատմությունից, վոր կատարվում եր։ «Համառոտ ուրվագծեր»-ի III մասը, վոր վորոշ ընդհատումներով 1921—1923 թ. թ. ընթացքում ե գրվել յեվ կես տարի առաջ ե լույս տեսել, արդեն կարիք ունի մի շարք ուղղումների յեվ լրացումների. միքանի բան ընթերցողները կգտնեն ստորեվ։ Ել ավելի վատ դրության մեջ են «չորս հատորները»։

Յես հիմք չունեմ ներկա գրքի համար, վորպես ամբողջություն՝ ամաչելու։ Այնուամենայնիվ դա ռուսաց պատմության առաջին մարքսիստական դասընթացքն ե, վոր լույս ե տեսել, յեվ դեռ հայտնի չե, թե յերբ լույս կտեսնի նորը՝ նույն ժամանակագրական ծավալով։ Սակայն յեթե XVI—XVIII դարերի համար, վորի մասին յես ձեռքի տակ ունեյի միանգամայն բյուրեղացած, թեպետ յեվ վոչ լրիվ նյութ, ստիպված եյի միայն մասնակի լրացումներ յեվ փոփոխություններ անել, ապա XIX-րդ դարի համար հնացել ե այնպիսի մի բաժնի ամբողջ կոնստրուկցիան, ինչպիսին հեղափոխական շարժումն ե։

Յեռակի գրաքննությամբ շղթայված՝ հեղինակի (վորը գրելու պրոցեսում վոչ մի րոպե չեր մոռանում «հոդվածների» մասին), հրատարակության և ցարական ցենզուրի (վոչ վոքի համար գաղտնիք չե, վոր վերջինները չեյին հրաժարվում գիրքը «մասնավոր» կարգով քննելուց՝ «պաշտոնական» դժվարություններից խուսափելու համար — դա այն ժամանակվա հրատարակությունների կալկուլյացիայի մեջ եր մտնում)՝ — գիրքը «դատի տրվեց» արդեն խիստ աղավաղված ձևով։ Սենատի վոչնչացրած բնագրի վերականգնումը չեր կարող արդեն վերականգնել հեղինակի մտադրությունը, վորովհետեվ այդ մտադրությունը զանազան սենատներից առաջ արդեն կիսով չափ խեղդված եր։ Ինքը մտադրությունն արդեն չափազանց անկատար եր. այն փոխհարաբերությունները վոր հիմա հեղինակը միանգամայն ցայտուն յեվ պարզ ե պատկերացնում, այն ժամանակ դեռ յեվս անուրջային եյին նրա համար։ Սրան պիտի ավելացնել յեվ այն, վոր նա՝ արդեն վոչ իր վտարված դրության հետեվանքով՝ ձեռքի տակ չուներ այն փաստական մատերիալի կեսն անգամ, վորը մենք ունենք հիմա, 1924 թվին։

IV հատորի համապատասխան գլուխները պետք եր ուղղակի արտագրել։ Սակայն հեղինակը ժամանակ չունի նոր գրքեր անգամ գրելու, ուր մնաց՝ թե հինը վերակազմելու։ Մնում ե դիմել փոխանյութի յեվ հրատարակել այն դասախոսությունները, վորոնք կարդացվել են 1923—24 թ. թ. ձմռանը։ Նրանցում հաշվի յե առնված յեթե վոչ ամբողջ, ապա կուտակված մատերիալի մեծագույն մասը յեվ «չորս հատոր»-ի հեղինակի այժմյան տեսակետն են արտացոլում։

Դուք հասկանում եք, իհարկե, որ Բրյուսսել՝ Անտանտայի յերկրորդ մայրաքաղաքը (առաջինը կոնտինենտի վրա Փարիզն է, յերկրորդը՝ Բրյուսսել) կոմունիստներին չեյին թողնի. այնտեղ վոչ մի կոմունիստ չի յեղել, բայց և այնպես համալսարանական պրոֆեսորներն այնտեղ զեկուցումներ եյին անում միանգամայն պատմական-մատերիալիստական վոգով։ Այսպես, մի պրոֆեսոր, վորը զեկուցում եր, այսպես կոչված, գիտությունների և գեղարվեստների վերածնության մասին, կլասիկական հնության վերածնության մասին միջին դարերի վերջին, այդ յերևույթն առևտրական կապիտալի վերածնությունով բացատրեց։ Մի բացատրություն, վորը ինձ համար, Ռուսաստանի պատմության մեջ առևտրական կապիտալի դերը կարելի յե ասել հայտնաբերող մի մարդու համար, հատկապես, իհարկե, հաճելի յեր։ Նա խոսում եր վոչ թե Ռուսաստանի, այլ Յեվրոպայի մասին։

Մի այլ որինակ, թե ինչպես են նրանք գլուխ ջարդում մեր կողմից արդեն բացված դռները բանալու համար, դա նույն կոնգրեսում զարգացում ստացած այն գաղափարն է, վոր ֆրանսիական հեղափոխության ժամանակների ժիրոնդիստները (վորոնց մասին դուք, իհարկե, լավ գիտեք) դասակարգային կուսակցություն եյին։ Մեզ համար այդ, իհարկե, նորություն չե, դա վաղուց են սահմանել Կունովն ու Կաուտսկին իրենց լավ տարիներին, բայց հետաքրքիրն այն է, վոր բուրժուական պրոֆեսորն անհրաժեշտ համարեց համաշխարհային կոնգրեսին հրամցնել մեզ համար շատ հին, իսկ նրանց համար ըստ ամենայնի թարմ ճշմարտություն, վոր ժիրոնդիստները կուսակցություն եյին, վորոնք հետապնդում եյին վորոշ դասակարգի շահեր, ինչպես նա յե բնորոշում՝ բուրժուազիայի շահերը (դա, ինչպես գիտեք, մեր կադետների նման մի բան եր)։

Որեցոր ավելացող այս բոլոր որինակները ցույց են տալիս, վոր պատմությունը հասկանալու այլ ուղի, բացի մեր հին մատերիալիստական և դիալեկտիկական մեթոդից, գոյություն չունի և վոր ներկայումս բուրժուական պրոֆեսուրայի լայն շրջաններն ակամայից յուրացնում են այդ։ Յեվ ահա այս տեսակետից, կրկնում եմ, պետք է քննել անցյալը՝ ժամանակակից կյանքից մեկնելով։ Դա և՛ հանգստացնում է մեր ընթերցողներին, վորոնք այնպես վախենում են, վոր մենք ակադեմիականանում ենք և ժամանակակից կյանքից կհեռանանք, և՛ միևնույն ժամանակ վորոշ չափով արդարացնում է իմ դասընթացքի այն մասամբ հնացած պլանը, վորի մասին յես ասացի։

Նախ և առաջ՝ արդիականության մասին։ Ի՞նչն է կազմում, իրոք, ռուսական ամբողջ հեղափոխական շարժման առանցքը։ Մեր բանվորական հեղափոխությունը, ինչպես այդ հայտնի յե բոլորիս և ինչպես կբացատրի Հոկտեմբերյան հեղափոխության դասընթացքի ձեր դասատուն, համաշխարհային յերևույթ է։ Դա ազգային հեղափոխություն չե, վորը կարելի յե նեղ շրջանակներով բացատրել, վորը բղխում է բացառապես ռուսական պայմաններից, Ռուսաստանի տեղական և ժամանակավոր պայմաններից։ Իմպերիալիստական պատերազմը միայն վորոշեց պայթյունի ժամանակը։ Այդ պայմանների հետևանքով Ռուսաստանում ավելի շուտ պայթեց և բռնկեց, քան այլ յերկրներում, և ուրիշ վոչինչ, բայց ինքն ըստ ինքյան Ռուսաստանի բանվորական հեղափոխությունը համաշխարհային բանվորական հեղափոխության մի մասն եր միայն, միջազգային բանվորական շարժման մի

միջադեպը, և այն այս կապակցությամբ միայն կարելի յե հասկանալ։ Այսպիսով, յեթե ռուսական հեղափոխության ազգային արմատները վորոնելու լինենք, մենք ստիպված կլինենք վոչ թե բանվորական հեղափոխությունը վերցնել, վորը, կրկնում եմ, միջազգային և վոչ թե ազգային փաստ է, այլ պետք է վերցնենք գյուղացիական հեղափոխությունը, պետք է վերցնենք հողի անցումը գյուղացիներին։ Հողի այս անցումը գյուղացիների ձեռքը հեղափոխության միակ հետևանքն է, վորի հետ արդեն հաշտվել է բուրժուազիան։ Հենց յերեկ յես կարդացի Իզգոյեվի հոդվածը, վորի մեջ նա ասում է, վոր Ռուսաստանում ինչ ռեակցիա յել պատահի, բայց հողը գյուղացիների ձեռքն անցնելու հետ ստիպված պիտի լինենք հաշտվել։ Այդ այն է, ինչ արդեն մտել է ռուսական հասարակության յերկաթե ինվենտարը. հողը գյուղացիներից յետ չես խլի այլևս։ Սրա հետ Իզգոյեվը համաձայնվում է հաշտվել, մեկ էլ քաղաքացիական այն հավասարության հետ, վորը բերեց հեղափոխությունը՝ ամեն տեսակի դասերը վերացնելով. այդ չես կարող արմատահան անել, չես կարող և վոչ մի ֆաշիստական յերկաթով այրել, սրա հետ ստիպված ես հաշտվել։ Այս փաստը, վորը մեր բուրժուազիան էլ համաձայն է ընդունել՝ հողը գյուղացիների ձեռքն անցնելու փաստը՝ մեր ազգային ռուսական հեղափոխության առանցքն է նրանով, վոր նա վոչ թե համաշխարհային շարժման մի միջադեպն է, այլ հատուկ, ռուսական յերևույթ է։ Վ՞որն է այդ անցման նպատակը։ Ընկեր Լենինը վաղուց ամենայն վորոշակիությամբ սահմանել է, թե վորն է այդ անցման նպատակը։ Իմաստն այն է,—ասում է նա,—վոր Ռուսաստանում կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ կարող է զարգանալ միայն հենվելով առաջին հերթին յուրահատուկ ռուսական ֆերմերության, ռուսական մանր գյուղական արտադրության վրա։ Մինչև վոր գյուղացին այդպիսի մանր գյուղական արտադրող չդառնա, Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման համար տեղական պայմաններում հող չի լինի։ Մեր կապիտալիզմը միշտ էլ վորոշ չափով դրսից բերված յերևույթ կլինի։ Այսպիսով, հող ստացած գյուղացին, ըստ Լենինի, ռուսական կապիտալիզմի բազան է։

Այսպես եր դնում նա հարցը 1905—07 թ. թ.՝ չկասկածելով, վոր 10 տարուց հետո մեր կապիտալիզմն արդեն կփտի և վոր կարիք կզգացվի յուրահատուկ կոմպրոմիս սահմանել մի կողմից պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական տնտեսության և մյուս կողմից այդ մուժիկական (գյուղացիական) կապիտալիզմի միջև։ Յերկար չեմ խոսի այդ կապիտալիզմի մասին, վորը, ինքներդ կհամաձայնվեք ինձ հետ, նույնպես ամենամեծ իրականություն է, մի իրականություն, վորով մենք շրջապատված ենք և վորն ամեն կողմից ճնշում է մեզ։

Կանգ չենք առնի այս կոմպրոմիսի վրա։ Սակայն այս փաստը՝ ռուս գյուղացու ձգտումը մանր, ինքնուրույն արտադրող դառնալ՝ սա՞ ինչ բան է։ Դա ռուսական ամբողջ ագրարային պատմության առանցքն է, սկսած թեկուզ XVI դարից, յեթե վոչ ավելի շուտ։ 300 տարվա ընթացքում մանր գյուղացիական տնտեսությունը պայքարում եր ընդդեմ խոշոր կալվածատիրականի, պայքարում եր հանուն իր գոյության իրավունքի։

Ինքը՝ XVI դարի ճորտատիրական իրավունքը՝ յերբեք էլ չի առաջացել թափառական գյուղացիներին հողին ամրացնելու միջոցով, ինչպես դուք այդ կարող եք կարդալ Կլյուչևսկու դասընթացքի եջերում։ Վաղուց ստեղծ-

ված այս առասպելը վաղուց ել արդեն կործանվել ե վոչ միայն մարքսիստների, այլև բուրժուական պատմաբանների կողմից։ Այն մերկացրել ե Ն. Ա. Ռոժկովը, իսկ նրա հետքերով գնաց զուտ բուրժուական պատմաբան, կադետ Պավլով-Սիլվանսկին, վորն իր «Ֆեոդալիզմը հին Ռուսաստանում» գրքում հերքում ե այն առասպելը, թե, իբր թե XVI դարի ռուս գյուղացիները կալվածատիրական հողերի մի ինչ-վոր թափառական և հողազուրկ կապալառուներ են յեղել։ Առասպելը հորինվել եր, հավանական ե, XIX դարի կեսերին, վորպեսզի պատմականորեն արդարացվի այն թալանը, վոր կատարեցին կալվածատերերը գյուղացիների նկատմամբ, վորը յերկար ժամանակ «փետրվար 19-ի մեծ բարենորոգություն» անունն եր կրում։

Բացատրելու համար, թե ինչու կալվածատերն իրավունք ուներ գյուղացիներից նրանց հողերի խղճուկ մնացորդները խլելու, պետք եր մի տեսություն առաջադրվեր, թե հողը հնուց անտի աղալարական ե, իսկ գյուղացիները միայն կապալով եյին վերցնում այդ հողը։ Այն ինչ իրականում, ինչպես այդ մոտ 20 տարի առաջ ապացուցեց Ռոժկովը, XVI դարի մեր խոշոր և միջակ կալվածատիրական հողատիրությունն առաջացել ե մանր ազատ գյուղացիական հողային սեփականության փլատակների վրա, վորի հետքերն այն ժամանակվա ձեռագրերում ինչքան ուզենք կարող ենք գտնել, կգտնենք մահացման վիճակում, բայց վոչ այնքան ել բնական մահով։ Կալվածատերերի մի շարք ճորտատիրական իրավահասկացողության տեսակետից կամայական գործողությունները հանգում եյին նրան, վոր գյուղացիական սեփականությունը շարունակ պակասում եր, կալվածատերը խլում եր գյուղացու հողը և խանգարում նրան իր տնտեսությունը վարելու, իսկ գյուղացին ուզում եր ունենալ իր տնտեսությունը։

Այս ֆոնի վրա ծավալվում են մի շարք գյուղացիական հեղափոխություններ՝ խառնակ ժամանակները, Խմելնիցկու հեղափոխությունն Ուկրայնայում, Ստենկա Ռազինի ապստամբությունը և, վերջապես, Պուգաչովի խռովությունը XVIII դարի վերջերին։

Այս բոլորը գյուղացու վճռական պայքարն եր ինքնուրույն մանր տնտեսության տեր լինելու իրավունքի համար, իսկ կալվածատերը շարունակ նրան քշում եր մանր տնտեսության տեր լինելու վիճակից դեպի նադել (հողաբաժին) ունեցող բատրակի վիճակը, քշում եր գյուղացիական տնտեսությունը դեպի զուտ-սպառողական դիրքերը, վորն այնքան բնական եր թվում մեր եսերներին և նրանց հետ Պ. Պ. Մասլովին, վորը գտնում եր, վոր դա ինքնաբավական և հետագա բացատրությունների կարիք չզգացող մի փաստ ե, մինչդեռ դա հարատև հսկայական պայքարի հետևանք եր։ «Մեծ բարենորոգումից» հետո միայն կալվածատիրոջը վերջնականապես հաջողվեց գյուղացուն թեքել դեպի այդ սպառողական դիրքը, յերբ գյուղացին շուկայի համար հացի մանր արտադրողի դերից ստիպված եր մի այնպիսի մարդ դառնալ, վորը միայն կալվածատիրական հողի վրա շուկայի համար հաց ե արտադրում։ Այնտեղ ե միայն նա հավելյալ պրոդուկտ արտադրում, իսկ իր հողից նա այդ պրոդուկտը չի ստանում։ Սա միանգամայն անբնական յերևույթ եր, և գյուղացիները դրա հետ յերբեք չեյին հաշտվում։ 1905 թիվը հիշեցրեց, վոր մանր արտադրողի բնազդները շատ խորն են նստած գյուղացիության մեջ։ XX դարի սկզբին գյուղացու մեջ նորից հողի նույն ագահությունը բռնկվեց, նորից նա կալվածատիրոջ դեմ դուրս յեկավ և այս

անգամ՝ օգտվելով այն բանից, վոր յերկրում բանվորական շարժում եր տեղի ունենում, ավելի մեծ հաջողությամբ դուրս յեկավ, քան առաջ։ 1917 թվին նա իր ուզածին հասավ. պորտաբույծ-կալվածատերը ջախջախվեց, կալվածատիրական հողերը գյուղացիներին անցան, և ռուսական նատուրալ տեղական մուժիկային կապիտալիզմի այն բաղան, վորի մասին խոսում եր ընկ. Լենինը 1905—6 թվին, վերջապես գտնվեց։

Ինչպես տեսնում եք, ընկերներ, սա արդիականություն ե, այնքան արդիականություն, վոր մենք՝ կուսակցականներս ստիպված ենք ամեն որ այնպիսի հարցեր լուծել, վորոնք կապված են այն փաստի հետ, վոր գյուղացին ներկայումս ռուսական կապիտալիզմի յուրահատուկ սաղմնավորումն ե։ Մենք պետք ե մարզանքի, վարժեցման յենթարկենք այդ կապիտալիզմը, մտցնենք այն պետական կապիտալիզմի շրջանակների մեջ և համադրենք այն պրոլետարական դիկտատուրային։ Այս բոլորն ամենաարդիականն ե, և դրանից ե կախված մեր ամբողջ ապագան։ Կհաջողվի մեզ այդ կապիտալիզմի արմատները մեր ձեռքում պահել,—մենք 20 տարով առաջ կշարժվենք դեպի սոցիալիստական տնտեսության կազմակերպումը. չի հաջողվի՝ մուժիկային կապիտալիզմն ավելի ուժեղ դուրս կգա, կհաղթի մեզ,—և Ռուսաստանում անխուսափելիորեն մասնավոր-տնտեսական հարաբերությունների ռեստավրացիա տեղի կունենա իր բոլոր հատկանիշներով, սրբազան սեփականությամբ և այլն, ինչ գոյություն ունի արևմտա-յեվրոպական յերկրներում։ Իսկ այս փաստի արմատները մինչև XVI դարն են հասնում։

Ահա ձեզ մի օրինակ, վոր արդիականությունը տեսողությունից չկորցնել բոլորովին ել չի նշանակում միայն նրանով զբաղվել, ինչ այսոր ե կատարվում, կամ ինչ յերեկ եր կատարվում։ Այդ պատճառով թեպետ և հնացել ե իմ ծրագիրը, վորովհետև հիմա յես այս ծրագրով չեմ կարդում, այլ ուրիշ ծրագրով, և թեպետ, ինարկե, փաստերի հետ ծանոթանալու տեսակետից ձեզ համար ավելի հետաքրքիր ե այն, ինչ XX դարում եր կատարվում, քան այն, ինչ XIX, առավել ևս XVI դարումն եր կատարվում, այնուամենայնիվ արդիականությունը հասկանալու համար մենք ստիպված ենք խորը թափանցել անցյալը։ Յեթե տվյալ դեպքում մենք բավականանում ենք XIX դարով, դա պարզապես նրանով ե բացատրվում, վոր մենք շատ ժամանակ չունենք և վոր, կրկնում եմ, մեզ՝ կուսաշխատողներիս համար կարևոր ե մոտիկ անցյալի՝ XIX դարի վերջերի և XX դարի սկզբների փաստերին ծանոթանալ. իսկ դրա համար ժամանակ ե հարկավոր, ժամանակը պետք ե տնտեսել։ Այդ պատճառով, վորպես յելակետ մենք կվերցնենք դեկաբրիստների հեղափոխությունը, այսինքն այն մոմենտը, յերբ հենց այն առանցքը, վորի մասին յես ձեզ ասացի, սկսվում ե արտահայտվել։ Ինչպես տեսնում եք, դեկաբրիստներն ել չեյին կարողանում այդ արդիականությունից հեռանալ, նրանց համար ել գյուղացիական և հողային հարցն ամբողջ պատկերի կենտրոնումն եր։ Դա դեռ քիչ ե. վորքան ավելի անհանգիստ եր այդ արդիականությունը, այնքան ավելի մեծ դեր եր խաղում նրանց ծրագրերում և պլաններում ագրարային հարցը. վորքան նա ավելի հանգիստ եր, այնքան այս հարցն ավելի յերկրորդական տեղ եր բռնում։ Դեկաբրիստների ամենահիմնական իդեոլոգներն ամենից շատ ուշադրություն եյին դարձնում հենց գյուղացիական հարցին, հողի և ճորտատիրական իրավունքի հարցին։ Տուրգենևը «Հյուսիսային ընկերության» և Պեստելը «Հարավային

ընկերության» մեջ՝ այդ ամենալուրջ և խորաթափանց մարդիկ, գլխավորապես և գրեթե բացառապես դրանով եյին զբաղվում, և վորքան վոր այդ առանցքն արտացոլվում եր ծրագրներում և պլաններում, նրանք արդեն գիտակցության եյին հասնում և սկսում եյին արտահայտվել։ Սրանումն ե XIX դարի առաջին քառորդի հեղափոխական շարժման նշանակությունը։

Հեղափոխական այս շարժումը հասկանալու համար, ինչպես ընդհանրապես XIX դարում տեղի ունեցող յուրաքանչյուր պայքար, մենք պետք ե վորոշ չափով լարենք մեր յերևակայությունը։ Կարծում եմ, վոր XVI դարը 1917 թվի հետ կապելու, գյուղացիների ճորտացումը ժողովրդական կոմիսարների Խորհրդի հողային դեկրետի հետ կապելու համար դուք յերևի կարիք զգացեք ձեր յերևակայությունը լարելու։ Հիմա ավելի շատ հարկավոր կլինի այդ անելու։ Բանը նրանումն ե, վոր XIX դարի հեղափոխական շարժման մասին մենք բավականին ընդարձակ գրականություն ունենք, վոր ժառանգություն ե մնացել մեզ բուրժուական պատմաբաններից։ Բուրժուական կամ ինտելիգենտական այս պատմաբանները (իհարկե, նրանք բուրժուական են, վորովհետև ինտելիգենցիան, վորպես առանձին դասակարգ, գոյություն չունի, բայց և այնպես, ինչպես կտեսնենք, ինտելիգենցիայի առանձնահատկություններն անդրադառնում եյին այդ պրոցեսի վրա) բնականաբար պատմական այդ պրոցեսին նայում եյին, ինչպես առհասարակ նայում են դրան ինտելիգենտները՝ անհատական տեսակետից։

XIX դարի այդ հեղափոխական շարժումը նրանց ազատության պայքար եր թվում. Այն փաստը, վոր մեզ համար միանգամայն հասկանալի և պարզ ե, վոր ազատությունն ինքնանպատակ չե, այլ վոր նա միջոց ե բարձրագույն նպատակներն իրացնելու, սոցիալիզմին անցնելու համար, այս փաստ ե, թեև XIX դարի յերկրորդ կեսին բուրժուազիան գիտեր սոցիալիզմի մասին և շատ, բավականին շատ, նույնիսկ չափազանց շատ եր խոսում նրա մասին, այս փաստը բուրժուազիայի տեսողությունից վրիպում եր։ Նրան թվում եր, վոր հանուն ազատության ինքնակալության դեմ մղվող պայքարն ինքնանպատակ ե։ Ինչով ե վորոշվում այդ ինքնանպատակը։ Բնական ե, վոր ազատության ձգտումը մարդու մեջ բնածին ե։ Դա պարզ ե։ Դա բուրժուազիայի պատմական հասկացողության հայտնի, յեթե կուզեք, կենսաբանական արմատն ե։ Մարդ ուզում ե ազատվել։ Վոր ազատության այդ ձգտումը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ տասը հայելիների միջոցով այդ նույն մանր արտադրողի ինքնուրույնության ձգտում, վորի մասին յես խոսում եյի Ռուսաստանի նկատմամբ, վորպես գյուղատնտեսական արտադրողի, վորպես գյուղացու մասին,—սակայն արտադրող արդյունաբերության ասպարեզում այդպիսի մանր մշակող նաև արհեստավորն ե,—վոր մանր արտադրողի ազատության ձգտումը, վորին խեղդում ե խոշոր սեփականատերը գյուղում, խոշոր կապիտալը քաղաքում, վոր դա յեր ընկած ազատության այդ ազնիվ ձգտման հիմքում,—դրա հետ, իհարկե, բուրժուազիան և նրա անունից խոսող ինտելիգենցիան չեյին համաձայնվում։ Դա այնքան ել պարզ բան չե, նրանք։ Նրանց բացատրությունն իրենց ավելի բարդ, ավելի գիտական եր թվում։ Յեվ ահա այս հողի վրա ստեղծվում ե ռուսական հեղափոխության իսկական առասպելը։ Պայքար ե սկսվում, ազատությունը գիտակցած և ազատության ձգտող մարդկանց պայքարն այն մարդկանց դեմ, ովքեր նրանց ճնշում են, ովքեր խլում են նրանց ազատությունը,

այսինքն՝ նախ և առաջ ինքնակալության դեմ։ Վորովհետև քաղաքական ասպարեզում ազատությունն այն ժամանակ բացակայում եր վոչ միայն բուրժուազիայի և բուրժուական ինտելիգենցիայի համար, այլև քաղաքացիական ասպարեզում գյուղացիների համար (գյուղացին ճորտ եր), ապա միանգամայն բնական եր ինքնակալությունը, քաղաքական վերին խավը ճորտատիրության, ճորտատիրական իրավունքի հետ կապելը։ Այստեղից ե առաջ գալիս ճորտատիրական պետություն տերմինը, վորը դուք կհանդիպեք թե ինձ մոտ և թե ընդհանրապես մեր գրականության մեջ։ Դա այն դաղանն ե, վորի դեմ պայքարում եյին ազատության ձգտող մարդիկ, այդ դաղանը ճորտատիրական իրավունքն եր՝ ինքնակալությամբ պսակված։ XIX դարի կեսերին ազատության մարտիկները ջարդեցին այդ հրեշի մի մասը, նրա վոտները, այսպես ասած, կոտրեցին, ձեռք բերին 1861 թվի փետրվարի 19-ին գյուղացիների ազատագրումը, իսկ հետո աշխատեցին գլխին հարվածելով վերջնականապես սպանել այդ հրեշը։ Դրան ե նվիրված XIX դարի յերկրորդ կեսը և XX դարի սկիզբը։ Վերջապես ինքնակալությունը տապալվեց 1917 թվի փետրվարին։ Բուրժուազիան և, մանավանդ, նրա անունից խոսող ինտելիգենցիան, վորը հույս ուներ ազատության աստվածային թագավորությունը թևակոխել, ամբողջ թափով հարձակվեցին պրոլետարական դիկտատուրայի վրա։ Նրանց կողմից այդ այն աստիճանի հաշվի չեր առնված, այն աստիճանի տարորինակ, անհեթեթ և վայրի յեր նրանց համար, վոր նրանք վոռնացին, ինչպես գիտեք, վայնասուն բարձրացրին, հրաժարվեցին այդ հեղափոխությունից, հայտարարեցին, վոր նա «իսկական չե»։ Յեվ միայն այժմ են համաձայնվում ճանաչել, ինչպես ասացի, նրա վորոշ հետևանքները. հողի անցումը գյուղացիներին և քաղաքացիական հավասարությունը։ Նրանք դրանից այն կողմը չեն գնում։ Ինչ վերաբերում ե ազատությանը, այստեղ նրանք այնպիսի հուսահատության մեջ ընկան, գերմանական արտահայտությամբ՝ այնպիսի մի խոր «կատցեն՛յամմեր»-ի մեջ, վոր համաձայն են հաշտվել անգամ Ալեքսանդր III-ի ռեժիմի հետ։ Նրանցից մեկը գրել ե, վոր ամենալավը, ինչ կարելի յե սպասել, դա Ալեքսանդր III-ի ռեժիմի վերականգնումն ե։

Սակայն թողնենք նրանց և իրենց իմաստակությունները։ 1917 թվի այդ միջադեպը, յերբ ինտելիգենցիան, ազատության ձգտելով, հանկարծ պրոլետարական դիկտատուրայի մեջ ընկավ, դա շատ դաժան միջադեպ ե վոչ միայն իրեն ինտելիգենցիայի համար, այլև պատմական այն կապակցության համար, վորի մասին յես խոսեցի։ Տասնամյակներով պայքարում եյին ազատության համար, բայց վերջիվերջո, բոլորովին ել ազատություն չստացվեց, այլ մի ինչ-վոր ուրիշ բան։ Սակայն յուրաքանչյուր անաչառ պատմաբանի համար 1917 թվի դեպքերի լույսի տակ սկսում են պարզորոշ կերպով յերևալ այն սպիտակ թելերը, վորոնցով կարված եր այդ ամբողջ կոնցեպցիան։ Իրոք, ցարը կալվածատերերի ցարն ե, ճորտատիրական պետության թագադրված վերնաշերտը, վորը հնարավոր ե միայն ճորտատիրական իրավունքի ժամանակ։ Ապա ինչով են բացատրում բուրժուական պատմաբաններն այն փաստը, վոր ցարը միշտ կալվածատիրոջ ոգտին չեր գործում։ Չե՞ վոր այնուամենայնիվ ցարն ազատագրեց գյուղացիներին. ինչքան ել վոր այդ դեպքերը չեյին պատկերացնում, վորպես ազատության ազնիվ մարտիկների կողմից ցարիզմից խլված մի զիջողություն, մարտիկ-

ները շատ քիչ ցույց տվին իրենց հենց այն ժամանակ և ստիպված յեղան պետական և տնտեսական հարաբերությունների բավականին արհեստական տեսություն ստեղծել, վորոնք ստիպեցին ցարիզմին 1861 թվին այդ գիջումն անել: Դա նրա համար արվեց,—ասում էյին նրանք,—վոր պետությունը պետք է յերկաթուղիների ցանց կառուցեր Ռուսաստանում: Սակայն, ինչու պետությունը չեր կարող այդ ցանցը ճորտատիրական իրավունքի ժամանակ կառուցել: Կա և ուրիշ մոտեցում. ասում են, գյուղացիներին պետք եր ազատել այն պատճառով, վոր Ղրիմի պատերազմը, այն պարտությունը, վոր Ռուսաստանը կրեց իտալացիներից, ֆրանսիացիներից և անգլիացիներից, ցույց տվեց, թե ինչքան թույլ է ճորտատիրական Ռուսաստանը, պետք եր ուժեղացնել Ռուսաստանն իր միջազգային պայքարում: Նման բացատրություններով՝ քիչ թե շատ արհեստական՝ աշխատում էյին այդ փաստը բացատրել, առանց ամենագլխավորը նկատելու, որինակ՝ այն, վոր ամբողջ XIX դարն ինքնակալությունն, այսպես կոչվող, հովանավորման սիստեմին եր հետևում, համառորեն բարձր մաքս եր դնում արտասահմանյան ապրանքների վրա: Ձեռնտու չեր դա կալվածատիրոջ համար, թե՞ վոչ: Չափազանց անձեռնտու: Կալվածատերն ստիպված եր այն ամենի համար, ինչից ինքն ոգտվում եր,—իսկ նա ու իր ընտանիքը սովոր էյին արտասահմանյան մահուդ և թավիշ, արտասահմանյան սպիտակեղեն հագնել, արտասահմանյան կահ-կարասիք գնել և այլն,—այս բոլորի համար յեռապատիկ թանգ վճարել, վորովհետև բարձր մաքս գոյություն ուներ:

Յեվ կալվածատերերը շարունակ վայնասուն էյին բարձրացնում սրա դեմ: XIX դարի առաջին տասնամյակներին կալվածատերերը միշտ բողոքում էյին այս հովանավորման սիստեմի դեմ: Սակայն, ամբողջ XIX դարի ընթացքում, բացառությամբ 50-ական և 70-ական թվականների կարճ ժամանակամիջոցից, այսինքն՝ հենց այն շրջանից, յերբ կալվածատերն ըստ յերևույթին մահացու հարված եր ստանում, վորովհետև նրանից խլեցին ճորտ գյուղացուն, ճորտատիրական իրավունքը վերացրին,—մաքսերը բարձր էյին մնում:

Ստիպված էյին ինչ-վոր արհեստական բացատրություններ հնարել, ստիպված էյին, սակայն վոչինչ չեր կարելի հնարել: XIX դարի ռուսաց պատմության ինդիվիդուալիստական բացատրությունը, ինչպես մի պայքարի ընդդեմ ինքնակալության հանուն ազատության, և այն բացատրությունը, թե ինքնակալությունը—դա ճորտատիրական պետության վերին խավն է և ուրիշ վոչինչ,—այդ բացատրությունը բավարար չափով խորը չէ, նա մեզ տարակուսանքի մեջ է գցում մի շարք հարցերի նկատմամբ, վորոնց սակայն պետք է մի կերպ պատասխանել: Յեվ, կրկնում եմ, պետք է յերևակայության վորոշ ուժ, վորպեսզի պատկերացնենք, վոր հանձինս հանուն ազատության ընդդեմ ինքնակալության մղվող այդ պայքարի—իրականում կապիտալի յերկու ձևերի՝ առևտրական և արդյունաբերական կապիտալների կատաղի պայքար եր տեղի ունենում, մի պայքար վոր ամենուրեք կատարվում եր. դա համաշխարհային յերևույթ է և վոչ թե՝ հատուկ ռուսական: Ֆրանսիական հեղափոխությունն այդ պայքարի միջադեպերից մեկն եր, 1848 թվի գերմանական հեղափոխությունն այդ պայքարի միջադեպերից մեկն եր: Յեվ միայն Անգլիայում այդ պայքարն այնպիսի սուր կերպարանք չեր ընդունում շնորհիվ այն բանի, վոր այնտեղ արդյունաբերական և առևտրական կապիտալներն իրենց համար արտասովոր բախտավորությամբ իրարից զատվեցին, առևտրականը գաղութները տեղափոխվեց, և այնտեղ մինչև մեր որերն այն սիստեմին եր հետևում, վորն իրեն հատուկ է, իսկ արդյունաբերական կապիտալն Անգլիայում եր մնում և այնտեղ եր տիրապետում,—շնորհիվ աշխատանքի այս բաժանման, շատ հազվագյուտ էյին այնտեղ սուր ընդհարումները: Այդպիսի ընդհարումներից մեկը XVIII դարի ամերիկական հեղափոխությունն եր, իսկ մյուսը մեր աչքի առաջ է զարգանում: Յեթե այդ ընդհարումները նկատի չառնենք, ընդհանրապես և ամբողջապես և՛ արդյունաբերական, և՛ առևտրական կապիտալիզմն Անգլիայում ամբողջ ժամանակաընթացքում յոլա էյին գնում իրար հետ, սակայն սա միայն անգլիական յուրահատկությունն է, ինչպես և անգլիական ուրիշ շատ յուրահատկություններ: Կոնտինենտի վրա այդ ընդհարումներն յեղել են գրեթե բոլոր յերկրներում, իսկ ամենից շատ սուր էյին նրանք Ռուսաստանում, վորովհետև յերկու կապիտալիզմն էլ՝ և՛ առևտրականը, և՛ արդյունաբերականը շատ ուշ յեկան Ռուսաստան և շտապում էյին հասնել իրենց արևմտա-յեվրոպական նախահայրերին և նախատիպերին, և այդ շտապողականության մեջ նրանք իրար կոխոտում, տրորում էյին, իրար հետ ավելի բացահայտ և առանց ձևականության էյին ընդհարվում, քան Արևմտյան Յեվրոպայում:

Ձեզնից նրանք, ովքեր կարդացել են «Ռուսաց պատմության համառոտ ուրվագիծը», նրանք, իհարկե, հիշում են արդյունաբերական և առևտրական կապիտալների պայքարի այս պատմությունը ռուսական հողի վրա, վորովհետև նա ևս կազմում եր իմ առանցքը,—գործածելով նորերս շատ ընդունված, իսկ հիմա մոդայից ընկնող արտահայտությունը՝—ռուսաց պատմության առանցքը: Այդ պատճառով էլ յես սրա մասին չպետք է շատ խոսեմ: Յես կտամ միայն նրա պատկերն ընդհանուր գծերով: Ինքնուրույն կերպով մանր արտադրողին շահագործող, արտադրությանը չխառնվող և արտադրություն չստեղծող, նրան չսահմանափակող առևտրական կապիտալն արտատնտեսական ստիպողականության միջոցով է գործում: Նրա առանձնահատկությունը, նրա ավելի տիպիկ ստեղծագործությունը, վորը չեր զարգանում ռուսական հողի վրա և չծաղկեց, պլանտացիան է, ասենք թե, Հարավային Ամերիկայի պլանտացիան՝ բամբակի կամ ծխախոտի պլանտացիաներն ստրուկ նեգրերով, վորոնք այդ ձեռնարկությունների կենդանի ինվենտարի մի մասն են կազմում: Այդ պլանտացիան իրենից ներկայացնում է առևտրական կապիտալի տիպիկ արդյունքը: Պլանտացիան կապիտալիստական և վոչ ֆեոդալական տնտեսության յերևույթ է: Դա կապիտալիզմի կողմից արհեստականորեն ստեղծված բան է, սակայն դա այն աստիճանի հակադիր մի բան է արդյունաբերական կապիտալիզմին և ֆաբրիկային, ուր ազատ պրոլետարն է աշխատում, այնքան հակադիր է, վորքան միայն կարելի յե յերևակայել:

Մեզ մոտ, Ռուսաստանում պլանտացիական տնտեսության վորոշ ծիլեր գտնում ենք XVIII դարում և XIX դարի սկզբներին: Վորոշ կալվածատերեր իրենց գյուղացիներին, այսպես կոչված, ամսավճարի էյին անցկացրել, այսինքն՝ յուրաքանչյուր ամիս նրան վորոշ քանակությամբ հաց էյին տալիս, սովորաբար շատ քիչ, խլում էյին նրանց ամբողջ հողը և վերացնում էյին ամեն մի գյուղացիական տնտեսություն: Այն ժամանակ կալվածատերը դառնում եր պլանտացիայի տերի նման մի բան, իսկ ճորտ գյուղացին՝ նեգրի

նման մի բան։ Դա արտացոլվել է նաև ռուսական գրականության մեջ, նախ միջադեպերով, թե ինչպես էին վարվում այդպիսի կալվածատերերի հետ հուսահատության հասցրած գյուղացիները (նման ձևի առաջին միջադեպը մենք հանդիպում ենք Ռադիշչևի «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» գրքում), յերկրորդ՝ յուրահատուկ անուններով, վորոնք հանդիպում են ռուսական գրականության մեջ, ինչպես, օրինակ, Հերցենի «Ո՞վ է մեղավոր» վեպի «Նեգրերի» գեներալը։ Սրանք հետաքրքիր գծեր են, վորոնք միայն նշմարում են այդ պրոցեսը, սակայն ինքը պրոցեսը Ռուսաստանում հազիվ նշմարվեց։ Պլանտացիան Ռուսաստանի համար միշտ էլ հայտնի սահմանային հնարավորություն էր մնում, վորին ձգտում էր կալվածատիրական տնտեսությունը և վորին նա յերբեք չէր հասնում։ Փաստորեն բավականանում էին նրանով, վոր գյուղացուն սպառողական տնտեսության էին անցկացնում, վորի մասին յես արդեն ասացի ձեզ, և նրան հողաբաժնով բատրակ էին դարձնում՝ սկզբում վոչ թե բատրակ, այլ հողաբաժնով ճորտ՝ և միայն հետագայում՝ բատրակ։ Այնուամենայնիվ, այս գործողության համար էլ ստիպված էին գյուղացիների վրա հսկայական ճնշում գործադրել՝ արտատնտեսական բնույթ ունեցող ճնշում։ Յեվ ահա, առևտրական կապիտալը, վորպեսզի հնարավորություն ունենա մանր ինքնուրույն արտադրողից նայելային հողը խլելու, իսկ նրա աշխատանքի հավելյալ պրոդուկտն իր ձեռքը գցելու, ստիպված էր ստեղծելու վոստիկանական, բյուրոկրատիկ պետության այդ հսկայական մեքենան՝ պսակված Մոնոմախի գլխարկով։ Մոնոմախի գլխարկով ռուսական հողի վրա հենց առևտրական կապիտալն էր շրջում, վորի համար կալվածատերերն ու ազնվականները լոկ գործակալներ էին, նրա ապարատը։ Ահա, թե ինչով է բացատրվում յերբեմն «ռուսական հողի տիրոջ» քմահաճ վերաբերմունքը դեպի ռուսական ազնվականությունը,—և թեպետ այդ տերը յերբեմն հիշեցնում էլ էր նրան, վոր նա յել ազնվական է, նա յել կալվածատեր է, սակայն դա ավելի շուտ հաճոյախոսություն էր։ Իրականում նա ուժի մարմնացում էր, շատ ավելի հզոր և ընդհանուր ուժի, քան թե կալվածատիրական սեփականությունը, վորովհետև նա այս վերջինի վրա բարձրից էր նայում և իր ապարատի հետ նույնպիսի քմահաճությամբ էր վարվում, ինչպես մենք մեր խորհրդային ապարատի հետ՝ ամեն տեսակի կրճատում ենք կատարում, տեղափոխություններ և շատ ուրիշ բաներ։ Նույնպես էր վարվում ինքնակալությունը նաև կալվածատերերի, ազնվականության հետ, քանի վոր դա նրա ապարատն էր։ Անհրաժեշտ էր առևտրական կապիտալին,—և Պյոտրի ժամանակ կալվածատերերին պատերազմ էին քշում և 20 տարի շարունակ պահում վորպես զինվոր՝ չթողնելով նրան տուն վերադառնալ։ Անհրաժեշտ էր առևտրական կապիտալին, և նա հսկայական ներմուծման մաքս էր մտցնում, վորոնք դատարկում էին կալվածատիրոջ գրպանը։ Անհրաժեշտ էր կապիտալիզմին՝ արդեն վոչ միայն առևտրական, այլ ընդհանրապես կապիտալիզմին, գյուղացիներին ազատագրել,—ազատագրում էին գյուղացիներին, թեպետ կալվածատերերը տնքում էին և, անկասկած, ընդ սմին վոչ բոլոր կալվածատերերն էին շահում։

Յեթե մենք այս տեսակետով մոտենանք ինքնակալությանը՝ վորպես քաղաքականապես կազմակերպված առևտրական կապիտալի, ապա մենք կհասկանանք հեղափոխական շարժման պատմության ամբողջ վողբերգությունը։ Արդյունաբերական կապիտալը, վորը տարերայնորեն և անխուսա-

փելիորեն զարգանում էր առևտրական կապիտալից,—թե ինչպես է առևտրական կապիտալն արդյունաբերականի վերածվում, դա դուք գիտեք Մարքսից և քաղաքատնտեսության ձեր դասախոսություններից, կարիք չկա, վոր յես այդ մասին խոսեմ,—տարերայնորեն, յերկաթե անհրաժեշտությամբ աճող այս արդյունաբերական կապիտալը բոլորովին այլ պայմաններ էր պահանջում։ Քանի վոր արդյունաբերական կապիտալն արտադրությունն է կազմակերպում. նա կարիք չունի արտատնտեսական ստիպողականության։ Արտադրության պրոցեսի տերը լինելով, նա կարիք չունի ամեն տեսակ արհեստական հենարանների վորպեսզի իր ճորտացրած մարդկանց մասսաները մոբիլիզացիայի յենթարկի։ Նա, ինչպես արտահայտվել եմ յես իմ դասագրքում, ազդում է այս ճորտացած մարդկանց վոչ թե մեջքին, ինչպես առևտրական կապիտալն էր ազդում, այլ ստամոքսի միջոցով։ Գործողության ձևն ավելի նուրբ է, յեթե կուզեք, սակայն, համենայն դեպս՝ նույնքան բնախոսական։

Յեվ ահա այն, վոր արտատնտեսական ստիպողականությունն անհրաժեշտ չէ արդյունաբերական կապիտալին, դարձնում է նրան ինքնակալության մեծ մահացու թշնամի վոչ միայն Ռուսաստանում, այլև բոլոր յերկրներում։ Պատմությունը շատ անողոք բան է։ Այն բոլորը, ինչ հարկավոր չէ պատմական պրոցեսում, անմիջապես վնասակար և անհանդուրժելի յե դառնում և պետք է դեն շպրտվի։ Ռուսական ինքնակալությունն այդ տեսնում էր, կարելի յե ասել, անձնապես իր վրա։ Ինչո՞վ, իսկապես, օբյեկտիվորեն դատելով Նիկոլայ II-ը իր նախորդներից վոմանցից վատ էր։ Անկասկած, նա Պավել I-ից էլ, Նիկոլայ I-ից էլ լավ էր, պարզապես լավ էր, վորպես մարդ։ Բայց և այնպես Պավել I-ին դժբախտություն պատահեց, բայց ինքնակալությունը դրանից չտապալվեց, իսկ Նիկոլայ I-ին 30 տարվա ընթացքում վոչ մի դժբախտություն չպատահեց, իսկ յեթե վերջիվերջո նա թունավորվեց, ապա արտաքին և վոչ ներքին քաղաքականության պայմաններից ստիպված. և վոչ թե հպատակները նրան թունավորեցին, այլ նա ինքն իրեն թունավորեց՝ արտաքին պատերազմում պարտություն կրելով։ Այնպես վոր Նիկոլայ II-ն իր նախորդներից վատ չէր. բայց և այնպես պատմությունն անողոք վարվեց նրա հետ, և վոչ թե նրա նախորդների հետ, վորովհետև Նիկոլայ I-ը և Պավել I-ը յերևի մի ինչ-վոր բանի համար պատմությանը պետք էին, վորովհետև առևտրական կապիտալի տիրապետության ժամանակ, նրա ծաղկման ժամանակ, կապիտալիզմն այդ թագադիր վերին խավի կարիքն ուներ, իսկ XX դարի սկզբին նա նրան բոլորովին էլ հարկավոր չէր, իսկ վորքանով վոր նա հարկավոր չէ, այնքանով նրան պատմությունը միանգամայն անողոք կերպով, ինչպես մեքենայից անպետք մի պտուտակ, դուրս շպրտեց։ Արդյունաբերական կապիտալիզմի սիստեմը, արդյունաբերական-կապիտալիստական պետության սիստեմն արտատնտեսական ստիպողականության կարիք չուներ, բայց դրա փոխարեն նա այլ բանի կարիք ուներ, վորին ճորտատիրական իրավունքն ամենավճռական կերպով խանգարում էր։ Այդ ուրիշ բանը՝ ազատ, հողից ազատված բանվորն է, հոսող, միշտ յերկրում տեղափոխվող բանվորն է, վորն իրենից ներկայացնում է միշտ զորակոչված աշխատանքի պահեստի բանակ։ Այստեղ արդյունաբերական կապիտալի ճանապարհը ճորտատիրական իրավունքն էր կտրել, և ահա թե ինչու XIX դարի առաջին կեսին արդյունաբերական կա-

պիտալիզմը, գլխավորապես, այս ուղղությամբ ե հարվածում՝ ընդդեմ ճորտատիրական իրավունքի: 1861 թվին նա այստեղ ճեղքվածք ե առաջացնում: Ճորտատիրական իրավունքն այնքանով ե վերացված, վորքանով վոր նա նվազագույն չափով անհրաժեշտ եր արդյունաբերական կապիտալիզմին: Նա ստացավ աշխատանքի պահեստի բանակ և, այսպիսով՝ հետագա զարգացման հնարավորություն:

XX դարի սկզբին արդյունաբերական կապիտալի համար ավելորդ եր նաև առևտրական կապիտալի քաղաքական կազմակերպությունը: Նա նրան վերին աստիճանի նեղում եր, նա ապստամբվեց նրա դեմ և սկսված բանվորական հեղափոխության վրա հենվելով՝ նա 1905—1917 թ. թ. ժամանակամիջոցում վերացնում ե ինքնակալությունը, բայց վոր բանվորական հեղափոխության օգնությամբ ինքնակալությունը վերացնելով՝ նա միևնույն ժամանակ ձեռնարկում ե ինքն իրեն վերացնելուն, այդ մասին ռուսական արդյունաբերական կապիտալի մտքովն անգամ չեր անցնում: Առհասարակ ճիշտ ե ասել մի ինչ վոր հին իմաստուն (նրա ազգանունը չեմ կարողանում հիշել), վոր յեթե մարդիկ ճշտությամբ իմանային իրենց ապագան, դա, յերևի, կզրկեր նրանց գործողության ամեն մի դրդումից: Այն պատճառով միայն, վոր այդ ապագան նրանց համար գաղտնի յե, նրանք ակտիվ գործելու հնարավորություն ունեն: Այդ պատճառով միանգամայն բնական ե, վոր արդյունաբերական կապիտալիզմն ըստ եության սոցիալիզմի ճանապարհ բանալով վոչ միայն մեզնում, այլև բոլոր յերկրներում, չեր կասկածում, թե ում համար ե նա աշխատում և ում գործն ե նա կատարում:

Ահա, յեթե այս տեսակետից մոտենանք XIX դարի հեղափոխական պայքարին, բոլոր այն առեղծվածները, վորոնք մեր բուրժուական նախորդների առաջ եյին կանգնած, վայրկենապես կանհայտանան և իրենք իրենց կլուծվեն: Յեվ իրոք, ինչու գյուղացիներին ազատագրեցին 1861 թվին: Այն պատճառով, վորովհետև դրա կարիքն զգաց արդյունաբերական կապիտալիզմը՝ կապված յերկաթուղիների կառուցման հետ և այլն. վորովհետև յերկաթուղիների կառուցումը Ռուսաստանում ամենախոշոր խթանն եր արդյունաբերական կապիտալիզմի զարգացման համար, վորը տեղի յե ունենում Ռուսաստանում ամբողջ XIX դարի ընթացքում:

Ռուսական մետաղագործությունն աճել ե ռուսական յերկաթուղացանցի ստեղծման պատճառով, իսկ մետաղագործությունը, ծանր ինդուստրիան ամբողջ արդյունաբերության բազան ե: Այդ բազան մեզնում հենց այն ժամանակ յերկաթուղու կառուցումով ստեղծվեց, սակայն կապն այնպիսին չեր. ինարկե, ինչպիսին վոր պատկերացնում եր, որինակ, Ստրուվեն: Նրա համար յերկաթուղիների կառուցումը պետական անհրաժեշտություն եր— պետությունը պետք ե յերկաթուղացանց ստեղծեր. այնինչ այդ արհրաժեշտ եր կապիտալիզմի հետագա զարգացման համար: Յերկաթուղացանցի կառուցումը մի կոմպրոմիս եր զիջում անող և ճորտատիրությունը վերացնող առևտրական կապիտալի և արդյունաբերական կապիտալի միջև: Յերկու կապիտալներն իրար հետ համաձայնության յեկան:

— Լավ,— ասում եր առևտրական կապիտալը,— յես քեզ կտամ այն չափով ազատ բանվոր, ինչ չափով վոր նա քեզ հարկավոր ե, յես կվերացնեմ ճորտատիրական իրավունքը, բայց դրա փոխարեն իմ տրամադրության տակ

մնացած մանր արտադրողներից յես այնքան հաց կգջլեմ, վորքան վոչ վոքին չի հաջողվել գջլել:

— Շատ բարի,— ասում եր արդյունաբերական կապիտալը,— մենք քեզ համար յերկաթուղացանց կկառուցենք. դա մի այնպիսի ջրհան, մի այնպիսի մխոց ե, ինչպիսին դու առաջ յերբեք չես ունեցել: Ինչ ունեյիր դու առաջ: Գետեր և ջրանցքներ կային, գյուղացին սայլերով հաց եր կրում, իսկ հիմա ամբողջ Ռուսաստանում գնացքներ կշրջեն, և հացը մեծ չափերով կարտածվի, միլիոնավոր փթերով կհանես գյուղացիների շտեմարաններից:

Վորպեսզի ձեր հիշողության մեջ վորևե կոնկրետ բան մնա, թույլ տվեք վորոշ թվեր բերել. 1850 թվին, բարենորոգումից 10 տարի առաջ, Ռուսաստանից արտահանում եյին 23 միլ. փութ ցորեն, իսկ 1870 թվին, բարենորոգումից 10 տարի հետո՝ 96 միլ. փութ: Հաճար արտածում եյին 1850 թվին $5^{1}/_{2}$ միլ. փութ, իսկ 1870 թվին՝ $27^{1}/_{2}$ միլ. փութ:

Հացի արտածումը՝ շնորհիվ յերկաթուղացանցի կառուցման, զգալի չափով մեծացավ: Հետագայում մենք կտեսնենք, թե ինչքան եր դրանից օգտվում կալվածատերը: Դուք կտեսնեք, վոր նա ամեն տեղ չեր շահում, և պայմանորեն եր շահում: Բայց վոր առևտրական կապիտալը դրանից շահում եր, դա դժվար չե հասկանալ: Յեթե նրա շրջանառությունը 5,6,10 անգամ մեծացել ե, ապա պարզ ե, վոր շահն ել մեծացել ե 5,6, 10 անգամ, և առևտրական կապիտալը՝ հանձինս Շչեդրինի կողմից հավերժացած Կոլուպայեվների և Ռազուվայեվների այնպես ծաղկեց ռուսական հողի վրա, ինչպես յերբեք՝ մինչ այդ: Առևտրական կապիտալի համար հավելյալ պրոդուկտ չտեսնված չափերով կորզելու հնարավորություն ստեղծած արդյունաբերական կապիտալն ինքն ազատ բանվոր ստացավ,— միանգամայն պարզ և հասկանալի մի պատմություն: Իր ազնվական վերարկույով և յեզերքները կարմիր գլխարկով կալվածատերը միշտ միևնույն տեղումն եր մնում, կրծքին խփում եր ու ազնվական դասի իր իրավունքներն եր հայտարարում, վաճառականներն ամուր վոտի եյին կանգնում, նրա առաջ մեջքները խոնարհում, իսկ մտքերումը մտածում եյին. «Ամա հիմարն ես դու, տեր աղա»:

Այս տեսակետից մեզ համար հասկանալի յե դառնում և այն առաջին հեղափոխությունը, վորի նկարագրությանն անցնում եմ յես հիմա՝ դեկաբրիստների հեղափոխությունը: Յես միայն այն ամենաընդհանուր գծերով նկարագրելու հնարավորություն ունեմ: Այս դավադրության պատմությունը յես չեմ կարող մանրամասն շարադրել: Նախ, վոր նվազագույն չափերով յես շարադրել իմ այն իմ «Համառոտ ուրվագծեր»-ի մեջ, իսկ ավելի ընդարձակ ծավալով դուք կգտնեք այն իմ «չորս հատորների» մեջ: Յես նորից, հիշեցման կարգով յերկու խոսք միայն կասեմ ընդհանուր սխեմայի մեջ:

XIX դարի առաջին քառորդում, հենց վոր Ռուսաստանը Նապոլեոնական պատերազմներից ազատվեց՝ ռուսական հողի վրա իրար յետևից առաջանում են գաղտնի ընկերություններ. սկզբում «ռուս ասպետների» ընկերությունը՝ 14 թվին, հետո «Փրկության միությունը»՝ 17 թվին, «Բարօրության միությունը»՝ 18 թվին և, վերջապես, այն, ինչ «Դեկաբրիստների գաղտնի ընկերություն» ե կոչվում, իսկական դավադրություն՝ 1821 թվին: Այս գաղտնի ընկերությունները յելույթ ունեցան ճգնաժամի, իշխանության վերին խավի ռուտ-անձնական ճգնաժամի րոպեյին, յերբ Ալեքսանդր I ցարը հանկարծակի մեռավ 1825 թվի նոյեմբերի 19-ին, մայրաքաղաքից շատ հեռու, Տագանրոգում, Ազով ծովի ափին և յերբ Ռուսա-

27956-60

տանն առանց թագավորի մնաց, վորովհետև Կոնստանտինը՝ նրանից հետո յեկող յեղբայրը (յերեխաներ Ալեքսանդրը չուներ) վաղուց հրաժարվել եր գահից, վորի մասին վոչ վոք չգիտեր, իսկ հաջորդ յեղբորը՝ Նիկոլայ Պավլովիչին, շնորհիվ այն բանի, վոր չգիտեյին Կոնստանտինի հրաժարման մասին, չեյին ուզում վորպես ցար ճանաչել: Վերևում սկսված այս շփոթն առիթ ծառայեց գաղտնի ընկերությունների վաղուց հասունացած դավադրության յելույթին: Ապստամբությունը Պետերբուրգում (Լենինգրադում) տեղի ունեցավ, 1825 թվի դեկտեմբերի 14-ին հ. տ., հետո ապստամբություն ծագեց հարավում՝ դեկտեմբերի վերջին: Սակայն, ապստամբությունը ջախջախվեց, գաղտնի ընկերության անդամները ձերբակալվեցին, դատի հանձնվեցին, դավադրության պարագլուխներին կախաղան բարձրացրին, մնացածներին աքսորեցին, և սկսվեց դեկաբրիստների յերկար դյուցազներգությունը: Ռուսաստանում ինքնակալության դեմ հանուն ազատության առաջին մարտիկների յելույթը, առաջին լեգենդան, վորը հետագայում ամբողջ XIX դարով է անցնում, վոգևորում է նրանց հաջորդող մարտիկներին: Բոլորովին էլ մտադրություն չունեմ հերքել այս լեգենդայի հոգեբանական նշանակությունը. նա հսկայական եր, և իրոք, նա վոգևորում եր հետագա մարտիկներին:

Սակայն վո՞րոնք եյին այս ամբողջ պատմության օբյեկտիվ արմատները: Այստեղ մենք ստիպված ենք այս բարձունքներից, վորոնք, ինչպես տեսնում եք, բավական հարաբերական են, բավական խորն իջնել դեպի չափազանց գռեհիկ և ստոր փաստը: Այս բոլ փաստը, վորն ինքնակալության դեմ առաջին գիտակից հեղափոխության հիմքն է կազմում, առաջին փորձն եր Ռուսաստանում տապալելու ինքնակալությունը,—այդ բոլ փաստը ռուսական հացի արտածումն եր: XVIII դարում՝ ձեզ հայտնի Անգլիայի արդյունաբերական հեղաշրջման հետ կապված, վորով, յեթե չեմ սխալվում, սկսվել է Արևմտյան Յեվրոպայի պատմության ձեր դասընթացքը՝ Անգլիան սկսեց կլանել մեծ քանակությամբ ներմուծական հաց, և անգլիական շուկային գլխավոր հաց մատակարարողը Ռուսաստանն եր: Այսպիսով, Անգլիայի արդյունաբերական հեղաշրջումը ռուսական կալվածատիրական տնտեսության յուրահատուկ հեղաշրջման յելակետ հանդիսացավ: Նա (կալվածքը) սկսեց հացի արտադրության ֆաբրիկայի վերածվել: Այս բեկումն արդեն նշմարվեց XVIII դարի վերջին, բայց առանձին ուժով նա իրեն զգալ տվեց անմիջապես Նապոլեոնյան պատերազմներից հետո, հետևապես, XIX դարի յերկրորդ տասնամյակի կեսերին:

Ցորենի, ինչպես և հաճարի և այլ հացահատիկների արտածումը կատաստրոֆիկ արագությամբ եր աճում: Նա 4 տարվա ընթացքում հինգ անգամ աճեց[1]: Դուք զգում եք, վոր հացի այս դուրս մղելը Ռուսաստանից իսկական հեղափոխական ներգործություն պիտի աներ: Դա իսկական հեղափոխություն եր, յերբ կալվածատերերն արտաքին շուկայի համար միանգամից հինգ անգամ ավելի շատ պիտի արտադրեյին, քան մինչև այդ: Յեվ հենց այս տարիներին է, վոր գաղտնի ընկերություններն սկսում են աճել սունկի նման: Յերկու փաստ, վոր չի կարելի իրար չմերձեցնել:

Ի՞նչ նպատակ ունեյին այս գաղտնի ընկերությունները: Անկասկած,

[1] 1813 թվին ցորենի և հաճարի արտածումը մոտավորապես 5 միլիոն փութ եր, յերբ արտածումն սկսվեց «կոնտինենտալ բլոկադայի» վերացումից հետո, իսկ 1817 թվին նա հասավ 22 միլ. փութ ցորենի և 20 միլ. փութ հաճարի:

յեթե մենք փորձենք բոլոր դեկաբրիստական ընկերությունների հավասարազորը գծել (նրանք դեկաբրիստական են կոչվում պարզապես ռետրոսպեկտիվ կարգով, վորովհետև շարժումը վերջավորվեց 1825 թ. դեկտեմբերի 14-ի ապստամբությունով), յեթե, կրկնում եմ, փորձենք այս բոլոր գաղտնի ընկերությունների հավասարազորը գծել, ապա այդ հավասարազորը ճորտատիրական իրավունքի վերացումը կլինի: Զուր չե, վոր դա յեր կենտրոնական գաղափարն ինչպես Հյուսիսային ընկերության (Պետերբուրգի) ամենաուժեղ գլխի՝ Նիկոլայ Իվանովիչ Տուրգենևի համար, վորի ամբողջ գրական և քաղաքական կյանքի առանցքը ճորտատիրության վերացումն եր, նույնպես և Հարավային ընկերության՝ գնդապետ Պեստելի համար, վորի մտքերը նորից ագրարային հեղաշրջման, ճորտատիրության հարցի շուրջն եյին պտտվում: Հարց է ծագում. ի՞նչն ստիպեց կալվածատերերին այն ժամանակ ճորտատիրական իրավունքի վերացման հարցը դնելու: Հենց այն փաստը, վոր ձեզ քաջ հայտնի յե քաղաքատնտեսության ընդհանուր դասընթացքից, վոր ճորտատիրական աշխատանքն ընդհանրապես աշխատանքի կիրառման ամենաեքստենսիվ ձևերից մեկն է: Ճորտատիրական տնտեսությունը չափազանց եքստենսիվ տնտեսություն է: Ճորտատիրական աշխատանքը չափազանց անարտադրողական աշխատանք է: Թույլ տվեք ինձ այստեղ արդեն թվական տվյալներ չբերել, այլ ուղղակի հենվել Զաբլոցկի-Դեսյատովսկու հոդվածից վերցրած մի քաղվածքի վրա, վորը բերված է Կովալենսկու քրեստոմատիայի մեջ: Ճորտատիրական աշխատանքը շատ քիչ արտադրողական աշխատանք եր: Դա պարզ կերպով գիտակցվեց դեռևս XVIII դարում, և յեթե մինչև հիմա հետևում եյին նրան, այն պատճառով միայն, վոր լինելով աշխատանքի չափազանց քիչ արտադրողական ձև, դա միևնույն ժամանակ աշխատանքի չափազանց եժան ձևն եր: Քանի վոր ճորտ գյուղացուն նրա աղալարական աշխատանքի համար վոչ ինչ չեյին վճարում, քանի վոր նա, իհարկե, ամենաեժան աշխատողն եր, վորովհետև ուրիշին պետք եր վորևե բան վճարել: Յեվ ահա, քանի հացի արտածումը Ռուսաստանից համեմատաբար դանդաղ եր աճում, և քանի հացի գները համեմատաբար նույնպես դանդաղ եյին աճում, մինչև այդ կալվածատերը կարող եր շուկայական տնտեսության պայմաններին հարմարեցնելով իր կալվածքը՝ սակավ արտադրողական աղալարական աշխատանքով բավականանալ:

Բայց այս տարիներին է, վորոնց մասին յես խոսում եմ, վոր սկսվում է հացի գների վերելքը: XVIII դարի յերկրորդ կեսին հացը Լոնդոնի շուկայում միջին հաշվով մոտ 50 շիլլինգ արժեր կվարտերը (մոտավորապես 12 փութը), իսկ XIX դարի առաջին տասնամյակում կվարտերն արժեր արդեն 74 շիլլինգ, իսկ հաջորդ տասնամյակին գինը բարձրացավ՝ գրեթե մինչև 90 շիլլինգի: Այս տասը տարիների ընթացքում հացի գինը չափազանց արագ եր աճում: Նրանք նույնպես հեղափոխականորեն եյին աճում, ինչպես աճում եր հացի արտածումը Ռուսաստանից: Յեվ ահա հացի գնի այս անսպասելի բարձրացումը, վորը հետևանք եր պրոդուկտի ավելի և ավելի մեծ քանակ շուկա հանելու անհրաժեշտության, կալվածատիրոջ առաջ խնդիր հարուցեց, վորը նա վատ եր գիտակցում նույնիսկ դեռ 1809 թվին: 1809 թվին «Ազատ տնտեսական ընկերության» աշխատությունների մեջ դուք դեռ ներբողականներ կհանդիպեք՝ ուղղված բարշչինային (աղալարական) տնտեսությանը, այսինքն ճորտատիրական աշխատանքի շահագործմանն իր հին ձևով: Իսկ յերկրորդ կիսամյակի յերկրորդ կեսի ընթացքում, այ-

սենքն՝ 7—8 տարուց հետո, գյուղացիների ազատագրման հարցն այնպիսի սրությամբ էր դրվում, վոր անգամ գեղարվեստական գրականության մեջ է արտահայտվում։ Պուշկինն իր նշանավոր «Գյուղը» վոտանավորով՝ ճորտատիրական իրավունքի դեմ ուղղված՝ վաստակեց Ալեքսանդր I կայսեր բարենպաստ կարծիքը։ Դա տեղի ունեցավ մոտավորապես 1819 թվին։ 10 տարվա ընթացքում մեծ շրջադարձ տեղի ունեցավ։ Ալեքսանդր I-ի սիրելին՝ Արակչեևը գյուղացիների ազատագրման նախագիծ է կազմում։ Մինչև այդ աստիճան կոնյունկտուրան փոխվել էր։ Ասածը ձեզ միանգամայն պարզ է։ Պետք էր գյուղացիների աշխատանքը կալվածքում ինտենսիֆիկացնել (լարվածությունը բարձրացնել)։ Ինչպե՞ս անել այդ։ Դա, կրկնում եմ, հիմնական հարցն էր, վորի շուրջն էր պտտվում ամեն ինչ։

Կալվածատերերն սկսում են խոսել այն մասին, վոր գյուղացին չափազանց ծույլ է, վոր նա շատ քիչ է աշխատում, և ի միջի այլոց նույն կարծիքի յե նաև դեկաբրիստ Յակուշկինը։ Նա գտնում է, վոր գյուղացին չափազանց քիչ է աշխատում, անհրաժեշտ է մի ինչ վոր բան անել, վորպեսզի դրդել նրան աշխատանքի։ Ահա թե ինչ է պատմում Յակուշկինն իր դիտողությունների մասին, յերբ նա յեկել էր Սմոլենսկի նահանգում գտնվող իր կալվածքը, ուր տնտեսությունը վատ էր առաջ գնում. «Այս միջոցներով նրանք (ճորտերը), իհարկե, մուրացկանության չեյին դիմում, բայց չէր կարելի հուսալ, վոր այս միջոցներով, այսինքն՝ տնտեսության հին ձևերով կարելի յե բարելավել նրանց դրությունը։ Մանավանդ վոր սովոր լինելով կարիքի և հույս չունենալով յերբեք նրանից ազատվել, նրանք ասում եյին, վոր յերբեք չեն կարող ամբողջ աշխատանքը կատարել և այդ պատճառով թե իրենց և թե կալվածատիրոջ համար եյին աշխատում՝ յերբեք իրենց ուժերը չլարելով։ Պետք էր միջոց հնարել նրանց մեջ գործունեյությունն արթնացնել և նրանց դնել աշխատասիրության անհրաժեշտության առաջ»։ Սրանք Յակուշկինի խոսքերն են, վորը գաղտնի ընկերության ականավոր անդամներից մեկն էր և, պետք է ասել, ամենաազնիվ դեկաբրիստներից մեկն էր։ Յակուշկինը քչերից մեկն էր, վորոնք մեծ արժանապատվությամբ եյին պահում իրենց Նիկոլայ I-ի առաջ հարցաքննության ժամանակ և, չնայած նրան, վոր Նիկոլայը նրան իսկական փորձությունների յենթարկեց (նրա ձեռներն ու վոտները շղթայեցին և այդպես ամբողջ ամիսներ պահեցին), նա այնուամենայնիվ իր ասածին հաստատ մնաց, և նրա պատասխանները, վոր գրված են նրա քննական գործի մեջ, արտասովոր ազնիվ են։ Նա իրեն շատ ավելի լավ էր պահում, քան թե, որինակ, Ռըլեյեվը, անհամեմատ ավելի լավ, թեպետ Ռըլեյեվը դեկաբրիստների բանաստեղծն էր, նրա յերգիչը, բանաստեղծական ֆիգուրաներից մեկը, ինչպես հաջորդ անգամ կըտեսնենք, Ռըլեյեվը քննության ժամանակ իրեն շատ ավելի վատ էր պահում, քան Յակուշկինը։ Յակուշկինը յերևան յեկավ վորպես իսկական հեղափոխական։ Յեվ դուք տեսնում եք, վոր այս իսկական հեղափոխականը բացարձակ կերպով ասում էր, թե ինչն է ստիպել նրան միջնորդել գյուղացիական բարենորոգության մասին։ Նա ուղղակի ասում է. «Գյուղացիներին պետք է այնպիսի դրության մեջ դնել, վոր նրանք ստիպված լինեն լավ աշխատել»։ Նա իր դիտողություններում նույնպես անկեղծ և արդարամիտ մարդ էր, ինչպես և հարցաքննության ժամանակ։ Նա իր պատճառաբանությունները չէր թաքցնում։

Յեվ ահա Յակուշկինը մի չափազանց պարզ սխեմ հնարեց, և վորի

մասին, ինչպես այլ ցիտատներից ենք տեսնում, վոչ միայն Յակուշկինն էր մտածում, այլև այն ժամանակվա մի շարք կալվածատերեր։ Ի՞նչպես ստիպել գյուղացիներին լավ աշխատել։ Շատ հեշտ է։ Նրանց ազատություն տալ՝ խլելով նրանցից ամբողջ հողը։ Այն ժամանակ՝ ստիպված լինելով իրենց ձեռներով իրենց հացը դատելու՝ նրանք կամ կապալով կվերցնեն իրենց հողը, և այն ժամանակ նրանք կաշխատեն կապալավարձ վաստակել և ավելի շատ աշխատել, քան մինչև այդ եյին աշխատում և նրանք այդ հողի վրա բատրակներ կդառնան։ Այս գաղափարն այնքան ընդհանուր էր, վոր այդ մասին մտածեց վոչ միայն Յակուշկինը, այլև Սմոլենսկի նահանգի ուրիշ կալվածատերեր։ «Ինչպե՞ս կարելի յե կալվածատիրոջ շահերը գյուղացու ազատության հետ համաձայնեցնել։ Ինձ թվում է, թե՝ շատ հեշտ։ Ահա, թե յես ինչ կառաջարկեյի։ Յես գյուղացիներին կզիջեյի բոլոր տներն իրենց բակերով ապրելու համար և ընդհանուր արոտավայրերով, ձեռքում պահելով մնացած ամբողջ հողը, այսինքն՝ ամբողջ վարելահողը։ Իսկ գյուղացիներից մնացած ամբողջ հողը տալ կողմնակի գյուղացիներին»,—գրում էր մի այդպիսի կալվածատեր։ Յեվ պետք է ավելացնել, վոր նույնպիսի գյուղացիական բարենորոգում կիրառեցին 1819 թվին Ռուսաստանի ամենաառաջավոր կալվածատերերը, Լիֆլյանդյան և Եստլյանդյան նահանգի Ոստզեյան բարոնները, վորոնք շատ բանով ճանապարհ եյին ցույց տալիս իրենց ավելի հետամնաց ռուս յեղբայրներին։ Նրանք մտցրին, որինակ, ճորտատիրական կալվածքում ճիպոտով ծեծելը։ Առաջ փայտով եյին ծեծում, դա առողջության համար վնասակար էր և այնքան էլ ազդու չէր, ճիպոտն ավելի ազդու միջոց դուրս յեկավ և իր ներգործությունն էր ցուցադրում, ինչպես այն ժամանակվա առողջագետներն եյին ասում, առողջությանը չէր վնասում։ Նրանք ցույց տվին ողի քաշելու միջոցը և ողու առաջին գործարաններն Ոստզեյան նահանգներում յերևան յեկան։ Նրանք այստեղ էլ ուղի ցույց տվին, իրենց գյուղացիներին առանց հողի ազատելով և ապագայում լատիշական սքանչելի սոցիալ-դեմոկրատիա պատրաստելով, այնպես վոր վերջիվերջո, գուցե, մարքսիստները շահեցին գյուղացիների ազատագրման նրանց միջոցից։ Բայց յերբ Յակուշկինն այդ միջոցն առաջարկեց, վոչ թե պրոլետարիատն ու մարքսիստները, այլ իրենք գյուղացիները նրան դասական նախադասությունով պատասխանեցին։ Նրանք, կարծես թե չհասկանալով, հարցրին նրան. «Իսկ հողը, աղա, հողն ումն է լինելու»։ «Հողն, իհարկե, իմն է, իսկ դուք կարող եք կապալով վերցնել»։ Սրան դասական պատասխան հետևեց. «Վոր եդպես է, աղա, թող ամեն ինչ առաջվա նման մնա. մենք ձերն ենք, իսկ հողը մերը»։ Յերբ գյուղացիներին ասացին, վոր նրանք չեն ունենա վոչ մի հող, նրանք հայտարարեցին. «Վոչ, դրան մենք համաձայն չենք»։ Յեվ յերբ Յակուշկինն իր նախագիծն այն ժամանակվա ներքին գործոց մինիստր Կոչուբեյին ներկայացրեց, Կոչուբեյը, շատ խելոք և սրամիտ մի ծերունի, պատասխանեց, վոր բարենորոգումը կարելի յե, իհարկե, կատարել, բայց դա այնպիսի խռովություն կառաջացնի, վորից չեն ազատվի վոչ Կոչուբեյը, վոչ էլ Յակուշկինը։ Այդ պատճառով ավելի լավ է գյուղացիական աշխատանքի ինտենսիֆիկացման այս պլանը թողնել և ուրիշին անցնել։ Հետևյալ անգամ, յերբ մենք մանրամասն կծանոթանանք դեկաբրիստների նախագծերին, կըտեսնենք, վոր դեկաբրիստներն այդ հաշվի առան, վոր նրանք այնուամենայնիվ գյուղացիներին մանր զուտ-սպառողական տնտեսություն եյին թողնում։

սինքն՝ 7—8 տարուց հետո, գյուղացիների ազատագրման հարցն այնպիսի սրությամբ էր դրվում, վոր անգամ գեղարվեստական գրականության մեջ է արտահայտվում։ Պուշկինն իր նշանավոր «Գյուղը» վոտանավորով՝ ճորտատիրական իրավունքի դեմ ուղղված՝ վաստակեց Ալեքսանդր I կայսեր բարենպաստ կարծիքը։ Դա տեղի ունեցավ մոտավորապես 1819 թվին։ 10 տարվա ընթացքում մեծ շրջադարձ տեղի ունեցավ։ Ալեքսանդր I-ի սիրելին՝ Արակչեյեվը գյուղացիների ազատագրման նախագիծ է կազմում։ Մինչև այդ աստիճան կոնյունկտուրան փոխվել էր։ Աստառը ձեզ միանգամայն պարզ է։ Պետք էր գյուղացիների աշխատանքը կալվածքում ինտենսիֆիկանացնել (լարվածությունը բարձրացնել)։ Ինչպե՞ս անել այդ։ Դա, կրկնում եմ, հիմնական հարցն էր, վորի շուրջն էր պտտվում ամեն ինչ։

Կալվածատերերն սկսում են խոսել այն մասին, վոր գյուղացին չափազանց ծույլ է, վոր նա շատ քիչ է աշխատում, և ի միջի այլոց նույն կարծիքի յե նաև դեկաբրիստ Յակուշկինը։ Նա գտնում է, վոր գյուղացին չափազանց քիչ է աշխատում, անհրաժեշտ է մի ինչ վոր բան անել, վորպեսզի դրդել նրան աշխատանքի։ Ահա թե ինչ է պատմում Յակուշկինն իր դիտողությունների մասին, յերբ նա յեկել էր Սմոլենսկի նահանգում գտնվող իր կալվածքը, ուր տնտեսությունը վատ էր առաջ գնում. «Այս միջոցներով նրանք (ճորտերը), իհարկե, մուրացկանության չեյին դիմում, բայց չէր կարելի հուսալ, վոր այս միջոցներով, այսինքն՝ տնտեսության հին ձևերով կարելի յե բարելավել նրանց դրությունը։ Մանավանդ վոր սովոր լինելով կարիքի և հույս չունենալով յերբեք նրանից ազատվել, նրանք ասում եյին, վոր յերբեք չես կարող ամբողջ աշխատանքը կատարել և այդ պատճառով թե իրենց և թե կալվածատիրոջ համար եյին աշխատում՝ յերբեք իրենց ուժերը չլարելով։ Պետք էր միջոց հնարել նրանց մեջ գործունեյությունն արթնացնել և նրանց դնել աշխատասիրության անհրաժեշտության առաջ»։ Սրանք Յակուշկինի խոսքերն են, վորը գաղտնի ընկերության ականավոր անդամներից մեկն էր և, պետք է ասել, ամենաազնիվ դեկաբրիստներից մեկն էր։ Յակուշկինը քչերից մեկն էր, վորոնք մեծ արժանապատվությամբ եյին պահում իրենց Նիկոլայ I-ի առաջ հարցաքննության ժամանակ և, չնայած նրան, վոր Նիկոլայը նրան իսկական փորձությունների յենթարկեց (նրա ձեռներն ու վոտները շղթայեցին և այդպես ամբողջ ամիսներ պահեցին), նա այնուամենայնիվ իր ասածին հաստատ մնաց, և նրա պատասխանները, վոր գրված են նրա քննական գործի մեջ, արտասովոր ազնիվ են։ Նա իրեն շատ ավելի լավ էր պահում, քան թե, որինակ, Ռըլեյեվը, անհամեմատ ավելի լավ, թեպետ Ռըլեյեվը դեկաբրիստների բանաստեղծն էր, նրա յերգիչը, բանաստեղծական ֆիգուրաներից մեկը, ինչպես հաջորդ անգամ կըտեսնենք, Ռըլեյեվը քննության ժամանակ իրեն շատ ավելի վատ էր պահում, քան Յակուշկինը։ Յակուշկինը յերևան յեկավ վորպես իսկական հեղափոխական։ Յեվ դուք տեսնում եք, վոր այս իսկական հեղափոխականը բացարձակ կերպով ասում էր, թե ինչն է ստիպել նրան միջնորդել գյուղացիական բարենորոգության մասին։ Նա ուղղակի ասում է. «Գյուղացիներին պետք է այնպիսի դրության մեջ դնել, վոր նրանք ստիպված լինեն լավ աշխատել»։ Նա իր դիտողություններում նույնպես անկեղծ և արդարամիտ մարդ էր, ինչպես և հարցաքննության ժամանակ։ Նա իր պատճառաբանությունները չէր թաքցնում։

Յեվ ահա Յակուշկինը մի չափազանց պարզ սիստեմ հնարեց, և վորի

մասին, ինչպես այլ ցիտատներից ենք տեսնում, վոչ միայն Յակուշկինն էր մտածում, այլև այն ժամանակվա մի շարք կալվածատերեր։ Ի՞նչպես ստիպել գյուղացիներին լավ աշխատել։ Շատ հեշտ է։ Նրանց ազատություն տալ՝ խլելով նրանցից ամբողջ հողը։ Այն ժամանակ՝ ստիպված լինելով իրենց ձեռներով իրենց հացը դատելու՝ նրանք կամ կապալով կվերցնեն իրենց հողը, և այն ժամանակ նրանք կաշխատեն կապալավարձ վաստակել և ավելի շատ աշխատել, քան մինչև այդ եյին աշխատում և նրանք այդ հողի վրա բատրակներ կդառնան։ Այս գաղափարն այնքան ընդհանուր էր, վոր այդ մասին մտածեց վոչ միայն Յակուշկինը, այլև Սմոլենսկի նահանգի ուրիշ կալվածատերեր։ «Ինչպե՞ս կարելի յե կալվածատիրոջ շահերը գյուղացու ազատության հետ համաձայնեցնել։ Ինձ թվում է, թե՝ շատ հեշտ։ Ահա, թե յես ինչ կառաջարկեյի։ Յես գյուղացիներին կզիջեյի բոլոր տներն իրենց բակերով ապրելու համար և ընդհանուր արոտավայրերով, ձեռքում պահելով մնացած ամբողջ հողը, այսինքն՝ ամբողջ վարելահողը։ Իսկ գյուղացիներից մնացած ամբողջ հողը տալ կողմնակի գյուղացիներին»,—գրում էր մի այդպիսի կալվածատեր։ Յեվ պետք է ավելացնել, վոր նույնպիսի գյուղացիական բարենորոգում կիրառեցին 1819 թվին Ռուսաստանի ամենաառաջավոր կալվածատերերը, Լիֆլյանդյան և Եստլյանդյան նահանգի Ոստզեյան բարոնները, վորոնք շատ բանով ճանապարհ եյին ցույց տալիս իրենց ավելի հետամնաց ռուս յեղբայրներին։ Նրանք մտցրին, որինակ, ճորտատիրական կալվածքում ճիպոտով ծեծելը։ Առաջ փայտով եյին ծեծում, դա առողջության համար վնասակար էր և այնքան էլ ազդու չէր, ճիպոտն ավելի ազդու միջոց դուրս յեկավ և իր ներգործությունն էր ցուցադրում, ինչպես այն ժամանակվա առողջագետներն եյին ասում, առողջությանը չէր վնասում։ Նրանք ցույց տվին ողի քաշելու միջոցը և ողու առաջին գործարաններն Ոստզեյան նահանգներում յերևան յեկան։ Նրանք այստեղ էլ ուղի ցույց տվին, իրենց գյուղացիներին առանց հողի ազատելով և այդպիսով լատիշական սքանչելի սոցիալ-դեմոկրատիա պատրաստելով, այնպես վոր վերջիվերջո, գուցե, մարքսիստները շահեցին գյուղացիների ազատագրման նրանց միջոցից։ Բայց յերբ Յակուշկինն այդ միջոցն առաջարկեց, վոչ թե պրոլետարիատն ու մարքսիստները, այլ իրենք գյուղացիները նրան դասական նախադասությունով պատասխանեցին։ Նրանք, կարծես թե չհասկանալով, հարցրին նրան. «Իսկ հողը, աղա, հողն ումն է լինելու»։ «Հողն, իհարկե, իմն է, իսկ դուք կարող եք կապալով վերցնել»։ Սրան դասական պատասխան հետևեց. «Վոր եդպես է, աղա, թող ամեն ինչ առաջվա նման մնա. մենք ձերն ենք, իսկ հողը մերը»։ Յերբ գյուղացիներին ասացին, վոր նրանք չեն ունենա վոչ մի հող, նրանք հայտարարեցին. «Վոչ, դրան մենք համաձայն չենք»։ Յեվ յերբ Յակուշկինն իր նախագիծն այն ժամանակվա ներքին գործոց մինիստր Կոչուբեյին ներկայացրեց, Կոչուբեյը, շատ խելոք և սրամիտ մի ծերունի, պատասխանեց, վոր բարենորոգումը կարելի յե, իհարկե, կատարել, բայց դա այնպիսի խռովություն կառաջացնի, վորից չեն ազատվի վոչ Կոչուբեյը, վոչ էլ Յակուշկինը։ Այդ պատճառով ավելի լավ է գյուղացիական աշխատանքի ինտենսիֆիկանացման այս պլանը թողնել և ուրիշին անցնել։ Հետևյալ անգամ, յերբ մենք մանրամասն կծանոթանանք դեկաբրիստների նախագծերին, կըտեսնենք, վոր դեկաբրիստներն այդ հաշվի առան, վոր նրանք այնուամենայնիվ գյուղացիներին մանր զուտ-սպառողական տնտեսություն եյին թողնում։

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ընկ. Ոլմինսկին իր հոդվածում, վորը յերևի դուք կարդացել եք[1], այսպես է դնում հարցը. պատրաստվում են,—ասում է նա,—դեկաբրիստների հարյուրամյա հոբելյանը տոնելու, պատրաստվում են նրանց արձանը կառուցելու և այլն։ Ինչի՞ համար։ Ո՞վքեր եյին դեկաբրիստները։ Դրանք,—ասում է նա,—կալվածատերեր եյին, վորոնք խաբելով զինվորներին՝ Սենատյան հրապարակը տարան և անամոթաբար թողին նրանց, յերբ ցարն սկսեց այդ զինվորներին գնդակահարել։ Դրանք զուտ-կալվածատիրական շահերի ներկայացուցիչներն եյին, վորոնք միայն կալվածատիրական շահի մասին եյին հոգում։ Վորպես ապացույց նա մի բավական հանելուկային ցիտատ է բերում Պեստելի «Русская Правда»-ից։ Յեվ ահա,—հարց է տալիս ընկ. Ոլմինսկին,—ի՞նչ պիտի տոնենք մենք 1925 թվի դեկտեմբերին, մեր առաջին պրոլետարական հեղափոխության քսանամյակը, թե՞ կալվածատերերի՝ զինվորներին խաբելու հարյուրամյակը։

Ինչ վերաբերում է այս կամ այն հոբելյանի տոնակատարությանը, այստեղ յես, յեթե կուզեք, համաձայն եմ ընկ. Ոլմինսկու հետ, վոր առհասարակ մենք հոբելյաններ չպետք է տոնենք։ Հոբելյանը բուրժուական սովորություն է, դա այն է, վոր այս կամ այն հանդեսը վորոշ ժամկետների յեն հարմարեցնում, նախ և առաջ մարդկային կյանքի, անհատական կյանքի ժամկետներին։ Այդ պատճառով հոբելյանը չափազանց անհատական բան է. այս իմաստով յես այն ժամանակ էլ բողոքում եյի, յերբ իմ հոբելյանն եյին կատարում, կարծեմ 2 կամ 3 տարի առաջ։ Բայց համենայն դեպս, յերբ մարդիկ սկսել են հոբելյանի այս բուրժուական խաղը, ապա պետք է հոբելյանի կանոնները պահպանել։ Ի՞նչ բան է հոբելյանը։ Կա հարյուրամյա հոբելյան, կա կես դարի հոբելյան, կա քառորդ դարի հոբելյան։ Յեվ մենք տոնեցինք նորերս մեր կուսակցության հիմնադրման 25-ամյա հոբելյանը, տոնեցինք ընկ. Լենինի 50-ամյակը։ 20 տարին հոբելյանական ժամկետ չէ։ Վերջերս սկսել են նույնիսկ 5-ամյա հոբելյաններ էլ տոնել, սակայն սրան բոլորը վորոշ կասկածով և հեգնանքով են վերաբերվում, այնպես վոր հոբելյանական տեսակետից ընկ. Ոլմինսկին ավելի յե իրավացի, քան նա առհասարակ մտածում է։ Մեր առաջին պրոլետարական հեղափոխությունը մենք պետք է հիշենք յուրաքանչյուր դեկտեմբերին՝ անկախ նրանից՝ 20-րդ, 18-րդ, թե 23-րդ դեկտեմբերն է,—ամեն անգամ չի խանգարում նրան հիշել, հոդվածներ նվիրել, խոսել նրա մասին, այս առթիվ հուշերի յերեկոներ կազմակերպել և այլն։ Այս բոլորը շատ լավ կլինի։

[1] «Рабочая Москва» լրագրի 1923 թվի դեկտեմբերի 18-ի համարում։

Դեկաբրիստների առթիվ վոչ վոք չի առաջարկում յուրաքանչյուր դեկտեմբեր հիշել նրանց, սակայն նրանց 100-ամյա տարեդարձն այնուամենայնիվ պետք է հիշատակել։ Թե ինչու համար, այդ յես հետագայում կասեմ, իսկ դեռ այժմս պիտի ասեմ, վոր դեկաբրիստները՝ հակառակ ընկ. Ոլմինսկու կարծիքի՝ յերբեք բոլորն էլ կալվածատերեր չեն յեղել, վորոնք զինվորներին խաբելով Սենատյան հրապարակն են տարել, այլ իրենց վորոշ մասով, այն մասով, վորը գրեթե ներկայացրված չի յեղել Սենատյան հրապարակում, սակայն յերկրում բավական լավ եր ներկայացրված, իսկական հեղափոխականներ եյին և թեկուզ իրենց մի թևով՝ հեղափոխականներ-դեմոկրատներ։ Նրանք մի բան չեյին միայն. նրանք սոցիալիստներ և հեղափոխականներ-պրոլետարներ չեյին։ Դա միանգամայն ճիշտ է, բայց այն ժամանակ ընդհանրապես վոչ մի պրոլետար Ռուսաստանում չի յեղել և չեր էլ կարող լինել, քանի վոր գոյություն ուներ ճորտատիրական իրավունք. և ըստ ամենայնի պարզ է, վոր դեկաբրիստներից պահանջել, վոր նրանք բացի այդ նաև պրոլետարական կուսակցություն լինեն, դա նույն է, թե պահանջել, վոր խնձորները հասնեն մայիսին, յերբ նրանք միայն օգոստոսին կամ սեպտեմբերին են հասնում։ Դրանում դեկաբրիստները հանցավոր չեն, իսկ մնացած ամեն ինչում, նրանք, ինչպես կտեսնեք, հեղափոխականության այն ծայրահեղ սահմանին հասան, վորը միայն հնարավոր է վոչ պրոլետարական դասակարգերի համար, վորը հնարավոր է խոշոր և մանր բուրժուազիայի համար։ Իսկ դեկաբրիստների ագրարային ծրագիրը, ինչ-կտեսնեք և ինչպես յես անցյալ անգամ արդեն ասացի, մի առանցք է, վոր շարունակվում, հասնում է մինչև 1917 թիվը, յերբ հրատարակվեց Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դեկրետը հողի մասին. մենք բոլորս Պեստելի ագրարային ծրագրից ենք մեկնում, ինչպես յես կաշխատեմ այն այսօր ապացուցել։ Ճիշտ է, դա սաղմնավորումն է, բայց ամեն ինչ մի բանից ծնունդ է առնում, և մեզ համար հետաքրքիր է մեր սեփական հեղափոխությունը քննել, հետևել մինչև նրա այդ առաջին սաղմերը։

Նախ և առաջ, վոչ միայն դեկտեմբերյան յելույթը չի սպառվում նրանով, ինչ Սենատյան հրապարակում տեղի ունեցավ 1825 թ. դեկտ. 14-ին, այլ ամենալուրջն այնտեղ չեր կատարվում։ Յեթե բոլորի հայացքները Պետերբուրգին եյին բևեռած, և մինչև հիմա յել պատմաբանների հայացքները բևեռած են մնում, դա այն պատճառով է, վոր Պետերբուրգում վճռվեց ամբողջ շարժման բախտը, նա այնտեղ վորոշվեց, անկասկած։ Բայց չէ՞ վոր ընկ. Ոլմինսկին սուբյեկտիվորեն է մոտենում, այն տեսակետից, վոր դեկաբրիստները կալվածատերեր եյին, վորոնք խաբեցին զինվորներին։ Սուբյեկտիվորեն մոտենալով, ստիպված ենք դեկաբրիստներին այդ սուբյեկտիվ գծով էլ գնահատել, նշանակում է՝ նրանց ծրագրերի ցայտունությամբ և նրանց յելույթի վճռականությամբ։ Յեվ ահա ամենավառ ծրագրերը և ամենավճռական յելույթները մենք հանդիպում ենք վոչ թե Պետերբուրգում, այլ Պետերբուրգից շատ հեռու, այժմյան Կիևի, Վոլինի, Պոդոլսկի նահանգների տերրիտորիայի վրա, ուր կենտրոնացած եյին այն ժամանակ ռուսական բանակի գլխավոր ուժերը,—այնտեղ ենք մենք հանդիպում դեկաբրիստական ամենաձախ կազմակերպությանը, այսպես կոչված՝ «Միացած սլավոնների ընկերությանը»։ «Միացած սլավոնների» այս ընկերությունը կատարելապես մերկ, չքավոր, մուրացիկ բանակային սպանե-

րից էր բաղկացած, մեծ մասամբ՝ հրետանու սպաներից, վորոնք այն ժամանակ էլ սպայության ամենաինտելիգենտ մասն էին կազմում, և նրանց ծրագիրն ընդհանուր վոչինչ չուներ, իհարկե, կալվածատերերի, վորպես այդպիսիների հետ։

«Միացյալ սլավոնների» անունն արդեն ցույց է տալիս, վոր այդ մարդիկ պատրաստվում էին հեղափոխություն կատարելու վոչ թե ազգային-ռուսական, այլ ընդհանուր-սլավոնական մասշտաբով։ Յերևի առիթ եք ունեցել դուք լսել սլավոնասերների, XIX դարի 40-ական և 50-ական թվականների լեգալ կալվածատիրական գրական հոսանքի մասին, և շահավետ է հիշել, ինչպես 90-ական թվականների մեր լեգալ նարոդնիկները, վորոնց դեմ պայքարում էին Պլեխանովն ու Լենինը, հեղափոխական նախորդներ ունեին հանձինս 70-ական թվականների նարոդնիկների, այնպես էլ լեգալ սլավոնասերներն իրենց հեղափոխական նախորդներն ունեին հանձինս այդ «Միացյալ սլավոնների ընկերության»։ «Միացյալ սլավոնների ընկերությունն» իրեն նպատակ էր դնում մի ֆեդերատիվ հանրապետության մեջ միավորելու սլավոնական բոլոր ցեղերը և հսկայական ազատ սլավոնական պետություն կազմելու, վորի մի անկյունն Ադրիատիկ ծովին հասներ, մյուսը՝ Բալտիկ, յերրորդը՝ Սպիտակ և չորրորդը՝ Սև ծովին։ Ահա թե ինչպիսի հսկայական սահմաններ էին նախագծում նրանք այդ ֆեդերացիայի համար։ Դա նրանց ծրագրի, այսպես ասած, տեսական մասն էր։ Այս տեսական ծրագիրն իրականացնելու համար, ինչպես դուք կռահում եք, նրանց վոչ մի քայլ չհաջողվեց անել, վորովհետև այն, ինչ պետք էր ամենից առաջ անել այսպիսի սլավոնական կազմակերպություն կազմելու համար, դա պետական իշխանության գրավելն է թեկուզ Ռուսաստանում, իսկ վորովհետև դեկաբրիստներին չհաջողվեց այդ անել, դրանով իսկ տապալվեց նրանց ամբողջ պլանը։ Ավելի գործնական տեսակետից այդ «միացյալ սլավոնները» նրանով են հետաքրքիր, վոր միայն, վորքան ես գիտեմ, նրանց բառագործածության մեջ «դեմոկրատիա» տերմինը կա։ Մյուսները խոսում էին հանրապետության, ժողովրդա-իրավարարության մասին, ինչի մասին վոր կուզեք. նույնիսկ Պեստելի խոսքերում յես չեմ հիշում «դեմոկրատիա» տերմինը, իսկ «միացյալ սլավոններն» այն ունեն. Նրանք դեմոկրատներ են։ Աշխարհհայացքի մի այլ հետաքրքիր գիծ—նրանք ազատ մտածողներ էին, վորոնք հանձինս վոմանց, մինչև հետևողական և վճռական աթեիզմի էին հասնում։ Բուրժուական գրականությունը գտնում է, իհարկե, սրա ինդիվիդուալիստական բացատրությունը նրանում, վոր «միացյալ սլավոնների» ընկերության հիմնադիր Բորիսովը յերկար ժամանակ իր մարտկոցով մի լեհ կալվածատերի կալվածքում էր գտնվում, ուր ֆրանսիական հարուստ գրադարան կար, և այնտեղ կարդացել է XVIII դարի բոլոր ֆրանսիական աթեիստներին և մատերիալիստներին։ Ինչպես կռահում եք, մեզ համար ավելի հետաքրքիր է այս միացումը—դեմոկրատիզմի և աթեիզմի միացումը, քան թե այն պատահական փաստը, վոր Բորիսովն առիթ է ունեցել կարդալու Դիդրոյի, Հելվեցիի, Հոլբախի և ուրիշների գրվածքները։

Հենց այս «միացյալ սլավոններն» էլ դեկաբրիստների դավադրությունների հետ կապված միակ վճռական յելույթի նախաձեռնողներն են, այն է՝ Չերնիգովի գնդի ապստամբության՝ 1825 թվի դեկտեմբերի վերջին։ Հակառակ տարածված այն կարծիքի, վոր դեկաբրիստների ռազմական գոր-

ծողությունների կենտրոնը Պետերբուրգումն էր, ինչպես հիմա կտեսնեք, իրականում, միակ իսկական զինված ապստամբությունը և այն էլ վողբերգական վսեմության ճաճանչով պարուրված ապստամբությունը, ուր մարդիկ ուղղակի կործանման էին դիմում, մի միջադեպ, վորն արդարացնում է Պլեխանովի հայտնի բնութագրությունը, վոր դեկաբրիստները մարդիկ էին, վորոնք վորոշել էին զոհել իրենց, վորպեսզի գալիք սերունդներին ճանապարհ ցույց տան՝ այսպիսի միակ միջադեպը հենց Չերնիգովյան գնդի ապստամբությունն էր։ Նախ՝ դա զինված ապստամբություն էր։ Մարդիկ գնում էին հրացաններով արձակելու, կռվելու համար։ Յերկրորդ՝ դա մի ապստամբություն էր առանց հաջողության վորևէ գրավականի, վորովհետև ամբողջ բանակի դեմ մի գունդ էր միայն ապստամբվում և վոչ մի, ինչպես քաղքենիական լեզվով է ասվում, բանական հիմք չկար սպասելու, վոր բանակը կմիանա նրան։ Բանակը նրան չմիացավ, և գեներալ Գեյսմարի հեծելազորն առանց մի դժվարության ճնշեց այդ ապստամբությունը, նախ և առաջ այն պատճառով, վոր Գեյսմարը թնդանոթներ ուներ, իսկ չերնիգովցիները թնդանոթ չունեին։ Զուր չէ, վոր այդ ապստամբության մասնակցած մի ամբողջ շարք սպաներ՝ Կուզմինը, Իպպոլիտ Մուրավյով-Ապոստոլն իրենց կյանքին վերջ տվին հենց կռվի դաշտում։ Դա իրոք վոր դեկաբրիստական ապստամբության ամենավողբերգական մոմենտն էր, և այդ վողբերգական մոմենտը նախապատրաստվել, հնարավոր էր դարձել միայն «միացյալ սլավոնների» շնորհիվ։ Միայն նրանք զինվորների հետ կապ ունեին, զինվորների մեջ պրոպագանդ նրանք էին միայն տանում, ճիշտ է նախկին Սեմենովսկու գնդի զինվորների ոժանդակությամբ, վորը ցրվեց 1820 թվականի ապստամբությունից հետո. բայց այսպես թե այնպես, նրանք այն շաղկապն էին, այն ապարատն էին, այժմյան արտահայտությամբ, վորը Հարավային ընկերության ղեկավարներին զինվորական մասսայի հետ էր կապում և առանց նրանց, ինչպես այդ արձանագրում են նաև «սլավոններին» մոտ Հարավային ընկերության մասնակցողները, առանց նրանց ինքը յելույթն անհնար կլիներ։

Այսպիսով, դեկաբրիստների ծայրահեղ ձախ խումբը, դեմոկրատիկ և աթեիստական խումբը, վորի մեջ չափազանց դժվար է վորևէ կալվածատիրական շահեր գտնելը, այդ ծայրահեղ ձախ խումբը հենց ամենալուրջ խումբն էր այն իմաստով, վոր նա միակն էր, վոր իսկական զինված ապստամբություն կազմակերպեց և, իհարկե, այս խմբին չի կարող վերաբերվել ընկ. Ոլմինսկու բնութագրությունը։ Սակայն առաջ գնանք։ «Միացյալ սլավոնները» քիչ են հայտնի։ Չափազանց բնորոշ է, վոր դեկաբրիստների բուրժուա-ազատամիտ պատմաբանները նրանց մասին գրեթե լռում էին։ Ահա, թե ինչու արժե այդ 100-ամյա հոբելյանը կատարել, վորովհետև դա առիթ կտա այդ «միացյալ սլավոնների» մասին գրքույկ հրատարակելու։ Կենտր. արխիվի 100-ամյա հոբելյանին նվիրված հրատարակության ծրագրի մեջ մտնում է հենց այդ գրքույկը։

Սակայն, յեթե մենք դիմենք «միացյալ սլավոնների» աշխարհագրականորեն ամենամոտ դեկաբրիստական ընկերությանը, մենք կհանդիպենք Հարավային ընկերությանը Պեստելի գլխավորությամբ։ Սա ի՞նչ է։ Պեստելից, նրա «Русская Правда»-ից ընկ. Ոլմինսկին վերցրել է նրա ցիտատն այն մասին, վոր ճորտատիրական իրավունքը պետք է վերացվի կալվածա-

տերերի շահերը պաշտպանելով, այնպես, վոր կալվածատերերն իրենց յեկամուտներից չզրկվեն, ինչպես ասվում է այդ հատվածում։ Սրանով նա ցուցադրում է իր միտքն այն մասին, վոր դեկաբրիստներին վոգևորող շահերը նեղ-դասակարգային, կալվածատիրական շահեր էյին։ Անցյալ անգամ յես արդեն բացատրեցի, թե ինչ դեր եր խաղում կալվածատիրական տնտեսությունը և նրա դիրքը XIX դարի սկզբներին Ալեքսանդր I-ի շրջանի հասարակական շարժումներում, այնպես վոր յես չեմ առարկի, վոր սրանց հիմքը, անկասկած, կալվածատիրական շահերն էյին կազմում։ Բայց և այնպես չի կարելի Պեստելին մի մարդ դուրս բերել, վորը մտածում եր միայն նրա մասին, վորպեսզի գյուղացիներին ազատագրի կալվածատերերի համար ձեռնտու ձևով, և դրա համար հեղափոխություն եր կատարում։ Նախ և առաջ, այս ցիտատը միանգամայն հակառակ է այն փաստաթղթի ամբողջ իմաստին և վոգուն, վորտեղից նա վերցրած է՝ «Русская Правда»-ին, ցիտատն իսկական է, վատ բան չմտածեք։ Վ՞րն է «Русская Правда»-յում շարադրված Պեստելի սոցիալական և տնտեսական ծրագրի հիմնական միտքը։ Այդ միտքն ամենից մոտ կլինի բնորոշել, վորպես հողի ազգայնացում։ Պեստելը սակավաթիվ դեկաբրիստներից մեկն եր, վորոնք հասկանում էյին, վոր հեղաշրջումն այն ժամանակ միայն հաստատուն կլինի, յերբ նրանով շահագրգռված կլինի ժողովրդական լայն մասսան, յերբ նրանով շահագրգռված կլինի գյուղացիությունը, և նա հետևյալ կերպ եր յենթադրում շահագրգռել գյուղացիներին։ Պետության բոլոր հողերը հեղափոխության ժամանակ, կամ նրանից անմիջապես հետո, մի ընդհանուր ֆոնդ էյին կազմում. այդ ֆոնդը հետո յերկու կիսի յեր բաժանվում, և նրա կեսը գնում եր գյուղացիներին բաժանելու, բայց վոչ թե վորպես սեփականություն, այլ ոգտագործության համար։ Այդ կիսից յուրաքանչյուրն իր բաժինն եր ստանում։ Յեթե դուք հիշեք, վոր 1825 թվին (այդ մասին յես հիշատակեցի անցյալ անգամ) գյուղացիական հողաբաժիններն ամբողջ վարելահողի $^1/_3$ մասն էյին միայն կազմում (XVIII դարում նրա $^1/_2$ էյին կազմում, բայց դուք հիշում եք, վոր կալվածատերերը խոշոր հողեր էյին խլում գյուղացիներից), ապա դուք կտեսնեք, վոր Պեստելի նախագիծը նախատեսնում եր հողի մեծ հավելում գյուղացիներին։ Հողի այդ կեսը վոլոստի (շրջան) տրամադրության տակ եր դրվում և վոլոստները բաշխում էյին այն ազգաբնակչության միջև, այնպես վոր Ռուսաստանի յուրաքանչյուր քաղաքացի, ասում եր Պեստելը, հողի տեր կլինի և վոչ մի մարդ չի լինի Ռուսաստանում, վորը վոր հող չունենա։ Այդ հողը Պեստելի կարծիքով պետք է անհրաժեշտն արտադրելու համար ծառայեր, այսինքն՝ ուրիշ խոսքով, այդ հողից կստացվեր անհրաժեշտ պրոդուկտը։ Հողի մյուս կեսը, վորը պետության տրամադրության տակ եր մընում; պետք եր «առատության» արտադրությանը ծառայեր, այսինքն, այլ խոսքով՝ այս յերկրորդ կիսից պետք է հավելյալ պրոդուկտ ստացվեր. այդ հավելյալ պրոդուկտի ստացումն ինտենսիֆիկանացնելու համար, այդ հողերը պետական գանձարկղը կարող եր մեծ հողամասերով կապալով տալ և նույնիսկ վաճառել մասնավոր մարդկանց։ Այսպիսով, Պեստելի ծրագիրը չեր բացասում Ռուսաստանում բուրժուական հողատիրության կազմակերպումը, մի հարց եր միայն մնում առանց պարզելու, թե հապա մեր բուրժուական հողատերերը վորտեղից պետք է բանվորական ուժ ձեռք բերեն, քանի վոր բոլոր գյուղացիները հողամաս կունենան, այն էլ համեմատաբար ավելի մեծ

չափերի, քան թե նրանք առաջ ունեյին։ Ի՞նչը կարող է ստիպել այն ժամանակ այդ գյուղացիներին այդ մասնավոր հողատերերի հողի վրա և այդ բուրժուական կալվածքներում աշխատել։ Պեստելի համար բնորոշ է, վոր այս հարցը անվորոշ եր մնում, բնորոշ է այն պատճառով, վոր ինչպես դուք գիտեք, կամ հետագայում կիմանաք, նա անվորոշ եր մնում նաև ամբողջ նարոդնիկյան շարժման համար։ Վերջիվերջո Պեստելն ու նրա հետևորդները պետք է հանգեյին հողի սոցիալիզացիային, այսինքն՝ ամբողջ հողի և վոչ թե միայն այս կիսի. փաստորեն ազգայնացված հողը յերկու մասի բաժանելով՝ վոլոստի (շրջանային) և պետական հողի՝ Պեստելը պարզապես XIX դարի սկզբների ռուսական հողատիրության այն կապիտալիստական տենդենցներին եր ընդառաջում, վորոնց մասին յես ձեզ ասացի անցյալ անգամ։ Դա մի կոմպրոմիս եր։ Պեստելը վերացական տեսաբան չեր, ինչպես «միացյալ սլավոնները» էյին՝ չորս ծովերի միջև ֆեդերացիա ստեղծելու իրենց պլանով։ Պեստելը պրակտիկ եր, գործնական եր։ Պեստելը մեր որերի գործնական-հեղափոխականի հեռավոր նախորդն եր. պրակտիկ լինելով, նա, ինչպես և մեր մեծ հեղափոխականը, վորոշ պայմաններին հարմարվում եր։ Մենք էլ սկզբում կողմնակից էյինք ատրեզկաների (հատումների), հետո մունիցիպալիզացիայի և հետո աստիճանաբար հասանք 1917 թվի հողային դեկրետին։ Այնպես էլ Պեստելը, այն ժամանակվա պայմաններին հարմարվելով՝ առաջադրեց հողը յերկու մասի բաժանելու այս ծրագիրն՝ առանց ազգայնացումը մինչև վերջ հասցնելու։ Բայց ինքնըստինքյան հասկանալի յե, վոր նույնիսկ այս կիսաազգայնացումը նախատեսնում եր կալվածատերերի, վորպես դասակարգի, վերացումը։ Այլ կերպ չի յել կարելի պատկերացնել։ Յեթե վերցնելու լինենք Պեստելի գրքի աղնվականությանը նվիրված գլուխը (դա կա Կովալևսկու քրեստոմատիայում), կտեսնեք, վոր Պեստելը չափազանց տրամաբանական ձևով այն մտքին է հանգում, վոր ընդհանրապես դասերը պետք է վերացնել, աղնվականությունը՝ մասնավորապես։ Իսկ այն հատվածում, վորն Ոլմինսկին է բերում, աղնվական արտոնագրային ժողովների մասին է խոսում—մի բացարձակ անհամաձայնություն, վորը, դժբախտաբար, մինչև հիմա դեռ չի բացատրվել, սակայն այն հեշտությամբ կհասկանա յուրաքանչյուր վոք, վոր տեսել է «Русская Правда»-յի բնագիրը։ Պեստելի այդ «Русская Правда»-ն, այդ նախագիծն անավարտ մի սևագիր է, վորը խոսքի կիսին է վերջանում, մի սևագիր, վորտեղ մի տող է գրված, հետո ջնջված, վերևից գրված է յերկրորդ տողը, նա յել ջնջված, յերրորդն է գրված, նա յել ջնջված ու կողքից չորրորդն է գրված։ Այսպիսով, մենք ունենք առնվազն յերեք, գուցե և չորս խմբագրություն։ Այս չորս խմբագրություններից վ՞րին է պատկանում հիշյալ հատվածը։ Դժբախտաբար, յես հնարավորություն չունեցա գնալ արխիվ և ստուգել այս քաղվածքը։ Յեվ սա առաջին հարցն է, վորով պետք է մոտենալ Պեստելին. Նրա փաստաթղթի վ՞ր խմբագրությանն է վերաբերում այս կամ այն ցիտատը, վորովհետև նման խմբագրությունները միքանի հատ են և յեթե մենք նրանք վերականգնենք, այն ժամանակ յերևի ներքին կապն էլ կվերականգնվի։ Բայց դեռ այժմս պետք է արձանագրենք յերկու փաստի առկայությունը. մի կողմից ազգայնացում, թեպետև կիսատ, բուրժուական հողատիրություն թույլատրող, մյուս կողմից՝ կալվածատերերի շահերի պաշտպանություն։ Այս յերկու բաները տրամաբանորեն անհնարին է միացնել։ Պեստելի

մի սեպագրությունից, վորը չի մտել «Русская Правда»-յի մեջ, մենք գիտենք, վոր Պեստելն առաջինն եր Ռուսաստանում, վոր լատիֆունդիաների բռնագրավումն եր յենթադրում։ Ճիշտ ե, նա միայն խոշորագույն կալվածքներն եր յենթադրում (5,000 դեսյատինից ավելի մեծ տարածությամբ) անվճար կերպով պետությանը տալ, այսինքն՝ բռնագրավել. սրանից ավելի փոքր հողերի համար նրանց տերերը դրամական վորոշ հատուցում եյին ստանում։ Սա նորից հակասում ե այն ցիտատին, վոր ընկ. Ոլմինսկին ե բերել և վորը յենթադրում ե, վոր կալվածատերերը պահպանվում են։

Այսպիսով, ցիտատն ինքնըստինքյան դեռ չի ապացուցում, ինչ վոր անհրաժեշտ ե, այսինքն, վոր Պեստելը կալվածատիրական շահերի ներկայացուցիչն եր։ Կալվածատիրական շահերի ներկայացուցիչ նա չի յեղել, բայց այն հանգամանքը, վոր նա ինքը հողագործ եր, դա, իհարկե, ձեզ համար, վորպես լավ մարքսիստների համար չի կարող վորպես արգումենտ ծառայել։ Նման արգումենտներով ղեկավարվում ե Ռոժկովը։ Ինչպես գիտեք, նա բոլոր դեկաբրիստներին, ըստ նրանց հողերի, վորոշ խմբերի յե բաժանում։ Վերին աստիճանի տարօրինակ բաժանում ե, վորովհետև մարդու այս կամ այն դիրքը շարժման մեջ չի վորոշվում նրա անձնական հարստությունով։ Այլ կերպ մենք չենք հասկանա, թե ինչպես, այնպիսի մի մարդ, ինչպիսին Ենգելսն ե, վորը հարուստ մարդ եր, գործարանատեր եր, միևնույն ժամանակ Յեվրոպայի հեղափոխական շարժման, բանվորական շարժման հիմնադիրներից մեկն եր։ Պարզ ե, վոր այդպես չի կարելի հարցին մոտենալ։ Յես նրա համար եմ այս ընդգծում, վոր գրականության մեջ դուք կհանդիպեք, վոր Պեստելը հողագործ ազնվական եր, և դրանից յեզրակացություններ են արվում, սակայն խնդիրը դրանում չե, այլ նրանում, վոր նա մի ինչ վոր այլ դասակարգի, վոչ ազնվականության շահերն եր արտահայտում։ Այստեղ ել մենք հանդիպում ենք պարադոքսային մի փաստի, վորի մասին յես արդեն խոսել եմ մամուլում։ Ով կարդացել ե իմ հոդվածը «Молодоя Гвардия»-յում, նա հիշում ե, վոր այս արտոնյալ հեծելազորի նախկին սպան, փայլուն գնդապետը, Վիտգենշտեյնի գլխավոր հրամանատարի ադյուտանտը, անշուշտ, մանր բուրժուազիայի առաջին արտահայտիչն եր մեզ մոտ։ Դա պարադոքսային փաստ ե։ Պեստելի ծրագիրը հստակ մանր-բուրժուական ե, իհարկե, նա պրոլետարական չե, դրա մասին նույնիսկ ծիծաղելի յե խոսել, բայց դա հստակ մանր-բուրժուական ծրագիր ե։ Յեվ այստեղ հստակորեն պարզ են, ինչպես յես ցույց եյի տալիս իմ հոդվածում, այս ծրագրի ամենահետաքրքիր, ամենաբազմազան կողմերը՝ այս տեսակետից։ Նախ և առաջ Պեստելի, կարելի յե ասել, խստաբարո վերաբերմունքը դեպի կապիտալը՝ «հարստությունների արիստոկրացիան» (դեկաբրիստները, վորովհետև մտածում և խոսում եյին մեծ մասամբ ֆրանսերեն, արտասանում եյին՝ «արիստոկրացի», «դեմոկրասի» և այլն)։ Հարստությունների արիստոկրացիան Պեստելի համար գլխավոր չարիքն ե, նա շատ ավելի վատ ե, քան ֆեոդալական արիստոկրացիան նրա աչքում, և նա կռվում ե նրա դեմ իր «Русская Правда»-յի առաջին իսկ եջերից սկսած։ Գլխավորը նրա համար այն ե, վոր չթույլատրի այդ «հարստությունների արիստոկրացիան», վոր Ռուսաստանում կատարյալ հավասարություն սահմանվի։ Այս տեսակետից Պեստելը տիպիկ յակոբինյան ե, հավասարության իր այս ձգտումով։ Վոլոստային հողի կիսի նրա բաժանումը միանգամայն հավասար մասերի,

դա հենց տիպիկ յակոբինյան գիծ ե։ Յակոբինյան բոլոր ծրագրներում, դուք ծանոթ եք նրանց, վորովհետև ուսումնասիրել եք ֆրանսիական հեղափոխության պատմությունը, յակոբինյան բոլոր ծրագրներում կա հավասար հողաբաժանության գիծը, և դա քաղաքացիական կոդեկսի միջոցով մտել ե արդի Ֆրանսիայի օրենսդրության մեջ։ Չկա մի ուրիշ ժառանգական իրավունք, վոր սակավ բարենպաստ լիներ մեծ հարստություններ կուտակելուն, քան թե ֆրանսիական ժառանգական իրավունքը, քան թե Code Civil-ը։ Սա Պեստելի ծրագրի մի կողմն ե, զուտ մանր-բուրժուական կողմը։ Ապա հետաքրքիր ե նաև, վոր այդ գնդապետը, նախկին արտոնյալ հեծելազորի սպան, գլխավոր հրամանատարի ադյուտանտը, շատ ե հոգում քաղքենիների մասին, ազգաբնակչության այնպիսի մի խմբի մասին, վորի վրա այն ժամանակ Ռուսաստանում վոչ վոք ուշադրություն չեր դարձնում, և վորը միանգամայն յերկրորդական տեղ եր բռնում։ Նա շատ եր հոգում քաղքենիների մասին, նա շատ եր հոգում այն ժամանակվա Ռուսաստանում շատ փոքրաթիվ մանր ազատ հողատերերի, միածուխների մասին, և այլն։ Նա մեծ հոգատարությամբ զգուշացնում ե, վոր նրանց հողերը վոչ մի դեպքում չպետք ե ազգայնացնել։ Փակագծերի մեջ ասենք, վոր սա մի ավելորդ ապացույց ե, վոր մնացած հողերը յենթադրվում եր ազգայնացնել։ Յեվ վերջապես նրա այս գիծը վոչ միայն ճակատից, այլ և թիկունքից բնորոշելու համար, պետք ե ասենք, վոր նա անկասկած, թեպետ և վոչ ցայտուն հակասեմիտական եր։ Նա յենթադրում եր բոլոր հրեաներին Ռուսաստանում ի մի հավաքել, նրանց վորոշ զինված ուժ տալ և ուղարկել Պաղեստինը նվաճելու, վորպեսզի Ռուսաստանը նրանցից ազատի։

Ինչ կողմից ել վոր մոտենանք, դա տիպիկ մանր բուրժուա յե, առաջին մանր բուրժուան ե, վորը հանդես ե գալիս մեր առաջ քաղաքականության մեջ։ Ինչպես տեսնում եք, «միացյալ սլավոնների» այս մերձավոր հարևանն ել գործնականում յերևի պակաս հեղափոխական չե, քան նրանք (պատմությանը չհաջողվեց այդ ստուգել, վորովհետև Պեստելն իր յելույթից առաջ ձերբակալվեց և չկարողացավ ցույց տալ, թե ինչ կաներ նա, յեթե ազատ լիներ)—այդ մարդն ել բավական հեռու յեր կալվածատիրական դասակարգային շահերից։ Նա դասակարգային ստատուս ուներ, բայց բոլորովին այլ դասակարգի, վոչ կալվածատիրական։ Սրան համեմատ և՛ իր քաղաքական ծրագրով, և՛ իր տակտիկայով Պեստելը մեծ արմատական եր։ Իր քաղաքական ծրագրով նա ֆրանսիացի հանրապետական Դեստյու-դը-Տրասիի, 1789 թվի հեղափոխության գործիչներից մեկի հետևորդն եր (Ռոբեսպյերի ժամանակ նա բանտարկվեց), վորը Նապոլեոն I ժամանակ Ամերիկա փախավ և այնտեղ գրեց իր «Մոնտեսկյոյի «Օրենքների վոգու» կոմենտարիաները» գիրքը, ուր նա առանձնապես բուռն կերպով դեմ ե դուրս գալիս միանձնյա իշխանությանը, ինչ ձևի յել վոր նա լինի։ Դեստյու-դը-Տրասիի համար իշխանությունն այն ժամանակ միայն համատեղելի յե ազգաբնակչության ազատության հետ, յերբ դա կոլեկտիվ, կոլեգիալ իշխանություն ե։ Ուստի և պետության գլուխ, ըստ Դեստյու-դը-Տրասիի, պետք ե կանգնի միքանի մարդկանցից բաղկացած դիրեկտորիան և վոչ թե մի մարդ։ Նույն կարծիքի յե և Պեստելը։ Պարզ լեզվով ասած, նրա բոլոր բարձր հիմնարկությունները, բոլոր այդ «իշխանական վեչեները», «իշխանական դումաները», «գերագույն դումաները» և այլն—նրանք շատ շատ են, բոլորը հիշելու հա-

թավորություն չկա, պետք է պարզապես աղյուսակ կազմել և անգիր անել, դրա համբերությունը չունեցա, բայց յես ինձ նրանով եմ մխիթարում, վոր իրենք դեկաբրիստները գործ չեյին ածում այս անհեթեթ տերմինները, վորոնք հնարված են 1812 թվից հետո այն ժամանակվա ազգայնականության ազդեցության տակ,— պարզապես «դիրեկտորիա» չեն նշանակում, և նրանց նամակագրության ու ցուցմունքների մեջ հենց այս բառն է գործածվում։ Իշխանության գլուխ պիտի կանգնած լինի դիրեկտորիան, իսկ նրա հետ դեմոկրատիկ ձևով, իհարկե, ընտրված ազգային ժողովը։ Պեստելը վոչ մի ընտրողական ցենզի մասին չի խոսում, և այդ ամբողջ մեքենան զուտ հանրապետականորեն-դեմոկրատիկ ձևով է կառուցված։

Նշանակում է, քաղաքական բնագավառում Պեստելը վերին աստիճանի հեղափոխական հանրապետական-դեմոկրատ եր, վորը քաղաքական իրավունքներ եր տալիս ամբողջ ազգաբնակությանը, առանց բացառությունների։ Սա, ինչպես կտեսնեք, անհրաժեշտ է ընդգծել, վորովհետև մնացած դեկաբրիստները յերբեք ել դեմոկրատներ չեն յեղել։ Յեվ վերջապես, Պեստելի տակտիկան, վոր մենք կարող ենք գնահատել միայն ըստ նրա նախագծերի, վորովհետև Պեստելին չհաջողվեց անձամբ դուրս գալ, այդ տակտիկան զուտ հեղափոխական եր, դա զինված ապստամբության տակտիկա յեր։ Պեստելը հույս ուներ, վոր կկարողանա իր յետևից տանել այն ամբողջ կորպուսը, վորին նա պատկանում եր, այդ կորպուսի միջոցով ձերբակալել Ալեքսանդր I-ին, արշավել Մոսկվայի վրա, ապստամբություն բարձրացնել Պետերբուրգի գվարդիայում և նավատորմիղում և, այսպիսով, զինված ձեռքով հեղաշրջում կատարել։ Ընդսմին չափազանց հետաքրքիր մի գիծ, վոր մենք հետագայում կհանդիպենք, վորը նույնպես այս ամբողջ հեղափոխական շարժման առանցքն է կազմում,— այն է, վոր հեղափոխության հաղթանակի անհրաժեշտ պայման Պեստելը համարում եր Ռոմանովների ամբողջ տան վոչնչացումը։ Այսպիսով, այն նեմեզիդան, վորին արժանացան Ռոմանովները 1918 թ. ամառը Ուրալում, դա առաջին անգամ հորիզոնի վրա յերևաց ռուսական գլխավոր հրամանատարի ադյուտանտի և փայլուն արտոնյալ հեծելազորի սպայի նախագծերի մեջ, վորն արտահայտում եր ռուսական բուրժուազիայի շահերը։ Ամեն տեսակի դեպքեր են լինում, ընկերներ, դիալեկտիկական, պատմական պրոցեսում։ Կրկնում եմ, Հարավային ընկերությանը չհաջողվեց հանդես գալու։ Միակ ապստամբությունը, վորը կազմակերպել եյին «միացյալ սլավոնները», ճիշտ է, գլխավորում եր Պեստելի ամենամոտ ընկերներից մեկը՝ Ս. Ի. Մուրավյով-Ապոստոլը։ Սա սակավաթիվ դեկաբրիստ-պրոպագանդիստներից մեկն եր. նա պրոպագանդա յեր անում զինվորների մեջ, բայց դրանով ել ամեն ինչ սահմանափակվեց։ Ինքը Պեստելը պրովոկացիայի հետևանքով ձերբակալվեց յելույթից առաջ, նախքան դեկտեմբերի 14-ը, և այդ Հարավային ընկերության մասին կարելի յե դատել միայն ըստ նրա նախագծերի։ Հիմա պետք է դիմենք դեկաբրիստների ծայրահեղ աջ խմբին՝ Հյուսիսային ընկերությանը։

* * *

Այսպիսով, մենք վերլուծեցինք յերկու խումբ՝ այսպես կոչված «միացյալ սլավոններին» և Հարավային ընկերությունը, վոր գլխավորում եր Պեստելը։ Չնայած նրան, վոր Հարավային ընկերության կազմը չափազանց արիստոկրատիկ եր՝ նրա մեջ եյին մտնում իշխան Վոլկոնսկին, Մուրավյով-Ապոստոլը, վորը Ուկրայնայի ամենաականավոր ազնվական ընտանիքներից մեկի ներկայացուցիչն եր, այնուամենայնիվ այս Հարավային ընկերությունը նույնպես, ինչպես և մերկ-սպաներից բաղկացած «միացյալ սլավոնների» ընկերությունը հավասարապես յերկու մանր-բուրժուական խմբավորումներ եյին։ Մեկը ձախ, արմատական և մշուշապատ եր իր իդեոլոգիայով, մյուսը՝ ավելի հստակ և վորոշակի, բայց ավելի աջ, «հարստությունների արիստոկրատիայի» պարզորոշ կոմպրոմիսով, ինչքան էլ այն չարհամարհեր այդ խմբի ղեկավարը։ Աջ և ձախ եսերներ—այսպես, ընկերներ, կարելի յե նրանց բնորոշել։ Աջ եսերները—դա Պեստելի խումբն է, ձախ եսերները—«միացյալ սլավոնների» խումբը։ Դուք կասեք, վոր անիրավացի յե «միացյալ սլավոններին» եսերների հետ համեմատելը։ Այո, իհարկե, այժմյան եսերներն ինչ-վոր զարշելի բաներ են, բայց չէ՞ վոր չի կարելի այժմյան եսերներին՝ իրոք բնության մեջ յեղած մեծագույն վերասերման այդ արդյունքը՝ ընդունել ամբողջ շարժման համար բնորոշ մի բան։ Յերբ կմոտենա մարտի 1-ի 50-ամյա հոբելյանը, մենք յերևի վորևէ կերպ կհիշենք նարոդովոլցիներին։ Չի կարող պատահել, վոր մենք այս տարեթվի կողքով աննկատելի անցնենք։ Մենք չենք կարող դեկաբրիստների հարյուրամյակի կողքով էլ անցնել, թեկուզ այն պատճառով, վոր մեր մերձավոր հակառակորդները՝ բուրժուական պատմաբանները, զուր չէ, վոր շարունակ առաջ եյին քաշում յերրորդ խմբին, վորի պատմությանը յես հիմա անցնում եմ, այսպես կոչված՝ Հյուսիսային ընկերությանը, վորն իրոք, ինչպես դուք այդ կտեսնեք հիմա, տիպիկ բուրժուա կալվածատիրական խմբավորում եր։ Դա կասկածից դուրս է։

Այս յերրորդ խումբն իր իդեոլոգիան արտահայտել է սահմանադրության մեջ, վորը գտնվեց իշխան Տրուբեցկոյի թղթերում և վորը Ն. Մուրավյովն է կազմել։ Այդ սահմանադրության մեջ մենք նախ և առաջ ընտրական ցենզին ենք հանդիպում։ Յես վերցնում եմ վոչ Կովալենսկու քրեստոմատիայի տեքստը, այլ իսկական բնագիրը, վորը շուտով կհրապարակվի։ Քաղաքացի լինելու համար հետևյալն է անհրաժեշտ. 21 տարեկանից վոչ պակաս հասակ, ապրելու մշտական, հայտնի վայր (նստակյացության ցենզ), առողջ միտք, անձնական և գույքային անկախություն (ամբողջ պրոլետարիատը դուրս է հանվում քաղաքացիների կազմից), հասարակական պարհակություններում պարտաճանաչ լինել, որենքի առաջ անարատ, իր անվամբ սեփականություն, այն է՝ 1) անշարժ գույք 500 արծաթ ռուբլու արժողությամբ և 2) ունենալ շարժական—իրեր կամ կապիտալ 1.000 արծաթ ռուբլու արժողությամբ։

Միանգամայն վորոշակի կերպով ընդգծվում է, վոր Ռուսաստանյան պետության յուրաքանչյուր բնակիչ, վորը քաղաքացի չի յեղել (կնշանակի կարելի յե բնակիչ լինել, բայց քաղաքացի չլինել), բայց իր աշխատանքներով հասել է նրան, վոր ձեռք է բերել անհրաժեշտ կարողությունը, յեթե այլ տեսակետներից էլ համապատասխանում է վերոհիշյալ պայմաններին, անմիջապես քաղաքացի յե դառնում։ 1791 թվի ֆրանսիական սահմանադրությունը յերևի ձեզ հայտնի յե. «pays légal»—«լեգալ յերկիր», ցենզային քաղաքացիներ, վորոնք ունեն վոչ պակաս քան 500 ռ. արժողությամբ հող, կամ 1.000 ռ. շարժական կապիտալ, այսինքն, պարզ ասած՝ վոչ պակաս

քան լավ կուլակը։ Նրանք Ռուսաստանյան հանրապետության կամ կայսրության քաղաքացիների կորպուսն են կազմում, վորովհետև այստեղ յերկու վարիանտ կա՝ ըստ մեկի—հանրապետություն, ըստ մյուսի—միապետություն։ Նրա մնացած բոլոր բնակիչները քաղաքացիներ չեն։

Սա դեռ քիչ է։ Յեթե մենք անցնենք այդ սահմանադրության այն գլուխներին, վորոնք բնորոշում են կառավարչական կազմակերպությունը, ավելի ցայտուն բաներ կգտնենք։

«Յուրաքանչյուր գավառում այն քաղաքացիները (մենք արդեն վարժվեցինք նրան, վոր դրանք բոլորը բնակիչներ չեն), վորոնք այսինչ շարժական գույք և այնինչ անշարժ գույք ունեն, մի տարով հազարապետ են ընտրում»։ Գավառի գլուխ ուրեմն կանգնած է հազարապետը։ Ո՞վ է այդ հազարապետը։ Հազարապետ դառնալու համար անհրաժեշտ է ունենալ՝ առնվազն 21 տարեկան հասակ, անարատ վարք և անշարժ գույք՝ առնվազն 30.000 արծաթ ռուբլու արժողությամբ կամ շարժական՝ վոչ պակաս, քան 60.000 ռ. արժողությամբ։

Սա այնքան բարձր ցենզ է, վոր բնագրում այստեղ ծանոթություն է դրված, վորն արել է այդ բնագիրը կարդացած դեկաբրիստներից վորևե մեկը. «Գրեթե բոլոր հասարակական տիրապետությունները առանց հազարապետների կլինեն»։ Նրանք իրենք էլ հույս չունեին, վոր նրանք յուրաքանչյուր գավառում այնպիսի մարդ կգտնեն, վորն ունենա 30.000 ռ. արծաթ, կամ 60.000 ռ. շարժական գույք։ Ցենզը, պարզ է, վոր ծիծաղելի բարձր էր։ Դուք կռահում եք, վոր այդ հազարապետը քսանից տասնինը դեպքում կալվածատեր էր, և վորովհետև նա կալվածատեր էր, ապա վոչ մի կերպ չի կարելի թույլատրել, վոր նրա նախկին ճորտ գյուղացիներն ընտրություններին մասնակցեն։

Այստեղ ասված է.

«Նրանք, ովքեր ոգտվում են հասարակական տիրապետության հողով, հողատերեր չեն» և, հետևապես, ընտրողների թվին չեն պատկանում, իսկ վորովհետև գյուղացիների հողը հասարակական տիրապետությամբ է, ապա, նշանակում է, գյուղացիները քաղաքացիներ չեն, հողատերեր չեն, հետևապես ընտրություններին նրանք չեն մասնակցում։ Սա սքանչելի մի կտոր է։

Միանգամայն բնական է, վոր ճորտերի ազատագրումը նախագծելով, սահմանադրությունն ասում է. «Կալվածատերերի հողերն իրենց են մնում», «Գյուղացիների տները նրանց բանջարանոցներով նրանց սեփականությունն են ճանաչվում՝ նրանց պատկանող բոլոր յերկրագործական գործիքներով և անասուններով»։ Սա մի ազատագրում է լոկ կալվածքով և բանջարանոցով, առանց հողի։ Դա արդեն այնքան անհաջող թվաց իրենց իսկ Ն. Մուրավյովի և Տրուբեցկոյի ընկերներին, վոր հետո ավելացրին՝ յերկու դեսյատին յուրաքանչյուր տան համար, այսինքն, ներեցեք արտահայտությանս, կատվի բաժին։ Յերկու դեսյատին վոչ թե շնչի, այլ տան համար։ Միանգամայն անբավարար հողաբաժին։ Սա միանգամայն հստակ կալվածատիրական մի ծրագիր է, վորով պատրաստվում եյին Ռուսաստանը կալվածատիրոջ տնորինությանը թողնել։

Սրանով է բնորոշվում պետերբուրգյան խումբը։ Նրա մեջ յերկու թևք կար՝ մեկը մոնարխիստական թևք, մյուսը՝ հանրապետական։ Հյուսիսային ընկերության հանրապետականների առաջնորդը Ռըլեևն էր։

Այս ծրագրով է բնորոշվում և դեկաբրիստների տակտիկան։ Հարավային դեկաբրիստներն, ինչպես հանձինս «միացյալ սլավոնների», նույնպես և Հարավային ընկերության, միաժամանակ և՛ դեմոկրատներ, և՛ հեղափոխականներ եյին, նրանք առաջ քաշեցին զինված ապստամբության տեսությունը և գործնականում այն իրագործեցին Չերնիգովյան գնդի ապստամբությունով։ Հյուսիսայիններն ապստամբություն բնավ նկատի չունեյին։ Ահա թե ինչու, յեթե կուզեք, պետք է վոչ թե դեկտեմբերի 14-ը, այլ 28-ը կատարել՝ Չերնիգովյան գնդի ապստամբության որը։ Դրա մասին կարելի յե հետագայում հարց հարուցել, վորպեսզի որը փոխեն։ Դեկտեմբերի 14-ին, ինչպես Տրուբեցկոյն է պատմում իր հիշողություններում,—իսկ նրա հիշողությունները մենք հնարավորություն ունենք ստուգելու նրա իսկական ցուցմունքներով՝ ձերբակալության առաջին իսկ որը տրված՝—դեկտեմբերի 14-ին վոչ մի ապստամբություն չէր նախատեսնվում։

Ի՞նչ եյին մտադիր անելու Տրուբեցկոյն ու նրա ընկերները դեկտեմբերի 14-ին։ Նրանք յենթադրում եյին՝ նկատելով զինվորների մեջ վորոշ տրամադրություն Նիկոլայ Պավլովիչին չյերդվելու, այլ հավատարիմ մնալու արդեն նրանց կողմից Կոնստանտին Պավլովիչին տրված յերդմանը, վորի հրաժարման մասին վոչ-վոք չգիտեր, հավաքել չյերդված գնդերի վորոշ քանակ, նրանց հրապարակ կամ մի այլ տեղ դուրս բերել և հրացաններն իջեցրած սպասել, թե ինչ վերաբերմունք ցույց կտան մի կողմից պետությունը և մյուս կողմից հասարակությունը։ Տրուբեցկոյն, ինչպես ինքն էր հետագայում պատմում, հետևյալ հաշիվն էր անում. տեսնելով զինված և համերաշխ կանգնած զինվորներին, կառավարությունն ամենայն հավանականությամբ զիջումներ կանի և կհամաձայնվի Հյուսիսային դեկաբրիստների մինիմալ պահանջները կատարել, այն է՝ Պետերբուրգում բոլոր նահանգներից ըստ դասերի ժողով հրավիրել. յերկու ազնվական, յերկու վաճառական և յերկու վոչ թե ճորտ, այլ պետական գյուղացիներ։ Դասերի այս ժողովը պետք է հիմնադիր ժողով հանդիսանար։ Նա պետք է սահմանադրություն մշակեր, վորով պետք է հետագայում ղեկավարվեր Ռուսաստանը։ Ճորտ գյուղացիները, իհարկե, հանվում եյին դրանից, դրա մասին ավելորդ է խոսելն անգամ. նրանց հողերը հասարակական տիրապետության տակ են, նրանք սեփականատերեր չեն և այլն։

Յեվ ահա Տրուբեցկոյն ասում է, վոր նրանք պատրաստ եյին ամեն մի զիջում անել, բացի ըստ դասերի ընտրյալների ժողովից։ Դա նրանց մինիմում-ծրագիրն էր, վորը նրանք պնդում եյին։ Մյուս կողմից,—պատմում էր Տրուբեցկոյը,—տեսնելով, վոր հավաքված զինվորները վոչ մի անկարգություն չեն անում (այս անկարգություն չանելը Տրուբեցկոյի և նրա ընկերության արմատական պայմաններից մեկն էր), այն մարդիկ, վորոնք համակրում են սահմանադրությունը, կսկսեն աստիճանաբար միանալ նրանց։

Այսպիսով, մի կողմից՝ կառավարությունը, տեսնելով այդ զինված մասսան և չհամարձակվելով նրա վրա կրակ բանալ, զիջումներ կանի, իսկ մյուս կողմից՝ հասարակությունը, տեսնելով, վոր զինվորները բարի նպատակներ ունեն, լսում են իրենց պետերին, չեն թալանում, անկարգություն չեն անում, այլ հանգիստ սպասում են դասերի ժողովին, ուր կալվածատերերն ու բուրժուաները կգերակշռեն, նույնպես համակրանքով կհամակվի դեպի այդ շարժումը և կհարի նրան։ Ահա թե ինչ էր պատկերացնում Տրուբեցկոյը։ Ամենավտանգավորը Տրուբեցկոյի կարծիքով այն կլիներ, վոր

քան լավ կուլակը։ Նրանք Ռուսաստանյան հանրապետության կամ կայսրության քաղաքացիների կորպուսն են կազմում, վորովհետև այստեղ յերկու վարիանտ կա՝ ըստ մեկի—հանրապետություն, ըստ մյուսի—միապետություն։ Նրա մնացած բոլոր բնակիչները քաղաքացիներ չեն։

Սա դեռ քիչ ե։ Յեթե մենք անցնենք այդ սահմանադրության այն գլուխներին, վորոնք բնորոշում են կառավարչական կազմակերպությունը, ավելի ցայտուն բաներ կգտնենք։

«Յուրաքանչյուր գավառում այն քաղաքացիները (մենք արդեն վարժվեցինք նրան, վոր դրանք բոլորը բնակիչներ չեն), վորոնք այսինչ շարժական գույք և այնինչ անշարժ գույք ունեն, մի տարով հազարապետ են ընտրում»։ Գավառի գլուխ ուրեմն կանգնած ե հազարապետը։ Ո՞վ ե այդ հազարապետը։ Հազարապետ դառնալու համար անհրաժեշտ ե ունենալ՝ առնվազն 21 տարեկան հասակ, անարատ վարք և անշարժ գույք՝ առնվազն 30.000 արծաթ ռուբլու արժողությամբ կամ շարժական՝ վոչ պակաս, քան 60.000 ռ. արժողությամբ։

Սա այնքան բարձր ցենզ ե, վոր բնագրում այստեղ ծանոթություն ե դրված, վորն արել ե այդ բնագիրը կարդացած դեկաբրիստներից վորևե մեկը. «Գրեթե բոլոր հասարակական տիրապետությունները առանց հազարապետների կլինեն»։ Նրանք իրենք էլ հույս չունեյին, վոր նրանք յուրաքանչյուր գավառում այնպիսի մարդ կգտնեն, վորն ունենա 30.000 ռ. արծաթ, կամ 60.000 ռ. շարժական գույք։ Ցենզը, պարզ ե, վոր ծիծաղելի բարձր եր։ Դուք կռահում եք, վոր այդ հազարապետը քանից տասնինը դեպքում կալվածատեր եր, և վորովհետև նա կալվածատեր եր, ապա վո՛չ մի կերպ չի կարելի թույլատրել, վոր նրա նախկին ճորտ գյուղացիներն ընտրություններին մասնակցեն։

Այստեղ ասված ե.

«Նրանք, ովքեր ոգտվում են հասարակական տիրապետության հողով, հողատերեր չեն» և, հետևապես, ընտրողների թվին չեն պատկանում, իսկ վորովհետև գյուղացիների հողը հասարակական տիրապետությամբ ե, ապա, նշանակում ե, գյուղացիները քաղաքացիներ չեն, հողատերեր չեն, հետևապես ընտրություններին նրանք չեն մասնակցում։ Սա սքանչելի մի կտոր ե։

Միանգամայն բնական ե, վոր ճորտերի ազատագրումը նախագծելով, սահմանադրությունն ասում ե. «Կալվածատերերի հողերն իրենց են մնում», «Գյուղացիների տները նրանց բանջարանոցներով նրանց սեփականությունն են ճանաչվում՝ նրանց պատկանող բոլոր յերկրագործական գործիքներով և անասուններով»։ Սա մի ազատագրում ե լոկ կալվածքով և բանջարանոցով, առանց հողի։ Դա արդեն այնքան անհաջող թվաց իրենց իսկ Ն. Մուրավյովի և Տրուբեցկոյի ընկերներին, վոր հետո ավելացրին՝ յերկու դեսյատին յուրաքանչյուր տան համար, այսինքն, ներեցեք արտահայտությանս, կավի բաժին։ Յերկու դեսյատին վոչ թե շնչի. այլ տան համար։ Միանգամայն անբավարար հողաբաժին։ Սա միանգամայն հստակ կալվածատիրական մի ծրագիր ե, վորով պատրաստվում եյին Ռուսաստանը կալվածատիրոջ տնօրինությանը թողնել։

Սրանով և բնորոշվում պետերբուրգյան խումբը։ Նրա մեջ յերկու ։ թև կար՝ մեկը մոնարխիստական թևը, մյուսը՝ հանրապետական։ Հյուսիսային ընկերության հանրապետականների առաջնորդը Ռըլեևն եր։

Այս ծրագրով ե բնորոշվում և դեկաբրիստների տակտիկան։ Հարավային դեկաբրիստներն, ինչպես հանձինս «միացյալ սլավոնների», նույնպես և Հարավային ընկերության, միաժամանակ և՛ դեմոկրատներ, և՛ հեղափոխականներ եյին, նրանք առաջ քաշեցին զինված ապստամբության տեսությունը և գործնականում այն իրագործեցին Չերնիգովյան գնդի ապստամբությունով։ Հյուսիսայիններն ապստամբություն բնավ նկատի չունեյին։ Ահա թե ինչու, յեթե կուզեք, պետք ե վոչ թե դեկտեմբերի 14-ը, այլ 28-ը կատարել՝ Չերնիգովյան գնդի ապստամբության որը։ Դրա մասին կարելի յե հետագայում հարց հարուցել, վորպեսզի որը փոխեն։ Դեկտեմբերի 14-ին, ինչպես Տրուբեցկոյն ե պատմում իր հիշողություններում,—իսկ նրա հիշողությունները մենք հնարավորություն ունենք ստուգելու նրա խսկական ցուցմունքներով՝ ձերբակալության առաջին իսկ որը տրված՝—դեկտեմբերի 14-ին վոչ մի ապստամբություն չեր նախատեսնվում։

Ի՞նչ եյին մտադիր անելու Տրուբեցկոյն ու նրա ընկերները դեկտեմբերի 14-ին։ Նրանք յենթադրում եյին՝ նկատելով զինվորների մեջ վորոշ տրամադրություն Նիկոլայ Պավլովիչին չյերդվելու, այլ հավատարիմ մնալու արդեն նրանց կողմից Կոնստանտին Պավլովիչին տրված յերդմանը, վորի հրաժարման մասին վոչ-վոք չգիտեր, հավաքել չյերդված գնդերի վորոշ քանակ, նրանց հրապարակ կամ մի այլ տեղ դուրս բերել և հրացաններն իջեցրած սպասել, թե ինչ վերաբերմունք ցույց կտան մի կողմից պետությունը և մյուս կողմից հասարակությունը։ Տրուբեցկոյն, ինչպես ինքն եր հետագայում պատմում, հետևյալ հաշիվն եր անում. տեսնելով զինված և համերաշխ կանգնած զինվորներին, կառավարությունն ամենայն հավանականությամբ զիջումներ կանի և կհամաձայնվի Հյուսիսային դեկաբրիստների մինիմալ պահանջները կատարել, այն ե՝ Պետերբուրգում բոլոր նահանգներից ըստ դասերի ժողով հրավիրել. յերկու ազնվական, յերկու վաճառական և յերկու վոչ թե ճորտ, այլ պետական գյուղացիներ։ Դասերի այս ժողովը պետք ե հիմնադիր ժողով հանդիսանար։ Նա պետք ե սահմանադրություն մշակեր, վորով պետք ե հետագայում դեկավարվեր Ռուսաստանը։ Ճորտ գյուղացիները, իհարկե, հանվում եյին դրանից, դրա մասին ավելորդ ե խոսելն անգամ. նրանց հողերը հասարակական տիրապետության տակ են, նրանք սեփականատերեր չեն և այլն։

Յեվ ահա Տրուբեցկոյն ասում ե, վոր նրանք պատրաստ եյին ամեն մի զիջում անել, բացի ըստ դասերի ընտրյալների ժողովից։ Դա նրանց մինիմում-ծրագիրն եր, վորը նրանք պնդում եյին։ Մյուս կողմից,—պատմում եր Տրուբեցկոյը,—տեսնելով, վոր հավաքված զինվորները վոչ մի անկարգություն չեն անում (այս անկարգություն չանելը Տրուբեցկոյի և նրա ընկերության արմատական պայմաններից մեկն եր), այն մարդիկ, վորոնք համակրում են սահմանադրությունը, կսկսեն աստիճանաբար միանալ նրանց։

Այսպիսով, մի կողմից՝ կառավարությունը, տեսնելով այդ զինված մասսան և չհամարձակվելով նրա վրա կրակ բանալ, զիջումներ կանի, իսկ մյուս կողմից՝ հասարակությունը, տեսնելով, վոր զինվորները բարի նպատակներ ունեն, լսում են իրենց պետերին, չեն թալանում, անկարգություն չեն անում, այլ հանգիստ սպասում են դասերի ժողովին, ուր կալվածատերերն ու բուրժուաները կգերակշռեն, նույնպես համակրանքով կհամակվի դեպի այդ շարժումը և կհարի նրան։ Ահա թե ինչ եր պատկերացնում Տրուբեցկոյը։ Ամենավտանգավորը Տրուբեցկոյի կարծիքով այն կլիներ, վոր

հրաձգություն սկսվեր։ Հրաձգությունը Տրուբեցկոյի համար մղձավանջ էր։ Այդ հրաձգության շուրջն է պտտվում նրա ամբողջ վախն այդ օրվա համար և նա մանրամասն հարց ու փորձ է անում. հրացան պիտի արձակե՞ն, թե՞ վոչ, և նրա խորհրդակցությունն իր ամենամոտ ոգնականների, ուրիշ սպաների հետ, դեկտեմբերի 14-ի նախօրյակին հետևյալ նախադասությունով է վերջանում. «Ի՞նչ է, պարոնայք, ուրեմն հետևակը կրակ չի բաց անի, իսկ հրետանին՝ կրանա»։ «Յեվ,—ավելացնում է Տրուբեցկոյն իր ցուցմունքի մեջ,—այդ րոպեից յես վորոշեցի վոչ մի մասնակցություն չունենալ այդ շարժմանը»։ Յեվ նա կատարեց ինքն իրեն տված խոսքը, վորովհետև այն առավոտը, յերբ տեղի յեր ունենում Սենատյան հրապարակի վրա ցույցը (այդպես ենք ստիպված անվանել), նա այդ Սենատյան հրապարակը չգնաց։ Թեպետ նա հյուսիսային դավադրության պարագլուխն էր և նախօրյակին դիկտատոր ընտրվեց, բայց նա շրջում էր իր բարեկամների տները և Նիկոլայ Պավլովիչի գահ բարձրանալու մանիֆեստն էր կարդում։ Նա ինքն էր պատմում, վոր գնում էր այսինչի մոտ և մանիֆեստն էր կարդում, հետո այնինչի մոտ էր գնում և մանիֆեստը կարդում։

Այս պատկերը, ուր դիկտատորը Նիկոլայի գահ բարձրանալու մանիֆեստն էր կարդում այն ժամանակ, յերբ Սենատյան հրապարակում վողբերգություն է կատարվում, իհարկե, հետաքրքիր է։ Տրուբեցկոյի հարյուրամյակը տոնելը, իհարկե, վերին աստիճանի տարօրինակ կլիներ, բայց և այնպես նույնիսկ դեկտեմբերի 14-ը՝ չնայած այս պարագաներին, պետք է վոր հիշատակենք։ Միանգամայն պարզ է, վոր շարժման ղեկավարները հեղափոխականներ չեյին։ Նրանք հեղափոխություն չեյին ուզում, նրանք այն աստիճանի հիվանդագին վախենում եյին հրաձգությունից, վոր թեպետ նրանք յերկու անգամ հնարավորություն ունեյին թնդանոթներն իրենց տրամադրության տակ առնել, նրանք այդ բանից խուսափեցին։ Ռըլեյեվի մոտ գալիս եյին հրետանու սպաները, վորոնք ասում եյին. ուզո՞ւմ եք, թնդանոթներ տանք ձեզ, մենք այդ հնարավորությունն ունենք։ Բայց նրանց հարցրին. իսկ ձեր զինվորները ձեզ հետ կլինե՞ն, թե՞ վոչ։ Նրանք ասացին. վոչ։ Այն ժամանակ նրանք թնդանոթներից հրաժարվեցին։ Ցույցի համար անհրաժեշտ էր, վորպեսզի հրետանին ամբողջ կազմով, կազմ ու պատրաստ դուրս գա։ Դա եֆֆեկտ կառաջացներ։ Իսկ թնդանոթներն ինքնըստ ինքյան տեխնիկական գործիքներ են, վորոնցից կրակում են, իսկ հրաձգությունից նրանք ամենից շատ եյին վախենում, և այդ պատճառով այդ թնդանոթները հարկավոր չեյին, նրանցից նրանք խուսափեցին։ Սպա Պանովը իր զորամասով թնդանոթների մոտով էր անցնում և կարող էր գրավել, սակայն նա այդ չարավ, վորովհետև թնդանոթները դեկաբրիստների ծրագրի մեջ չեյին մտնում։ Դա ցույցի, կառավարության վրա ճնշում գործելու մի ծրագիր էր, վորպեսզի նա հրավիրի այդ հռչակավոր դասերի ժողովը,—և ուրիշ վոչինչ չեր պահանջվում։

Այսպիսով, նրանք, դավադրության առաջնորդները, իհարկե, հեղափոխականներ չեյին, և, ինչպես գիտեք, նրանք հեղափոխականի նման չեյին էլ պահում իրենց։ Տրուբեցկոյը, հենց վոր նրան ձերբակալեցին, բառացիորեն մի ամբողջ հատոր պատմեց, վորի մի մասը յես ինձ հետ բերի, և այդ հատորի հիման վրա Նիկոլայ I քննիչները դավադրության մասնակիցների ցուցակը կազմեցին։ Տրուբեցկոյն այնպիսի մանրամասնությունների դիմեց, վոր մոռանալով մի վոչ թե դավադրի, այլ ինչ-վոր պասկվիլային վոտանավորի հեղինակի անունը, հաջորդ ցուցմունքի մեջ իրեն ուղղում է. «Յես

անունը չասացի. դա այսինչն էր»,—այնքան վոր հեռու չեր գնացել Տրուբեցկոյը իր «անկեղծության», վոչինչ չթաքցնելու իր ցանկության մեջ։

Ավելի տխուր տպավորություն են թողնում Ռըլեյեվի ցուցմունքները, վորն առաջին իսկ հարցաքննության ժամանակ մատնեց Պեստելին։ Նա չգիտեր, վոր Պեստելն արդեն ձերբակալված է։ Պեստելը ձերբակալվեց 13-ին, իսկ Ռըլեյեվին հարցաքննում եյին 16-ին, և յերեք որում, հեռագրի բացակայության պայմաններում, նույնիսկ կառավարությունը չեր կարող այդ մասին գիտենալ։ Ռըլեյեվը նրա մասին պատմում էր. կա հարավում մի այսպիսի գնդապետ Պեստել, նա դավադրություն է կազմակերպում և այլն։

Մարդ տխրում է այսպիսի ցուցմունքներից, բայց և այնպես դեկտեմբերի 14-ը արժե հիշել, վորովհետև յեթե շարժման առաջնորդներն իրենց վերին աստիճանի խայտառակ եյին պահում—դա մենք թաքցնելու կարիք չունենք,—յեթե նրանք հեղափոխականներ չեյին, ապա անկախ նրանցից, առանց նրանց Պետրբուրգում այդ որը, անկասկած, հեղափոխություն սկսվեց։ Այդ մենք գիտենք մի այնպիսի քիչ կասկածելի աղբյուրից, ինչպիսին Նիկոլայ Պավլովիչի հիշողություններն են։ Նիկոլայ Պավլովիչը՝ բացատրելով, թե ինչու նա կրակ բաց արեց, ուղղակի ասում է.

«Յեվ վորովհետև որը յերեկոյանում էր և վախ առաջացավ, վոր հուզումը հավաքված սև ամբոխին (Նիկոլայի աչքում ժողովուրդը սև ամբոխ էր) կանցնի և խռովություն կառաջանա (յես նրա խոսքերը մոտավորապես եմ ասում ձեզ), ապա վճռական միջոցներ եյին անհրաժեշտ»։

Ինքը Նիկոլայն էլ յերկար ժամանակ հույս ուներ, վոր դեկաբրիստների այս ցույցը խաղաղ կերպով կցրվի։ Նա չէլ յերկար ժամանակ չեր ուզում կրակ բանալ, վորովհետև նա վախենում էր, վոր դա ռազմական գործողությունների ազդանշան կլինի, և սատանան գիտի, թե ինչով կվերջանային այդ ռազմական գործողությունները, և նա այն ժամանակ միայն սկսեց կրակել, յերբ նրա՝ Նիկոլայի վրա սկսեցին փայտերով ռմբակոծել այն ժամանակներում կառուցվող Իսակիյեվսկու տաճարի բանվորները։ Յերբ նա յենթարկվեց այդ փայտերով գանակոծությանը, այն ժամանակ նա հասկացավ, վոր հանդես յեկան արդեն ժողովրդական մասսաները։

Իմ «չորս հատորի» մեջ յես մի այլ ցիտատ եմ բերում մի ուրիշ բարձրաստիճան անձի՝ դուքս Յեվգենիյ Վյուրտեմբերգսկու հիշողություններից, վորը չափազանց կենդանի կերպով է նկարագրում այն ամբոխը, վորից սևացել եյին Սենատյան հրապարակը տանող բոլոր փողոցները և վորն ամեն րոպե ավելի յեր ստվարանում։ Այդ ամբոխն ամենագործուն մասնակցություն ուներ ռազմական գործողություններում։ Վոչ միայն Նիկոլային եյին փայտերով գանակոծում, այլ փաստորեն փայտերով և քարերով քշեցին այն հեծելազորը, վորը հարձակվում էր դեկաբրիստների վրա, վորովհետև զինվորներն իրենց սպաների խրատների ազդեցության տակ մեծ մասամբ ոդի մեջ եյին կրակում։

Ժողովուրդն սկսեց մասնակցել ապստամբությանը։ Հանգուցյալ Կ. Ա. Տիմիրյազևը մի շատ հետաքրքիր մանրամասնություն էր պատմում, վորը լուսաբանում է գործի այս կողմը։ Նրա հոր տան ճորտերը պատմում եյին նրան դեկտեմբերի 14-ի մասին դեպքից մոտ 20 տարի հետո, և ասում էր Կ. Ա.-ն, թե պետք էր տեսնել, թե ինչպիսի հսկայական համակրանքով եյին պատմում ճորտերն այդ, իբր թե ազնվական ապստամբության մասին։ Յերևում էր, վոր մասսան շատ էր շահագրգռված։ Մասսան չգիտեր, թե ով էր

Տրուբեցկոյը, մասամբ հասկացողություն չուներ դավադրության առաջնորդ-
ների, նրանց քաղաքականության մասին։ Մասամբ մի բան էր միայն տես-
նում, որ անիծյալ ինքնակալության դեմ, անիծյալ ճորտատիրական իրա-
վունքի դեմ սկսվեց, վերջապես, ապստամբությունը, որ զինված մարդիկ
դուրս չեկան։ Նրանք չգիտեյին, որ այդ մարդիկ դուրս չեկան նախապես
մտածված մտադրությամբ—զենք չբարձրացնել։ Մասամբ այդ չէր հաս-
կանում, բայց նա տեսնում էր, որ ցարիզմի դեմ շարժում սկսվեց, և, տե-
կասկած է, որ չեթե պետերբուրգյան դեկաբրիստները մտադիր լինեյին
Պետերբուրգում ժողովրդական խռովություն առաջացնելու, նրանք կարող
եյին այն ամենաաքանչելի կերպով առաջացնել,—դա միանգամայն պարզ
է։ Դեկտեմբերի 14-ին Պիտերը կարող էր իսկական ժողովրդական ապըս-
տամբության բեմ դառնալ, 1905 թվի ապստամբության վոգով մի ապըս-
տամբության։ Բայց նրանք այդ չեյին ուզում։ Անկասկած, դա նրանց
պլանի մեջ չէր մտնում։ Նրանք կանգնած եյրն հրապարակները վոտներին,
և տատանվող առաջնորդները մտածում եյին կրակել, թե վոչ, մինչև վոր
Նիկոլայը վերջ տվեց իր տատանումներին և կրակ բացեց. և չերբ թնդանոթ-
ները վորոտացին, տեղի ունեցավ այն, ինչից վախենում էր Տրուբեցկոյը,
վորովհետև հրաձգությունն ու զինված ապստամբությունը այս հյուսիսա-
յին դեկաբրիստների պլանների մեջ չեյին մտնում։

Ինչպես տեսնում եք, ընկ. Ոլմինսկու տված բնութագրությունն ամ-
բողջովին և լիովին կիրառելի չե միայն դեկաբրիստների մի խմբի, նրանց
աջ թևի նկատմամբ։ Սակայն այդ աջ թևի մասին էլ անարդարացի կլիներ
ասել, վոր այդ մարդիկ խաբելով տարան զինվորներին Սենատյան հրապա-
րակը։ Այդ այնուամենայնիվ չի կարելի ասել։ Նրանք վոչ մի ապստամբու-
թյուն մտադիր չեյին կատարել, նրանք պատրաստվում եյին պարզապես ցույց
կատարել և ուրիշ վոչինչ, այնպես վոր այստեղ վորևե խաբեյություն չի չեղել։
Վախկոտություն, ճիշտ է, շատ է չեղել, վոչ հեղափոխականություն՝ ավելի
շատ։ Բայց քանի վոր նույնիսկ այս թերատ չելույթը վորոշ հեղափոխական
շարժման սկզբնավորություն էր, մի սկզբնավորություն, վորը չզարգացավ,
չծավալվեց միայն առաջնորդների պատճառով, և քանի վոր մենք հիշատա-
կում ենք նաև այն շարժումը, վորի գլուխն էր կանգնած պրովոկատոր տեր-
տեր Գապոնը, հիշատակում ենք ի պատիվ այն բանվորների, վորոնք թափեցին
իրենց արյունը 1905 թվի հունվարի 9-ին,—չհիշատակել դեկտեմբերի 14-ը,
չերբ զինվորներն եյին արյուն թափում, չերբ բանվորներն եյին արյուն
թափում, չի կարելի։ Թնդանոթներից արձակում եյին, իհարկե, և այն բան-
վորների վրա, վորոնք Նիկոլային փայտերով եյին գանակոծում և քարեր
գցում նրա վրա, և առաջին համազարկը Սենատի տանիքին տրվեց, վորտեղ
տեղավորված եյին այդ «ամբոխի» ամենախիզախ մասերը և այնտեղից եյին
նրանք ռմբակոծում Նիկոլային և հեծելազորքը։ Առաջին համազարկը Սե-
նատի տանիքին տրվեց և չերկրորդ համազարկը միայն դեկաբրիստների
զորքերին։ Վորքանով վոր այն ժամանակ ժողովրդի արյուն թափվեց հանուն
ժողովրդական գործի, մենք ամենայն հիմք ունենք տոնելու դեկտեմբերի
14-ը. թեպետ չես համաձայն եմ խոսել այն մասին, վոր հարց հարուցել,
տոնել վոչ թե 14-ը այլ դեկտեմբերի 28-ը՝ Չերնիգովյան գնդի ապստամ-
բության որը։ Սրա մասին կարելի չե վիճել, բայց այն մասին, վոր դեկաբ-
րիստների ամբողջ շարժումը կալվածատիրական շարժում համարել, վոչ մի
խոսք չի կարող լինել։

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Առաջին չերկու դասախոսությունները մենք նվիրեցինք առաջին հե-
ղափոխական շարժման բնութագրությանը, վորի հետ ընդհարվեց հին ճոր-
տատիրական, միահեծան Ռուսաստանը։ Այդ ժամանակվանից սկսած գիտա-
կից և համաչափ մասսայական չելույթի փորձեր, ինչպիսին դեկաբրիստների
չելույթները, մենք չենք ունեցել մինչև 1905 թիվը, այսինքն 80 տարվա
ընթացքում։ Այնուամենայնիվ, այս ամբողջ ժամանակամիջոցում վոչ միայն
հեղափոխական շարժման նախապատրաստությունն էր տեղի ունենում, այլև
տեղի չեր ունենում նույն այդ հեղափոխությունը՝ միայն այլ ձևերով, ձևեր,
վորոնք սաղմնային վիճակում արդեն դեկաբրիստներն ունեյին, սակայն նը-
րանց կողմից չեյին իրացված։ Դեկաբրիստների մոտ մենք հանդիպում ենք
տերորն արդեն սաղմնային դրությամբ։ Դեկտեմբերի 14-ին Ռըլեյեվը Կա-
խովսկու ոգնությամբ հույս ուներ Նիկոլային մեջ տեղից վերացնել և դրա-
նով հակառակ կողմը կազմալուծել—սա դեկաբրիստների մի գիծն է։ Մյուս
կողմից, ինչպես չես արդեն անցողակի կերպով հիշատակեցի, դեկաբրիստ-
ները փորձեցին մասսաների վրա ազդել, նրանց պրոպագանդայի և ագի-
տացիայի միջոցով գրավել։ Նույն նպատակին եյին ծառայում 1820 թ. Սե-
մյոնովսկի գնդի ապստամբության առթիվ բաց թողած թռուցիկները, վորի
մասինն չես նույնպես հիշատակեցի. Նույն նպատակին էր ծառայում նաև
Մուրավյով-Ապոստոլի հավատո հանգանակը, ուր հին կտակարանից բեր-
ված ցիտատներով ապացուցվում էր, վոր թագավորներն աստծուն ցանկա-
լի չեն, և վոր նա, ով թագավորներին լսում է, աստծու հակառակորդն է։
Ահա դեկաբրիստների այս չերկու չերկրորդական գծերը՝ մի կողմից տերորը
և մյուս կողմից ժողովրդական մասսաների մեջ պրոպագանդա և ագիտացիա
մղելու փորձերը, լցնում են ամբողջ հեղափոխական շարժումը մինչև XIX
դարի վերջին քառորդը։ Մասսայական չելույթը, կրկնում եմ, միայն 1905
թվից է սկսվում։

Հիմա այն պայմանների մասին, վորոնք սնուցանում և ստեղծում եյին
այս հեղափոխական շարժումը։ Այստեղ մենք ստիպված ենք հրաժարվել
շատ նախապաշարումներից և վորոշ չափով պատմությունը թարս շուռ տալ,
ինչպես արտահայտվեց նորերս իմ թղթակիցներից մեկը՝ «չորս հատորի»
առթիվ։ Ձեզ,—ասում է նա,—շատ դժվար է կարդալ, վոչ թե այն պատճա-
ռով, վոր դուք առանձնապես դժվար և խրթին լեզվով եք գրում, այլ այն
պատճառով, վոր դուք պատմությունը թա[illegible]եք շուռ տալիս, գործը թարս
ու շիտակ եք շարադրում՝ համեմատած նրան, ինչին մենք սովոր ենք
չեղել։ Սրա շնորհիվ ձեզ դժվար է նույնիսկ միանգամից հասկանալ,—
ասում է իմ թղթակիցը,— և չես ստիպված եյի ձեր գիրքը չերեք անգամ

կարդալ, վորպեսզի վերջապես կարողանամ հասկանալ։ Կարծում եմ, վոր մենք այստեղ միանգամից համաձայնության կգանք, բայց և այնպես ուղեղի վորոշ խոտորում, ինչպես դուք հիմա կտեսնեք, մենք ստիպված կլինենք անել։ Մեզ մոտ սովորաբար գործը հետևյալ կերպ են պատկերացնում. XIX դարի առաջին կեսը, Նիկոլայի թագավորության շրջանը—դա խուլ ռեակցիայի շրջան է, ամբողջ Ռուսաստանը զորանոցի յե վերածված, վորի մեջ ամեն ինչ վարժ քայլվածքին է նվիրված, վոչ մի կյանք և առաջխաղացում չկա, մեռյալ, անշարժ ճահիճ և։ Դարի կեսերին, գլխավորապես Ղրիմի կամպանիայի ազդեցության տակ, նրա անհաջողության, այս վորոտի ազդեցության տակ, վորը խանգարեց մեռյալ ճահճի խաղաղությունն ու անդորրությունը, կենդանացում է սկսվում, 60-ական թվականները՝ «մեծ բարենորոգումների շրջան» է, մարդիկ շարժվում են, ամեն ինչ առաջ է շարժվում։ Վերջապես շենքի ավարտման փորձը, 70-ական թվականների հեղափոխական պոռթկման փորձը ձախողվեց և այդ անհաջողությունից նորից ընկղմվեց ճահճի մեջ, բայց այս անգամ շատ ավելի կարճ ժամանակամիջոցով, ընդամենը 13 տարով, մինչդեռ առաջ այս մեռած դրությունը քառորդ դարից ավելի, մոտ 30 տարի տևեց։ Սովորաբար այսպես են պատկերացնում գործը։ Բայց յեթե դուք, վորպես լավ մարքսիստներ, այս խնդրին մոտենաք տնտեսական բազիսի տեսակետից, տրամագըծորեն հակառակ պատկեր կտեսնեք՝ առաջին յերեսնամյակում չափազանց բուռն և արագ շարժում և գնալով ավելի ուժեղացող անշարժություն հենց այն եպոխայի ընթացքում, վորը մինչև որս էլ մեր բուրժուական ազատամիտների մխիթարությունը, պարծանքն ու հպարտությունն է կազմում։ Նիկոլայան թագավորության ընթացքում մեր խոշոր արդյունաբերությունն այնպիսի հուժկու թափով եր զարգանում, ինչպես նա յերկրորդ անգամ առաջ շարժվեց միայն, այսպես կոչված, Վիտտեյի եպոխայում, XIX-րդ դարի 90-ական թվականներին։ Այստեղ շարժումը շատ ավելի բուռն, ուժեղացված թափ ընդունեց, և դա հասկանալի յե, թե ինչու։ Վորովհետև շարժող մասսան սոսկալի կերպով շատացավ։ Բայց և այնպես Նիկոլայան արդյունաբերությունը—դա բավականին վողորմելի, փոքրիկ մի բան եր, այնուամենայնիվ այս փոքրիկ մասսան առաջ եր շարժվում մաքսիմալ արագությամբ։

Յես կվերցնեմ յուրաքանչյուր արդյունաբերության բազան՝ մետաղագործությունը։ Ահա 25 թվականի՝ դեկաբրիստների թվականի տվյալները. մենք ունեյինք 170 մետաղագործարան և ֆաբրիկա $22^1/_2$ հազար բանվորներով և 3 միլիոն փութ ընդհանուր արտադրանքով, իսկ 1850 թվին, 25 տարի անց, մենք ունեյինք 299 մետաղագործարան և ֆաբրիկա $88^1/_2$ հազար բանվորով և 15 միլիոն փութ ընդհանուր արտադրանքով։ Այսպիսով, բանվորների քանակն ավելացավ 4 անգամ, իսկ արտադրանքը՝ հինգ անգամ։ Վոր գործարանների և ֆաբրիկաների քանակն ավելացավ, այն էլ վոչ կրկնակի, դա ձեզ համար, վորպես մարքսիստների համար, միանգամայն հասկանալի մի փաստ է, վորը խոսում է հօգուտ արդյունաբերական կապիտալի առաջխաղացման և վոչ թե նրա դեմ, վորովհետև դա ցույց է տալիս, վոր նոր ֆաբրիկաներն ու գործարանները հներից ավելի խոշոր եյին. այս բնագավառում կապիտալի նոր կոնցենտրացիա տեղի ունեցավ, առաջադիմության նոր քայլեր արվեցին։ Նույնն ենք տեսնում նաև տեքստիլ արդյունաբերության մեջ, մանավանդ, յեթե վերցնենք այս շրջանի վերջը։

1843 թվին Ռուսաստանում հաշվում եյին 40.000 մանածագործարան, վորտեղ աշխատում եր 350.000 իլիկ, իսկ 1853 թվին արդեն գործում եյին 1 միլիոն իլիկ, ընդ սմին 1843 թ. յուրաքանչյուր իլիկը տարեկան 1 փութ թել եր պատրաստում, իսկ յերկրորդ դեպքում՝ արդեն 48 գրվանքա։ Այսպիսով, 10 տարվա ընթացքում ամբողջ արտադրանքը յերեք անգամ ավելացավ, իսկ յուրաքանչյուր իլիկի նկատմամբ՝ 20 տոկոսով։ Այսպես, ուրեմն, մեր արդյունաբերությունը Նիկոլայի որով չափազանց արագ եր աճում—այնպես արագ, ինչպես, կրկնում եմ, հետագայում յերբեք չի աճել մինչև XIX դարի 90-կան թվականները։ Ուրիշ որինակներ չեմ բերում, ավելի թարմ, 1909 թ. վերելքին և հետագա տարիներին վերաբերող որինակներ—այդ վերելքն էլ հսկայական եր,—բայց յես մնում եմ XIX դարի սահմաններում։

Յեթե դուք սրանից անցնենք մեծ բարենորոգումների շրջանի վերջին 60-ական, 70-ական թվականներին մեր արդյունաբերության զարգացման տեմպին, այստեղ բոլորովին այլ թվեր կստացվեն։ 1867 թվին բոլոր ռուսական ֆաբրիկաները մշակել են 3298 հազար գրվանքա բամբակ, 1868 թ.՝ 2556 հազար փութ, 1869 թ.՝ 3208 հազար փութ, 1870 թ.՝ 2801 հազար փութ, 1871 թ.՝ 4165 հազար փութ, 1872 թ.՝ նորից 3606 հազար փութ, 1873 թ. 3530 հազար փութ։ Այսպիսով, դուք տեսնում եք, վոր մենք շարունակ 3 միլիոնի շուրջն ենք պտտվում և 4 միլիոնի մի անգամ ենք միայն հասնում, վորպեսզի նորից գլորվենք այդ ճակատագրական 3 միլիոնին—սա իսկական անշարժության մի պատկեր է։ Մետաղագործության մեջ գործը միքիչ այլ է, միքիչ ավելի լավ է։ Դա նրանով է բացատրվում, վոր, ինչպես դուք գիտեք, 60-ական թվականներին և 70-ական թվականների սկզբին շատ արագ տեմպով եր զարգանում յերկաթուղային շինարարությունը, ռելսներ եյին հարկավոր և դա յել առաջ եր քշում ռուսական մետաղագործությունը, բայց և այնպես այստեղ էլ մենք տեսնում ենք աճման չափազանց «հանգիստ» տեմպ։ 1867 թվին՝ $17^1/_2$ միլ. փ. թուջ, 1868 թ.՝ 19,8 միլ. փ., 1869 թ.՝ 20 միլ. փ., 1870 թ.՝ 22 միլ. փ., 1871 թվին՝ նույնպես 22 միլ. փ., 1872 թ.՝ 24 միլ. փ., 1873 թ.՝ նորից 23 միլ. փ.։ Մի խոսքով սա անշարժություն չէ, իհարկե, ինչպես դա տեսնում ենք տեքստիլ արդյունաբերության մեջ, այլ առաջխաղացում է, բայց շարժումը շատ դանդաղ և «հանգիստ» է։ Սովորաբար սրան պատասխանում են,—յես ինքս էլ անցյալ տարի Սվերդլովի անվան համալսարանում սրան պատասխանում էյի,—ճորտերի ազատագրման պայմաններով։ Դուք գիտեք, վոր գյուղացիների ազատագրումը մի կոմպրոմիս եր առևտրական և արդյունաբերական կապիտալների միջև, ընդ սմին առյուծի բաժինն ընկավ առևտրական կապիտալին։ Գյուղացիներն այնպես ազատագրվեցին, վոր առևտրական կապիտալը հնարավորություն ստացավ յերկրից շատ ավելի հավելյալ պրոդուկտ ստանալու, քան նա առաջ եր ստանում։ Յեվ ահա, վորպեսզի առևտրական կապիտալը կարողանա իր գործառնություններն ավելի հարմար կատարել, յերկու միջոց սկսեցին կիրառել։ Նախ ճորտատիրական իրավունքից վորքան հնարավոր եր շատ բան թողնվեց և, մասնավորապես, գյուղացիները թողնվեցին կիսազատ մանր-արտադրողների դրության մեջ, վորոնց առևտրական կապիտալը կարող եր հեշտությամբ մոտենալ շնորհիվ նրանց կիսաճորտ վիճակի։ Դրա համար գյուղացին գյուղին եր

ամրացված, ինչպես գիտեք, չեր կարող համայնքից հեռանալ, կապված եր համապարտ յերաշխավորությամբ և այլն։ Սա գործի մի կողմն է։ Գործի մյուս կողմը՝ գործի կանչվեց հարկային մամուլը, ավելացվեցին հարկերը, վորոնք առանց այն էլ արդեն շատ եյին մեծացել՝ շնորհիվ հողի հետ գնելու համար տրվող վճարումների։ Վորոշ տեղերում նրանք գյուղացու հողի մաքուր յեկամուտը 100% գերազանցում եյին և հարկային այս բեռն ստիպում եր գյուղացուն իր հավելյալ պրոդուկտի ըստ հնարավորին ավելի մեծ մասն իրացնել, իսկ շատ դեպքերում ստիպում եր շուկա հանել նաև անհրաժեշտ պրոդուկտի մի մասը. կիսատ ուտել, կիսատ խմել, բայց և այնպես վաճառել և վաճառել, ինչ գնով էլ վոր լինի։ Սրանով արտահայտվեց առևտրական կապիտալի գերակշռությունը ճորտերի ազատագրման ժամանակ։ Յեվ ահա սրան պատասխանում են—յես էլ եյի սրան պատասխանում է, իհարկե. այս պատասխանն ընդհանրապես ճիշտ եր՝ նման պայմաններում ներքին շուկան չեր կարող քիչ թե շատ արագ և ինտենսիվ կերպով աճել. նրա աճումը դանդաղում եր, իսկ դրա շնորհիվ դանդաղ եր աճում և մեր արդյունաբերությունը։ Թե վորքան դանդաղ—թույլ տվեք բերել շատ արտահայտիչ թվեր այն կապիտալների մասին, վորոնք ներդրվել եյին մեր արդյունաբերության մեջ գյուղացիական բարենորոգումից հետո առաջին 12 տարվա ընթացքում։ Այն ժամանակվա ակցիոներական ձեռնարկությունների բոլոր կապիտալներից՝ մոտավորապես 1.200 միլ. ռուբլի՝ 130 միլիոն միայն ներդրված եր արդյունաբերության մեջ, ընդ սմին մանածագործարաններին 6 միլ. ռուբ միայն ընկավ (կարիք չկա ասելու, վոր տեքստիլ արդյունաբերությունն ամենաբնորոշն է ներքին շուկայի համար)։

Այսպիսով, մեր տեքստիլ արդյունաբերությունը գրեթե չեր աճում։ Յեվ ահա, չափազանց բնորոշ է, վոր նույնիսկ այդքան նեղ ներքին շուկային, ինչպիսին ստեղծված եր 1861 թվի բարենորոգման հետևանքով, տեղական արդյունաբերությունը չեր բավարարում։ Սա անհերքելիորեն ապացուցվում է նույն ժամանակվա անգլիական ներմուծման (Ռուսաստան) թվերով։ 1867 թվին անգլիացիք Ռուսաստան ներմուծեցին ավելի քիչ, քան 4 միլ. ֆ. ստերլինգ, 1868 թ.՝ $4^1/_2$ միլ. ֆ. ստերլինգ, 1869 թ.՝ $6^1/_2$ միլ. ֆ. ստ., 1870 թ.՝ գրեթե 7 միլ. ֆ. ստ. և այլն, մինչև 1873 թիվը—դա մաքսիմումն եր, յերբ նրանք ներմուծեցին գրեթե 9 միլ. ֆ. ստ.։ Այլ խոսքով, 1873 թվի ներմուծումն ավելի քան յերկու անգամ մեծ եր, քան թե 1867 թվինը—այստեղ անշարժություն չկար. այստեղ գործը չափազանց առույգ տեմպով եր առաջ գնում և անգլիացիները տարեցտարի ավելի ու ավելի շատ ապրանքներ եյին ներմուծում Ռուսաստան։ Դա, կրկնում եմ, անհերքելիորեն ապացուցում է, վոր ռուսական արդյունաբերությունը դանդաղ եր զարգանում նույնիսկ այն ներքին շուկայի վերաբերյալ, վորը փոքրացրած գյուղացիների «ազատագրումով», կամ ավելի ճիշտ է ասել՝ բավարար չափով չեր ընդարձակվել գյուղացիների ազատագրումով։ Նա չեր կարողանում սպասարկել անգամ այդ ներքին, նեղ շուկան։

Այսպիսով, մենք տեսնում ենք մի պատկեր, վոր խիստ հակադիր է տնտեսական տեսակետից այն պատկերին, վորը սովորաբար նկարում են։ Անշարժության շրջանը—դա, ընդհակառակը, ռուսական կապիտալիզմի և ռուսական արդյունաբերության չափազանց արագ աճման շրջանն է։ Մեծ բարենորոգումների շրջանը, ընդհակառակը, տալիս է ռուսական արդյունաբերության և ռուսական կապիտալիզմի չափազանց դանդաղ աճում։ Միանգամայն բնական է, վոր դա պետք է մի կերպ անդրադառնար հասարակական շարժումների վրա, և արդեն վաղուց նկատվել է,—բայց բուրժուական պատմաբանները, իհարկե, այս հանգամանքի վրա ուշադրություն չեյին դարձնում,—վոր հենց Նիկոլայի մեռած, զորանոցային եպոխայում են յեղել 40-ական թվականները, Բելինսկու յելույթը, Հերցենի յելույթը, ռուսական գրականության ծաղկումը, Մոսկվայի համալսարանի ծաղկումը, Գրանովսկու շրջանը և այլն և այլն։ Իսկ 70-ական թվականներին տեղի յեն ունենում հեղափոխականների փոքր խմբերի խիզախ պայքարը և անշուշտ աղոտ ու տխուր անշարժություն վերևում՝ բուրժուական լայն խավերում։ Բայց վորպեսզի մեր թեմային, հեղափոխական շարժմանը մոտենանք, մենք կարիք չունենք այս ընդարձակ կուլտուրական պատկերներով զբաղվել, այլ բավական է մոտենալ մեր կողմից բնութագրված տնտեսական փաստերի անմիջական հետևանքներին։

Ի՞նչ պետք է լիներ Նիկոլայ I-ի որով արդյունաբերության բուռն զարգացման արդյունքը։ Յես կարծում եմ, ինքներդ էլ կպատասխանեք. բանվորական հարցի հանդես գալը։ Յեվ այստեղ, իհարկե, բուրժուական հին պատմաբանները միանգամայն կզարմանան. ինչպես, բանվորական հարց Նիկոլայի որո՞վ։ Այո, բանվորական հարցը մեզ մոտ սաղմնավորվեց Նիկոլայի որով, Ռուսաստանի պատմության մեջ առաջին գործարանային որենքի, 1835 թվի որենքի հեղինակի որով, մի որենք, վորի մնացորդներից մեկի հետ մենք՝ վորպես խորհրդային ծառայողներ, իսկ յերևի ձեր կեսը, վորպես ֆաբրիկաների և գործարանների բանվորներ հանդիպել ենք դեռ բոլորովին նորերս։ Այժմ հեռացման ժամանակ աշխատավարձը յերկու շաբաթվա համար սկզբից է տրվում—դա 1835 թվի որենքն է վորոշել բանվորին արձակելուց յերկու շաբաթ առաջ զգուշացնել։ Նա վատ եր պահպանվում մինչև անցյալ դարի 80-ական թվականները, մինչև գործարանային տեսչության հանդես գալը, վորովհետև վոչ վոք չեր հետևում, սակայն ամսական յերկու անգամ աշխատավարձ տալու պարտավորությունն արդեն այնտեղ կա, այնպես վոր, ինչպես տեսնում եք, այդ որենքը վորոշ չափով իր ազդեցությունը մինչև մեր որերը պահպանեց։

Դա 1835 թվին եր, Նիկոլայի թագավորության ամենայեռուն շրջանում, և միևնույն ժամանակ, Նիկոլայի ֆինանսների մինիստր Կանկրինը, վորը հենց այն ժամանակվա ռուսական արդյունաբերության գլխավոր խնամակալն եր, վորովհետև այն ժամանակ արդյունաբերության հատուկ մինիստրություն չկար, այլ կար առևտրի և մանուֆակտուրաների դեպարտամենտ, ֆինանսների մինիստրություն (վորը, ի միջի այլոց, այն ժամանակ սքանչելի մի ամսագիր եր հրատարակում՝ «Առևտրի և մանուֆակտուրաների դեպարտամենտի ամսագիր», վորը Նիկոլայի շրջանի տնտեսական տեղեկությունների իսկական հանքավայր է), Կանկրինը՝ տեսնելով ռուսական արդյունաբերության այսպիսի բուռն աճումը, անհրաժեշտ եր գտնում հանգստացնել Նիկոլային, վոր մեզանում դա այն ձևով բանվորական հարց չի ստեղծի, ինչ ձևով վոր նա գոյություն ուներ արդեն այն ժամանակ Արևմտյան Յեվրոպայում։ Կանկրինը մատնանշում եր, վոր Արևմուտքում բանվորը պրոլետար է և այդ պատճառով ճգնաժամի դեպքում նա գնալու տեղ չունի։ Գործազրկություն է սկսվում, նա սոված է մնում—

բնականաբար նա փողոց ե գնում և խռովություն սարքում։ Իսկ ո՞վ ե մեզ մոտ բանվորը։ Դա գյուղացին ե, նա գյուղում հողի կտոր ունի։ Ֆաբրիկայում գործ չկա, նա գյուղ կգնա և այնտեղ աշխատանք կգտնի, այնպես վոր, յեթե մեզ մոտ ճգնաժամ ել պատահի, ապա այնպիսի հետևանքներ, վորոնք բղխում են նրանից Արևմուտքում, մեզ մոտ յերբեք չի կարող լինել։ Դա շատ բնորոշ ե, վոր Նիկոլային պետք եր հանգստացնել, վոր մեզ մոտ բանվորական հարցն իր արևմտա-յեվրոպական ձևով անհնար ե։ Զուր չե, վոր Նիկոլայը շատ լավ գիտեր «կոմունիզմ» բառը, զուր չե, վոր նա այնպես ջերմագին և անկեղծ կերպով շնորհավորում եր գեներալ Կավենյակին, յերբ նա ճնշեց Փարիզի բանվորների ապստամբությունը 1848 թվի հունիսին։ Նիկոլայն այդ շատ լավ հասկանում եր, թեպետ և մարքսիստ չեր; սքանչելի կերպով հասկանում եր, վորպես գործնական մարդ,—իսկ Նիկոլայն, ի միջի այլոց, չնայած, վոր տեսականորեն կատարյալ ապուշ եր, գործնականում հիմար մարդ չեր, նա շատ լավ զգում եր, թե դա ուր ե տանում և ինչ հետևանք կարող ե ունենալ։

Յեվ յեթե մենք այս, մի քիչ անսպասելի ծայրից մոտենանք փետրվարի 19-ի բարենորոգմանը, գյուղացիների «ազատագրմանը», այստեղ ել միանգամայն անսպասելի ասպեկտ կտեսնենք։ Ինչո՞ւ գյուղացիներին հողով հանդերձ ազատագրեցին։ Ոբյեկտիվորեն դա անհրաժեշտ եր առևտրական կապիտալին, վորպեսզի գյուղացին մնա այն մանր արտադրողը, վորին առևտրական կապիտալը սովոր եր շահագործել, բայց սուբյեկտիվորեն սրա հետ այլ սպասելիքներ ել եյին կապվում, ավելի հետաքրքիր սպասելիքներ։ Ահա թե ինչ եր գրում գյուղացիների ազատագրման լիդերներից մեկը, վոր կուլիսների յետևից վոգևորում եր և՛ խմբագրական հանձնաժողովներին և՛ առաջադեմ ազնվականության լայն շրջաններին,—Կ. Դ. Կավելինը։ Նախ և առաջ, լավ ե, վոր պարզենք Կավելինի սոցիոլոգիան,—դա ուղիղ յերկու րոպե կխլի մեզանից։ Ահա թե ինչպես ե բացատրում Կավելինը սեփականության ծագումը. «Այն, ինչ մարդ արտաքին աշխարհումն ե ստեղծում, նրա սեփականությունն ե դառնում, վորը նա իրենից հետո իր յերեխաներին ե թողնում և մերձավորներին կտակում։ Այստեղից ե բղխում անհավասարության նոր աղբյուրը։ Ոմանք շատ ստեղծելով՝ մեծ սեփականություն ունեն, մյուսները՝ քիչ ստեղծելով, իրենց պատկանող քիչ իրեր ունեն և կամ բոլորովին սեփականություն չունեն (!)։ Ահա թե ինչու զանազան ժողովրդների մեջ վաղ թե ուշ հավասարության զանազան անսանձ տեսություններ են ստեղծվում, վորոնք պատմությունն արցունքով և արյունով են լցնում և անկասկած բացասում են ամեն մի անհավասարություն, վորը, սակայն, ինչպես դուք տեսաք, մարդկային հասարակության հիմնական որենքն ե»... Ազնվականները, ըստ Կավելինի, տրտնջում են, վոր գյուղացիներն ազատագրվել են հողի հետ միասին... Դա չարիք չե, դա նույնիսկ լավ ե։ «Դրանով (այսինքն՝ հողի հետ միասին ազատագրվելով) մենք ընդ միշտ կազատվենք սովալլուկ պրոլետարիատից և նրա հետ անքակտելի կերպով կապված գույքային հավասարության անրջային զանազան տեսություններից, անհաշտ նախանձից և ատելությունից դեպի բարձր դասակարգերը և վերջինի հետևանքից—սոցիալական հեղափոխությունից»։ Գյուղացիներին հողի հետ միասին ազատագրեցին 1861 թվի փետրվարին, ի միջի այլոց նրա համար, վորպեսզի կանխեն 1917 թվի հոկ-

տեմբերը։ Դուք տեսնում եք, վոր գործնականում այդ չհաջողվեց, այնուամենայնիվ այդպիսի սուբյեկտիվ մտադրություն կար, և այդ մտադրությունը վոչ միայն սուբյեկտիվորեն Կավելինինն եր, այլև խմբագրական հանձնաժողովներինը։ Ահա թե ինչպես եյին պատճառաբանում խմբագրական հանձնաժողովները գյուղացիների ազատագրումը հողով. «Ինչքան ել փոքր լինի հողաբաժնի ամենափոքր չափն անգամ, հողազուրկ գյուղացիների կենցաղը՝ նրանց այժմյան ծանր դրության հետ համեմատած ավելի լավ կդառնա»։ Հարցն այն չե, վոր բոլորին բավարար չափով հող տրվի,—դա նույնիսկ շատ վնասակար ե առևտրական կապիտալի տեսակետից. այն ժամանակ չես կարող ստիպել մուժիկին, վոր նա աշխատի,—այլ նրանում, վորպեսզի առանց հողի բոլորովին մարդ չլինի, և վորպեսզի յուրաքանչյուրը վոտ ու ձեռով կապված լինի իր հողաբաժնին։ Մի այլ տեղում հանձնաժողովները մանրամասն զարգացնում են, թե ինչու պետք ե պահպանել գյուղական համայնքը։ Ահա թե ինչու. «Բանվորների կոալիցիաները, կոլեկտիվ ընդդիմադրությունը կապիտալիստներին և իշխանությանը՝ իրենց բոլոր հետևանքներով, բացառապես գրեթե զարգացել ե այն դասերում, վորտեղ սանձարձակ անձինք, վոչ մի հողային շահերով իրար չկապված և իրենց բախտին թողնված՝ գիտակցեցին իրենց անհատական թուլությունը և կառավարությանը, սեփականությանը ու հասարակական կարգերին թշնամի արհեստական միություններ կազմեցին»։

Տեսնում եք, թե ինչի համար եր անհրաժեշտ Ռուսաստանում պահպանել հողային համայնքը։ Միամիտ սոցիալիստները կարծում եյին, վոր դա ապագա սոցիալիզմի սաղմն ե, սակայն խմբագրական հանձնաժողովներում նստած ինքնակալության ավելի խելացի պաշտոնյաներն ու կալվածատերերն սքանչելիորեն հասկանում եյին, վոր միանգամայն ընդհակառակն ե. զրկիր գյուղացուն հողից և նա բանվորական միություն կկազմի, իսկ հետո, գուցե, կուսակցություն ել կստեղծի. իսկ ամրացրու նրան հողային համայնքին, այսպիսի մի փոքր կույտին,—և նա այդ հասարակական յերաշխավորության «բնական կապանքներով» կապված (թե վորքանով հասարակական յերաշխավորությունը «բնական կապանք» ե, թողնում եմ, վոր ինքներդ դատեք), նա կնստի իր հողի վրա և վոչ մի կուսակցության մասին չի յել մտածի, և նույնիսկ մինչև արհեստակցական միությունն ել չի հասնի։

Այսպիսով, բանվորական հարցը վոչ միայն գոյություն ուներ մեզ մոտ XIX դարի առաջին կեսին,—կարծում եմ, վոր կարիք չկա ձեզ հիշեցնելու, վոր խմբագրական հանձնաժողովները 50-ական թվականների վերջերին եյին աշխատում, իսկ Կավելինն իր տողերը դեռ մի քիչ ել առաջ եր գրում, 50-ական թվականների կեսերին,—այլև կառավարական գործնական միջոցներ եյին ընձեռնվում, վորպեսզի մեզ մոտ բանվոր դասակարգի անցանկալի ձևով զարգացման առաջն առնվի։ Արդեն խոսում եյին սոցիալիզմի մասին, սոցիալական հեղափոխության մասին (ասենք ի միջի այլոց, վոր մենք ել մինչև վերջերս «սոցիալիստական» տերմինի փոխարեն «սոցիալական» հեղափոխություն տերմինն եյինք գործածում), և միջոցներ եյին ձեռք առնվում, վորպեսզի այդ դժբախտությունը կանխվի։

Յեվ ահա, յերբ մոտիկից նայեք յերևույթների այս կոմպլեքսին, ձեզ այլ ևս չի զարմացնի այս հողի վրա ռուսական սոցիալիզմի առաջանալը։

Դա նույն յերևույթների միանգամայն անխուսափելի, բայց ոպոզիցիոն նշանով արտացոլումն ե, վոր մենք այլ հողի վրա չենք դիտել։ Արդյունաբերության բուռն զարգացումը բանվոր դասակարգի աստիճանական առաջացման հետ եր կապված. սրա հետ ե կապված կառավարության պայքարն ընդդեմ պրոլետարիզացիայի. սրա հետ ե կապված և այն, վոր ոպոզիցիոն ձևով տրամադրված ինտելիգենտական ելեմենտներն անպայմանորեն սոցիալիստական գծով եյին գնում։ Այս բոլորն իրար հետ չափազանց կապված են և իրենից հանելուկային և խորհրդավոր վոչինչ չի ներկայացնում։ Հենց այդպես ել պետք ե լիներ։ Հանելուկային և խորհրդավոր ե մի ուրիշ բան։ Ինչպես տեսնում եք, այս բոլոր պատմությունը մեզ մոտ, ինչպես և ամբողջ աշխարհում գործարանից և գործարանային բանվորությունից եր գալիս, իսկ մեր առաջին սոցիալիստները, ինչպես գիտեք, իրենց սոցիալիզմը նույն գյուղական համայնքից եյին բխեցնում, վորը Խմբագրական հանձնաժողովներն իրավացիորեն Ռուսաստանում սոցիալիզմի դեմ յերաշխիք եյին համարում։ Այս բոլորը վորոշ բացատրություն ե պահանջում։

Այս բացատրությունն ինքնըստինքյան բավական պարզ ե։ Իրականում կատարվող տնտեսական պրոցեսից բխող ամեն տեսակի օբյեկտիվ ազդեցությունն այս կամ այն հասարակական դասակարգի կամ հասարակական խմբերի ուղեղում անդրադառնում ե այդ դասակարգի կամ այդ խմբի պրիզմայի միջով։ Ի՞նչ եր ներկայացնում իրենից XIX դարի առաջին կեսի ռուսական ինտելիգենցիան, վորի մեջ առաջացան սոցիալիստական առաջին խմբակները, այսպես կոչված «Պետրաշևսկու դավադրությունը», վորը լիկվիդացիայի յենթարկեցին 1849 թվին, վորին անկասկած պատկանում եյին Բելինսկին և Դոստոյևսկին և վորին կպատկաներ նաև Հերցենը, յեթե եմիգրացիայում չգտնվեր, և այլն — մի դավադրություն, վորն ընդգրկում եր այն ժամանակվա ինտելիգենցիայի լավագույն վերին խավերը։ Վերին աստիճանի բնորոշ ե, վոր այս վերին խավերը տարվեցին վոչ թե կոմունիզմով, պետրաշևցիների մեջ մի կոմունիստ միայն կար — Սպեշնևը, վորը և անց եր կացնում զինված ապստամբության գաղափարը (Նրանից մնացել ե հռչակավոր յերդումը, ուր ընկերության անդամները պարտավորվում եյին «կռվին» մասնակցել, ինչպես չափազանց կոնկրետ ձևով ցույց ե տրված այդ յերդման մեջ. «Պարտավորվում եմ առաջին իսկ պահանջին մասնակցել կռվին», (այսինքն՝ զինված ապստամբությանը)։ Դա միակ կոմունիստն եր պետրաշևցիների մեջ, մնացածները ֆուրյերականներ եյին, այսինքն՝ մանր-բուրժուական ուտոպիկ սոցիալիզմի հետևորդներ։ Ահա թե ինչու այս կողմ եր թեքվում այն ժամանակվա ռուսական ինտելիգենցիան և ինչու նա վերջ ի վերջո հանգավ այն համայնքի սոցիալիզմի միամիտ հավատքին, վորին ցարական կառավարության պաշտոնյաներն իրավամբ համարում եյին սոցիալիզմի դեմ ուղղված յերաշխիք։ Դրա համար հարկավոր ե տեսնել, թե ինչ եր ներկայացնում իրենից այն ժամանակվա ինտելիգենցիան։

Սխալ կլիներ կարծել, վոր այն ժամանակ արդեն ինտելիգենցիան այն ապարատն եր, վորն սպասարկում եր խոշոր արդյունաբերությանը, վորի աճման մասին յես արդեն խոսեցի։ Խոշոր ինդուստրիան, նույնիսկ XIX դարի 70-ական, 80-ական թվականներին սպասարկվում եր գլխավորապես այլերկրյա պերսոնալով։ Նույնիսկ 70-ական և 80-ական թվականներին մեր

գործարանների դիրեկտորները, ականավոր ճարտարապետները, մինչև անգամ վարպետները սովորաբար այլերկրացիներ եյին. տեղական ելեմենտը շատ թույլ եր ներկայացված։ XIX դարի առաջին և նույնիսկ յերկրորդ կեսի մեր ինտելիգենցիան, դա գլխավորապես, այսպես կոչված, ազատ պրոֆեսիայի ներկայացուցիչներն եյին, ճիշտ ե, Նիկոլայի որով մենք չունեյինք այդ ազատ պրոֆեսիաների քիչ թե շատ քաղաքականապես աչքի ընկնող կադրեր՝ փաստաբաններ չունեյինք, բայց բժիշկներ, ուսուցիչներ, գրականագետներ արդեն ունեյինք։ Ազատ պրոֆեսիայի ներկայացուցիչները, ըստ իրենց աշխատանքի տեսակի՝ տիպիկ արհեստավորներն են, տիպիկ մենակ աշխատող աշխատավորները։ Դա մեր մանր ինտելիգենցիայի ամենամանր-բուրժուական շերտն ե։

Դա, ի միջի այլոց, շատ ռելյեֆ կերպով արտահայտվեց և ներկայումս, արտահայտվում ե մեր գրագետների տրամադրություններում, վորը Հոկտեմբերյան հեղափոխությունը հսկայական դժվարություններով ե ըմբռնում, կարծես շատ դառը հաբ լինի ընդունելիս։ Այս ինտելիգենցիայի մի մասը, — վոր ինձ լավ ծանոթ ե իմ հին աշխատանքներից դեռ ևս դարուս սկզբին, — դա մանր-բուրժուական ուսուցչությունն ե։ Չե վոր մենք, սոցիալ-դեմոկրատներս շատ թույլ եյինք 1905 թվի և հետագա տարիների ուսուցչական միության մեջ։ Այնտեղ եսերներն եյին թագավորում։ Եսերներն ել ղեկավարում եյին այս մասսան, իսկ մենք, սոցիալ-դեմոկրատներս շատ փոքր խմբակ ունեյինք՝ առանց մեծ ազդեցության, այնպես վոր հաճախ ձեռներս թուլանում եյին։ Յես սովորված եյի աշխատել այս միջավայրում և յես հաճախ պեսսիմիստական տրամադրության մեջ եյի ընկնում, վոր չարժե ուսուցչության հետ գլուխ դնել, վոր դա ավելորդ աշխատանք ե, այլ պետք ե ավելի արտադրական աշխատանքով զբաղվել։ Իհարկե, դա ճիշտ չեր, բայց իմ այս տրամադրությունը շատ բնորոշ ե և յես այդ շատ լավ հիշում եմ։ Դա հենց ամենամանր-բուրժուական խումբն ե. և ահա թե ինչու մեզանում ծնվեց այդ տարօրինակ սոցիալիզմը՝ համայնքի իր պաշտամունքով։ Նա միանգամայն վորոշակի հողի վրա ծագեց, վորովհետև բանվորական շարժումն ստիպում եր մտածել սոցիալիզմի մասին։ Նա այդ մտքին եր հրում նաև Կանկրին մինիստրին, նույնիսկ Նիկոլայ Պավլովիչ կայսրին, առավել ևս պետք ե այդ մտքերը ներշնչեր այն ժամանակվա ինտելիգենցիային։ Բայց քանի վոր այն ժամանակվա ինտելիգենցիան տիպիկ արհեստավոր-մենաշխատ եր, նա չեր կարող ըմբռնել պրոլետարական սոցիալիզմը։ Հերցենը՝ ընկնելով 1848 թվի փարիզյան մթնոլորտը, մի րոպեյով նրանով վարակվեց. բայց միայն մի րոպեյով, վորպեսզի հետո նորից վերադառնա համայնական մանր-բուրժուական սոցիալիզմին, իսկ այն մարդիկ, վոր չեյին մտել 1848 թվի մթնոլորտը (արևմտա-յեվրոպական), բոլորովին չեյին կարող այդ սոցիալիզմով ներշնչվել և Ռուսաստանում այն սոցիալիզմն եյին վորոնում, վորը նրանց հասկանալի յեր։ Գրականության ասպարեզում նրանք գտնում եյին նրան հանձինս Ֆուրյեյի և Պրուդոնի՝ Պրուդոնի, վորը բառացիորեն թագավորում ե ամբողջ ռուսական սոցիալիզմի իդեոլոգիայի վրա ամբողջ XIX դարի կեսերին։ Ըստ եության դրանք բոլորն ել պրուդոնիստներ եյին զանազան կաղապարի և չափի՝ Միխայլովսկին ել ներառյալ։ Դրանք մարդիկ եյին, վորոնք յերևակայական սոցիալիզմ, մանր-բուրժուական սոցիալիզմ եյին տեսնում ռուսական գյուղացիական համայնքում, հողային համայնքում։

Ահա թե վորտեղից է ծնվել 40-ական—70-ական թվականների մեր սոցիալիստ-նարոդնիկների աշխարհայացքը։

Այժմ անցնեմ շարժման բնութագրությանը՝ կանգ առնելով, գլխավորապես, այն մոմենտների վրա, վորոնք մարգարեական եյին, ինչ տեսակետից նրանք մեզ համար ամենից շատ ել հետաքրքիր են։

Միանգամայն բնական է, վոր այն ինտելիգենցիայի համար, վորին յես բնութագրեցի, վորպես հեղափոխական մասսա, վորի վրա յեր դրել նա իր բոլոր հույսերը, գյուղացիությունն եր։ Այստեղ ես մենք շատ հետաքրքիր փաստ ունենք։ Անկասկած հեղափոխական շարժման խթանն արդյունաբերության զարգացումն եր, բանվորական շարժման առաջադեմ շարժումները։ Դա դժվար չե ժամանակագրական համեմատությամբ բացատրել. պետրաշևցիները՝ դա 1848—49 թ.թ. են, ռուսական տեքստիլ արդյունաբերության ամենահույզ շարժման իսկական շրջանը. 60-ական թվականների սկզբնավորումը կապված է արդյունաբերական կապիտալի առաջին հաղթանակի՝ գյուղացիության ազատագրման հետ։ Թեպետ դա կոմպրոմիս եր առևտրական և արդյունաբերական կապիտալների միջև, բայց, այնուամենայնիվ, գյուղացու կալվածատիրոջից պոկվելու փաստն արդեն անկասկած արդյունաբերական կապիտալի հաջողությունն եր, վորին ազատ բանվոր եր հարկավոր։ 70-ական թվականների շարժումն անմիջապես գործադուլային շարժմանն է հաջորդում, 60-ական թվականների յերկրորդ կիսի շարժմանը։ Առաջին մեծ գործադուլը Մարոզովի ֆաբրիկայում տեղի ունեցավ 1865 թվին, իսկ 1870 թվին մեծ գործադուլների ալիք բարձրացավ Պետերբուրգում, վորը դարձավ դրդապատճառ ներքին գործոց մինիստրի հայտնի շրջաբերականի. վերջապես հեղափոխական շարժման սրումը, «Նարոդնայա Վոլյան» («Ժողովրդական ազատությունը») հաջորդում է Պետերբուրգի գործադուլային շարժման յերկրորդ ալիքին՝ 1878 թ. գործադուլներին, վորոնք բոլորին լավ հայտնի յեն Պլեխանովի գրվածքներով։ Այսպիսով, հեղափոխական շարժման այս ալիքների կապը բանվորական շարժման հետ բավարար վորոշակիությամբ է սահմանվում։ Սակայն, չնայած այս յերևույթին, վոր չեր նկատում և չեր գիտակցում այն ժամանակվա ինտելիգենցիան, վերջինս իր գլխավոր հույսը, կրկնում եմ, գյուղացիության վրա յեր դնում։ Սրա հետ է կապված և նրա սոցիալիստական իդեոլոգիան, նրա համայնքի պաշտամունքը, վորի մասին յես արդեն հիշատակեցի։ Թույլ տվեք, վոր գրական հողի վրա չքննենք այս համայնական գրականությունը, վորպես այդպիսին, չշոշափենք այն, քանի վոր մեր ժամանակը կարճ է, և այդ գրականությունն ել այնքան հետաքրքիր չե։ Յերկար ժամանակ մենք բավականանում եյինք այդ նարոդնիկյան գրականությամբ, վորովհետև հեղափոխական տարրերքի իսկական արտահայտությամբ, այն ժամանակվա թռուցիկներին՝ շնորհիվ կոնսպիրատիվ պայմանների՝ մենք մասամբ ուղղակի անծանոթ եյինք, մասամբ ել անհարմար եր քաղվածքներ անել, վորովհետև ցարական դատախազներն արտասովոր կատաղությամբ եյին վերաբերվում պրոպագանդիստական ագիտացիոն գրականությունից բերված բոլոր քաղվածքներին, թեկուզ և շատ հին լինեյին նրանք։ Բավական է մատնանշել, վոր դեկաբրիստների թռուցիկը Սեմյոնովյան գնդին Սեմյոնովսկին ստիպված եր բազմակետերով տպել։ Իսկական գրականությունից չեր կարելի քաղվածքներ անել, իսկ նա, ինչպես դուք հիմա կտեսնեք, շատ

ավելի հետաքրքիր է, քան թե այն ամսագրային հոդվածներն ու գրքույկները, վորոնց մենք սովորաբար ոգտագործել ենք։ Այդ գրքերը շարժումը մոտավորապես այնպես եյին արտացոլում, ինչպես առարկան է արտացոլվում տասերորդ հայելու մեջ։ Ավելի ուսանելի պատկեր կստանանք, յեթե մոտիկից ծանոթանանք հենց իրեն շարժմանը։ Ահա թե ինչու իմ շարադրության մեջ Չերնիշևսկին ել ստիպված է հանդես գալ վոչ թե վորպես համայնքի մասին նշանավոր հոդվածների և «Ծանոթություններ Միլլին»—հեղինակ, այլ վորպես կալվածատիրական գյուղացիներին ուղղված թռուցիկների հեղինակ, վորոնց Չերնիշևսկուն պատկանելը Շելգունովի հիշողություններով վերջնականապես հաստատված է։ Դա իրոք նրա կողմից գրված թռուցիկ է, ինքնըստինքյան սքանչելի և հետաքրքիր է, ի միջի այլոց, նրանով, վոր Չերնիշևսկին գուշակեց նշանավոր հողի կտրվածքներն իրենց ոնտեսական նշանակությամբ նրանց հանդես գալու րոպեյին։ Ահա թե ինչու այս թռուցիկի վրա արժե կանգ առնել։ Ահա թե ինչ է նա գրում.

«Ի՞նչ կպատահի ձեր հողի հետ,—հարցնում է նա գյուղացիներին։— Ահա թե ինչ կպատահի նրան։ Յերբ կսկսեն հողաբաժանումը, հրամայված է ավելի շատ կտրատել, քան առաջ եր. վորոշ գյուղերում նախկինի չորրորդ մասը կկտրեն, մյուսներում՝ յերրորդ, իսկ ուրիշներում՝ և ամբողջ կեսը, գուցե և ավելին, նայած թե վորտեղ ինչպես կպատահի։ Դա դեռ առանց կալվածատիրոջ խարդախության և առանց հողաբաժանների կողմից կալվածատերերին տրվող հողամասերի, ինչպես այդ ցարական հրամանով է թույլատրված։ Իսկ առանց կալվածատերերին մաս տալու, հողաբաժանները գործ չեն տեսնի, չե վոր դրա համար կալվածատերերը նրանց փող կտան։ Դուրս կգա, վոր ձեզ առաջուց ունեցած հողի համեմատությամբ կես հող, գուցե և ավելի քիչ կթողնեն, ուր մի ծխին յերկու դեսյատին եր հասնում, հիմա մեկից ել պակաս կթողնեն։ Յեվ մեկ դեսյատինի համար մուժիկը պետք է նույն կոռ ու բեգյարը տա, ինչ առաջվա յերկու դեսյատնի համար։ Իսկ ինչպես կարող է մուժիկը հողի կիսով յոլա գնալ։ Նշանակում է, պետք է կալվածատիրոջ մոտ գա և խնդրի, տուր խնդրեմ մի քիչ ավելի շատ հող, թագավորի հրամանով շատ քիչ են ինձ ապրուստի համար թողել։ Իսկ կալվածատերը կասե. ինձ նրա համար հավելյալ կոռ ու բեգյար տուր։ Յեվ ինչքան քեֆը տա կպահանջի մուժիկից։ Ինչ խոսք, վոր մուժիկն ել, ինչ վոր կալվածատերը պահանջի, կհամաձայնվի։ Յեվ դուրս կգա, վոր ազատն նրան կբարձի ավելի մեծ կոռ ու բեգյարով, քան թե հիմիկվանն է։

Ասենք միայն վարելահողի համար չե, վոր հավելում կլինի։ Վոչ, դու կալվածատիրոջը մարգագետիններդ ել տուր, չե վոր ցարի հրամանով ամբողջ խոտհարքը կխլեն մուժիկից։ Անտառի համար ել կալվածատերը մուժիկից կստանա. չե վոր անտառը բոլոր գյուղերում կխլեն. հրամանում ասված է, վոր անտառը կալվածատիրոջ բարիքն է, իսկ մուժիկը չի համարձակվի ցախ անգամ հավաքել, յեթե կալվածատիրոջը չվճարի նրա համար։ Ուր վոր գետում կամ լճում ձուկ եյին բռնում, դրա համար ել կալվածատերը կսկսի փող պահանջել։ Ամեն բանին, ինչին վոր մուժիկը ձեռք տա, կալվածատերը կոռ ու բեգյարի հավելում կպահանջի։ Ամեն ինչ, մինչև վերջին թելը կալվածատերը կվերցնի մուժիկից։ Պարզապես ասած, կալվածատերերը ցարի հրամանով բոլորին ել մուրացկան կդարձնեն»։

Դուք տեսնում եք, վորքան յերկար ժամանակ եր հարկավոր ռուսա-

յան ինտելիգենցիայի ուղեղը շուռ ու մուռ տալու, վորպեսզի այնպիսի բաներ, ինչպիսիք գրում եր Չերնիշևսկին 1861 թվին, կարելի լիներ բացատրել այն 90-ական թվականների վերջերին, ինչ ստիպված եր անել Լենինն իր նշանավոր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ։ Մինչդեռ այդ բոլորն սքանչելի կերպով հասկացել եր, այո, հանճարեղ ռուս տնտեսագետը հենց գյուղացիների ազատագրման մոմենտում. հատուցումների նշանակությունը, հսկայական կապալավարձի անխուսափելիությունը՝ այսինքն նոր տեսակի բաժրան և աշխատանքով վարձատրելու անխուսափելիությունը՝ այսինքն նոր տեսակի կոռ ու բեգյարը—այս բոլորը միանգամայն պարզ եր 1861 թվին։ Չերնիշևսկու թռուցիկը, ինչպես գիտեք, չտարածվեց, ձեռագիր դրությամբ բռնագրավեցին, նա չտպագրվեց, և այդ պատճառով ագիտացիոն ազդեցություն չունեցավ. նա մնաց գյուղացիների մեջ լոկ վորպես չափազանց տաղանդավոր, չափազանց խելացի և խոր ագիտացիայի մի հուշարձան, վորը տարվում եր գյուղացիների մեջ հենց նրանց ազատագրման մոմենտում։

Ուրիշ թռուցիկներից նմուշներ չեմ բերի—նրանք շատ են, այլ կնշեմ միայն, վոր հենց նույն Չերնիշևսկին, վորն, ինչպես տեսնում եք, տնտեսական ասպարեզում այսպիսի զարմանալի խորաթափանցություն հայտաբերեց, քաղաքական ասպարեզում բավական միամիտ տեսակետ ուներ. յերևակայելով, վոր «կրթված դասակարգերը», այսինքն՝ ինտելիգենցիան մի ինչ վոր ինքնուրույն ույժ և նշանակություն ունի, և վոր նա իր շարժումով կարող ե վորոշ քաղաքական հետևանքների հասնել։ Չնայած նրան, վոր Լեմկեն վիճելի յեր համարում այդ, յես այնուամենայնիվ այն տեսակետի յեմ, վոր «Վելիկոռուսը» յեթե Չերնիշևսկին անմիջականորեն չի գրել,—վորովհետև վոճը նմանվում ե նրա վոճին,—համենայն դեպս գրել ե մի այնպիսի անձնավորություն, վորը դուրս ե յեկել նույն խմբակից, վորին պատկանում եր և Չերնիշևսկին, և վորին նա ներշնչում եր։ Իսկ «Վիլիկոռուսի» գործողության ձևերը, ինչպես գիտեք, հետևյալներն եյին. հասցե ներկայացնել, խնդրագիր ներկայացնել, պահանջել՝ հենվելով իր բարոյական հեղինակության վրա։ «Վելիկոռուսն» ուղղակի ասում ե. «Մենք մուժիկներ չենք և վոչ ել լեհեր, մեզ վրա չի կարելի կրակել»։ Ինչու չի կարելի կրակել։ Հունվարի 9-ը և հետագա դեպքերը ցույց տվին, վոր ում վրա վոր ուզես, կարելի յե կրակել, ցարական կառավարությունը չքաշվեց, բայց ինտելիգենտները կարծեցին, վոր ֆրակով և ցիլինդրով ինտելիգենտներին տեսնելով (այդպես եյին հագնվում այն ժամանակ ինտելիգենտները)՝ նրանց վրա չեն կրակի։ Ինտելիգենտները պետք ե պահանջեն կառավարությունից, վորպեսզի նա սահմանադիր ժողովի նման մի բան հրավիրի։ Չերնիշևսկու թռուցիկը գյուղացիներին ուշադիր կարդալով՝ դուք կտեսնեք, վոր նա այստեղ ևս, ճիշտն ասած, շատ զգույշ ե գործողության մեթոդների հարցի նկատմամբ։ Ահա թե ինչ ե նա ասում.

«Բոլոր մուժիկները պետք ե իրար մեջ համաձայնություն ունենան, վորպեսզի ի մի լինեն, յեթե ժամանակը գա։ Իսկ քանի դեռ ժամանակը չի հասել, պետք ե ույժ պահել... զուր տեղը դժբախտության մեջ չընկնել, կնշանակի հանգստություն պահպանել և վոչինչ ցույց չտալ։ Առածն ասում ե, մի ծաղկով գարուն չի գա։ Ինչ ոգուտ, յեթե մի գյուղում հուզմունք բարձրացնել, յերբ մյուս գյուղերը պատրաստ չեն։ Դա նշանակում ե միայն

գործը փչացնել և իրեն կործանել։ Իսկ յերբ բոլորը պատրաստ կլինեն, նշանակում ե ամեն տեղ ոգնություն կլինի, դե, այն ժամանակ գործ սկսիր։ Իսկ մինչև այդ՝ ձեռներդ քեզ պահիր, խոնարհ տեսք ունեցիր, իսկ ինքդ քո յեղբայր մուժիկի հետ խոսիր և համոզիր նրան, վոր գործն իր իսկական ձևով հասկանա»։

Բնորոշ ե, վոր այս մնացել ե թռուցիկի բնագրում, իսկ առաջ ահա թե ինչ եր, և այդ ջնջված ե.—

«Յեվ ուրիշ, ահա թե ինչ, յեղբայրներ. զինվորներին խնդրեցեք, վոր նրանք ձեզ սովորեցնեն, թե ինչպես կարգ պահպանել զինվորական գործի մեջ։ Մեծ վարժություն ձեզ հարկավոր չե, վոր ասենք կարգին քայլել և այլն—առանց դրան ել կարելի յե յոլա գնալ. իսկ դուք այն պիտի սովորեք, վոր ավելի խիտ, ուս-ուսի տաք՝ կանգնած մնաք և հրամանը լսեք, դատարկ բանից չվախենալ, այլ գործի մեջ քաջություն ունենալ և հանգիստ դատողություն, այսինքն՝ սառնարյունություն»... և այլն։

Ռազմական պատրաստության մի փոքրիկ դեղատոմս ես։ Սա յեղել ե Չերնիշևսկու թռուցիկում և նրա կողմից ջնջված ե, վորպես վտանգավոր մի բան, իսկ այս տողերը՝ «պետք ե հանգստություն պահպանել և վոչ մի կերպ ցույց չտալ»՝ մնացին։ Սա մի ուրիշ բնորոշ, մարգարեյական գիծ ե, բայց արդեն ուրիշ կողմից։ Չերնիշևսկին վոչ միայն մեր ագրարային ծրագրի նախահայրն եր այն տողերով, վորոնք յես կարդացի, այլ նա անկասկած նաև մենշևիկյան տակտիկայի նախահայրն եր, վորը հենց նրանում ել կայանում եր, թե՝ «ինչու հուզմունք առաջ բերել, դրանից ինչ կստացվի, պետք ե հանգստություն պահպանել» և կամացուկ ու զգուշությամբ, բուրժուազիայի վրա հենվելով (Չերնիշևսկու «կրթված դասակարգերը»)՝ աստիճանաբար, այդ «կրթված դասակարգերի» խաղաղ ճնշման միջոցով, վորոնց վրա ցարական կառավարությունը չի կարող կրակել, աստիճանաբար ցարից ամեն տեսակի զիջումներ ձեռք բերել։

Այսքանը Չերնիշևսկու մասին։ Բայց վորպեսզի դուք չկարծեք, թե 1861 թվականներին մեզ մոտ բացառապես մենշևիկյան տրամադրություններ եյին իշխում, թույլ տվեք բերել նաև բոլշևիկյան տրամադրության մի որինակ։ Դա «Յերիտասարդ Ռուսաստան» («Молодая Россия») նշանավոր թռուցիկն ե, վորն այն ժամանակվա մենշևիկների մեջ սարսափելի մեծ աղմուկ հանեց, խիստ քննադատության արժանացավ Հերցենի, նույնիսկ Բակունինի կողմից, վորն այս դեպքում ինտելիգենտական տարրերին յենթարկվեց։ Այստեղ ել նորից չափազանց հետաքրքիր են մի ամբողջ շարք մարգարեյական մոմենտներ։ Հետաքրքիրն այն ե, վոր այս թռուցիկը, ինչպես այդ հիմա ապացուցված ե, գրված ե բանտում մի մարդու կողմից, վորին բանտ են նստեցրել հեղափոխական գործունեության համար, և վորը, շնորհիվ այն ժամանակվա ժանդարմների մի քիչ պարզամտության, գրեց այս թռուցիկը և տարածեց։ Հակառակ Չերնիշևսկու թռուցիկի, վորը վորպես ձեռագիր ել մնաց, «Յերիտասարդ Ռուսաստանը» տպվեց և տարածվեց և, իդեպ ասենք, շնորհիվ այն բանի, վոր նա տպվեց, մեր ձեռքն են հասել այդ թռուցիկները չափազանց մեծ քանակությամբ վրիպակներով, վորովհետև այն ժամանակվա գաղտնի տպարանները տեխնիկական տեսակետից շատ ցածր եյին կանգնած։

Նախ և առաջ բնորոշ ե «Յերիտասարդ Ռուսաստանի» սոցիոլոգիան։

Ամբողջ ռուսական հասարակությունը նա յերկու խմբի յե բաժանում՝ կայսերական կուսակցության և ժողովրդական կուսակցության։ Ի՞նչն ե կազմում այդ կայսերական խմբի հիմքը։

«Այս խառնաշփոթությունը, դասակարգերի այս անտագոնիզմին, վորը չի կարող դադարել, քանի գոյություն կունենա արդի տնտեսական հասարակարգը, վորի ժամանակ շատ քչերը, կապիտալների տերերը, միլիոնների բաղդը տնօրինողներն են, միանում ե նաև հասարակական անտանելի լուծը, վորն սպանում ե ժամանակակից մարդու լավագույն ընդունակությունները»։

Այսպիսով, կայսերական կուսակցության հիմքը կապիտալիզմն ե կազմում։ Դա հասկանալի յե։ Ապա գալիս ե գոյություն ունեցող հասարակարգի անհեթեթության բնութագրությունը։ Յես նորից մարգարեյական գծերին եմ անցնում։ Առաջինը՝ ինչպե՞ս կվարվեն նրանք կայսերական կուսակցության հետ, յերբ «Յերիտասարդ Ռուսաստանի» կողմնակիցները հաղթանակեն։

«Ռոմանովների մասին — նրանց հետ հաշիվը ուրիշ ե։ Նրանք իրենց արյունով կհատուցեն ժողովրդի աղետների, յերկարատև դեսպոտիզմի, ժամանակակից պահանջները չհասկանալու համար։ Վորպես քավության զոհ, իրենց գլխով կպատասխանեն բոլոր Ռոմանովները»։

Ինչպես տեսնում եք, սա յել, ինչպես և Պեստելի տեսակետները, ոդի մեջ եր ճոճվում։ Ի՞նչ ձևով կկատարվի հեղաշրջումը։

«Մենք ուսումնասիրում եյինք Արևմուտքի պատմությունը, և այդ ուսումնասիրությունը մեզ համար զուր չանցավ. մենք ավելի հետևողական կլինենք, քան թե վոչ միայն 48 թվի վողորմելի հեղափոխականները, այլև 92 թվի մեծ տերրորիստները. մենք չենք վախենա, յերբ կտեսնենք, վոր արդի հասարակարգը տապալելու համար ստիպված ենք յերեք անգամ ավելի արյուն թափել, քան թե յակոբինցիները՝ 90-ական թվականներին»։

Հետո գալիս ե «Великорусс»-ի քննադատությունը։ «Յերիտասարդ Ռուսաստանի» իդեալը շրջանների հանրապետական ֆեդերատիվ միությունն ե, ընդսմին ժողովրդի իշխանությունը ազգային և շրջանային ժողովների ձեռքը կանցնի։ Կարիք չկա ձեզ հիշեցնելու Ենգելսի, վոչ թե Մարքսի, այլ Ենգելսի «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը Գերմանիայում» գրքից հայտնի ցիտատը, ուր սքանչելի կերպով բնութագրված ե ֆեդերալիզմը, վորպես մանր-բուրժուական հոսանք։ Սակայն նրանք համառ և բթամիտ ֆեդերալիստներ չեյին։

«Մենք հաստատ համոզված ենք, — գրում եր «Յերիտասարդ Ռուսաստանը», — վոր այն հեղափոխական կուսակցությունը, վորը կառավարության գլուխ կկանգնի, յեթե միայն շարժումը հաջող լինի, պետք ե պահպանի այժմյան անշուշտ քաղաքական և վոչ վարչական կենտրոնացումը, վորպեսզի նրա ոգնությամբ տնտեսական և հասարակական կենցաղի այլ հիմունքներ մտցվեն ըստ հնարավորության ամենակարճ ժամանակամիջոցում։ Նա պետք ե դիկտատուրան իր ձեռքը վերցնի և վոչ մի բանի առաջ կանգ չառնի։ Ազգային ժողովի ընտրությունները պետք ե կառավարության ազդեցության տակ կատարվեն, վորն անմիջապես կհոգա, վորպեսզի նրա կազմի մեջ չմտնեն արդի կարգերի կողմնակիցները, յեթե միայն նրանք կենդանի կմնան»։

Ինչպես տեսնում եք, նորից չափազանց մարգարեյական մի գիծ ե.

հեղափոխական կուսակցության դիկտատուրա, վորը փաստորեն ամբողջ կառավարչությունն իր ձեռքումն ե պահում, բայց իր ֆեդերալիզմը յերբեք ել անմիջապես չի կիրառում, ինչպես դա հետևում եր նրա ծրագրից։

Կհիշեցնեմ ձեզ ևս միքանի մարգարեյական գծեր, վորոնք մարգարեյական եյին, ճիշտ ե, մեր անմիջական սոցիալիզմի շրջանում, բայց այս իմաստով պատմականորեն նրանք պահպանում են իրենց ամբողջ նշանակությունը։

«Մենք պահանջում ենք հաստատել հասարակական ֆաբրիկաներ, վորոնք պետք ե ղեկավարվեն հասարակության կողմից ընտրված մարդկանցով, վորոնք պարտավոր են վորոշ ժամանակից հետո հասարակությանը հաշիվ տալ, պահանջում ենք հասարակական խանութներ կառուցել. վորտեղ ապրանքներն այնպիսի գնով ծախվեն, ինչ գնով վոր իրականում արժեն, բայց վոչ թե այն գնով, ինչ վաճառականի խելքին կփչի՝ շուտով հարստանալու նպատակով»։

Իսկ ահա ձեզ գծեր, վորոնք մինչև հիմա յել պահպանել են իրենց նշանակությունը.

«Մենք պահանջում ենք կնոջ լիակատար ազատագրումը, նրանց այն բոլոր քաղաքական և քաղաքացիական իրավունքներ շնորհելը, ինչով վոր տղամարդիկ են ոգտվում։

«Բոլոր յեկեղեցիների գույքերը պետք ե բռնագրավվեն հոգուտ պետության և գործադրվեն ներքին և արտաքին պարտքի հատուցման համար»։

Այստեղ նրանք մի քիչ շեղվում են սոցիալիզմից, քանի վոր նրանք պարտքերի հատուցման մասին են խոսում, բայց այդ պարտքը նրանք ուզում են վանքապատկան և յեկեղեցապատկան գույքով վճարել, և այդ հակայեկեղեցական տրամադրությունը նորից շատ բնորոշ ե։

Ինչպես տեսնում եք, ռուսական հեղափոխական սոցիալիզմի առաջին հիշատակարանը, — քանի վոր Չերնիշևսկին տակտիկայի ասպարեզում հեղափոխական չի յեղել, այլ հեղափոխական ե յեղել միայն տեսականորեն, — մեր հեղափոխական սոցիալիզմի այս առաջին հիշատակարանն իր մեջ մի ամբողջ շարք մարգարեյական գծեր ե պարունակում՝ չնայած նրան, վոր նա անկասկած մանր-բուրժուական և ուսանողական շրջաններից ե դուրս յեկել և կարծես թե վոչ մի կապ չունի պրոլետարիատի հետ։ Ապագա պրոլետարական հեղափոխության շատ գծեր նրա մեջ արդեն ակներև եյին։ Այս տեսակետից ել, գլխավորապես, մեզ համար հետաքրքիր ե 60-ական և 70-ական թվականների այս հեղափոխական շարժումը։ Նրան սաղմնախոսական տեսակետից ել պետք ե ուսումնասիրել։ Մեզ համար չափազանց կարևոր ե մեր լոզունգները մինչև նրանց արմատները հետազոտել։ Դուք տեսնում եք, վոր այս վերջին արմատները բավական խորն եյին ընկած՝ վկայելով, վոր պատմական շարժման ոբյեկտիվ ուժը վորոշ հետևանք ե տալիս՝ անկախ նրանից, թե մարդիկ ինչպես են պատկերացնում այդ շարժումը։ Այն մանր բուրժուաները, վորոնք ռուսական հեղափոխության գրականությունն ստեղծեցին 60-ական—70-ական թվականներին, ակամայից նախատեսնում եյին ապագա պրոլետարական հեղափոխության վորոշ գծերը, ինչ չափով նրանք գտնվում եյին այն տարերային ոբյեկտիվ պրոցեսի անհաղթելի ճնշման տակ, վորով նրանք համակված եյին։ Միանգամայն պարզ ե, վոր սա պետք ե նաև ուժեղ խթան հանդիսանար կոմունիզմին ձգտելու համար։

Պետրաշևցիների շարքերում կար միայն Սպեշնևը, նա յել մեզ վոչինչ չի թողել, բացի կռվի մասին այն յերդումից, վորի մասին յես ձեզ արդեն ասացի։ 60-ական թվականների հեղափոխականների շարքերում կար Տկաչյովը, վորը, անշուշտ, առաջին ռուս մարքսիստն եր։ Այս առաջին ռուս մարքսիստը հետագայում, այսպես կոչված, յակոբինցիների լիդերը դարձավ, այսինքն՝ այն հոսանքի, վորը պահանջում եր խիստ կոնսպիրատիվ կազմակերպություն ստեղծել և, վորպես հետևանք, իշխանությունը վերցնել՝ ճիշտ ե, հին մանր-բուրժուական բլանկիստական ձևերով իրագործված։ Սա նույնպես չափազանց բնորոշ ե, սակայն բնորոշ ե և այն, վոր Մարքսի անունն սկսում ե հնչել 60-ական թվականներին, և վոր Տկաչյովի մոտ մենք հանդիպում ենք ամբողջ շարք հատվածներ, վորոնց վրա յես կանգ չեմ առնի և վորոնք չափազանց հետաքրքիր են այս տեսակետից։ Սակայն, թույլ տվեք մի հատված կարդալ ձեզ։ Դա բուրժուական քաղաքատնտեսության բնութագրությունն ե։ Ահա թե ինչ ե ասում Տկաչյովը բուրժուական քաղաքատնտեսության մասին.

«Նրանց տեսություններում և ուսմունքներում, ինչպես հայելում, այն դասակարգի վոգու տրամադրության ամենաչնչին փոփոխություններն եյին արտացոլվում, վորը կերակրում եր նրանց, գնում եր նրանց յերկասիրությունները, տալիս եր նրանց կենսաթոշակներ և դափնյա պսակներ, այսինքն՝ շքանշաններ և տաքուկ տեղեր... Իրենց եյությամբ միանգամայն հավասարազոր հարցերը, նրանք վճռում եյին տրամագծորեն հակադիր ձևով, նայած՝ թե ինչ վորոշում ե պահանջվում խանութպանների և չարչիների համար։ Յերբ, որինակ, խոսք ծագի բանվորների գործադուլների մասին, եկոնոմիստների շրթունքներին փրփուր կերևա. իսկ յերբ, ընդհակառակը, խոսք ծագի ֆաբրիկանտների գործադուլի մասին, նրանց շրթունքները բացվում են ամենաքաղցրիկ, արդարացուցիչ ժպիտի համար։ Այն ուժը, վոր նրանց պահպանում ե, կենդանի, շարժուն, վոչ թե որերով, այլ ժամերով աճող ուժն ե։ Մի դար անգամ չանցավ, յերբ նա ապլոմբով իր դեբյուտն եր տալիս մարդկային հառաջադիմության բեմի վրա, իսկ հիմա արդեն նա ամբողջ կրթված աշխարհի լիակատար տերն ե։ Հիմա նա ամեն ինչ իրեն ե յենթարկել, ամեն ինչ կլանել ե, ամեն ինչին հրամայում ե, ամեն տեղ կարգադրություններ ե անում։ Այդ ուժը բուրժուազիան ե, իսկ նրա զենքը՝ կապիտալը։ Բնական ե, վոր նրա խնամակալության տակ ապրող գիտությունն ել, պետք ե իր ծծմոր բախտակիցը լիներ. յերբ դայակն ամբողջովին դեռ չի ազատվել միջնադարյան հասկացողություններից, ֆեոդալական լծից, յերբ նա զգում ե դեռ իր վրա անցյալի բեռը, այն ժամանակ նաև եկոնոմիստների գիտությունն ամեն քայլափոխում յերկչոտության, անվճռականության և մի ինչ վոր զուսպ զգուշության որինակներ ե ներկայացնում։ Սակայն Ադամ Սմիթի, Ռիկարդոյի և Սեյի ժամանակներից բուրժուազիայի դրությունը փոխվել ե, նա առաջին դիրքերը բռնեց, նա խորն արմատներ ձգեց ժողովրդական կյանքի որգանիզմի մեջ, դրա հետ միասին և տնտեսագետների գիտությունը՝ գնալով ավելի բուրժուական եր դառնում, ավելի մեծ անամոթությամբ սկսեց քարոզել իր մեշչանական դոկտրինաները»։

Սա յես բերում եմ պարզապես վորպես փոքրիկ իլյուստրացիա պատմության այն, անշուշտ, մարքսիստական հասկացողության, վորպիսին ռուսական գրականության մեջ առաջին անգամ հանձինս Տկաչյովի յե ներկայացվել։ Յեվ ահա այս մթնոլորտում, արդեն 60-ական թվականների վերջերին ռուսական հեղափոխական խմբակներում մի պլան ե մշակվում, վորը հետագայում այնքան ծաղրում եյին մենշևիկները և վորը, գրեթե բառացիորեն, իրացվեց 1917 թվի հոկտեմբերի 25-ին հին տոմ.,—Նշանակված հեղափոխության պլանը։ Նշանակված հեղափոխության այս պլանը, ճիշտ ե, շատ միամիտ ձևերով, մեզանում առաջին անգամ հանդես ե գալիս 68 թվի նեչայևյան խմբակներում։ Ներկայումս վոչ մի գրագետ մարդու համար Նեչայևը կիսախելագար բանդիտ չե, վորն ինչ վոր միանգամայն խենթ գաղտնի խմբակներ ե կազմակերպում՝ այդ խմբակների միջոցով ինչ վոր կիսաավազակային հեղափոխություն անցկացնելու համար։ Նեչայևը՝ դա կարելի յե ապացուցված համարել՝ Բակունինի գործակալն եր Ռուսաստանում, և նեչայևյան փորձը բակունինյան հեղափոխության առաջին փորձն եր Ռուսաստանում։ Բակունինյան այս առաջին հեղափոխության բացասական գծերը դուք հիմա կտեսնեք, յես ձեզ ցույց կտամ այն։ Իսկ ինչ վերաբերում ե այս, դարձյալ մարգարեյական, բայց շատ նաիվ գծին, նրանով արժե զբաղվել։

Ահա թե ինչպիսի պլաններ եյին կազմում այն ժամանակվա բակունինիստներն իրենց հեղափոխության համար.

«Մինչև 1869 թվի մայիսը լավագույն մարդկանց գործունեությունը պետք ե կենտրոնացած լինի Պիտերում և Մոսկվայում, այլև մասամբ համալսարանական ուրիշ քաղաքներում։ Այդ ժամանակ պետք ե պատրաստված և կատարված լինի զանազան ուսումնական հիմնարկների ուսանողների բողոքի ցույցերը հանուն հավաքույթների ազատության, և պետք ե սկիզբը դրվի խուժանի մեջ այդ խուժան մարդկանց միջոցով պրոպագանդային, այսինքն՝ խուժանից իսկ կազմակերպություն ստեղծվի։ Գործունեությունը պետք ե տեղափոխվի նահանգային և գավառակային կենտրոնները և կենտրոնացվի գլխավորապես ռազնոչինցիների (այլ աստիճանավորներ), սեմինարիստների և գավառային խուժանի մեջ։ Հոկտեմբերից սկսած գավառակային և մայրաքաղաքային գործիչների ընդհանուր ուժերով պրոպագանդան ժողովրդական մասսաներն ե տեղափոխվում. այդ պատճառով գործիչների գոնե $^{3}/_{4}$ մասը մայրաքաղաքից գավառ ե տեղափոխվում՝ արևմտյան սահմանի ուղղությամբ՝ մինչև Դինաբուրգ—մի ճանապարհ, վոր եմիգրացիայի համար կարևոր ե. այդ պատճառով պրովինցիայի նախապատրաստումն այս ճանապարհով հատուկ նշանակություն ունի»։ Վերջապես 1870 թվի գարնանը մասսայական շարժում, մասսայական հեղափոխություն ե սկսվում։

Սակայն սա ծիծաղելի չե, դուք կասեք։ Իհարկե, ծիծաղելի չե. ծիծաղելի չե, վորպես նշանակված հեղափոխության առաջին յերեխայական ուրվագիծ։ Սակայն պլանաչափ կերպով նախապատրաստվող ապստամբության այս ուրվագիծը հանդես ե գալիս մեզ մոտ 60-ական թվականների վերջին բակունինիստի գրչի տակից։ Յեվ վորովհետև Բակունինի մասին այն հոչակն ե հաստատվել, վոր նա միայն բոնկեցման, ռումբ պայթեցնելու ընդունակ մարդ ե, ապա շատ հետաքրքիր ե այս ուղղումը մտցնել սովորական հասկացողության մեջ։ Հենց Բակունինյան կազմակերպությունից դուրս յեկավ հեղափոխության առաջին նախագիծը,—իսկ վոր այդ նախագիծը զուտ մանըր-բուրժուական ե, այդ, յես կարծում եմ, դուք շատ եք լսել թեկուզ այն քաղվածքներից, վորոնք յես կարդացի։ Այստեղ, իհարկե, նույնիսկ Տկաչյո-

վից կոմունիզմի հոտ չի գալիս։ Հեղափոխությունը ներկայացվում է, վորպես խուժանի հեղափոխություն։ Ընկերներ, յեկեք սրա վրա յել չծիծաղենք. մեզ մոտ, արդյոք, 1918 թվին «չքավորության» հեղափոխության լոզունգը չէ՞ր հնչում՝ չնայած հին մարքսիստների բողոքին, ինչպես ընկ. Ստեպանովի, վորը սրան ֆելյետոն նվիրեց «Պրավդա»-յում։ Այդ ֆելյետոնի վրա այն ժամանակ վոչ վոք ուշադրություն չդարձրեց։ Ստեպանովը գրում եր, վոր չքավորությունն ու պրոլետարիատը միևնույն բանը չէ, վոր մենք պետք է հենվենք պրոլետարիատի և գյուղի կիսապրոլետարական էլեմենտների վրա և վոչ թե չքավորության վրա, վորոնց են պատկանում և «լումպենները», շրջմոլիկները, ցնցոտիավորները, վորոնք սովորաբար ռեակցիայի հենարաններից մեկն են կազմում՝ պագրոմշչիկների բանակը 1905 և հետագա տարիներին։ Չնայած սրան, չքավորության հեղափոխության լոզունգն այնուամենայնիվ մեզ մոտ հնչում եր։ Այդ պատճառով չափազանց շատ և չափազանց ծանր քարեր չնետենք 60-ական թվականների բակունիստների վրա, վորոնք խուժանի հեղափոխության մասին եյին խոսում։ Ավելի տարօրինակ է սպեցիֆիկ ավազակներին դիմելը, վորոնց վրա Բակունինը մեծ հույս եր դրել։ Նա ասում եր, վոր ավազակներն այն էլեմենտն են ժողովրդի մեջ, վորոնց հեղափոխականները պետք է առաջին հերթին դիմեն։ Իհարկե, դա հնացել է 60-ական թվականների եպոխայի համար, յերկաթուղիների եպոխայի համար, վորովհետև ավազակները, վորպես պրոֆեսիա, մեզ մոտ գոյություն ունեյին, գլխավորապես, մինչև յերկաթուղիները, յերբ տրանսպորտը սայլային եր։ Գնացքները թալանելը շատ դժվար եր։ Այնպես վոր ավազակներին դիմելը նույնիսկ տեխնիկապես հնացել եր։

Անկասկած, սա ըստ էության մանր-բուրժուական շարժում է, բայց այս շարժումն օբյեկտիվորեն վորոշ պլանի յեր հանգում, վորը հետագայում այսպես կամ այնպես իրացվում եր։ Դուք գիտեք, իհարկե, վոր հոկտեմբերի 25-ին լինելիք յելույթի մասին Կերենսկին գիտեր 3 շաբաթ առաջ։ Նա ինքը պատմել է այդ մասին իր հիշողություններում, այնպես վոր այստեղ մենք նշանակված ապստամբություն ունեյինք՝ բառիս ամենաճշգրիտ իմաստով։ Դուք տեսնում եք, վոր ապագա հեղափոխական կազմակերպության վորոշ գծերը, վորը ձուլվեց և բայլշևիկյան կուսակցության մեջ, գոյություն ունեյին դեռևս 60-ական թվականներին։ Կոնսպիրատիվ կազմակերպության պահանջը, վորոշ համաչափություն և զինված ուժը, ապստամբությունը վորպես գործողության մեթոդ,—այս բոլորն այն ժամանակ արդեն կար և դուք տեսնում եք, թե վոր աստիճանի մեր ուղեղները խախտված եյին իրենց տեղերից, յերբ մենք այն ժամանակվա շարժումը պատկերացնում եյինք, վորպես խաղաղ պրոպագանդիստական ընթացում դեպի ժողովուրդը։ Բոգուչարսկու գրքում դուք այսպիսի նկարագրություն կգտնենք։ Յեվ այդ դեպի ժողովուրդը գնալը բնորոշ կերպով կապվում եր Լավրովի «Պատմական նամակներ» գրքի հանդես գալու հետ, յես ինքս առիթ եմ ունեցել խոսել այդ կապի մասին։ Մինչդեռ Կոզմինն իր «Տկաչյով» գրքում համոզեցուցիչ կերպով ապացուցեց, վոր «դեպի ժողովուրդը» լոզունգը նորից բակունիստներն են թողել Լավրովի գրքի լույս տեսնելուց յերկու տարի առաջ։ Այստեղ էլ գործը վոչ թե գրքով է սկսվում, այլ պրակտիկ-հեղափոխականներից, այն մարդկանցից, վորոնք պատրաստում եյին այդ մի քիչ ծիծաղելի, բայց մարգարեյաբար-համաչափ ապստամբությունը։

Սակայն պետք է ասել, վոր դեպի ժողովուրդը գնալը 60—70-ական թվականների հեղափոխության ամենաքիչ չափով լուրջ կողմն եր։ Վ. Ն. Ֆիգներն իր «Տպավորված աշխատանք» գրքում՝ եպոխայի ամենանշանավոր դոկումենտներից մեկում՝ հետևյալն է պատմում.

«Յես, վոր 77—79 թ.թ. գավառում եյի ապրում և շատ լավ գիտեյի իրերի դրությունը Սամարայի, Սարատովի, Տամբովի և Վորոնեժի նահանգներում, կարող եմ հավաստիացնել, վոր դեպի ժողովուրդը գնալու ձգտումը 70-ական թվականների սկզբում շատ կարճատև եր և գործնականորեն առանձին անձանց համար տևում եր շաբաթներով, շատ-շատ մեկ կամ յերկու ամիս, իսկ 75 թվի վերջերին կանգ առավ և բավականացավ միայն փորձերի կրկնությունով այն մարդկանց կողմից, ովքեր հաջողությամբ խուսափեցին կատարված ավերածություններից,—յես, վոր Պետրովսկի գավառում 10 ամիս եմ ապրել (և իմ ընկերները, վորոնք մի քիչ ավելի յերկար են ապրել Վոլսկու գավառում), պնդում եմ, վոր ամբողջ ժամանակի ընթացքում վոչ մի մարդ չմիացավ մեզ, թեպետ արդեն ստեղծված կապերի պայմաններում շատ հեշտ եր տեղերում սարքվել»։

Ահա ձեզ 70-ական թվականների ամենախոշոր հեղափոխականներից մեկի հեղինակավոր վկայությունը։ Սրան հետաքրքիր գծեր են ավելացնում Դեյչի վերջին հիշողությունները՝ «Կես դարի ընթացքում»։ Այնտեղ Դեյչը կուրյոզ պատմություն է անում իր դեպի ժողովուրդը գնալու մասին, և վորովհետև նա ինքն էլ չի հասկանում այն կուրյոզությունը, ինչ պատմում է, դրանով նա ավելի ևս խորացնում է այդ կուրյոզությունը։ Նա պատմում է, վոր նրանք պատրաստվում եյին դեպի ժողովուրդը գնալու, կարծես թե սիրողների ներկայացման լինեյին պատրաստվելիս՝ ամեն կերպ նմանվելով մուժիկի արտաքինին իրենց զգեստով, խոսելու ձևով և այլն, և հիանում եյին, յերբ մի վորևե տեղ, գնացքում նրանց իսկական մուժիկների տեղ եյին ընդունում։ Բայց այսպես հիանալով, նրանք մի փոքր բանի մոռանում եյին—մոռանում եյին գյուղական աշխատանքները սովորել։ Յեվ ահա հիանալի կերպով գրիմ արած այս մուժիկը գյուղ եր գալիս, գերանդի եյին տալիս ձեռքը։ Նա սկսում եր այնպես հնձել, վոր սկզբում նրան իսկական մուժիկի տեղ ընդունած գյուղացին ասում եր. «Եհե, տղա, այսպիսով դու կնիկարմատի, կամ իմ վոտն յել կթռցնես։ Տես թե քո առաջ այդ փոքրիկ աղջիկն ինչպես է հնձում, դու էլ նույնն արա»։—Իսկ մյուս մուժիկները, պարզ է, վոր հարցնում եյին, «Իսկ դու ո՞վ ես, արտաքինով մուժիկ ես, իսկ հնձել չգիտես»։ Պարզ է, վոր չի կարելի այնպիսի մուժիկ պատկերացնել, վորը հնձել չգիտի։ Նույնն եր կատարվում և գյուղական բոլոր մնացած աշխատողների հետ։

Ինտելիգենտական այս մոտեցումը չափազանց բնորոշ է. մուժիկի արտաքինն եյին միայն յուրացնում, իսկ վոր մուժիկի էությունը նրա աշխատանքային գործունեյությունն է,—այդ նրանք մոռանում եյին, անկասկած։ Այսպիսով, դեպի ժողովուրդը գնալը 60 – 70-ական թ.թ. ամբողջ շարժման ամենից քիչ լուրջ միջադեպն է, և վորքան էլ միամիտ լինեն այն նախագծերը, վորոնց հատվածները յես ձեզ կարդացի, նրանք այնուամենայնիվ հազար անգամ ավելի լուրջ են։ Զուր չէ, վոր այն ժամանակվա մենշևիկներն այնպես դառնասիրտ փրփրում եյին նեչայեվցիների վրա։ Ապտեկմանը՝ Նատանսոնից լսելով՝ իր հիշողություններում պատմել է (Ապտեկ-

մանն այնպիսի մարդ չէ, որ կարողանա սուտ խոսել, Նատանսոնն ինքն էլ անկեղծ մարդ է, նա կարիք չուներ ստելու), թե ինչպես Նատանսոնը՝ շատ վրդովված լինելով նրանով, որ Նեչաևը համարձակվել էր նրա մոտ ուղարկել իր եմիսարներին և դրանով նրա տեղը հայտաբերել՝ քննության ժամանակ Նեչաևի հախից չեկավ և պատմեց այն ամենն, ինչ գիտեր Նեչաևի և նեչաևականների մասին: Սա այն ժամանակվա ֆրակցիոն աշխատանքի մի հետաքրքիր միջադեպ է, որը հաստատված է այնպիսի մի հեղինակավոր մարդու կողմից, ինչպիսին Ապտեկմանն է:

Այսպիսով, արդեն այն ժամանակ շարժման բոլշևիկյան և մենշևիկյան թևերն իրարից չափազանց հեռացել էին: Եվ հետագայում մենշևիկյան այս թևն ավելի լավ պահպանվելով—որովհետև բոլշևիկյան թևի ներկայացուցիչները կամ արտասահման էին վտարվել և Ռուսաստան վերադառնալ թույլ չէր տրվում, կամ ուղղակի կորստյան մատնվեցին բանտերում և կախաղանների վրա,—այդ մենշևիկյան թևն օգտվեց իր մոնոպոլիայից, որպեսզի այս ամբողջ շարժումը պատկերացնի որպես խաղաղ, համարյա թե տնտեսական պրոպագանդիզմ: Իսկ իրականում դա զուտ-հեղափոխական մի շարժում էր, բայց նա պոտենցիալ վիճակում մնաց և նրան չհաջողվեց գործողության անցնել:

Գործողության հետևյալ անցումը սերտորեն կապված է 80-ական թվականների երկրորդ կեսի բանվորական շարժման հետ, և այդ պատճառով թույլ թվեք ինձ «Նարոդնայա Վոլյան» կապել այդ բանվորական շարժման հետ: Դուք կտեսնեք, որ այնտեղ էլ կգտնվեն շատ հետաքրքիր մարգարեական գծեր:

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այսպես ուրեմն, 60-ական և 70-ական թվականների առաջին կեսի հեղափոխական շարժումը, որը որպես մի ամբողջություն կարելի չէ ընդունել, եթե համառոտ ձևով այն ամփոփենք, կառուցված էր խաբված գյուղացիների ապստամբության սպասելիքների վրա: Որ գյուղացիները խաբվեցին փետրվարի 19-ին, դա հասկանում էր ոչ միայն Չերնիշևսկին, դա, ինչպես հայտնի է ձեզ, հասկանում էր հենց ինքն Ալեքսանդր II և այդ բավականին պարզ ձևով է արտահայտել: Երբ քննվում էր ժամանակավոր գեներալ-նահանգապետներ սահմանելու նախագիծը բարենորոգումներն անցկացնելու համար, ներքին գործոց մինիստրությունը չէր ուզում իշխանությունը տեղերում ցարական ներկայացուցիչներին հատկացնել: Ալեքսանդր II կարդալով ներքին գործոց մինիստրության զեկուցագիրը, որ գյուղում ամեն ինչ հանգիստ է, իր բանաձևում գրեց. «Հիմա այդ այդպես է, բայց երբ գյուղացիները կտեսնեն, որ նրանց սպասելիքները, այսինքն նրանց հասկացողությամբ՝ ազատությունը չիրականացվեց, այն ժամանակ...» և այլն, և այլն: Ինքն Ալեքսանդր II փառավոր կերպով հասկանում էր, որ նա գյուղացիներին չի տալիս այն ազատությունը, որի մասին նրանք երազում են: Եվ, կրկնում եմ, այս ամբողջ հեղափոխական շարժումը, նրա ամբողջ իմաստը կարելի է ամփոփել այն նախադասության մեջ, որն ասել է Կարակոզովը նույն Ալեքսանդր II-ին իր մահափորձից անմիջապես հետո: Երբ Կարակոզովը ձերբակալվեց, ցարը մոտեցավ նրան և հարցրեց. «Ինչու՞ էիր դու ինձ վրա արձակում»: «Նրա համար, որ դու գյուղացիներին ազատություն և հող խոստացար, և խաբեցիր»,— պատասխանեց Կարակոզովը: Ահա խաբված գյուղացիների խռովության այս սպասումն է, որ կազմում է, այսպես ասած, հիմքը՝ կոպիտ և տարրական ձևով ասած՝ բոլոր այն հույսերի հիմքը, որոնք կապվում էին 60-ական և 70-ական թվականների սկզբի հեղափոխական շարժման հետ: Հույսերը չարդարացան: Խաբված գյուղացիները մի քիչ խլրտումներ արին՝ բավական ոչ եռանդուն կերպով. փետրվարի 19-ից հետո առաջին տարիներում 2000 խռովություն է հաշվվում, երբեմն բավական խոշոր, գնդակահարություններով, ինչպես Կազանի նահանգի Բեզդնա գյուղի նշանավոր խռովությունը, որն առիթ ծառայեց Շապովին այն ժամանակվա խոշորագույն ռուս պատմաբանի աքսորման համար, սակայն ընդհանուր առմամբ գյուղացիական մեծ շարժում չդարձավ, հեղափոխություն չեղավ: Ինչու՞ չէր այդպես: Սրա վրա այնուամենայնիվ պետք է կանգ առնել:

Պետք է կանգ առնել թեկուզ այն պատճառով, որ այն հուսահատությունը գյուղացիական շարժումից, որն, անկասկած, սկսվեց 70-ական թվա-

կանների կեսերին հեղափոխական շրջաններում, յերկու նոր կողմնորոշումների առիթ տվեց. կողմնորոշումներ, վորոնց մասին արժե կրկին խոսել, թեկուզ շնորհիվ նրանց մարգարեական նշանակության։ Մի մասը կողմնորոշում եր բուրժուազիային, մյուսը՝ պրոլետարիատին։ Ինչու՞ մարդիկ սկսեցին այսպես կողմնորոշվել, յերբ առաջ բացառապես գյուղացիության վրա եյին հենվում։ Ահա հենց այն պատճառով, վոր գյուղացիությունը չարդարացրեց հույսերը և դուրս յեկավ, վոր նա վոչ միայն բաղկացած չե բնածին սոցիալիստներից, այլև բնածին հեղափոխականներից, դուրս յեկավ, վոր նա շատ քիչ է հեղափոխական։ Այստեղ մենք տեսնում ենք վոչ այնքան գյուղացիական բարենորոգման, վորքան 60-ական թվականների և հետագա տարիների կառավարության ամբողջ տնտեսական քաղաքականության բավական բարդ ազդեցությունը։ Մի կողմից գյուղացիության բարձր խավի՝ ունևոր մուժիկի նկատմամբ բարենորոգումը, անշուշտ վորոշ պլյուս տվեց. այդ պլյուսը վոչ այնքան բարենորոգման մեջ է կայանում, վորքան յերկաթուղագծի կառուցման մեջ։ Այս յերկաթուղային ցանցի հետ, հետաքրքիր կերպով, կալվածատերը չկարողացավ հարմարվել. կալվածատիրական գիտակցությունը չկարողացավ այդ ցանցի կառուցման հետևանքներն ըմբռնել։ Այդ ցանցը վերացրեց կալվածատիրոջ առանձնաշնորհումը, վորը դուցե ավելի կարևոր է, քան ճորտատիրական իրավունքն իր գոյության վերջին տասնամյակի ընթացքում։ Դուք գիտեք, վոր ճորտատիրական իրավունքն այդ ժամանակ վորոշ չափով բեռ եր կալվածատիրոջ համար, բայց նա մի անգնահատելի առանձնաշնորհում ուներ, այն է՝ առաջինը շուկա դուրս գալ։ Գյուղացին կարող եր իր հացը նրանից հետո միայն ծախել, յերբ նա տեղական կամ կենտրոնական շուկա տանի կալվածատիրոջ հացը։ Կալվածատերն առաջինն եր շուկա գալիս և այդ պատճառով լավագույն գինն եր վերցնում, շուկայի սերուցքն եր քաշում, իսկ մուժիկը միշտ պետք է յետ մնար։ Ճորտատիրության վերացումով սայլային պարհակությունն ևս վերացավ։ Գյուղացին այլևս պարտավոր չեր կալվածատիրոջ հացը շուկա տանել և սպասել, մինչև վոր կալվածատերն իր հացը ծախի, և միևնույն ժամանակ, յերկաթուղային ցանցի անցկացումով ամեն մի կայարանում շուկա յե ստեղծվում և թե ով առաջինը շուկա կհասնի՝ կալվածատերը, թե մուժիկը՝—դա կախված է մեկի կամ մյուսի ճարպկությունից և արագ շարժվելու ընդունակությունից։ Յեվ ունևոր մուժիկն ավելի կայտառ եր դուրս գալիս, քան կալվածատերը. նա այդ նոր շուկան՝ յերկաթուղային ցանցին, հացը բերում հասցնում եր ավելի արագ, քան կալվածատերը, և առաջին գները նա յեր վերցնում։ Հետևանքն այն յեղավ, վոր ունևոր գյուղացիությունը, առանձնապես Մերձվոլգյան նահանգներում, անկասկած, բարենորոգումից շահեց։ Յեվ ահա թե ինչու չափազանց միամիտ եյին այն հեղափոխականները, վորոնք գնում եյին հենց Մերձվոլգյան շրջանը և Դոնը։ Դոնն էլ խոշոր, ունևոր կուլակության շրջանն է, վորովհետև կազակությունն էլ այդ շերտին է պատկանում։ Հեղափոխականները գնում եյին Մերձվոլգյան շրջանը և Դոն, Ռազինի և Պուգաչյովի հիշողություններով վոգևորված՝ հույս ունենալով, վոր այնտեղ հեղափոխական տրամադրություն կգտնեն։ Այնտեղ ամենից շատ դժվար եր այդ տրամադրությունը գտնել հենց այն խավի մեջ, վորը քաղաքականապես, անկասկած, այն ժամանակ ամենաառաջադեմ խավն եր։ Այս փաստն առհասարակ պետք է հիշել, վորովհետև մենք նրան կհան-

դիպենք ռուսական գյուղացիական հեղափոխության հետագա ամբողջ ընթացքում, վորը հանդիսանում է, ինչպես ասել եմ յես իմ վերջին գրքույկում, գյուղացիական հեղափոխության շտաբը մինչև 1905 թիվը (իսկ յեթե այն շրջանն էլ հաշվենք, յերբ այդ հեղափոխությունը հակահեղափոխության վերածվեց և հանձինս տամբովյան անտոնովշչինայի արտահայտվեց, և այլն, ապա մինչև մեր որերը գյուղացիական շարժման շտաբ հանդիսանում եր ունևոր գյուղացիությունը)։ Թույլ տվեք կարդամ ձեզ այն բնութագրությունը, վորը վերցրած է 70-ական թվականների գյուղի չափազանց նուրբ և խելացի դիտողի՝ պրոֆ. Ենգելգարդտի նամակներից՝ նամակներ գյուղից, վորոնք մինչև այս լոկ տարօրինակ պատահականության հետևանքով վորպես հիմնական ձեռնարկներից մեկը չի մտել մեր սեմինարներից և վոչ մեկը, պարզապես այն պատճառով, վոր մենք սեմինարները մի քիչ ավելի ուշ ենք սկսում՝ առանց XIX դարի կեսերը վերցնելու։ Ռուսաստանի միջին շերտի 70-ական թվականների գյուղը (Ենգելգարդտը Սմոլենսկի նահանգի կալվածատեր եր) սքանչելի կերպով կարելի յե ուսումնասիրել նրա նամակներով։ Ահա թե ինչ է գրում Ենգելգարդտը. «Յես իմ նամակներում հաճախ մատնանշում եյի, վոր թեպետ գյուղացին դեռ ևս հասկացողություն չունի հողի սեփականության ժառանգական իրավունքի մասին,—հողը վոչ վոքինն է, հողը թագավորինն է,—սակայն շարժականություն սեփականության վերաբերյալ նա հաստատ հասկացողություն ունի։ Հաճախ նշել եմ, վոր գյուղացիների մեջ չափազանց զարգացած են անհատականությունը, յեսապաշտությունը, շահագործման ձգտումը, նախանձը, փոխադարձ անվստահությունը, իրար վոտի տակ փորելը, թույլի ստորացումն ուժեղի առաջ, ուժեղի մեծամտությունը, հարստության յերկրպագելը,—այս բոլորը շատ զարգացած է գյուղացիական միջավայրում։ Նրա մեջ թագավորում են կուլակային իդեալները, յուրաքանչյուրը յերազում է գայլաձուկ դառնալ և ձգտում է խժռել ծովային ծածանին։ Յուրաքանչյուր գյուղացի, յեթե պայմանները բարենպաստ են, սքանչելի ձևով կշահագործի մի ուրիշին, բոլորը մեկ է՝ գյուղացի յե դա, թե կալվածատեր, նրա հյութը կքամի, նրա կարիքը կշահագործի»։

Գույները, անշուշտ, խտացրած են, թեպետ պետք է ասել, վոր Ենգելգարդտի որով գյուղացիության մեջ պրոլետարական ազդեցություն պարզապես դեռ կարող եր չլինել։ Չէ՞ վոր սա 70-ական թվականներին է գրված, յերբ այդ պրոլետարական ազդեցությունը դեռ գյուղ չեր թափանցել, գյուղը հետ եր մնացել։ Հետագայում, իհարկե, չքավոր գյուղացիության մեջ այլ տրամադրություններ յերևան յեկան, բայց այդ վոչ թե 70-ական թվականներին եր, այլ ավելի ուշ։ Այսպես ուրեմն, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, գաղափարապես 70-ական թվականներին գյուղում կուլակն եր թագավորում։ Իսկ ինչպիսի յեր իր իսկ կուլակի տրամադրությունը։ «Հարուստները-կուլակները—ամենածայրահեղ լիբերալներն են գյուղում, տերերի ամենակատաղի թշնամիները, վորոնց նրանք, բացի այն, վոր արհամարհում են, այլև արգահատում են, վորպես, նրանց կարծիքով, ամեն բանի համար անընդունակ և ամեն բանի համար անպետք մարդկանց»,—ասում է Ենգելգարդտը։ «Հարուստներին-կուլակներին թեպետ գյուղում յերբեմն արհամարհում են էլ, բայց վորպես ազատամիտների, միշտ լսում են, և այդ պատճառով նրանց նշանակությունը գյուղում, այս իմաստով, հսկայական է։ Հողի, հողաբաժանման, հավասարեցման մասին յեղած բոլոր խոսակցությունների ժամա-

կանների կեսերին հեղափոխական շրջաններում, յերկու նոր կողմնորոշում-
ների առիթ տվեց. կողմնորոշումներ, վորոնց մասին արժե կրկին խոսել,
թեկուզ շնորհիվ նրանց մարգարեական նշանակության։ Մի մասը կողմնո-
րոշում եր բուրժուազիային, մյուսը՝ պրոլետարիատին։ Ինչու մարդիկ սկսե-
ցին այսպես կողմնորոշվել, յերբ առաջ բացառապես գյուղացիության վրա
եյին հենվում։ Ահա հենց այն պատճառով, վոր գյուղացիությունը չարդա-
րացրեց հույսերը և դուրս յեկավ, վոր նա վոչ միայն բաղկացած չե բնածին
սոցիալիստներից, այլև բնածին հեղափոխականներից, դուրս յեկավ, վոր
նա շատ քիչ ե հեղափոխական։ Այստեղ մենք տեսնում ենք վոչ այնքան
գյուղացիական բարենորոգման, վորքան 60-ական թվականների և հետագա
տարիների կառավարության ամբողջ տնտեսական քաղաքականության բա-
վական բարդ ազդեցությունը։ Մի կողմից գյուղացիության բարձր խավի՝
ունեոր մուժիկի նկատմամբ բարենորոգումը, անշուշտ վորոշ պլյուս տվեց.
այդ պլյուսը վոչ այնքան բարենորոգման մեջ ե կայանում, վորքան յերկա-
թուղագծի կառուցման մեջ։ Այս յերկաթուղային ցանցի հետ, հետաքրքիր
կերպով, կալվածատերը չկարողացավ հարմարվել. կալվածատիրական գի-
տակցությունը չկարողացավ այդ ցանցի կառուցման հետևանքներն ըմբռնել։
Այդ ցանցը վերացրեց կալվածատիրոջ առանձնաշնորհումը, վորը գուցե ա-
վելի կարևոր ե, քան ճորտատիրական իրավունքն իր գոյության վերջին
տասնամյակի ընթացքում։ Դուք գիտեք, վոր ճորտատիրական իրավունքն
այդ ժամանակ վորոշ չափով բեռ եր կալվածատիրոջ համար, բայց նա մի
անգնահատելի առանձնաշնորհում ուներ, այն ե՝ առաջինը շուկա դուրս գալ։
Գյուղացին կարող եր իր հացը նրանից հետո միայն ծախել, յերբ նա տե-
ղական կամ կենտրոնական շուկա տանի կալվածատիրոջ հացը։ Կալվածա-
տերն առաջինն եր շուկա գալիս և այդ պատճառով լավագույն գինն եր
վերցնում, շուկայի սերուցքն եր քաշում, իսկ մուժիկը միշտ պետք ե յետ մնար։
Ճորտատիրության վերացումով սայլային պարհակությունն ես վերացավ։
Գյուղացին այլևս պարտավոր չեր կալվածատիրոջ հացը շուկա տանել և
սպասել, մինչև վոր կալվածատերն իր հացը ծախի, և միևնույն ժամանակ,
յերկաթուղային ցանցի անցկացումով ամեն մի կայարանում շուկա յե ստեղծ-
վում և թե ով առաջինը շուկա կհասնի՝ կալվածատերը, թե մուժիկը՝—դա
կախված ե մեկի կամ մյուսի ճարպկությունից և արագ շարժվելու ընդու-
նակությունից։ Յեվ ունեոր մուժիկն ավելի կայտառ եր դուրս գալիս, քան
կալվածատերը. նա այդ նոր շուկան՝ յերկաթուղային ցանցին, հացը բերում
հասցնում եր ավելի արագ, քան կալվածատերը, և առաջին գները նա յեր
վերցնում։ Հետևանքն այն յեղավ, վոր ունեոր գյուղացիությունը, առանձ-
նապես Մերձվոլգյան նահանգներում, անկասկած, բարենորոգումից շահեց։
Յեվ ահա թե ինչու չափազանց միամիտ եյին այն հեղափոխականները, վո-
րոնք գնում եյին հենց Մերձվոլգյան շրջանը և Դոնը։ Դոնն ել խոշոր, ու-
նեոր կուլակության շրջանն ե, վորովհետև կազակությունն ել այդ շերտին
ե պատկանում։ Հեղափոխականները գնում եյին Մերձվոլգյան շրջանը և
Դոն, Ռազինի և Պուգաչյովի հիշողություններով վոգևորված՝ հույս ունենա-
լով, վոր այնտեղ հեղափոխական տրամադրություն կգտնեն։ Այնտեղ ամե-
նից շատ դժվար եր այդ տրամադրությունը գտնել հենց այն խավի մեջ,
վորը քաղաքականապես, անկասկած, այն ժամանակ ամենաառաջադեմ խավն
եր։ Այս փաստն առհասարակ պետք ե հիշել, վորովհետև մենք նրան կհան-

դիպենք ռուսական գյուղացիական հեղափոխության հետագա ամբողջ ըն-
թացքում, վորը հանդիսանում ե, ինչպես ասել եմ յես իմ վերջին գրքույ-
կում, գյուղացիական հեղափոխության շարքը մինչև 1905 թիվը (իսկ յեթե
այն շրջանն ել հաշվենք, յերբ այդ հեղափոխությունը հակահեղափոխության
վերածվեց և հանձինս ստոլիպինյան անտոնովշչինայի արտահայտվեց, և այլն,
ապա մինչև մեր որերը գյուղացիական շարժման շարք հանդիսանում եր
ունեոր գյուղացիությունը)։ Թույլ տվեք կարդամ ձեզ այն բնութագրու-
թյունը, վորը վերցրած ե 70-ական թվականների գյուղի չափազանց նուրբ
և խելացի դիտողի՝ պրոֆ. Էնգելգարդտի նամակներից՝ նամակներ գյուղից,
վորոնք մինչև այս լոկ տարրական պատահականության հետևանքով վոր-
պես հիմնական ձեռնարկներից մեկը չի մտել մեր սեմինարներից և վոչ մեկը,
պարզապես այն պատճառով, վոր մենք սեմինարները մի քիչ ավելի ուշ ենք
սկսում՝ առանց XIX դարի կեսերը վերցնելու։ Ռուսաստանի միջին շերտի
70-ական թվականների գյուղը (Էնգելգարդտը Սմոլենսկի նահանգի կալվա-
ծատեր եր) սքանչելի կերպով կարելի յե ուսումնասիրել նրա նամակներով։
Ահա թե ինչ ե գրում Էնգելգարդտը. «Յես իմ նամակներում հաճախ մատ-
նանշում եյի, վոր թեպետ գյուղացին դեռ ևս հասկացողություն չունի հողի
սեփականության ժառանգական իրավունքի մասին,—հողը վոչ վոքինն ե,
հողը թագավորինն ե,—սակայն շարժականության սեփականության վերա-
բերյալ նա հաստատ հասկացողություն ունի։ Հաճախ նշել եմ, վոր գյուղա-
ցիների մեջ չափազանց զարգացած են անհատականությունը, յեսապաշտու-
թյունը, շահագործման ձգտումը, նախանձը, փոխադարձ անվստահությունը,
իրար վոտի տակ փորելը, թույլի ստորացումն ուժեղի առաջ, ուժեղի մեծա-
մտությունը, հարստության յերկրպագելը,—այս բոլորը շատ զարգացած ե
գյուղացիական միջավայրում։ Նրա մեջ թագավորում են կուլակային իդեալ-
ները, յուրաքանչյուրը յերազում ե գայլաձուկ դառնալ և ձգտում ե խժռել
ծովային ծածանին։ Յուրաքանչյուր գյուղացի, յեթե պայմանները բարե-
նպաստ են, սքանչելի ձևով կշահագործի մի ուրիշին, բոլորը մեկ ե՝ գյուղա-
ցի յե դա, թե կալվածատեր, նրա հյութը կքամի, նրա կարիքը կշահագործի»։
Գույները, անշուշտ, խտացրած են, թեպետ պետք ե ասել, վոր Էնգել-
գարդտի որով գյուղացիության մեջ պրոլետարական ազդեցություն պարզա-
պես դեռ կարող եր չլինել։ Չե՞ վոր սա 70-ական թվականներին ե գրված, յերբ
այդ պրոլետարական ազդեցությունը դեռ գյուղ չեր թափանցել, գյուղը հետ
եր մնացել։ Հետագայում, իհարկե, չքավոր գյուղացիության մեջ այլ տրա-
մադրություններ յերևան յեկան, բայց այդ վոչ թե 70-ական թվականներին
եր, այլ ավելի ուշ։ Այսպես ուրեմն, յեթե կարելի յե այսպես արտահայտվել,
գաղափարապես 70-ական թվականներին գյուղում կուլակն եր թագավորում։
Իսկ ինչպիսի՞ յեր իր իսկ կուլակի տրամադրությունը։ «Հարուստները-կու-
լակները—ամենածայրահեղ լիբերալներն են գյուղում, տերերի ամենակա-
տաղի թշնամիները, վորոնց նրանք, բացի այն, վոր արհամարհում են, այլև
արգահատում են, վորպես, նրանց կարծիքով, ամեն բանի համար անըն-
դունակ և ամեն բանի համար անպետք մարդկանց»,—ասում ե Էնգելգարդտը։
«Հարուստներին-կուլակներին թեպետ գյուղում յերբեմն արհամարհում են
ել, բայց վորպես ազատամիտների, միշտ լսում են, և այդ պատճառով նրանց
նշանակությունը գյուղում, այս իմաստով, հսկայական ե։ Հողի, հողաբա-
ժանման, հավասարեցման մասին յեղած բոլոր խոսակցությունների ժամա-

նակ, հարուստ-կուլակներն ամենքից շատ են խոսում այն մասին, որ տերերի հողը դատարկ է մնում, իսկ մուժիկները նեղվածքի մեջ են, որ եթե հողը գյուղացու ձեռքում լիներ, նա դատարկ չէր մնա, և հացն էլ այսպես թանգ չէր լինի»։

Այսպիսով կուլակներն արդեն 70-ական թվականներին, անկասկած, ամենադեմոկրատիկ շերտն էին կազմում գյուղում, և կարող էին քաղաքական հեղափոխության հենարան լինել։ Բայց քանի որ այն ժամանակվա մեր հեղափոխականները գյուղին սոցիալիստական ծրագրով էին մոտենում, գյուղական համայնքի իրենց միամիտ հավատով՝ որպես ապագա սոցիալիստական հասարակարգի սաղմ,—նրանք, իհարկե, ոչ մի արձագանք չպետք է գտնեյին գյուղի այս քաղաքականապես գյուրըմբռնող միակ խավի մեջ։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Միանգամայն անհնար էր կուլակին սոցիալիզմ քարոզելը, իսկ քաղաքական հեղափոխություն քարոզելը նրան, գուցե, այնքան էլ անօգուտ չէր։ Համենայն դեպս, հետագայում կուլակը մասնակցեց այս քաղաքական հեղափոխությանը և նրա կողմն էր, բայց միայն մինչև այն մոմենտը, երբ սոցիալիզմը, հանձինս չքավորության կոմիտեների, ներս խուժեց գյուղը. այն ժամանակ նա հակահեղափոխական դարձավ և այդ դիրքի վրա այնքան ժամանակ մնաց, մինչև որ սոցիալիզմը գյուղ մտցնելու այդ ձևերից մենք հրաժարվեցինք։ Կրկնում եմ, դա գյուղի հրամատարական շերտն է, և այն, ինչ նորերս ընկ. Կալինինն էր ասում,—դուք երևի ինքներդ էլ հիշում եք այդ,—ցույց է տալիս, որ կարծես թե այդ շերտը որոշ նշանակություն մինչև օրս էլ պահպանել է. դուք հիշում եք նրա պատմածը, թե ինչպես կուլակները գյուղում առաջին նստարանների վրա էին նստած և այլն։ Ինչպես տեսնում եք, սա չափազանց ազդու շերտ է և, իհարկե, նա սոցիալիստ-հեղափոխականների նկատմամբ, 60-ական և 70-ական թվականների նարոդնիկ-պրոպագանդիստների նկատմամբ դեռ այն ժամանակ հակահեղափոխական էր, և, ինքնըստինքյան պարզ է, որ այլ կերպ լինել չէր էլ կարող։ Գյուղի այս շերտի մեջ նարոդնիկյան հեղափոխությունը չէր կարող աջակցություն գտնել։ Բայց չէ՞ որ ամեն ինչ կուլակներից չէր բաղկացած, կար և գյուղական չքավորություն։ Թույլ տվեք որպես զուգահեռ նրան, ինչ յես կարդացի Ենգելգարդտից, մի հատված կարդալ այն ժամանակվա գյուղի մի այլ բնակչից, մի հատված Վ. Ն. Ֆիգների «Տպավորված աշխատանք»-ից։ Ահա թե ինչպես է նա նկարագրում գյուղացիական այն, արդեն, իհարկե, ոչ կուլակային մասսան, որին նա հանդիպել է։ Նա գյուղ եկավ որպես բուժակ։

«Յես նախ և առաջ անցա իմ պաշտոնական պարտականություններին։ Յերեսուն օրից տասնութ օրը յես ստիպված էի տանից դուրս անցկացնել, գյուղերը ման գալով. այդ օրերն ինձ հնարավորություն էին տալիս խորասուզվել քաղցած աղքատության և վշտի ծովը։ Յես սովորաբար իջևանում էի այն խրճիթում, որը կոչվում էր պանդոկ, ուր անմիջապես հավաքվում էին հիվանդները, որոնց բակե բակ իմաց էր տալիս տասնապետը։ 30—40 պացիենտ րոպեյապես լցնում էին խրճիթը. այստեղ լինում էին ծերունիներ և յերիտասարդներ, մեծ քանակությամբ կանայք, ավելի շատ՝ ամեն հասակի յերեխաներ, որոնք օդը լցնում էին ամեն տեսակի աղմուկ-աղաղակով։ Կեղտոտ և փտած,—հիվանդների վրա չէր կարելի անտարբեր նայել. բոլոր հիվանդությունները՝ հնացած. մեծերն ամեն քայլա-

փոխում տառապում են ռևմատիզմով, գլխացավով, որոնք 10—15 տարի յեն տևում, գրեթե բոլորն էլ կաշվի հիվանդություններ ունեյին. հազվագյուտ գյուղում բաղնիք կար. մեծ մասամբ նրանք փոխարինվում էին ռուսական վառարանում լվացվելով. անբուժելի ստամոքսի և աղիքների խանգարումն, կրծքի մեջ խրխռոց, որ մի քանի քայլի վրա լսվում էր, ոչ մի հասակ չխնայող սիֆիլիս, անվերջ խոցեր ու վերքեր, և այս բոլորը բնակարանների և զգեստի մի այնպիսի աններելի կեղտոտության, այնպիսի անառողջ և աղքատիկ սննդի պայմաններում, որ շշմած մնում ես մտածելով՝ մարդկային կյանք է սա, թե կենդանու։ Հաճախ արցունքներս թափվում էին այն միքստուրաների և կաթիլների մեջ, որ յես պատրաստում էի այդ դժբախտների համար։ Նրանց կյանքը, թվում էր ինձ, որ շատ քիչ բանով է տարբերվում Հնդկաստանի 40 միլիոն պարիաներից, որոնց այդպես վարպետորեն նկարագրել է Ժակոլյոն»։ «Յեվ,—ամփոփում է Վ. Ֆիգները,—այդ յերեք ամիսն ինձ համար ծանր փորձություն էր այն սոսկալի տպավորություններով, որ յես ստացա ժողովրդական կենցաղի նյութական կողմին ծանոթանալուց, իսկ ժողովրդի հոգին ինձ չհաջողվեց թափանցել, պրոպագանդայի համար յես բերանս չբացի»։

Յեվ իրոք, գյուղական պաուպերների այս մասսայի մեջ ծիծաղելի կլիներ որևէ պրոպագանդ տանել, որովհետև ակներև է, որ այս մարդիկ ստիպված էին դեռ պայքարել ամենատարրական ֆիզիկական գոյության պայմանների համար։ Պաուպերը միանգամայն անտարբեր էր դեպի սոցիալիստական պրոպագանդան, որովհետև նա ամեն մի քաղաքականությունից ցածր էր, կուլակը՝ որովհետև նա սոցիալիստական քաղաքականությունից դուրս էր, նա դեմոկրատ էր, մաքուր ձևի բուրժուական դեմոկրատիայի սաղմնավորումն էր։ Այդ պատճառով ոչ մեկ, ոչ էլ մյուս գյուղական շերտի մեջ սոցիալիստական հեղափոխությունը չէր կարող և ոչ մի աջակցություն գտնել։

Յես մի քիչ մանրամասն կանգ առա այս հարցի վրա, որովհետև իմ «չորս հատոր»-ում յես շատ ընդհանուր ձևով եմ բացատրում այս փաստը՝ ասելով, որ գյուղացիների դրությունը, ընդհանուր առմամբ, լավացավ բարենորոգումից հետո։ Դա, ինչպես տեսնում եք, ճիշտ է միայն կուլակային շերտի նկատմամբ. նա իրոք որ շահեց, և ոչ այնքան բարենորոգումից, որքան յերկաթուղային ցանցի անցկացումից,—նա սկսեց ավելի հաջող կերպով մրցել կալվածատիրոջ հետ։ Ինչ վերաբերում է մասսային, այստեղ պատճառն ուրիշ էր, այն, որը յես մատնանշում էի իմ սվերդլովյան դասախոսություններում, բայց նրանք չեն տպագրված, այդ պատճառով յես այստեղ կրկնում եմ։ Պատճառն այն է, որ մասսան պաուպերացված էր, որ այդ մասսան ոչ թե պրոլետարներից, այլ պաուպերներից էր բաղկացած, իսկ հակառակ Բակունինի միամիտ սխալի՝ պաուպերի և պրոլետարի միջև մի ամբողջ անդունդ կա։ Նրանց մեջ յեղած ընդհանուրն այն բնախոսական փաստն էր, որ թե մեկի և թե մյուսի ստամոքսը հաճախ դատարկ է լինում, սակայն բնախոսական այս բաղխի հիման վրա միայն ինչ-որ սոցիալիստական յեզրակացություններ անել, այն հիման վրա, որ մեկն էլ, մյուսն էլ հաճախ սոված են լինում, յեզրակացություն անել, որ նրանք նույն հոգեբանությունն ու իդեոլոգիան ունեն՝ չի կարելի։ Պրոլետարի հոգեբանությունը միշտ էլ առաջխաղացման

հոգեբանություն և չեղել, հեղափոխական մարտիկի հոգեբանություն, նույնիսկ, ինչպես տեսնում եք, զարգացման այս շատ վաղ շրջանում, իսկ պաուպերի հոգեբանությունը մի այնպիսի էակի հոգեբանություն էր, որն, ընդհանրապես իր ստամոքսը լցնելու պահանջից դուրս ոչինչ չէր տեսնում։ Այսպիսով, գյուղացիական հեղափոխությունը տապալվեց ոչ թե մի ինչ որ պատահականության հետևանքով, այլ այն պատճառով, որ գյուղում կամ կային հեղափոխական էլեմենտներ, սակայն ոչ այնպիսիք, ինչպիսիք հարկավոր էին այն ժամանակվա հեղափոխականներին, և կամ հեղափոխական էլեմենտներ բոլորովին չկային։ Գյուղի որ շերտին էլ որ չդիմեին հեղափոխականները, նրանք ամեն տեղ էլ խուլ արձագանքի կհանդիպեին։

Յեվ ահա, հենց այն ժամանակ, երբ գյուղում ամեն ինչ մեռած դրության մեջ էր, քաղաքում, ընդհակառակը, շարժում էր տեղի ունենում։ Այդ շարժման մասին ես արդեն հիշատակեցի անցողակի ձևով, այդ շարժման մասին շատ է խոսվում նույնիսկ իմ «համառոտ ուրվագծեր»-ում, այնուամենայնիվ չեմ կարող չհիշեցնել ձեզ այս շարժման հիմնական մոմենտները։ Զգուշանալով, որ ձեր աչքում կարող եմ ընկնել, այնուամենայնիվ կկարդամ ձեզ քաղվածքներ մի դոկումենտից՝ «համառոտ ուրվագծեր»-ում բերված, որովհետև այդ «համառոտ ուրվագծեր»-ը դուք, իհարկե, անգիր չգիտեք, իսկ դոկումենտը չափազանց հետաքրքիր է։ Դա ներքին գործոց մինստրի շրջաբերականն է, որ հրատարակվել է 1870 թվին Պիտերում Նևսկի բամբակագործարանում տեղի ունեցած գործադուլի առթիվ։ Այստեղ ասված է. «Նևսկու բամբակագործարանի բանվորների գործադուլը, որպես բոլորովին նոր, մեր բանվորական բնակչության մեջ հանդես չեկող մի երևույթ, պայծառափայլ ուշադրության արժանացավ, և կայսրը բարեհաճեց հրամայել պ. պ. նահանգապետներին, որպեսզի նրանք խիստ հսկողություն ունենան և անդադար հետևեն ֆաբրիկա-գործարանային բնակչությանը»։ Ահա այս փաստը, որ Նևսկու բամբակագործարանի գործադուլը, որը չնկատեց այն ժամանակվա մեր նարոդնիկյան հեղափոխական գրականությունը, բայց նկատեց Ալեքսանդր II, որը երբեք էլ հանճարեղ մարդ չի եղել, բայց, ինչպես դուք այդ տեսաք ճորտերի ազատագրման առթիվ բերածս ցիտատից, տարրականորեն հիմար մարդ չէր և այս կամ այն չափով հիմնական երևույթները կարողանում էր հասկանալ,— այս փաստը չափազանց նշանակալից է, և, ի դեպ ասած, ներքին գործոց մինիստրը, իհարկե, ստում է՝ հայտարարելով, որ այս երևույթը միանգամայն նոր է։ Մի այլ շրջաբերական, Մոսկվայի նահանգապետի, մի տարի առաջ՝ 1869 թվին հիշատակում էր Սերպուխովում՝ Կոնշինի ֆաբրիկայում պատահած գործադուլները, հետո մենք գիտենք, որ խոշոր գործադուլներ են եղել Մորոզովի ֆաբրիկաներում 1865 թվին։ Հենց այդ պատճառով էլ ցարն ուշադրություն դարձրեց, որ նա սկսեց ավելի հաճախ տեղի ունենալ և այս երևույթն անհանգստացնում էր ցարական հին Ռուսաստանի վերին խավերին։

Յեթե մենք այս տեսակետից մոտենանք մեր հեղափոխական շարժմանը, կտեսնենք, որ միակ լուրջ և ամուր հեղափոխական կազմակերպությունները, որոնց մենք հանդիպում ենք 70-ական թվականներին, հենց բանվորական բնակչության շուրջն են համախմբված։ Նշանավոր չայկովցիները, որոնց անունները բոլորին հայտնի են, որպես 70-ական թվականների

պրոպագանդիստական շարժման նախահայրեր, իրենց գործունեությունը ծավալել էին Պիտերի ջուլհակների մեջ, որոնց Կրապոտկինը դասախոսություններ էր կարդում, և Պիտերի մետաղագործների մեջ, այսինքն՝ բանվորների շուրջն էին պտտվում, գյուղում չէին նստած, ուր նրանք չէին կարող բերան անգամ բանալ պրոպագանդայի համար, իսկ բանվորներին Պիտերում կարողացան պրոպագանդայի ենթարկել և այն էլ բավական լավ։ Բարդինայի Մոսկվայի խմբակը՝ 70-ական թվականների ամենացայտուն և էֆեկտավոր երևույթներից մեկը՝ համախմբվում էր Մոսկվայի տեկստիլ ֆաբրիկաների շուրջը։ Բարդինան և նրա ընկերուհիները որպես բանվորուհիներ մտան Մոսկվայի մանուֆակտուրաները, նրանք նորից գործում էին բանվորների, պրոլետարիատի միջև։ Այն ժամանակ, երբ գյուղում մեռած անդորրություն էր տիրում, այստեղ, ընդհակառակը լսվում էին մոտեցող փոթորկի որոտները, և 70-ական թվականների երկրորդ կեսին, 1878 թվին, Պիտերում այդ փոթորիկն այնպես ուժգին հնչեց, որ նրա վրա ուշադրություն դարձրին նույնիսկ ինտելիգենցիայի շրջաններից, որը, ընդհանրապես, շատ բութ է այս տեսակի երևույթների նկատմամբ։ Ինչպես Պլեխանովից գիտեք, այս գործադուլով նույնիսկ Սուվորինը հետաքրքրվեց, «Новое Время»-ի ապագա խմբագիրը, որ բանվորական շարժմանը 3 ռուբլի նվիրեց։

70-ական թվականների վերջերին բանվորական շարժումը Պիտերում մեծ չափեր ընդունեց։ Ճիշտ է, այդ շարժման հեղափոխականությունը ոչ մի դեպքում չի կարելի գերագնահատել։ Պիտերի այդ ջուլհակները, որոնք գործադուլներ էին կազմակերպում, քաղաքականապես այն աստիճանի պրիմիտիվ էին, որ, ինչպես հայտնի է, շարժման ամենացայտուն քաղաքական մոմենտը ջուլհակների երթն էր դեպի Թագաժառանգը, ապագա Ալեքսանդր III-ի մոտ։ Պլեխանովը երրորդ դեմքով պատմում է այս երթի մասին իր «Ռուսական բանվորական հեղափոխական շարժումը» գրքում։ Լև Տիխոմիրովն իր ինքնակենսագրության մեջ հաղորդում է, որ Պլեխանովն այս շարժման կազմակերպիչներից մեկն էր, որ Պլեխանովը ներկա դեպքում գիտակցորեն օգտվեց բանվորների միապետական տենդենցներից, որպեսզի նրան երես երեսի բերի միապետության հետ և ցույց տա՝—դե, ինչ, գնացի՞ք Թագաժառանգի մոտ, դրանից ինչ դուրս եկավ—ոչինչ դուրս չեկավ։ Չգիտեմ թե ով է իրավացի, բայց ներկա դեպքում Տիխոմիրովին ստի մեջ առանձնապես չի կարելի մեղադրել։ Տիխոմիրովը—կարիք չկա ասել, թե ով է սա, սա նշանավոր դավաճան է—«Նարոդնայա Վոլյա»-յի լիդերներից մեկը, որը ցարիզմի կողմն անցավ և դրա համար խնայվեց, ռեակցիոն «Московские Ведомости» թերթի խմբագիրը դարձավ Կատկովի փոխարեն և բարեհաջող կերպով վախճանվեց Խորհրդային Ռուսաստանում սրանից միքանի ամիս առաջ,—իր ինքնակենսագրությամբ, իմ կարծիքով, հանդիսանում է քիչ թե շատ վստահելի աղբյուր։ Նա շատ օբյեկտիվ տոնով է գրված. ասենք նա մամուլի համար չէր գրվում այլ իրեն համար, դա նրա ինտիմ հիշողություններն են։ Այնտեղ մենք կգտնենք Ալեքսանդր Միխայլովի, գլխավորագույն զեմլեվոլցիներից և նարոդովոլցիներից մեկի, ուղղակի սքանչացած բնութագրությունը, որի մասին Տիխոմիրովն ասում է, որ նա, իհարկե, այլ պարագաներում սքանչելի մինիստր կլիներ։ Պերովսկայայի շատ օբյեկտիվ բնութագրությունը, թեպետ և ոչ հիացած կերպով,

սակայն շատ օբյեկտիվ կերպով, առանց ամեն տեսակի կեղտոտության և բամբասանքների, այնպես որ, չեմ կարծում եմ, որ Տիխոմիրովի վրա կարելի չէ հենվել։ Ցես այն պատճառով եմ ասում այդ, որ ցես այլ առթիվ եղ ստիպված պիտի լինեմ նրա վրա հենվելու և ցես կապացուցեմ, թե ինչու դա հնարավոր է։

Այսպես ուրեմն, կրկնում եմ, Պիտերի բանվորների քաղաքական գիտակցության մակարդակը, որոնք գործադուլ հայտարարեցին 70-ական թվականներին, այնքան էլ բարձր չէր։ Ցեթե մենք հիշենք, որ նույնիսկ Պիտերի մետաղագործները 1905 թվի հունվարի 9-ին թագավորի մոտ գնացին, ապա մենք չենք հանդիմանի 1878 թվի ջուլհակներին, որոնք թագաժառանգի մոտ եկին գնում։ Բայց և այնպես, նույնիսկ այս շարժումը որպես բազա ծառայեց ռուս բանվորների քաղաքական առաջին կազմակերպության՝ ռուս բանվորների Հյուսիսային միության համար, որի պարագլուխը Խալտուրինն էր։

Հյուսիսային-ռուսական բանվորական միության մեջ, որը ծագել է 78 թվի Պիտերի բանվորների գործադուլի հիման վրա, իր մեջ մոտ 200 հոգի մարդ էր համախմբել և բավական շուտ էլ տապալվեց (այս 200-ի մեջ կար և պրովոկատոր, որը և մատնեց),—այս միության մեջ շատ ավելի հետաքրքիր՝ և միության հիմնադիրը, քան թե ինքը միությունը։ Ստեփան Խալտուրինի վրա, որ անկասկած ամենախոշոր դեմքն է XIX դարի ռուս բանվորների միջև, ցես բավական մանրամասն կանգ եմ առնում իմ «համառոտ ուրվագծեր»-ում, բայց այն, ինչ այնտեղ գրված է, արդեն հնացել է։ Պարզվում է, որ Ստեփան Խալտուրինը շատ ավելի բարդ և հետաքրքիր դեմք է, քան այն ժամանակ թվում էր ինձ։ Այն ժամանակ ցես այն կարծիքին էյի, որ Խալտուրինը դագգյահի իսկական բանվոր էր (ինչպես հայտնի չէ, նա կարող էր Ձմեռային պալատը պայթեցնել հենց այն պատճառով միայն, որ պալատում աշխատում էր որպես ատաղձագործ)—և ուրիշ ոչինչ։ Իսկ իրականում, ինչպես պարզվում է, Խալտուրինը պրոլետարական շարժման և գյուղի դեմոկրատիկ շերտի այն առաջին, շատ հետաքրքիր զուգումն է, որի մասին ցես խոսում էյի իմ առաջին դասախոսության ժամանակ։ Նա Վյատկայի նահանգի ունևոր գյուղացու տղա չէ, այնքան ունևոր, որ նրա տղաներից յուրաքանչյուրին—իսկ նրանք միքանիսն էյին,—հոր մահվանից հետո հազար հինգ հարյուր ռուբլի ընկավ. գյուղացու համար սա բավական մեծ ցեկամուտ էր։ Այսպիսով, նա ցերբեք գյուղական չքավորությունից չեր, նա դուրս ցեկավ այն մարդկանց միջից, որոնք «առաջին ազատամիտներն էյին գյուղում»։ Ըստ ընտանեկան հիշողությունների, Խալտուրինի հայրը շատ աստվածապաշտ մարդ էր, Ցերուսաղեմ էր գնացել և այլն, բայց ստրուկի ոգի ցերբեք չի ունեցել։ Իդեպ, նա ճորտ էլ չի ցեղել։ Սա գործի մի կողմն է։ Մյուս կողմը, մեզ համար ավելի հետաքրքիր է, դա այն է, որ Ստեփանը տիպիկ բանֆակցի չեր։ Նա ավարտել է, կամ գրեթե ավարտել է Վյատկայում տեղական զեմստվոյի հիմնադրած միջնակարգ տեխնիկական դպրոցը, որ մոտավորապես այժմյան բանֆակի դասընթացքն է ունեցել, մեխանիկայով, ֆիզիկայով և այլն. Նա գրեթե ավարտել է այդ դպրոցը, և այդ պատճառով, իր մտավոր զարգացման շնորհիվ, նա շատ ավելի բարձր էր. քան ոչ միայն այն ջուլհակների միջին մակարդակը, որոնց նա կազմակերպեց, այլ նույնիսկ Պիտերի գոր-

ծարանային մետաղագործներից էլ բարձր էր։ Ահա այս զարգացումը՝ շատ մեծ ինտելիգենտության և գյուղի ամենաբարձր քաղաքական շերտին պատկանելու այդ զուգորդումը, կրկնում եմ, նրան շատ բարդ և հետաքրքիր «զոդված» դեմք է դարձնում, որի մեջ մի ամբողջ շարք ստորին, դեմոկրատիկ, որոշ իմաստով պրոլետարական, բայց ոչ բոլորովին սովորական հոսանքներ են մարմնավորում։

Ինչ վերաբերում է միությանը և նրա ծրագրին, նա բավական մանրամասն շարադրված է իմ «համառոտ ուրվագծեր»-ում. ցես նրա վրա կանգ չեմ առնի, այլ ձեր ուշադրությունը նրա մի կողմի վրա կդարձնեմ, դա այն է, որ նա չափազանց քիչ հեղափոխական էր։ Ըստ եյության այն խնդիրը, որը դնում էր իր առաջ Խալտուրինի հիմնած քաղաքական ընկերությունը՝ Ռուս բանվորների Հյուսիսային միությունը, որըն ավելի շուտ կարելի չէ քաղաքական ընկերություն անվանել, դա ոչ մի դեպքում արհեստակցական միություն չեր,—այդ ընկերությունն իրեն նպատակ էր դրել առաջին հերթին պրոպագանդան յեվ կազմակերպությունը։ Ցեվ բնորոշ է, որ քաղաքական ասպարեզում նա հաջող պրոպագանդայի համար անհրաժեշտ ցերաշխիք պահանջելուց այն կողմը չեր անցնում. այս միության ծրագիրը պահանջում էր մամուլի, ժողովների, հավաքույթների և այլն ազատություն, բայց չեր պահանջում ժողովրդական ներկայացուցչության հրավիրում։

Գուցե, կարելի չէ այստեղ որոշ գիջում տեսնել այն ժամանակվա ինտելիգենտական հոսանքին, քանի որ այն ժամանակվա ինտելիգենտներն իրենց հեղափոխական ձգտումով վճռականապես բացասում էյին ամեն տեսակի պարլամենտարիզմ և Ստեփանը չկարողացավ սրանից ազատագրվել։ Ըստ Պլեխանովի, նա ուշադիր ուսումնասիրում էր արևմտա-ցեվրոպական սահմանադրությունները, սակայն բնորոշ է, որ այդ սահմանադրություններից նա վերցրել է միայն այն, ինչ ցերաշխիք էր տալիս պրոպագանդայի հաջողության համար։ Իշխանությունը գրավելու հարցը, որպես անմիջական խնդիր, Ռուս բանվորների Հյուսիսային միությունն այս տեսակետից իր առաջ դեռ բոլորովին չեր էլ դնում. Խալտուրինն անշուշտ համարվում էր այն ջուլհակների միջին մակարդակին, որոնց նա կազմակերպեց, իսկ նա ինքը վորոշակի քաղաքական մարդ էր. դա նա արձանագրել է «Նարոդնայա Վոլյա»-յում իր գործունեությամբ, իսկ հետագայում նաև իր կործանումով, և նա չէ, որ, բնականաբար, հարցերը շատ ավելի լայն էր դնում։ Բայց ցերբ կարիք էր զգացվում գեռևս ցերեկ թագաժառանգի մոտ խոնարհաբար գնացող մարդկանց կազմակերպել, ստիպված էր համարվել նրանց մակարդակին։ Ցեվ Խալտուրինն իր ծրագրում խոսում է նույնիսկ Քրիստոսի և նրա առաքյալների մասին, ցերևի վորոնելով այնպիսի պատկերներ, որոնք ավելի հասկանալի կլինեյին նրա հասարակությանը։

Ցերկար ժամանակ Ռուս բանվորների Հյուսիսային միությունը համարվում էր Ռուսաստանի 70-ական թվականներին ծագած միակ քաղաքական բանվորական կազմակերպությունը։ Ներկայումս մենք գիտենք, որ դա ոչ միայն միակ, բայց և ոչ ցերբեք այդպիսի կազմակերպություններից ամենահետաքրքիրն է, և որ նրանից դեռ 3 տարի առաջ Ռուսաստանի հարավում՝ Օդեսայում, Ռոստովում՝ արդեն ուրիշ կազմակերպություն գոյություն ուներ Հարավ-ռուսական բանվորական միություն, որն անշուշտ

անհամեմատ շատ ավելի հեղափոխական ծրագիր ուներ, քան թե Ռուս բանվորների Հյուսիսային միության ծրագիրը: Այդ Հարավ-ռուսական միության կանոնադրության առաջին կետում ասված է:

«Գիտակցելով, վոր ներկայումս սահմանված կարգը չի համապատասխանում բանվորների նկատմամբ արդարության իսկական պահանջներին, վոր բանվորները կարող են իրենց պահանջների ընդունելուն հասնել միայն բռնի հեղաշրջման միջոցով, վորը կվոչնչացնի ամեն մի առանձնաշնորհում և արտոնություն և աշխատանքն անձնական և հասարակական բարեկեցության հիմք կդարձնի, վոր այդ հեղաշրջումը կարող է կատարվել միայն այն դեպքում, յերբ բոլոր բանվորները կգիտակցեն իրենց անելանելի կացությունը, և լրիվ չափով միանալու դեպքում,—մենք, Հարավ-ռուսաստանյան յերկրամասի բանվորներս, միանալով մի միություն ենք կազմում, Հարավ-ռուսական բանվորների միության անվան տակ, նպատակ դնելով»...

Հետո արդեն գալիս է միության ծրագիրը: Յես ձեր ուշադրությունն եմ հրավիրում այս ներածության վրա: Այստեղ չկան վոչ Քրիստոս, վոչ առաքյալներ և վոչ էլ այլ նման դեմքեր, վորոնք անհրաժեշտ էին Պիտերի պարզամիտ ջուլհակներին վորսալու համար, այլ պարզապես բռնի հեղաշրջումն է դրվում վորպես նպատակ, այսինքն՝ իշխանության գրավումը բանվոր դասակարգի կողմից: Այս տեսակետից 1875 թվին, Խալտուրինի միությունից 3 տարի առաջ ծագած Հարավ-ռուսական միությունը, ինարկե, հեղափոխական զարգացման շատ ավելի բարձր աստիճանի վրա յե կանգնած: Բացի այդ, մանրամասն հետազոտությունից պարզվեց, վոր և՛ ավելի բազմամարդ էր քան Հյուսիսայինը (նա մոտ 700 մարդ էր ընդգրկում), և՛ ավելի յերկարատև էր, վորովհետև շատ ավելի յերկար ամիսներ, յեթե վոչ տարիներ գոյություն ունեցավ (Հյուսիսայինը մի տարուց պակաս դիմացավ):

Ի՞նչն էր սրա պատճառը: Ինարկե՝ վոչ ղեկավարի դեմքը: Հարավ-ռուսական միության ղեկավարը պրոլետար չեր, այլ ինտելիգենտ, ազնվական Զասլավսկին էր: Նա, ճիշտ է, գործողության մեթոդով բավական որիգինալ մարդ էր: Նրա խնդիրներից մեկն էր 70-ական թվականների հեղափոխական-պրոպագանդիստներին մոտ չթողնել բանվորներին: Նա մեծ խնամքով պահպանում էր բանվոր դասակարգն այս մանր-բուրժուական էլեմենտների ազդեցությունից: Այդ պատճառով նրա հարաբերությունները դեպի այդ պրոպագանդիստները շատ վատ էին, ինչով և բացատրվում է նրա գրեթե լիակատար անհայտ լինելը: Թեպետ նա, անշուշտ, աչքի ընկնող հեղափոխական յեռանդ ունեցող մարդ էր, վոր շատ թանգ հատուցեց իր հեղափոխական յելույթների համար (նա այդ միությունը հիմնելու համար աքսորվեց), չնայած վոր, կրկնում եմ, նա ստեղծել էր խոշոր միություն, նրա մասին այնպես էին լռում այն ժամանակ, վոր Պլեխանովը նրա մասին վոչինչ չգիտեր: Պլեխանովը չգիտեր Հարավ-ռուսական բանվորական միության գոյության մասին,— թեպետ Պլեխանովը, ինչպես հիմա կտեսնենք, կարող էր նրա մասին գիտենալ,—բայց, ակներև է, այնքան ուժեղ էր լռությունն այս միության շուրջը, վոր նրա մասին վոչ մի լուր չեր հասել մինչև Լենինգրադ: Բայց յես մտադիր չեմ Հարավ-ռուսական միության առանձնահատկությունները Զասլավսկուն վերագրելու; դրա համար վոչ մի հիմք չկա: Ինարկե, այն, վոր նա մանր-բուրժուազիային մոտ չեր թողնում իր բանվորներին, սա բավական գովելի մի գիծ է, վորը ցույց է տալիս, վոր այդ

մարդը բավական խորն էր թափանցում իրերի էության մեջ, բայց ավելի կարևոր է գործի մյուս կողմը՝ Հարավային միության սոցիալական բազան: Հյուսիսային միության հիմնական գիծն այն էր, վոր դա տեկստիլ բանվորների, ջուլհակների միություն էր, այնպիսի բանվորների, վորոնք յերեկ են գյուղից դուրս յեկել և դեռ կապ են պահպանում նրա հետ: Հարավում դա, գլխավորապես, մետաղագործների միություն էր: Այն ժամանակ Օդեսայում յերկաթուղային խոշոր արհեստանոցներ կային, Նավագնացության և առևտրի ռուսական ընկերության մեծ նավաշինարան կար. Ռոստովում էլ մետաղագործական ձեռնարկություններ կային,—և ահա սրանց վրա յել գլխավորապես հիմնվում էր այդ բանվորական շարժումը: Հարավ-ռուսական միության այս բազան պետք է ընդգծել, վորովհետև, հետագայում՝ քննելով 90-ական և 900-ական թվականների սկզբների բանվորական շարժումը՝ մենք կտեսնենք, վոր բանվորական շարժումը հեղափոխական է դառնում հենց այն րոպեյից, յերբ սկսում են այդ շարժմանը մասնակցել մետաղագործները: Արդի կապիտալիզմի հիմնական ինդուստրիան՝ մետաղագործությունը միևնույն ժամանակ և ամենահեղափոխականացնող ինդուստրիան է, և մետաղագործը միշտ էլ ռուսական բանվորական շարժման առաջին շարքերում էր, միշտ էլ նրա գվարդիան էր: Առաջին անգամ մենք այդ տեսնում ենք հանձինս Օդեսայի և Ռոստովի բանվորների՝ 1875 թվին: Միությունը, վերջիվերջո, այնտեղ էլ, ինարկե, տապալվեց, և Հարավ-ռուսական բանվորական միությունն էլ լիկվիդացիայի յենթարկվեց վոստիկանության կողմից: Հետևանքը Զասլավսկու դատավարությունը և նրան աքսորի դատապարտելն էր: Բայց վոր բանվորական ազատամտության վորոշ վոգի հարավում պահպանվեց, դա ցույց է տալիս այն պատկերը, վոր նկարագրել է Պլեխանովը: Պլեխանովը Ռոստով հասավ բանվորների կողմից Ռոստովի վոստիկանությունն ավերելու հաջորդ օրը: Նա այդ նկարագրում է, վորպես բնազդի հասարակ բռնկում, բանվորական ցասումի տարերային բռնկում, բայց իրականում բանվորների նման յելույթի հողը նախապատրաստված էր, անշուշտ, նրանով, վոր հարավում դրանից դեռ յերեք տարի առաջ պրոլետարական հեղափոխական շարժում գոյություն ուներ:

Մի ուրիշ հետաքրքիր մանրամասնություն: Այս Հարավ-ռուսական բանվորական միության և Հյուսիսային միության միջև կենդանի կապ կար: Խալտուրինի հետ միասին Հյուսիսային միության կազմակերպիչների հիմնադիրների մեջ է նաև Վիկտոր Օբնորսկին, վորը նույնպես տիպիկ բանվոր-կիսաինտելիգենտ է, յեղել է արտասահմանում, տեսել է արևմտա-յեվրոպական բանվորական շարժումը, մի խոսքով այնպիսի լայն աշխարհայացք է ունեցել, վորն, ինարկե, շատ է հեռու 70-ական թվականների ռուս պրոլետարի սովորական աշխարհայացքից: Բայց այդ Վիկտոր Օբնորսկին, ինչպես ապացուցված է արդեն, Զասլավսկու աշակերտն է և առաջ հարավում էր աշխատում, նույն Հարավ-ռուսական բանվորական միության շարքերում: Այսպիսով, կրկնում եմ, Պլեխանովը կարող էր գիտենալ Հարավ-ռուսական միության մասին: Գուցե նա այդ մասին չի խոսել Օբնորսկու հետ, թեպետ Պիտերում բանվորների մեջ աշխատելիս նա անշուշտ հանդիպել է Օբնորսկուն, թե ուրիշ պատճառներ են խանգարել դրան, բայց, այսպես թե այնպես, նրա մոտ մենք վոչ մի հիշատակություն չենք հանդիպում Հարավ-ռուսական բանվորական միության մասին: Այս փաստը պատմական

քննադատության տեսակետից չափազանց արժեքավոր է, վորովհետև նա ցույց է տալիս, վոր յերբեմն չի կարելի հավատալ անգամ ժամանակակից մարդկանց վկայություններին։ Տեսնելով Պլեխանովի այս լռությունը՝ մի վորևէ շատ նուրբ պատմական քննադատ կարող է յեզրակացնել, վոր Հարավ-ռուսական միությունն առասպել է։ Այլապես ինչո՞ւ Պլեխանովը չի խոսում նրա մասին։ Բայց քանի վոր այդ առասպելի մասին մենք փաստաթղթեր և կանոնադրություն ունենք, վորը յես ձեզ կարդացի, ապա չի կարելի կասկածել, վոր Հարավ-ռուսական բանվորական միությունն իրոք գոյություն է ունեցել։ Անկասկած, դա առասպելական մի բան չի յեղել, բայց, այնուամենայնիվ, հյուսիսում, Լենինգրադում նրա մասին կարող եյին չգիտենալ։

Յեվ ահա այս բանվորական շարժման հիման վրա արդեն 70-ական թվականներին մեզ մոտ մարքսիստական իդեոլոգիա չե մշակվում։ Յես գործ եմ ածում «մարքսիստական իդեոլոգիա» այն պատճառով միայն, վորը մենք սովոր ենք այս անհեթեթ բառակապակցությանը։ Իսկ իրականում, դուք գիտեք, վոր իդեոլոգիա ասելով, Մարքսն ու Էնգելսը հասկանում եյին այն շատ կամ քիչ կեղծ և թվացող պատկերը, վորը մշակում է իր համար այս կամ այն հասարակական դասակարգը՝ բացառապես իր դասակարգային շահերի ազդեցության տակ՝ զուտ-սուբյեկտիվ պատկեր։ Այդ պատճառով կարելի յե խոսել բուրժուական իդեոլոգիայի մասին, մանր-բուրժուական իդեոլոգիայի մասին, կարելի յե խոսել ֆեոդալական իդեոլոգիայի մասին, բայց այնքան, վորքան մարքսիզմը բանվոր դասակարգի համքարային շահերի պրիզմայի միջոցով իրականության հասարակ արտացոլում չե, այլ գիտական տեսություն է, օբյեկտիվ գիտական տեսություն, այդ պատճառով, ինարկե, չի կարելի խոսել մարքսիստական իդեոլոգիայի մասին, այս արտահայտությունը ճիշտ չե. պետք է խոսել մարքսիստական աշխարհայացքի մասին, այլապես մենք մեր տեսությունը, վորը մենք գիտական ենք համարում և վորն իրոք օբյեկտիվորեն գիտական տեսություն է, մի մակարդակի վրա յենք դնում XVIII դարի ամեն տեսակի մտածողների ֆանտազիայի հետ, ինչպիսին է Ռուսսոն, ուտոպիստ սոցիալիստները և այլն։ Այնինչ մենք խիստ տարբերություն ենք դնում ուտոպիստական և գիտական սոցիալիզմի միջև։ Յես այս շեղումը կատարեցի, իսկ հետագայում, այնուամենայնիվ, յես գործ կածեմ այս «մարքսիստական» և «պրոլետարական իդեոլոգիա» արտահայտությունները, վորովհետև մենք, դժբախտաբար, սովորել ենք արդեն այս անհաջող բառագործածությանը։

Յեվ այսպես, մարքսիստական աշխարհայացքը մեզ մոտ սկսում է մշակվել հենց այս բանվորական շարժման ազդեցության ներքո։ Սրա մասին ստիպված ենք խոսել, վորովհետև սա նորից խիստ տարբերվում է Ռուսաստանում մարքսիզմի սկզբնավորման մասին յեղած այն հասկացողությունից, վորը դուք սովորաբար պատահում եք գրքերում և վորը հաղորդում են ժամանակակից-ականատեսները։ Ի՞նչպես է Դեյչն իր հիշողություններում պատմում Պլեխանովի մարքսիստ դառնալու մասին։ Պլեխանովը,—ասում է նա,—յերբ Ռուսաստանում եր ապրում, գերմաներեն չգիտեր և այդ պատճառով հնարավորություն չուներ ինչպես հարկն է Մարքսին ուսումնասիրել, նա Մարքսին շփոթում եր Դյուրինգի հետ և այլն։ Շատ սխալ հասարակական հասկացողություն ունենալով, նա ամեն տեսակի նարոդնիկական հասկացողություններով եր վարակված։ Դառնալով էմիգրանտ և այնտեղ գերմաներեն լեզուն ուսումնասիրելով, Պլեխանովը հնարավորություն ունեցավ ուշադիր կարդալու Մարքսի և Էնգելսի բոլոր գրվածքները և, այսպիսով, մարքսիստ դարձավ։ Այսպես է մոտավորապես Դեյչը պատմում ռուսական մարքսիզմի սաղմնավորման մասին, բայց այս բոլորը,—ներողություն եմ խնդրում ռուսական հեղափոխության այս չափազանց պատվարժան վետերանի առաջ,—կատարյալ անհեթեթություն է, վորովհետև Պլեխանովի մարքսիստական առաջին հոդվածը գրված է 1878 թվին Լենինգրադում, յերբ Պլեխանովը գերմաներեն չգիտեր, այլ այն ժամանակ նա անմիջականորեն դիտում եր Պետերբուրգի բանվորական շարժումը, և նա մի ամբողջ շարք համապատասխան յեզրակացություններ եր անում։ Նրա այդ հոդվածը՝ «Հասարակության տնտեսական զարգացման օրենքը և սոցիալիզմի խնդիրները Ռուսաստանում» տպված է «Земля и Воля»-յի չորրորդ համարում, վորը լույս տեսավ 1879 թվի փետրվարին, բայց գրված է յեղել մի քիչ ավելի շուտ՝ 78 թվի վերջին։ Ահա թե ինչ է նա գրում.

«Քաղաքային բանվորի հարցն այն հարցերի շարքին է պատկանում, վորոնք, կարելի յե ասել, ինքը կյանքն է առաջ քաշում իրենց արժանի տեղը գրավելու համար՝ հակառակ հեղափոխական գործիչների ա պրիորի տեսական դատողությունների։ Անցյալում, վոչ առանց վորոշ հիմքի, մենք մեր բոլոր հույսերը դարձնում եյինք, մեր բոլոր ուժը գործադրում եյինք գյուղական մասսայի վրա։ Քաղաքային բանվորը յերկրորդական տեղ եր բռնում հեղափոխականների հաշիվներում, նրան, կարելի յե ասել, ուժերի միայն արտաշատային մասն եր նվիրվում։ Քաղաքում պրոպագանդան ի միջի այլոց եր տարվում, այն րոպեներին, յերբ գյուղն ինչ-ինչ պատճառներից անհասանելի յեր պրոպագանդիստի համար, և այն էլ միայն մի նպատակով եր արվում՝ քաղաքային բանվորից գյուղի համար պրոպագանդիստ պատրաստելու։ Նման վերաբերմունք դեպի գործը, բնականաբար, բացասում եր, ինչպես համառ, սիստեմատիկ պրոպագանդայի, նույնպես և, հատկապես, քաղաքային բանվորների կազմակերպության հնարավորությունը, և ներկայումս իրեն զգալ է տալիս իր շատ տխուր հետևանքներով»։

«Քաղաքային բանվորը՝ չնայած նրա վրա ծախսվող ուժերի համեմատական չնչինությանը, բավական ուժեղ չափով սոցիալիզմի գաղափարներով ներշնչվեց։ Հիմա արդեն դժվար կլին՚ի մի այնպիսի ֆաբրիկա կամ գործարան, կամ նույնիսկ քիչ թե շատ խոշոր արհեստանոց, ուր կարելի չլիներ բանվոր-սոցիալիստներ գտնել։ Սակայն վորքան էլ ուրախալի չլինեն նման յերևույթները, նրանք զրկվում են իրենց նշանակության հսկայական մասից, յերբ մենք սկսում ենք մոտիկից դիտել այս պրոպագանդայի յենթարկված բանվորների դրությունն իրենց ընկերների շրջանում։ Անցյալ տարվա ընթացքում մենք մի շարք խոշոր գործադուլներ տեսանք զանազան գործարաններում և ֆաբրիկաներում։ Վ՞որտեղ եյին այն ժամանակ մեր սոցիալիստները, ի՞նչ դեր եյին խաղում նրանք այդ շարժումներում։ Գրեթե՝ վոչ մի։ Յերբեմն նրանց մասին վոչինչ չեր լսվում. այն դեպքերում, յերբ նրանք փորձում եյին գործել, նրանց ազդեցությունը միանգամայն վողորմելի չեր լինում»։

«Այնինչ,—շարունակում է Պլեխանովը,—քաղաքային բանվորներին

պետք էր վերաբերվել, վորպես մի ամբողջության, վոր ինքնուրույն նշանակություն ունի, պետք էր միջոցներ վորոնել նրանց ամբողջ մասսայի վրա ազդելու համար, իսկ դա աննհար էր մինչև այն ժամանակ, քանի դեռ հանձինս քաղաքային բանվորների՝ առանձին անձինք գրավելու մատերիալ եյին տեսնում։ Դեպի քաղաքային բանվորները լուրջ վերաբերմունք ունենալուն միշտ էլ խանգարում էր նրանց նշանակության մասին յեղած տեսակետը։ Իրո՞ք քաղաքային բանվորն առանց խոշոր դերի չի մնում ապագա սոցիալական հեղաշրջման մեջ։ Մեզ թվում է, վոր այս կարծիքը միանգամայն սխալ է...»։

«Արևմտա-յեվրոպականների նման կտրված չլինելով յերկրագործ դասակարգից, մեր քաղաքային բանվորներն արևմտյաններին հավասար չափով կազմում են ազգաբնակչության ամենաշարժուն, դյուրաբորբոք, ամենքից շուտ հեղափոխականացման ընդունակ շերտը»։

Հետո գալիս է միանգամայն նարոդնիկյան յերանգավորում։ «Սրա շնորհիվ նրանք գյուղացիների թանգագին դաշնակիցներն են սոցիալիստական հեղաշրջման րոպեյին»։

Այստեղ դեռ էս նարոդնիկն է խոսում Պլեխանովի մեջ։ Բայց գործնական այն միջոցները, վոր նա առաջարկում է, մարգարեյաբար լուսաբանում են մեր առաջ բանվորական շարժման անցյալ ամբողջ շարժումը։ Նախ և առաջ՝ կազմակերպության մեթոդները.

«Կազմակերպեցեք մասսաներին պայքարի համար պայքարի միջոցով և պայքարի ժամանակ, այս ձևով միայն դուք նրա մեջ ինքնագործունեյություն, ինքնավստահություն և տոկունություն կստեղծեք, ինչպիսիք նա մինչ այդ չուներ և վորոնց բացակայության պատճառով հաճախ տասնյակ վոստիկանը բավական են լինում, վորպեսզի ցրեն և սարսափ տարածեն բանվորների մի ամբողջ մասսայի վրա»։

«Ձեր գլխավոր նպատակը,—ասում է նա,—ագիտացիան է մասսայի մեջ։ Իսկ ի՞նչի հիման վրա»։

«Մասսան եյապես, խիստ շահագրգռված է, վոր աշխատավարձն ավելանա կամ պակասի, վոր տերերը և վարպետները շատ կամ քիչ ճնշեն, վոր վոստիկանը քիչ կամ շատ դաժանություն անի։ Իսկ սոցիալիստները նրա առաջ բուծում են ամեն տեսակի տեսություններ, կոչ են անում զարգանալու և լուսավորվելու և այլ բաներ, վորոնք յերբեմն հանգում են քարե դարի կամ յերկնային մոլորակների մասին դասախոսություններ կարդալուն։ Ի՞նչպես կարող է վերաբերվել մասսան նման մարդկանց։ Նրանք հանձինս նրանց լոկ իրենցից տարբեր մի բան են տեսնում, վորն իր հետ ներդաշնակ չի գտնում, յերբեմն ծաղրանքով նրա հավատալիքներն ու հույսերն է վիրավորում, վոր նույնիսկ մի քիչ տարբեր լեզվով է խոսում. սակայն իրեն համար վոչ մի օգուտ նա չի տեսնում, չի տեսնում նույնիսկ նրանց ցանկությունը, վոր օգտակար լինի, վորովհետև չի հասկանում, թե ինչպես կարող են քարե դարի մասին յեղած տեղեկությունները չափազանց բծախնդիր տաբելշչիկին հեռացնել իր տեղից։

Այսպիսով, ագիտացիան պետք է հենվի բանվոր դասակարգի առօրյա կարիքների վրա։ Ընկերներ, ձեզանից նրանք, ովքեր թեկուզ ընդհանուր գծերով ծանոթ են մեր կուսակցության և մեր բանվորական շարժման պատմությանը, նրանք, իհարկե, հիշում են, թե ինչ հսկայական նշանակություն ունեցավ 90-ական թվականներին «Ագիտացիայի մասին» բրոշյուրը, ուր հենց դրվում էր մասսաների կազմակերպման հարցը՝ պայքարը պետք է տարվի առաջին հերթին բանվոր դասակարգի առօրյա շահերի հիման վրա։ Ցեվ ահա, ագիտացիայի մասին այս բրոշյուրի գաղափարը կար Պլեխանովի վոչ թե նարոդովոլյան, այլ զեմլեվոլյան շրջանի գրվածքներում՝ նախ քան «Նարոդնայա Վոլյայի» հանդես գալը։

Ագիտացիան մասսաների վրա ազդելու միջոց է,—ասում է Պլեխանովը,—«մասսաների վրա ազդելու ագիտացիոն միջոցը շատ ավելի արդյունավետ արդյունքներ է տալիս և ավելի շուտ է նպատակին մոտեցնում, քան մինչև յերեկ գործածվող, այսպես ասած, առանձին անձանց վրա ազդելու միջոցը»։

Բացի այն, վոր նախատեսնում է ագիտացիայի մասին բրոշյուրը, նա գուշակում է և այն ձևը, վորը պետք է ընդունի բանվորական շարժումը ռուսական ինքնակալության պայմաններում.

«Կազմակերպության ընդլայնման, այստեղից բղխող դժվարությունները պետք է հատուցվեն նրա գաղտնիքներին տեղյակ մարդկանց բացառիկ ընդունակություններով և նվիրվածությամբ. «ահեղ գաղտնիքը և միջոցների մեծագույն բռնությունն» անգլիական բանվորական միությունների առանձնահատուկ գիծն եյին մինչև 1824 թիվը, և վոչ մի մտածող մարդ չի կարող կազմակերպությանը մեղադրել նրանում, վոր նա միջոցների մեջ խտրություն չի դնում, յերբ նա կտեսնի, վոր ստիպված. է բռնությանը բռնությունով պատասխանել...»։

Հետո զեմլեվոլեցը նորից հաղթում է Պլեխանովի մեջ, և նա սկսում է բանվոր դասակարգի բռնությունը տերրորի ինտելիգենտական, մանր-բուրժուական ձևով պատկերացնել։ Սակայն ինչ էլ վոր լինի, մարտական և կոնսպիրատիվ բանվորական կուսակցության, ապագա բոլշևիզմի գաղափարը նշված է այս տողերում բավական պարզ կերպով։

Այսպես ուրեմն, հեղափոխական բանվորական շարժման հիմնական գաղափարը Պլեխանովը ձևակերպել է դեռ էս «Земля и Воля»-յում, 1878 թվի վերջերին գրված և 1879 թվի հենց սկզբներում հրատարակված իր հոդվածներում։ Դա մեզ համար արժեքավոր է, վորովհետև ավելորդ անգամ ընդգծում է, վոր Պլեխանովը դեպի իր պրոլետարական հեղափոխական դիրքն էր գնում վոչ թե գրքի ազդեցության տակ, ինչպես այդ Դեյչն է պատկերացնում, ինչպես պատկերացնում եյին մինչև հիմա, այլ իրական կյանքի, այն ռեալ պայքարի ազդեցության տակ, վորը նրա աչքի առաջ էր տեղի ունենում։ Պլեխանովը մարքսիստ դարձավ վոչ Մարքսի յերկերի բնագիրն ուսումնասիրելով, ինչպես Դեյչն է կարծում, այլ իրական ձևով բանվորական շարժումը դիտելով և միայն այս բանվորական շարժումն է, վոր նրան դրդել է Մարքսը կարդալ և ուսումնասիրել։ Այս փաստը շատ օգտակար է հիշել նախ և առաջ մեթոդաբանական տեսակետից, հասկանալու համար, թե ինչպես է ծագում իդեոլոգիան. իդեոլոգիան միշտ վորոշ իրականության հիման վրա յե ծագում։

Այժմ յես անցնում եմ գործողությունների այն ձևերին, վորոնք կապված են 70-ական թվականների այլ հեղափոխական ճյուղավորումների հետ, այսինքն՝ այն խմբերի հետ, վորոնք հենվում եյին վոչ թե բանվոր դասակարգի վրա, կամ վոչ թե գլխավորապես բանվոր դասակարգի վրա, այլ հենվում եյին գլխավորապես բուրժուազիայի վրա։

Ի՞նչը դրդեց այն ժամանակվա հեղափոխականներին տեռորի դիմե-
լու։ Ինչո՞ւ էին նրանք պաշտոնավարող անձանց, մեր տեսակետից, ամե-
նաաննշան վոչնչացումով և ցարին վորսալով զբաղվում, փոխանակ մաս-
սայական աշխատանք տանելու։ Սրան նրանցից մեկը, նույն Տիխոմիրովը,
վորից չես տնցյալ անգամ ցիտատներ եյի բերում, իմ կարծիքով, միանգա-
մայն բավարար պատասխան է տալիս։ Այդ պատասխանն ահա թե վորն է։
70-ական թվականների կեսերին շարժումն այնպիսի աստիճանի հասավ,
վոր հեղափոխականներն այլևս չեյին կարող խոսակցություններով բավա-
կանանալ. Նրանք պետք է մի կերպ սկսեյին գործել։ Բայց ի՞նչպես կարող
է գործել միքանի հարյուր հոգուց բաղկացած մարդկանց խումբը։ Դուք
կասեք, վոր նրանք կարող եյին բանվորական մասսային դիմել և շարժել
նրան դեպի հեղափոխությունը։ Բայց դուք տեսնում եք, վոր նույնիսկ
Պետերբուրգում՝ իսկ նա հեղափոխական շարժման կենտրոնն եր՝ բանվո-
րական մասսան այնպիսի մակարդակի վրա չեր կանգնած, վոր նրան սովո-
րած եյին շարժել թագաժառանգի մոտ չերթի գնալու։ Ակներև է, վոր գի-
տակցականության նման աստիճան ունեցող մասսայի վրա չեր կարելի հե-
նել հեղափոխական պայքարը։ Ի՞սկ գյուղացիները։ Գյուղացիները, իհարկե,
ավելի քիչ չափով կարող եյին հեղափոխական շարժման բազա ծառայել,
քան բանվորները։ Ի՞նչ եր մնում անել։ Մնում եր մենակ գործել։ Իսկ
նրանք, կրկնում եմ, միքանի հարյուր մարդ եյին։ Ըստ Տիխոմիրովի ա-
րած հաշվի, Գործադիր Կոմիտեյի շուրջը համախմբվել եյին մոտ 500 մարդ։
Այս թիվը բավական վստահելի չէ, քանի վոր Տիխոմիրովին լավ ծանոթ
եյին «Նարոդնայա Վոլյա»-յի Գործադիր Կոմիտեյի բոլոր ներքին գործերը։
Այդ հինգ հարյուր մարդը, զուտ-օբյեկտիվ պայմանների շնորհիվ, բացի կա-
ռավարության դեմ պարտիզանական կռվից, վոչ մի այլ բան չեյին կարող
ձեռնարկել։ Նրանք, կրկնում եմ, դատապարտված եյին կամ այնպիսի խոս-
քեր ասելու, վորոնք բացարձակ կերպով վոչ մի ներգործություն չեյին
թողնում և իրենց էլ չեյին բավարարում, կամ ինչ-վոր պարտիզանական
բնույթ կրող մասնակի չելույթների միջոցով մի բան անել, վորը, վերջ ի
վերջո, տեռորի սիստեմի վերածվեց։ Ներկա դեպքում նրանց ոգնության
հասավ տեխնիկան։ Հենց 70-ական թվականները պայթուցիկ նյութերի ա-
ռաջին ծաղկման շրջանն է։ Դա նիտրոգլիցերինի, դինամիտի, պիրոքսիլինի
և այլն հանդես գալու շրջանն եր։ Մեզ հայտնի չէ Ժելյաբովի մասին չեղած
հիշողություններից, թե ինչպիսի զմայլեցուցիչ տպավորություն եր թող-
նում նրա՝ «Նարոդնայա Վոլյա»-յի այդ առաջնորդի վրա, թե ինչպես դի-
նամիտի մի կտորը, նյութի մի փոքրիկ կտորը, վորը նույնիսկ տանն էլ
կարելի չէ պատրաստել տնայնագործական ձևով, բառացի կերպով խլացու-
ցիչ և սոսկալի քայքայիչ եֆեկտ է առաջացնում։ Դինամիտը, այսպիսով,
պայքարի այն տեխնիկական միջոցը դարձավ, վորը կարող եր պարտիզանական
տակտիկան սարսափելի դարձնել և իրոք վոր սարսափելի դարձրեց. հաղիվ
հոգս չցնդեց ցարական գնացքը, մասամբ հոգս ցնդեց ցարական պալատը,
և, վերջիվերջո՝ հոգս ցնդեց ինքը ցարը։

Միանգամայն ճիշտ եր ասում այն ժամանակվա ռեակցիոներներից
մեկը, վոստիկանության դեպարտամենտի դիրեկտոր Դուրնովոն, վոր այն
ազդեցությունը մասսաների վրա, վոր տեռորն է գործում իր գործողու-
թյուններով, շատ ավելի մեծ է, քան այդ տեռորի անմիջական հետևանք-

ները։ Այն ժամանակ Տիխոմիրովը նրա հետ զրուցելիս,—դա արդեն Տիխո-
միրովի դավաճանությունից հետո չեր, ասաց.—ճիշտն ասած, ինչո՞ւ կառա-
վարությունը վախեցավ այն ժամանակ, չէ՞ վոր դրանք մի բուռը մարդիկ
եյին,—Դուրնովոն պատասխանեց.—այո, մի բուռը, բայց մի բուռի ձեռքում
այնպիսի միջոցներ կային, վորոնք նրա ազդեցությունը շատ ավելի մեծ
եյին դարձնում, քան կարող եր նա ունենալ իր քանակական կազմով։—
Դա անշուշտ պայթակղեցուցիչ եր, և չես կարծում եմ, վոր նարոդվոլցինե-
րի տակտիկան, տվյալ դեպքում, օբյեկտիվորեն դատելով, արժանի չէ այն
անպայմանական բացասմանը, վորին չենթարկում եյին նրան եսերների
տեռորիստական տակտիկայի դեմ պայքարի շրջանում։ Ինչո՞ւ եսերների
տեռորիստական տակտիկան XX դարի սկզբին մի բանի պետք չեր։ Այն
պարզ պատճառով, վոր 1905 թվականին մենք արդեն հեղափոխական մաս-
սա ունեյինք, և այդ պատճառով պարտիզանական պայքար մղելը վոչ մի
իմաստ չուներ։ Պետք եր այդ մասսային կոչ անել, կազմակերպել նրան,
տանել նրան դեպի զինված ապստամբություն և վոչ թե ուժերը ծախսել
տեռորի վրա։ Սակայն 70-ական թվականներին այդ պայմանները չկային,
այն ժամանակ չկար այն մասսան, վորը կարելի լիներ տանել դեպի զին-
ված ապստամբություն, և այդ պատճառով, կրկնում եմ, այն ժամանակվա
հեղափոխականները կարող եյին կամ տեռորի դիմել, վորևէ պարտիզանա-
կան գործողության ընձեռնել, կամ անպտուղ դատարկախոսություններով
սահմանափակվել։

Վոր մենք էլ, իսկապես, չհրաժարվեցինք պարտիզանական գործո-
ղություններից, դա ցույց է տալիս նույն 1905 թվի փորձը։ Ի՞նչ բան եր
1905 թվի դեկտեմբերյան ապստամբությունը։ Մի շարք պարտիզանական
գործողություններ, մի քիչ այլ վոճի, քան նարոդվոլցական չելույթներն
եյին, վորովհետև այստեղ ավելի մեծ քանակությամբ զինված ուժեր կային,
բայց դա այնուամենայնիվ ամենամաքուր պարտիզանականություն եր։ Հա-
մեմատեցեք 1905 թվի դեկտեմբերյան ապստամբությունը և 1917 թվի հոկ-
տեմբերյան ապստամբությունը։ Մենք ճիշտ կերպով պաշարել եյինք յուն-
կերներին, Կրեմլը և այլն։ Մինչև սրա նման մի բան չեղել է 1905 թվին։
Ովքե՞ր են մասնակցել, հիշեցեք, կամ հարց ու փորձ արեք նրանց, ովքեր
հիշում են, և դուք կտեսնեք, վոր 1905 թվի դեկտեմբերին մենք իսկական
պարտիզանական տակտիկա ունեյինք, միայն այլ տիպի, քան թե նարոդ-
վոլցիների պարտիզանական տակտիկան եր։ 1905 թվի դեկտեմբերին մենք
Կարմիր գվարդիա չունեյինք, մենք մեզ հետ ամբողջ գնդեր չունեյինք,
հրետանի չէլ չունեյինք,—միանգամայն բնական է, վոր բացի պարտիզա-
նական տակտիկայից, մեզ ուրիշ բան չեր մնում անել։ Այսպիսով, նարո-
դվոլցիների տակտիկան այս տեսակետից այն դրությունից եր բղխում,
վորի մեջ վոր նրանք գտնվում եյին։

Բայց տակտիկան ճակատագրական ձևով տանում եր նաև դեպի ծրա-
գրի, վորոշ չափով նաև այդ խմբի իդեոլոգիայի փոփոխությունը։ Պլեխա-
նովի օրինակով մենք տեսանք, թե ինչպես յուրաքանչյուր աշխարհայաց-
քի հիմքը գործը, փաստն է կազմում և վոչ գիրքը։ Այս դեպքում նարոդ-
վոլցիները հակառակ օրինակ են տալիս։ Դուք գիտեք, վոր հաջորդաբար
չորկու հեղափոխական խմբեր կային. 70-ական թվականներին «Земля и
Воля»-ն, վոր կազմակերպվեց 1878 և 1879 թվերին, հետո, չերբ «Зем-

ля и Воля»-ն Վարոնեժի համագումարում 1879 թվի հունիսին քայքայվեց՝ «Народная Воля»-ն կազմակերպվեց։ Յես սա նորից հիշեցնում եմ նրանց համար, վորոնք լավ չեն հիշում այս արտաքին պատմությունը։ Մինչև Ֆիգների հիշողությունների լույս տեսնելը և մինչև Տիխոմիրովի ինքնակենսագրությունը, վորը դեռ ևս լույս չի տեսել և վորի ձեռագրերն եմ կարդացել, մինչև այդ կարծում եյին, վոր «Земля и Воля»-ն նախ և առաջ պրոպագանդիստական կազմակերպություն ե, և միայն «Народная Воля»-ն զուտ տերրորիստական կազմակերպություն դարձավ։ Ֆիգների հիշողություններն արդեն հայտնաբերեցին այն փաստը, վոր իրականում «Земля и Воля»-ն ել ավելի շատ տերրորիստական կազմակերպություն եր, քան պրոպագանդիստական։ Իսկ Տիխոմիրովն ուղղակի հայտարարում ե իր ինքնակենսագրության մեջ, վոր «Земля и Воля»-յի մեջ արդեն պրոպագանդան սոսկ վարագույր եր և գյուղում համախմբված, և այնտեղ պրոպագանդա մղող կուսակցության անդամներին նկարագրում ե վորպես իր տեսակի հիմարացած մարդիկ, վորոնք յերևակայում եյին, վոր կենտրոնից իրոք ղեկավարում են այդ պրոպագանդան։ Իսկ իրականում,—պատմում ե Տիխոմիրովը,—այս պրոպագանդիստական կազմակերպությունն ստիպված եյին պահպանել միայն վայելչությունից դրդված և տրադիցիոն կերպով, վորովհետև,—ինչպես առհասարակ պատահում ե պատմության մեջ,—չի կարելի միանգամից հրաժարվել գործողության հին մեթոդներից, հին սովորություններից, հին լոզունգներից։ Այդ պատճառով գյուղում աշխատողներին ժամանակ առ ժամանակ մի վորևե պատառ եյին գցում, ժամանակ առ ժամանակ բավարարում եյին վորևե գրականությունով, բայց ամբողջ ուշադրությունը տերրորիստական պայքարի վրա եյին կենտրոնացնում։ Յերբ գյուղաշխատողները համագումարի եյին հավաքվում Պիտերում, նրանք սովորաբար աղմկում եյին, կռվում եյին, իսկ հետո ցրվում. իսկ Պիտերի կորիզն իր տեղումն եր մնում և շարունակում եր իր գործունեյությունը։ Գյուղաշխատողների հետ կռվելով, մի քիչ նրանց յուղելով, վորպեսզի նրանք այլևս չբարկանան պիտերցիները՝ ճամբու դնելով նրանց Պիտերից՝ նորից հին գործն եյին սկսում—տերրորիստական ելույթներ կազմակերպել, կամ, ինչպես այն ժամանակ եյին ասում, կազմալուծել պետական իշխանությունը։

Այսպիսով, թե Ֆիգները և թե Տիխոմիրովը «Земля и Воля»-յի կազմակերպությունը պատկերացնում եյին վորպես ըստ եյության տերրորիստական կազմակերպություն։ Հենց զեմլեվոլյան շրջանումն են տեղի ունեցել այնպիսի փաստեր, ինչպես Սոլովյեվի մահափորձը Ալեքսանդր յերկրորդի վրա, մի անհաջող մահափորձ, վորովհետև դա ատրճանակի միջոցով կատարված վերջին մահափորձն եր։ Հետագայում արդեն վորոշվեց միայն դինամիտ գործածել և, իվերջո, նա նպատակին հասցրեց։

Նարոդովոլյան հետևյալ շրջանի՝ Վարոնեժի համագումարից հետո՝ բնութագրությունը դուք կգտնեք իմ «չորս հատորի» մեջ. այնտեղ այդ համագումարի պատմությունը համառոտ, բայց բավարար չափով շարադրված ե։ Վորոնեժի համագումարից հետո «Народная Воля»-ն արդեն բացարձակ տերրորիստական կազմակերպություն ե, իսկ գյուղում աշխատողները «Черный передел» («Սև բաժանում») կուսակցությունը կազմակերպեցին, և այստեղ պարզվում ե, վոր հեղափոխական կենտրոնն իրոք տերրորն եր, վորովհետև «Черный передел»-ը վոչինչ չտվեց. վոչ սև, վոչ վորևե այլ բաժանում չերնոպերեդելովցիները չկատարեցին, իսկի չեյին ել աշխատում կատարել, գործնականորեն այս գործին յերբեք չեյին մոտենում։

1879 թվի ամրանից սկսած «Народная Воля»-յի Գործադիր կոմիտեյի նշանավոր վորոշումով պայքարի բոլոր ուժերն Ալեքսանդր II ի անձնավորության վրա յեն կենտրոնացվում։ Սկսվում ե, ինչպես յես իմ գրքումն եմ արտահայտվել, թագադիր գազանի դեմ հալածանք, վորը վերջանում ե 1881 թվի մարտի 1-ին։ Այս հալածանքի իրադարձությունը յես չեմ նկարագրի։ Վոր այստեղ հեղափոխականների կողմից բառացի կերպով հերոսության հրաշքներ են ցուցաբերվել, այդ մենք գիտենք և այդ տեսակետից, իհարկե, այս եպոխան դյուցազներգական եր, իր տեսակների մեջ միակը։ Բայց յես ուզում եմ ցույց տալ գործի ուրիշ կողմը։

Տերրորի համար, անկասկած, նյութական վորոշ միջոցներ եյին հարկավոր. դինամիտ եր հարկավոր, լաբորատորիաներ եյին պետք, իսկ այդ լաբորատորիաների համար փող եր հարկավոր. փողը մի տեղից պետք եր ճարել։ «Народная Воля»-յի հետագա պատմաբանները, ինչպես Բոգուչարսկին, համառորեն բացասում եյին, վոր նարոդովոլցիներն այդ փողերն ինչ վոր տեղից ճարում եյին, «Народная Воля»-յի միջոցները շատ աղքատիկ եյին պատկերացնում և այլն։ Սա, իհարկե, միանգամայն սխալ պատկեր ե։ Նա բացատրվում ե ռուսական հեղափոխական շարժման բուրժուական պատմաբանների ամբողջ դիրքով, վորոնք, ինչպես յես արդեն հիշատակեցի, աշխատում եյին ամեն կերպ այդ շարժումը պատկերացնել վորքան կարելի յե ավելի նախիվ և նույնիսկ ծիծաղելի ձևով, վորպեսզի ցույց տան, վոր հեղափոխությունը Ռուսաստանում ընդհանրապես անհաջողության ե դատապարտված, և վոր միայն բուրժուական մեթոդները, այսինքն՝ գլխավորապես յետևի մուտքից մտնելու, պետիցիաների մեթոդը և այլն՝ միակ, իրական մեթոդն ե։ Իսկ իրականում «Народная Воля»-ն, ինչպես առաջ «Земля и Воля»-ն, անկասկած խոշոր դրամական միջոցներ ե ունեցել, վոր ստանում եր նա բուրժուական շրջաններից։ Անդամներից վոմանք մասամբ սերվում եյին բուրժուական ընտանիքներից, ինչպես, որինակ, Լիզոգուբը և Վոյնարալսկին, մասամբ բուրժուազիայի նվիրատվություններից։ Վոր բուրժուազիան բոլորովին այլ կերպ եր վերաբերվում հեղափոխական շարժմանը, քան թե գյուղացիությունը,—այս մասին Ֆիգներն իր հիշողություններում մի շարք որինակներ ե տալիս, վորոնց նա ինքը մի հայտարարի չի բերում, չի միավորում, այլ առանձին-առանձին ե բերում։ Մի տեղ մենք տեսնում ենք, վոր նրանց ոգնություն ե ցույց տալիս նոտարը, մի այլ տեղ՝ զեմստվային վարչության նախագահը, յերրորդ դեպքում՝ քաղաքային վարչության անդամը և այլն։ Նրանք բոլորն ել համակրում, աջակցում են նրանց, թաքցնում են նրանց և բոլորն ել քիչ-քիչ փողեր են տալիս, իսկ այդ մանր մուծումներից բավականին մեծ գումարներ եյին ստացվում, ավելի մեծ, քան այն, ինչ Բոգուչարսկին ե նկարագրում, վորոշ չափով Բոգուչարսկու տեսակետին յենթարկվելով, յես՝ ձեր դասախոսս, նկարագրում եմ իմ «չորս հատորում»։ Միջոցներ նրանք ունեյին։ Նշանակում ե, վոր նյութականապես նրանք բուրժուազիայից կախում ունեյին. և բուրժուազիայից կախված լինելը կամաց-կամաց նրան ե հանգում, վոր «Народная Воля»-ն դադարում ե գործնականորեն սոցիալիստական

կուսակցություն լինելուց։ Այստեղ սկսվում են Ժելյաբովի, այդ «Народная Воля»-ի առաջնորդի խորհուրդները՝ ավելի քիչ խոսել ագրարային տերրորի և ընդհանրապես ագրարային հեղափոխության մասին, ավելի քիչ գրել ագրարային հարցի մասին—սկսում են «հանրապետություն» տերմինը ծամծմել, քողարկել։ «Народная Воля»-ն ասում է, վոր նա իրեն նպատակ է դնում միայն ժողովրդին մինչև սահմանադիր ժողովը հասցնել, իսկ հետո ժողովուրդն ինքը կվորոշի, թե ինչպես պետք է ղեկավարվի։ Ֆիգներն իր դատավարության ժամանակ նույնիսկ ասում է, վոր միապետության կամ հանրապետության հարցը նրանց մոտ չեր դրվում, հայտնի չե, թե ինչ ձև կլինի, այսինքն՝ Ֆիգներն իր կյանքի ամենավողբերգական րոպեյին, յերբ նա կախաղանի հեռանկարի առաջ եր կանգնած, ստորանում է մինչև հետագայում հանդես յեկած «ովորոժդենիականների» գաղափարը, յերբ նույնպես չեր դրվում միապետության կամ հանրապետության հարցը՝ չպառակտվելու համար։ Յեվ հարցի այսպիսի դրվածքը նրա անձնական գործը չեր — առաջներում Ժելյաբովը նույն կերպ եր դնում հարցը սպաների առաջ, վորպեսզի «նրանց չխրտնեցնի»։ Իդեոլոգիան տիպիկ մանր-բուրժուական է և աստիճան առ աստիճան, այն նյութական ֆակտորի ազդեցության տակ, վորից կախումն ուներ «Народная Воля»-ն, սկսվում է այս շարժման լոզունգների փոքրացումը։ «Մեր միակ խնդիրը տվյալ մոմենտում,— ասում եր Ժելյաբովը,—դեմոկրատիկ սահմանադրության հասնելն է։ Դրա համար մեզ անհրաժեշտ է հասարակության համակրանքը։ Մենք պետք է, այդ պատճառով, խուսափենք այնպիսի քայլերից, վորոնք կարող եյին մեզանից վանել հասարակության ազատամիտ շրջանները» (Ակսելրոդի հիշողությունները)։

Չափազանց բնորոշ է, վոր իր տագնապի րոպեյին, մարտի 1-ի նախորյակին, վորը վոչ միայն Ալեքսանդր II-ի վերջն եր, այլև «Народная Воля»-ի Գործադիր Կոմիտեյի փաստական մահը, վորովհետև դրանից հետո նա ավելի շատ անվանապես գոյություն ուներ, հենց այդ մոմենտի նախորյակին «Народная Воля»-ն սկսում է շոշափել իրոք հեղափոխական այն ուժը, վորը կարող եր դուրս բերել ռուսական հեղափոխական շարժումն այս չափազանց ամոթաբեր, իհարկե, կախումից՝ արքի եսերների լեզվով արտահայտվելով՝ լիքը գրպան ունեցողներից։ Այդ ուժը բանվոր դասակարգն եր։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Իմ դասընթացքում յես կանգ առա 70-ական թվականների ռուսական հեղափոխական շարժման յերկու կողմնորոշումների վրա, վորոնք ծագել են յերրորդ, ավելի հին կողմնորոշումից՝ գյուղացիության վրա կողմնորոշումից։ 70-ական թվականների կեսերին համոզվելով գյուղացիության քաղաքական անշարժության մեջ և մասսայական գյուղացիական շարժում առաջացնելու անհնարինության մեջ՝ հեղափոխականների մի թևը, վորը հեղափոխական շարժման բուրժուական պատմության եջերում մինչև որս բնորոշ կերպով ստվերի մեջ եր մնացել, բանվոր դասակարգի վրա հենվելու ընթացք բռնեց։ Այս թևին եյին պատկանում ինտելիգենտներից սակավահայտնի Զասլավսկին և շատ ավելի հայտնի Պլեխանովը, չխոսելով բանվորական շարժման գործիչների՝ բանվորների մասին։ Մի այլ թևը, վորի գլուխը Ժելյաբովն եր կանգնած, բուրժուազիայի կուրսը վերցրեց։ Անցյալ անգամ յես արդեն ասացի ձեզ, թե դա ինչ հետևանքներ ունեցավ Նարոդնայա Վոլյա-յի տակտիկայի, իսկ վորոշ չափով նաև ծրագրի վրա ազդելու տեսակետից, վորն (Նարոդնայա Վոլյան) այդ յերկրորդ կողմնորոշման՝ բուրժուազիայի կողմնորոշման ներկայացուցիչն է։ Բուրժուազիան տվել է վորոշ նյութական միջոցներ, բայց դրա փոխարեն 70-ական թվականների նարոդնիկ-հեղափոխականներից համարյա թե հանել է սոցիալիստական վոգին։ Բացի այդ, բացի այն միջոցներից, վորոնք բավականանում եյին միայն միքանի տերրորիստական մահափորձերի կազմակերպման համար, բուրժուազիան պայքարի անհրաժեշտ անմիջական մատերիալի տեսակետից ել վոչինչ չտվեց։ Ամենաբնորոշ բուրժուական կազմակերպությունը, մանր-բուրժուական, ի հարկե, բայց ընդհանրապես բուրժուական հասարակության տրամադրությունն արտացոլող, Նարոդնայա Վոլյա-յի կուսակցության ռազմական կազմակերպությունն եր, վորը յերկար ժամանակ նույնպես ստվերի մեջ եր մնում։ Բնորոշ կերպով Նարոդնայա Վոլյա-յի պատմությունն ուսումնասիրող ռուս ինտելիգենտի ամբողջ ուշադրությունն զբաղված եր ռումբեր գցելով և ատրճանակ արձակելով, մի խոսքով՝ հերոսական սխրագործություններ à la Վիլ'հելմ Տելլ և Շարլոտտա Կորդե։ Յեվ ահա այժմ միայն, նույն Վերա Նիկոլայեվնա Ֆիգների շնորհիվ, Աշենբրենների վերջին հիշողությունների շնորհիվ մենք սկսում ենք աստիճանաբար այս տնայնագործական, ըստ եյության ասած, թեպետ իր քայքայիչ տերրորիստական աշխատանքով չափազանց եֆեկտավոր կազմակերպության յետևում ավելի մասսայական բնույթ ունեցող կազմակերպություն նկատել։ Այս կազմակերպությունը ռազմական, կամ ավելի ճիշտն ասած՝ Նարոդնայա Վոլյա կուսակցության սպայական կազմակերպությունն եր, վորն ընդգրկում է վոչ պա-

կաս, քան 200 սպա, համակրողների հետ միասին նույնիսկ մինչև 500 եյին հաշվում։ Այսպիսով դա մարդկանց մի շրջան եր, իր քանակով ավելի նեղ, քան դեկաբրիստների շրջանը, վորոնց թիվը ևս տատանվում եր 2 և 5 հարյուրյակների միջև՝ նորից նայած՝ թե համակրողներին ել հաշվի առնել, թե շարժման միայն ակտիվ մասնակիցներին։

Բայց բնորոշ է տարբերությունը. մինչդեռ դեկաբրիստները նույնպիսի ուժով ույնուամենայնիվ ռազմական յերկու յելույթ ունեցան՝ մեկը՝ ճիշտ է, խաղաղ յելույթ եր Սենատյան հրապարակում, վորն, ինչպես հիշում եք, խուսափում եր հրացան արձակելուց, մյուսը՝ Չերնիգովյան գնդի իսկական ռազմական ապստամբությունը,—մոտավորապես հավասար սպայական կազմ ունեցող նարոդովոլցիները բացարձակապես վոչինչ չկարողացան անել։ Սպայական այս խմբերը մեծ յեռանդով ուսումնասիրում եյին անլեգալ գրականությունը, բավական համբերաշխ ոգնում եյին նարոդովոլյան այն ագիտատորներին, վորոնք ընկնում եյին նրանց հորիզոնի մեջ, վորոնց նրանք հանդիպում եյին, վերջապես, հանձինս առանձին, ավելի յեռանդոտ միավորների, ինչպես լեյտենանտ Սուխանովը, պորուչիկ Ռոգաչյովը և այլն, մարտիկներ եյին տալիս տերրորիստական գործունեյության համար։ Բայց դրանից դուրս չեկավ նարոդնիկների սպասած և վոչ մի ռազմական դավադրություն կամ ռազմական ապստամբություն։ Դա բնորոշ է և ահա թե ինչու։ Ինչի՞ վրա եյին հույս դրել դեկաբրիստներն իրենց յելույթի ժամանակ։ Թեպետ նրանք, ինչպես հիշում եք, պրոպագանդա եյին տանում զինվորների մեջ, բայց այնպիսի մանրադիտակային չափերով, վոր, իհարկե, այդ պրոպագանդան նրանց համար գլխավոր հենարան չեր։ Նրանց համար գլխավոր հենարանը, հատկապես Հյուսիսային ընկերության համար, ավանդական եր, կարելի յե ասել՝ զորանոցային դիսցիպլինան եր։ Այս դիսցիպլինայի վրա հույս ունենալով, նրանք կարծում եյին, վոր կարող են գնդերն ինքնակալության դեմ ուղղել։ Յերբ Պեստելն ամբողջ կորպուսների շարժման մասին եր խոսում, նա, կրկնում եմ, կարող եր նկատի ունենալ այդ կորպուսների զինվորներին պրոպագանդայի միջոցով նախապատրաստելը։ Բայց, համենայն դեպս, մի ամբողջ կորպուս (կորպուսում 40.000 մարդ է) մինչև վերջին մարդը պրոպագանդայի յենթարկելը միանգամայն անհնար եր։ Հույսը, կրկնում եմ, նրա վրա յեր, վոր մի ամբողջ շարք գնդի հրամանատարներ կամ նույնիսկ գեներալներ դավադիրների շարքին եյին պատկանում և նրանք կարող եյին իրենց գնդերը շարժել ուր ուզենան։

XIX դարի 80-ական թվականներին այդ մեռած զորանոցային դիսցիպլինան չկար։ Ընդհանուր զինվորական պարհակություն կար։ Զինվորներ կային՝ գործարանից կամ արորից վերցրած՝ վորոնց անպատճառ պետք եր սկզբից պրոպագանդայի յենթարկել, վորպեսզի նրանց վրա կարելի լիներ հույս դնել։ Արդեն XIX դարի 80 ական թվականներին ռազմական շարժումը յերկրի մասսայական շարժումից եր կախված, և այդ մասսայական շարժման ջերմության աստիճանն է, վոր բնորոշում է ռազմական շարժման ջերմության աստիճանը։ 1917 թվին, առանց վորևե սպայական դավադրության, ավելի ճիշտն ասած՝ հակառակ գոյություն ունեցող սպայական դավադրության, վորը բոլորովին այլ նպատակներ եր հետապնդում, հակառակ գեն. Կրիմովի դավադրության, վորի մասին դուցե ստիպված կլինենք հետագայում մի քանի խոսք ասել,—սրանից միանգամայն անկախ, շնորհիվ

պրոպագանդայի յենթարկված զինվորների հսկայական մասսայի, Պետրոգրադի կայազորի մասսայի, այն պայթյունն ստացվեց, վորը տապալեց ինքնակալությունը։ 80-ական թվականների սկզբներին մասսայական պրոպագանդան դեռևս բոլորովին չնչին արդյունքներ եր տալիս, և Նարոդնայա Վոլյա-յի սպայական կազմակերպությունը վոչինչ չեր կարող անել և նույնիսկ չեր ել փորձում վոչմի բան անել։ Բացի անլեգալ գրականության ընթերցանությունից, հեղափոխականներին ոգնելուց և, կրկնում եմ, տերրորիստական յելույթներում անձնական մասնակցության առանձին դեպքերից, այդ կազմակերպությունից վոչինչ դուրս չեկավ։

Յեվ ահա, բուրժուական շարժման կախման այս գիտակցությունը վերջին հաշվով նորից մասսայական շարժման մասին շատ հետաքրքիր փաստաթուղթ տվեց, վորը պատկանում է հենց իրեն, Նարոդնայա Վոլյա-յի հիմնադրին, նրա առաջնորդ Ժելյաբովին։ Դա Նարոդնայա Վոլյա կուսակցության բանվոր անդամների ծրագիրն է, մի ծրագիր, վորի մասին խոսեցի յես անցյալ անգամ։ Ժելյաբովը այն փոքրաթիվ նարոդովոլցիներից մեկն եր, վորոնք միանգամայն պարզ կերպով եյին հասկանում բանվորական շարժման, վորպես այդպիսինի նշանակությունը։ Ժելյաբովին է պատկանում նշանավոր նախադասությունը, վոր գործադուլը Ռուսաստանում քաղաքական յերևույթ է։ Այս ուղղությամբ գործելով՝ Ժելյաբովը շատ ավելի մեծ ուշադրություն դարձրեց քաղաքային բանվոր դասակարգի վրա, քան այդ անում եյին նախորդ նարոդնիկները։ Նրա ծրագիրը. իհարկե, վերջիվերջո զուտ նարոդնիկական ծրագիր է։ Այդտեղ դուք կգտնեք անխտիր բոլոր նարոդնիկյան զարդերը. և հավատ առ համայնք ու գյուղացիություն, վորպես հեղափոխության գլխավոր ուժի և այլն։ Բայց ամենից հետաքրքիրն այն է, վոր բանվոր դասակարգին այստեղ ինքնուրույն, յեթե կարելի լիներ տվյալ դեպքում այս մարքսիստական տերմինը գործածել, վորն այնքան ել հարմար չէ վոչ-մարքսիստ Ժելյաբովին, ինքնուրույն դասակարգային դեր է տրվում։ Նախ և առաջ այս ծրագրում մի գաղափար է հանդիպում, վորը հետագայում իրացվեց (մեզ՝ բոլշևիկներիս կարիք չկա հիշեցնել և բացատրել, թե ինչպես նա իրացվեց), ինքնուրույն հեղափոխական բանվորական կուսակցության գաղափարը. «բանվորներից նրանք, վորոնք հաստատ վորոշել են, վոր այժմյան կարգերը և ամբողջ ժողովրդական կյանքը պետք է փոխել,—ասում է Ժելյաբովի ծրագիրը,—կազմում են բանվորների փոքրիկ, բայց համերաշխ ընկերություններ (խմբակներ), պարզում են իրենց համար, թե ինչի պետք է ձգտեն և պատրաստվում են այն ժամանակվա համար, յերբ պետք կլինի ընդհանուր ուժերով դիմելու հեղաշրջում կատարելու։ Խմբակները պետք է գաղտնի լինեն, անմատչելի կառավարական հարվածներին»։ Ինչպես տեսնում եք, կոնսպիրատիվ բանվորական կազմակերպություններ են, բայց դրանք բանվորական կազմակերպություններ են, և, վորն ավելի բնորոշ է նարոդնիկին, նրանք միայն հեղաշրջման դեպքի համար չեն պատրաստվում. «յեթե կառավարությունը, ընդհանուր խլրտումից վախենալով, վճռում եր հասարակությանը վորոշ զիջումներ անել, այսինքն՝ սահմանադրություն տալ, ապա բանվորների գործունեյությունը չպետք է դրանից փոխվի։ Նրանք պետք է իրենց ուժ հայտարարեն, պետք է մեծ զիջումներ պահանջեն, պետք է իրենց ներկայացուցիչներին պարլամենտ մտցնեն (այսինքն՝ օրենսդիր ժողով) և, անհրա-

ժեշտության դեպքում, այդ պահանջներին աջակցեն մասսայական հայտարարություններով և զայրույթով»։ Այստեղ մենք արդեն հանդիպում ենք ամենացայտուն սոցիալ-դեմոկրատական տակտիկային։ Նարոդնիկի և Նարոդովոլցու գրչի տակից դուրս չեկած այս ծրագրում, հեղաշրջման բնորոշման մեջ միքանի ուղղակի մարգարեական գծեր կան. «Գործի հաջողության համար չափազանց կարևոր է խոշորագույն քաղաքները գրավել և իրենց ձեռքում պահել։ Այս նպատակով ապստամբված ժողովուրդը քաղաքը թշնամուց մաքրելուց անմիջապես հետո իր ժամանակավոր կառավարությունը պիտի ընտրի բանվորներից և ժողովրդական գործին նվիրված հայտնի մարդկանցից։ Ժամանակավոր կառավարությունը՝ իր զորքի վրա հենվելով, քաղաքը թշնամիներից պաշտպանում է և ամեն կերպ ոգնում է ուրիշ տեղերում ապստամբություն առաջացնելուն, միավորում և ուղղություն է տալիս ապստամբներին։ Բանվորներն աչալուրջ հետևում են ժամանակավոր կառավարության գործունեությանը և ստիպում նրան ժողովրդի ոգտին գործելու»։ Ինչո՞վ չէ սա 17 թիվը, յերբ բանվորները հանձինս Բանվորական Պատգամավորների Խորհրդի աչալուրջ կերպով հետևում էին ժամանակավոր կառավարությանը և այն համոզման յեկան վերջիվերջո, վոր նա վոչ մի բանի պետք չէ և նրան պետք է դեն շպրտել։ Այսպիսով, այս ծրագիրը վերին աստիճանի հետաքրքիր է, քանի վոր նա նախագուշակում է և՛ կազմակերպության կոնսպիրատիվ-հեղափոխական աշխատանքը, և՛ մասսայական տակտիկայի հնարավորությունը, այսինքն՝ նախատեսնում է վոչ միայն 1905 թվի, այլև 1910 թվի բոլշևիկներին՝ իրենց դարձով դեպի Պետական Դուման, քանի վոր նույնիսկ 1917 թիվն է նախատեսնում հանձինս բանվոր դասակարգի կողմից վերահսկվող ժամանակավոր կառավարության։ Ժելյաբովն արդեն գիտակցում էր, վոր դեպի բուրժուազիան կողմնորոշվելն արդյունք չի տալիս, և ուրիշ կողմնորոշման հարեց, մասսայի կողմնորոշմանը, բայց վոչ այն մասսայի, վորը նրա նախորդների անհիմն հույսերն էր առաջացնում, վոչ թե գյուղացիական մասսային, այլ բանվորների մասսային։ Դուք տեսնում եք, վոր 80-ական թվականների ռուսական առաջին մարքսիստական սոց.-դեմ. կազմակերպության «Աշխատանքի ազատագրման» խմբակի առաջանալն ամենևին էլ մի ինչ վոր հանկարծակի փաստ չէր, վորի հանդես գալը բացատրվում է բացառապես Պլեխանովի և նրա ընկերների գրական զբաղմունքներով։ Այս փաստը նախապատրաստել էր ռուսական հեղափոխական շարժման նախընթաց ամբողջ պատմությունը. նա նախապատրաստվել էր, ինչպես հիշում եք, այն իդեոլոգիական հեղաշրջումով, վորը տեղի ունեցավ Պլեխանովի մեջ Պետերբուրգի գործադուլները դիտելու ազդեցության տակ. նա նախապատրաստվել էր նաև նարոդովոլցիների կողմնորոշման այն հեղաշրջումով, վորն արտահայտվեց Ժելյաբովյան այս ծրագրում։

Միանգամայն բնական է, վոր սոցիալ-դեմոկրատական առաջին ծրագիրները՝ «Աշխատանքի ազատագրման» խմբակի 80-ական թվականների յերկու ծրագրերն էլ, ավելի վճռական կերպով, ավելի հեռու յեն գնում հին իդեոլոգիայից։ Այդ ծրագրերը, ինչպես գիտեք, յերկու հատ են։ Մեկը 84 թվին է վերաբերում, մյուսը՝ 87 թվին (88 թվին հրատարակված)։ Նրանք յերկուսն էլ շատ հետաքրքիր են, յեթե համեմատենք իրար հետ։ Այս ծրագրերից առաջինում խոսվում է գյուղացիության մասին, բայց բացառապես

վորպես ոբյեկտի մասին, վորպես մի այնպիսի բանի մասին, վորի համար ինչ վոր բան պիտի անել, բայց վոչ վորպես սուբյեկտի մասին։ Դա 84 թվին էր։ Յեվ դա դեռ այնքան էր վախեցնում չերնոպերեդելցիներին, վոր նրանք իրենք վորոշ չափով զարմացան իրենց ծրագրից, և ծրագիրն այսպես է վերջանում. «Աշխատանքի ազատագրման» խմբակը բոլորովին էլ անտարբեր չի դեպի գյուղացիությունը, վորը Ռուսաստանի աշխատավորական ազգաբնակչության հսկայական մասն է կազմում»։ Սա ընդգծված է, բայց հենց այն պատճառով է ընդգծված, վոր առաջ «Աշխատանքի ազատագրման» ծրագիրը, անշուշտ, անտես էր առնում գյուղացիությանը, վորպես ակտիվ ուժի։ «Բայց նա այն կարծիքին է, վոր ինտելիգենցիայի աշխատանքը, մանավանդ սոցիալ-քաղաքական պայքարի արդի պայմաններում, պետք է նախ և առաջ ուղղված լինի այդ ազգաբնակչության ավելի զարգացած շերտին, ինչպիսին և հանդիսանում են արդյունաբերական բանվորները։ Այս շերտի ուժեղ աջակցությունն ապահովելով, սոցիալիստական ինտելիգենցիան կարող է հաջողության շատ ավելի մեծ հույսով իր ազդեցությունը տարածել նաև գյուղացիության վրա, մանավանդ, յեթե նա մինչ այդ ագիտացիայի և պրոպագանդայի հաջողություն կարողանա ձեռք բերել»։ Այսպիսով, տեսնում եք, վոր գյուղացիության վրա ներգործությունը հեղափոխությունից այն կողմն է անցնում, վորովհետև ագիտացիայի և պրոպագանդայի ազատություն կարելի չէ ձեռք բերել հեղափոխական շարժման թեկուզ վոչ լրիվ հաղթանակի դեպքում միայն։ Բայց «Աշխատանքի ազատագրման» խմբակի առաջին ծրագրում թզենու տերև կա,—նույն տողերը, վոր յես ձեզ նոր կարդացի։ Իսկ յերկրորդ ծրագրում այդ թզենու տերևը չկա։ Այստեղ գյուղացիությունն ուղղակի ռեակցիոն ուժ է հայտարարվում, վորի վրա չի կարելի հույս դնել. «Ռուսական հեղափոխական շարժումը,—ասում է այս յերկրորդ ծրագիրը,— վորի հաղթանակը նախ և առաջ հոգուտ գյուղացիության կլիներ, գրեթե չի հանդիպում նրա կողմից վոչ աջակցության, վոչ համակրանքի, վոչ հասկացողության։ Աբսոլյուտիզմի ամենագլխավոր հենարանը հենց գյուղացիության քաղաքական անտարբերության և մտավոր հետամնացության մեջ է կայանում։ Սրա անմիջական հետևանքը բարձր դասակարգերի այն կրթված շերտերի անզորությունն ու յերկչոտությունն է, վորոնց նյութական և մտավոր շահերին հակասում է ժամանակակից քաղաքական սիստեմը»։ Ուրեմն, դուրս է գալիս, վոր բուրժուազիայի դժվարության մեջ էլ նույն մուժիկն է մեղավոր՝ իր տգիտության և քաղաքական անտարբերության շնորհիվ։ «Հանուն ժողովրդի իր ձայնը բարձրացնելով, նրանք (այդ պատվավոր բուրժուազիան) զարմանքով տեսնում են, վոր նա անտարբեր է դեպի նրանց կոչերը։ Այստեղից է քաղաքական հայացքների անկայունությունը, իսկ յերբեմն՝ մեր ինտելիգենցիայի թախիծը և լիակատար հիասթափությունը։ Գործերի նման դրությունը միանգամայն անհուսալի կլիներ»... Այսպես, ուրեմն, յեթե Ռուսաստանում միայն գյուղացիներ լինեն, դրությունը միանգամայն անհուսալի կլիներ,—իրերդ հավաքիր և մի վորևե այլ յերկիր գնա կորիր, վոչ մի հեղափոխություն չի լինի... «յեթե ռուսական տնտեսական հարաբերությունների հիշյալ շարժումը նոր հույսեր չստեղծեր աշխատավոր դասակարգի շահերի պաշտպանների համար։ Համայնքի քայքայումը մեզանում արդյունաբերական պրոլետարիատի նոր դասակարգ է ստեղծում։ Ավելի դյուրազգաց, շարժուն ու զարգացած այս դասակարգն ա-

ավելի հեշտ է արձագանքում հեղափոխականների կոչին, քան հողագործ հետամնաց ազգաբնակչությունը։ Մինչդեռ համայնքի իդեալն անցյալումն է, նահապետական տնտեսության այդ պայմաններում, վորոնց անհրաժեշտ քաղաքական լրացումը ցարական ինքնակալությունն եր,—արդյունաբերական բանվորի վիճակը կարող է բարելավվել միայն հանրակեցության նորագույն, ավելի ազատ ձևերի զարգացման շնորհիվ։ Հանձինս այս դասակարգի մեր ժողովուրդն առաջին անգամ տնտեսական այնպիսի պայմանների մեջ է ընկնում, վորոնք ընդհանուր են բոլոր քաղաքակիրթ ժողովրդների համար, և այդ պատճառով այս դասակարգի միջոցով միայն նա կարող է մասնակցել քաղաքակիրթ մարդկության առաջավոր ձգտումներին։ Այս հիման վրա ռուսական սոցիալ-դեմոկրատներն իրենց առաջին և գլխավոր պարտականությունը հեղափոխական բանվորական կուսակցության կազմակերպումն են համարում»։

Վերջապես Ռուբիկոնն անցավ։ Սկզբում յերկչոտությամբ արտահայտվելով, վոր գյուղացիությունից չի կարելի ոգուտ սպասել, 1887 թվին Պլեխանովը կատեգորիկ կերպով հայտարարում է. մուժիկից քաղաքական վնաս միայն կարելի յե սպասել։ Սա չափազանց կարևոր մոմենտ է. յեթե դուք վերցնեք մեր մենշևիկյան գրականությունը, կարելի յե ասել, մինչև մեր որերը և հատկապես 1905 թվականի առաջին հեղափոխության շրջանի մեր մենշևիկյան գրականությունը, ապա դուք պարզորոշ կտեսնեք, թե ինչպես այդ մարդիկ հաստատ հետևում եյին պլեխանովյան տրադիցիաներին. մուժիկից վոչինչ լավ բան չպետք է սպասել. մուժիկը ի բնե ռեակցիոն է և իրեն հարած ամեն մի շարժում յետ կքաշի։ Միակը, վոր կարող է բանվոր դասակարգի դաշնակիցը դառնալ,—դա բուրժուազիան է, վորի յերկչոտությունն ու դավաճանությունը Պլեխանովը, ինչպես մենք հիմա տեսանք, բացատրում է մուժիկի բթությամբ և վախկոտությամբ։ Յեթե մուժիկը չլիներ, մեր բուրժուազիան էլ բոլորովին ուրիշ կլիներ։ Դուք տեսնում եք, վոր այս գրվածքը 1905—7 թվերի մենշևիկյան գրվածք է, նա արդեն իրականում արմատացած է նարոդնիկյան հեղափոխության այդ ռեակցիայի մեջ, ռեակցիա նարոդնիկյան հեղափոխության դեմ, վորն այդպիսի պայծառությամբ արտահայտվեց «Աշխատանքի ազատագրման» խմբակի այս յերկու ծրագրներում։ Այսպիսով, մենշևիկներն իրենց ամբողջ հույսը բանվոր դասակարգի վրա եյին դնում՝ պլյուս բուրժուազիան։ Յեվ դուք գիտեք, վոր հենց այս հարցում նրանք մեզանից՝ բոլշևիկներից բաժանվեցին, վորոնք 1905—7 թվականներին իրենց հույսը բանվոր դասակարգի վրա եյին դնում՝ պլյուս գյուղացիությունը։ Հարցն, ինչպես տեսնում եք, գործնականապես հույժ կարևոր եր և վորն արժե պարզաբանել, վորովհետև նա իր ամբողջ ակտուալությունը պահպանեց մինչև մեր որերը։ Արդյոք մենք ունե՞նք վորևե շանս ոգտագործելու գյուղացիությունը, վորպես հեղափոխական, քաղաքականապես առաջադեմ ուժ, թե՞ դա ծանր կշռաքար է մեր վոտներից կախված, վորը միշտ կդանդաղեցնի մեր ընթացքը, վորը յետ կքաշի մեզ։ Այս հարցը, վորն արժե քննել, մի հարց է, վորն ակտուալ է մինչև հիմա։ Յեթե մոտիկից նայենք այն վեճերին, վորոնք դեռ նորերս եյին աղմկում, դուք նրանցում յերկու նոտա կտարբերեք։ Մի նոտան ասում է. պետք է ամուր ձուլվել մուժիկի հետ և նրա հետ առաջ գնալ։ Մյուսը՝ մենշևիկականը, ասում է. չպետք է մուժիկի պատճառով բանվոր

դասակարգի շահերը մոռանալ։ Դա դեռ քիչ է, պետք է ավելի քիչ ուշադրություն դարձնել մուժիկի վրա և ավելի շատ ուշադրություն դարձնել պրոլետարիատի վրա։ Այս վեճի մեջ յերկու կողմերն էլ իրավացի չեն, իհարկե, վորքանով վոր խոսքը վորոշ գունավորումների յե վերաբերում. յեթե մենք փորձենք խորացնել այս վեճը, կտեսնենք, վոր նա այս գրվածքին է ձգտում 80-ական և 900-ական թվականների առաջին տասնամյակին։ Ահա թե ինչու, կրկնում եմ, արժե այս հարցով զբաղվել և հետո փորձել ընդհանուր գծերով տալ սխեման՝ մի կողմից՝ Ռուսական առաջին հեղափոխության շրջանի բանվորական շարժման, մյուս կողմից՝ այդ շրջանի գյուղացիական շարժման, ընդ սմին յես շատ յերջանիկ եմ, վոր կարիք չունեմ ծանրաբեռնել ձեզ մանրամասն փաստական մատերիալով, ինչպես դա յես Սվերդլովի համալսարանումն եյի անում։ Յերբ յես կարդում եյի սվերդլովցիներին, չկար այն կանաչ գրքույկը[1]), վորը դուք հիմա ունեք, ուր վորոշ մատերիալ կա, դժբախտաբար միքիչ հնացած, վորովհետև այդ մատերիալը յես մի շարք տարիների ընթացքում եմ հավաքել դեռ հեղափոխությունից առաջ, բայց, այնուամենայնիվ, մատերիալ կա։ Մյուս կողմից՝ այնպիսի բան կա, ինչպես բանվորական շարժման բնութագրության համար Կ. Սիդորովի կազմած Ռուսաստանի գործադուլային շարժման աղյուսակները, և բավական կլինի այդ աղյուսակները վորոշ կոմենտարիայի յենթարկել (այդ աղյուսակները «Красная Новь»-ն է հրատարակել)։

Այն տվյալները, վոր ընկ. Կ. Սիդորովն ունի, հարմար յելակետ են այժմ մեզ զբաղեցնող հարցին մոտենալու համար։ Նա այն տեսակետն ունի, վոր ռուսական հեղափոխությունը բացառապես բանվորական հեղափոխություն եր, և նա ամեն կերպ աշխատում է ապացուցել, վոր ռուս բանվորն ամենահեղափոխական բանվորն եր, պետք է լիներ վոչ միայն Ռուսաստանում, այլ ամբողջ աշխարհում։ Սրա հետ կապված նա մի շարք տվյալներ է բերում և պարզաբանում է այդ բոլորն աղյուսակներով, վորոնք վկայում են, վոր արդյունաբերության համակենտրոնացման և խոշորագույն ձեռնարկություններում բանվոր դասակարգի կենտրոնացման տեսակետից Ռուսաստանն ուրիշ յերկրների, նույնիսկ Միացյալ Նահանգների հետ համեմատած՝ ամենաձեռնտու պայմաններումն եր գտնվում։ Վերցնենք, որինակ, 1914 թիվը. մինչդեռ Ռուսաստանում յուրաքանչյուր 1.000 մարդուց ավելի ունեցող հսկա-ձեռնարկություններում 1.300 հազ. մարդ կար, Միացյալ Նահանգներում այդպիսի ձեռնարկություններում 1.255 հազար մարդ կար։ Մինչդեռ Միացյալ Նահանգների այս հսկա-ձեռնարկություններից յուրաքանչյուրում բանվորների միջին թիվը 1.940 մարդ եր, Ռուսաստանում նույնիսկ 1902 թվին նրանց թիվը 2.490 եր։ Մինչդեռ խոշոր տիպի ձեռնարկություններում՝ 500 բանվորից ավելի յուրաքանչյուրում՝ Ռուսաստանում կենտրոնացած եր ամբողջ պրոլետարիատի 56,5%-ը, Միացյալ Նահանգներում նույնպիսի ձեռնարկություններում 31% եր կենտրոնացած. ամերիկյան բանվորների 69%-ը ավելի մանր ձեռնարկություններում եր տեղավորված։ Այս բոլորն, իհարկե, ճիշտ և հետաքրքիր է, բայց միայն վորոշ ուղղումների կարիք ունի։ Այս ուղղումները տրված են 1917 թվի մասին Շլյապնիկովի չափազանց հետաքրքիր գրքի մի ծանոթության մեջ, վորն այդ շրջանի մասին մեզանում յեղած ամենանշանավոր գրքերից մեկն

[1]) «Համառոտ ուրվագծերի» III մասը։

է։ Այդտեղ Շլյապնիկովը, վորն աշխատել է և՛ անգլիական, և՛ ֆրանսիական, և՛ ռուսական ֆաբրիկաններում, հետաքրքիր փաստ է արձանագրում, վոր բանվորական ձեռների էժանության պատճառով մեզ մոտ, Ռուսաստանում անգամ ամենահսկայական արդյունաբերական ձեռնարկություններում կենդանի ուժը դեռևս շատ մեծ չափերով կատարում էր այն, ինչ Արևմուտքում կատարում եյին և կատարում են մեքենաները։ Այնպես վոր, յերբ դուք տեսնում եք այս թիվը, վոր Ամերիկայում յուրաքանչյուր հսկաձեռնարկությունում 2.000 բանվորից պակաս է, իսկ Ռուսաստանում՝ 2 և կես հազար, դա, իհարկե, ինքնըստինքյան դեռ չի նշանակում, վոր ռուսական ձեռնարկությունները տնտեսապես ամերիկյաններից խոշոր են։ Դա ցույց է տալիս միայն, վոր մեզանում բանվորական ձեռքն ավելի էժան է, վոր այդ պատճառով մեզանում մեծ քանակությամբ անվորակ աշխատանք է գործադրվում այնպիսի աշխատանքների համար, վորոնք Ամերիկայում մեքենաներն են կատարում։ Այս վերապահությունն անհրաժեշտ է անել, և նա, իհարկե, մեր ամբողջ բնութագրության միջով պետք է անցնի։ Նույնը և 500 և ավելի բանվոր ունեցող ձեռնարկությունների մասին։ 400 բանվոր ունեցող ամերիկյան ձեռնարկությունը փաստորեն կարող է ավելի խոշոր լինել, քան 600 բանվորով ռուսական ձեռնարկությունը՝ նույն պատճառով։ Պետք է այստեղ հաշվի առնել, վոչ միայն բանվորների քանակը, այլև ձիու ուժի այն քանակը, վորը կիրառվում է, մշակույթը, արդյունավետությունը, արտադրության փթերի քանակը, և այս դեպքում, իհարկե, ամերիկյան ձեռնարկությունն ավելի բարձր կլինի։ Դա պետք է մենք ընդգծենք, վորովհետև այլապես իրոք այն պատկերը կստանանք, վորն ուզում է նկարել ընկ. Կուզմա Սիդորովը և վորն, իհարկե, այնքան էլ ճիշտ չէ, այն է՝ վոր ռուսական կապիտալիզմն իբր թե ամենապրոգրեսիվն է և այդ պատճառով ռուսական բանվոր դասակարգն ամենից շատ է նախապատրաստված սոցիալիստական հեղափոխության համար։

Մենք վոչ-վոքի վիրավորած չենք լինի, յեթե վորպես մարքսիստներ այն փաստն արտահայտենք, վորն իրոք կա (իսկ մարքսիստները պետք է ճշմարտությանն ուղիղ նայեն), վոր 1917 թվին ռուսական բանվոր դասակարգն ամբողջովին պատրաստ չէր սոցիալիզմի համար՝ չնայած դեպի սոցիալիզմն ունեցած իր բնազդական հսկայական ձգտմանը։ Յուրաքանչյուր մարդու համար, վորն զգում է միայն պատմական դիալեկտիկան, զարմանալի վոչինչ չկա նրանում, վոր մարդ կարող է բնազդաբար խոր սոցիալիստ լինել, բայց միաժամանակ չկարողանա գիտակցաբար իրագործել այդ սոցիալիզմը։ Ընդհակառակն, այդ հակասությունը չափազանց բնորոշ է, և նա ամենուրեք պատահում է պատմության մեջ, նա բացատրում է մեզ մարդու բնազդական ձգտումների և այն միջոցների հարաբերությունները, վորոնք նրա մեջ կան այդ բնազդական ձգտումներն իրացնելու համար։ Յեվ այդ իմաստով, միջոցների, անհրաժեշտ վորոշ կազմակերպվածության իմաստով և այլն, ռուսական բանվոր դասակարգը 1917 թվին պատրաստ չէր սոցիալիստական տնտեսության անցնելու համար։ Դա ամեն կասկածից դուրս է։ Համենայն դեպս դա տարօրինակ է հնչում, բայց յես կասեմ, վոր նա այժմ դրան ավելի պատրաստ է, այժմ 1924 թվին, քան թե պատրաստ էր նա 1917 թվին։ Այդ էլ կասկածից դուրս է։ Բանվորների նոր ձգտումը դեպի կուսակցությունը, այդ կոմունիստների ձգտումը, այսպես ասած,

յերկրորդ կոչի կոմունիստների ձգտումը, չափազանց բնորոշ յերևույթ է։ Սա արդեն տարերային յերթ չէ, այդ յերթը վորոշ աստիճանի գիտակցական է, մի յերթ, վորը ի վերջո կարող էր այնպիսի մարդիկ տալ, վորոնք ընդունակ են սոցիալիզմը կյանքում մարմնացնել, մինչդեռ առաջ դրանք մարդիկ եյին, վորոնք բնազդով հեղափոխականներ-բոլշևիկներ դարձան, վորոնք վառ, շիկացած ատելություն ունեին դեպի բուրժուազիան, դեպի կապիտալիստները, բայց չեն հասկանում, թե ինչպես պետք է դուրս գալ ճակատագրական այս կապիտալիստական շրջանից և տնտեսության նոր տիպին անցնել։ Այս ուղղումը միանգամայն անհրաժեշտ է մտցնել ընկ. Սիդորովի աղյուսակների և հատկապես բացատրությունների մեջ, այլապես մենք սխալ պատկեր կստանանք։ Բայց մյուս բոլոր հարցերում այս աղյուսակները մեծ քանակությամբ հետաքրքիր փաստեր են տալիս։ Օրինակ, նրանք չափազանց լավ են լուսաբանում 905 թվի շարժման հեղափոխական բնույթը։ Վերցրեք այն աղյուսակը, վորը ցույց է տալիս գործադուլների քանակը Ռուսաստանում։ Այս հսկայական գործ սյունյակը—սա 905—6—7 թվերն են։ Դուք տեսնում եք, թե ինչպես այս սյունակը, վորպես նավթի շատրվան սկսում է գետնից խփել։ Յես չգիտեմ մի ուրիշ դիագրամ, վորն ավելի ցայտուն, ռելյեֆ կերպով ձևակերպեր ռուսական բանվորական շարժման հենց հեղափոխական բնույթը։ Դա էվոլյուցիոն շարժում չէր, ուր շարժումն աստիճանաբար բարձրանում և բարձրանում է դեպի վեր։ Այդպես է լինում տնտեսական պայքարում։ Վերցրեք նույն Սիդորովի աղյուսակներում աշխատավարձին վերաբերող սյունյակը և դուք կտեսնեք, թե ինչպես աշխատավարձն ավելի ու ավելի վեր է բարձրանում։ Իսկ յերբ նայեք քաղաքական շարժումը նկարագրող սյունյակը, նա շատրվանի նման միանգամից վեր է ցայտում։ Աղյուսակը չափազանց ցուցադրական է, նա նկարագրում է, վոր տարերային հեղափոխական շարժումը չափազանց ուժեղ էր։ Այստեղ մենք տեսնում ենք տնտեսական և քաղաքական շարժման վորոշ շատ տիպիկ արտացոլում։ Դուք տեսնում եք, թե քաղաքական ստաչկան վորքան ուժեղ է տնտեսականից, թե քաղաքական գործադուլը վորքան ավելի ուժեղ կերպով է վեր բարձրանում տնտեսականի հետ համեմատած։ Այս աղյուսակներում չափազանց հետաքրքիր մատերիալ է տրվում, վոր նկարագրում է 12 տարվա քաղաքական և տնտեսական գործադուլները։ Աղյուսակները շատ ցուցադրական են, բայց քանի վոր բոլորդ էլ հնարավորություն ունեք դրանց հետ ծանոթանալու, յես դրանց վրա այլևս կանգ չեմ առնի։ Անկասկած է, վոր Ռուսաստանում հեղափոխությունը ղեկավարող, նրա հեգեմոնը՝ բանվոր դասակարգն էր։ Բայց հենց այստեղ է տարբերությունը մեր և շարժման այն հասկացողության միջև, վորն 80-ական թվականներն են տալիս։ Դուրս է գալիս, վոր կարծես թե բանվոր դասակարգն ինքն իրեն է միայն իր յետևից տանում, կամ լավագույն դեպքում բուրժուազիային է տանում՝ ներշնչելով նրան կռիվ, ապագայի հավատ, հուսալ իր ուժերի վրա և, այսպիսով, նրան ինքնակալության դեմ պայքարելու ձգտում ներշնչելով,—այսպիսի խոսքերով է վերջանում, ինչպես հիշում եք, «Աշխատանքի ազատագրման» 88 թվի յերկրորդ ծրագիրը։

Բայց թե էլի ում է տանում իր յետևից պրոլետարիատը, դա այս ծրագրներից բավական դժվար է հասկանալ։ Իսկ մենք, բոլշևիկներս, այն կարծիքին եյինք, վոր ռուսական հեղափոխությունը հենց այն պատճառով

միայն լայն մասշտաբի ազգային, իսկ հետո միջազգային հեղափոխություն դարձավ, վոր այս բանվոր դասակարգի յետևից, վոր այս հեգեմոնի յետևից վորոշ ուժ եր գնում, վորին այս հեգեմոնն առաջնորդում եր. գնում եր գյուղացիությունը։ Ռուսական հեղափոխության մեջ գյուղացիության մասնակցության սխեմայի մասին յես կփորձեմ այժմ ձեզ պատմել[1])։

Արդյոք մեր հեղափոխությունը զուտ պրոլետարակա՞ն եր, ինչպես այն ընկ. Կ. Սիդորովն ե նկարագրում, թե՞ նա պրոլետարա-գյուղացիական, բանվորա-գյուղացիական եր, ինչպես և այն կառավարությունը, վորը նրանից ստացվեց, ինչպես և այն հանրապետությունը, վորի մեջ մենք ապրում ենք։ Յես կարծում եմ, վոր նա բանվորա-գյուղացիական հեղափոխություն եր, և կաշխատեմ հիմա ձեզ սխեմատիկորեն այն մոմենտները նկարագրել, վորոնք մեզ մոտ հեղափոխական գյուղացիությունը տվեց և վորոնք գյուղացիությանը կապում եյին բանվոր դասակարգի հետ։

Նախքան սրան անցնելը, մենք պետք ե հիշենք ռուսական հեղափոխության յերրորդ ելեմենտը։ Չե՞ վոր մեզ մոտ հեղափոխական շարժումն սկսել ե ինտելիգենցիան։ Իսկ ո՞ւր մնաց ինտելիգենցիան։ Սկսած դեկաբրիստներից, շարունակելով Պետրաշևցիները, 60-ական թվականների մարդիկ, և, վերջապես, նարոդնիկ-պրոպագանդիստները և նարոդովոլցիները— մենք ամեն տեղ ինտելիգենտական կազմակերպություններ ունենք։ Իսկ ո՞ւր կորավ այս հեղափոխական ինտելիգենցիան։ Ի՞նչ ե; նա ցիր ու ցան ե յեղել, թե՞ վոչ։ Յեվ այստեղ ես պետք ե այն փաստն ընդգծենք, վոր հեղափոխական բանվորական կազմակերպությունները մեզանում չափազանց ուշ են հանդես գալիս։ Յեվ նույնիսկ այն ժամանակ, յերբ արդեն գոյություն ուներ բանվորական կուսակցության գաղափարը և այդ բանվորական կուսակցությունն եր կառուցվում, ղեկավար դերն, այնուամենայնիվ, հեղափոխական ինտելիգենցիային եր պատկանում։

Կարելի յե ռուսական հեղափոխական շարժման յերեք շրջան կառուցել։ Առաջին շրջանը՝ XIX դարի 20-ից մինչև 80-ական թվականները՝ կարելի յե այսպես բնորոշել. ինտելիգենցիան մասսա յե վորոնում։ Նա այդ մասսան սկզբում գյուղացիության մեջ ե վորոնում, հետո՝ բանվորների, նույնիսկ բուրժուազիայի, սպայության մեջ և այլն։ Նա մասսա յե վորոնում և չի գտնում այն։ Յերկրորդ շրջանն 80-ական թվականներից սկսած մինչև XX դարի յերկրորդ տասնամյակի սկիզբը կլինի, յերբ ինտելիգենցիան մասսա գտավ։ Նա գտավ մասսան, բայց նա դեռևս չձուլվեց այդ մասսայի հետ, վորովհետև այդ մասսան աստիճանաբար, տարրային կերպով կոփվելով՝ իդեոլոգիապես դեռևս չափազանց հեռու յեր հեղափոխական ինտելիգենցիայից։

Այստեղ յես պետք ե մի փոքր շեղում անեմ այն հարցի մասին, թե ինչ ե իդեոլոգիան։ Յենչմենիզմի ազդեցության տակ, վորն ընդհանրապես ճիշտ եր դնում գիտական հետազոտության խնդիրը, վորպես զուտ-ոբյեկտիվ հետազոտություն, վորը չի դիմում սուբյեկտիվ մոմենտին, սրա ազդեցության տակ մեզանում վերջին ժամանակներս իդեոլոգիայի հարցում թեքում տեղի ունեցավ, վորն սկսեց ուղղել, և լավ ուղղեց ընկ. Բուխարինը։

Չպետք ե իդեոլոգիայի վրա նայել, վորպես հայելու նման մի բանի, վորը պասիվ կերպով ե արտացոլում կատարվող շարժումը։ Իդեոլոգիայի մասին այս տեսակետը միանգամայն վոչ-մարքսիստական ե, սխալ ե։ Ոբյեկտիվությունն այստեղ այն չե, վոր մենք վոչ հոգեբանական փաստերի հետ գործ ունենք, այլ ոբյեկտիվությունն այն ե, վոր մենք գործ ունենք ոբյեկտիվորեն անհրաժեշտ և այս կամ այն հասարակական դասակարգերի ոբյեկտիվ շահերին համապատասխանող փաստերի հետ։ Հենց սա յե իդեոլոգիայի ոբյեկտիվությունը։ Սուբյեկտիվը այստեղ այն կլինի, ինչ քիչ թե շատ պատահական ե, անհատական և ընդհանուր նշանակություն չունի։ Բայց այն, ինչ դասակարգի ոբյեկտիվ շահերին ե համապատասխանում, դա ոբյեկտիվ կլինի՝ չնայած նրան, վոր դա սուբյեկտիվ-հոգեկան ֆակտոր կլինի—ներողություն եմ խնդրում յենչմենիստ ընկերներից՝ «հոգևոր» ֆակտոր։ Նրանք, իհարկե, բարձր կծիծաղեն, բայց յես այս տերմինը նրա համար եմ բերում, վորպեսզի ընդգծեմ, վոր հոգևոր ֆակտորը միանգամայն ոբյեկտիվ կարող ե լինել։

Իդեոլոգիան վորոշ հասկացողությունների, գաղափարների, ծրագրերի և այլնի համախմբակցությունն ե, իդեոլոգիական, «հոգևոր», ինչպես կուզեք անվանեցեք, ֆակտոր ե, բայց և այնպես դա միանգամայն ոբյեկտիվ մի բան ե, վորն ոբյեկտիվորեն անհրաժեշտ ե հասարակական շարժման համար։ Վորպեսզի մարդիկ միաձայն և կազմակերպված վորոշ ուղղությամբ գործեն, անհրաժեշտ ե վորոշ սովորույթներ, վորոշ սովորություններ, վորոշ տենդենցիաներ մշակել, վորոնք կհրեյին նրանց այդ ուղղությամբ գործելու։ Դա զուտ ոբյեկտիվ աշխատանք ե և հենց սա յե այն պրոպագանդայի և ագիտացիայի եյությունը, վորով մենք հիմա զբաղվում ենք։ Տարբերությունն այն ե միայն, վոր ագիտացիան առավելապես տրամադրությանն ե ուղղած, իսկ պրոպագանդան՝ ինտելլեկտին, բայց այսպես թե այնպես, թե մեկը և թե մյուսը միջոց են մեր պսիխիկան այնպես կազմակերպելու, վորպեսզի նա պետք յեղած ձևով պատասխանի այն գործողություններին, վոր հարկ ե լինում մեզ կատարել։

Ահա թե ինչու ճիշտ իդեոլոգիայի մշակումը, պրոլետարական հեղափոխական իդեոլոգիայի, յուրաքանչյուր յերկրում այդպիսի հսկայական կարևորություն ունեցող մի գործ ե։ Արևմտյան Յեվրոպայի վերաբերյալ այդ աշխատանքը Մարքսն ու Ենգելսը կատարեցին։ Ռուսաստանում այս խնդիրը, գլխավորապես, Լենինն ու բոլշևիկները կատարեցին։ Մենշևիկները վոչ-հեղափոխական իդեոլոգիա մշակեցին, վորն այդ պատճառով չեր համապատասխանում ոբյեկտիվ պահանջների այն խնդրին, վորը ռուսական հեղափոխական բանվոր դասակարգի առաջն եր կանգնած,—հեղաշրջում կատարել, իշխանությունը գրավել, ինքնակալությունը տապալել և, ինքնակալությունը տապալելով՝ ժողովրդին ինքնակալ դարձնել։

Ահա թե վորն ե այն իդեոլոգիական պայքարի հսկայական նշանակությունը, վորը XX դարի ամբողջ առաջին յերկու տասնամյակների ընթացքում տեղի յեր ունենում մի կողմից Լենինի ու նրա խմբի և մյուս կողմից՝ Մարտովի և նրա խմբի միջև։ Մի կողմը փորձում եր հոգեբանորեն հեղափոխական մասսան այնպես կազմակերպել, ինչպես դա անհրաժեշտ եր

[1]) 1905—7 թվի բանվորական շարժման մասին այս դիտողությունների թռուցիկ լինելը չպետք ե զարմացնի ընթերցողին. գավկոմների քարտուղարների դասընթացքների ծրագրերում բանվորական շարժումը Ռ. Կ. (բ) Կ. դասընթացքի մեջ ե մտցված, մինչդեռ ներկա գրքույկի հեղինակը հենց նոր նրա փաստական տեսությունը տվեց «Համառոտ ուրվագծեր»-ի III մասում («Բանվորական հեղափոխությունը» գլխում)։

նրա միսիան կատարելու համար։ Մյուսն անկամայական կերպով, իհարկե, առանց այդ մասին մտածելու, աշխատում էր նրան կազմալուծել, որի համար էլ լերկրորդը վայելում էր բուրժուազիայի համակրությունը, որը ոչ մի բանից այնպես չէր վախենում, որքան նրանից, որ բանվոր դասակարգը կկազմակերպվի և իշխանությունը կգրավի։ Դա բուրժուազիայի մղձավանջն էր։ Այդ մղձավանջը մենշևիկներն էյին ցրում, որի համար էլ այդպիսի համակրանք էյին վայելում։ Այդ մղձավանջը, ընդհակառակը, ուժեղանում էր բոլշևիկների հաղթանակներով, որի համար էլ բոլշևիկներն ատելության առարկա էյին։

Այսպիսով, ինտելիգենցիայի ազդեցությունը, որպես մի ապարատի, որն իդեոլոգիա չէր մշակում, որոշ կազմակերպություն էր ստեղծում, որն անհրաժեշտ էր հեղափոխության նպատակներն իրագործելու համար,— այդ ազդեցությունն այն շրջանում հսկայական էր. մինչև հիմա յել շատ մեծ է մնում այն, թեպետ հիմա, ինչպես տեսնում եք, նա ընկնում է. Նրա նշանակությունը պակաս է, քան առաջ էր, քան նա առաջին հեղափոխության շրջանումն էր, որը կարելի յէ հետևյալ լոզունգով նշանակել. «Ինտելիգենցիան գնաց մասսան». այն ժամանակ նրա դերը չափազանց մեծ էր։ Որովհետև այդ մասսան՝ օբյեկտիվ միջավայրի ազդեցության ներքո բնազդաբար հեղափոխական դառնալով՝ շատ քիչ գիտակցական-հեղափոխական էր, և այստեղ նորից պետք է վոչինչ չծածկել։

Ցես ձեզ ասացի, որ, իմ կարծիքով, ռուսական բանվոր դասակարգը 1917 թվին պատրաստ չէր տնտեսության սոցիալիզացիայի համար,— սուբյեկտիվորեն նա ընդունակ չէր, չուներ այն սովորույթները, որոնք անհրաժեշտ են այդ նպատակի համար, իսկ 1905 թվին նա դեռ ևս պատրաստ չէր հեղափոխության համար։ Սա յես իմ գրքում բավական զգույշ եմ արտահայտել՝ վախենալով, որ դա մեծ աղմուկ կառաջացնի, բայց յերբ վոչ մի աղմուկ չառաջացավ, յես սկսում եմ բոլոր բառերով ասել, որ ռուս բանվորներն իրենց մասսայում 1905 թվին գիտակցաբար հեղափոխական չէյին, որ նրանք տարերայնորեն էյին հեղափոխական։ Սակայն այդ տարերային հեղափոխականությունը կարելի յէ ամեն ուղղությամբ շուռ տալ, նույնիսկ, ինչպես 1902 թվի փետրվարի 19-ին՝ Ալեքսանդր II-ի արձանի ուղղությամբ, որի առաջ բանվորները ցույց էյին սարքել։ Նա կարող էր տերտեր Գապոնի յետևից գնալ, և գնաց իսկապես։ Այնպես որ տարերային այս հեղափոխականությունը մի ինչ-որ քիչ կայուն և անվստահելի յէր։ Ցերբ Իվանովո-Վոզնեսենսկու բանվորները 1905 թվի ամրանը «Կորչի միապետությունը» լսեցին, նրանք սարսափով յետ կանգնեցին և սկսեցին կոչել. չի հարկավոր, չի հարկավոր։ Դա չափազանց անքաղաքավարի և սարսափելի յէր, չափազանց ծակում էր նրանց ականջը։ Մի այլ օրինակ կբերեմ իմ անձնական ապրումներից 1905 թվի հոկտեմբերին։ Հիշում եմ, թե ինչպես բանվորական միտինգների ամենասիրելի հռետոր Ստանիսլավ Վոլսկին, որն այժմ մեզանից շատ է աջացել, գրեթե սպիտակների կողմն է անցել, իսկ այն ժամանակ Մոսկվայի Կոմիտեյի անդամն էր և միևնույն ժամանակ ամենագործունյա հռետորներից մեկը, տխրությամբ ասում էր ինձ.

— Խոսում ես նրանց հետ տերերի ճնշման մասին, բանվորի ծանր վիճակի մասին և այլն, քեզ լսում են, տպավորությունն ու տրամադրությունը բարձրանում է. սկսում ես խոսել ինքնակալության, քաղաքականության մասին, միտինգն սկսում է հալվել, բանվորները ցրվում են. դա մեզ հարկավոր չէ, դա մեզ պետք չէ և այլն։

Ահա թե ինչ դրության մեջ էր 1905 թվի հոկտեմբերին նույնիսկ Մոսկվայի բանվորների գիտակցությունը։ Իսկ Պիտերի բանվորների գիտակցության ցուցանիշը նրանց յերթն է հունվարի 9-ին տերտեր Գապոնի առաջնորդությամբ դեպի Ձմեռային պալատը։ Դուք տեսնում եք, որ ինտելիգենցիան աշխատանք ուներ կատարելու, ահա թե ինչու հեղափոխական ինտելիգենցիայի դերն այդ շրջանում չափազանց մեծ էր։ Չնայած նրան, որ բանվորական կուսակցության պրոբլեմն արդեն գոյություն ուներ և կուսակցությունը ձևակերպվում էր, այնուամենայնիվ, առաջին հեղափոխության ընթացքում, որը մենք հիմա ուսումնասիրում ենք, իդեոլոգիական ղեկավար դերը, անշուշտ, ինտելիգենցիայինն էր պատկանում։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։

Բեկման մոմենտը, իմ տեսակետից, Լենան է, 1912 թ. ապրիլի Լենայի դեպքերը։ Այս մոմենտից էլ կարող ենք հաշվել հեղափոխական բանվորական շարժման գիտակցականությունը։ Մենք այստեղ նորից այն ենք տեսնում, ինչ բուրժուական պարադոքս է անվանում և այն, ինչ մենք դիալեկտիկա յենք անվանում։ Բանվոր դասակարգը պարտություն պիտի կրեր առաջին հեղափոխության մեջ, որպեսզի գիտակցորեն հեղափոխական դառնար։ Սա պարադոքսի նման է հնչում, բայց դա այդպես է։ Հենց 1905—7 թ. թ. բանվորական շարժման ավերման պատճառով բանվորական շերտերի միջև, սկզբում փոքրամասնության մեջ, որոշակի կերպով գիտակից շերտ է առաջանում, մի շերտ, որն իր ուսերի վրա յէ տանում բոլշևիկյան կուսակցությունը. 1912 թվից սկսած նա 1914 թ. հանձինս Պիտերի պրոլետարիատի գրեթե մինչև հեղափոխության է հասցնում գործը (այն ժամանակ արդեն ասում էյին, որ սիտուացիան 1905 թիվն է հիշեցնում) և վերջապես 1917 թ. հեղափոխությունն է կատարում, ըստ սմին 1917 թ. մասսաների դերը, գիտակցորեն հեղափոխական մասսաների դերը, չափազանց ցայտուն է, քանի որ ինտելիգենցիան զգալի կերպով նրանցից յետ է մնում։ Բոլշևիկներն այն ժամանակ տեղերում չէյին, նրանք աքսորում, կամ արտասահմանում՝ էմիգրացիայումն էյին, իսկ տեղերում յեղած ինտելիգենցիան, որը ներկա յէր՝ մենշևիկներն ու էսէրները, անկասկած, ավելի ցածր մակարդակով էր ընթանում, քան բանվորական շարժումը։ Բանվորները հանրապետություն էյին պահանջում, իսկ ինտելիգենցիան պահանջում էր միայն, որ միապետություն չհայտարարեն։

Սա շատ հետաքրքիր համեմատություն է։ Ինտելիգենցիան, մենշևիկները մեծամասնություն կազմելով Գործադիր Կոմիտեյում 1917 թ., չկարողացան իշխանություն դառնալ, իսկ իշխանություն կարողացան դառնալ էսէրները, որոնք փոքրամասնություն էյին կազմում Գործադիր Կոմիտեյում։ Սակայն էսէրները՝ իշխանության գլուխ անցնելով՝ հողի մասին իրենց հիմնական լոզունգը չկարողացան կիրառել։ Դա բնորոշ պատկեր է, թե ինչպես ինտելիգենտները վազում են բանվորական շարժման յետևից, բայց չեն կարողանում նրան հասնել։

Բանվոր դասակարգը վոչ միայն օբյեկտիվորեն հեղափոխության հեգեմոն է դառնում, ինչպես այդ 1905 թ. էր, այլ և սուբյեկտիվորեն շատ ավելի գիտակից հեղափոխական ուժ է դառնում, քան թե այն կիսահեղափոխական ինտելիգենտները, որոնք այն ժամանակ կային տեղերում։

Սա չորրորդ շրջանն է, երբ հեղափոխությունը մասսայական է, խոշոր հեղափոխական շարժումն է, որն, ինչպես ասացի, մինչև օրս էլ շարունակվում է. որքանով որ այժմ միայն հեղափոխական ընդհանուր իդեոլոգիայից անցնում է, եթե կարելի է այսպես ասել, ցայտուն սոցիալիստական իդեոլոգիային,— սա չորրորդ շրջանն է, որով մենք չենք զբաղվի և որով դուք կզբաղվեք ուրիշ դասախոսի հետ։

Ես կանգ կառնեմ չերկրորդ շրջանի վրա։ Դուք տեսնում եք, որ իդեոլոգիական այս կոմբինացիան հնարավորություն չի տալիս ուշի ուշով դիտել առաջին ռուսական հեղափոխությունը՝ որպես զուտ պրոլետարական հեղափոխություն,—իսկ նրա բացատրությունն ավելի հեռուն է գնում։ Նույն այս իդեոլոգիական կոմբինացիան նախատեսնում է այստեղ մի այլ մոմենտի ներկայությունը, այն է՝ հեղափոխական ինտելիգենտական խմբի, որն այդ շրջանում շարժման իդեոլոգիան է մշակում՝ Արեմայան, բանվորների փորձից օգտվելով։ Ինչպես էլ որ լինի, այնուամենայնիվ, ինտելիգենցիան է մշակում և ոչ թե ուրիշ մեկը։ Այն փաստը, որ 1905 թ. նախորյակին՝ հակառակ ընկ. Լենինի պահանջի, որ կոմիտեներում 2 ինտելիգենտին 8 բանվոր լինի, կոմիտեներում այնուամենայնիվ 8 ինտելիգենտին 2 բանվոր էր լինում,— այս փաստը չի կարելի հերքել։ Ընկ. Լենինը հազար անգամ իրավացի չէր, երբ հակառակ հարաբերություն էր պահանջում; բայց այդ հակառակ հարաբերությունը պոստուլատ էր, նրա ցանկությունն էր, իսկ իրականությունն այնպիսի չէր, որ Ակսելրոդը ոչ առանց հիմքի այդ շրջանի կուսակցությունն ուսանողների և ուսանողուհիների կուսակցություն էր անվանում։ Մենշևիկյան այն չեզրակացությունները, որ հանեց Ակսելրոդը, ճիշտ չեն, բայց փաստն ինքն ըստ ինքյան ճիշտ է։ Իրոք, որ այն ժամանակվա մեր կոմիտեներում ուսանողներն ու ուսանողուհիներն էյին գերակշռում։ Սա այսպես է, եթե մենք, այսպես ասած՝ շարժումը վերևից դիտենք։ Բայց եթե մենք շարժումը ներքևից դիտենք, նորից այստեղ ոչ պրոլետարական էլեմենտներ կգտնենք։ Այդ ոչ պրոլետարական էլեմենտը գյուղացիությունն էր։

Այստեղ նախ և առաջ այն փաստը պիտի մատնանշել, որ հենց պրոլետարիատի հանդես գալը Ռուսաստանում՝ որպես այդպիսի հսկայական մի մասսա, մասսայական պրոլետարական շարժման հնարավորությունը, պրոլետարիատի արագ աճումը ոչ այլ ինչ է, բայց եթե հետևանք մեր գյուղացիական տնտեսության վորոշ դրության։

Ինչպես էլ որ լինի, վորքան ուզես կարելի չէր բանվորին գյուղացուն հակադրել, բայց բանվորն աճում էր մուժիկից այն պայմանների ազդեցության ներքո, որոնցում գտնվում էր այն ժամանակվա գյուղացիությունը։ Պարզաբանելու համար մի չերկու թիվ բերեմ. չես վերցնում եմ 1887—1897 թ. թ. տասնամյա շրջանը։ Մոտավորապես մենք ունենք՝ մետաղագործներ - 103.000 հոգի 1887 թ և 153.000 հոգի՝ 1897 թ. տեկստիլ բանվորների մեջ ավելի բնորոշ թիվ է. 1887 թ.—309.000, իսկ 1897 թ.—642.000 հոգի։ Պետք է նկատի ունենալ, որ մեր տեկստիլ բանվորները, մեր պրոլետարիատի ամենագյուղացիական մասն են կազմում։

Հարց է ծագում, ինչն էր այդպես առաջ քշում պրոլետարիատի զարգացումը։ Յեթե մենք մեկնենք բացառապես միայն խոշոր արտադրության զարգացումից, այն ժամանակներում այլերկրյա կապիտալի Ռուսաստանում

արմատներ ձգելուց և այլն, ապա մենք կստանանք միայն պատասխանի կեսը։ Իհարկե, առանց խոշոր կապիտալի կապիտալիզմ չի կարող լինել, դա ինքն ըստ ինքյան պարզ է։ Բայց միայն դա չէր բազմացնում պրոլետարիատը, որ ռուս ձեռնարկու-կապիտալիստը կարողացավ տասնամյակի ընթացքում ֆաբրիկաների և գործարանների բանվորների քանակը կրկնապատկել, նրան աճեցնում էր ագրարային այն ճգնաժամը, վորով համակված էր ռուսական գյուղը, պրուսական գյուղը և ամեն տեսակի այլ գյուղ XIX դարի 80-ական - 90-ական թվականներին։ Մնում է հիշեցնել միայն ձեզ, մանրամասն կերպով դրա վրա յես կանգ չեմ առնի,—որ հացի գները 1880 թվից սկսած սկսեցին համաշխարհային շուկայում զգալի կերպով ընկնել։

Յեթե մենք վերցնենք 1871—75 թ. թ. հնգամյակի գները, կստանանք՝ ցորենի համար 144 կ., հաճարի համար՝ 78 կ.։ 1891—95 թ. թ. հնգամյակում՝ ցորենինը՝ 81 կ., հաճարինը՝ 65 կ.։ Այսպիսով գները վորոշակի կերպով ցած էյին գլորվում, և ցած գլորվող գների այս ազդեցության ներքո գյուղացիական տնտեսությունը քայքայվում էր, մի քայքայում, որի մասին նույնպես չարժե յերկար կանգ առնել, և այստեղ նորից լուսաբանելու համար մի չերկու թիվ կբերեմ։ Այս թվերն այս կամ այն չափով բոլորին հայտնի չեն, բայց հիշեցնել չի խանգարի։

Կենտրոնական 9 նահանգների համար 188…—93 թ. թ. վեցամյակի համար բանվոր անասունների, այսինքն՝ ձիերի նվազումը գրեթե 25% էր կազմում. 4 միլիոն ձիուց պակասեց ավելի քան 900.000, ինչպես վկայեց ձիերի վիճակագրությունը, որն այն ժամանակ ռազմական նպատակներով կանոնավոր կերպով կատարվում էր։

Օրյոլի նահանգի մասին հետևյալ թվերն ունենք. 1881 թվին 221.000 ձի, 1893 թ. 188.000 ձի, 1899 թ. 177.000 ձի և այլն։

Այսպիսով, գյուղացիական տնտեսության անկումն ավելի և ավելի հեռու չէր գնում, և այստեղ մենք ունենք ոչ միայն մեր գործարաններում պրոլետարիատի հանդես գալու բանալին, այլև սովի բանալին, ինչպիսին էր 1891 թվի սովը և այլն, վորովհետև ուրիշ թվեր ցույց են տալիս, որ վորքան գյուղացիական տնտեսությունն ավելի քիչ էր ապահովված բանվոր անասունով, այնքան ավելի ցածր էր բերքը։ Յեթե վերցնենք այն խմբերը, ուր դեսյատինին 1,2-ից մինչև 1,4 անասուն է ընկնում, բերքը կլինի մեկին 2,7։ Յեթե վերցնենք այն խմբերը, ուր մեկ դեսյատին վարելահողին $1^1/_2$-ից մինչև $2^1/_2$ անասուն է ընկնում, 1-ին կստանանք 2,9 և այլն. յեթե մի դեսյատինին ընկնում է 3-ից ավելի անասուն—մեկին՝ 3,4։ Բերքն ավելանում է լծկան անասունի քանակի ավելացման հետ, և դա միանգամայն բնական է, քանի որ անասունը ոչ միայն մեխանիկական ուժ է, այլև պարարտացում է տալիս։ Վորքան ավելի քիչ է անասունը, այնքան ավելի վատ է պարարտացվում հողը և այնքան ավելի վատ է բերքը։

Այսպիսով, այս ֆակտորի՝ հացի գների անկման ազդեցության ներքո սկսվում է 80—90-ական թվականների ռուսական գյուղացիական տնտեսության քայքայումը։ Հացի գների անկման և նախկին մակարդակի վրա մնացող հարկերի պայմաններում գյուղացիներն ստիպված էյին իրենց հավելյալ պրոդուկտի ավելի ու ավելի մեծ մասը տալ, իսկ իվերջո՝ նաև իրենց անհրաժեշտ պրոդուկտը տալ։ Գյուղացին քայքայվում էր և հողազուրկ, կամ

կիսահողազուրկ բանվոր էր դառնում, վորն ստիպված էր աշխատանք վորոնել կամ կալվածատիրոջ ագարակում, կամ գործարանում։

Ահա թե ինչ պրոցես էր տեղի ունենում 80—90-ական թվականների ռուսական գյուղում, մի պրոցես, առանց վորի չի կարելի պատկերացնել Ռուսաստանի այն արագ պրոլետարիզացիան, վորը տեղի յեր ունենում նույն 80—90-ական թվականներին, իսկ առանց Ռուսաստանի այս ինտենսիվ պրոլետարիզացիայի չի կարելի պատկերացնել և այն պրոլետարական շարժումը, վորը ռուսական հեղափոխության ավանգարդն էր կազմում, վորովհետև ինտելիգենցիայի ջանքերը գլխավորապես բանվոր դասակարգի կողմն եյին դարձված, և դա ճիշտ է, վորովհետև այնտեղ միայն հեղափոխական ինտելիգենցիան կարողացավ արձագանք գտնել։ Այսպիսով, պրոլետարական այս շարժումն իր արմատներով իսկ տնտեսապես, օբյեկտիվորեն գյուղացիական մասսայի ն է հենվում։ Յեթե մոռանանք մենք այս կոնյունկտուրան, յեթե մոռանանք մենք գյուղացիության այս պրոլետարիզացիան, նրա գյուղական կյանքը լքելը 1880—90 թ. թ., ապա մենք չենք հասկանա, թե վորտեղից հանդես յեկավ պրոլետարիատը, վորտեղից առաջացավ 90-ական թվականների գործադուլային շարժումը և այլն։ Գործադուլային այս շարժումն առանց դրան հանդես չեր գա, վորովհետև կասկածից դուրս փաստ է, վոր գյուղացիության պրոլետարականացումը մեզանում ավելի արագ էր առաջ գնում, քան թե պրոլետարիատի աճումը ֆաբրիկաներում և գործարաններում։

XIX դարի վերջին մեզանում մոտավորապես հաշվում եյին $2^1/_2$ միլիոն գործազուրկ պրոլետար, այսինքն՝ պրոլետարականացած գյուղացիներ, վորոնք չեյին կարողանում իրենց համար աշխատանք գտնել, և դուք կռահում եք, վոր սա վորպես մեծ բեռ պետք է ճնշեր այն բանվորների աշխատավարձն ու աշխատանքի պայմանները, վորոնք տեղ եյին գտնում ֆաբրիկաներում, իսկ աշխատանքի սարսափելի պայմանները, չափազանց դժվարին և յերկար բանվորական օրն ու վատ աշխատավարձն այս սոված բանվորին գործադուլային շարժման եյին դրդում։ Ինչպես տեսնում եք, 90-ական թվականների այս գործադուլային շարժումը նույնպիսի անհրաժեշտ կապով կապված էր այն բանի հետ, ինչ գյուղում էր կատարվում։

Յես պետք է կանգ առնեմ մի այլ մոմենտի վրա, այն է՝ արդյոք սրա հետ միաժամանակ գյուղում չի՞ յեղել վորևէ պրոցես, վորն այնտեղ պրոլետարիատին դաշնակիցներ տար թեկուզ վորոշ ժամանակով։ Յեվ ահա այստեղ մենք պետք է ճանաչենք, վոր ռուսական գյուղացիության պրոլետարիզացիան, իհարկե, յերկսայրի պրոցես էր։ Միակողմանի պրոցեսներ չեն լինում։ Այն, ինչ մեկն է կորցնում, մի ինչ վոր ձևով մյուսն է ձեռք բերում։

Վորքան վոր ռուսական գյուղում աճում էր պրոլետարիատը, նրանում աճում էր նաև գյուղական մանր բուրժուազիան։ Գյուղական այս մանր բուրժուազիան հնարք էր գտնում աճելու նաև ագրարային ճգնաժամի շրջանում՝ կառչելով այս ճգնաժամի վորոշ վոլորումներին։ Այստեղ նախ և առաջ պետք է հիշատակել այն փաստը, վոր մինչ ցորենի գինն անընդհատ ցած էր գլորվում, հաճարի գինն ընկնում էր այնպես, ինչպես վերևից ընկնում է գլխիվայր գցած թուղթը՝ զիգզագներով։ 1876—80 թ. թ. հաճարի փութն արժեր 91 կ.։ 1881—85 թ. թ.՝ 98 կ., 1886—90 թ. թ.՝ 67 կ. և

այլն. մինչդեռ ցորենի գինը շարունակ ընկնում էր, հաճարի գինը տատանվում էր և միայն 90-ական թվականների սկզբին նա վերջնականապես հաստատապես ընկավ։ 80-ական թվականների այս սկզբի շրջանը նախ և առաջ օգտագործեց ունևոր գյուղացին։

Այդ ժամանակ ծագում է գյուղացիական բանկը, և նա պատահականորեն չի ծագում։ Այդ ժամանակ գյուղական այդ բուրժուազիան սկսում է հող ձեռք բերել, մասամբ կալվածատիրական, մասամբ հողաբաժինները կապալով վերցնելով և համագյուղացիների հողերն իրենց ձեռքում կենտրոնացնելով։ Սա մի պատկերն է։ Ապա նույնիսկ ագրարային ճգնաժամի շրջանում,—շատ բնորոշ են այն փաստերը, վոր յես ունեմ, բայց յես չեմ խոսի դրանց մասին,—այս շրջանում գյուղացիական բուրժուազիայի խնայողությունները աճում են, ընդ սմին այդ խնայողություններն ըստ խնայողական գանձարկղների տվյալների 1891 թվին մաքսիմալ չափերի յեն հասնում։ Դա մի փաստ է, վոր դուք ինձ մոտ կգտնեք, նա վերցրած է ընկ. Լենինի մի հոդվածից։ Գյուղացիական բուրժուազիայի խնայողությունների աճման այս փաստը, գյուղացիական խնայողական գրքույկների և յուրաքանչյուր գրքով արված մուծումների աճումը—չափազանց բնորոշ փաստ է։

Սրան մենք մի այլ փաստ կարող ենք ավելացնել, անհատական և ընդհանրապես մանր-բուրժուական սեփականության աճման փաստը, մանավանդ, յեթե վերցնենք հարավ-տափաստանային շրջանը։ Այնտեղ մենք կարող ենք հետևյալ թվերը գտնել.

1877 թվին նադելային հողը հարավային տափաստանային շերտում 5,9 միլ. դեսյատին էր կազմում։ Անձնական գյուղացիական սեփականությունը՝ 0,6 միլ. դեսյատին։ Գյուղացիական հասարակական սեփականությունը՝ 0,03 միլ. դեսյատին և վերջապես ընկերությունների սեփականությունը՝ պարզապես զերո։ Իսկ վերցրեք 1905 թիվը, մոտավորապես 28 տարի հետո։ (Հասարակությունը—հող գնած համայնքն է, իսկ ընկերությունը—մանր կուլակներն են, վորոնք ընդհանուր միջոցներով հող են գնել)։ Նադելային գյուղացիական հողը 5,9-ից մինչև 7-ի աճեց։ Անձնական գյուղացիական սեփականությունը 600.000 դեսյատինից մինչև 1.900.000 դես. բարձրացավ, այսինքն՝ յեռապատիկ։ Հասարակությունների սեփականությունը, ճիշտ է, մեծանում է, բայց չնչին տոկոսն է կազմում՝ 0,41, այնուամենայնիվ կես միլիոն դեսյատինից պակաս։ Իսկ ընկերությունները, վորոնք միանգամայն բացակայում եյին 1877 թվին, արդեն 800 հազար դեսյատին հողի տեր են։

Յեթե վերցնենք նադելային և մանր-բուրժուական հողի հարաբերությունը, առաջին դեպքում դուք 10:1-ի միայն կստանաք, իսկ յերկրորդ դեպքում՝ 100:38,5։ Առաջին դեպքում գյուղացիների անհատական հողերը ամբողջ տարածության $10^0/_0$-ն են կազմում, իսկ յերկրորդ դեպքում՝ $40^0/_0$-ը։ Այսպես էր աճում գյուղացիական անհատական հողատիրությունը։

Իսկ հիմա հիշեցեք կուլակի այն բնութագրությունը, վորը յես կարդացի ըստ Ենգելգարդտի։ Հիշեցեք, վոր կուլակն առաջին լիբերալն էր գյուղում, վոր նա քաղաքականապես ավելի գիտակից էր (վոչ թե պրոլետարական իմաստով, իհարկե, այլ գյուղացիական դասակարգային գիտակցության իմաստով)։ Այս միջավայրից դուրս յեկավ Ստեփան Խալտուրինը։ Նա դուրս յեկավ Վյատկայի նահանգի ունևոր գյուղացիական ընտանիքից։ Դուք կհասկանաք, վոր այս աճող գյուղացիական բուրժուազիայի մեջ աճում էր

պրոլետարիատի չափազանց պատահական, ճիշտ ե և վոչ յերկար ժամանակով, բայց անկասկած դաշնակիցն ընդդեմ ինքնակալության։ Պետք եր միայն, վոր այս դաշնակցի և այն ուժի, վորի վրա հենվում եր ինքնակալությունը, այսինքն՝ կալվածատիրոջ հարաբերություններն առանձնապես սրվեյին։ Այս սրումը բավական եր, վորպեսզի այս շերտը վերջնականապես հեղափոխության կողմը քաշել, այս շերտը հակակալվածատիրական դարձնել՝ այս բառի իսկական իմաստով, և կնշանակի, նրան պրոլետարիատի վորոշակի դաշնակիցը դարձնել ինքնակալության դեմ պայքարի գործում։ Սա փոփոխություն առաջացրեց հացի շուկայի կոնյուկտուրայում 90-ական թվականների յերկրորդ կիսում։ 90-ական թվականների կեսերից սկսած հացի գներն սկսում եր վեր մագլցել, և մի կողմից գյուղացիական տնտեսության և մյուս կողմից կալվածատիրական տնտեսության այն հարաբերական հակասությունը, վորն արդեն զգացվում եր 60-ական թվականներին, 90-ական թվականների վերջից չափազանց սուր ե դառնում։ Այս յերկու ուժերի՝ գյուղացիների և կալվածատերերի հարաբերությունների սրումը հացի շուկայում պետք ե միանգամայն անխուսափելի կերպով նրանց ճակատ-ճակատի բերեր։

Ահա ձեզ այն հիմքը, այն ֆոնը, վորի վրա ծավալվում ե 1905—7 թ. թ. բանվորական հեղափոխությունը։ Մանրամասն չեմ շարադրի այս հեղափոխության դեպքերի ընթացքը,—դուք դա իմ գրքույկում կգտնեք, բայց հաջորդ դասախոսության մեջ յես այս ամբողջ շրջանի Ռուսաստանի դասակարգային հարաբերությունների վորոշ անալիզը կտամ։

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Անցյալ դասախոսությանս մեջ յես սկսեցի մեր առաջին հեղափոխության և դասակարգային հարաբերությունների բնութագրությունը և բնութագրեցի յերկու դասակարգերի դրությունը. նախ՝ բանվոր դասակարգի, ընդ սմին յես շարունակ յենթադրում եյի, վոր դուք ծանոթ եք իմ վերջին փոքրիկ գրքույկին կամ կարող եք նրան ծանոթանալ, և մյուս կողմից, վոր ձեր ձեռքը կարող են ընկնել Կ. Սիդորովի այն աղյուսակները, վոր յես ձեզ ցույց տվի։ Հետո յես անցա գյուղացիների բնութագրությանը և այստեղ յես կարողացա նշել մեր գյուղի այն շերտը, վորը դեպի բուրժուազիան ե անցնում՝ կուլակային գյուղացիությանը, վորը դեմոկրատիկ հեղափոխության նկատմամբ, անշուշտ, հառաջադեմ շերտ եր։ Յես նշեցի կալվածատերերի հետ ընդհարումների սրումը, վորը ծագել ե հացի աճրացող գների հիման վրա, և վորպես սրա հետևանք՝ գյուղացիների և կալվածատերերի հարաբերությունների սրումը, գյուղացիական պոռթկումները, վորոնց մասին յես ձեզ չեյի պատմում, քանի վոր իմ գրքույկում նրանք բավական մանրամասն են շարադրված։ Բանվորական և գյուղացիական շարժման աճումը քիչ թե շատ վորոշակի կերպով մոտալուտ ընդհանուր պայթյունն եր գուշակում։ Բայց այդ պայթյունը տիրապետող դասակարգերի այս կամ այն քաղաքականությամբ կարող եր հետաձգվել գրեթե անորոշ ժամանակով։

Վորպես որինակ արդի Անգլիան ե ծառայում, ուր հարաբերությունների սրությունը,—վոչ թե բանվորների և գյուղացիների, բուրժուազիայի և կալվածատերերի, այլ բանվորների և բուրժուազիայի միջև եր, քանի վոր այնտեղ բառի մեր իմաստով կալվածատերեր և գյուղացիներ գրեթե չկան,— այդ հարաբերությունների սրությունը շատ մեծ լարվածության ե հասել, որինակի համար, 1912 թվականներին, այնպիսի մեծ լարվածության, վորը հիշեցնում ե ռուսական 1903—1904 թ.թ.։ Բայց և այնպես, հիմա արդեն 1924 թիվն ե, իսկ Անգլիայում բանվորական հեղափոխությունը դեռ չի սկսվել, և այն մարդիկ, վորոնք գիտեն Անգլիան, դժվարանում են գուշակել, թե բանվորական հեղափոխությունն Անգլիայում մոտակա տարիներում կսկսվի՞, թե՞ վոչ։ Հնարավոր ե, վոր մենք մի ամբողջ շարք տարիներով նրանից բաժանված ենք։ Նոր պատերազմը միայն կարող ե այդ հեղափոխությունն արագացնել, և քանի վոր այդ նոր պատերազմը՝ այս անգամ Անգլիայի և Ֆրանսիայի միջև, բավական վորոշ կերպով արդեն զգացվում ե, մենք կարող ենք հուսալ, վոր Անգլիան քիչ թե շատ մոտալուտ պրոլետարական հեղափոխության ճանապարհին ե գտնվում, սակայն Անգլիան լավ գիտցող և վոչ մի մարդ այդ չի կարող պնդել։ Անգլիական բուրժուազիայի քաղաքականությունն արավ այդ, ամեն տեսակի փականքների բացման քաղաքականությունը, ամեն տեսա-

կի ձգձգումների քաղաքականությունը, բուրժուազիայի կողմից բանվորներին ամեն տեսակի ավելի նուրբ խաբեբայությունները, ընդ սմին վերջին և ամենահամարձակ խաբեբայությունը՝ ձեզ հայտնի բանվորական մինիստրությունն է։ Սրա հետևանքով ընդհանուր հեռանկարում անխուսափելի պայթյունի մոմենտը կարող է հետաձգվել շատ երկար տարիներով, և պայթյունի պատճառները չեն սպառվում պայթեցնող դասակարգերի բնութագրությամբ, չեթե կարելի չե այսպես արտահայտվել։

Հասկանալու համար, թե ինչու հենց 1905 թվին բռնկվեց մեզ մոտ հեղափոխությունը, պետք է մյուս կողմն էլ հաշվի առնել, պետք է պարզել այն մասսայի ընդդիմադրական ուժը, որը դիմադրում էր պայթյունին, ուրիշ խոսքով՝ այն հասարակական դասակարգերի ընդդիմադրության ուժը և ընդդիմադրության կարողությունը, վորոնք փակել էին հեղափոխության ճանապարհը և վորոնց հեղափոխությունը պետք է տապալեր։ Հենց այս հարցին եմ չես հիմա անցնում։

Բայց ռուսական բուրժուազիայի և այդ տարիների ռուսական խոշոր հողատիրության տրամադրությունն ու դրությունը հասկանալու համար մեզ անհրաժեշտ է՝ չսահմանափակվելով արդեն դասակարգային ընդհարումների միայն ընդհանուր մարքսիստական բնութագրությունով՝ մի քիչ ավելի մոտկից նայել պատմական այն մոմենտին, վոր ապրում էր Ռուսաստանը XIX դարի վերջին և XX դարի սկզբին և վորը խթան, կայծ հանդիսացավ, անմիջականորեն պայթյուն առաջացնելով. այդ խթանը կլինի, չեթե նկատի ունենանք ավելի արգիական տիպի պայթուցիկ նյութերը, վորոնք պայթում են հարվածից, հրումից. դա կայծ է, չեթե մենք մոտենանք հին Ռուսաստանին, վորպես հին, լավ վառոդի։ Այսպես թե այնպես, ներկա դեպքում պայթեցնողը չեղավ ճապոնական պատերազմը։ Ճապոնական պատերազմի մասին չես մի ամբողջ գլուխ եմ գրել իմ «Համառոտ ուրվագծերում», գրել եմ 1921 թվի ամրանը։ Ցեվ ահա ձեզ մի նմուշ այն բանի, թե վոր աստիճանի արագ կերպով մեր օրերին հնանում է ամեն մի գրված պատմություն։ Այս գլուխը, անկասկած, հնացել է, չնայած նրան, վոր նա շատ թարմ արխիվային մատերիալների վրա չե հիմնված։ Ցես չկարողացա հրաժարվել հին ֆորմուլայից, ըստ վորի Նիկոլայն իր հիմարության և ագահության պատճառով պատահմամբ առիթ տվեց պատերազմի, մի գուցե, ինքը բոլորովին էլ չցանկանալով այն։ Նիկոլայի այս հիմարությունն ու ագահությունն ինձ մոտ բավական ռելյեֆ կերպով են նկարագրված, հուսով եմ, վոր դուք այդ կընդունեք։ Մինչդեռ այն փաստաթղթերը, ավելի ճիշտն ասած՝ այն աղբյուրները վորոնք իմ ձեռքն ընկան արդեն այդ գլուխը գրելուց հետո՝ մի կողմից՝ Կուրոպատկինի հուշատետրը, մյուս կողմից՝ Վիլհելմ II-ի կազմած հետաքրքիր պատմական աղյուսակները, վորոնք նրա մեմուարների լրացումն են, չերրորդ կողմից՝ Նիկոլայի և Վիլհելմի նամակագրությունը և չորրորդ կողմից՝ Վիտեյի մեմուարները,— այս բոլոր փաստաթղթերը հնարավորություն են տալիս հարցն այլ կերպ դնելու։ Անկասկած է, վոր Նիկոլայը, վոր ձեռքը մեկնել էր կորեական հարստություններին, պատահմամբ չէր, վոր ստիպված չեղավ պատերազմ սկսել, այլ նա ինքն էր պատերազմ ուզում, ամեն կերպ ձգտում էր պատերազմի - դա նրա նպատակն էր։ Նախ և առաջ Կուրոպատկինի բնութագրությունը։ Ահա մի քաղվածք նրա օրագրից։ Պետք է նկատի ունենալ, վոր Կուրոպատկինն իր հիշողությունները թարմ կերպով, համապատասխան խոսակցություններից հետո չեր գրի առնում։ Ցեվ ահա Վիտեյի հետ ունեցած մի խոսակցության ժամանակ, չերբ նա նրա հետ ձիով զբոսնում էր (Վիտեն շատ էր սիրում ձիարշավը և Կուրոպատկինի հետ մարզվում էր մանեժում), 1903 թվի փետրվարի 16-ին Կուրոպատկինն ասաց Վիտեյին.

«Մեր թագավորի գլխում հսկայական պլաններ կան. վերցնել Մանջուրիան Ռուսաստանի համար, Կորեան միացնել Ռուսաստանին, չերազում է Տիբեթն էլ իր տիրապետության տակ ձգել, ուզում է Պարսկաստանն էլ գրավել, գրավել վոչ միայն Բոսֆորը, այլ և Դարդանելը»։

Այսպիսի պլաններ ուներ Նիկոլայը 1903 թվին, և այն, ինչ Կուրոպատկինն էր ասում, փայլուն կերպով հաստատվում է այլ աղբյուրներով։ Դրանցից մեկի անունը չես արդեն տվի—դա Վիտեյի մեմուարներն են։ Վիտեն շատ մանրամասն է պատմում այդ պլանների մասին,—և մենք հետագայում արխիվում դոկումենտալ լրացումներ գտանք Վիտեյի այն պատմության մասին, ինչպես Նիկոլայը փորձում էր Բոսֆորը գրավել դեռևս 1896 թվին, այսինքն՝ գահ բարձրացնալուց մի տարի հետո։ Կազմակերպվել էր տեխնիկապես նախապատրաստված ռազմական արշավախումբ. մենք մինչև հիմա չել չկարողացանք պարզել, թե ինչու նա խափանվեց, ինչը նրան խափանեց, բայց գործն այնքան էր հեռու գնացել, վոր արդեն զորքեր, տրանսպորտային նավեր էին կենտրոնացվում, հեռագրների վորոշ շիֆր սահմանեցին, վորոնք պետք է ազդակ հանդիսանային զորքերը նավ նստեցնելու և Կոստանդնուպոլիս ուղարկելու համար,—մի խոսքով՝ միանգամայն պատրաստ ռազմա-ծովային արշավախումբ էր այդ, միանգամայն պատրաստ դեսանտ։ Դա 1896 թվին էր։ Պարզ է, վոր մի ինչ վոր բան սրան խանգարել է։ Վիտեն դա աստծու կամքին է վերագրում։ Մենք՝ կոմունիստներս չենք կարող, իհարկե, նման բացատրություն ընդունել։ Ակներև է, վոր «աստծու կամքը» ինչ վոր կոնկրետ ձևերով է արտահայտվել։ Հիմա մենք դեռ չգիտենք այդ, բայց ինքն արշավախումբը կասկածից դուրս և չափազանց կարևոր մի փաստ է։ Արդեն 1896 թվին, չերբ վոչ մի Բեզոբրազով, վոչ մի Յալու գետ, վոչ մի Կորեա չկար, Նիկոլայը պատրաստվում էր կռիվ սկսելու։ Նույնը և հատկապես ճապոնական ընդհարման մասին պետք է ասել։ Հիմա Վիլհելմի աղյուսակներից մենք գիտենք, վոր դեռևս 1901 թվի սեպտեմբերին Դանցիգում տեսակցության ժամանակ Նիկոլայն ասում էր Վիլհելմին, վոր Ռուսաստանը պատրաստվում է Ճապոնիայի դեմ պատերազմելու։ Դա 1901 թվին էր, այսինքն՝ պատերազմն սկսելուց 3 տարի առաջ։ Վոր սա պատահմամբ բաց թողած մի նախադասություն չէր, ցույց են տալիս մի տարի հետո Վիլհելմի գրած հիշողությունները՝ 1902 թվի սեպտեմբերին։ Նիկոլայը նորից ասում էր նրան, վոր Ռուսաստանը պատրաստվում է Ճապոնիայի դեմ պատերազմելու՝ նշանակելով ժամանակը—1904 թիվը։ 1903 թվին, նոր տեսակցության ժամանակ (նրանք տեսնվում էին գրեթե ամեն տարի) Նիկոլայն ասաց Վիլհելմին. 1904 թվին պատերազմ դեռ չի լինի, վորովհետև Ռուսաստանը դեռ պատրաստ չի։ Նիկոլայը համոզված էր, վոր պատերազմ հայտարարելու մոմենտը նա իր ձեռքումն է պահում, վոր ճապոնացիք հանգիստ կսպասեն, մինչև վոր նա պատերազմ հայտարարի։ Սակայն ճապոնացիք այնքան էլ

հիմար չէին։ Նրանք ավելի շուտ պատերազմ հայտարարեցին, քան թե այդ Նիկոլայը կուզեր, ավելի շուտ, քան թե նա պատրաստ էր, վորովհետև չե-թե դուք ռուսական նավատորմիղի ռազմական ուժը, ինչպիսին վոր նա 1904 թվին էր, պատերազմի հայտարարության մոմենտին, այն եսկադրային ավելացնեք, վորը կործանվեց Ցուսիմայի մոտ 1905 թվի մայիսին, դուք կստանաք մոտավորապես յերկու անգամ ավելի մեծ ուժ, քան ճապոնական նավատորմիղը։

Այսպիսով, յեթե Նիկոլայը կարողանար նախապատրաստվել, նա, հավանական է, վոր շատ տվյալներ ունենար ճապոնացիներին ճզմելու, վորովհետև կրկնակի ուժի հանդեպ վոչ մի Տոգո ծովակալ, յերեի, վոչինչ չէր կարողանա անել։ Ռուսական ցամաքային բանակի մասին խոսք անգամ չի կարող լինել։ Այստեղ Ռուսաստանը 4 $^{1}/_{2}$ միլիոն վարժեցրած զինվորներ ուներ և Ճապոնիայից շատ ավելի ուժեղ էր, վորը պատերազմի սկզբում ընդամենը 640 հազար վարժեցրած զինվոր ուներ։ Այսպիսով, բոլոր շանսերը Նիկոլայի ձեռքումն եյին և նա հույս ուներ վոչ միայն կորեական ինչ վոր հանքեր գրավել և այլն—դա նրա անձնական ավարն էր այդ պատերազմից, վորը նա վորպես «մաղարիչ» իր գրպանն էր ուզում դնել,—նա հույս ուներ ավերել Ճապոնիան, և Ճապոնիան ավերելով, Կորեան ավերելով, դրանով իսկ Ռուսաստանի հեգեմոնիան հաստատել Հեռավոր Արևելքում, գոնե նրա հյուսիսային կիսում, մինչև Դեղին գետի հոսանքը, ուր մտնում է և՛ Հյուսիսային Չինաստանը Պեկինով, և՛ Մանջուրիան, և՛ Կորեան, և հենց Ճապոնիայում պետք է ռուսական դրոշակը ծածանվեր։

Ահա թե ինչպես էր գործը պատկերացնում Նիկոլայը։ Այսպիսով, Նիկոլայի քաղաքականությունը յերբեք էլ պատահական, հանդուգն ավանտյուրիզմ չէր, թեպետ, անկասկած, ավանտյուրիզմի ելեմենտներ նրա մեջ կային, քանի վոր խոսքն այդպիսի «մաղարիչի» մասին է, այլ վոչ միայն իմպերիալիզմի համար բնորոշ վորոշակի հարձակողական ռազմական քաղաքականության մասին։ Նիկոլայ II իր թագավորության սկզբից արդեն Ռուսաստանի վերջին իմպերիալիստական թագավորն էր. նա նույնպիսի իմպերիալիստական կառավարող էր, ինչպիսին Ֆրանսիայում Պուանկարեն էր, Անգլիայում՝ Գրեյն ու Կերզոնը, Գերմանիայում՝ ինքը Վիլհելմ II-ը, Բյուլովը և այլն։ Նա միանգամայն հավասար էր Արևմտյան Յեվրոպայի այս ձեռնկուներին, հավասար վոչ, իհարկե, իր տաղանդով, իր շնորքով, այլ իր ախորժակով։

Յեվ ահա, կառավարող անձանց ախորժակները, և հատկապես այնքան քիչ որիգինալ անձանց, ինչպիսին Նիկոլայ II է,—վորովհետև սա ամենասովորական գվարդիական պորուչիկ էր, ինչպիսին միայն կարելի յե պատկերացնել,—այս ախորժակները մեր առաջ այն հողի հարցն են դնում, վորի վրա նրանք բուսնում են։ Չէ վոր չի կարելի պատկերացնել, վոր մեզ մոտ Ռուսաստանում յերկնքից գլորված իմպերիալիստական ցար էր, այն էլ հիմար, վոչ որիգինալ ցար, վորին չի կարելի կասկածել նրանում, վոր նա իր ժամանակից բարձր էր, վոր նա իր բուրժուական սերնդի առաջը կտրեց։ Ռուսական բուրժուազիան դեռ ևս իմպերիալիստական չէր, իսկ նրա ցարն արդեն իմպերիալիստական էր։ Այ թե իր ժամանակի առաջնորդ է, հա։ Նիկոլայն ամենից քիչ է առաջնորդի նման, նա ամենից քիչ է նմանվում այն մարդուն, վորը նոր ուղիներ է հարթում։ Այս դերի համար նա բոլոր

Ռոմանովների մեջ ամենքից քիչ էր հարմար։ Ակներև է, վոր ինչ վոր հող և յեղել, ակներև է, վոր ռուսական իմպերիալիզմը մի քիչ ավելի հասակով է, քան մենք սովորաբար պատկերացնում ենք, և վոր նա անձրևից հետո սնկի նման 1914 թվի նախորյակին չբուսավ, յերբ իմպերիալիստական տենդենցիայի առկայությունը ռուսական քաղաքականության մեջ վոչ վոք չի բացասում,—վոր պատերազմի նա քառորդ դար էր նախապատրաստվում։

Մինչև այն ժամանակ, քանի մենք իմպերիալիզմն ու իմպերիալիստական պատերազմն ըստ Գիլֆերդինգի եյինք հասկանում, այսինքն՝ այնպես եյինք պատկերացնում, վոր իմպերիալիզմը ֆինանսական կապիտալի արտաքին քաղաքականությունն է, իսկ այդ ֆինանսական կապիտալի տիրապետության հատկանիշները մեզ համար սինդիկատներն ու տրեստներն եյին, արդյունաբերության և առևտրի տրեստիզացիան և սինդիկալիզացիան էր, մինչ այդ, մեզ համար դժվար էր, իհարկե, իմպերիալիզմի ֆորմուլայի մեջ մտցնել նույնիսկ 1914 թվի կայսերական Ռուսաստանը, էլ չխոսելով ավելի վաղ ժամանակների մասին. վորովհետև թեպետ մենք և՛ սինդիկատներ, և՛ տրեստներ ունեյինք, բայց նրանք յերբեք վորոշիչ դեր չեյին խաղում, նրանք վոչ մի կերպ նույնիսկ 1914 թվին դրության տեր չեյին։ Բայց այդ շրջանում նրանք դրության տեր չեյին նաև Ֆրանսիայում, վոչ էլ Անգլիայում, բայց Գիլֆերդինգի ֆորմուլայի տակ քիչ թե շատ մաքուր ձևով յերկու յերկիր եյին միայն տեղավորվում՝ մի կողմից Միացյալ Նահանգները, մյուս կողմից՝ Գերմանիան։ Այդ պատճառով Գիլֆերդինգի տեսակետից դժվար էր խոսել անգամ անգլիական և ֆրանսիական իմպերիալիզմի մասին, վորովհետև ըստ Գիլֆերդինգի իմպերիալիզմի հիմնական հատկանիշը՝ տրեստներով և սինդիկատներով ֆինանսական կապիտալի տիրապետությունը՝ չկար վոչ այստեղ, վոչ այնտեղ։ Ֆրանսիայում և Անգլիայում, իհարկե, կար ֆինանսական կապիտալի տիրապետություն, բայց նա այլ ձևեր էր ընդունում։ Ռուսաստանում ևս, իհարկե, ֆինանսական կապիտալի տիրապետություն կար, բայց դարձյալ այլ ձևի։ Լենինն իր «Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի վերջին ետապ» գրքում չափազանց եյական, արդյունավետ ուղղում մտցրեց Գիլֆերդինգի ֆորմուլայում, վորը դուք յերևի հիշում եք։ Նրա համար իմպերիալիզմը վոչ թե ֆինանսական կապիտալի սպեցիֆիկ արտաքին քաղաքականությունն է միայն, այլ վորպես այդ կապիտալի և կապիտալիզմի վորոշ տենդենց մենաշնորհումներ սահմանելու, ընդ սմին այս մենաշնորհումների տարբերությունն ավելի հին շրջանի մենաշնորհումներից նրանումն է կայանում, վոր նրանք անհրաժեշտորեն տվյալ մոմենտում կապիտալիստական հասարակության տնտեսական ստրուկտուրայից չեյին բղխում, իսկ ինչ իմպերիալիզմի շրջանին է վերաբերում, այստեղ արդեն բուրժուազիան առանց մենաշնորհումների չի կարող ապրել։ Նա պետք է մենաշնորհ սահմանի։ Բոլոր յերկրները չեն կարող արդեն համաշխարհային շուկայում տեղավորվել. նրանցից վոմանք պետք է ուրիշներին խեղդեն, վորպեսզի ծավալվելու հնարավորություն ունենան։ Այնպես վոր այս նոր մենաշնորհները յերկաթե անհրաժեշտությամբ այդ շրջանում կապիտալիզմի ընդհանուր դրությունից են բղխում։

Սակայն գործի եյությունը սինդիկատների և տրեստների մեջ չէ, այլ գործի եյությունը հենց մենաշնորհումներին այդ ձգտելն է, ինչ ձևերով էլ

վոր նրանք կաղապարվեն։ Սինդիկատներն ու տրեստներն այստեղ մասնավոր դեպքեր են։ Վորպես մասնավոր դեպք նրանք,—ինքն ըստ ինքյան հասկանալի յե, ձեռնարկությունների այս կամ այն խմբի համար տվյալ տերրիտորիայի վրա մենաշնորհ սահմանելու միջոց հանդիսանալով,—դրանով սպառվում են, սակայն ինքը ֆորմուլան ավելի լայն ե։

Այս տեսակետից, գնահատելու համար, թե մտե՞լ ե արդյոք յերկիրն իր իմպերիալիստական շրջանը, թե՞ վոչ, պետք ե նայել վոչ թե նրան, թե կա՞ն արդյոք բավարար քանակությամբ տրեստներ և սինդիկատներ նրանում, այլ յերկու ուրիշ հատկանիշներին, վորոնք Գիլֆերդինգն ել ե մատնանշում։

Այդ հատկանիշներն են. առաջին՝ բարձր մաքսերը, վորոնք յերկրի տերրիտորիան հայրենի արդյունաբերության մենաշնորհված սեփականություն են դարձնում՝ լինի դա սինդիկանացած թե վոչ, միևնույնն ե, և յերկրորդ՝ մաքսային սահմաններն ըստ հնարավորին ավելի լայն ընդարձակելու ձգտում, այդ սահմանների մեջ վորքան հնարավոր ե ավելի լայն տերրիտորիա ընդգրկելու ձգտում։

Ահա, յեթե այս ծայրից մոտենանք XIX դարի վերջի Ռուսաստանին, կտեսնենք, վոր իմպերիալիզմի այս յերկու հատկանիշն ել՝ չափազանց բարձր մաքսերը, չափազանց ինտենսիվ պրոտեկցիոնիզմը՝ մի կողմից և տերրիտորիայի սահմաններն ընդարձակելու ձգտումը՝ մյուս կողմից, նրանք յերկուսն ել առկա յեն XIX դարի յերկրորդ կեսում և արդեն, անկասկած՝ XIX դարի 90-ական թվականներին։

Նախ և առաջ՝ մաքսերի մասին—սա ևս չափազանց հետաքրքիր բան ե, վորին պետք ե ուշադրություն դարձնել։ Իմպերիալիզմի դասական յերկրներ Արևմտյան Յեվրոպայում նախապատերազմյան շրջանում Գերմանիան և Միացյալ Նահանգներն եյին համարվում։ Այնտեղ եյին ամենաբարձր մաքսերը, և գերմանական մաքսերը նույնիսկ որինակ ծառայեցին Գիլֆերդինգին իմպերիալիզմը բնորոշելու համար։ Բայց համեմատեցեք մի կողմից Միացյալ Նահանգների և Գերմանիայի մաքսերը և մյուս կողմից Ռուսաստանի մաքսերը։

Վերցնենք յերկաթի 1 փթից վերցվող մաքսը (յես վերցնում եմ կոպեկներով, 1898 թիվը)։ Միացյալ Նահանգներում յերկաթը յերկիր ներմուծվելիս մաքս եր վճարվում փթի համար 42-ից մինչև 49 կոպեկ, Գերմանիայում՝ 19-ից—23 կոպեկ (ի՜նչ սարսափելի իմպերիալիստական մաքս)։ Իսկ Ռուսաստանում, հետամնաց Ռուսաստանում 75-ից մինչև 98 կոպեկ փթից, այսինքն՝ յերկու անգամ ավելի բարձր, քան ամերիկյան մաքսերը և գրեթե յերեք անգամ ավելի բարձր, քան գերմանականները։ Նույնն եր և պողպատի նկատմամբ։

Բամբակի մանվածքի համար Միացյալ Նահանգներում փթին 2 ռ. 10 կ. մինչև 6 ռ. 31 կ. եյին վճարում, Գերմանիայում՝ 91 կ. մինչև 3 ռ. 64 կ., իսկ Ռուսաստանում՝ 7 ռ. 20 կ. մինչև 16 ռ. 50 կ.։ Այս անգամ արդեն չորս անգամ ավելի բարձր, քան Միացյալ Նահանգներում։

Բամբակի գործվածքների համար Միացյալ Նահանգներում մաքս եյին վճարում փթին 4 ռ. 63 կ. մինչև 18 ռ. 60 կ., Գերմանիայում՝ 4 ռ. 55 կ. մինչև 17 ռ. 44 կ., Ռուսաստանում՝ 21 ռ. մինչև 87 ռ. փթից։

Մեքենաների համար վճարում եյին (Միացյալ Նահանգների համար

թվական տվյալներ յես չունեմ) Գերմանիայում՝ 23 մինչև 28 կ. փթին, Ռուսաստանում՝ 2 ռ. 10 կ. փթին։

Դուք տեսնում եք, վոր ռուսական պրոտեկցիոնիզմը գերմանականի հետ համեմատած—դա վագր ե կատվի առաջ, իսկ ամերիկյանի հետ համեմատած՝ նույն վագրը լուսանի հետ համեմատած, կամ, համենայն դեպս, նույն տեսակի կենդանու հետ, բայց շատ ավելի մանր։ Համենայն դեպս բարձր մաքսային քաղաքականության տեսակետից ռուսական իմպերիալիզմը 1898 թվին ռեկորդ եր խփում յերկրագնդի վրա գոյություն ունեցող բոլոր ծայրահեղ-իմպերիալիստական յերկրների հետ համեմատած։

Ինչ վերաբերում ե տերրիտորիայի ընդարձակմանը, այստեղ բավական ե ձեզ հիշեցնել, վոր XIX դարի յերկրորդ կեսին ե, վոր Ամուրը, Մերձամուրյան և Ուսսուրիական յերկրամասերը միացվեցին Ռուսաստանին, Ռուսաստանը գրավեց միջին Ասիան, Բաթումի և Կարսի շրջաններն Անդրկովկասում և, վերջապես, Բուլղարիայի գրավումը Ռուսաստանի կողմից, վորը 80-ական թվականներին փաստորեն Անդրդանուբյան նահանգ եր։ Յեթե ցարական Ռուսաստանն իր հիմարության պատճառով կորցրեց այն, ապա դա Ռուսաստանի ախորժակները բնորոշելու համար նշանակություն չունի։ Գրավելը գրավեցին, բայց չկարողացան պահել։ Իսկ յեթե վերցնենք Բուլղարիան այնպես, ինչպես այն Ռուսաստանն եր նախագծում ըստ Սան-Ստեֆանոյի հաշտության,—հողի այս ամբողջ հսկայական մասը՝ սկսած Ալբանիայից արևմուտքում և մինչև Սև ծովն արևելքում, Դանուբից հյուսիսում և մինչև Եգեյան ծովը հարավում, Բալկանյան թերակղզու յերկու յերրորդ մասը,—ապա մենք հնարավորություն կունենանք ավելի լավ գնահատելու Ռուսաստանի ձգտումներն այս դեպքում։ Իր մենաշնորհված տիրապետության մեջ Բուլղարիան գրավելու այս ձգտումներն առանձնապես կոպիտ կերպով եյին արտահայտվում։ Հատկապես կոպիտ արտահայտվեց նա Բուլղարիայում յերկաթուղացանց կառուցելու նախագծով, վորը և յելակետ ծառայեց բուլղարական խռովության համար և պատճառ յեղավ Բուլղարիայի բաժանմանը Ռուսաստանից։ Ռուսաստանը բուլղարական յերկաթուղիների այնպիսի ցանց եր նախագծում, վոր նրանց պետք ե կապեր ռուսական ցանցի հետ՝ նրանց արևմուտք դուրս գալու հնարավորություն չտալով, ընդսմին այս ճանապարհները պետք ե ռուս ճարտարապետները շինեյին, ռուսական մատերիալից, և նույնիսկ առավելապես ռուս բանվորների ոգնությամբ, այնպես վոր սա ըստ ամենայնի ռուսական յերկաթուղագիծ պետք ե լիներ, վոր Ռուսաստանի մենաշնորհված տիրապետության տակ պիտի լիներ և Ռուսաստանին Բուլղարիան տիրապետելու նույնպես մենաշնորհված իրավունք պիտի տար։ Իսկ սրա հետ միաժամանակ Բուլղարիա յեր գնում ռուսական առևտրական եքսպեդիցիան, ռուս տեկստիլները, վորոնք նայում եյին, թե Բուլղարիայում վորտեղ և ինչպես կարելի յե ռուսական չիթը վաճառել։ Այս վերջին գործարքը չհաջողվեց, և առհասարակ Բուլղարիան յերկաթուղային այս լծի տակ չընկավ, և Ռուսաստանն ստիպված եր Բուլղարիայից հեռանալ։ Բայց և այնպես, տենդենցն այստեղ ել բավական պարզ եր արտահայտվում։

Յեթե մենք այս բոլորի լույսի տակ հիշենք մի փոքրիկ փաստ Ռուսաստանի կողմից XX դարի սկզբում Մանջուրիան ոկկուպացիայի յենթարկելու պատմությունից,—այն վեճը, վոր ծագեց ռուսական կառավարության

և Միացյալ Նահանգների միջև նյուչուանյան մաքսատան պատճառով, ռուսներն անմիջապես իրենց պաշտոնյաները դրին և սկսեցին մաքսեր հավաքել, իսկ ամերիկացիներն ինչպես միշտ, բոլոր ապրանքները Մանջուրիա ներմուծելու բաց դռների սկզբունքին էին հետևում,—ապա մենք այս փոքր օրինակով Մանջուրիայի գրավումը միացած ամբողջ պատկերի հետ կկապենք։ Այստեղ տերրիտորիայի սահմանները ընդարձակելու նույն ձգտումն էր, որը (տերրիտորիան) պաշտպանվում էր չափազանց բարձր մաքսերով.—ահա թե գործն ինչին էր հանգում։

Այս ուղղությամբ քաղաքականությունն անկասկած իմպերիալիստական էր և իմպերիալիզմի հիմնական երկու հատկանիշներին էր բավարարում. մի կողմից բարձր մաքսերն էին, մյուս կողմից ձգտումն էր այդ մաքսերի տերրիտորիան ըստ հնարավորին ավելի լայն տարածելու, որքան հնարավոր է ավելի լայն տերրիտորիա կազմել, որը ռուսական առևտրական և արդյունաբերական կապիտալի մենաշնորհված շահագործման մեջ գտնվի։

Դուք տեսնում եք, որ բոլորովին զուր չէ, որ իմպերիալիստական ցարը Ռուսաստանում էր, և որ Նիկոլայ II-ի այդ ճանապարհով գնալու համար, որով նա իրոք էլ գնաց, անհրաժեշտ էր օրիգինալության բացակայությունը։ Եթե նա օրիգինալ լիներ, նա իմպերիալիստ չէր լինի։ Այն ժամանակ նա իրոք մտքերի որոշ առանձնահատկություն կհայտնաբերեր։ Բայց որովհետև նա իմպերիալիստ էր, ապա նա լիակատար ձևով ներդաշնակ էր ոչ թե այն ժամանակվա ամբողջ Ռուսաստանի հետ, այլ և նրան կառավարող խավերի հետ։ Հարց է ծագում. կառավարող այս խավերում ի՞նչպիսի տենդենցներ պետք է ստեղծվեյին իմպերիալիստական այն շրջանում, որն արդեն թևակոխել էր ռուսական կապիտալիզմը, որն արդեն թևակոխել էր Ռուսաստանը։ Դա դուք, երևի, գիտեք։

Դուք գիտեք, որ իմպերիալիզմի շրջանում, երբ կատաղի, մեծ մասամբ զինված պայքար պիտի մղել մենաշնորհի համար, բուրժուազիան արագ կերպով իր ազատամտությունը զիջում է։ Անգամ անգլիական բուրժուազիան՝ որն ամենաազատամիտն է աշխարհիս երեսին՝ այնպիսի բաներ է մարսում, ինչպես այն, որ մարդկանց աքսորում են լրագրային հոդվածների համար, ինչ անգլիական բուրժուազիայի համար իր տրադիցիաներով շատ դժվար է մարսել,—այնուամենայնիվ նա այնպիսի բաներ էր մարսում, երբ իմպերիալիստական պատերազմի ժամանակ անգլիական բուրժուազիայի տեսակետից անմեղ հոդվածների համար մարդկանց տաժանակիր բանտեր էին նստեցնում։ Դա դեռ քիչ է, այդ բուրժուազիան ավելի զգալի ինչ որ բան է կրում, քան բանտն է լրագրային հոդվածների համար. նա հսկայական ճնշումներ է կրում առևտրի ազատության համար։ Չէ՞ որ իմպերիալիստական պատերազմի ժամանակ առևտուրն Անգլիայում, ինչպես և այլ վայրերում, խստորեն ռեգլամենտացիայի էր ենթարկված,—նա պետության է և նրա օրգանների ձեռքում էր։ Այն ժամանակվա բուրժուազիան համաձայնվում էր անգամ առևտրի ազատությունից հրաժարվել, իսկ առևտրի ազատությունն, ինչպես ճիշտ է ասված, բոլոր բուրժուական ազատությունների աղբյուրն է, բոլոր բուրժուական ազատությունների հիմքն է կազմում։

Բուրժուազիայի այս արագ գույնի փոխումն՝ իր լիբերալիզմի տեսակետից, որ բնորոշ է իմպերիալիստական էպոխային, պետք է որ յուրահա-

տուկ գույնով ներկեր նաև այդ շրջանի ռուսական լիբերալիզմը։ Ես մատնանշեցի այն պատճառները, որոնք նախորդ շրջաններում ռուսական բուրժուազիային սակավ լիբերալ էին դարձնում,—և նա փաստորեն թառամեց՝ առանց ծաղկելու. այն ժամանակներում, երբ մեզ մոտ կապիտալիզմն սկսեց բուռն կերպով զարգանալ՝ XIX դարի 80-ական թվականներին՝ իմպերիալիզմի շրջանն սկսվեց և համապատասխան փոփոխություն տեղի ունեցավ ռուսական բուրժուազիայի տրամադրության մեջ։

Ընկ. Մ. Ն Լյադովը պնդում է, որ իբր թե 90-ական թվականների ռուսական արդյունաբերական բուրժուազիան ոչ միայն հառաջադեմ էր, այլ գրեթե հեղափոխական։ Նրա կարծիքով, արդյունաբերական այդ բուրժուազիայի պաշտոնական իդեոլոգիան ոչ պակաս, ոչ ավել՝ լեգալ մարքսիզմ էր—բանվորներին որսալու միջոց, որոնց ձեռնարկուներն ուզում էին օգտագործել ինքնակալության դեմ։ 90-ական թվականների Ստրուվեն և Տուգան-Բարանովսկին—սրանք հենց խոշոր արդյունաբերական բուրժուազիայի իդեոլոգներն էին, այնպես որ վերջինս իր ձախ թևով որոշ չափով անգամ հեղափոխությանն էր քսվում։

Ես ոչ մի կերպ չեմ կարող սրա հետ համաձայնվել, որովհետև 90-ական թվականների ռուսական արդյունաբերական բուրժուազիայի վառ և ցայտուն քաղաքական առաջադիմության ոչ մի հատկանիշ ինձ մատչելի պատմական փաստերում ես չեմ տեսնում։ Ընդհակառակն՝ այդ շրջանի բուրժուազիան ցարական կառավարության հետ արտասովոր բարեկամական հարաբերությունների մեջ էր գտնվում, և այդ բարեկամական հարաբերությունների հատկանիշը Վիտտեյի այն ռեժիմն էր, որը փաստորեն արդյունաբերական և ֆինանսական բուրժուազիայի դիկտատուրան էր Ռուսաստանում։

Ես թույլ կտամ ինձ հիշեցնել ձեզ, նախ՝ որ մաքսային այս պատնեշն էր, որի մասին ես ասացի, որ ստեղծվում էր ոչ թե ռուսական կառավարական օրգանների մի ինչ որ հորինված օրենսդրական ստեղծագործության միջոցով։ Քարածուխի մաքսն ուղղակի պատասխան էր հարավային լեռնարդյունաբերողների համագումարի միջնորդությանը։ Թուջի մաքսը (15 կ. ոսկով փթից) կանոնավոր պատասխան էր մետաղարդյունաբերողների համագումարի արած հայտարարությանը, ընդ սմին վերջիններս իրենց խնդիրը 1883 թվին հայտարարեցին, իսկ 1884 թվին նա արդեն վերջնականապես բավարարված էր։ Հաջորդ համագումարը ցանկացավ փթի համար 25 կ. ստանալ, և 1887 թվին այդ 25 կոպեկը տրվեց։ Նիժնի-Նովգորոդում 1896 թվի ցուցահանդեսի առթիվ կայացած համագումարում, երբ «Волгарь» լրագիրը գրում էր, որ Ռուսաստանում «վաճառականությունն ամեն ինչ կարող է անել»,—մի չափազանց հետաքրքիր հայտարարություն նիժեգորոդյան լրագրի, տոնավաճառային քաղաքի լրագրի,—ֆինանսների մինիստրության ներկայացուցիչն ասում էր.

«Ֆինանսների մինիստրությունն անհրաժեշտ համարեց ծանոթանալ առևտրա-արդյունաբերական դասակարգի հայացքներին այն հարցերի նկատմամբ, որոնք նրանց հետաքրքրում են։ Այդպես էր վարվում նաև առաջ։ Ֆինանսների մինիստրության մեջ իմ ավելի քան 40-ամյա գործունեությունն ինձ իրավունք և հիմք են տալիս պնդելու, որ մինիստրությունը միշտ էլ ուշադրությամբ հետևել է արդյունաբերության և կապիտալի շահերին»։

Դա գուցե ճիշտ չեր ամբողջ 40-ամյա շրջանի համար, վորն այդ մեծարգո մարդն եր ընդգրկում, վորովհետև մինչև պրոտեկցիոնիզմի շրջանը՝ 1878 թիվը, ռուսական վաճառականությունը չեր կարող պարծենալ ֆինանսների մինիստրության հատուկ բարենպաստ վերաբերմունքով, բայց 1896 թվի համար դա միանգամայն ճիշտ եր։ Ցես մի այլ փաստ կբերեմ, թե ինչպես նորմալ բանվորական որ՝ $11^1/_2$-ժամյա բանվորական որ սահմանելու առթիվ կայացած խորհրդակցության ժամանակ ֆինանսների մինիստրության ներկայացուցիչը բառացիորեն լաց եր լինում ձեռնարկուների ծայրահեղ պահանջների առթիվ. «Անցյալ տարի,— ասում է նա,— 30 հոգի հրավիրեցինք, ասում են՝ քիչ է, այս տարի 200 մարդ հրավիրեցինք—դարձյալ ասում են՝ քիչ է։ Վո՞րքան ուրեմն պետք է հրավիրել, վորպեսզի դուք բավարարվեք»։ Ֆինանսների մինիստրության ներկայացուցչի այս լալկան դերը չափազանց լավ է ընդգծում, թե ինչով եր ռեալ այդ մինիստրությունը։ Ռուս ձեռնարկուն վոչ մի հիմք չուներ 90-ական թվականներին առանձնապես խիստ արմատական լինելու, վորովհետև իշխանության գլուխը նրա մարդն եր կանգնած, Վիտտեն եր կանգնած, վորը փաստորեն ռուսական կապիտալիզմի շահերի ներկայացուցիչն եր։ Ցես այս մասին դեռ ելի կասեմ, յերբ ավելի մոտկից կընութագրեմ Վիտտեյին։

Իսկ ինչ վերաբերում է ռուսական բուրժուազիայի մյուս թևին՝ ռուս կալվածատերերին, նրանք այն ժամանակ ավելի ազատամիտ եյին, քան թե ռուս արդյունաբերական ձեռնարկուն, վորովհետև նրանք իշխանության ավելի սակավ բարյացակամ վերաբերմունքն եյին վայելում, քան թե վերջինը։ Ազնվականին, ճիշտ է, ժամանակ առ ժամանակ վողորմություն եյին տալիս, բայց նրա տեսակարար կշիռն զգալի չափով ավելի ցածր եր, և դուք իմ «չորս հատորների» մեջ ազնվականության գանգատներ կգտնեք այն մասին, վոր նրան վիրավորում են,—սակայն նույնիսկ ռուսական ագրարային բուրժուազիայի ավելի ձախ ազատամիտ մասի ձախ թևն անգամ խորհրդակցական ներկայացուցչության նախագծերից հեռու չեր գնում, նա այն բանին եր ձգտում հասնել, ինչ վաճառականներն արդեն ունեյին։ Վաճառականներին կանչում եյին, նրանց լսում եյին։ Ազնվականներն ասում եյին. «Իսկ մե՞զ։ Թող մեզ էլ լսեն, չէ՞ վոր մենք ազնիվ ենք, մենք արքունի պարգևագրեր ունենք։ Վաճառականներին լսում են, իսկ մեզ՝ վոչ։ Լա՞վ է արդյոք սա»։ 90-ական թվականներին ազնվականներն ավելին չեյին ուզում։

Այսպիսով, ռուսական բուրժուազիայի տրամադրությունն ըստ ամենայնի համապատասխանում եր կապիտալիստական շրջանների սովորական տրամադրություններին իմպերիալիզմի շրջանում։ Նրանց ուժեղ իշխանություն եր հարկավոր և նրանք այդ շրջանում իշխանության սահմանափակման մասին չեյին մտածում։

Բայց ահա հենց այստեղ և արտահայտվեց ռուսական ձեռնարկուական դասակարգի և այլ, ավելի առաջավոր յերկրների ձեռնարկուական դասակարգի տարբերությունը, ուր բուրժուազիան ավելի խելոք եր։ Անգլիական բուրժուազիան իր տեսակի մոնոլիտ եր, նրա մեջ շատ դժվար եր սեպ խփել։ Մեզանում այդպիսի մոնոլիտ չստացվեց։ Մեզանում իմպերիալիստական մասսայի մեջ շուտով պառակտումներ առաջացան և այդ պառակտումներն այն պայմաններից մեկը դարձան, վորոնք, իհարկե, չառաջացրին

մեր առաջին հեղափոխությունը, բայց զգալի կերպով թեթևացրին նրա հաջողությունները։ Ցես հիմա անցնում եմ հենց այս մասսայի մեջ տեղի ունեցած դիֆերենցիացիայի պատկերին։

Ցես արդեն ակնարկեցի, վոր ուզում եմ ինձ գրավոր և բանավոր տըրված միքանի հարցերին պատասխանել, այն հարցերին, թե ինչպես պետք է իմ այն պնդումը, վոր Ռուսաստանն իմպերիալիզմի շրջանն է թևակոխել — հաշտեցնել իմ մի այլ պնդումի հետ, վոր Ռուսաստանում մինչև 1917 թիվը, ընդհանուր առմամբ, առևտրական կապիտալիզմն եր տիրապետում։ Այստեղ յես ստիպված եմ ասելու, վոր արդյունաբերական և առևտրական կապիտալների տարբերությունը, իմ կարծիքով, չի վոչնչանում իմպերիալիստական եպոխայում։ Այս կատեգորիաները թեպետ և ֆինանսական կապիտալի մեջ ձուլվելու տենդենցներ ունեն, բայց յերբեք նրա հետ ամբողջովին չեն ձուլվում,—առևտրական և արդյունաբերական շրջանների շահերի տարբերությունն այդ ժամանակ կարելի չէ մոռանալ թե Անգլիայում և թե Ֆրանսիայում։ Կարելի չէ, որինակ, Անգլիայում միանգամայն վորոշ կերպով մոռանալ,—և «Պատերազմի հանցավորների մասին» իմ հոդվածում՝ «Արտաքին քաղաքականություն» ժողովածվում յես դա մոռանում եյի,—թե ինչպես Անգլիայում պարզ կերպով իմպերիալիզմի շրջանում գաղութային կապիտալի հեգեմոնիան է հաստատվում, այսինքն՝ առևտրական կապիտալի ձևերից մեկի, և գաղութային մարդիկ՝ Կերզոնը և այդ ժամանակի համար ավելի բնորոշ քան Կերզոնը՝ Կիտչեներն իշխանության գլուխ են անցնում, փաստական դիկտատորներ են դառնում։ Անգլիական արդյունաբերության այս յենթարկվելը սերդար Կիտչեներին՝ առաջին կարգի գաղութային այդ թալանչուն՝ չափազանց բնորոշ է։ Այն, ինչ հիմա կատարվեց՝ Կերզոնի անկումը և իշխանության անցումն այսպես կոչված բանվորական մինիստրության ձեռքը,—դա անգլիական արդյունաբերողների չափազանց հետաքրքիր ապստամբությունն է ընդդեմ գաղութային կապիտալի։ Վորովհետև, ինչի՞ վրա յեր հենվում Կերզոնը։ Հիմնական շահերը նրա համար գաղութայիններն են։ Ինչո՞ւ նա Ռուսաստանին ուլտիմատում ներկայացրեց։ Վորովհետև Ռուսաստանը պրոպագանդա յեր մղում Արևելքում։ Նրա ուլտիմատումի հիմնական կետն եր՝ անմիջապես յետ կանչել Ռասկոլնիկովին և Շումյացկուն, վորովհետև նրանք խանգարում են անգլիացիներին Արևելքում։ Ցեվ այժմ, ԽՍՀ Միության ճանաչման որերին, դա անգլիական արդյունաբերողներն են, վոր ապստամբվեցին անգլիական գաղութային կապիտալի լծի դեմ։ Նման խռովության հնարավորությունն անգամ Անգլիայում, ուր իմպերիալիզմը շատ ավելի հասունացած և շատ ավելի հետևողական է, ցույց է տալիս, վոր Ռուսաստանում, անկասկած ավելի փխրուն, անձույլ, բուրժուական Ռուսաստանում՝ հակասությունները կարող եյին ավելի սուր լինել։

90-ական թվականներին, ինչպես յես ձեզ ասացի, մեզանում ժամանակավորապես, հանձինս Վիտտեյի, հենց արդյունաբերական կապիտալի հեգեմոնիան հաստատվեց։ Ամենացայտուն մոմենտը, վորպեսզի ուրիշները չբերել և չդժվարացնել ձեր գործը չափազանց մեծ շեղումով, Վիտտեյի շըրջանի ամենացայտուն մոմենտը մեզանում վոսկու վալյուտայի մուծումն է։ Դա արդյունաբերական կապիտալի միանգամայն վորոշակի հաղթանակն եր առևտրական կապիտալի նկատմամբ։ Առևտրական կապիտալը խնամքով

պահպանում էր չմանրացվող թղթադրամները, որովհետև չմանրացվող թղթադրամները թանգագին հատկություն ունեյին. Նրանց գնողական ուժը յերկրի ներսում ավելի բարձր էր, քան նրանց գինը միջազգային շուկայում։ Այդ պատճառով, առևտրական կապիտալի այս կամ այն ներկայացուցիչը՝ լինի դա էքսպորտեր, թե կալվածատեր՝ մի ռուբլի ստանալով իր վաճառած հացի համար, փաստորեն Ռուսաստանի ներսում վճարելու համար ռուբլուց ավելի յեր ստանում, որովհետև Ռուսաստանի ներսում, մանավանդ գյուղում, մեր չմանրացվող թղթե, այսպես կոչված, վարկային տոմսի կուրսը միջազգայինից ավելի բարձր էր։ Այս հողի վրա մենք շատ հետաքրքիր յերևույթ ենք տեսնում մեր ֆինանսական պատմության մեջ։ Այս շատ հետաքրքիր յերևույթը նրանումն է կայանում, որ Վիշնեգրադսկու (Վիտտեյի նախորդի) ժամանակ մեր ֆինանսների մինիստրությունը կատաղի պայքար էր մղում ռուսական ռուբլու կուրսը միջազգային շուկայում իջեցնելու համար, ընդ որին այս իջեցման մեջ մեծ դեր էր կատարում ֆինանսական կոմիտեյի այն ժամանակվա նախագահ Աբազան։ Աբազայի հետ պատահած արկածի առթիվ, որն այդ ճանապարհով մի բանկիրի սնանկացրեց և այսպիսով բացեց իր գործարքները, մենք այս մասին մանրամասն պատմություն ունենք Վիտտեյի «Մեմուարներում»։ Ցարական կառավարությունն իր սեփական ռուբլու կուրսի իջեցման խաղ է խաղում — սա չափազանց հետաքրքիր յերևույթ է։ Բայց ինչո՞ւ յեր նա խաղում։ Հենց այն պատճառով, որ ինչպես Վիշնեգրադսկուն ներկայացրած և հետագայում հրապարակած մի փաստաթուղթ է վկայում, ռուսական ռուբլու չափազանց բարձրացումն արտասահմանյան բորսայում կարող է ռուս կալվածատերերին մեծ վնասներ հասցնել. այնտեղ ասված էր՝ ոչ թե կալվածատերերի, այլ «հաց արտադրողների» համար, բայց այդ տվյալ դեպքում միևնույն բանն է։ Յենթադրեցեք, որ ռուբլին իրոք բարձրանում է, նա բարձրացավ մինչև 80 կոպ., մինչդեռ առաջ նրա գինը 60 կոպ. էր, — դա կհեղաշրջեր բոլոր հարաբերությունները Ռուսաստանի ներսում։ Ռուս կալվածատերն ավելի քիչ քանակությամբ ռուբլիներ կստանար, և ռուս կալվածատերերն ու էքսպորտերներն աղաղակում եյին. «Նման խայտառակություն չի կարելի թույլ տալ, — սա թալան է։ Ինչ գնով էլ որ լինի՝ ռուբլու կուրսն իջեցրեք, այլապես մենք վնաս ենք կրում և կարող է ճգնաժամ առաջանալ»։ Նրանք ճգնաժամով եյին սպառնում, և, որպեսզի այդ ճգնաժամը չառաջանա, կառավարությունը ռուբլու գնի իջեցման խաղ էր խաղում։ Սրանում մասնավոր կերպով մասնակցում էր ֆինանսական կոմիտեյի նախագահը, բայց յերևի մյուսներին էլ բաժին էր ընկնում։ Յերբ դրանից պակաս՝ քան 10 տարուց հետո Վիտտեն կայուն վալյուտա յե մտցնում, այդ ժամանակվանից արդեն չեր կարելի ռուբլու կուրսը տատանել, նրա հետ խաղալ։ Սա պարզ ապացույց է այն բանի, որ այժմ 80-ական թվականներին հակառակ՝ ձեռնտու յեր, որպեսզի ռուսական ռուբլին որքան հնարավոր է բարձր մնա։ Ի՞նչ է հարկավոր ռուս արդյունաբերողներին։ Ռուս արդյունաբերողները չեյին կարող ապրել առանց արտասահմանում մեքենաներ գնելու, առանց արտասահմանում բամբակ գնելու։ Ճիշտ է, այդ ժամանակ Թուրքեստանի բամբակագործությունը բուռն կերպով զարգացավ, բայց XIX դարի վերջերին նա հազիվ էր բավարարում ռուսական չթի ֆաբրիկաների պահանջի մի յերրորդ մասը, յերկու յերրորդը բամբակի արտասահմանում կատարած գնում-

ներով էր ծածկվում։ Յեվ ահա, չթի ֆաբրիկանտի համար ամենևին էլ միևնույնը չեր, թե ռուբլին ինչ կուրս ունի արտասահմանյան բորսայում, որովհետև յեթե այդ կուրսը շատ ցածր էր լինում, ապա նա ստիպված էր լինում շատ ավելի մեծ քանակությամբ ռուբլիներ վճարել, քան մինչև այդ, և ռուս արդյունաբերողներն աղաղակում եյին Ռուսաստանում կայուն վալյուտա սահմանելու անհրաժեշտության մասին, ոսկե դրամ բաց թողնելու մասին, որ չտատանվեր, անցնել ոսկու շրջանառությանը։ Յեվ այն, որ Վիտտեն 90-ական թվականների կեսերին կիրառեց ոսկու շրջանառությունը, — դա արդյունաբերական կապիտալի հաղթանակի ցայտուն հատկանիշն է առևտրականի նկատմամբ։

Սակայն արդյունաբերական կապիտալի հաղթանակը վաղանցուկ էր։ Բանը նրանումն է, որ առևտրական կապիտալը մեզանում, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, Ռոմանովյան պետության գլխավոր պահպանողն էր։ Ի՞նչ միջոցներով էր պահպանվում վերջինիս սիստեմը, ինչո՞վ էր կայուն նախ և առաջ այդ չմանրացվող վարկային տոմսերի կուրսը։ Չմանրացվող վարկային տոմսերի այդ կուրսն ոգտվում էր արտասահմանյան վալյուտայից, որը՝ արտասահման հաց արտածելու հետևանքով, ավելի և ավելի մեծ քանակով ռուսական դրպանն էր հոսում։ Մենք կարող ենք պարզել արտասահմանյան շուկա ընկնող հացի ամբողջ արտադրության տոկոսի մեծությունը։ Հացի գների իջեցման հետ միասին 80-ական թվականների վերջերին ավելի և ավելի մեծ քանակությամբ հաց էր պետք լինում արտասահմանյան շուկա հանել։ 80-ական թվականների կեսերին արտածման այդ տոկոսը մոտ 17 էր, 80-ական թվականների վերջերին և 90-ականների սկզբին իր ամբողջ հացի գրեթե քառորդ մասը Ռուսաստանը պետք է արտասահմանյան շուկա հաներ։ Ի՞նչի համար է այս։ Նրա համար, որպեսզի ապահովվի առևտրական ակտիվ բալանսը, որպեսզի արտասահմանից ներմուծումը պակաս լինի, քան արտասահման արտածումը, և տարբերությունը որպես վալյուտա ռուսական դրպանը մտնի։ Այս ակտիվ բալանսն իմպերիալիստական Ռուսաստանի պահեստի ֆոնդն էր։ Նա՝ շնորհիվ այս ակտիվ առևտրական բալանսի՝ կարող էր ոսկու պաշարներ կուտակել։ Յեվ մեծ քանակությամբ կուտակում էր այդ պաշարը։ Ռուսական ոսկու պաշարը 1914 թ. մաքսիմալ էր[1]։ Ամբողջ յերկրագնդի վրա չկար այնպիսի մի յերկիր, որը ոսկու ավելի մեծ պաշար ունենար, և իմպերիալիստական այն ակտիվ քաղաքականությունը, որի մասին յես ասում եյի, նա կարողանում էր վարել միայն իր այդ ոսկու պաշարի վրա հենվելով։ Անկասկած է, որ այնպիսի յերկիր, ինչպիսին Անգլիան է, — մի յերկիր, որ իր ձեռքումն էր պահում համաշխարհային տրանսպորտը, հաղորդակցության համաշխարհային ճանապարհները, համաշխարհային առևտրական նավատորմիղի 42 միլ. տոննից իմպերիալիստական պատերազմի նախօրյակին գրեթե կեսն Անգլիայի ձեռքումն էր՝ 19 միլիոն տոնն, — նման դրությամբ Անգլիան կարող էր իրեն պատերազմ սկսելու շռայլություն թույլ տալ՝ առանց իր ձեռքում ոսկու հսկայական պաշար կենտրոնացնելու։

[1] Միլիոն ոսկի ռուբլիներով

	1900 թ.	1910 թ.	1912 թ.	1913 թ.
Ոսկու պաշարը Ռուսաստ. .	755	1.305	1.430	1.613
Յերկրորդ տեղն է՝ Ֆրանսիան	936	1.282	1.383	1.406

Մնացած բոլոր յերկրները՝ ի շարս վորոնց և Ռուսաստանը, և՛ Ֆրանսիան աշխատում եյին իրենց ձեռքերում ըստ հնարավորին ավելի շատ վոսկե չերվոնեցներ կուտակել, վորպեսզի հնարավորություն ունենան պատերազմի ծախսերը հոգալու։ Այսպիսով, իմպերիալիզմի արտաքին քաղաքականությունն այդ ժամանակներում սերտորեն կապված եր առևտրական ակտիվ բալանսի հետ։

Հիմա ծանոթանանք թվերին։ Միջին թվով, 80-ական թ. վերջերին և 90-ական թ. սկզբներին Ռուսաստանի ակտիվ բալանսը մոտ 100—150 միլիոն եր, իսկ վերցրեք 99 թ.՝ Վիտեյի շրջանի ամենաբարձր կետը՝ մեր ակտիվ բալանսը—7,2 միլ. ե։ Մեր ակտիվ բալանսը XIX դարի վերջին գրեթե մինչև զերո իջավ։ Արդյունաբերության, վորպես այդպիսինի համար, դա դեռ կես ցավ եր։ Նա կարող եր դրան դիմանալ։ Ի՞նչ եր նրան հարկավոր։ Նրան ինդուստրիալ հումույթ եր հարկավոր, նրան մեքենաներ եյին հարկավոր։ Դա միանգամայն բավական եր, և վորովհետև նրան եժան հաց եր հարկավոր, վորովհետև եժան հացը ցածր աշխատավարձ ե նշանակում, ապա ըստ գործի եյության, նա՝ այդ արդյունաբերությունը՝ նույնիսկ այնքան ել շահագրգռված չեր հացի արտածումով։ Վորքան ավելի քիչ հաց ե արտածվում արտասահման, այնքան նա ավելի եժան կլինի յերկրի ներսում, և այնքան ավելի ցածր կլինի աշխատավարձը։ Այսպիսով, արդյունաբերությունը շահագրգռված չեր անգամ, վորպեսզի հացի մեծ արտածում լինի։ Բայց իմպերիալիզմը սրանով շահագրգռված եր, վորովհետև հացի արտածումն արտասահման—դա մի վոսկե գետ եր, վորն արտասահմանից եր հոսում։ 1899 թ. այդ վոսկե գետն սկսեց գրեթե ցամաքել։ Հենց այստեղ եր ընդջրյա այն խութը, վորին պետք ե ընդհարվեր, և իրոք ընդհարվեց Վիտեյի քաղաքականությունը։ Իսկ համաշխարհային շուկայի կոնյուկտուրան այնպես եր դասավորվում, վոր ծանրության կենտրոնը, բնականաբար, առևտրական կապիտալի կողմն եր անցնում, վորովհետև, չե՞ վոր առևտրական կապիտալի կրած բոլոր այն ճնշումը, վորի մասին յես պատմում եյի, հնարավոր եր միայն հացի այն ցածր գների ֆոնի վրա, վորոնց մասին յես այնքան յերկար կանգ առա իմ անցյալ դասախոսության մեջ։ Հենց հացի այս ցածր գներն եյին, վոր առևտրական կապիտալին արդյունաբերական կապիտալի այդպիսի ստրուկ եյին դարձնում։ Առևտրական կապիտալը վազում եր յերկչոտությամբ արդյունաբերականի յետևից, իսկ արդյունաբերական կապիտալը հպարտ առաջ եր շարժվում և հպարտ իր չորս կողմն եր նայում, վորովհետև եժան հացն եժան բանվորական ձեռք և ցածր աշխատավարձ եր նշանակում, այսինքն՝ «արդյունաբերության ծաղկում», իսկ առևտրական կապիտալը «սովի պայմաններում եր» դրված։ Բայց, ինչպես արդեն վերևում մատնանշեցի, հացի գներն սկսում են աճել 90-ական թվականների յերկրորդ կիսին. յեթե վերցնենք 1893—97 թ. թ. քառամյակի գներն առ 100, ապա 1898—1904 թ. թ. վեցամյակի համար նրանք 122 կլինեն, իսկ 1905—12 տարիների համար՝ 165։ Սրա հետ միասին, սկսում ե աճել և մեր առևտրական բալանսը. 1900 թ.՝ 116,3 միլ. ռ., 1901 թ.՝ 196,9, 1902 թ.՝ 226,3, 1903 թ.՝ 347,1, 1904 թ.՝ 374, 1905 թ.՝ 458,6։ Յեվ քանի աճում ե մեր առևտրական բալանսը, աճում ե մեր իմպերիալիզմի նյութական բազան, աճում ե առևտրական կապիտալի տնտեսական նշանակությունը, վորը ռուսական հացի շուկայի հե-

րոսն ե և վորը Ռուսաստան գրավեց վոսկու այս ամբողջ մասսան։ Այսպիսով, բնական ճանապարհով, տնտեսական կոնյուկտուրայի փոփոխման հետևանքով, հեշտացել եր առևտրական կապիտալի հաղթանակն արդյունաբերականի նկատմամբ, սա իր տեսակի առևտրական կապիտալի ռևանշն եր։

Յեվ Վիտեյի իշխանությունից հեռանալը 1903 թ. օգոստոսին վերջին հաշվով մինիստրության այն փոփոխությունն եր ռուսական ձևով, վորը միանգամայն անխուսափելի կերպով տնտեսական կոնյուկտուրայի փոփոխությունից եր բխում,—ռուս կապիտալիստների մասսայի ներսում հարաբերական տեսակարար կշռի փոփոխությունից։ Ծանրության կենտրոնը նորից արդյունաբերական կապիտալից առևտրականին անցավ։ Հենց դա յել արտահայտվեց նրանով, վոր արևելյան քաղաքականության շահերը, արտաքին քաղաքականության շահերն այն ուղիով շարժվեցին, վորով պետք եր և ձեռնտու յեր ռուսական առևտրական կապիտալին։ Քաղաքականությունն իմպերիալիստական մնաց, նա առաջվա նման ռուսական մենաշնորհի, ռուսական մաքսային սահմանների ընդարձակմանն եր ձգտում։ Սակայն ինչպես վոր Անգլիայի հետ տեղի ունեցավ պատերազմի նախօրյակին, յերբ պատերազմի անմիջական պատճառներն Անգլիայի համար գերմանական առևտրական նավատորմիղի հաջող մրցումն եր անգլիականի հետ, և Բաղդադի յերկաթուղին, կնշանակի, առևտրական և անգլիական գաղութային կապիտալի շահերը,—նույնը տեղի ունեցավ և Ռուսաստանի հետ 1903—4 թ. թ.։ Ռուսական իմպերիալիզմի ուղղությունն առաջին հերթին հենց ռուսական առևտրական կապիտալի շահերով բնորոշվեց։ Սրան վորպես հիմք պիտի ընդունել Սիբիրի, վորպես գաղութի, նշանակությունը, և, սրա հետ կապված՝ Սիբիրի յերկաթգծի կառուցումը։ Բնորոշ ե, վոր Սիբիրը, վորպես գաղութ սկսում ե հետաքրքրել ռուսական կառավարությանը և ռուսական կապիտալիզմին հենց հացի գների ամենացածր դրության շրջանում, յերբ Ռուսաստանի համար չափազանց կարևոր եր ինչ գնով ել վոր լինի ավելացնել հացի շուկա հանվող իր հումույթի քանակը, վորովհետև այդ հումույթն ավելի եժան եր և պետք եր այդ հումույթը ձեռք բերելու նոր շրջաններ գտնել։ Հենց այն Վիշնեգրադսկին, վոր արտասանեց նշանավոր նախադասությունը՝ «ինքներս կիսաքաղց կմնանք, բայց կարտածենք»՝—նա յե Սիբիրի յերկաթուղու նախաձեռնողը։ Սիբիրի յերկաթուղին—դրա մասին յես խոսում եմ իմ գրքույկում,—մեծ ազդակ հանդիսացավ արդյունաբերական կապիտալիզմի զարգացման համար, քանի վոր նա պայմաններ ստեղծեց ռուսական մետաղագործական արտադրության հսկայական զարգացման համար՝ վորը հետևանք ե նույն յերկաթուղու կառուցման։ Բայց նա ինքը հենց առևտրական կապիտալիզմի ծնունդ եր։ Սկզբներում այստեղ առևտրական կապիտալը, այսպես ասած, մինիմումի յեր ձգտում։ Այս ասպարեզում նրա ախորժակները չեյին գրգռվում, բայց քանի գյուղատնտեսական հումույթի գներն սկսեցին բարձրանալ, քանի հացի գների նոր կոնյուկտուրա ստեղծվեց,—ռուսական կապիտալն աշխուժանալով՝ սկսում ե ավելի և ավելի ակտիվ գործել այս ասպարեզում։ Այստեղ նորից չափազանց հետաքրքիր ե մի փոքր ժամանակագրական համեմատություն անել։ Հացի գների բեկումը տեղի յե ունենում 1894 թ. մինչև 1897 թ. ժամանակամիջոցում։ Յեթե մենք վերցնենք հաճարի գները, հետևյալը կտեսնենք. 1894 թ.՝ փութը 41 կ., 1895 թ.՝ 44 կ., 1896 թ.՝ 45

կ., 1897 թ.՝ 61 կ., (խիստ թռիչք դեպի վեր)։ Ցորենը—1894 թ.՝ 51 կ. փութը, 1895 թ.՝ 57 կ., 1896 թ.՝ 72 կ. (թռիչքը մի քիչ շուտ է սկսվում). 1897 թ.՝ 93 կ.։ Հենց այս շրջանումն է՝ 1894—1897 թ. թ., որ տեղի է ունենում 1896 թվի մոսկովյան կոնվենցիան Չինաստանի հետ, որը ռուսական յերկաթուղիների համար յելք է բաց անում դեպի հարավային Մանջուրիայի չսառչող նավահանգիստները։ Հենց 1896 թ. մայիսին, Նիկոլայ II-ի թագադրության ժամանակ, Լի-Խուն-Չանգի հետ, շատ մեծ կաշառքով՝ մոտավորապես կես միլիոն ռուբլով՝ այդ նշանավոր կոնվենցիան կայացվեց, որը միաժամանակ բավարարեց արդյունաբերողներին՝ բանալով նոր յերկաթուղացանցի կառուցման հեռանկարներ, և միևնույն ժամանակ ռուսական առևտրական կապիտալին, որովհետև, նա ռուսական հումույթի սիբիրականի՝ համար յելք եր բաց անում դեպի չսառչող ծովը։ Սա ձեզ կարող է պարզապես անմտություն թվալ։ Թվում է, քանի որ Սիբիրի յերկաթուղին կա, շատ ավելի հեշտ է հումույթն ուղիղ ճանապարհով՝ յերկաթուղով Արևմուտք տանել, քան թե ամբողջ Ասիայի և ամբողջ Յեվրոպայի շուրջը նավով պտտեցնել։ Բայց այստեղ պետք է նկատի առնել, որ այն ժամանակ նավի սակագինը՝ մասամբ և այժմ, բայց ավելի փոքր հարաբերությամբ՝ 25 անգամ ավելի ցածր եր, քան յերկաթուղունը։ Այն գնով, որով յերկաթուղով կարելի յե մի փութը հազար վերստ տեղափոխել, նավի վրա կարելի յեր 25 փութ տեղափոխել, և դուք հասկանում եք, որ հումույթը պետք կլիներ նավով հինգ անգամ ավելի յերկար ճանապարհով փոխադրել, քան յերկաթուղով, այնուամենայնիվ հսկայական օգուտ կստացվեր։ Չափազանց բնորոշ է համաշխարհային շուկայի կոնյուկտուրայի բեկման այս մոմենտի զուգադիպումը ռուսական ձգման դեպի Հեռավոր Արևելքի չսառչող նավահանգիստները։

Ահա թե, այսպիսով, որտեղ եր առևտրական կապիտալի և ռուսական իմպերիալիզմի շահերի զոդումը։ Քանի որ անհրաժեշտ եր Մանջուրիայում ամրանալ, պետք եր նրան էլ մտցնել ռուսական մաքսային հովանավորության սահմանների մեջ։ Հեռանկարում Ճապոնիայի հետ ընդհարումն եր։ Յեվ բնորոշ է, որ նույնիսկ այս ընդհարման մանրամասնություններն են պարզվում ընդհանուր պատկերից։ Ինչո՞վ եր զբաղվում այն ընկերությունը Յալու գետի վրա, որն անմիջական առիթ ծառայեց Ճապոնիայի հետ հարաբերությունները խզելուն։ Նա այնտեղ անտառը հատելով և արտածելով եր զբաղված։ Ո՞ւր եր արտածում նա այդ փայտը։ Սիբի՞ր։ Վոչ, այնտեղ տեղումն էլ բավարար չափով անտառ կա։ Նա այն Արևմտյան Յեվրոպա յեր արտածում։ Այսպիսով այս հումույթի արտածումը՝ շատ եպիզոդիկ, շատ նեղ սահմաններում՝ այս ամբողջ պատկերի հետ է կապված։

Ահա թե ինչ պարագաներումն եր Ռուսաստանը Ճապոնական պատերազմին մոտենում։ Արտաքին քաղաքականության մեջ գործը հանգում եր նրան, որպեսզի Մանջուրիան, Կորեան, մի շարք չսառչող նավահանգիստներ գրավել Հեռավոր Արևելքում, և այդպիսով յելք բանալ ռուսական արտածման համար է, նշանակում է, ռուսական արտածական և առևտրական կապիտալների համար չափազանց ձեռնտու ճանապարհ գտնել, որն, ի դեպ ասած, առևտրական տեսակետից միակ յելքն է Արևելյան Սիբիրից՝ Յենիսեյ գետից դեպի արևելք, որովհետև յերկաթուղով արտածելը չափազանց թանգ կարժենար։ Այստեղ պետք է Արևելքում մի ինչ վոր տեղում նավահանգիստներ ունենալ, որոնցով կարելի լիներ այս բոլորը փոխադրել։

Այսպիսով, ռուս-ճապոնական պատերազմը՝ իր վարելու յեղանակով ավանտյուրա լինելով, չմտածված, վատ հաշվի առնված և վատ սարքավորված ձեռնարկություն լինելով—ինչպես և առհասարակ ռուսական իմպերիալիզմը նույնպես անճոռնի յեր, ինչպես և Մոսկվայի կապիտալիստների պալացցոներն այդ շրջանում, որոնք մինչև հիմա յել կանգնած են Մոսկվայի փողոցներում,—բայց և այնպես նա ըստ ամենայնի օրինաչափ յերեվույթ եր. յերկաթե անհրաժեշտությամբ ռուսական իմպերիալիզմը դրդում եր մեզ հեռավոր-արևելյան պատերազմի, Ճապոնիայի դեմ պատերազմելու, որը Ռուսաստանի կողմից Սիբիրը շահագործելու ճանապարհին եր կանգնած։

Սա ասպեկտի արտաքին-քաղաքական կողմն եր։ Արտաքին քաղաքականության մեջ ղեկավարը նորից առևտրական կապիտալն է դառնում։ Սա իր արտահայտությունը գտավ նրանում, որ Վիտտեն 1903 թվի օգոստոսին և հենց Հեռավոր Արևելքի գործերի դրության առթիվ ստիպված եր հրաժարական տալ։ Իշխանության գլուխը Պլեվեն է անցնում, վոչ թե հին ազնվականության տիպիկ ներկայացուցիչը, այլ հենց առևտրական կապիտալի, որպես այդպիսինի, կոպիտ, գիշատիչ, ագահ իշխանության, որի մեջ ինքնակալությունը հիմնական գիծ եր կազմում, որովհետև առևտրական կապիտալին,—յես այդ բավարար չափով պարզեցի,—ճորտատիրական և կիսաճորտատիրական ձևեր եյին հարկավոր, որպեսզի հնարավորություն ունենա իր տնտեսական նպատակներին հասնել։ Հենց այդ պատճառով է, որ ազնվականության հետ՝ հանձինս զեմստվոյի, նույնիսկ շատ մեղմ ուղղության զեմստվոյի, թեկուզ շիպովկալ մոսկովյան զեմստվայի հետ Պլեվեն չափազանց վատ հարաբերությունների մեջ եր։

Զեմստվոյում նրան արհամարհում եյին։ Զեմցիներին նա ամեն կերպ ընդդիմանում եր։ Այսպիսով. չի կարելի Պլեվեյին դասային ազնվական շահերի ներկայացուցիչ համարել։ Հետաքրքիր է, որ իր ծագումով՝ սա առանց ցեղի և առանց տոհմի մարդ է, Արևմտյան Ռուսաստանի մանր կալվածատիրոջ հոգեզավակը։ Այս տեսակետից նրանից շատ ավելի խոշոր եր Վիտտեյի կողմից նշանակված ներքին գործոց մինիստր՝ Սիպյագինը։ Սա իրոք տոհմային ռուս ազնվականի վորդի յեր, բայց սա Վիտտեյի մարդն եր, մի մարդ, որ սպասարկում եր Վիտտեյին, որին Վիտտեն եր առաջ քաշել, որպեսզի մի քիչ սիրտ առնի իր մրցակցի և հակառակորդի։ Պլևեն վերին աստիճանի աննշան ծագում ունեցող մարդ եր։ Վոմանք նրա ծագումը վերագրում եյին նույնիսկ այն նույն հրեական ցեղին, որին նա այնպես կատաղի կերպով հալածում եր, որովհետև, ինչպես և վայել է այս քաղաքական տիպի ներկայացուցչին, Պլևեն կատաղի հակասեմիտական եր։ Նա չափազանց տիպիկ դեմք եր։ Դուք գուցե տեսել եք Ռեպինի նկարը՝ «Պետական խորհրդի նիստը», այնտեղ նա շատ լավ է նկարված՝ համազգեստով, ձգված կանգնած, զինվորական բեխերով,—մի տիպիկ ֆիգուրա յեթե վոչ թաղապետի ապա վոստիկանական վերակացուի, համառուսական վոստիկանական վերակացուի։ Յեվ հենց այս վերակացուն է, որ սկսում է ամբողջ Ռուսաստանում կարգ ու կանոն ստեղծել և սկսում է հաստատել կարգի այնպիսի ձևեր, որոնք ատիճանաբար յերեկվա տեր ու տիրականին՝ արդյունաբերական բուրժուազիային՝ օպոզիցիայի բանակն են շպրտում։

Սրանում է զուբատովականության հիմնական քաղաքական նշանակությունը։ Զուբատովշչինան հաճախ զուտ ռուսական բանվորական շարժման

միջադեպ են ընդունում։ Նա, իհարկե, ռուսական բանվորական շարժման չափազանց տխուր միջադեպ էր, որովհետև — չենք կարող այդ փաստը բացասել, — այն մոմենտում՝ 1902 թվին, զուբատովյան կազմակերպությունն ավելի չեր գրավում բանվորներին, քան թե մեր կուսակցական կազմակերպությունը։ Անգամ 1905 թվին, այդ թվի սկզբին, Գապոնն առնվազն 5 անգամ ավելի բանվորներ ուներ, քան թե մեր կուսակցությունը։ Մոսկվայի մասին, ուր Զուբատովն էր, խոսելու հարկ չկա։ Այն ժամանակ մեր կազմակերպություններում բանվորները միավորներով, տասնյակներով էին հաշվվում, իսկ Զուբատովը 1902 թ. փետրվարի 19-ին Ալեքսանդր II-ի արձանի առաջ 50 հազար մարդ հավաքեց. նա ինքն էլ զարմանում էր այդպիսի «բազմության» վրա և ինքնագոհ կերպով ասում էր, որ այդպիսի «բազմություն» շարժելու համար հատուկ տաղանդ է պետք, որն ամեն մարդ չունի։ Այս «բազմությունը» պետք է նախ և առաջ անհանգստացներ ռուս ձեռնարկուին։ Ռուս ձեռնարկուն բանվորական հարցում այնպիսի անշարժ, բորբոսնած մեկը չի եղել, ինչպես նրան երբեմն նկարագրում են։ Նույն 1903 թվին, երբ պայքար էր գնում զուբատովշչինայի դեմ, ֆինանսների մինիստրության մեջ մի քանի խոշոր ձեռնարկուների նախաձեռնությամբ կոալիցիաների ազատության հարցն էր մշակվում, — իհարկե, ռուսական յուրահատուկ պայմաններում, բայց և այնպես ստաչկաների ազատության մասին՝ եվրոպական օրինակով. իսկ երբ նրանց հյուրասիրեցին բանվորական հարցի լուծման այնպիսի ասիական ձևով, ինչպիսին պրոլետարիատի դասակարգային կազմակերպությունն է, որ ոստիկանության հովանավորության տակ է աշխատում, բայց ուղղված է կապիտալիստների անմիջական տնտեսական շահերի դեմ, ձեռնարկուներն, իհարկե, վայնասուն բարձրացրին։ Այստեղ նրանք իրոք սկսում են ազատամիտներ դառնալ, և իրոք սկսում են իրենց փողերով վարձատրել շատ ավելի ձախ մարդկանց։ Զափազանց հետաքրքիր է, նորից, ժամանակագրական զուգադիպությունը։ 1902 թ. փետրվարի 19-ին էր այդ ցույցն Ալեքսանդր II արձանի առաջ, իսկ 1902 թ. ամռանը լույս տեսավ արտասահմանյան թերթի՝ «Օսվոբոժդենիեյի» առաջին համարը, որը բուրժուա-լիբերալ, ըստ էության, արմատական օրգան էր՝ բուրժուական փողերով հիմնադրված։ Եվ չափազանց հետաքրքիր է, որ որպես այդ օրգանի խմբագիր բուրժուազիան գտավ չափազանց ձախ մի մարդու։ Հիմա, երբ մենք ճանաչում ենք Պ. Բ. Ստրուվեյին բացառապես, որպես Վրանգելի մինիստրի և որպես արտասահմանյան ռուսական միապետական կուսակցության լիդերի, մենք դժվարությամբ ենք պատկերացնում մեզ, որ այդ մարդը մեկ-մեկ աշխատակցում էր «Իսկրա»-յին նրա գոյության առաջին տարին, որ նրա հետ բանակցություններ էին վարում «Զարյա»-յին ավելի մոտիկից աշխատակցելու համար հրավիրվելու նպատակով և որ այդ բանակցությունները ոչ այլ ոք էր վարում, եթե ոչ Գ. Վ. Պլեխանովը։ Պլեխանովը բանակցություններ էր վարում Ստրուվեյի հետ նրա մշտական աշխատակցության մասին «Զարյա»-յին։ Այս փաստը պետք է վերհիշել, որպեսզի գնահատենք այն նշանակությունը, որ այն ժամանակ կարող էր ունենալ «Օսվոբոժդենիյե» օրգանը, որպես ռուսական բուրժուական օրգան։ Բուրժուազիան ամենաձախ մարդուն վերցրեց, որին միայն նա կարող էր վերցնել։ Իհարկե, իրեն Պլեխանովին թակարդը գցելու մտքին չէին հասնում այն ժամանակվա բուրժուազիայի

անգամ ամենահամարձակ մտքերը, բայց, ըստ էության, թակարդը գցել մի մարդու, որի հետ բանակցություններ էր վարում Պլեխանովը պլեխանովյան օրգանում մասնակցելու մասին, սա արդեն մի բան կնշանակեր։

Այս բոլորը ցույց է տալիս, որ մեր բուրժուազիան այն ժամանակ սկսված հեղաշրջման ազդեցության տակ բավարար չափով գազանացավ, բավարար չափով գազազեց կառավարության դեմ։ Ճիշտ է, անմիջականորեն «Օսվոբոժդենիյե» ամսագիրը ֆինանսավորող խումբը ձախ զեմցիներն էին։ Բայց ձախ թևն ամբողջ մասսայի հետ դեպի ձախ էր շարժվում։ Այդ նույն ձախ զեմցիները դրանից դեռ 10 տարի առաջ խորհրդակցական ներկայացուցչությունից հեռու չէին գնում, իսկ ահա «Ազատագրության միությունը», հիմնված զեմցիների կողմից 1902 թվին — ձևականորեն՝ 1903 թ., — հենց սկզբից էլ պառլամենտական կառավարության տեսակետի վրա կանգնեց՝ կանոնավոր յերկպալատային սիստեմով և ընդհանուր ձայնատվությունով։ Ինքնըստինքյան հասկանալի յե, որ վերջին հաշվով այս միության ղեկավարները չենթադրում էին, չերևի, խաբել բազմահարկ Ռուսաստանյան քաղաքացիներին և որևէ կերպ սահմանափակել այս ընդհանուր ձայնատվությունը, բայց այն ժամանակ սկզբունքորեն «Ազատագրության միության» մեջ ոչ ոք չէր առարկում ընդհանուր ձայնատվությանը, ոչ ոք չէր պահանջում ընտրողական ցենզի մտցնելը։ Մինչդեռ, դա իր ներքին շարժիչ զսպանակներով անկասկած բուրժուական կազմակերպություն էր, թեպետ և մեծ հոգատարությամբ թագցնում էր այդ այն ձախ, բայց ոչ կուսակցական մարդկանցից, որոնք ներգրավվում էին նրա մեջ։ Այս ձախ մարդկանց ներգրավումը նույնպես շատ սիմպտոմատիկ էր։ Ինչի՞ համար էին հարկավոր այս ձախ մարդիկ։ Ցուցանակի համար։ Նրա համար, որպեսզի կազմակերպությունն ավելի ձախ ներկայացնեն, քան թե նա իրականում էր։

Արդեն 1903—4 թ. թ. ռուսական բուրժուազիան սկսում է խաղ խաղալ հեղափոխությունը բարձրացնելու ուղղությամբ, սկսում է այն խաղը, որը վերջանում է միայն 1905 թվի դեկտեմբերյան ապստամբությունից հետո։ Մենք նորից սովոր ենք կադետներին պատկերացնել, որպես դեպի աջ քաշող կուսակցություն։ 1906 թվի հունվարից հետո եկած շրջանի համար սա միանգամայն ճիշտ է։ Այստեղ կադետները որոշակի կերպով մոնարխիստներ էին դառնում։ Բայց նախորդ շրջանում նույն կադետները գոյություն ունեին որպես հեղափոխականների ձախ թև և մոնարխիայի կամ հանրապետության հարց չէին հարուցում։ Նրանք ասում էին ձախ թևին. դուք, հանրապետականներդ, խնդրենք, կառուցեցեք ձեր հանրապետությունը. մենք ոչինչ չունենք հանրապետության դեմ։ Իսկ 1906 թ. հունվարին կադետները հաստատուն կերպով գրեցին իրենց ծրագրում, որ Ռուսաստանը պետք է սահմանադրական միապետություն լինի։ Ի՞նչը դրդեց նրանց այդ անելու։ Դեկտեմբերյան բարրիկադները և նրանց անհաջողությունը։ Մինչև դեկտեմբերյան բարրիկադները մեր բուրժուազիան որոշակի կ
պով սպեկուլյացիա էր անում մասսայական շարժման աճումով և ո
ցումով։ Վիտտեն իր մեմուարներում այս առթիվ հետաքրքիր
նեց։ Նրա մոտ, — պատմում է նա, — 1905 թվի նոյեմբերին
գործադուլից հետո, եկավ Հեսենը, նույն Հեսենը, ո
հիմա «Руль»-ն է հրատարակում, մի հայտնի կ
Վիտտեն նրա հետ զրուցում էր՝ գրավելով ի

որ-
արձրա-
րծ պահպա-
, հոկտեմբերյան
րն արտասահմանում
ղետական ժուրնալիստ
ադետական կուսակցության

իր կողմը, և սկսեց կադետներին ամեն տեսակի հեռանկարներ խոստանալ,— «Միայն թե աջակցեցեք ինձ»։ Այն ժամանակ Վիտտեն էլ, վորպես արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչ, ցուցանակների կարիք ուներ։ «Մի պայման միայն,—ասում եր Վիտտեն,—հրաժարվեցեք դուք այդ հեղափոխականներից, այդ ռումբերից, բրաունինգներից, զինված ապստամբության կոչերից և այլն։ Խիստ կերպով անջատվեցեք նրանցից, ասացեք, վոր մենք նրանց հետ ընդհանուր վոչինչ չունենք, վոր վոչ մի դեպքում նրանց յետևից չենք գնա» և այլն։ «Հեսենը,—ասում է Վիտտեն,—խորամանկորեն նայեց վրաս և հարցրեց. իսկ դուք այն ժամանակ կցրե՞ք ձեր բանակը, վոստիկանությունը և այլն»։ Վիտտեն պատասխանեց, վոր դա վոչ մի դեպքում չի կարելի անել։ «Իսկ ի՞նչպես եք դուք ցանկանում, վորպեսզի մենք մեր բանակը ցրենք»,—ասաց Հեսենը։ Այսպիսով, կադետները նայում եյին հեղափոխականների վրա, վորպես իրենց բանակի վրա. այդ պատճառով դեռ նոր կազմակերպված կադետական կուսակցությունը համակրանքով եր վերաբերվում հոկտեմբերյան գործադուլին՝ ամեն կերպ իր համակրանքն արտահայտելով դեպի գործադուլային շարժումը։ Միլյուկովի այս բոլոր ծամածռություններն ու թռիչքները դեպի «ձախ բարեկամները» (աջերից նա խիստ անջատվում եր, ասում եր, վոր աջերի հետ ընդհանուր վոչինչ չունեն նրանք) ճիշտ է, վոչ մի հաջողություն չունեցան։ Հիշում եք այն նշանավոր ծաղրանկարը, ուր Միլյուկովը նկարված եր մեղրահոս ժպիտով— «բարեկամներ ձախից»։ Մի այլ, արդեն վոչ այդ աստիճանի մեղրահոս ժպիտ— «դաշնակիցներ ձախից»։ Բոլորովին առանց ժպիտի—«հարևաններ ձախից»։ Յեվ վերջապես կատաղի ռեխ—«եշեր ձախից»։ Այս հանճարեղ ծաղրանկարում արտահայտված է բուրժուազիայի ամբողջ վերաբերմունքը դեպի ռուսական հեղափոխությունն այդ ժամանակամիջոցում։ 1903-ից մինչև 1905 թիվը բուրժուազիան, անկասկած, հեղափոխությունը բարձրացնելու խաղ եր խաղում, վորոշ չափով աջակցում եր հեղափոխությանը, նույնիսկ հոկտեմբեր ամսին, հոկտեմբերյան գործադուլի շրջանում, Պիտերի ձեռնարկուները կանոնավոր կերպով վճարում եյին բանվորներին գործադուլային որերի համար։ Գործարանների վարչությունները պատգամավորներին պետական նավեր եյին տալիս Խորհուրդ գնալու համար։

Այսպիսով, ահա թե ինչպիսի յեր արդյունաբերական բուրժուազիայի դիրքն այդ շրջանում. գլխի յեք ընկնում, թե դա վորքան օբյեկտիվորեն հեշտացնում եր հեղափոխական շարժումը, նպաստում եր նրան զարգանալու՝ առանձնապես առևտրական կապիտալի ռազմական անհաջողության ֆոնի վրա։

Յեզրակացության մեջ յես պետք է տառացիորեն յերկու բառով կանգ առնեմ այն հարցի վրա, թե ինչ է, հիմա՞ր եր արդյոք ռուսական բուրժուազիայի այս քաղաքականությունը։ Պատասխանը 1917 թվի մարտին ստացվեց։ Հաղթանակեց հեղափոխությունը, անկասկած, իսկական բանվորական հեղափոխությունը։ Նույնիսկ հանգուցյալ Ռոձյանկոն չեր բացասում, վոր 1917 թվի մարտին Պիտերում դրության տերը բանվորներն եյին։ Վոչ միայն Ռոձյանկոն—այդ հասկանում եր նույնիսկ Նիկոլայ II. նա իր հուշատետրում գրեց, վոր դումայի կոմիտեն փորձում է մի կերպ շարժումը սահմանների մեջ մտցնել, բայց նրա դեմ պայքարում է բանվորների սոցիալ-դեմոկրատական կոմիտեն (այսպես եր Նիկոլայն անվանում բանվորական

պատգամավորների խորհուրդը), և վերջինս ավելի ուժեղ է,—դումայականները չեն կարող նրա հախից գալ։ Միանգամայն պարզ է, վոր դրության տերը բանվորներն եյին։ Իսկ ո՞վ անցավ իշխանության գլուխը։ Իշխանության գլուխն անցավ Միլյուկով-Լվովի կադետական բուրժուական մինիստրությունը, վորն իշխանությունն ստացավ մենշևիկների, եսերների և նման այլ ելեմենտների բարյացակամ աջակցության շնորհիվ։ Այսպիսով, արդյունաբերական կապիտալի քաղաքականությունը յերբեք էլ այնպիսի հիմար ու անհեթեթ չեր, ինչպես կարող եր թվալ առաջին հայացքից։ Գործին սկիզբ դրվեց։ Ճիշտ է, առաջին հույսերը չարդարացան։ Ի՞նչ անել։ Բուրժուազիան յելքը գտավ, նա արագ կերպով դեպի աջ գնաց, իսկ ձախից բարեկամները ձախից եշեր դարձան։ Բայց ապագան ցույց տվեց, վոր ռուսական բուրժուազիայի հաշիվը, անկասկած, վորոշ չափով ճիշտ եր։

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այսպես ուրեմն, պարադոկսալ ձևով՝ ինչպես բուրժուազիան է ասում, դիալեկտիկ ձևով՝ ինչպես մենք ենք ասում, մասսայական շարժման, բանվորական մասսայական շարժման անհաջողությանը հետևից արդյունաբերական կապիտալի լիբերալ օպպոզիցիայի տապալումը։ Շնորհիվ մասսայական շարժման անհաջողության, շնորհիվ բանվորների և գյուղացիների ապստամբության անհաջողության, արդյունաբերական կապիտալը պետք է կապիտուլյացիա աներ առևտրականի առաջ։ Ինչո՞ւ այդ պատահեց։ Այստեղ պետք է միանգամայն բացարձակ կերպով ընդունենք, որ այդ հենց այն պատճառով պատահեց, որը մատնանշում էին ժամանակակից բուրժուական լիբերալները, նույն Միլյուկովը իր «ձախից եղերով»։ Դա պատահեց շնորհիվ շատ բարձր գիտակցության, յեթե ոչ ամբողջ բանվոր դասակարգի, ապա նրա վերին խավերի, և շնորհիվ այն բանի, որ մեզանում, թեպետ և սաղմնային վիճակում, արդեն գոյություն ուներ դասակարգային բանվորական կուսակցությունը։

Այս դասակարգային բանվորական կուսակցությունը՝ թույլ չտալով, որպեսզի պրոլետարիատի մասսաները, այն մասսաները, որոնք արդեն մտել էին հեղափոխական շարժման մեջ, զենք դառնան բուրժուազիայի ձեռքին՝ դրանով իսկ, անկասկած, պառակտեց ու տապալեց այդ նույն բուրժուական օպոզիցիոն շարժումը, արդյունաբերական կապիտալի և նրա հետ կապված խավերի շարժումը, այնպես որ, այսպես ասած, փաստերին բառացի համապատասխանության իմաստով, այդ մարդիկ իրավացի էին, յերբ հայհոյում էին բոլշևիկներին, նրանց մասին փրփուրը բերաններին էին խոսում, ասում էին, որ նրանք տապալեցին հեղափոխությունը։ Այո, նրանց հեղափոխությունը մենք իրոք որ տապալեցինք՝ դասակարգային բանվորական կուսակցություն ստեղծելով որոշ կողմնորոշությամբ, որը նույնքան բուրժուազիայի դեմ է ուղղված, որքան և ինքնակալության դեմ։ Մենք, իհարկե, տապալեցինք բուրժուազիայի խաղը, քանի որ բուրժուազիան մասսայական շարժման խաղ էր խաղում։ Նախորդ դասախոսության մեջ ես արդեն ասացի ձեզ, որ 1917 թվին այլ կերպ պատահեց, գլխավորապես այն պատճառով, որ վճռական մոմենտին՝ 1917 թվի փետրվարին, բոլշևիկները բեմից բացակայում էին, նրանք չկային։ Այսինքն՝ նրանք կային, բայց այնպիսի աննշան քանակով և այնքան սակավ հեղինակավոր ներկայացուցիչներով, որ նրանք քաղաքական մեծ դեր չէին կարող խաղալ։ Երբ Լենինը եկավ (հին տոմ.) 1917թ. ապրիլի սկզբին գործն արդեն արված էր, Միլյուկով—Լ՛վովի կառավարությունն արդեն նստած էր թամբին պետք էր նրան արմատախիլ անել, որը մեզ վերջ

ի վերջո, ինչպես գիտեք, հաջողվեց։ Սակայն սա հակառակ բնույթ ունեցող գործառնություն էր, իսկ մարտ ամսին մենք չէինք կարող խանգարել նրանց թամբին նստելուն։ 1905 թվին, կրկնում եմ, շնորհիվ բոլշևիկյան կուսակցության գիտակից քաղաքականության, բուրժուական խաղը չհաջողվեց, և բուրժուազիան իրոք որ տանուլ տվեց իր հեղափոխությունը, չհասավ նրան, ինչի նա ձգտում էր, չհասավ պրուսական կամ ավստրիական տիպի «կանոնավոր» բուրժուական միապետության։ Չհասավ շնորհիվ այն բանի, որ մեզանում կար բանվոր դասակարգի գիտակից վերին շերտը, որ թույլ չտվեց բուրժուազիային, որպեսզի նա այդ բանվոր դասակարգը դարձնի իր զենքը, ինչպես դա 1848 թվին Գերմանիայում և Ֆրանսիայում պատահեց։ Սրանումն է 1905 թվի մեր հեղափոխության տարբերությունը, ասենք, 48 թվից՝ Արևմտյան Եվրոպայում, ուր դեռևս չկային այդպիսի բանվորական կուսակցություններ, բանվորական մասսաները պակաս գիտակից էին, քան մեզ մոտ, և հետևանքն այն եղավ, ինչ դուք գիտեք արդեն Արևմուտքի պատմությունից։

Հիմա հարց է ծագում. արդյոք մեր հեղափոխությունը վերջացավ իմ նկարագրած պայմանների շնորհիվ արդյունաբերական կապիտալի զուտ անհաջողությամբ, թե՞ ոչ։ Այստեղ կադետները՝ իշխանության ձգտողներից օպոզիցիայի վերածվելով՝ զգալի չափով աղավաղել են պատմությունը, իսկ նրանցից այդ աղավաղումով վարակվեցինք նաև մենք։ Այն ժամանակվա կադետական մամուլը չարամտորեն վշշում էր հաղթանակած առևտրական կապիտալի վրա՝ հանձինս Ստոլիպինի և հանձինս ոկտյաբրիստների և աջերի, նա ամեն կերպ աշխատում էր ոչ միայն ռուսական, այլև արտասահմանյան մամուլում գործն այնպես պատկերացնել, որ Ռուսաստանում կեղծսահմանադրականություն է, որ այս բոլորը լոկ խաբեբայություն է, որ Ստոլիպինը վողորմելի դիմագոգ է, որը կայուն է բացառապես սվինների և լրտեսների օգնությամբ, և որ նրա բոլոր սահմանադրական «քայլերը» ոչ այլ ինչ են, յեթե ոչ մի միջոց, որով կարելի էր խաբել արտասահմանյան բուրժուազիային և փոխարինաբար փող ստանալ նրանից։ Ահա թե մոտավորապես կադետական մամուլն ինչպիսի սքեմա էր տալիս առաջին հեղափոխության հանրագումարի մասին։ Մենք նրանց կրկնում էինք, որովհետև մենք իրոք ոչ մի սահմանադրություն չենք զգացել մեր կաշվի վրա։

Կուսակցությունն անմիջապես՝ առաջին դումայի ցրումից հետո, իսկ վերջնականապես՝ երկրորդ դումայի ցրումից հետո ստիպված էր ընդհատակյա գործել։ Կուսակցությանը պատկանելու համար միայն պետական գին, կայուն գին էր նշանակված։ Այդ գինն այն էր, որ ուղարկում էին աքսոր բոլոր իրավունքներից զրկելով, իսկ այդ կուսակցության մեջ ավելի յեռանդուն կերպով մասնակցելու համար՝ նույնիսկ տաժանակիր աշխատանքների։ Ինչպես գիտեք, ռազմական կազմակերպություններում աշխատողները, ծայրամասերի մեր աշխատողները՝ լատիշ և լեհ ընկերներն աքսորավայր էին ուղարկվում։ Ոչ մի ազատ բանվորական կուսակցության հոտ անգամ չէր գալիս այդ տարիներին։ Բանվորական մամուլը՝ ինչպես այդ մենք հետո կտեսնենք՝ լեգալ, բացարձակ մամուլը վերածնվեց 1911—12 թվականներին՝ այն հզոր ճնշման ազդեցության տակ, որ արթնացող բանվորական շարժումն սկսեց գործադրել կառավարության վրա։ Այն ժամանակ ստիպված եղան թույլատրել «Պրավդան», «Զվեզդան» և այլն. թե-

պետ նրանք ամեն որ բռնագրավվում էին և մոտավորապես ամեն ամիս
փակվում, այնուամենայնիվ բանվորներն այդ ժամանակ բացարձակորեն լեգալ
մամուլով էին օգտվում։ Սակայն սա շատ ավելի ուշ էր, իսկ, ասենք, 1909
թվին այդպիսի մամուլ չկար։ Այլ խոսքով, բանվորների տնտեսական շահե-
րի պաշտպանության ամենատարրական ձևն անգամ փաստորեն գաղտնի
չէր, փաստորեն նա նույնպես անլեգալ վիճակումն էր գտնվում։ Վերջինս,
փակագծերում ասենք, հսկայական ազդեցություն գործեց բանվոր դասա-
կարգի մեջ հեղափոխական տրամադրության, հեղափոխական իդեոլոգիայի
զարգացման համար։ Այս եկնոմիզմը՝ վորի մեջ մենք ստիպված ենք դեռևս
մեղադրել մեր բանվորական մասսան 1905 թվին, միանգամայն վերացվեց
ստոլիպինյան կառավարության արհմիությունների վերաբերյալ ունեցած
քաղաքականությամբ։ Յերբ բանվորները տեսան, վոր նրանք չարաչար մո-
լորվում էին՝ յերևակայելով, վոր նրանք ինչ վոր բան ձեռք են գցել տըն-
տեսական բնագավառում և կարող են այն իրենց ձեռներում պահել, յերբ
նրանց վորոշ ցայտուն որինակներով ցույց տվին, վոր անհնար է տերերի
դեմ պայքարել առանց նախապես ցարին գլորելու, այն ժամանակ նրանք
բոլորն էլ հեղափոխական ճանապարհով գնացին, և հետևանքը 1917 թվի
փետրվարը յեղավ։ Բայց ինչպես էլ վոր լինի՝ մեր նկատմամբ սրբազան
ճշմարտություն էր, վոր վոչ մի սահմանադրություն գոյություն չուներ։
Նույնիսկ այն, ինչի մասին վոր յերազում էին խեղճ մենշևիկները 1906—
07 թվականներին, այն է՝ Ռուսաստանում սոցիալ դեմոկրատիայի գոյու-
թյունն այնպիսի պայմաններում դնել, վորոնք նույնանման են Բիսմար-
կի ժամանակների սոցիալիստների մասին յեղած բացառիկ որենքներին,—
նույնիսկ սա յերազ էր մնում, մի յերազ վոսկե դարի մասին, վորովհետև
չի կարելի, իհարկե, վոչ մի համեմատություն անել Բիսմարկի կարգերի,
յերբ մարդկանց Համբուրգից Ալտոնա կամ Ալտոնից Համբուրգ[1] էին
աքսորում, և մեր կարգերի միջև, յերբ մարդկանց լոկ կուսակցության
պատկանելու համար սիբիր էին աքսորում բնակության համար՝ բոլոր ի-
րավունքներից զրկելով, իսկ քիչ թե շատ ակտիվ ագիտացիայի համար՝
տաժանակիր աշխատանքների։ Բանվորական կուսակցության, բանվորա-
կան շարժման նկատմամբ չկար վոչ միայն վորևէ կեղծ սահմանադրակա-
նություն, այլև վոչ մի սահմանադրություն չկար, պարզապես վոչ մի յե-
րաշխիք չկար, և այդ պատճառով մենք անկեղծորեն կրկնում էինք կա-
դետների հետ միասին, վոր մեզանում կեղծ սահմանադրականություն է,
վոր Ստոլիպինը մարդկանց խաբում է և այլն։

Բայց և այնպես նույն կադետները փառավորապես օգտվում էին այդ
«կեղծ սահմանադրականությունից», վորովհետև կադետների համար, վոր-
պես արդյունաբերական կապիտալիզմի ձգտումներն արտահայտող մի կու-
սակցության համար՝ սահմանադրություն, իհարկե, գոյություն ուներ։ Նախ
և առաջ, հենց նրանց կուսակցությունը, յեթե Ստոլիպինի կողմից դե-յուրե
չէր էլ ճանաչված—այդ դե-յուրեյին նրանք միքանի անգամ ձգտում էին,
բայց անհաջող,—ապա նա ճանաչված էր դե-ֆակտո։ Կադետական կոմիտե-
ները միանգամայն ազատ գոյություն ունեին, մինչդեռ սոցիալ-դեմոկրա-
տիային պատկանելու համար աքսորում էին։ Մի անգամ միայն դատավա-
րություն յեղավ կադետական կուսակցության պատկանելու համար, վորը

[1] Յերկու հարևան գերմանական քաղաքներ՝ իրարից 1/4 ժամ հեռավորության վրա։

դատարկ բանով վերջացավ՝ դրամական տուգանքով, նույնիսկ վոչ բան-
տարկությունով։ Սա միակ դեպքն էր, և վորպես միակ դեպք, վորպես
փայլուն բացառություն, արդարացնում էր կանոնը։ Կադետական մամուլն
ավելի ազատ էր, քան, ասենք, պրուսական բուրժուական մամուլը Բիս-
մարկի ժամանակ։ Այնպես մտրակել կառավարությանը, ինչպես մեզ մոտ
էին մտրակում Ստոլիպինին և նրա կաբինետը կադետական լրագրներում
1909—1910 թվին, վոչ մի պրուսական թերթ չէր համարձակվի։ 60—70-
ական թվականների պրուսական մամուլի տոնը շատ ավելի հարգալից էր,
քան թե մեր բուրժուական մամուլի տոնը։ Այսպիսով, կադետներն ունեին
այն ամենը, ինչ անհրաժեշտ էր,—այստեղ նրանց և իշխանության միջև
լռելյայն համաձայնություն կար։ Հեղափոխական շարժման պատմության
վերաբերյալ կադետական գրքերն ազատ լույս էին ընծայվում, նույնիսկ
յեթե նրանք իրենց մեջ ցարական դատախազության տեսակետից վնասա-
կար ցիտատներ էին պարունակում, իսկ հենց վոր բոլշևիկյան գրքեր էին
յերևում, նրանք անմիջապես բռնագրավվում էին, թեպետ նրանք արտաքին
տոնի տեսակետից շատ ավելի զգույշ էին գրված, քան համապատասխան
կադետական գրքերը։ Կադետների հետ 1906 թվին չնչին թյուրիմացու-
թյուններից հետո, յերբ Ստոլիպինը բարկանալով նրանց վրա առաջին
Դումայի համար, մի քիչ հուպ տվեց, կադետներին թույլ էին տալիս մի-
անգամայն ազատ ապրել և շնչել, և բուրժուազիայի ու բուրժուական շարժ-
ման նկատմամբ սահմանադրությունը, անշուշտ, գոյություն ուներ։ Սա ա-
ռաջինն է, ինչ պետք է ընդգծենք բուրժուական շարժման նկատմամբ։ Ա-
ռաջին հեղափոխությունը լրիվ անհաջողությամբ չվերջացավ, նա կոմպրո-
միսով վերջացավ, այսպես կոչված, հասարակական սուբյեկտիվ իրավունքի
հարաբերությունների բնագավառում, այսինքն՝ այն սահմանադրական յե-
րաշխիքների բնագավառում, վորոնք կադետական կուսակցությունն ստա-
ցավ։

Սակայն յեթե մենք մի քիչ ավելի խոր վերլուծենք Ստոլիպինի քա-
ղաքականությունը, նկատի առնենք վոչ թե արտաքին զուտ-սահմանա-
դրական այն զիջումները, վոր նա անում էր արդյունաբերական բուրժուա-
զիային և այն ներկայացնող կադետական կուսակցությանը, այլ վերցնենք
Ստոլիպինի սոցիալական քաղաքականությունը, ապա մենք շատ ավելի
խոշոր զիջումներ կտեսնենք և կարող ենք ասել, վոր ստոլիպինականու-
թյունն իր ռեալ տնտեսական և սոցիալական քաղաքականության ասպա-
րեզում իսկական կոմպրոմիս էր, իսկական համաձայնություն արդյունա-
բերական և առևտրական կապիտալների միջև, ճիշտ նույնպիսի կոմպրոմիս
և համաձայնություն, ինչպիսիք իր ժամանակին նշանավոր «60-ական թվա-
կանների մեծ բարենորոգումներն» էին։ Գրեթե բառացիորեն նույն սիտուա-
ցիան, ուժերի նույն հարաբերականությունը կրկնվեց 1907—12 թ.թ. ժա-
մանակամիջոցում։ Պայմանական ստի այն լույսի տակ, վորով ստոլիպինա-
կանությունն էր պարուրում կադետական կուսակցությանը, մենք, դժբախ-
տաբար, մեծ մասամբ չնկատեցինք ստոլիպինյան այդ սոցիալական քաղա-
քականության ամենախոշոր մոմենտը, այն է՝ նրա ագրարային որենսդրու-
թյունը, վորն արտահայտվեց 1906 թ. մարտի չորսի հրովարտակում հողա-
շինարարության մասին, 1906 թ. նոյեմբերի 9-ի հրովարտակում համայնքից
դուրս գալու մասին և այս բոլորը պսակած՝ 1910 թ. հունիսի 14-ի որեն-

քում, վորն ամբողջ նախորդի հանրագումարը կատարեց։ Այժմ պետք է ուղղակի և բացահայտ կերպով ասել, և դա մեր կողմից վոչ մի դեպքում չի լինի ինքնակալությանը, վոր սա 60-ական թվականներից հետո ցարական բյուրոկրատիայի գործունեության ամենափայլուն շրջանն էր, և վոր այս տեսակետից Ստոլիպինը Նիկոլայ Միլյուտինի և նրա ատրիճանակիցների անմիջական շարունակողն էր։ Սրանից չի հետևում, իհարկե, վոր մենք ինչ վոր ճաճանչապսակով պետք է պարուրենք Ստոլիպին-կախողին, այլ այն՝ վոր մեր կողմից վոչ մի ճաճանչապսակ չպետք է տրվի նաև Միլյուտինին և Ընկ.։ Միլյուտինը յեթե ինքը չէր էլ կախում, ապա ներկա էր լինում, թե ինչպես եյին կախում Լեհաստանում, Մուրավյով-կախողի ձեռքն էր սեղմում և իր նամակներում մեծ համակրանքով էր արտահայտվում Մուրավյովի հոգնածության մասին, վորն այնքան մարդ կախեց, վոր ինքը հոգնեց։

Ստոլիպինի հողային քաղաքականությունը յերբեք վողորմելի դեմագոգիա չէր, ինչպես այն կադետներն եյին նկարագրում, մի վողորմելի դեմագոգիա, վորը նկատի ունի այն, վոր կառավարության կողմը գրավի կուլակներին (վորը, իբր թե, Ստոլիպինը նույնիսկ չհասցրեց,—կուլակին գրավելը նրան ևս չհաջողվեց), այլ վերին աստիճանի հաջող մի փորձ էր՝ արդյունաբերական կապիտալիզմի առաջ Ռուսաստանում վերջին դուռը բանալ, վորը դեռ ևս փակ էր մնում, ընդ սմին դուռն ամբողջովին բացված էր,—այնպիսի ցայտուն և վճռական գործառնություն կատարվեց, ինչպիսին, կրկնում եմ, ցարական կառավարությունը չէր կատարել գյուղացիական բարենորոգման շրջանից սկսած։ Ստոլիպինը հողային համայնքը վերացրեց,—ահա ինչումն է նրա քաղաքականության էությունը։ Թե վորքան այդ նրան հաջողվեց, դուք կտեսնեք այն թվերից, վոր յես ձեզ կբերեմ։ Դեռ այժմս, համառոտության համար, կհիշեցնեմ ձեզ նրա օրենսդրության բովանդակությունը։

Արդեն 1906 թ. մարտի 4-ի հողաշինարարության մասին օրենքը, այսինքն՝ չափազանց վաղ մի օրենք՝ մինչև առաջին դուման հրատարակված՝ բացահայտ գերադասություն էր տալիս այն գյուղացիներին, վորոնք հողի տեր են վոչ թե համայնականության հիման վրա, այլ անհատապես։ Այս օրենքում խոսքը պետական հողերի վաճառքի մասին էր և առաջարկվում էր արտոնություն տալ այն գյուղացիներին, վորոնք այդ հողերը գնելիս համայնքից կանջատվեն, կսկսեն ագարակներ ստեղծել,—այն ժամանակ արդեն ագարակային տնտեսություն էր ծրագրվում։ Նոյեմբեր 9-ի օրենքն ավելի հեռու գնաց։ Նա իրավունք տվեց ամեն մի համայնքի փոքրամասնությանը քայքայելու այդ համայնքը։ Բավական էր բոլոր ծխատերերի $^1/_5$ մասի հայտարարությունը — իսկ 250-ից ավելի ծուխ ունեցող համայնքներում՝ համայնքի 50 ծխատերերի — վորպեսզի նրանց անպատճառ առանձնացնեն համայնքից։ Այս գործառնությունը տեղական հողաշինարարական հանձնաժողովն էր կատարում, ուր մեծամասնություն կալվածատերերն ու պաշտոնյաներն եյին կազմում (գյուղացիները փոքրամասնություն եյին կազմում, ընդ սմին մինչև 1910 թիվը գյուղացիական այդ փոքրամասնությունը կամ նշանակվում էր իշխանության կողմից, կամ կալվածատերերն եյին ընտրում նահանգային զեմստվային ժողովում, այսինքն՝ գյուղացիական դասակարգային շահերը մինչև 1910 թիվը վոչ մի ներկայացուցիչ չունեյին, իսկ 1910 թվից հետո մի ներկայացուցիչ ստացան հանձինս վոլոստային ընտրողի)։ Հողաշինարարական այս հանձնաժողովը ծխատերերի $^1/_5$ մասի հայտարարության հիման վրա պետք է փաստորեն համայնական հողատիրության վերացումը ձեռնարկեր։ Առանձին դեպքերում, յեթե դա վորևե առարկության չէր հանդիպում, հողաշինարարական հանձնաժողովը կարող էր նման միջոցների դիմել նաև ավելի սակավաքանակ ծխատերերի հայտարարությամբ, և համենայն դեպս առանձին գյուղացիներին իրավունք էր տրվում համայնքից առանձնանալ և պահանջել իր համար հողակտոր մի տեղում, կազմել հողաբաժին (отруб)։ Սա մի կատարյալ հարված էր մեր հողային համայնքին և ձևական զիջում, իհարկե, արդյունաբերական կապիտալին, քանի վոր գյուղական հողային համայնքը ճորտատիրական իրավունքի գլխավոր մնացորդն էր, գյուղացիներին հողի հետ կապելու գլխավոր զենքը, այսինքն՝ մի գլխավոր միջոց, վորն ապահովում է առևտրական կապիտալի կողմից այդ գյուղացուն ազատ շահագործելը։ Այս ամբողջ մեխանիկան, այսինքն՝ թե ինչպես էր առևտրական կապիտալը կապում գյուղացուն, ինչպես էր շահագործում, յես բացատրել եմ իմ առաջին դասախոսություններում, այդ պատճառով յես սրան նորից չեմ վերադառնա, բայց համայնքը, գլխավորապես, նրա նպատակներին էր ծառայում, նրա շահերն էր, գլխավորապես, սպասարկում։ Հիմա սրանից հրաժարվեցին։

Բնորոշ է, վոր հրաժարումը դեռ հեղափոխությունից առաջ սկսվեց։ Արդեն 1903 թվին վերացվեց ընդհանուր յերաշխիքը, այսինքն՝ այս համայնական ռեժիմի հիմնական առանցքը։ Հետագայում այդ ամենն ըստ էության 1903 թվի օրենքի տրամաբանական ծավալումն էր ընդհանուր յերաշխիքի մասին։ Բայց դուք շատ լավ գիտեք, վոր պատմության մեջ տրամաբանությունն ինքն ըստ ինքյան հասկանալի գործիք չէ բոլոր հարցերը լուծելու համար, և այս կամ այն դրությունից տրամաբանական յեզրակացություններ կամ բոլորովին չեն արվում, կամ յերկար ժամանակից հետո յեն արվում։ Չէ վոր 60-ական թվականների բուրժուական բարենորոգումների տրամաբանական յեզրակացությունը բուրժուական սահմանադրությունը կլիներ։ Սակայն, ինչպես գիտեք, Ռոմանովները այդպիսի յեզրակացություն չարին մինչև 1905 թիվը, սակայն 1905 թվին շատ աղոտ կերպով արին։ Ահա, հակառակ սրան, ընդհանուր յերաշխիքից տրամաբանական յեզրակացությունը չափազանց շուտ և ցայտուն կերպով կատարվեց։ Այստեղ վորոշ անհատական պայմաններ կային։

Նույն մասսայական գյուղացիական շարժումը, վորի մասին յես խոսում եմ իմ «համառոտ ուրվագծերում», այս մասսայական գյուղացիական շարժումն սկզբում կալվածատերերին այնպիսի խուճապային նախագծերի յեր հասցնում, վոր նրանք ուզում եյին հողի կեսը ձրի կերպով գյուղացիներին տալ, և այս նախագծերը կազմվում եյին 1905 թվի հոկտեմբերի և դեկտեմբերի ժամանակամիջոցում, յերբ ինքնակալության սիրտն ավելի ու ավելի յեր գոզ ընկնում, վորոնք արժանացան Նիկոլայի բարեհաճ ուշադրությանը, վորն այդ նախագծերը հանձնարարում էր Վիտտեյին։ Բայց յերբ այդ խուճապն անցավ, 1906 թվի սկզբներին, նույն Նիկոլայը չափազանց անտարբեր վերաբերվեց Վիտտեյի և նրա մինիստր Կուտլերի մշակած նախագծին։ Վոր մասսայական այս շարժումն ուժեղ ազդեցություն է արել Ստոլիպինի օրենսդրության վրա, այդ կարիք չկա բացասելու, բայց դա

մասսայական շարժման հաղթանակ չէր, վորպես այդպիսին, դա ըստ էության արդյունաբերական կապիտալի հաղթանակն էր։ Ի՞նչ էր ուզում օբյեկտիվորեն այդ արդյունաբերական կապիտալը։ Նա ուզում էր, իհարկե, սահմանադրություն, հաճելի բան է, բայց շահագործողի համար սա ավելի շուտ համեմունք էր։ Շահագործողին ինչին է պետք ժողովրդական ազատությունը, մանավանդ իսկական ժողովրդական ազատությունը, ինչ պիտի անի այն։ Իհարկե, յերբ այդ ազատությունն անհրաժեշտ է վորպես խաղ, ինչպես դա Անգլիայում և մասամբ Գերմանիայումն էր, արդյունաբերական ձեռնարկուն դրան էլ է պատրաստ. սակայն ազատության ներքին, օրգանական պահանջ նա չունի։ Նրան իրավաբանական ազատություն է հարկավոր, այսինքն՝ հողից, արտադրության միջոցներից բանվոր պրոլետարին ազատելը։ Սա չէ առաջինը, վոր նրան անհրաժեշտ է։ Յերկրորդ նրան՝ այդ արդյունաբերական կապիտալին անհրաժեշտ է ներքին շուկա, ներքին շուկա այն դեպքում, յերբ այսպես թե այնպես չի հաջողվում արտաքին շուկաներ ձեռք գցել։ Ճապոնական պատերազմը ցույց տվեց, վոր դեռ այժմ արտաքին շուկաների վրա պետք է խաչ քաշել, վոր մեր ձեռնարկուն պայքարի այն միջոցներով, վոր նա ունի, չի կարող արտաքին շուկաներ իր տրամադրության տակ գցել։ Ստիպված էր, այսպես թե այնպես, ներքին շուկան ընդարձակել։ Ահա յերկու բան, վորոնք իրապես անհրաժեշտ էին մեր արդյունաբերական կապիտալիստին՝ վոչ վորպես սահմանադրական գիգի-բիգլիներ, այլ իրապես նրա տնտեսական գոյության համար մի կողմից՝ պրոլետար, մյուս կողմից՝ ներքին շուկա։ Վորքան վոր պրոլետարը նախատեսնում էր մեծ քանակությամբ քայքայվող գյուղացիներ, նույնքան և ներքին շուկան նախատեսնում էր քիչ թե շատ կայուն գյուղացիություն, վորը համեմատաբար լավ է սնվում, լավ հագնվում է, ընդհանրապես ավելի մարդավարի, ավելի հարմար ձևով կառուցված բնակարանում է ապրում և այդ պատճառով կարիք ունի ավելի մեծ քանակությամբ արդյունաբերական արտադրության ապրանքների։ Այս յերկու գծով էլ, ինչպես դուք հիմա կտեսնեք, ընթանում էր ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը։ Նա ձգտում էր ապահովելու մեր արդյունաբերական կապիտալը նախ՝ «ազատ» և էժան բանվորներով և յերկրորդ՝ ներքին շուկայով։

Այժմ թվական մատերիալին եմ անցնում։ Այստեղ նախ պետք է պարզել, վորոնք էին այդ բարենորոգության անմիջական հետևանքները, վորի անհաջողության մասին յես անգամ ձեր ծրագրներում կարդացի։ Այնտեղ ասված է. «ստոլիպինյան բարենորոգության անհաջողությունը» (կարծեմ՝ անհաջողության պատճառները)։ Յեթե հաջողություն ասելով հասկանանք 100% հաջողություն, այդպիսի հաջողություն ստոլիպինշչինան չի ունեցել, իհարկե,— սա ամեն կասկածից դուրս է,— սակայն վորոշ հաջողություն նա այնուամենայնիվ ունեցավ։ Ահա թվերը։ Մինչև 1915 թիվը համայնքից դուրս գալու մասին հայտարարություն տվող ծխատերերի քանակը 2756 հազար էր հաշվում, այսինքն՝ Ռուսաստանում յեղած բոլոր համայնական ծխատերերի 30%-ը։ Նրանցից փաստորեն համայնքից դուրս յեկան 2008 հազար, այսինքն՝ 22%. Նրանց վրա վորպես սեփականություն հաստատվեց 14 միլ. դեսյատին հող, այսինքն՝ համայնական հողատիրության ձեռքում գտնվող բոլոր հողերի 10%-ը, բայց հաստատման համար նախապատրաստված էր ևս 18 միլիոն դեսյատին։ Ուրեմն, համայնքից պետք է առանձնաց-

վել ընդամենը 32 միլ. դեսյատին, նորից Ռուսաստանի ամբողջ համայնական հողի գրեթե $^1/_3$-ը՝ 30%-ը։ Այսպիսով, յեթե ասենք, վոր Ստոլիպինին չհաջողվեց մինչև վերջ կործանել Ռուսաստանում համայնքը, դա ճիշտ կլինի, բայց և այնպես $^1/_3$-ով նա այդ համայնքը կործանեց։ Վոր հետագայում նա առանձին հաջողություններ չպետք է սպասեր, դա ցույց է տալիս համայնքից առանձնացման մասին ըստ տարիների հայտարարություն տված ծխատերերի քանակը (հազարներով)։ Սա շատ հետաքրքիր աղյուսակ է, ուշադիր լսեցեք։

1907 թվին, յերբ հեղափոխության պատրանքները, կալվածատիրական հողը ստանալու հույսերը դեռ վերջնականապես չէին մարել, առանձնացման մասին միայն 212 հազար հոգի հայտարարեցին։ 1908 թվին՝ միանգամից 840 հազ., 1909 թվին՝ 649 հազ., 1910 թվին՝ 342 հազ., 1911 թվին՝ 242 հազ., 1912 թվին՝ 152 հազ. և այլն, գնալով նվազում է։ Դուք տեսնում եք, թե ինչպես 1908 թվին միանգամից խցանը դուրս թռավ, կատաստրոֆա տեղի ունեցավ, համայնքից առանձնացվելու մասին հայտարարություն տվողների քանակը 4 անգամ ավելացավ։ Ագրարային հեղափոխության միջոցով գյուղացիների ձեռքը կալվածատիրական հողերն անցնելու հույսերը խորտակվեցին, և գյուղացիների զգալի մասսան հուսից Ստոլիպինյան ճանապարհով՝ սկսելով զատվել համայնքից։

Վորպեսզի դուք կարողանաք այս պրոցեսի արդյունքները գնահատել, նորից թվական տվյալներով պետք է համեմատեք, թե վորքան էին ծխականները ստոլիպինշչինայից առաջ և վորքան նրանից հետո, այսինքն՝ ինչպիսի յեր անհատական հողատիրության տարածությունը 1905 թվին։ Ծխայինների ընդհանուր քանակը Ռուսաստանում ընդհանրապես, առանձնապես արևմտյան և հարավային նահանգներում 2,8 միլիոն էր։ Ստոլիպինշչինան 1905 թվից հետո նրանց միացրեց կլոր թվով ևս 2 միլ.՝ մեծացումը գրեթե կրկնապատիկ է—մինչև 4.800 հազար։ Իսկ յեթե մենք վերցնենք այն թվերը, վորոնք բնորոշում են, թե այդ ծխայիններից քանիսն ընդհանրապես դադարեց (ներողություն եմ խնդրում վատ կալամբուրի համար) վորևե դռնապան լինելուց և պրոլետարացավ, ապա շատ հետաքրքիր սերիայի թվեր կստանանք, վորը միանգամայն հակադիր է այն սերիային, վորը յես բերի համայնական հողատիրությունից զատվելու հարցի մասին։ 1907 թվին գյուղացիները ծախել են միայն 26 հազ. դեսյատին նադելային հող, 1908 թվին՝ 157 հազ. դես., 1909 թվին՝ 373 հազ. դես., 1910 թվին՝ 524 հազ. դես., 1911 թվին՝ 533 հազ. դես., 1912 թվին՝ 650 հազ. դես. և այլն։ Տեսնում եք, թե ինչպես գլորվող ձյան կույտի պես մեծանում է հողազրկված գյուղացիների այս մասսան։ 1915 թվի սկզբներին իրենց հողաբաժինները ծախեցին բոլոր առանձնացվածների 30%-ը, այդ նադելների հողը 20%-եր, տարածությունը՝ 2,8 միլ. դեսյատին։

Ահա թե ինչ չափերով աճեց պրոլետարիատը՝ շնորհիվ ստոլիպինյան բարենորոգության։ Յեթե դուք վերհիշեք, վոր XIX դարի վերջին մենք ունեինք 5 միլիոն մաքուր պրոլետարիատ (Վլադիմիր Իլյիչը 10 միլիոն էր հաշվում, բայց նա կիսապրոլետարիատին էլ էր հաշվում, այսինքն՝ նրանց, ովքեր հողաբաժիններ ունեյին, բայց չեյին կարող գոյություն պահպանել առանց աշխատավարձի,—բայց զուտ պրոլետարիատը 5 միլիոն էր), իսկ հիմա նրանց միացավ մոտավորապես ևս $2^1/_2$ միլ., հավելումը կլինի 50%-ով։

Սա պետք ե հիշել, վորովհետև սա մեզ բացատրում ե, թե ինչպես հացի բարձր գների պայմաններում, վորոնք այս ամբողջ ժամանակը պահպանվում եյին, մեզանում կարող եր արդյունաբերության այն բուռն ծաղկումը լինել՝ 1909 թվից սկսած, վորը մեծ չափերով գերազանցեց XIX դարի 90-ական թվականների հացի ցածր գների վրա հենվող արդյունաբերության վերելքը։ Սա նրանով ե բացատրվում, վոր այս ժամանակ ստոլիպինյան հողաշինարարությամբ շատ խելացի կերպով բացվել եր խփանը։ Հացն ավելի թանգացավ, և սրա շնորհիվ աշխատավարձը մի քիչ ավելի բարձրացավ։ Բայց վորովհետև շուկա յեր նետված $2^{1}/_{2}$ միլիոն բանվորական ձեռների նոր մասսա, հետևանքը յեղավ այն, վոր ձեռնարկուները կարողանում եյին աշխատավարձն իրենց համար ձեռնտու բարձրության վրա պահել՝ շնորհիվ առաջարկվող բանվորական ձեռների հսկայական մրցման։ Ի դեպ, սա պետք ե հիշել նաև նրա համար, վորպեսզի հասկանանք բանվորական շարժման սրումը 1911—12 թ. թ. սկսած։ Այս սոսկալի շահագործումը, վորին պետք ե յենթարկվեր այս նոր կազմված, և հին պրոլետարիատը, վորին ճնշում եր գյուղից յեկած այս նոր բանվորական ուժի հոսանքը, սա, իհարկե, ուժեղ կերպով սրում եր դրությունը քաղաքներում, սրում եր բանվորական մասսայի անտեսական դրությունը և նրան դրդում եր շարժման ավելի և ավելի ակտիվ ձևերի։

Թե ստոլիպինշչինայից հետո ընդհանրապես վորքան ե պրոլետարացել ռուսական գյուղը, ցույց կտան ազգաբնակչությունն անասունով ապահովելու հետևյալ թվերը։ 100 բնակչին 1905 թվին 25 ձի յեր հաշվում, 1913-ին՝ 23 ձի։ Խոշոր յեղջերավոր անասուն՝ 1905 թվին—39, 1913-ին—35. վոչխար և այծ՝ 1905 թվին՝ 57, 1913-ին—51. խոզեր՝ 1905 թ.—11, 1913 թ.—10։ Սա մի գիծ ե, վորով ընթանում եր ստոլիպինյան ոբեննդրությունը, մի գիծ, վորով Ստոլիպինը ձգտում սահմանեց առևտրական և արդյունաբերական կապիտալների միջև,—սա մեր արդյունաբերությանը գյուղի պրոլետարացման միջոցով եժան բանվորական ձեռք հայթայթելն ե։ Հիմա թույլ տվեք նրա մի այլ կողմի վրա կանգ առնել՝ ներքին շուկայի ընդհարձակման վրա։ Այստեղ մենք մի շարք խիստ արտահայտիչ թվեր ունենք։

Նախ և առաջ, յեթե վերցնենք շաքարի գործածությունը յուրաքանչյուր շնչի կողմից, հետևյալ թվերը կգտնենք. 1895—1896 թ. թ.՝ 8, 7 ֆ., 1905—1906 թ. թ.՝ 14,7 ֆ., 1912—13 թ. թ.՝ 19 ֆ., այսինքն՝ 1895—1896 թվերի հետ համեմատած աճումն ավելի քան կրկնապատիկ ե։ Յես դիտմամբ բերի գյուղի պրոլետարացումը լուսաբանող թվերը։ Նրանք պետք ե ապահովեին ձեզ այն պատրանքից, թե՝ իբր թե գյուղացիական մասսայի նյութական դրությունը թեկուզ և քիչ չափով՝ բարելավվեց։ Այդպիսի բան չկա։ Բայց վոր ինչ վոր մեկն սկսեց լափել շաքարը վոչ թե յերկու, այլ յերեք անգամ ավելի, քան առաջ եր լափում, սա ամեն մի կասկածից դուրս ե։ Նույնը կստանանք, յեթե վերցնենք թիթեղ-յերկաթի մշակույթի թվերը. 1903 թվին՝ $14^{1}/_{2}$ միլ. փութ թիթեղ-յերկաթ, 1905 թ.՝ նույնիսկ 13,4-ից ել պակաս, իսկ հետո այսպիսի թվեր են գալիս. 1908 թ.՝ 18,6 միլ. փ., 1911 թ.՝ 20,7 միլ. փ., 1912 թ.՝ 22,4 միլ. փ., 1913 թ.՝ 25,3 միլ. փ.,—թիթեղ-յերկաթի մշակման շարունակաբար բարձրացող նորմա։ Յեվ պարզ ե, վոր քայքայվող ու իր հողամասը վաճառող գյուղացին չեր, վոր իր խըր-

ճիթը թիթեղով եր ծածկում,—նրա խրճիթը յերևի բոլորովին բաց եր,—այլ կուլակն սկսեց ավելի և ավելի թիթեղ գործածել, վորպես տանիքը ծածկելու նյութ։ Յեվ այդ դեռևս 80-ական թվականների համար բնորոշ կուլակային խրճիթն եր, հաստատուն, գեղեցիկ խրճիթները թիթեղյա տանիքներով, վոր Պլեխանովն ե նկարագրել իր քաղվածքներից մեկում, նրանք, իհարկե, այն ժամանակ ավելի և ավելի շատ եյին յերևան գալիս։

Յեվ վերջապես յերրորդ գիծը, խնայողական գանձարկղները։ 1899 թ. մենք ունենք խնայողական գանձարկղներում 126 միլ. ռուբլու գյուղացիական ավանդներ։ 1903 թվին (նկատեցեք, թե ինչպես ե արտահայտվում հացի գների բարձրացումը) մենք ունենք արդեն 201 միլ. ռ.—այդ ժամանակ բոլոր մուծումների 22% գյուղացիներն եյին կատարում։ Իսկ 1912 թվին մենք ունենք 420 միլ. ռ.,—այսինքն՝ ավելի քան յերկու անգամ 1903 թվի դիմաց, և գյուղացիական ավանդներն արդեն կազմում են բոլոր մուծումների 30,4%։

Դուք տեսնում եք, վոր Ստոլիպինը զոդում եր անցկացնում արդյունաբերական կապիտալիզմի հետ մի այլ գծով ևս՝ ընդհարձակելով ներքին շուկան։ Թվեր չեմ բերի, բայց դուք կռահում եք, իհարկե, վոր այս աճող կուլակը, վորը շաքար եր ուտում և իր խրճիթը թիթեղով եր ծածկում, նա համեմատաբար ավելի շատ ել չիթ, կոշիկ եր գնում, նա յել սկսում ե ավելի շատ գյուղատնտեսական մեքենաներ գնել՝ մանավանդ հարավում, այլ խոսքով՝ ամեն կերպ ճարպակալում եր և իր ճարպով սնուցանում ռուսական արդյունաբերությունը։ Թե ինչ չափերով եր սնուցանում և վորքան մեծ եր նրա վերելքը, այդ մասին յես կասեմ հաջորդ դասախոսությանս մեջ։

* * *

Ինձ միքանի հարց ե տրված, վորոնք ընդհանրապես շատ հետաքրքիր են, և վորոնց յես իմ պարտքն եմ համարում պատասխանել, մանավանդ, վոր մենք հիմա մեր դասընթացքի չափազանց կարևոր տեղումն ենք, վորի մասին դուք քիչ ձեռնարկներ ունեք ձեռքի տակ, կամ չկան միացյալ ձեռնարկներ, և բոլոր հարցերն ստիպված ենք այստեղ դասախոսությունների ժամանակ պարզել։ Թույլ տվեք պատասխանել առաջին հարցին, վորն իմ կարծիքով, թյուրիմացության, բայց հետաքրքիր թյուրիմացության արդյունք ե,—դա այն հարցն ե, թե արդյոք 1905 թվի հեղափոխությունը մեր բանվոր դասակարգի համար պայքար եր շահույթի համար (տառացիորեն այդպես ել գրված ե), թե՞ նրա մեջ վորոշ քաղաքական բովանդակություն կար։

Այստեղ յես պետք ե ասեմ, վոր յեթե իմ տվյալներով բանվորների մոտավորապես կեսը, իսկ ընկ. Կ. Սիդորովի տվյալներով մի յերրորդն եր գործադուլ անում 1905 թվին զուտ տնտեսական լոզունգների տակ, ապա դա բոլորովին ել չի նշանակում, վոր այդ բանվորները միայն շահույթի համար եյին պայքարում։ Այստեղ պետք ե յերկու մոմենտ տարբերել. շարժման, յեթե կարելի չե այսպես արտահայտվել, հեղափոխական տեմպերամենտը՝ մի կողմից և հեղափոխական գիտակցությունը՝ մյուս կողմից։

Իմ դասախոսությունների մեջ յես աշխատում եյի ընդգծել, վոր բան-

վոր դասակարգի հեղափոխական գիտակցությունը մեզանում, անկասկած, չեր եր մնում 1905 թվին։ Բանվոր դասակարգի վերին շերտի, նրա ավանգարդի՝ բոլշևիկյան կուսակցության հեղափոխական գիտակցությունը — կասկածից դուրս է։ Բայց դա չի նշանակում, վոր մնացած մասսան հեղափոխական տրամադրություն չուներ, միայն թե այդ տրամադրությունը չեր գտնում դեռ իր ցայտուն իդեոլոգիական ձևը։ Հեղափոխական իդեոլոգիան մեզանում բանվոր դասակարգի մեջ սկսեց հաջողություն գտնել, ինչպես ասացի ձեզ, պարադոկսալ, ավելի շուտ, դիալեկտիկ ձևով, վորպես հետևանք առաջին հեղափոխության անհաջողության։ Յերբ բանվորները համոզվեցին, վոր շարժման այն ձևերը, վորոնց վրա նրանք հույս ունեյին, տնտեսական շարժման ձևերը՝ առանց քաղաքականության — վոչինչ են, ահա այդ ժամանակ է, վոր նրանք սկսեցին գիտակցել իրենց շարժման քաղաքական կողմը։ Սակայն դա չի նշանակում, վոր նրանք հեղափոխական տրամադրություն չունեյին։ Յես կհարցնեմ, օրինակ, ձեզ մեր բանվորների տրամադրությունը 1918 թվին, յերբ նրանք պահանջում եյին պրոֆեսորական շալվարի բաժանում, արդյոք սոցիալիստակա՞ն եր, թե՞ վոչ։ Յերբ յես յելույթներ ունենալով Մոսկվայի խորհրդում և ռայոնական ժողովներում, պետք է բացատրեյի բանվորներին, վոր պրոֆեսորական շալվարի բաժանումը սոցիալիզմի ամենավատ տեսակն է, նրանք ինձ առարկում եյին, թե՝ դա ինչպիսի սոցիալիզմ է, յեթե պրոֆեսորը հինգ սենյակում է ապրում, ունի հինգ շալվար, իսկ մենք պատառոտված ենք մտնում գալիս (այն ժամանակ սարսափելի մանուֆակտուրային սով եր) և նկուղում ենք ապրում՝ հինգ հոգի մի սենյակում։ Սա, իհարկե, սոցիալիզմ չե, և նրանք միանգամայն իրավացի եյին։ Նրանք սոցիալիստական բնազդ ունեյին, բայց միևնույն ժամանակ գիտակից վերաբերմունք չունեյին դեպի սոցիալիզմը, այն բանի հասկացողությունը, վոր պետք է վոչ թե պրոֆեսորական շալվարը բաժանել, այլ մի ուրիշ բան անել՝ ավելի արմատական և սիստեմատիկ։

Այսպես ուրեմն, յես յերբեք չեմ պնդել, վոր 1905 թվին բանվորները պայքարում եյին միայն շահանոցի համար. բայց վոր շատերը նրանցից իրենց պայքարը հասկանում եյին վորպես պայքար տերերի դեմ և այս տեսակետից հեռու չեյին գնացել գյուղացիներից, վորոնք իրենց հեղափոխությունը հասկանում եյին վորպես պայքար կալվածատիրոջ դեմ, — դա միանգամայն ճիշտ է։

Բայց և այնպես չի կարելի այդ շարժումը մինչև «շահանոցը» ստորացնել, վորովհետև այն ժամանակ մենք չենք հասկանա 1905 թվի ռուսական բանվորական շարժման և 1850—1890 թ. թ. ժամանակամիջոցի անգլիական բանվորական շարժման տարբերությունը։ Վերջինս իրոք պայքար եր շահանոցի համար, վորովհետև անգլիական բանվորները գիտակցորեն խուսափում եյին հեղափոխական շարժումից. ամբողջ տրեդ-յունիոնիստական շրջանում, այսինքն՝ 40 տարվա ընթացքում — 1850-ից մինչև 1890 թիվը անգլիական բանվորները հեղափոխականներ չեյին։ Նրանք գիտակցորեն խուսափում եյին պայքարի հեղափոխական ձևերից։ Սա իրոք շահանոցի համար պայքար եր, իսկ մեր բանվորները պայքարի հեղափոխական ձևերից չեյին խուսափում։ Նրանք տեմպերամենտով, տրամադրությունով արդեն հեղափոխականներ եյին, բայց դեռևս չեյին գիտակցում իրենց հեղափոխա-

կան շարժման վերջնական արդյունքները և յերևակայում եյին, վոր այդ շարժումը կարող է կանգ առնել տերերի նկատմամբ հաղթության վրա, մինչդեռ պետք եր առաջ գնալ և թագավորին գլորել։ Այդ նրանք դեռևս չեյին գիտակցում։

Ահա թե ինչպես պետք է հասկանալ այն, ինչ յես ասում եյի 1905 թվի ռուսական բանվորական շարժման մասին։

Հիմա հաջորդ հարցը, վոր մասամբ կապված է դրա հետ. ինչպես հասկանալ 1905—07 թվի հեղափոխությունը, — դա բուրժուակա՞ն եր, թե՞ սոցիալիստական հեղափոխություն։ Յես կարծում եմ, վոր դեռևս Կաուտսկին 1905 թվին վերջ տվեց «բուրժուական» և «սոցիալական», ինչպես այն ժամանակ եյին ասում, կամ սոցիալիստական հեղափոխությունների զուտ-մետաֆիզիկ հասկացողությանը։

Յերբ 1905 թվին Պլեխանովը հարցնում եր Կաուտսկուն, բուրժուակա՞ն է մեր հեղափոխությունն իր բնույթով, թե՞ սոցիալիստական, Կաուտսկին պատասխանում է. սա հին շաբլոն է, սա մարքսիստորեն չե։ «Հեղափոխությունը Ռուսաստանում բուրժուական չե» — բացատրում եր Կաուտսկու ասածները Լենինը, — «վորովհետև բուրժուազիան Ռուսաստանի ներկա հեղափոխական շարժման շարժիչ ուժերին չի պատկանում։ Յեվ Ռուսաստանի հեղափոխությունը սոցիալիստական էլ չե, վորովհետև նա վոչ մի կերպ չի կարող պրոլետարիատին միակ տիրապետության կամ դիկտատուրայի բերել»։ Սրան պետք է ավելացնել, վոր բուրժուական հեղափոխության համար՝ նրա մենշևիկյան հասկացողությամբ, այսինքն արդյունաբերական կապիտալի հաղթանակի համար մեզանում, ինչպես ավելի լավ կլինի, վոր ասենք — վառոդը քիչ եր, վորպեսզի գործը հեղափոխության հասներ։

Յես ձեզ պատմեցի, թե ինչումն եր կայանում ստոլիպինյան քաղաքականությունը, ինչ բան եր դա։ Հողային համայնքի քայքայումը։ Յեթե սա թարգմանենք ֆրանսիական հեղափոխության լեզվով, դա կնշանակի՝ «առանձնաշնորհումների վոչնչացում»։ Ինչպես այնտեղ, Ֆրանսիայում, արդյունաբերական կապիտալիզմի զարգացման ճանապարհին առանձնաշնորհումներն եյին կանգնած, և նրանց պետք եր ավլել, մաքրել, այնպես էլ մեզ մոտ սրա ճանապարհին հողային համայնքն եր կանգնած։ Յեվ ո՞վ է մեզ մոտ հողային համայնքն ավլում։ Ավլում է Ստոլիպինի ռեակցիոն կառավարությունը, ցարական կառավարությունը։

Այսպիսով, արդյունաբերական կապիտալիզմի, վորպես այդպիսինի զարգացման համար, մեզանում բռնի պայթյունի կարիք չկար, թեպետ յես չեմ բացասի այն, վոր 1905—06 թվականների մասսայական շարժումը, վորքանով վոր նա ահեղ հիշեցում եր, զգալի չափով արագացնում եր այդ պրոցեսը։ 1903 թվին համապարտ յերաշխավորությունը վերացրին, իսկ 1906 թվին սկսեցին արդեն հողային համայնքի ռեալ, փաստական լիկվիդացիան, և քանի վոր այդ լիկվիդացիան ցարական կառավարությունն եր կատարում, դրա համար հեղափոխությունը հարկավոր չեր, այլ բավական եյին միայն բարենորոգությունները։ 1905 թվի բանվորական և գյուղացիական շարժումները ներկա դեպքում «շտապեցնողի» դեր կատարեցին՝ Ղրիմի պատերազմի շրջանի գյուղացիական խլրտումների նման, սակայն, ավելի յեռանդուն կերպով, իհարկե, գործող «շտապեցնողի» դեր։ XIX դարի ինքնակա-

լությունը, ինչպես դուք լավ գիտեք, բավարար չափով լսում եր արդյունաբերական կապիտալիզմի պահանջները, մանավանդ, վոր նա ինքն ել յերբեք ել զառամյալ ֆեոդալիզմի ծնունդ չեր, այլ առևտրական կապիտալիզմի կողմից եր ստեղծված, այսինքն՝ նույն կապիտալիստական զարգացման նախորդ շրջանի։

Հիմա նախավերջին հարցը, վորին պետք ե պատասխանել,—դա առևտրական և արդյունաբերական կապիտալներին վերաբերող հարցն ե։ Այստեղ ինձ մատնանշում են, թե ինչպես պատահեց, վոր առևտրական կապիտալը կարողացավ արդյունաբերականին հաղթանակել, մինչդեռ արդյունաբերական կապիտալը կապիտալիզմի ավելի բարձր ձևն ե, քան առևտրականը։ Սա նորից խոտակ մետաֆիզիկա յե։ Չի կարելի հետևյալ կերպ պատկերացնել. բում, բում, բում—առևտրական կապիտալն ե գալիս, յեկավ։ Բում, բում, բում—արդյունաբերական կապիտալն ե գալիս, յեկավ։ Բում, բում բում,—սոցիալիզմն ե գալիս, յեկավ։ Այսպես, յերեխայի նման չի կարելի հարցը պատկերացնել։ Ներողություն եմ խնդրում «յերեխայի նման» բառերի համար, բայց դա ձեզ չի վերաբերում, այլ այս ձևով գրող շատ հրապարակախոսներին։ Այսպես չի կարելի հարցը պատկերացնել։ Կենդանի պատմական պրոցեսը զանազան հոսանքների հյուսվածք ե։ Վերջին հաշվով, իհարկե, կապիտալիզմի ավելի բարձր ձևը հաղթանակեց, և դուք այդ տեսաք հենց ստոլիպինականության որինակով։ Ձևականորեն առևտրական կապիտալը հաղթանակեց։ Մասսայական շարժումը, վորը փորձեց ոգտագործել արդյունաբերական կապիտալը, ջախջախվեց, իսկ հեղափոխությունն ի վերջո ում ոգտին եր։ Նա արդյունաբերական կապիտալի ոգտին եր, այնպես վոր վերջին հաշվով հաղթությունն արդյունաբերական կապիտալը տարավ։ Նա շատ բարդ, վոլորապտույտ ճանապարհներով եր ընթանում, և այդպիսին ե առհասարակ պատմական պրոցեսը։ Յեթե պատմության մեջ նման վոլորաններ չլինեյին, ապա չարժեր առհասարակ պատմությունով զբաղվել, այլ սոցիոլոգիան միայն բավական եր աչքի անցկացնել։ Ինչու յենք մենք պատմությունով զբաղվում։ Վորպեսզի դուք տեսնեք, թե ինչպես գործնականում այս բոլոր պատճառները բարդ են, ինչպես են նրանք իրար հյուսվում, ինչպես նրանք մերթ առաջ են վազում, մերթ յետ մնում, վորովհետև կյանքում, գործնական տակտիկայում մենք ստիպված ենք գործ ունենալ իրականության հետ, և մենք պետք ե պատմական որինակով մեզ վարժեցնենք պատմական պրոցեսի այդ բարդությանը, ճկունությանը և վոլորտությանը։ Մենք պետք ե պատրաստ լինենք նրան, վոր մենք յերբեք ել ուղիղ, սլաքի նման ձգված գծով չենք գնում առաջ, այլ չափազանց վոլորապտույտ, դար ու փոսով և այլն, և յեթե մենք մեր վոտների տակը չնայենք, այսինքն՝ կենդանի պատմական իրականությունը չուսումնասիրենք, մենք կսայթաքենք և այնպիսի փոսերի մեջ կընկնենք, վոր վոտներս կջարդենք։

Հիմա վերջին հարցը, վորը մտնում ե իմ դասընթացքի մեջ, բայց ես այդ ներկա դասախոսության պլանի մեջ տեղավորեցի,—դա այն հարցն ե, թե ինչ եր իրոք ներկայացնում իրենից կադետական կուսակցությունը։ Մասնավոր խոսակցության ժամանակ յես արդեն ասացի ընկերոջը, վոր այստեղ շատ հետաքրքիր տվյալներ կան՝ քաղված, ճիշտ ե, վոստիկանության դեպարտամենտի արխիվներից, այնպես վոր, յերբ մենք նրանց կհրատարակենք, կադետներն արտասովոր ազնվածին տեսլությամբ կասեն. ահա

ձեզ մի որինակ ել, վոր բոլշևիկներն ամեն տեսակի պրովոկատորների հետ են։ Սակայն վոստիկանության դեպարտամենտն այնուամենայնիվ հետևում եր կադետական կուսակցությանը, թեպետ և նա լեգալ եր. վոստիկանությունը տվյալներ եր հավաքում կադետների մասին, և այդ տվյալների մեջ շատ հետաքրքիր կողմ կա. դա կադետական կուսակցության նյութական միջոցների հարցն ե։ Պարզվում ե, վոր Մոսկվայում, որինակ, կադետներին սուբսիդիա եյին տալիս այնպիսի անձինք, ինչպես Վիշնյակովն ե՝ առևտրական ինստիտուտի հիմնադիրը, Մոսկվայի խոշոր հարուստներից մեկը, ինչպես Ռյաբուշինսկին։ Ռյաբուշինսկին կադետների ամենաձեռնառատ մատակարարն եր, այդ պատճառով նրան ել պատրաստվում եյին կադետները չորրորդ դումա անցկացնել ընտրությունների ժամանակ։ Ռյաբուշինսկու թեկնածությունը հենց նրանով ել բացատրվում եր, վոր նա ամենաձեռնառատն եր և բացի այդ, իր լրագիրն ուներ։ Այս յերկու հատկությունների շնորհիվ նա կադետների համար առանձնապես կարևոր եր։ Յես մասնավոր տեղեկություններից գիտեմ, վոր առաջ ել այդ այդպես եր։ Այս փաստից մի քանի տարի առաջ, յես գիտեյի, վոր դեռ 1907 թվին կադետական «Новь» լրագիրը Մոսկվայում սուբսիդիա յեր ստանում հրեական խոշոր բուրժուազիայի մի ինչ վոր սինդիկատի կողմից, վորն ամենից շատ գործի ազգային կողմի մասին եր հոգում և, գտնելով, վոր թերթը բավարար չափով չի պաշտպանում հրեաների շահերը՝ գալիս եր մեր բոլշևիկյան հրապարակախոսի՝ Մ. Գ. Լունցի մոտ (Մ. Գրիգորյեվսկի, «Վոստիկանական սոցիալիզմը Ռուսաստանում»—սա նրա բրոշյուրն ե) և առաջարկում եր նրան թերթի խմբագիրը դառնալ։ Նա ծայր աստիճանի զարմացած եր և ասում եր— ինչպե՞ս, չե՞ վոր ձեր թերթը կադետական ե, իսկ յես բոլշևիկ եմ։ Նրան ասում են. դա միևնույն ե։ Մենք կարծում ենք, վոր ձեր վերաբերմունքը դեպի ազգային հարցն ավելի վորոշ ե։ Այսպիսով, կադետական կուսակցությունը փաստորեն ռոճիկ եր ստանում հրեական բուրժուական սինդիկատից, վորը, ինչպես տեսնում եք, բավական անտարբեր եր դեպի կադետական ծրագիրը։ Ըստ ցարական վոստիկանության տվյալների, կադետները շատ մեծ սուբսիդիա՝ մինչև 300 հազար ֆիննական մարկա, այսինքն՝ մինչև 300 հազար ֆրանկ, կամ 120 հազար ռուբլի վոսկով ֆինլանդական բուրժուական կուսակցություններից ստացան՝ Ֆինլանդիայի շահերը ռուսական մամուլում և պետական դումայում պաշտպանելու համար։ Ահա ձեզ մի ուրիշ աղբյուր։ Յեթե սրան ավելացնենք վոր կադետական «Речь» թերթը ծագեց Վոլգա-Կամային բանկի տերերից մեկի, կարծեմ Բակի. ազգանունը լավ չեմ հիշում, միջոցներով, վորը հիմնեց «Речь»-ը և վորը հետո ինքնասպանություն գործեց (այս առթիվ «Речь» ում շատ սրտառուչ դամբանական կար և այլն), յեթե սրան ավելացնենք, վոր նույն Վոլգա-Կամային բանկի և Ազովո-Դոնյան բանկի բանկային սուբսիդիաները հիշվում են նաև կադետական կուսակցության մասին ագենտուրային տեղեկություններում, ապա ընդհանուր առմամբ ըստ ամենայնի վորոշակի պատկեր կստացվի։ Սրանով եր բացատրվում կադետական կուսակցության պատերազմի ժամանակ բռնած դիրքը։ Բայց յես առաջ չեմ վազի։

Այսպիսով, ստոլիպինյան քաղաքականությունն արդյունաբերական կապիտալի շահերի և առևտրական կապիտալի շահերի զոդման քաղաքականություն եր, վորն այն ժամանակ դեռ շարունակում եր իր տիրապետու-

թյունը՝ շնորհիվ այն բանի, որ հացի գները շարունակում էին բարձրանալ։ Յեթե մենք 1899 թ. հացի գները 100 ընդունենք, ապա 1901 թ. կստանանք 103, 1913 թ.՝ 130։ Հացի գները վեր էին բարձրանում և այդ պատճառով ռուսական հացի արտածումն աճում էր ոչ միայն ծավալով, այլ և իր արժեքով։ Ահա ռուսական հացի արտածումը, թե ըստ փթերի քանակի և թե ըստ ռուբլիների քանակի 1900 թ. հետ համեմատած՝ յեթե այն 100 ընդունենք՝ 1909 թ.—182 փութ և արժեքը 249 ռուբլի։ Դուք տեսնում եք, թե այս 9 տարվա ընթացքում հացի գներն ինչպիսի թռիչք են կատարել։ 1910 թ.՝ 196 փութ և արժեքը՝ 245 ռուբլի։ 1911 թ. նույնպես՝ 196 փութ և 241 ռուբլի, և սրան համեմատ, ինարկե, մեր առևտրական բալանսը (յես ձեզ հետո կբացատրեմ, թե սա ինչ նշանակություն ունի) մաքսիմալ թիվ է կազմում։ 1910 թ. մեր ակտիվ բալանսը, այսինքն՝ արտածման գերակշռությունը ներմուծումից, 581 միլ. ռուբ. յե կազմում։ Սրա համեմատ պահպանվում էր նաև առևտրական կապիտալի գերակշռությունը, և արդյունաբերական կապիտալի վերաբերյալ խոսք կարող էր լինել միայն գիջումների, կոմպրոմիսի մասին։

Բայց յեթե ստոլիպինյան բարենորոգումը հետապնդում էր զիջումներով անմիջականորեն և գիտակցորեն արդյունաբերական կապիտալիզմը բավարարել, ապա վերջին հաշվով, անգիտակցորեն, ռւմ ջրաղացին էր Ստոլիպինը ջուր ածում։

Այս առթիվ մենք շատ հետաքրքիր տվյալներ ունենք։ Պետք է ասել, որ բացի համայնքից առանձնացման և պրոլետարականացած գյուղացիների հողերի գնման միջոցով իրենց համագյուղացիներին թալանելուց, «պինդ» գյուղացիությունը դեռ ևս շատ ընդարձակ չափերով հող էր գնում դրսից, գլխավորապես, կալվածատիրական հող։ Կալվածատիրական հողերի այս գնումը չափազանց ինտենսիվ կերպով էր առաջ գնում։ 1906—1912 թ թ. ժամանակամիջոցում ընդամենը վաճառվեց 14,4 միլ. դեսյատին կալվածատիրական հող, այսինքն՝ նույնքան, որքան հող ստոլիպինյան հողաչափերը զատել էին գյուղացիներին համայնական հողերից։ Այդ հողերից գյուղացիական բանկի միջոցով անցավ, այսինքն՝ արդեն անկասկած է, որ գյուղացիների ձեռքն ընկավ 6,4 միլ. դես.։ Վաճառված ազնվական հողի տոկոսը հասնում է Վարոնեժի և Տամբովի նահանգներում մինչև $30^{0}/_{0}$, Սիմբիրսկի նահ.՝ մինչև $35^{0}/_{0}$, Սամարայի նահ.՝ մինչև $30^{0}/_{0}$, Սարատովի նահ.՝ մինչև $40^{0}/_{0}$, այսինքն՝ Սարատովի նահանգում կալվածատիրական հողերի գրեթե կեսն այն ժամանակ զանազան ճանապարհներով, գլխավորապես, գյուղացիների ձեռքն անցավ։

Ահա ձեզ Ստոլիպինի կողմից, ինարկե, գիտակցաբար չհետապնդվող նրա քաղաքականության առաջին արդյունքը՝ նոր գյուղացիական շերտի, ճարպոտ, շաքարով կերակրվող և իր խրճիթը թիթեղով ծածկող գյուղացիական շերտի առաջանալը։ Կուլակը գնում էր կալվածատիրական հողերը և գնում էր շատ ինտենսիվ կերպով։ Ավելանում էր գյուղացիական հողերի տարածությունը՝ ի հաշիվ ազնվական հողատիրության։ Իսկ այժմ, յեթե գյուղացիական հողային բանկին մասնավոր հողատերերից հող գնելու համար փոխատվություն բաց թողնելու մասին արած հայտարարությունները վերցնենք, կստանանք, որ 1906 թ. բոլոր հայտարարությունների $18,7^{0}/_{0}$-ն առանձին ծխատերերից, այսինքն՝ անմիջապես կուլակներից էին տրված։

Հայտարարությունների $63,9^{0}/_{0}$-ը տրված էին ընկերությունների կողմից։ Դուք հիշում եք, որ ընկերությունները—կուլակների ընկերություններ էյին, վորոնք շատ թույլ են անհատապես կալվածատիրական հող գնելու համար, բայց ի մի հավաքվելով կարող են գնել. $17,4^{0}/_{0}$-ը գյուղական ընկերությունների հայտարարություններն են, այսինքն՝ գյուղական հողատիրության հին ձևերի, հին համայնական-գյուղացիների կողմից փորձեր են իրենց հողամասերն ավելացնելու։ Սա 1906 թվին էր։ Իսկ յեթե վերցնենք 1912 թ., կտեսնենք, որ առանձին ծխատերերի հայտարարությունների թիվը $81,5^{0}/_{0}$ է, այսինքն՝ կալվածատիրական հողերի $^{4}/_{5}$ մասը 1912 թվին անհատապես առանձին գյուղացիներն էյին գնում, ընկերությունները՝ միայն $17,8^{0}/_{0}$, իսկ գյուղական համայնքների հայտարարությունները՝ $0,7^{0}/_{0}$-ը։

Գյուղական համայնքներն արդեն այնքան ընկան, որ գրեթե այլ ևս կալվածատիրական հող չէյին գնում։ Սակայն կուլակները կարիք չեն ունենում նաև ընկերություններ կազմելու, վորովհետև այն ժամանակ նրանք արդեն այնքան ուժեղ էյին, որ կարող էյին անհատապես կալվածատիրական հողեր գնել։ Այս անհատական գնումները կազմում են կալվածատերերից գյուղացիների գնած բոլոր հողերի $^{4}/_{5}$ մասը։ Դուք տեսնում եք, թե ինչպիսի հսկայական չափերով անհատականացավ գյուղացիական հողատիրությունն այն ժամանակ, թե տնտեսական տեսակետից ավելի առաջադեմ խումբ իր հողատիրությունն ինչ չափով էր ընդարձակում։

Իսկ հիմա վերհիշեցեք, որ յես անցյալ դասախոսություններումս մատնանշում էյի, թե կուլակն առաջին լիբերալն է գյուղում, և թե նա դեմոկրատական հեղափոխության հենարանն է գյուղում։ Ընկեր Պրեոբրաժենսկին, վորն այդ ժամանակ Ռուսաստանում էր ապրում (իսկ յես էմիգրացիայում էյի), հենց յերեկ խոսակցության ժամանակ հաստատեց, որ սրան զուգահեռ այդ տարիներին գյուղում, անկասկած, աճում էր հեղափոխական տրամադրությունը։ Դա նրա անձնական դիտողություններն են։ Այս դիտողությունները հաստատվում են նաև վոստիկանության դեպարտամենտի ագենտուրային տեղեկություններով, վորոնք 1911 թվին մոտ ապագայում հեղափոխության անխուսափելիության մասին են խոսում։ Ճիշտ ձևով էյին արտահայտվում նաև այն ժամանակ ականավոր հասարակական գործիչները։

Ահա Ստոլիպինի կողմից հաշվի չառնված և չնախատեսնված նրա քաղաքականության հետևանքները. գյուղի անհատականացման հսկայական աճումը, այն շերտի աճումը, որը վայրագ ատելությամբ էր լցված դեպի կալվածատերը, որը միևնույն ժամանակ գնալով ավելի ամրանում էր, ավելի ընդարձակվում և ավելի ու ավելի լեգալ ճանապարհով կալվածատիրական հողեր էր կլանում, ընդ սմին դուք կռահում եք, որ մարդիկ, վորոնք իրենց խնայումները ծախսում էյին կալվածատիրական հողեր ձեռք բերելու համար, ավելի մեծ հաճույքով այդ հողերը ձրի կստանային,—սա միանգամայն բնական է։

Վերջապես՝ իմ բոլոր ասածների վերջին օբյեկտիվ արդյունքը,—սրա վրա արժե կանգ առնել։ Այդ մասին մենք նորից բավական հետաքրքիր թվական տվյալներ ունենք։ Յեթե մենք վերցնենք 1901—05 թ. թ. հնգամյակի և 1909—1913 թ թ. քառամյակի ցանքսային տարածությունները, և յեթե 1900—05 թ. թ. համար 100 ընդունենք, ապա 1909—1913 թ. թ. համար կստանանք 110։ Ցանքսային տարածությունն ավելացավ $10^{0}/_{0}$-ով։

Իսկ յեթե 1901—05 թ. թ. բերքը 100 ընդունենք, ապա 1909—13 թ. թ. բերքը կլինի 123,6։ Ցանքսային տարածությունը $10\,^0/_0$ միայն ավելացավ, իսկ բերքատվությունը բարձրացավ գրեթե $25\,^0/_0$-ով ($23{,}6\,^0/_0$-ով)։

Այսպիսով, տեսնում եք, որ համայնքի քայքայման և կուլակային այս շերտի ստեղծման օբյեկտիվ տնտեսական հետևանքը դրական էր։ Բերքատվությունն ու ինտենսիվությունն ավելացան և սրանց համեմատ ավելացավ նաև ռուսական տնտեսության կողմից գյուղատնտեսական մեքենաների գործածությունը։

Գյուղատնտեսական պարզ մեքենաներ ներմուծվել են 1909 թ. 17,1 միլ. ռուբլու, իսկ 1913 թ.՝ 23,7 միլ. ռ., բարդ գյուղատնտեսական մեքենաներ 1909 թ.՝ 14,7 միլ. ռ., իսկ 1913 թ.՝ 13 միլ. ռ.։ Յեթե դուք վերհիշեք, որ բարդ գյուղատնտեսական մեքենաներ, այսինքն՝ շոգու և այլնի միջոցով շարժվող մեքենաներ գործադրվում են գլխավորապես խոշոր հողագործության մեջ, իսկ պարզ գյուղատնտեսական մեքենաները գործ են ածվում գյուղացիական տնտեսություններում, դուք նորից նույն հիմնական փաստը կտեսնեք, որի հետ մենք գործ պիտի ունենանք, այն է՝ ունևոր գյուղացու, կուլակի աճումը։ Դուք գիտեք, որ 1917 թ. հեղափոխությունը ժամանակավորապես վերջ դրեց կուլակի աճմանը, բայց դուք գիտեք նաև ընկ. Կալինինի խոսքերից, որ ներկայումս կուլակը գյուղում նորից սկսում է իր գլուխը բարձրացնել։ Սա, իհարկե, մեծ սպառնալիք է սոցիալիստական հեղափոխությանը ներկայումս, բայց անցյալում դա նույնպիսի սպառնալիք էր հին կալվածատիրական հասարակակարգին, ռուսական կապիտալիզմի տիրապետությանը։ Քանի որ մենք մինչև 1917 թ. փետրվարի սահմաններումն ենք գտնվում, մենք պետք է այս փաստը հաշվի առնենք, որպես տնտեսական առաջադիմության փաստ։

Արդյունաբերական վերելքի մասին՝ հետևյալ անգամ։

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Անցյալ դասախոսությանս մեջ յես կանգ առա այն հարցի վրա, թե ինչու առաջին հեղափոխությունը քաղաքական տեսակետից, նեղ-քաղաքական տեսակետից ռուսական կապիտալի և սրա կողմից ստեղծված ինքնակալության փայլուն հաղթանակ լինելով՝ իրականում կոմպրոմիսով վերջացավ։ Այդ կոմպրոմիսը սոցիալ-տնտեսական ձևով արտահայտվեց։ Ռուսական կապիտալը իր քաղաքական հաղթանակի համար բավական թանգ վճարեց՝ բաժանվելով գյուղի հին, նախաարդյունաբերական շահագործման հորագույն զենքերից մեկից՝ գյուղական համայնքից։ Այնքան, որքան որ գյուղական այս համայնքը չեր քայքայված ստոլիպինյան օրենսդրությամբ, դա արդեն Ստոլիպինի անհաջողությունն եր. պարզապես ասած, նա դրա համար ժամանակ չունեցավ, որովհետև դա այնուամենայնիվ այնքանել արագ պրոցես չեր, որպեսզի միքանի տարիների ընթացքում կարողանար վերջանալ,—բայց արդեն այդ միքանի տարիների ընթացքում, ինչպես հիշում եք, արդյունաբերական կապիտալի օգտին շատ բան եր արված։ Այն, ինչի մասին մենք խոսում եյինք XX դարի սկզբներին—դասակարգային պայքարը գյուղ փոխադրելը, մի մոմենտ, որ, ինչպես հիշում եք, շատ մեծ դեր եր խաղում այն ժամանակվա մեր ծրագրերում,—այժմ իրոք գյուղ եր փոխադրված՝ ռեակցիոն իշխանության ջանքերով, այն իշխանության, որը մեզ, որպես հեղափոխականների, ջախջախեց։ Լինում են այդպիսի պարադոքսներ,—մենք, կրկնում եմ, այդ անվանում ենք ոչ թե պարադոքս, այլ պատմական պրոցեսի դիալեկտիկա։ Դասակարգային պայքարը գյուղ մտցնելու հետևանքով մի բևեռում գյուղական ազգաբնակչության մասսաների խիստ և արագ պրոլետարիզացիա առաջացրեց, որը արդյունաբերական կապիտալին եժան բանվորական ձեռներ տվեց։ Իսկ մյուս կողմից՝ գյուղական բուրժուազիայի շերտի կազմակերպվելը, որին արագ գիրանում եր, արագ ամրանում, և որին այդ նույն արդյունաբերական կապիտալի համար ներքին շուկա յեր ստեղծում։

Հիմա մեզ մնում է միայն այս պրոցեսի հանրագումարը տալ և որոշ թվերով սրա արդյունքները բնորոշել։

Այստեղ պետք է վերցնել նախ և առաջ, իհարկե, արդյունաբերական հումույթի, իսկ հետո՝ արդյունաբերական պրոդուկտների աճումը։ Արդյունաբերական հումույթի աճումը այս թվերով է արտահայտվում. 1908 թվին քարածուխի արդյունահանությունը կազմում եր 1.600 միլ. փութ, իսկ 5 տարուց հետո՝ 1913 թվին նա հասնում եր մոտավորապես $2^1/_4$ միլիարդ փթի։ Քարածխի աճումը սա յե, այսինքն՝ այն քանակը, որ կլանում են ռուսական ֆաբրիկաների շոգեկաթսաների վառարանները։ Սրան

համեմատ այդ ֆաբրիկաների արդյունավետությունն էլ, իհարկե, ավելացավ։ Յեթե վերցնենք թուղթի հալոցը միլ. փթերով, հետևյալ թվերը կստանանք. 1900 թվին՝ $177^1/_2$ միլ. փ., 1903 թվին (ճգնաժամի սուր շրջան)՝ 150.2 միլ. փ., 1908 թ.՝ 170.1 միլ. փ., 1909 թվին՝ 175,3 միլ. փ.։ Տեսնում եք, վոր մենք դեռ որորվում ենք XX դարի սկզբների թվերի շուրջը։ 1909 թվի յերկրորդ կիսին տեղի յե ունենում կոնյունկտուրայի շատ խիստ բեկում, վորն իր մի շարք արտահայտությունները գտավ, վորոնցից մեկը յես (սա իսկական անեկդոտ ե, բայց յերբեմն անեկդոտներն հիշելու համար ավելի լավ են) հաճույքով զգացի իմ սեփական կաշվի վրա։ Յես հենց 1909 թվին տեղափոխվեցի Փարիզ բնակվելու և իմ գրական հոնորարն սկսեցին Փարիզ փոխադրել։ Յես հաշվեցի, թե վորքան պետք ե ստանամ բանկից և հանկարծ ինձ ավել են տալիս։ Այդպիսի դեպքեր չեյին պատահել, վոր ավելի տային։ Կարծում եմ, վոր թվաբանության մեջ եմ սխալվել, մեկ էլ հաշվեցի։ Դուրս ե գալիս, վոր ճիշտ ե։ Այդ ինչպես։ Չե՞ վոր բանկն ինքն իրեն չի խաբի, բանկն այնպիսի մի հիմնարկություն ե, վորն ուրիշներին ե խաբում, իսկ ինքն իրեն չի խաբի։ Այն ժամանակ պարզվեց, վոր մեր ռուսական ռուբլին վոսկու կետն անցել ե, այսինքն՝ միջազգային բորսայում իր նոմինալ արժեքից բարձր ե գնահատվում։ Նոմինալ արժեքը կարծեմ 266 սանտիմ եր, իսկ նա այդ ժամանակ հասնում եր գրեթե 268—269 սանտիմի։ Սա, կարծեմ, միակ դեպքն ե ռուսական ռուբլու կարյերայում, յերբ նա միջազգային բորսայում իր նոմինալ արժեքից բարձր եր գնահատվում։ Սովորաբար կուրսն ընկնում ե և վոչ բարձրանում, իսկ այն ժամանակ ռուսական ռուբլին, այսպես ասած՝ լաժ ուներ։ Սա անեկդոտ ե, իհարկե, բայց նա այն հատկանիշներից մեկն եր, վորոնք ցույց են տալիս 1909 թվի յերկրորդ կիսում կոնյունկտուրայի խիստ բեկումը, և այդ տարվանից թուղթի հալոցն սկսում ե վեր մագլցել։ 1910 թվին թուղթի հալոցը՝ 186.5 միլ. փ., 1911 թ.՝ 219.4 միլ. փ., 1912 թ.՝ 256.3 միլ. փ., 1913 թ.՝ 282.4 միլ. փ.։ Սա վերջին նախապատերազմյան տարին եր։ Հետագայում ավելացումն ավելի ևս բարձրացավ, բայց այստեղ, ինչպես կռահում եք, ազդեց արկերի, թնդանոթների և այլն մշակության վրա, այն բոլորի, ինչ անհրաժեշտ եր պատերազմի համար։ Բայց նախապատերազմյան վերջին տարին ցույց տվեց այնուամենայնիվ մեծ ավելացում և չնայած դրան, ինչպես դուք հետո կիմանաք ռազմական շրջանի եկոնոմիկային նվիրված դասախոսությունից, Ռուսաստանում այդ ժամանակ իսկական թուղթի սով եր և թուղթն արտասահմանից եր ներմուծվում. այն աստիճանի արագ եր զարգանում մեր արդյունաբերության հիմքը, վորովհետև մետաղագործությունը կապիտալիստական աշխարհի արտադրության հիմքն ե կազմում։ Արտադրության այս հիմքը չափազանց արագ եր աճում։ Սրան համեմատ աճում եր, իհարկե, նաև լայն սպառման շուկան։ Յեթե մենք վերցնենք նորից 1900 թվականը, ապա մենք այդ տարվա համար կստանանք 18 միլ. փութ վերամշակված բամբակ. 1908 թվին 19.8 միլ. փութ եր, 1909 թվին՝ 23 միլ. փ., 1910 թ.՝ 23.5 միլ. փ. և այլն։ Ներկա դեպքում բամբակը բոլոր ռեկորդները խփեց։ Ռուսական ֆաբրիկաներում բամբակի նման քանակ յերբեք չի մշակվել այն ժամանակվանից սկսած, յերբ այդ ֆաբրիկաները սկսել են գործել։ Սրանք ռեկորդային թվեր եյին ամբողջ դարի ընթացքում։

Այսպիսով, մենք լրիվ հնարավորություն ունենք խոսել 1909 և հետա-

գա տարիների մասին, վորպես ռուսական արդյունաբերության բուռն վերելքի, ռուսական արդյունաբերական կապիտալիզմի բուռն ծաղկման շրջանի մասին՝ այն հիմունքի վրա, վորը պարադոկսալ կամ դիալեկտիկական ձևով ստեղծված եր առաջին հեղափոխության հետևանքներով և Ստոլիպինի քաղաքականությունով։ Իհարկե, Ստոլիպինի քաղաքականության մասին խոսելով՝ յես բոլորովին էլ չեմ ուզում կապել անձնապես Պ. Ա. Ստոլիպինի հետ, դուք այդ շատ լավ հասկանում եք, յես դա համառոտության համար եմ ասում, դա իբրպես առևտրական կապիտալի քաղաքականությունն եր՝ արդյունաբերական կապիտալի պահանջներին հարմարեցրած։ Ահա թե ինչն եր կազմում այդ ծաղկման հիմքը։ Յես հիմա ձեզ կպարզաբանեմ, թե ինչն եր հնարավորություն տալիս առևտրական կապիտալին այսպիսի շռայլություն անել, այսպես առատաձեռն բաժին հանել իր կրտսեր յեղբորը, նրան այդպես մետաքսապատել, իսկ դեռ այժմ կանգ կառնեմ այս յերևույթի մի այլ կողմի վրա։

Անցյալ դասախոսության մեջ յես արդեն ասացի, վոր դասակարգային պայքարը գյուղ մտցնելով և այնտեղ հանձինս կուլակի ներքին շուկա, իսկ հանձինս չքավորի գործարանի համար պրոլետար ստեղծելով՝ առևտրական կապիտալը ճակատագրական կերպով (և այստեղ նորից պիտի խոսել վոչ թե ճակատագրի մասին, ինչպես բուրժուազիան ե խոսում, այլ դիալեկտիկայի մասին) իր գերեզմանն եր փորում, վորքան վոր աճում եր գյուղի հեղափոխական շերտը, կամ ավելի ճիշտն ասած՝ գյուղի յերկու հեղափոխական շերտերը. մի կողմից աճում եր վոչ թե սոցիալիստական, այլ դեմոկրատիկ կուլակային դասը—առաջին լիբերալները գյուղում (դուք այդ հիշում եք Ենգելգարդտի բնութագրությունից), մյուս կողմից՝ աճում եր պրոլետարիատը—կապիտալիստական հասարակակարգի յերդվյալ գերեզմանափորը։ Նույնն էլ այստեղ, ամեն կերպ բաժին հանելով իր այդ կրտսեր յեղբորը՝ առևտրական կապիտալն օձ եր տաքացնում։ Այս օձն սկսում ե իր թունոտ լեզուն դուրս հանել ահա թե ինչպիսի թվերով։ Դուք հիշում եք, վոր XX դարի վերջերին մեր արդյունաբերության վերելքը գլխավորապես արտասահմանից յեկած կապիտալիստների վրա յեր հենվում։ Վիտեյի որով մեր արդյունաբերության մեջ մուծված կապիտալների գլխավոր մասսան կազմում եյին այն 1.600 միլ. ռուբլիները, որոնք ստացվել եյին, այսպես կոչված՝ ռուսական ռենտայի կոնվերսիայի շնորհիվ արտասահմանում, այսինքն՝ կոպիտ ասած՝ պարզապես ռուսական ռենտան ֆրանսիացիներին փարիզյան շուկայում վաճառելու շնորհիվ՝ ռուսական պարտավորությունները ֆրանսիականի վերածվելու պատճառով։ Սրա շնորհիվ ազատվեց ավելի քան $1^1/_2$ միլիարդ ռուսական կապիտալ, վորն ամբողջովին ռուսական արդյունաբերության մեջ դրվեց։ Դուք կռահում եք, վոր նման պայմաններում մեր բուրժուազիան կախում ուներ այն սնդուկից, վորն անմիջապես նրան այդ կապիտալներն եր մատակարարում, իսկ վորովհետև նախքան ռուս բուրժուայի գրպանն ընկնելը, ֆրանսիական բուրժուազիայի յուրաքանչյուր վոսկին պետական սնդուկի միջով եր անցնում՝ ապա այս միջանկյալ ողակը՝ պետական սնդուկը՝ այն մոմենտն եր, վորը զսպում եր ռուսական բուրժուազիայի լիբերալիզմը։ Իմպերիալիստական հասարակակարգի ընդհանուր պատկերը չփչացնելու համար յես իմ անցյալ շարադրության մեջ այս մոմենտը չմտցրի, սակայն այդ պետք ե հիշատակել։ Սա, իհարկե, գլխավորը չեր,

բայց սա յերկրորդական մոմենտներից մեկն եր, վորոնք 90-ական թվականների ռուսական բուրժուազիային դարձնում եյին ցարին և հայրենիքին նվիրված։ Այս մոմենտը վորոշ դեր եր խաղում, վոր այդ բուրժուազն կարողացավ ստանալ այն, ինչ նրան անհրաժեշտ ե արտադրության համար՝ պետական գանձարկղի միջոցով կամ նրա աջակցությամբ այս կամ այն ձևով։

Յեթե դուք հիմա վերցնեք ահա այս շրջանի համապատասխան թվերը, որոնք յես ուսումնասիրում եմ ձեզ հետ՝ 1909 թվից հետո յեկած արդյունաբերական վերելքի շրջանը՝ դուք ուրիշ պատկեր կստանաք։ Յես վերցնում իմ թույլատրված ռուսական և այլերկրյա ակցիոներական ընկերությունների կապիտալներին վերաբերող թվերը։ 1908 թվին թույլատրվել եր 108 ռուսական ընկերություն 103.4 միլ. ռ. կապիտալով, այլերկրյա ընկերություններ թույլատրված եր 12 հատ՝ 9 միլ. ռ. կապիտալով. 1909 թվին ռուսական ընկերությունները 116-են՝ 95 միլ. ռ. կապիտալով, արտասահմանյանները՝ 15 հատ, 12.9 միլ. ռ. կապիտալով. 1910 թվին ռուսական ընկերությունները 181 հատ եյին՝ 190 միլ. ռ. կապիտալով և արտասահմանյանները՝ 17 հատ, 33 միլ. ռ. կապիտալով. 1911 թվին ռուսական ընկերությունները—222 հատ՝ 240 միլ. ռ. կապիտալով, արտասահմանյանները՝ 40 հատ, 60 միլ. ռ. կապիտալով. 1912 թ. ռուսականները՝ 322 հատ, 371 միլ. ռ., այլերկրայինները՝ 20 հատ, 30 միլ. ռ., 1913 թվին ռուսական ընկերությունները—343 հատ՝ 501 միլ. ռ. կապիտալով, իսկ արտասահմանյանները՝ 29 հատ, 44 միլ. ռ. կապիտալով։ Համեմատեցեք թվերի այս յերկու սյունյակները և դուք կտեսնեք, թե այլերկրյա կապիտալն ինչ աստիճանի ավելի և ավելի փոքր դեր ե խաղում ռուսական արդյունաբերության մեջ և ավելի ու ավելի մեծ դեր են խաղում ռուսական կապիտալները, վորոնք ընդ սմին վոչ թե պետական սնդուկից են աճել, այլ՝ այսպես ասած՝ կուտակման բնական ճանապարհով։ Թե ինչպես եր ընթանում այդ կուտակումը, մենք այլ թվերից կտեսնենք՝ նրանց հետ մեր հացի արտածման թվերը համեմատելով։ Մեր հացի արտածումը հետևյալ համեմատությամբ եր աճում։ Յեթե 1900 թվի համար փթերի քանակը 100 ընդունենք, ապա 1909 թվին կլինի 182, 1910 թվին՝ 196, 1911 թվին՝ նույնը։ Իսկ յեթե վերցնենք այդ արտածման արժեքը և 1900 թվի համար 100 ընդունենք, ապա 1909 թվին կլինի 249, 1910 թվին՝ 245, 1911 թվին՝ 241, մի խոսքով արտածման արժեքը նրա ծավալի հետ համեմատած $1\frac{1}{2}$ անգամ ավելացավ։ Այստեղ արդեն դեր եյին խաղում հացի այն բարձր գները, վորոնց մասին յես միքանի անգամ արդեն ասացի։ Յեվ ահա այս վոսկու գետը, վորը ռուսական կապիտալի գրպանն եր թափվում վորպես ակտիվ առևտրական բալանս (ակտիվ բալանսը 1909 թվին հսկայական՝ ռեկորդային թվի հասավ), հենց սա յել հիմա զարգացնում եր ռուսական կապիտալիզմը, վորն աճում եր վոչ թե ի հաշիվ արտասահմանյան կապիտալների ներհոսման, ինչպես դա առաջ եր, այլ «տեղական» կուտակման հաշվին։ Իսկ սրա հետևանքով ռուսական կապիտալիզմը շատ ավելի համարձակ, շատ ավելի հանդուգն դարձավ և 1912 թվին մինչև այնտեղ հասավ, վոր սեփական օպոզիցիոն կուսակցություն կազմեց, այսպես կոչված՝ պրոգրեսիվ կուսակցությունը, վորի պարագլուխն եր Ստրուվեն՝ վորպես իդեոլոգ և Կոնովալովը՝ խոշոր արդյունաբերող, հետագայում ժամանակավոր կառավարության մեջ առևտրի և արդյունաբերության մինիստր, - մի կուսակցություն, վորն իր ծրագրով կադետ-

ներից աջ եր և իր տակտիկայով՝ նրանցից ավելի ձախ, կառավարության հետ ավելի վճռական լեզվով եր խոսում, քան թե կադետներն եյին խոսում։ Բայց կադետական կուսակցությունը, մի կուսակցություն, վորը մարմնացնում եր գլխավորապես ռուսական կապիտալիզմի իդեոլոգիան, անմիջականորեն իրենից արդյունաբերությունը չեր ներկայացնում։ Անմիջականորեն մեր արդյունաբերողները մինչ այդ օկտյաբրիստների կուսակցության մեջ եյին համախմբված, վորոնց պարագլուխը Գուչկովն եր։ Ահա օկտյաբրիստների մեջ ձախ թևի՝ պրոգրեսիստների՝ այս հանդես գալը, վորը, կրկնում եմ, իշխանության հետ իրեն շատ ավելի ինքնավստահ և հանդուգն ե պահում, քան թե կադետները, չափազանց բնորոշ ե։

Գյուղում վերջին հաշվով առևտրական կապիտալիզմին և ինքնակալությանը թշնամի խավերի աճմանը զուգահեռ կերպով, քաղաքում, խոշոր բուրժուազիայի մեջ աճում են օպոզիցիոն տրամադրություններ, և զարմանալի չե, վոր շատ փորձված մարքսիստների մեջ այդ ժամանակ պատրանք առաջացավ, վոր Ռուսաստանը զարգացման պրուսական տիպի ճանապարհը թևակոխեց։ Մեզանում, ասում են նրանք, քիչ թե շատ նորմալ ձևով կզարգանա բուրժուական սահմանադրությունը՝ բանվորական մասսայական շարժման կողմից խթանելով, իհարկե, բայց առանց նոր ճգնաժամերի, առանց նոր հեղափոխական շարժումների։ Այս հողի վրա, ինչպես գուցե գիտեք դուք, կուսակցությունից հեռացավ Ռոժկովը, վորը հայտարարեց, վոր բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում վերջացած ե, վոր սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում շատ հեռավոր մի մոմենտ ե և վոր մենք հիմա պետք ե վերակազմակերպվենք մենշևիկյան ձևով, լիկվիդացիայի յենթարկենք ընդհատակյա կազմակերպությունը և այլն։ Այս պատմության մանրամասնությունը դուք կիմանաք կուսակցության պատմության դասախոսություններից։

Ահա թե վորոնք եյին այն բոլորի տնտեսական և քաղաքական հետևանքները, ինչ յես համառոտության համար ստոլիպինյան քաղաքականություն եյի անվանում և վոր, իհարկե, ավելի ճիշտ կլինի անվանել՝ առևտրական կապիտալի քաղաքականությունը Ռուսաստանում առաջին բանվորական հեղափոխությունից հետո։ Յերկրի ներսում, այսպիսով, ինչ-վոր կայուն բան եր հասունանում։ Յես գուշակություններ չեմ անի,—գուշակություն անելը պատմության մեջ կոպեկ չարժե,—թե ինչ կլիներ, յեթե վոր արտաքին քաղաքականության մեջ ամեն ինչ նույնքան բարենպաստ լիներ, վորքան և ներքին քաղաքականության մեջ եր։ Փաստն այն ե, վոր արտաքին քաղաքականության մեջ դրությունը յերբեք այնպես բարենպաստ չեր, ինչպես ներսում, և վոր այդ շրջանի վերջին ռուսական եկոնոմիկայի հորիզոնում հենց այս տեսակետից, արտասահմանի կողմից ավելի և ավելի շատ սև ամպեր են սկսում կուտակվել։

Նախ և առաջ, ներքին շուկայի աճումը ստոլիպինյան ընձեռումների ազդեցության տակ աչքի չեր ընկնում՝ ինչպես և պետք եր սպասել՝ այն արագությամբ, վոր անհրաժեշտ եր բուռն կերպով աճող ռուսական արդյունաբերական կապիտալիզմի համար։ Շատ ավելի հեշտ եր չիթն արտադրել, քան ստեղծել մարդիկ, վորոնք պետք ե գնեյին և հագնեյին այդ չիթը։ Յերկրորդ պրոցեսը պարզ կերպով յետ եր ընկնում առաջինից և չափազանց բնորոշ մի բան, այս շրջանի վերջին վորոշ ընդմիջում ե սկսվում մանու-

ֆակտուրայի շուկայում։ Այս ընդմիջումը մեծ իրարանցումով ազդանշում են 1913 թվի զանազան հատուկ արդյունաբերական և այլ տնտեսական ամսագրերը։ Նա իր չափազանց բացահայտ արտահայտությունը գտավ նրանում, վոր ռուսական մանուֆակտուրիստներն սկսում են մտածել արտասահմանյան շուկայի մասին։ Վ՞որ արտաքին շուկայի մասին։ Դժվար չէ կռահել, վոր նրանք մտածում են ռուսական չիթը վոչ Գերմանիա և վոչ էլ Անգլիա ներմուծելու մասին։ Յեթե վերցնենք ռուսական բամբակե գործվածքների արտահանությունն ասիական սահմանով, հետևյալ թվերը կստանանք. 1909 թվին՝ $21^1/_2$ միլ. վոսկի ռուբլու, 1913 թվին, ընդամենը 4 տարուց հետո՝ 40.800 հազ. վոս. ռ.,— ընդամենը 4 տարվա ընթացքում ռուսական մանուֆակտուրայի արտածումն ասիական սահմանով, այսինքն՝ միայն Պարսկաստան և Տաճկաստան արտահանումը գրեթե յերկու անգամ ավելացավ. աճումը, ինչպես տեսնում եք, հսկայական է,—մասնավորապես պարսկական շուկան Ռուսաստանը գրեթե նվաճեց։ Բոլոր թվերը դուք կգտնեք «Ռուսական իմպերիալիզմը անցյալում և ներկայումս» իմ գրքում «Внешняя политика» ժողովածվում, վոր սկզբում հրատարակվեց «Просвещение»-յում։ Դուք այնտեղ կտեսնեք, վոր ըստ մանուֆակտուրայի ներմուծման Ռուսաստանը Պարսկաստանում առաջին տեղն էր բռնում՝ գերազանցելով նույնիսկ Անգլիային, էլ չխոսելով ուրիշ յերկրների մասին։ Նույնիսկ անգլիական չիթն ու տրիկոն այնպես չեյին գնում պարսկական շուկայում, ինչպես ռուսականները։ Այսպիսով, այս յերկիրը հաստատ նվաճել էր ռուսական մանուֆակտուրան, բայց, իհարկե, Ռուսաստանում կուլակի անբավարար արագ աճման հետևանքով ստացված ամբողջ ավելցուկը, այնուամենայնիվ, Պարսկաստանը չէր կարող կլանել, և բնական է, վոր ռուսական մանուֆակտուրիստները պետք է իրենց հայացքները միքիչ ավելի հեռուն դարձնեյին՝ դեպի արևմուտք և սկսեյին իրենց մանուֆակտուրան Տաճկաստան ներմուծել։

Ահա ձեզ ռուսական արդյունաբերական կապիտալիզմի մի յեղունգը, վորով նա պիտի խրվեր արտաքին քաղաքականության մեջ։ Սա գործի մի կողմն է։ Մյուս կողմն ավելի լուրջ էր։ Յես ասացի ձեզ, վոր ընդհանրապես ռուսական կապիտալի կուտակումը հացի արտածման վրա յեր հենված, և յես ցույց տվի, թե ինչպես հացի արտածման այս թվերը գնալով ավելի աճում եյին։ Հիմա յես պետք է մի ուղղում մտցնեմ։ Նրանք աճում եյին մինչև 1911 թիվը, բայց այդ տարվանից սկսած նրանք սկսում են արագ ընկնել։ 1911 թվին մենք ունենք 735 միլ. վոսկի ռուբլի, իսկ 1912 թվին՝ միայն 547 միլ. ռ.,—թիվն արդեն ընկավ. 1913 թվին՝ մի քիչ ավելի—589 միլ. ռ., բայց և այնպես շատ ավելի փոքր թիվ, քան 1911 թվին էր։ Բնորոշ է, վոր այստեղ նվազում էր վոչ միայն ռուբլիների քանակը (դա կարելի յէ հացի գնի անկումով բացատրել, և, դուք կտեսնեք, վոր այդ ժամանակ հացի գներն սկսում են մասամբ ընկնել), այլ և փթերի թիվը։ 1911 թվին Ռուսաստանն արտահանեց արտասահման 821 միլ. փութ հաց, իսկ 1912 թվին՝ 548 միլ. փութ։ Սա ինչ է։ Վ՞որտեղից ստացվեց ռուսական արտածման նման նվազումը, վորն ամենազգալի ձևով արտահայտվում էր ռուսական առևտրական բալանսի վրա։ Դուք հիշում եք, վոր 1909 թվին ակտիվ առևտրական բալանսը 581 միլ. վոսկի ռուբլի յեր կազմում, իսկ 1912 թվին՝ միայն 391 միլ., իսկ 1914 թվին՝ նույնիսկ միայն 200 միլ., այսինքն՝ նվազում է ավելի քան յերկու անգամ,—չափազանց անհանգըստացնող մի ազդանշան։ Ռուս կապիտալիստների գրպանը հոսող վոսկու գետն այդ ժամանակ բացահայտ կերպով սկսեց ցամաքել։ Վ՞որն է պատճառը։ Իսկ պատճառն այն է, վոր 1911 թվի սեպտեմբեր ամսից իտալո-տաճկական պատերազմն սկսվեց Տրիպոլիսի համար։ Տաճկաստանը իտալական նավատորմիղի հնարավոր հարձակումներից Պոլիսը պաշտպանելու համար փակեց նեղուցները։ Նեղուցների՝ Դարդանելի և Բոսֆորի փակման հետևանքով՝ մեր արտածումը սև-ծովյան նավահանգիստներից միանգամից կրճատվեց,—հետևանքն այն թվերն եյին, վոր դուք տեսաք։ Իսկ իտալո-տաճկական պատերազմին հետևեց Բալկանյան պատերազմը, վորն ինսցենիրովկայի յենթարկեց Ռուսաստանը՝ պետք յեղած չափով հաշվի չառնելով իր ինսցենիրովկայի հետևանքները։ Նեղուցների փակումն այդ տարիներին սկսում է դառնալ խրոնիկական յերևույթ։ Սա արդեն ամբողջովին հարվածում էր ռուսական կապիտալիզմին։ Սա մի ավելորդ անգամ ևս հիշեցնում էր նրան իր իմպերիալիստական դերի մասին, վորի մասին նա կարծես թե սկսեց մոռանալ ճապոնական իր անհաջողությունից հետո, ավելորդ անգամ հիշեցնում էր այդ կապիտալիզմին, վոր յեթե չընդարձակես քո տիրապետության սահմանները, ապա շուտով քո վերջը կգա։ Թե ինչ ազդեցություն ուներ սա, յերևում է պաշտոնական մի փաստաթղթի ցուցմունքներից, վոր ռուսական բանկերն այս բոլոր դեպքերի ազդեցության տակ $^3/_4$ տոկոսով ավելացրին յեռամսյա մուրհակների զեղչը։ Այսպիսով կապիտալն ընկավ ճգնաժամի, ամենաիսկական ճգնաժամի շրջանը, վորովհետև զեղչի տոկոսի բարձրացումը միշտ էլ ճգնաժամի նշան է։

Արտաքին դեպքերի այս ֆոնին մնում է ավելացնել մի վերջին կիծ ևս։

Ռուսական ակտիվ բալանսի և այն ամբողջ բարիքի հիմքով, վորն այդ տարիներին Ռուսաստան էր թափվում արտասահմանից, այնուամենայնիվ հացի բարձր կայուն գներ կային։ Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր ռուս ձեռնարկուները հացի այս գների վրա նայում եյին վորպես մի ինչ վոր կայուն և մշտական բանի։ Ձեռնարկուներն ամենքից քիչ են դիալեկտիկներ և ամենքից քիչ են հակվում այն մտքին, վոր աշխարհիս յերեսին ամեն ինչ հոսում է ու փոփոխվում։ Իսկ իրականում պատմական պրոցեսը դիալեկտիկ էր մնում, և այստեղ ահա թե ինչ պատկեր ստացվեց։ Յեթե վերցնենք 1907—09 թ. թ. յեռամյակը, մենք կստանանք ցորենի մի փթի համար 118 կոպեկ վոսկի, իսկ յեթե վերցնենք 1911—13 թ. թ. յեռամյակը, կստանանք ցորենի համար միջին գին 110 կոպեկ։ Յեթե հաճարի համար վերցնենք 1907—09 թ. թ. յեռամյակը, կստանանք մի փթի գինը 99 կոպ., իսկ յեթե 1911—13 թ. թ. վերցնենք, կստանանք միայն 85 կոպեկ։ Հացի գները բացահայտ կերպով սկսեցին ընկնել։ Յեվ ահա, յեթե մանուֆակտուրայի ասպարիզում մեր մրցակիցներն արևելքում դեռևս անգլիացիներն եյին՝ ինչպես կտեսնենք, մեր ապագա բարեկամներն ու դաշնակիցները, ապա հացի ասպարիզում մեր մրցակիցները գերմանացիներն եյին։ Գերմանացիներն էլ XIX դարի վերջերից, դեռ Բիսմարկի ժամանակվանից հովանավորման քաղաքականությունով եյին զբաղվում, միայն նրանք, ինչպես հիշում եք, հովանավորում եյին վոչ այնքան արդյունաբերությունը (գերմանական արդյունաբերական մաքսերն առանձնապես բարձր չեյին), վորքան գյուղատնտեսությունը։ Սրա հետևանքով, Գերմանիայում ներմուծվող հացից մաքս էր վերցվում մինչև 80 թիվը—10 կ., 85 թվին՝ 30, 87

թվին՝ 50, 1902 թվին այդ մաքսերը 50 մարկայի հասան հաճարի մի տոնից, իսկ ցորենի մի տոնից՝ 55 մարկայի։ Յեվ ինչպես ռուսական արդյունաբերական ներմուծական մաքսերի հովանու տակ ծաղկում եր ռուսական ֆաբրիկան, ճիշտ նույնպես ել հացի մաքսերի հովանու տակ զարգանում եր գերմանական գյուղատնտեսությունը։ 1913 թվին, հենց այն տարին, որի վրա մենք կանգ ենք առնում, մի դեսյատին ցորենի բերքը Պրուսիայում՝ չնայած չափազանց վատ հողի (դուք գուցե գիտեք, որ Պրուսիան, Բրանդենբուրգյան պրովինցիան միջին դարերում «Սրբազան Հռոմեյական Կայսրության ավազուտ» եր կոչվում),—չնայած այս աննպաստ հողի, այնտեղ մի դեսյատինի արտադրողականությունը հասավ $13^1/_2$ կրկնակի ցենտների դեսյատինից (կրկնակի ցենտները 200 կիլոգրամ ե, ուրեմն մոտավորապես $12^1/_2$ փ.*)։ Նույն 1913 թվին Ռուսաստանում ցորենի դեսյատինը տալիս եր $4^1/_2$ կրկնակի ցենտներ՝ յերեք անգամ պակաս**)։ Գերմանական գյուղատնտեսության այսպիսի հսկայական արտադրողականության պայմաններում նա սկսեց շատ հաջող կերպով մրցել ռուսականի հետ։ Ռուսասական հացի ներմուծումը Գերմանիա ավելի և ավելի նվազում եր՝ մանավանդ դա արտահայտվեց հաճարի մեջ։ 1900-ից մինչև 1904 թ. թ. Գերմանիան ամեն տարի 828 հազար տոնն ռուսական հաճար եր ներմուծում։ 1905—08 թ թ. ժամանակամիջոցում յուրաքանչյուր տարի ներմուծվում եր միայն 555 հազար տոն, իսկ 1912 թվին ընդամենը ներմուծվել ե 268 հազ. տոնն, այսինքն՝ գրեթե չորս անգամ պակաս, քան դարի սկզբին, և 114 հազ. տոնն գերմանական հաճար Ռուսաստան եր ներմուծվել։ Դա արդեն չտեսնված խայտառակություն եր։ Հաճարի ասպարեզում գերմանական գյուղատնտեսությունն սկսեց մրցել ռուսականի հետ նրա ներքին ռուսական շուկայում։ Ռուսական սպառող նահանգները, գլխավորապես, Հյուսիս-արևմտյանները՝ Պսկովի, Նովգորոդի և այլն, ավելի ձեռնտու եյին գտնում եժան գերմանական հաճար ներմուծել, քան թե թանգը՝ հայրենականը գնել։ Սա իսկական խայտառակություն եր։ Յեվ դրա հետևանքն այն յեղավ, որ պատերազմի սկսվելուց մի քանի ամիս առաջ Ռուսաստանը մաքսեր մտցրեց Ռուսաստան ներմուծվող հացի վրա։ Այս մոմենտը մեզ համար կարևոր ե այն պատճառով, որ նա, այսպես ասած, որոշ ուղղությամբ սրում ե արտաքին այն քաղաքական հակասությունները, որոնք աստիճանաբար գումարվում եյին։ Դուք տեսնում եք, որ պատկերը բավական բարդ եր։ Ռուսական մանուֆակտուրան Արևելք՝ Պարսկաստան և Տաճկաստան եր ձգտում։ Ռուսական կապիտալիզմն ամբողջովին վերցրած իր ակտիվ բալանսով շահագրգռված եր ոչ թե անմիջականորեն տաճկական և պարսկական շուկայով, այլ շահագրգռված եր Գերմանիայի կողմից։ Ահա թե ինչու արևելյան շուկաների համար մղվող տնտեսական պայքարը պետք ե վերածվեր պարադոքսալ ձևի որպես ռուս-գերմանական, ոչ թե ռուս-տաճկական կամ ռուս-անգլիական, այլ հենց ռուս-գերմանական պատերազմի։ Ահա ձեզ տնտեսական այն իրադրությունը, որ տարավ մեզ դեպի 1914 թվի հուլիսի կատաստրոֆան։

*) Ուրեմն մի դեսյատինի բերքը հավասարվում եր մոտավորապես 169 փթին։

Ծանոթ. խմբ.

**) Մոտավորապես դեսյատինից 56 փութ։

Ծանոթ. խմբ.

Իսկ հիմա յես այլևս չեմ ծանրաբեռնի ձեզ թվերով և կպատմեմ այն դիպլոմատիկական իրադրության մասին, որ առաջացավ այն ժամանակներում։ Այժմ յես անցնում եմ այն պայմաններին, որոնք անմիջապես առաջացրին 1914 թվի կոնֆլիկտը և Ռուսաստանի մասնակցությունն այսպես կոչված համաշխարհային պատերազմին, ինչ նորից անմիջականորեն հանգավ 1917 թվի հեղափոխական բռնկումին, Ռոմանովների անկմանը և վերջին հաշվով, Հոկտեմբերյան հեղափոխությանը։ Ոչ մի քիչ թե շատ դիտող և ոչ հիմար մարդու համար կասկածի յենթակա չեր, որ Ռուսաստանը մասնակցեց 1914 թվի պատերազմին գլխավորապես նրա համար, որպեսզի միանգամ ընդ միշտ լուծի իր համար նեղուցների հարցը՝ ռուսական առևտրական կապիտալի այս հիմնական հարցը։ Բոսֆորն ու Դարդանելը նվաճելով՝ ռուսական առևտրական կապիտալը հացի առևտրի ասպարեզում մոնոպոլիստ ե դառնում ամբողջ Արևելյան Յեվրոպայի համար, որովհետև Դանուբյան յերկրները՝ Հունգարիան, Ռումանիան և այլն, որոնք նրա միակ մրցակիցներն եյին այս ասպարեզում, նրանից կախման մեջ եյին ընկնում, որքանով որ Դարդանելում ռուսական մաքսատուն կլիներ։

Այսպիսով, այս մոմենտի առկայությունը բոլորի համար, կրկնում եմ, հենց սկզբից ել պարզ եր, չնայած նրան, որ Ռուսաստանը պատերազմ սկսեց Տաճկաստանի չեզոքության պայմաններում և նույնիսկ,— մի ուշադրավ մանրամասնություն,—Տաճկաստանի կողմից Ռուսաստանի դաշնակիցը դառնալու փորձերի պայմաններում։ Բայց դեռ այժմս այնպես թե այնպես Տաճկաստանը պատերազմին չեր մասնակցում։ Այնուամենայնիվ, յուրաքանչյուր քիչ թե շատ բանիմաց դիտողի համար միանգամայն պարզ և ակներև եր, որ Ռուսաստանը պատերազմ եր մղում միայն նեղուցների համար։ Պատերազմի վերջերին՝ 1917 թվին այս մասին արդեն միանգամայն բացահայտ կերպով եյին խոսում. հատկապես այս հարցում հայտնի դարձավ Միլյուկովը, որը հետո ձեռք բերեց «դարդանելյան» կոչումը, իսկ հեղափոխությունից հետո մենք փաստաթղթեր գտանք, որոնք հաստատում են, որ հարցը հենց սկզբից ել այսպես եր դրվում։

Այն յերևույթը, որը յես ձեզ մատնանշեցի՝ ռուսական ակտիվ բալանսի անկումը որպես հետևանք նեղուցների փակման պատճառով ռուսական հացի արտածման անկման՝ շատ լուրջ անհանգստություն եր առաջացնում վերին խավերում և մենք ունենք Նիկոլայ II-ի խոսակցության մի պերլյուստրացիա Բյուկենենի՝ անգլիական դեսպանի հետ, ուր Նիկոլայն ասում եր, որ նեղուցների փակումը ռուսական առևտուրը չափազանց ծանր փորձությունների յե յենթարկում, և որ յեթե խաղաղ միջոցները չօգնեն, ապա նա՝ Նիկոլայը կանգ չի առնի նեղուցներն ուժով բանալու առաջ։ Սա ասված եր 1914 թվի գարնանը։

Այսպիսով, այն տնտեսական դժվարությունները, որ ապրում եր Ռուսաստանը, ինչ համառոտության համար կարելի յե դարդանելյան հարց անվանել, և 1914 թվի պատերազմի կապը—ըստ ամենայնի պարզ ե։ Մնում ե միայն մի քիչ ավելի կոնկրետ ձևով հետաքննել այդ կապն անցյալի խորքերից։ Այստեղ առաջանում ե այն հարցը, որը իմ ուշադիր ունկնդիրներից, յերևի, չթագնվեց՝ ինչ յեղավ ռուսական իմպերիալիզմը։ Մեղնում նա ասպարեզի վրա յեր ճապոնական պատերազմից առաջ։ Այնտեղ նրա

գլխին լավ բամփեցին։ Արդյոք նա սրանից հետո հրապարակից հեռացավ։ Այնինչ իմպերիալիստական մոտիվները, այս բառի նեղ իմաստով, իմ անցյալ դասախոսության մեջ չեյին էլ հնչում։ Այս բոլոր տնտեսական մոմենտները, վորոնց մասին յես պատմեցի, կարող եյին տեղի ունենալ, և վոչ-իմպերիալիստական շրջանում և՛ հացի արտածման դժվարությունները, և՛ արտաքին շուկայում այդ խիստ մրցումը,—այդ բոլորը պարտավոր չե, վոր անպատճառ իմպերալիզմի շրջանակներում տեղավորվի։

Յեվ ահա, դարդանելյան հարցի պատմությունը հենց նրանով է հետաքրքիր, վոր նա հիշեցնում է, թե ինչպես, չնայած այս բոլոր մանրամասնություններին, Ռուսաստանն այդ ամբողջ ժամանակի ընթացքում շարունակում եր իմպերիալիստական յերկիր մնալ իմպերիալիստական տենդենցներով։ Այն ծառերի և թփերի յետևում, վոր յես նկարագրեցի անցյալ անգամ, վորպես բարեխիղճ պատմաբան (իսկ պատմությունը հենց նրանով էլ տարբերվում է սոցիոլոգիայից, վոր նա տալիս է տվյալ մոմենտի մանրամասնությունները, նրա կոնկրետ միջավայրը և վոչ թե միայն ընդհանուր սքեման), այս բոլորի յետևից դուք չպետք է աչքաթող անեք իմպերիալիստական անտառը։ Այս անտառի մասին մեզ հիշեցնում են արտաքին գործոց ռուսական մինիստրության մի ամբողջ շարք փաստաթղթեր, վորոնք շատ հին շրջանից են գալիս, այն է 1908 թ. գարնանից։

Ռուս-ճապոնական պատերազմը՝ արտաքնապես ռուսական իմպերիալիզմի խստագույն պարտությունը լինելով, սակայն նրա համար մի բարենպաստ հետևանք ունեցավ։ Յերբեմն պատահում է, վոր կռվից հետո մարդիկ բարեկամներ են դառնում. կկռվեն, իսկ հետո կբարեկամանան,—այսպես պատահեց Ռուսաստանի և Անգլիայի հետ Ասիայում։ Սրանք գրեթե մի դար, համենայն դեպս՝ յերեք քառորդ դարի ընթացքում անհաշտ անտագոնիստներ, անհաշտ թշնամիներ եյին։ Ռուս-անգլիական կոնֆլիկտն ամբողջական թելով անցնում է ամբողջ XIX դարում՝ մինչև 1904—1905 թվականները, յերբ ռուս-ճապոնական պատերազմն ի միջի այլոց նաև այս կոնֆլիկտի մի մասն եր, Չինաստանում անգլիական և ռուսական կապիտալի ընդհարումն եր։ Բայց հենց ճապոնական պատերազմն եր, վոր վերջ դրեց այդ կոնֆլիկտին։ Անգլիային անհանգստացնում եր այն, վոր Ռուսաստանը հսկա յեր ցամաքի վրա, իսկ ինքը՝ Անգլիան նույնպիսի հսկայական ցամաքային ուժեր իր ասիական գաղութները՝ առաջին հերթին Հնդկաստանը պաշտպանելու համար չուներ։ Այստեղից է բղխում Անգլիայի այսպիսի լարված—կասկածոտ և զգույշ վերաբերմունքը դեպի Ռուսաստանն Ասիայում, վորն արտահայտվեց մի ամբողջ շարք կոնֆլիկտներում, վորոնք ամուր նստած են գլխավոր շտաբի հին ցարական ոֆիցերների հիշողության մեջ, վորոնք ներկայումս հաջող կերպով ծառայում են Կարմիր բանակում։ Բայց իրենք անգլիացիք, վորպես գործնական մարդիկ 1905 թվից հետո այս տեսակետից միանգամայն հանգստացան, վորովհետև նրանք համոզվեցին, վոր ռուսական հսկան նույնիսկ ցամաքի վրա այնքան սարսափելի չե, վորքան թվում եր։ Ճապոնական բանակը հեշտությամբ նրա հախից յեկավ, իսկ ճապոնական բանակը 1902 թվից, անգլո-ճապոնական դաշինքից հետո հենց այն ուժն եր, վորը պետք է ուժից էլ վոր լինի պաշտպաներ անգլիական տիրապետություններն Ասիայում։ 1902 թվականին այս պայմանագրի հիման վրա ճապոնական բանակը պետք է ոգներ անգլիացիներին

նրանց բոլոր ընդհարումներում Ասիայում։ Ճապոնիան պարտավոր չեր միայն միջամտելու յեվրոպական կոնֆլիկտներում։ Դրանով էլ բացատրվում է այն փաստը, վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակ ճապոնական բանակը հանդես չեկավ յեվրոպական բեմում։ Բայց վորովհետև Անգլիան վախենում եր Ռուսաստանից հենց Ասիայում, և վորովհետև Հնդկաստանի պաշտպանության համար Անգլիան ճապոնական սվիններ ուներ, ապա սա միանգամայն բավական եր։

Յեվ ահա Անգլիան, վորը մինչև 1905 թիվն ատամների կատաղի կրճտոցով եր նայում Ռուսաստանի վրա, 1905 թվից հետո իր դեմքը ժպտով է ծածկում։ Այստեղ նրա հետ պատահեց հակառակը, ինչ վոր պատահեց Միլյուկովի հետ, վորի ժպիտը ատամների կրճտոցի փոխվեց։ Անգլիան սկսեց բավական բարյացակամ կերպով նայել Ռուսաստանին, և 1907 թվականին Անգլիայի և Ռուսաստանի միջև մի շարք համաձայնություններ կնքվեցին ասիական գործերի նկատմամբ, վորոնցում այս յերկու յերկրները միանգամայն բաժանվում եյին իրարից և բաժանվում եյին Ռուսաստանի համար վոչ առանց ոգուտի։ Անգլիական բուրժուազիան այստեղ էլ խելոք եր և հասկացավ, վոր չպետք է թշնամուն գրգռել, վոր նրա բարությունը ձեռք բերելու համար պետք է մի պատառ նետել նրան, և վորպես այդպիսի պատառ Ռուսաստանին՝ տնտեսական ազդեցության զոնայի համար՝ գիջվեց ամբողջ հյուսիսային Պարսկաստանը։

Այսպիսով, Ռուսաստանը հնարավորություն ստացավ զարգացնելու իր արտածումը Պարսկաստան, վորի մասին յես արդեն ասացի ձեզ։ Դա ռուս-անգլիական համաձայնության անմիջական արդյունքն եր։ Ռուս-անգլիական կոնֆլիկտն այսպիսով վերացվեց, և քանի վոր նա վերացվեց, հասկանալի յե, վերջացան նաև բոլոր գործերը Հեռավոր Արևելքում. նրանք մի կողմ դրվեցին և անմիջապես, կարելի յե ասել ավտոմատիկ կերպով, ռուսական դիվանգիտության ու ռուսական ռազմա-ծովային շրջանների ուշադրությունը փոխադրվում է Մերձավոր Արևելք։ Արդեն 1907 թվականի վերջին անգլիական դեսպանը խոսակցություն ունեցավ արտաքին գործոց այն ժամանակվա ռուսական մինիստր Ա. Պ. Իզվոլսկու հետ, վորը հետագայում ռուսական դեսպան եր Փարիզում, և անհատապես համաշխարհային պատերազմի գլխավոր հանցավորներից մեկն է։ Յեթե վորոշելու լինենք համաշխարհային պատերազմի անձնական հանցավորներին, ստիպված կլինենք այս գծով տալ Պուանկարեյի անունը ֆրանսիական կողմից, Եդուարդ Գրեյի՝ անգլիական և Իզվոլսկու՝ ռուսական կողմից։ Յեվ ահա այդ Իզվոլսկին, վորն այդ ժամանակ վոչ թե դեսպան եր Փարիզում, այլ արտաքին գործոց ռուսական մինիստր, 1907 թվականի վերջին, կրկնում եմ, խոսակցություն ունեցավ անգլիական դեսպանի հետ Պետրոգրադում, և վերջինս նրան ուղղակի ակնարկեց, վոր յեթե Ռուսաստանն այժմս Մերձավոր Արևելքով զբաղվեր, նա վոչ մի ընդիմադրության չեր հանդիպի Անգլիայի կողմից։

Անգլիական այս դիրքն այնուամենայնիվ պետք է մի քիչ պարզաբանել։ Անգլիան շատ ջղային կերպով եր միշտ վերաբերվում Մերձավոր Արևելքի գործերին, վորքանով վոր այս Մերձավոր Արևելքի վրայով, Միջերկրական ծովի արևելյան մասի վրայով է ընկած ամենակարճ ճանապարհը Անգլիայից Հնդկաստան։ Այդ պատճառով Անգլիան դեռևս XIX դարի 70-ական թվականներին գնեց, որինակ՝ Սուեզի ջրանցքի բոլոր ակցիաները և բուր-

ժուական իրավահարաբերությունների կարգով այս համաշխարհային զարկերակի տերը դարձավ։ Թեպետ այս ջրանցքը բուրժուական իրավունքի տեսակետից մի ինչ վոր չեզոք բան եր, բայց քանի վոր բոլոր ակցիաները անգլիական գրպանումն եյին, ապա բնական ե, վոր փաստորեն նա անգլիացիներին ե պատկանում։ Անգլիան այսպիսով բոլոր միջոցներն եր ձեռք առնում, վորպեսզի Անգլիայից Հնդկաստան տանող այս ամենակարճ ճանապարհի վրա վոչ վոք չհաստատվեր, այստեղից ե Անգլիայի չափազանց նյարդայնականությունը անգլո-ռուսական կոնֆլիկտի շրջանում Ռուսաստանի կողմից նեղուցներում ամրանալու փորձերի նկատմամբ, այսինքն՝ այս ճանապարհին շատ մոտ ամրանալու։ Յեթե ռուսական նավատորմիղը կայան ունենար Դարդանելում, ապա, իհարկե, նա ուզած րոպեյին կարող եր այդ ճանապարհը կտրել և այդպիսով Անգլիային խոշորագույն դժվարությունների առաջ կանգնեցնել։ Բայց Ցուսիմայի ճակատամարտից հետո ռուսական նավատորմիղն այլեվս գոյություն չուներ։ Այն, ինչ Սև ծովումն եր, անգլիացիների տեսակետով միանգամայն վողորմելի մեծություն եր, quantité négligeable, ինչպես ֆրանսիացիներն են ասում։ Բայց անգլիական նավատորմիղը չեր կարող վախենալ 5—6 հնացած զրահանավերից, վորոնք լողում եյին Սևաստոպոլի, Օդեսայի և Նովորոսիյսկի միջև։ Ռուսաստանն, այսպիսով այս տեսակետից Անգլիայի համար միանգամայն անվտանգ դարձավ։

Բայց միևնույն ժամանակ, XIX դարի վերջից, անգլիացիների համար այս անհարմար վայրում չափազանց համառ կերպով հանդես են գալիս Անգլիայի ուրիշ մրցակիցներ. բեմ ե գալիս գերմանական իմպերիալիզմը։ 1898 թվին Վիլհելմ կայսրն արտասովոր փքվածությամբ ճանապարհորդում ե Յերուսաղեմ, ընդ սմին կանգ ե առնում ճանապարհի բոլոր քաղաքներում՝ Կոստանդնուպոլսում, Դամասկոսում քաղաքական ճառեր ե արտասանում, վորոնք ինչպես և այս մեծարժան միապետի բոլոր ճառերը ծայր աստիճանի քաղաքականապես անտակտ եյին։ Մի խոսքով, հսկայական աղմուկ ե բարձրանում, վորը պարզ ցույց ե տալիս, վոր գերմանացիք պատրաստվում են այս վայրում ամրանալու։ Առանձնապես հետաքրքիր եր Վիլհելմի ճառը Դամասկոսում, ուր նա անվերջ սիրալիրություններ եր անում մուսուլմանական աշխարհին, ասում եր, վոր Գերմանիայից լավ բարեկամ մուսուլմանները չունեն և չպետք ե ունենան։ Բայց պետք ե ասել, վոր անգլիացիների առանձնաշնորհումներից մեկը հենց մահմեդական աշխարհի լավագույն բարեկամը լինելն եր։ Անգլիայի ամբողջ հզորությունը հաստատ ե նրա ազդեցությամբ մահմեդականների վրա,—սա նրա գլխավոր հենարանն եր Հնդկաստանում, և հանկարծ հանդես ե գալիս գերմանական կայսրը, վորն ասում ե, վոր մահմեդական աշխարհի ավելի լավ բարեկամը կա, քան թե անգլիացիներն են,—դա նա յե՝ Վիլհելմը։

Սրանից սկսվեց։ Իսկ հաջորդ 1899 թվին Գերմանիան Տաճկաստանում կոնցեսսիա յե ստանում. Պոլսից մինչև Բաղդադ և ապա մինչև Պարսկական ծոցը յերկաթուղագիծ կառուցելու կոնցեսսիա։ Դա 1899 թվին եր, իսկ 1902 թվին կոնցեսսիան հաստատվեց։ Յեվ միևնույն ժամանակ գերմանական, պան-գերմանական հրապարակախոսները, գերմանական գրողները՝ Ռորբախի և Ռեվենտլովի տիպի՝ սկսում են միանգամայն աներևակայելի բաներ գրել։ Ռորբախը հրատարակում ե Բաղդադի ճանապարհի մասին մի

բրոշյուր, ուր մանրամասն զարգացնում ե այն գաղափարը, թե ինչպես հեշտ կերպով մի վորևե ոտարերկրյա պետություն Բաղդադի յերկաթգծի ոգնությամբ կարող ե նվաճել Սուեզի ջրանցքը և Յեգիպտոսը։ Յես չգիտեմ, թե վոր գրականության մեջ հնարավոր կլիներ նման մի բան։ Ինչ գրաքննություն աշխարհիս յերեսին չեր բռնի հեղինակի ոձիքից և չեր ասի նրան. ներեցեք, դուք ձեր մտքում ինչ ուզում եք մտածեցեք, բայց մի գրեք, չե վոր անգլիացիներն այդ անմիջապես կկարդան։ Բայց Ռորբախն այն գրեց մեծագույն ինքնավստահությամբ, գերմանացիք այն ավելի մեծ ինքնավստահությամբ տպագրեցին, նույնպիսի ինքնավստահությամբ, ինչպիսի ինքնավստահությամբ Վիլհելմ կայսրը ճառեր եր արտասանում Դամասկոսում և այլ վայրերում։

Միանգամայն բնական ե, վոր անգլիացիք իրար անցան, և անգլիական պարլամենտում ճառեր լսվեցին, վոր Անգլիան չի կարող թույլ տալ վորևե պետության հաստատվելը Սուեզի ջրանցքի և Կարմիր ծովի ափերին։ Ընդ սմին անգլիացիք բավական ուղիղ ու բացահայտ կերպով հայտարարեցին, վոր սա միակ առիթն ե, վորը կարող ե ստիպել նրանց դուրս գալու իրենց խաղաղասեր դիրքից, և, կարծեմ, լորդ Լանսդաունն եր՝ արտաքին գործոց այն ժամանակվա մինիստրը, վոր Պարսից ծոցում գերմանացիների յերևան գալու հնարավորության առթիվ հայտարարեց թնդանոթների մասին, վորպես վերջին արգումենտ։ Յեվ իրոք, անգլիական գաղութային իմպերիալիզմին մեծ անհանգստություն պատճառեցին այդ բոլոր նախագծերը։

Յեվ ահա, յերբ մի կողմից Ռուսաստանն եր, վորը Ցուսիմայի պատճառով վոչ մի լողացող աման չուներ, իսկ մյուս կողմից՝ Գերմանիան իր Բաղդադի յերկաթգծով և այդ ճանապարհի միջոցով Սուեզի ջրանցքին, Յեգիպտոսին մոտենալու և այդպիսով Անգլիան Հնդկաստանից կտրելու իր ստրատեգիական նախագծով, ապա անգլիացիների համար միանգամայն պարզ յեղավ, վոր «չար արարածն ել սիրելի յե ավելի չար արարածի հանդեպ»։ Ինչքան ել վատ չլինի Ռուսաստանը, բայց հիմա նա այն աստիճանի անատամ և անզեն եյակ ե, վոր յեթե պետք ե մեկին թողնել նեղուցները, ապա իհարկե՝ նրան, թե չե կհասնես այն որին, վոր այնտեղ կնստեն գերմանացիք՝ չափազանց ատամնավոր և չափազանց ճանկավոր, վորոնք ավելի շատ են ճանկեր ու ատամներ ցույց տալիս, քան թե նրանք իրոք ունեն, այդ վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ։ Յեվ չափազանց բնորոշ ե, վոր գրեթե միաժամանակ անգլիացիք 1905 թվականին հսկայական աջակցություն եյին ցույց տալիս Ֆրանսիային՝ Գերմանիայի հետ Մարոկկոյի համար ունեցած վեճի առթիվ և դրանով դաշնակից են ձեռք բերում Լա-Մանշի ափերին, իսկ 2 տարի անց անգլիական դեսպանը Պետրոգրադում ակնարկներ ե անում Իզվոլսկուն, թե յեթե դուք հետաքրքրվում եք նեղուցներով՝ մենք դրա դեմ վոչինչ չենք ունենա։

Յեվ ահա 1908 թվի փետրվարին Լենինգրադում՝ այն ժամանակվա Պետերբուրգում՝ խորհրդակցություն ե հրավիրվում Ստոլիպինի նախագահությամբ, վորը քննում ե վոչ այլ ինչ, բայց յեթե Տաճկաստանի հետ նոր պատերազմի պլանը։ Նախաձեռնողներն այստեղ՝ մի կողմից Իզվոլսկին, իսկ մյուս կողմից, իհարկե, ռուսական գլխավոր շտաբն եյին։ Ռուսական գլխավոր շտաբը դրությունն այնպես եր նկարագրում, թե պատերազմը

վորտեղ վոր ե՝ անխուսափելի չե, վոր Թյուրքերն անթիվ ուժեր են հավաքել, վաղը մեզ վրա կհարձակվեն և մենք պետք ե այդ կանխենք։ Իսկ Իզվոլսկին սև բծեր եր նկարում դիվանագիտական հորիզոնի վրա. այստեղ էլ չարամիտներ, այնտեղ էլ չարամիտներ, այնտեղ էլ չարամիտներ,—արթուն կացեք։ Դժբախտաբար զինվորականներն իրար հետ համաձայնություն չեկան, և մինչդեռ գլխավոր շտաբի պետ Պալիցինը այն պատկերն եր նկարում, վորը յես հիշատակեցի, ռազմական մինիստրի ոգնական Պոլիվանովն ասում եր. ինչով պիտի պատերազմենք. գնդացիրներ չունենք, փամփուշտ չունենք, զինվորական հագուստ չունենք, կոշիկներ չունենք և այլն։ Սա 1908 թվին եր՝ պատերազմի և հեղափոխության հաջորդ որը։ Այնպես վոր, զինվորականների մեջ վորոշ պառակտում առաջացավ, և այդ պառակտումից փառավորապես ոգտվեց Ստոլիպինը։ Այս խորհրդակցությունում, վորը ցույց տվեց, վոր Վիտտեյից հետո սա ինքնակալության ամենախելոք ծառան ե, Ստոլիպինը շատ կոպիտ եր խոսում, և հայտարարեց, վոր ամեն մի միտք պատերազմի մասին ներկայումս աննորմալ կառավարության ջերմային զառանցանք կլիներ, ավելի ճիշտ ասած, վոր Իզվոլսկին և նրա կամպանիան պարզապես խելագարներ են։ Ռուսաստանն, ասում եր նա, նոր դուրս յեկավ հեղափոխությունից։ Նրան մի ամբողջ շարք տարիներ են հարկավոր, վորպեսզի իրեն կարգի բերի և ամրանա, իսկ նրան նոր պատերազմի մեջ են քաշում։ Քանի յես կենդանի յեմ (Ստոլիպինը, իհարկե, այսպես չեր խոսում, բայց նրա ճառի իմաստն այս եր), յես այդպիսի հիմարություն չեմ թույլ տա։ Իսկ Ստոլիպինն այդ ժամանակ չափազանց ազդու անձ եր։ Բավական ե կարդալ միայն այն նամակները, վոր նրան Նիկոլայն եր գրում։ Այս նամակները մի սքանչելի բան են այն քծնությամբ, վորով Նիկոլայը դիմում ե Պ. Ա. Ստոլիպինին, «Մեծարգո Պյոտր Արկադյեվիչ. Ձեյիք արդյոք կարող վաղը այսինչ ժամին, և հարմար ե արդյոք այդ ձեզ, թե չե կարող եմ ուրիշ ժամանակ տրամադրել»... և այլն։ Այսպես եր ցարը գրում իր մինիստրին։

Վերին խավերում ուժերի նման հարաբերության պայմաններում, իհարկե, յերբ Ստոլիպինը մի անգամ ձեռքը խփում ե սեղանին և հայտարարում, վոր նա պատերազմ թույլ չի տա, վոր սա աննորմալ կառավարության ջերմային զառանցանք ե, ապա պարզ ե, թե ինչու այն ժամանակ պատերազմ չծագեց։ Յես իմ մի հոդվածում այն յենթադրությունը հայտնեցի, վոր Ստոլիպինի մահը մի գուցե, վորևե քիչ թե շատ բարդ կապերով կապված եր մոտակա տարիներում պատերազմելու նրա այս կատեգորիկ արգելքի հետ՝ թեկուզ և Մերձավոր Արևելքում։ Համենայն դեպս, 1908 թ. անկասկած կատաստրոֆա տեղի ունեցավ բարձր խավերում, վորովհետև շուտով արտաքին գործոց մինիստր Իզվոլսկին վորպես դեսպան տեղափոխվում ե Փարիզ, իսկ Ստոլիպինի փեսան՝ Սազոնովն արտաքին գործոց մինիստր ե դառնում,—ինչ Ստոլիպինի աչքում բավարար յերաշխիք ե, վոր այլևս վոչ մի անմիտ նախագծեր չեն առաջադրվի։ Իսկ հետո Ստոլիպինն սպանվեց, և ամեն ինչ իր ընթացքով գնաց։

Այսպիսով, արդեն 1908 թ. ռուսական իմպերիալիզմի հիմնական պրոբլեմը՝ Մերձավոր Արևելքի պրոբլեմը՝ հերթի չեր դրված։

Ստոլիպինի մահվանից հետո շատ շուտով Տաճկաստանի հետ նոր պատերազմի նախապատրաստությունը նորից իր լրիվ ընթացքով առաջ եր

տարվում։ Սքեման այսպիսի չեր. կոնֆլիկտ առաջացնել Բալկաններում, ոգտվել նրանից, վոր այդ կոնֆլիկտի մեջ գրավված՝ առաջին հերթին Բալկանյան պետությունները բավականին դժվար դրության մեջ կդրվեն Թյուրքիայի հանդեպ—Թյուրքիան այն ժամանակ ռազմական տեսակետից շատ ուժեղ պետություն եր հաշվվում,—և միջամտել «հավատակից և արյունակից յեղբայրների» պաշտպանության համար։ Այս տեսակետից ամենից հեշտ եր թվում մոտենալ ռուսական մասսայի հասարակական կարծիքին։

Այս պրոբլեմն ավելի բարդ եր, քան կարող ե ձեզ թվալ, վորովհետև բալկանյան յերկու հիմնական պետություններ, կամ, ավելի ճիշտ՝ բալկանյան յերեք պետություններ, վորոնց պետք եր միավորել այս խնդրով, իրար հետ այնպիսի հարաբերություններ եյին ապրում, վորոնց համեմատ շան և կատվի հարաբերությունները չափազանց բարեկամական կարող են թվալ. բուլղարացիք հույներին նույնիսկ ավելի եյին արհամարհում, քան թե Թյուրքերին. սերբերն այն աստիճան տանել չեյին կարող բուլղարացիներին, վոր յուրաքանչյուր նախագիծ, վոր ընդունվում եր Բելգրադում, անմիջապես մերժվում եր Սոֆիայում և ընդհակառակը։ Բալկանյան քրիստոնյաների միջև յեղած նման «հաճելի» հարաբերությունների պայմաններում, վորոնց մենք պետք ե պաշտպանեյինք անհավատներից, կրկնում եմ, մի խնդրի շուրջը նրանց միավորելն այնքան էլ հեշտ չեր։ Այստեղ մենք ունենք վոչ թե բուլղարական և սերբիական կառավարությունների անմիջական բանակցությունների, այլ Սոֆիայի ռուս դեսպանի Նեկլյուդովի և Բելգրադի ռուս դեսպան՝ Գարտվիգի բանակցությունների չափազանց հետաքրքիր սերիա։ Թեպետ սրանք արտաքին գործոց ռուսական մինիստրության ռուս չինովնիկներն եյին, բայց և այնպես նրանց միջև՝ զուտ օբյեկտիվ պայմանների հետևանքով սաստիկ սրված հարաբերություններ գոյություն ունեյին միայն այն պատճառով, վոր մեկը Բելգրադումն եր նստած, մյուսը՝ Սոֆիայում, և մի անգամ քիչ մնաց, վոր իրար դուելի կանչեն։ Նույնիսկ այս բուֆերները սարսափելի տուժում եյին «սլավոն-յեղբայրների» ընդհարումներից։ Բայց գտնվեց գլխավոր շտաբի մի ռուս գնդապետ,—նրա ազգանունը լավ չեմ հիշում,—մի մարդ, վոր բացառիկ հանճարեղություն հանդես բերեց այս տեսակետից և Սերբիայի ու Բուլղարիայի միջև այնպիսի սահմանագիծ անցկացրեց, վորը՝ վորոշ վեճերից հետո՝ յերկու կողմերն էլ բավարարեց։ Ծաղրաբար այս խնդիրը լուծեց գլխավոր շտաբի ռուս գնդապետը։ Այս խնդիրն այնքան էլ համապատասխան չե գլխավոր շտաբի գնդապետի համար, բայց՝ այսպես թե այնպես, դա նրան հաջողվեց։ Այդ գիծը, ինչպես յերևի հասկանում եք, տաճկական տերրիտորիայի վրայով անցկացվեց։

Այդ ժամանակ ասվում եր, վոր Ռուսաստանը վոչ մի բանի մասին այնպես չի հոգում, ինչպես Յեվրոպայում խաղաղություն պահպանելու մասին։ Դուք, իհարկե, կգնահատեք այս իրադրությունը. լրիվ խաղաղություն, վոչ վոք չի ուզում պատերազմել, բայց միևնույն ժամանակ Սոֆիայում նստած ե գլխավոր շտաբի ռուս գնդապետը, նրա առաջ Թյուրքիայի քարտեզն ե, և նա այդ քարտեզի վրա սահմաններ ե անցկացնում՝ այստեղ Սերբիան կլինի, իսկ այստեղ՝ Բուլղարիան, իսկ թե ինչպես այդ անել առանց խաղաղությունը խախտելու, դա գնդապետին չի վերաբերում, նրա դերը զուտ տեխնիկական եր։ Այսպես թե այնպես, սերբո-բուլղարական պայմանագիրը կնքվեց։

Թյուրքիան գլխավոր շտաբի ռուս գնդապետի նախագծով այդպես բաժանումից հետո, հասկանալի է դառնում, որ երբ այդ պայմանագիրը Պուանկարեն տեսավ Փարիզում, նա բացականչեց. «Սա պատերազմի զենք է»։ Այն աստիճան պարզ էր, որ Բուլղարիայի և Սերբիայի այս «խաղաղ» դաշնագիրը,—Թյուրքական ադրեսությունների մասին ոչինչ չէր հիշատակվում, իհարկե, դա դաշնագրի գաղտնի մասն էր,—որ դա նոր պատերազմի նախապատրաստությունն էր, և 1912 թվի աշնանը պատերազմը, իրոք, սկսվեց։

Բայց այստեղ մի անսպասելի բան պատահեց։ Թյուրքիան, որի վրա լավագույն հույսեր էին դրված,—որ այս ուժեղ ռազմական պետությունը կարող է ում էլ որ լինի ատամները ջարդել, այդ Թյուրքիան առաջին իսկ օրվանից ջարդուփշուր եղավ, այնպես ջարդվեց, որ թյուրքական բանակը բոլորովին գոյություն չուներ այլևս, իսկ բուլղարացիք Կոստանդնուպոլսի վրա էին գնում։ Բայց Պոլսում պետք է ռուսները լինեին և ոչ թե բուլղարացիք ու սերբերը։ Մինչդեռ Ֆերդինանդ թագավորը պատվիրեց արդեն իրեն համար բյուզանդիական կայսեր զգեստը և պատրաստվում էր Պոլիս մտնելիս նրանով ընդունել զորատեսը։ Այստեղ չլսված շփոթություն ստեղծվեց, երբ Պետերբուրգում արգելվեց նվագել բուլղարական ազգային հիմնը՝ «Ազմկիր Մարիցա»-ն, մինչև այն աստիճանի լարված էին Ռուսաստանի և Բուլղարիայի հարաբերությունները՝ Բալկանների «սլավոն եղբայրներից» մեկի, որին ռուսները պատրաստվում էին փրկելու և որին այժմ փրկելու կարիք չկա։

Հետևանքն այն եղավ, որ ստիպված եղան ամենաշտապ միջոցներ ընձեռնել։ Բուլղարացիների վրա Ռումինիային բաց թողին, որի շնորհիվ էլ Բուլղարիան չափազանց արագ կերպով դրեցին պահանջվող դրության մեջ։ Ուրիշ ոչինչ չէր մնում անել, որովհետև վերջիվերջո, ամբողջ խաղը փչացել էր։

Այսպիսով, Արևելքում ինքնուրույն պատերազմ առաջացնելու այս փորձը չհաջողվեց։ Այդ միտքն, իհարկե, մոռացության չտրվեց և Ռուսաստանն ագահորեն կպչում էր ամեն մի առիթի, որպեսզի հարուցի արևելյան հարցը։ Այսպես, երբ 1913 թվի վերջին, որպես պատերազմից հետո վերակազմվող թյուրքական բանակի տեսուչ հանդես եկավ գերմանացի Լիման Ֆոն Սանդերսը, սա նորից առիթ ծառայեց, որպեսզի Պետերբուրգում նորից մի ամբողջ շարք խորհրդակցություններ հրավիրվեն այն մասին, թե ինչպես այս հողի վրա կարելի է նորոգել կոնֆլիկտը Թյուրքիայի հետ, արշավախումբ կազմակերպել Պոլսի վրա, ընդամին գործն էլ արդեն չափազանց գործնականորեն էր դրված. ճիշտ որոշվում էր, թե այդ նպատակի համար ինչ կորպուսներ պետք է ուղարկվեն, որտեղ նրանք պետք է նավ նստեն, ինչ ժամկետում և այլն։ Այս նախագիծը չափազանց հետաքրքիր կերպով լրացվում էր նախագծի մանրամասնություններով, որոնք մշակել էին այն ժամանակվա մեր ծովային սպաները՝ թյուրքական նավատորմիղը մինչև պատերազմի հայտարարությունը ոչնչացնելու նպատակով։ Բանը նրանումն է, որ թյուրքերը հեռատես մարդիկ դուրս եկան։ Նրանք էլ պատրաստվում էին և երկու դրեդնոուտ գնեցին, մեկը՝ Բրազիլյան «Րիո դե Ժանեյրո», մյուսը՝ անգլիական, որն անվանեցին «Սուլթան Ռեշադ»։ Ռուսաստանի սևծովյան դրեդնոուտները դեռ ևս պատրաստ

չէին։ Ռուսաստանը մշտապես ուշանում էր. Ցուսիմային ուշացավ, այստեղ էլ ուշացավ։ Մեր դրեդնոուտները դեռ նոր էին կառուցվում, իսկ թյուրքերն արդեն երկուսն ունեին։ Սկսեցին շտապ կերպով այլերկրյա նավաշինարաններում պատրաստիները գնել։ Զորսը գտան, բայց ինչպես նրանց Սև ծովը մտցնել։ Նեղուցներն ըստ 1841 թվի կոնվենցիայի փակված էին ռազմական նավերի համար, այնպես որ հնարավորություն չկար դրեդնոուտները Սև ծովը մտցնելու։ Նրանք պետք է կենտրոնացվեին Միջերկրական ծովում՝ թյուրքերի վրա թիկունքից ճնշելու համար։ Սակայն անմիջականորեն սևծովյան նավատորմիղին նրանք չէին կարող օգնել դրա համար պետք էր նախապես նեղուցներին տիրանալ,—ինչ՝ ինչպես այդ ցույց տվեց անգլիացիների և ֆրանսիացիների փորձը՝ հեշտ գործ չէր։ Ահա այստեղ է, որ ռուս ծովայինների գլուխներում հանճարեղ ծրագիր ծագեց—նրանք վճռեցին տեխնիկայի ամենավերջին խոսքն օգտագործել։ Սևաստոպոլում կառուցվեց ռուսական ջրաղդանավերի կայանը։ Միևնույն ժամանակ ռուսական ծովային ագենտը Պոլսում պետք է ուշադրությամբ հետևեր թյուրքական երկու դրեդնոուտների բոլոր շարժումներին։ Դրա համար ամբողջ Մարմարա ծովը և նեղուցները բաժանվեցին մի շարք քառակուսիների, կարծեմ, 100 քառակուսիների ըստ համարների, և Բույուկդերեյի՝ Պոլսի ռուսական դեսպանության կից՝ ռադիոկայանը կանոնավոր կերպով հայտնում էր Սևաստոպոլ այն քառակուսու համարը, ուր այդ ժամանակ թյուրքական դրեդնոուտն էր գտնվում, ասենք, օրինակ՝ հինգերորդ համարը—նշանակում է հինգերորդում, տասնևյոթերորդ համարը—նշանակում է՝ տասնևյոթերորդում և այլն։

Դիվանագիտական հարաբերությունների խզման և պատերազմի հայտարարության միջև սովորաբար որոշ ժամանակ է անցնում՝ թեկուզ մի քանի ժամ, որովհետև դեսպանությունը պետք է իրերը հավաքի, դուրս գա և այլն։ Այդ ժամանակ ռազմական գործողություններ չեն լինում։

Բայց միևնույն ժամանակ հենց որ դիպլոմատիկ հարաբերությունների խզումը կատարվի, Բոյուկդերեյի ռադիո կայանը կհայտնի Սևաստոպոլի այն քառակուսու համարը, որտեղ տվյալ մոմենտում գտնվում են թյուրքական դրեդնոուտները։ Ռուսական ջրաղդանավերն անմիջապես դուրս են թռչում Սևաստոպոլից՝ ռումբերի համապատասխան բեռով և հարձակվում են այդ դրեդնոուտների վրա։ Պատերազմ դեռ չկա, թյուրքերը չեն կարող միջոցներ ընձեռնել, և դրեդնոուտները կհաջողվի խորտակել։ Այսպիսով գործն ավարտած կլինեն։ Այս իրագործել չհաջողվեց. ես կարծում եմ, որ մեր ընդհանուր տեխնիկական հետամնացության պայմաններում հազիվ թե այս գործառնությունը կարելի լիներ հաջողությամբ վերջացնել։ Ամենայն հնարավորությամբ ջրաղդանավերը կթռչեին ոչ այնտեղ, ուր հարկավոր էր, ռումբերն էլ կնետվեին ոչ այնտեղ, ուր անհրաժեշտ էր, ընդհանրապես խայտառակությունից բացի ոչինչ դուրս չէր գա, բայց ինքնին պլանը չափազանց բնորոշ է դիվանագիտական նորմաների տեսակետից։ Ինչպես էին աղաղակում ճապոնացիների չտեսնված լպրշության մասին, երբ նրանք հարձակվեցին Պորտ-Արթուրի վրա. նենգամիտ հարձակում և այլն, իսկ հետո իրենք հաշվի առան այդ. իսկ մենք հիմարներս ինչի չենք զուր տեղն սպասում, և ճիշտ նույնպիսի կարգով, ինչպես ճապոնացիք հարձակվեցին Պորտ-Արթուրի վրա, նույնիսկ ավելի վատ կերպով պատրաստվում

եյին վոչնչացնելու Թյուրքական դրեդնոուտները։ Բայց այս պլանը նրանով է միայն բնորոշ, վոր նա ցույց է տալիս, թե վորքան հեռու եյին գնում ռուսական պլանները նեղուցների մասին։ Իսկ իրականում Ռուսաստանին չհաջողվեց իր սեպարատ արևելյան պատերազմը կազմակերպելու, վորովհետև մինչև այդ նա ներգրավվեց համաշխարհային պատերազմի մեջ։

Ռուսաստանի բոլոր այս ձգտումներով դեպի Կոստանդնուպոլիսը փաստավոր կերպով ոգտվեց նույն անգլիական կառավարությունը, վորը դեռ ևս 1908 թվին, ինչպես յես պատմեցի, իր դեսպանի միջոցով ակնարկում եր, վոր չեթե Ռուսաստանը նեղուցներով հետաքրքրվի, Անգլիան նրան չի խանգարի։

Անգլիական քաղաքականության այս շրջադարձի հիմնական պատճառը մենք արդեն տեսանք։ Բայց թույլ տվեք բերել մի այլ մանրամասնություն, վոր բացատրում է, թե ինչու անգլիացիք հիմա այդպիսի հոժարությամբ համաձայնվում եյին, վորպեսզի Ռուսաստանն ամրանա նեղուցներում։ Դարդանելից Միջերկրական ծով դուրս գալիս ընկած են Թենեդոս, Իմբրոս, Լեմնոս և Սամոթրակիա կղզիները, վորոնք դուք, իհարկե, չեք տեսել, իսկ ռուսական գվարդիական սպաները շատ լավ ծանոթ են, վորովհետև նրանք այդ կղզիներումն եյին գտնվում անգլիական կոնցենտրատիկ ճամբարներում։ Այդ կղզիներն անգլիացիների ձեռքումն են։ Հին հրետանու պայմաններում այս կղզիները, վորոնք Դարդանելի չելքից առնվազն 15 վերստի վրա յեն գտնվում, միանգամայն անվտանգ եյին, վորովհետև հին թնդանոթով 4 վերստից հեռու չես կարող խփել, իսկ նոր թնդանոթներով, վորոնք 15 վերստից և ավելի հեռու յեն խփում, բոլորովին այլ պատկեր եր ստացվում։ Այս կղզիների վրա դրված անգլիական մարտկոցը փաստավոր կերպով կարող եր Դարդանելի չելքը փակել։ Ռուսական նավատորմիղը կարող եր այնտեղ իր յուղի մեջ տապակվել։ Նրա համար Սև ծովին մի փոքր ավիք եր ավելանում, վորի մեջ նա կարող եր լողալ, բայց այդ ավիքից դուրս գալ կարող եր նա միայն անգլիացիների թույլտվությամբ։ Ցեվ ահա անգլիացիք հեռատեսությամբ այս կղզիները գրավեցին, վորովհետև ստրատեգիական տեսակետից վոչ թե դարդանելյան, այլ կղզիական հարցն եր դրված, վորովհետև ում ձեռքում վոր այդ կղզիները գտնվեն, նրա ձեռքումն ել արդի տեխնիկայի, արդի հրետանու պայմաններում՝ կլինի Դարդանելը։ Այնպես վոր Անգլիան բավական հանգիստ կարող եր ասել Ռուսաստանին. ահա ձեզ և Բոսֆորը, ահա ձեզ և Դարդանելը, իսկ կղզիների մասին մենք կխոսենք։ Կղզիների մասին վոչ մի դաշնագրում վոչինչ չի ասված։

Բայց միևնույն ժամանակ՝ բավական հանգիստ լինելով Ռուսաստանի նեղուցներում ամրանալու ռազմական հետևանքների նկատմամբ՝ անգլիացիք շատ եյին ուզում Ռուսաստանը գրավել իրենց կոմբինացիայի մեջ, նրան Գերմանիան շրջապատելու մի մասը դարձնել, վորի մասին նրանք շատ համառ կերպով հոգում եյին XIX դարի վերջերից։ Ցես հնարավորություն չունեմ բացատրելու ձեզ, թե ինչ պատճառով, ինչ ձևով եյին ձգտում անգլիացիք Գերմանիայի այդ շրջապատմանը և անգլո-գերմանական պատերազմին։ Այս պատճառները շարադրված են արտաքին քաղաքականության մասին իմ հոդվածներում, և դուք այնտեղ կարող եք գտնել։

Այսպես թե այնպես, այս պարագաներում անգլո-ռուսական դաշինքը Ռուսաստանի համար գնալով ավելի անխուսափելի յեր դառնում. 1914 թվի

մայիսին գործը հասավ արդեն ռուս-անգլիական ծովային կոնվենցիայի մասին բանակցություններին, ընդ սմին Ռուսաստանն ըստ սովորության մի քիչ շտապելով և մեծ նախագծական ստեղծագործություն ցուցահանելով, քան գուցե դա պահանջվում եր, շտապում եր արդեն հաշվի առնելու այս ծովային կոնվենցիան, և 1914 թվի մայիսին (գնահատեցեք այդ) ռուսական ծովային մինիստրությունը Բալտիկ ծովի նավահանգիստներում մեծ քանակությամբ անգլիական առևտրական նավերի կենտրոնացման հարցն եր դնում՝ ռուսական բանակը Պոմերանիա փոխադրելու համար։ Պոմերանիան պրուսական մի պրովինցիա յե, վոր գտնվում է Բեռլինից հյուսիս, Բալտիկ ծովի ափին։ Ճիշտ է, ռուսական դեսպան Բենկենդորֆը խորհուրդ եր տալիս Պոմերանիայի մասին չխոսել, վորովհետև դա կարող եր վախեցնել անգլիացիներին, անգլիացիք ծանր ժողովուրդ են և չեն շտապի։ Ռուսական ծովային ագենտը նույնպես չեր խոսում Պոմերանիա դեսանտ հանելու մասին։ Բայց չափազանց հետաքրքիր է, թե ինչպես ռուսական կառավարությունը 1914 թվի մայիսին, յերբ վոչ վոք չեր սպասում Գերմանիայի նենգամիտ հարձակումը Ռուսաստանի վրա, հեռատեսորեն խորհում եր, թե ինչպես նավեր գտնել այդ գերմանացիների մոտ ընկնելու համար։ Նույն ժամանակ, նույն մայիս ամսին Պետրոգրադի ֆրանսիական դեսպան Պալեոլոգը իր կառավարությանը հայտնում է իր խոսակցությունը պետական խորհրդի մի ազդեցիկ անդամի հետ,—ազգանունը չի ասված,—վոչ ավել, վոչ պակաս, քան չեթե Ավստրիայի բաժանման մասին։ Այս խոսակցության մեջ պետական խորհրդի ազդեցիկ անդամը այն վախը, թե հույսն եր հայտնում, վոր շուտով կմեռնի Ֆրանց Իոսիֆ կայսրը, վորը մոտ 80 տարեկան եր։ Ինչ կլինի այն ժամանակ Ավստրիայի հարցը։ Թվում եր, վոր ամեն թագավոր ել մեռնում է. դե, նրա տեղը ժառանգը կբռնի, չէ վոր նա ժառանգ ունի։ Բայց մի ինչ վոր պատճառով պետական խորհրդի ազդեցիկ անդամը շատ վշտացած և տարակուսանքի մեջ եր, թե ինչ կլինի Ավստրիայի հետ։ Ցեվ մի տեսակ բնական եր դուրս գալիս, վոր դրանից հետո ավստրիական տերա- պետության մի մասը, այն է՝ Գալիցիան և Բուկովինան պետք է Ռուսաստանին անցնեյին։ Պետական խորհրդի ազդեցիկ անդամը մի ամբողջ շարք պատճառներ եր բերում՝ պատմական, տնտեսական և նույնիսկ կրոնական. այնտեղ ել ժողովուրդն ուղղափառ է, ռուս ժողովուրդն ել ուղղափառ է. Նույն այնտեղ ել ուկրայնական լեզվով են խոսում, վորը մենք արգելում ենք մեզանում և այլն,—ամեն ինչ միանգամայն հարմար է, վոր նրանք մեզ պատկանեն։ Սա նորից 1914 թվի մայիսին է վերաբերում։ Խաղաղասիրությունն այդ ժամանակ կատարյալ ձևով եր արտահայտվում։ Ցերբ իրեն Եդուարդ Գրեյին՝ արտաքին գործոց անգլիական մինիստրին, վորոշ բան իմացած Լոնդոնի գերմանական դեսպան իշխան Լիխնովսկին հարցրեց. դուք ինչ վոր դաշնագրեր ունե՞ք Ռուսաստանի հետ նեղուցների մասին, նա աչքերը լայն բացեց և ազնիվ խոսք տվեց, վոր նեղուցների մասին վոչ մի խոսակցություն չի յեղել Ռուսաստանի հետ գրեթե Նապոլեոնյան պատերազմներից սկսած,— և ճիշտ է, չէ՞ վոր խոսակցությունները վոչ թե նեղուցների, այլ Բալտիկ ծովի և Պոմերանիայի մասին եյին... Իսկ միևնույն ժամանակ հայտնեց Պետրոգրադ. «Ցերևի ձեզ մոտ շատ են ավել-պակաս խոսում»։ Սերբիական մամուլի մերկացումները մի այլ գիծ ավելացրին այս պատկերին՝ լուսաբանելով Ֆրանց Ֆերդինանդ երցհերցոգի՝ հենց Ֆրանց Իոսիֆի թագաժառանգի սպա-

նության մութ մոմենտը,— վորից և սկսվեց պատերազմը, վորովհետև այդ սպանությունը Սերբիային ուղղած ավստրիական ուլտիմատումի պատճառ դարձավ։ Սերբիան այս ուլտիմատումին, ճիշտ է, բավական հնազանդ պատասխան տվեց, բայց վոչ այնպես, ինչպես այդ Ավստրիային եր անհրաժեշտ, և այս հողի վրա պատերազմ ծագեց։

Ֆրանց Ֆերդինանդի մահը չափազանց ձեռնտու չեր նրանց համար, ովքեր պատերազմ եյին ուզում, և այդ պատճառով այն բանի կողմնակիցները, ինչ չես «ռիտուալ առասպել» անվանեցի, այսինքն՝ այն վերսիայի, վոր այդ պատերազմը Գերմանիան ու Ավստրիան սկսեցին փոխադարձ համաձայնությամբ, չափազանց դժվար առեղծվածի առաջ եյին կանգնած։ Պետք եր ապացուցել, վոր Վիլհելմն սպանեց իր անձնական բարեկամին (իսկ Ֆրանց Ֆերդինանդը, իրոք, Վիլհելմի անձնական բարեկամն եր) մասնավորապես նրա համար, վորպեսզի պատերազմի առիթ գտնի։ Սա ճշմարտության չափազանց քիչ եր նման։ Յեվ ահա Դիմիտրիյեվիչ գնդապետի նորերս արած սերբիական մերկացումները, վորն այն ժամանակ սերբիական հետախուզության պետն եր, լուսաբանեցին այս գործը։ Պարզվում է, վոր նույն 1914 թվի մայիս ամսին, մի ամիս, վոր շատ ավելի ճակատագրական եր, քան թե 1914 թվի հուլիս ամիսը, յերբ պատերազմ հայտարարվեց, Բելգրադում մի դեպյոշա ստացվեց՝ հասցեագրված ռուսական գլխավոր շտաբի կողմից սերբիական գլխավոր շտաբին, վորտեղ ասված եր, թե իբր թե Վիլհելմն ու Ֆրանց Ֆերդինանդը Կոնոպիշտի խորհրդակցության ժամանակ վճռել են հարձակվել Սերբիայի վրա։ Նախագծի գլխավոր դեմքը Ֆրանց Իոսիֆն է։ Նրա Բոսնիա գնալը՝ իբր թե մանյովրաների, վոչ այլ ինչ է, յեթե վոչ Սերբիայի վրա հարձակվելու նախապատրաստություն, և այդ մանյովրաները լոկ վարագույր են սերբիական սահմանում զորքեր կենտրոնացնելու համար։ Այս լուրն ստանալով՝ սերբիական գլխավոր շտաբն իրար խառնվեց։ Ի՞նչ անել։ Յեվ ահա այնտեղ տաքարյուն այլ նախագծերի շարքում ծագում է Ֆրանց Ֆերդինանդին սպանելու նախագիծը, և այսպիսով նախապատրաստվող հարձակումը խափանելու, ժամանակ շահելու՝ մինչև վոր Ռուսաստանից ոգնություն ստացվի։ Դժվար չեր սերբիական ազգայնականների մեջ վոգևորված պատանիներ գտնել, վորոնք Սարայեվո գնացին և Ֆրանց Ֆերդինանդին սպանեցին։ Ապա արդեն գործն ինքն իրեն առաջ գնաց։ Պատրաստվում եր արդյոք Ֆրանց Ֆերդինանդը Վիլհելմի հետ հարձակվելու Սերբիայի վրա, դա հայտնի չե, բայց, համենայն դեպս, ռուսական գլխավոր շտաբն իր ձեռքում ուներ այն, ինչ անհրաժեշտ եր, մի փաստ կար, վորը պետք եր պատերազմ սկսելու համար։ Պարզ եր, վոր այնպիսի մի ապտակ. ինչպես ավստրիական տերրիտորիայի վրա սերբերի կողմից ավստրիական թագաժառանգի սպանությունն է, Ավստրիան չի տանի։ Այդ չեր տանի և վոչ մի պետություն աշխարհիս յերեսին։ Միանգամայն ակներև է, վոր Ավստրիան պետք է հանդես գար ուլտիմատումով Սերբիային։ Հետո ամեն ինչ սահուն կերպով առաջ է գնում։

Այսպես, մենք հիմա գիտենք, վոր Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը ռուսական գլխավոր շտաբի պրովոկացիայի հետևանք եր։ Դա միանգամայն պարզ և ակներև է։ Այսպիսով, պատասխանել այն հարցին, թե ով սկսեց պատերազմը, հիմա շատ հեշտ է դառնում, և զարմանալի չե, վոր այս ֆոնի վրա արդեն ավստրիական ուլտիմատումից յերկու որ առաջ ֆրան-

սիական դեսպան Պալեոլոգը Պետերբուրգում չափազանց հետաքրքիր խոսակցություն է ունենում այսպես կոչված «չերնոգորկաների» հետ, այսինքն՝ չերնոգորյան դքսուհիների հետ, վորոնցից մեկը՝ Անաստասիա Նիկոլայեվնան ապագա ռուսական գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլայեվիչ «մեծի» կինն եր։ Այդ ժամանակ նոր եր Պետրոգրադ յեկել ֆրանսիական վարչապետ Պուանկարեն, և ահա թե ինչ եյին ասում «չերնոգորկաները»։

—Գիտե՞ք արդյոք դուք, վոր մենք պատմական որեր ենք ապրում, սրբազան որեր։ Վաղը զորատեսի ժամանակ նվագախումբը միայն ֆրանսիական քայլերգներ պիտի նվագի, լոտարինգյան քայլերգ և Sambre et Meuse (ֆրանսիական ռեվանշի քայլերգը՝ Գերմանիայի դեմ Ելզաս-Լոտարինգիայի համար պայքարի քայլերգը)։ Յես այսոր հեռագիր ստացա իմ հորից պայմանավորված վոճով։ Նա ինձ հաղորդում է, վոր մինչև այս ամսի վերջը պատերազմ կլինի»։

Դա ավստրիական ուլտիմատումից յերկու որ առաջ եր։ Դեռևս վոչ վոք չեր կարող իմանալ, թե ինչ է պարունակված այդ ուլտիմատումի մեջ, վոր նշանավոր չերնոգորյան իշխան Նիկոլայը, նույն ինքը՝ Նիկիտան, վորին Ալեքսանդր III իր միակ բարեկամն եր համարում, և վորը, գլխավորապես, նրանով հայտնի դարձավ, վոր խորամանկություն ուներ միևնույն ժամանակ սուբսիդիա ստանալու թե Ռուսաստանից և թե Ավստրիայից, նա արդեն գիտեր, վոր մինչև ամսի վերջը պատերազմ է լինելու։

Այս փոքրիկ անեկդոտով ել թույլ տվեք ինձ վերացնել դիվանագիտական այն կոնֆլիկտի շարադրությունը, վորը հանգավ պատերազմի։ Դուք տեսնում եք, այսպիսով, միանգամայն վորոշակի կերպով, վոր յեթե վորոնելու լինենք պատերազմի անմիջական հանցավորներին, ապա նրանց պետք է վորոնենք վոչ թե Բեռլինում և վոչ թե նույնիսկ Լոնդոնում, այլ Պետերբուրգում։ Նիկոլայ II, յերբ նա սկզբում թռավ գահից, իսկ հետո Իպատյեվի տան ճաշասենյակն ընկավ Յեկատերինբուրգում, պատշաճ ձևով ստացավ այն, ինչի նա արժանացել եր իր քաղաքականությամբ՝ տասը միլիոն մարդկանց համաշխարհային սպանդանոցում կործանման գլխավոր հանցավորներից մեկը լինելով։ Այն հարցին, թե ով է ամենքից շատ հանցավոր 1914 հուլիսի դեպքերում, կարելի չե պատասխանել կարճ և հասարակ՝ ռուսական վերջին ցարը։

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Յես բնութագրեցի կադետական կուսակցությունը՝ ռուսական բուրժուազիայի ծայրահեղ ձախ թևը՝ և դուք հիշում եք, վոր այս ձախ թևը՝ ինքնըստինքյան բաղկացած առավելապես խոշոր ինտելիգենցիայից, պրոֆեսորներից, լավ պրակտիկա ունեցող բժիշկներից, ճարտարապետներից և այլն՝ սերտ կախման մեջ էր խոշոր, առավելապես՝ բանկային կապիտալից։ Ինչ վերաբերում է կադետներից ավելի ձախ կանգնած բուրժուական կուսակցություններին, ապա դուք հիշում եք, վոր նրանց անմիջական հարևաններն աջից պրոգրեսիստներն էին, վորոնք Մոսկվայի ֆաբրիկանտ-տեկստիլշչիկների կուսակցությունն էին, իսկ հետո գալիս էին օկտյաբրիստները՝ մի կողմից վաշխառուական կապիտալի և մյուս կողմից ծանր ինդուստրիայի կուսակցությունը, յետևից ավելի աջերն էին գալիս, վորոնց մասին չարժե անգամ խոսել։

Միանգամայն բնական է, վոր ռուսական ամբողջ կապիտալիզմի և՛ արդյունաբերական, և՛ առևտրական շահերը շոշափող պատերազմը պետք է բոլոր այս կուսակցությունների, վորոնք ռուսաստանյան բուրժուազիայի հասարակական կարծիքն էին արտահայտում, տրամադրություններն իր կողմն ունենար։ Միայն կադետները մի րոպեյով տատանվեցին, դա, այսպես ասած՝ կադետների վերջին հիշողությունն էր մի ժամանակ նրանց մեջ յեղած ձախից բարեկամների հաշիվների։ Բայց այդ տատանումը բառացիորեն մի վայրկյան տևեց։ Բավական էր միայն աջից «սուս» անել կադետներին և սպառնալ «Речь»-ը փակելով, ինչպես վայրկյանապես կադետներն էլ ընդհանուրի վոգով տրամադրվեցին և բուրժուական ամբողջ մեքենան իր մասերով սկսեց աշխատել ներդաշնակ ձևով, չափազանց համերաշխ, մի ուղղությամբ։ Յես յերբեք չեմ մոռանա այն տպավորությունը, վոր յես էմիգրանտս Պարիզում ստանում էի Ռուսաստանից յեկած թերթերից։ Ավելի քստմնելի վոչինչ յես չեմ զգացել իմ կյանքում։ Այդ զգացումը բարոյական զզվանքի զգացում էր, վորն օրեցօր ուժեղանում էր և վորը՝ չնայած իմ ամբողջ ինտերնացիոնալիզմին, ինձ այն աստիճանի էր հասցնում, վոր յես յերբեմն սկսում էի ցանկալ գերմանացիների հաղթությունը նրա համար միայն, վորպեսզի մաքրվի այն ամբողջ գարշանքը, վոր հանդես էր գալիս մեր բուրժուական թերթերի եջերում։ Սա իսկական գարշանք էր, վորովհետև այնպիսի ելեմենտներ էին հանդես գալիս, վորոնց մենք հետո Փարիզում ստիպված յեղանք դատել վոստիկանության դեպարտամենտի հետ կապ ունենալու համար։ «Русское слово»-յի թղթակիցներից մեկը, ռուսական մամուլի եջերում հայրենասիրության սերմանողներից գլխավորներից մեկը նշանավոր Բրուտ-Բելովն էր։ Առաջինն, ինչ մենք գտանք Փարիզի պահնորդական բաժանմունքի արխիվում, դա Բրուտի նամակն էր, վորի մեջ նա իր պատրաստակամությունն է հայտնում վոստիկանության դեպարտամենտին ծառայելու, մի առաջարկություն, վոր մերժվել էր։ Վոստիկանության դեպարտամենտը վճռեց, յերևի, վոր չարժե գնել Բրուտին, քանի վոր նա առանց այդ էլ աշխատում է։ Մարդը ձրի ծախվեց։ Ահա թե ինչպիսի մարդիկ էին այն ժամանակ իրենց ձեռքում պահում ռուսական հասարակական կարծիքը։ Իհարկե, այստեղ կային և ձևականորեն կարգին մարդիկ, ինչպես Միլյուկովն է, բայց այդ ձևականորեն կարգին մարդիկ, կարգին չէին քաղաքականապես։ Նրանք բուրժուազիայի դասակարգային շահերի արտահայտիչն էին և ներդաշնակում էին ուրիշների հետ։ Գուցե նրանք շատ քիչ ավելի կարգին էին, բայց նրանք էլ «կեցցե» էին աղաղակում և «боже царя храни» էին յերգում։ Նրանք խաբում էին լայն մասսային, վորը լրագիր էր կարդում և միամտաբար համոզված էր, վոր բուրժուական լրագրներում ճշմարտություն են գրում։ Այդպիսի մարդիկ մինչև օրս էլ շատ կան. կան շատ մարդիկ, վորոնք կարծում են, վոր բուրժուական դասակարգի մամուլը կարող է, վոչ միայն ուզում է, այլ և կարող է ճշմարտություն ասել։ Հետո, պատերազմի ժամանակ յես գտնում էի բուրժուական այս մամուլի եջերում, այն էլ վոչ մեր, այլ արտասահմանյան մամուլի, վորը մերից ավելի կարգին էր, ստատիստիկական կոպտագույն սխալներ, օրինակ, գերմանական բանակի քանակի մասին։ Մարդիկ ուղղակի ստում էին։ Յես իմ հոդվածներում մատնանշել եմ անգլիական և ֆրանսիական մամուլի նման մի շարք խաբեբայություններ։ Բայց մեր խեղճ մանր-բուրժուազիան, մեր խեղճ մանր-բուրժուական ինտելիգենցիան ամբողջովին հավատում էր այն ամենին, ինչ գրվում էր այդ թերթերի եջերում։

Յեվ ահա թե ինչ տեսարաններ էին տեղի ունենում բուրժուական մամուլի կողմից Ռուսաստանում հասարակական կարծիքի նման կազմակերպության ազդեցության ներքո։ Յես պետք է բավական յերկար մի քաղվածք կարդամ, վորովհետև դա արդեն շատ բնորոշ է։ Այս քաղվածքն այն ժամանակվա լրագրերից է վերցված. «Մոսկվայում հոկտեմբերի 9-ին (1914 թ.) ժամը 12-ին համալսարանի նոր շենքում, պրոֆ. Կարլուկովի դասախոսությունից հետո ուսանողների թռուցիկ հավաքույթ տեղի ունեցավ, վորտեղ բանաձև ընդունվեց այն մասին, վոր անհրաժեշտ է արտահայտել ուսանողների վերաբերմունքը դեպի նրանց զորակոչը բանակի շարքերը։ Ժամը 2-ին մոտ համալսարանի նոր շենքի № 1 աուդիտորիայում պրոֆ. Ա. Ա. Բայկովն իր հերթական դասախոսության մեջ իր կարծիքն արտահայտեց այն դեպքերի վերաբերմամբ, վոր ապրում են Ռուսաստանն ու Յեվրոպան և, մասնավորապես, մատնանշեց Մինիստրների Խորհրդի կանոնադրությունն ուսանողներին բանակի շարքերը կոչելու առթիվ։ Ուսանողներից մեկը՝ Լ. Կ...» (չգիտենք ինչու բուրժուական լրագրերը թագցրին իսկական ազգանունը։ Այսպիսի լավ, հայրենասիրական ակտ և այնուամենայնիվ միայն Լ. Կ. տառեր)—»... բարձրացավ և ճառ արտասանեց՝ մատնանշելով, վոր ուսանողները հիացմունքով են դիմավորում նրանց հայրենիքը պաշտպանելու համար կոչի ակտը և համարձակ գնում են թշնամու դեմ։ Հռետորի առաջարկությամբ աուդիտորիայում ներկա գտնվող ուսանողները «Հավերժ հիշատակ» յերգեցին կռվի դաշտում բոլոր ընկածներին, իսկ հե-

տո «боже царя храни» և «спаси господи люди твоя» յերգելով, փողոց դուրս յեկան։ Ազգային հիմն յերգելով և թագավորի ու թագուհու պատկերները ձեռներին՝ համալսարանի ուսանողներն անցան Մախովայա և Տվերսկայա փողոցներով դեպի քաղաքապետի տունը։ Քաղաքապետի տան առաջ ուսանողները նորից «боже царя храни» յերգեցին։ Պատշգամբ դուրս յեկավ Մոսկվայի քաղաքապետ՝ գեներալ-մայոր Ադրիանովը։ Յերբ հիմնի յերգեցողությունը վերջացավ, ուսանողներից մեկը դիմեց քաղաքապետին հետևյալ ճառով. «Ձերդ գերազանցություն, ծանոթանալով բարձրագույն հաստատմամբ բարձր ուսումնական հիմնարկների ուսանողներին բանակի շարքերը կոչելու մասին վորոշման հետ, համալսարանի ուսանողները համերաշխ կերպով, հայրենիքի սիրո վառ զգացումով խնդրում են ձեզ նորին կայսերական մեծության վոտների տակ դնել մեր հավատարմության զգացումները և մեր պատրաստակամությունը բանակի շարքերը մտնելու, նրա հետ միասին թշնամու վրա շարժվելու և մեր կրծքերով ջախջախելու անագորույն թշնամու համառությունը։ Մենք հույս ունենք գերմանացիների հետ կռվի բռնվելու արդեն վոչ թե Վարշավայի, այլ Բեռլինի տակ»։ Մոսկվայի քաղաքապետ գեներալ-մայոր Ադրիանովը պատասխանեց. «Յես այսոր ևեթ կհայտնեմ նորին կայսերական մեծությանը ձեր արտահայտած հավատարմության զգացումների և բանակի շարքերը մտնելու ջերմ ցանկությունների մասին։ Ձեզ հետ միասին ցանկանում եմ, վորպեսզի բանակն ու դուք հերոսների նման Բեռլին մտնեք»։ Ադրիանովի բառերը հիացմունքի բացականչություններով ծածկվեցին՝ «Կեցցե։ Դեպի Բեռլին, դեպի Բեռլին»։

Սա միակ ցույցը չեր։ Ցույցեր եր կատարում համալսարանական ուսանողությունը, հետո ցույցեր կատարեցին Ճանապարհների Հաղորդակցության Ինստիտուտի ուսանողները, հետո ցույցեր կատարեցին Առևտրական Ինստիտուտի՝ ներկայիս Կարլ Մարքսի անվան Ինստիտուտի ուսանողները։ Առանձնապես արտահայտիչ եր ուսանողների հանդիպումը Միխայիլ Սերբիացի ծայրագույն վարդապետի հետ հենց այն Կարմիր հրապարակում, վորն այժմ մեր հանդեսների վայրը դարձավ։ «Ուսանողները հանձինս Միխայիլ ծայրագույն վարդապետի հերոսական Սերբիան եյին վողջունում։ Միխայիլ ծայրագույն վարդապետը շնորհակալություն հայտնեց ուսանողներին ուշադրության և սիրո համար», և, թեպետ և լրագրերը չեն գրում սրա մասին, յերևի որհնեց։ Այսպիսով, Մոսկվան յերիտասարդության ամենազզվելի ցույցերով եր լեցուն, այն յերիտասարդության, վորը համենայն դեպս անկեղծ եր, կարծում եր, վոր ինքը լավ գործ ե անում, բայց ճանապարհից շեղված եր սուտ այն հոսանքով, վոր գալիս եր բուրժուական թերթերից, մինչդեռ այն ժամանակ վոչ մի բանվորական թերթ չկար։

Չափազանց բնորոշ ե, վոր ավագ սերունդը և առհասարակ ինքը բուրժուազիան այս առաջին ամիսներին շատ ավելի զգույշ եր պահում իրեն, քան թե այդ յերիտասարդությունը, և քան թե այն մանր-բուրժուական ինտելիգենցիան, վորն ամեն որ բուրժուական լրագրեր եր կարդում լի պատմություններով ռուսական բանակի հաջողությունների մասին, ռուսական հրետանու առավելությունների մասին գերմանականի նկատմամբ և այլն և այլն։ Ինչպես միշտ ե լինում, մանր-բուրժուական մասսան ավելի շուտ փողոց լցվեց, քան թե հասակավոր, պատկառելի մարդիկ։ Պատկառելի, խոհուն մարդիկ սկզբներում իրենց այնքան զուսպ եյին պահում, վոր,

որինակ, հայտնի գործարանատեր Գուժոնի նկատմամբ կարելի յեր մեղադրանք կարդալ գրեթե դավաճանության մեջ, վորոնք հատկապես պիկանտ են, վորովհետև Գուժոնը միաժամանակ յերկու հայրենիքների հայրենասեր եր՝ ռուս ֆաբրիկանտ և ծագումով ֆրանսիացի, իսկ Ֆրանսիան ու Ռուսաստանը պատերազմին մի բանակում եյին մասնակցում։ Սկզբներում խոշոր բուրժուազիան շատ ավելի զուսպ եր պահում իրեն, և թեպետ և պրոֆեսորները հավատարմության ձոն ուղղեցին Նիկոլային, այնուամենայնիվ նրանք ուղղեցին այն պատերազմի յերկրորդ տարին։ Կնշանակի յերիտասարդությունից մի քիչ յետ մնացին։ Պետք ե ավելացնեմ, վոր կարգին մարդիկ գտնվեցին նաև ուսանողների մեջ, Շանյավսկու անվան համալսարանի ուսանողները, ինչպես և Մոսկվայի համալսարանի ուսանողության փոքրամասնությունը բողոքեցին այդ ցույցի դեմ, ընդ սմին, բողոքներից մեկը՝ գրաքննության համար շատ թույլատրելի ձևով գրված՝ նույնիսկ տպագրվեց «Русские Ведомости»-ի մեջ։ Յես այս բերում եմ, վորպեսզի դուք չկարծեք, թե այն ժամանակվա ուսանողության ամբողջ մասսայի մեջ կարգին մարդ չկար։ Կրկնում եմ, այս յերիտասարդությունը և մանր-բուրժուազիան, վորը լրագիր եր կարդում և փողոցներում հայրենասիրաբար աղմկում եր, խոշոր բուրժուազիայի աջևից գնաց, և խոշոր բուրժուազիան հայրենասիրական ճանապարհին հանդես յեկավ միայն աստիճանաբար, յերբ պարզվեց, թե վոր աստիճանի պատերազմը ոգտակար բան ե, վոր աստիճանի պատերազմը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ հսկայական շուկա, ճիշտ ե կարճատև, իր գոյության տևողականության մեջ չափազանց սահմանափակ շուկա, բայց միևնույն ժամանակ այնքան ձեռնտու, վոր կարճ ժամանակի ընթացքում կարելի յեր մի ամբողջ շարք տարիների համար հարստություն ձեռք բերել։

Յես կբերեմ առաջին իսկ տարվա միքանի ձեռնարկությունների շահույթը։ Տուլայի գործարանների ակցիոներական ընկերության տարեկան միջին շահույթը պատերազմից առաջ 1.860.000 ռ. յեր, պատերազմի առաջին տարին նա ստացավ 8.310.000 ռ. շահույթ. Կոլչուգինի գործարանը պատերազմից առաջ 2.170.000 ռ. շահույթ ուներ, իսկ պատերազմի առաջին տարին ստացավ 4.720.000 ռ. շահույթ. Սորմովի գործարանը նույնպես պատերազմից առաջ 2.170.000 ռ. շահույթ ուներ, իսկ պատերազմի առաջին տարին ստացավ 3.790.000 ռ. շահույթ. Կաբելային գործարանը պատերազմից առաջ 1.400.000 ռ. շահույթ ուներ, իսկ պատերազմի առաջին տարին՝ 3.340.000 ռ.։ Միանգամայն բնական ե, վոր սրա հետ կապված նոր ձեռնարկությունները, նոր ակցիոներական ընկերություններն սկսեցին աճել սունկերի նման։ 1915 թվի ընթացքում հիմնվել ե 136 նոր ակցիոներական ընկերություն 189.000.000 ռուբլի վոսկի դրամագլխով։ 1916 թվի ընթացքում մինչև հոկտեմբերի 1-ը միայն հիմնվել ե 159 նոր ակցիոներական ընկերություն՝ 210 միլ. ռուբլի կապիտալով։ Շատ բնորոշ ե, թե ինչպես եր բաշխվում կապիտալը ձեռնարկությունների առանձին տեսակների միջև։ Ահա 1916 թ. ծագած ակցիոներական ընկերություններին վերաբերող մի աղյուսակ։ Այդ աղյուսակում կան, ինչպես նոր ծագած, նույնպես և հին ընկերությունները, վորոնք ավելացրել են իրենց կապիտալները։ Յեթե վերցնենք տեկստիլ արդյունաբերությունը, մենք այստեղ միայն յերեք նոր ընկերություններ կգտնենք, իրենց կապիտալներն ավելացրած՝

միայն 12։ Այս կապիտալների հարաբերությունը հետևյալն եր. նոր ձեռնարկությունների մեջ մուծված ե յեղել 2,6 միլիոն, իսկ հների մեջ ավելացրած ե յեղել՝ 31 միլիոն. իսկ յեթե վերցնենք մետաղագործական ձեռնարկությունները, մենք կտեսնենք նոր ձեռնարկություններ 17 հատ, հներ՝ իրենց կապիտալներն ավելացրած՝ 21 հատ։ Նորերի մեջ մուծվեց 25,5 միլիոն, իսկ հների մեջ ավելացվեց 38,5 միլ., այսինքն՝ ավելի շատ, քան տեկստիլ ձեռնարկություններում։ Հետո գալիս են մետաղագործության հետ կապված լեռնային ձեռնարկությունները։ Այնտեղ մենք հետևյալ թվերն ունենք. 20 նոր, 23 կապիտալներն ավելացրած. նորերի մեջ մուծված ե 45 միլ., հներին ավելացրած ե 63 միլ. ռ.։ Յեվ վերջապես վառոդ, պայթուցիկ նյութեր և այլն պատրաստող քիմիական գործարանները—նորեր հիմնված են 7 հատ, կապիտալներն ավելացրած հները 10 հատ են. նորերի մեջ մուծված ե 14,4 միլ. ռ. կապիտալ, հներին ավելացրած ե 6 միլ.։ Դուք տեսնում եք, վոր լայն սպառման շուկան ամենից քիչ օգտվեց պատերազմից. նա չեր շահեց, վորովհետև զինվորներին պետք եր վոչ միայն հրացաններ, արկեր, գնդակներ և այլն մատակարարել, այլ պետք եր նրանց նաև հագցնել։ Ինտենդանտությունը նախապատրաստել եր գործվածքների այնպիսի հսկայական պաշարներ, վոր 1918 թ. գարնանը Մոսկվայի Խորհրդում լրջորեն քննվում եր այն հարցը, թե արդյոք գործվածքի այս պաշարները ժողովրդի մեջ չտարածե՞լ, վորովհետև այն ժամանակ մանուֆակտուրային մեծ սով եր, բոլորը պատառոտած, մերկ եյին ման գալիս, իսկ միայն Մոսկվայի ինտենդանտական պահեստներում 10 միլ. արշինից ավելի ամեն տեսակի գործվածքներ եյին թափված,—մի հսկայական քանակություն։ Այդ բոլորը հետո գնաց Կարմիր բանակի մատակարարման գործին, և ըստ յերևույթին, յերկար ժամանակ բավարարեց։ Համենայն դեպս, տեկստիլ ֆաբրիկաներն ամենից քիչ աշխուժացան պատերազմի ազդեցության տակ, բայց դրա փոխարեն մետաղագործությունը, լեռնային գործը, քիմիան չափազանց ծաղկեցին։ Ռուսական արդյունաբերության արտադրողականությունն ընդհանրապես հետևյալ չափերով ավելացավ։ Յես վերցնում եմ 1913 թ., վորպես նորմալ տարի,—1913 թ. ընդհանուր արտադրությունը գնահատվում եր 5.620.000.000 ռ. վոսկով, 1915 թ.՝ յերկու տարուց հետո՝ 6.250.000.000 ռ., իսկ 1916 թ.՝ 6.831.000.000 ռ.։

Հայրենասիրական տրամադրությունը գնահատելու համար չափազանց հետաքրքիր ե, իսկ պատերազմի քաղաքական պատմության համար շատ կարևոր ե ընդգծել, վոր այս բոլոր բարիքները բուրժուազիայի գիրկն եյին թափվում վոչ այնքան պատերազմից, վորքան ռուսական բանակի պարտությունից։ Սա չափազանց հետաքրքիր և պիկանտ մանրամասնություն ե։ Բանը նրանումն ե, վոր պատերազմի առաջին տարիներին մեր մետաղագործությունը վոչ միայն չաշխուժացավ, այլ ընդհառակը՝ կանգ առավ,—դրա մասին ե վկայում, ի միջի այլոց, բանվորների քանակը Պիտերում։ 1914 թվի մարտի 1-ին Պիտերի բոլոր բանվորների թիվը 208.000 եր, իսկ 1914 թվի սեպտեմբերին ընդամենը 197.300 մարդ. բանվորները մեծ քանակությամբ զորակոչի եյին յենթարկվել, և ֆաբրիկանտները դրան այնքան ել արգելք չեյին հանդիսանում, վորովհետև նրանց գործերն ավելի վատացել եյին, Մեր հրետանու տեսչությունը, վորի գլուխ, ինչպես ընդունված ե, Ռոմանովներից մեկն եր կանգնած, միամիտ հավատով եր ապրում, վոր նա սքանչելի

կերպով նախապատրաստված ե պատերազմի համար. պատերազմը, կարծում եյին բոլոր «խելամիտ» մարդիկ, իհարկե, կարճ կլինի, 2—3 ամսվա ընթացքում մենք գերմանացիներին ջարդուփշուր կանենք, իսկ յեթե այդ չանենք ել, բոլոր հայրենասերների համար պարզ եր, վոր 1915 թվի հունվարի 1-ին գերմանացիք կսկսեն սովից մեռնել, վոր 1914 թվի դեկտեմբերի 31-ին նրանք կուտեն հացի վերջին կտորը։ Այսպիսով հրետանու տեսչությունը ճապոնական պատերազմի հետ համեմատած արկերի յեռակի պաշար պատրաստելով՝ կարծում եր, վոր պատերազմի կարիքները միանգամայն ապահովված են։ Յեվ յերբ միամիտ մասնավոր գործարաններն սկսեցին դիմել ռազմական մինիստրությանը՝ առաջարկելով արկերի պատրաստումը, ապա հրետանու տեսչությունը մեծ իշխան Սերգեյ Միխայլովիչի գլխավորությամբ հանդիսավոր կերպով պատասխանում եր. «շրապնելների կարիք չի զգացվում»։ Իսկ յերբ սկսեցին թնդանոթ արձակել, պարզվեց, վոր մեր մեծ-իշխանական հրետանու տեսչության արած հաշիվները չափազանց լավատես են։ Արդեն օգոստոսի վերջին մեր մարտկոցներն սպառեցին յեռակի պաշարը, արդեն 1914 թվի օգոստոսի վերջին այն ժամանակվա շտաբի պետ Յանուշկևիչի և ռազմական մինիստր Սուխոմլինովի նամակագրությունների մեջ ակնարկներ են յերևում այն մասին, վոր արկերի պակաս ե զգացվում։ Մեր հրետանին ստիպված եր կրակը պակասեցնել և դա չափազանց կազմալուծող ազդեցություն եր թողնում բանակի վրա։ Յերբ դուք կարդում եք գրությունները, ձեր առաջ ինչպես ձյունի գունդ սկսում են աճել զանգատներն արկերի պակասության մասին, վորոնք ձմռան սկզբին իսկական վայնասունի յեն հասնում և վորոնք ստիպում են Սուխոմլինովին դուրս գալու իր կոմֆորտաբել կաբինետից և շրջելու գործարանները՝ ստիպելով գործարանատերերին արկեր պատրաստել։

Այս հանգամանքը, արկային և վառոդի այս ճգնաժամը, վորն սկսեց ապրել ռուսական բանակը, սկսած 1914—1915 թ. թ. ձմռանից և վորը մեր ջախջախման հիմնական պատճառն եր 1915 թվի ամռանը, յերբ 3.000 գերմանական թնդանոթազարկերին, մենք կարող եյինք միայն հայհոյելով պատասխանել, այս հանգամանքը նպաստեց մեր արդյունաբերության վոչ միայն տնտեսական ծաղկմանը, այլև նրա քաղաքական կշռին։ Յերկար ժամանակ ռազմական տեսչությունը թաքցնում եր իր գաղտնիքն արկերի պակասության մասին։ Միլյուկովը գրում ե, վոր իբր թե արկային այս ճգնաժամի մասին նա առաջին անգամ լսեց 1915 թվի հունվարին։ Ավելի ճիշտ, սա պարզապես սուտ ե, վորովհետև Յանուշկևիչն ու Սուխոմլինովն այս մասին նամակագրություն ունեյին դեռ ևս 1914 թվի օգոստոսի վերջերին։ Համենայն դեպս Փարիզում այս մասին գիտեյին,—ի միջի այլոց պատահական պատճառներով գիտեյինք և մենք՝ ռուս եմիգրանտներս,—1914 թվի նոյեմբերից վոչ ուշ, յերբ այնտեղ յեկավ ռուսական ռազմական պատգամավորությունը՝ բերելով խուճապային լուրեր ռուսական ֆրոնտի մասին։ Յեվ ֆրանսիացի հատուկ ճարտարապետներ գնացին Ռուսաստան, վորպեսզի ռազմական զինագործարանները կարգի գցեն, զարգացնեն ռուսական քիմիական արդյունաբերությունն անհրաժեշտ չափերով և այլն։ Մենք այդ մասին իմացանք, կրկնում եմ, նոյեմբեր ամսին։ Յերբ սկսվեց Մակենզենի առաջխաղացումը, 1915 թվի մայիսին, յերբ Մակենզենն առաջ շարժեց իր նշանավոր հրետանու ֆալանգը՝ 3.000 թնդանոթից բաղկացած, այստեղ ար-

դեն անհնար եր թաքցնել, այստեղ ստիպված յեղան խոստովանվել ամբողջ աշխարհի առաջ, վոր 3 000 գերմանական արկերին մենք հազիվ հարյուրով ենք պատասխանում։ Նման պայմաններում չեր կարելի վոչ միայն հարձակվել, այլև պաշտպանվել։ Սկսվեց ռուսական բանակի նահանջը Գալիցիայից, միլիոնավոր գերիներ տալով, բերդերի կորուստներով և այլն։ Կատարյալ ավերում տեղի ունեցավ,—և վորևե Մուկդեն ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ չնչին բան եր համեմատած նրա հետ, ինչ ռուսական ճակատում եր կատարվում 1915 թվի ամռանը։ Դա չեր կարելի թաքցնել։ 1915 թվի ամռանը Պիտերում Հատուկ խորհրդակցություն ե կազմվում պետական պաշտպանության մասին՝ ֆաբրիկանտների, արդյունաբերողների, Պետական Դումայի անդամների և այլոց մասնակցությամբ։ Այստեղ նստած եյին, իհարկե, նաև կառավարությունից նշանակված չինովնիկներ, բայց մեծ մասամբ նրանք նստած եյին վորպես եքսպերտներ, վորպես տեղյակ մարդիկ։ 1915 թվի կեսերից սկսած՝ ռուսական բուրժուազիան, արդյունաբերական բուրժուազիան, վորը ջախջախվել եր 1907 թվին՝ շնորհիվ մասսայական շարժման պարտության, նորից ռեվանշ ե վերցնում։ Նա փաստորեն դրության տեր ե դառնում, թիկունքի տեր, բանակի մատակարարման տեր, իսկ բանակի մատակարարումն այդ շրջանում, ինչպես կռահում եք, ամեն ինչ եր, ամեն ինչ նրանով եր կայուն։

Ռոձյանկոն հայտնում ե իր հիշողություններում, վոր յերբ թե Հատուկ խորհրդակցության կազմակերպումից հետո ֆրոնտում արկերն իրար վրա թափված եյին, ընդ սմին նրանց վրա բանվորների իսկ ձեռքով փորագրված եր՝ «արկեր չխնայել»։ Արդյոք այդպե՞ս ե յեղել, թե՞ վոչ, դա հայտնի չե։ Այստեղ պատվերներ եյին արվում նաև արտասահմանում, և արտասահմանից մեծ քանակությամբ արկեր եյին ստացվում, արտասահմանյան և ռուսական արդյունաբերության միջև աշխատանքի վորոշ բաժանում կար,—արտասահմանն սպասարկում եր առաջխաղացումը, վորը պահանջում եր արկերի հսկայական մատակարարում, իսկ ընթացիկ պահանջները, հսկայական ֆրոնտը Ռիգայից մինչև Բաքու պաշտպանելու պահանջները ռուսական արդյունաբերությունն եր սպասարկում,—թե ինչպես եր նա սպասարկում, այդ մասին թվեր արդեն բերեցի ձեզ։ Այսպիսով դեռևս 1915 թվի ամռանը բուրժուազիան դարձավ ռազմական եկոնոմիկայի տեր և փաստական ղեկավար։ Ահա թե ինչու քաղաքական տեսակետից քիչ նշանակություն ունի այն փաստը, վոր նույն 1915 թվի ամռան վերջին Նիկոլայ II հեռացրեց գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլայեվիչին, վորպես պարտության հանցավորի,—թեպետ, ճիշտն ասած, նա ավելի հանցավոր չեր, քան յուրաքանչյուր ուրիշ մեծ իշխան, և փաստորեն Ռուսաստանում սահմանեց Ռասպուտինի ինքնակալությունը. վորովհետև Նիկոլայ II անկամ խաղալիք եր իր կնոջ ձեռքում, իսկ սա մի նամակում պարզապես գրում եր, վոր նրան «ներշնչում ե» Ռասպուտինը։ Նա այդ, իհարկե, միստիկորեն եր բացատրում, սակայն փաստն այն եր, վոր նրան Ռասպուտինն եր ներշնչում, իսկ նա յել Նիկոլային եր ներշնչում։ Չնայած սրան, ըստ եության պատերազմի նյարդը բուրժուազիան իր ձեռքում եր պահում, այդ պատճառով ել նա այդպես յերկար հաշտվում եր ռասպուտինյան տիրապետության հետ։ Մի տարուց հետո միայն նա այլևս անկարող եր համբերել և մի շարժում սկսվեց, վորի մասին ձեզ կխոսեմ փետրվարյան հեղափոխությանը նվիրված հաջորդ դասախոսության ժամանակ։

Բուրժուազիան, ինչպես հիշում եք, 1905 թվականի հեղափոխության ժամանակ փորձում եր մասսաների վրա հենվել։ Չափազանց բնորոշ ե, վոր նույն կոմբինացիան կրկնվում ե նաև 1915 թվին։ Բուրժուազիան փորձում ե նորից մասսաների վրա հենվել և այստեղ անհրաժեշտ ե թեկուզ յերկու խոսքով ասել այն մասին, թե ինչ եր ներկայացնում իրենից պատերազմին անմիջականորեն նախորդող տարիներում մասսայական շարժումը։

Յես մանրամասն չեմ շարադրի այդ շրջանի բանվորական շարժման պատմությունը, վորովհետև այդ մասին դուք լսել եք, կամ կլսեք կուսակցության պատմության դասախոսությունների ժամանակ։ Այստեղ ձեզ կհիշեցնեմ միայն, վոր բանվորական շարժումը 1911 թվից սկսած և մանավանդ 1912 թվի ապրիլից (Լենայի դեպքերից) հսկայական չափով աճեց։ 1910 թվին մենք 222 գործադուլ ունեյինք և 46.000 գործադուլավոր, 1911 թվին մենք ունեյինք 422 գործադուլ և 256.000 գործադուլավոր, 1912 թվին՝ 2.132 գործադուլ և 750.000 գործադուլավոր, 1913 թվին՝ 2142 գործադուլ և 861.000 գործադուլավոր։ 4 տարվա ընթացքում գործադուլավոր բանվորների քանակը 20 անգամ ավելացավ։ Ահա թե ինչպես եր աճում բանվորական շարժումը։ 1914 թվի ամռանն այդ շարժումը չափազանց բարձր մակարդակի հասավ։ 1914 թվի մայիսի 1-ին գործադուլ եյին հայտարարել մեկ միլիոնից ավելի բանվորներ։ Սա չտեսնված յերևույթ եր 1905 թվից հետո։ Յեվ ակամայից մենք, եմիգրանտներս, 1905 թիվն եյինք հիշում, յերբ մենք սկսեցինք կարդալ բուրժուական լրագրներում շատ մեղմացրած, իհարկե, տեղեկություններ Պիտերի, Մոսկվայի և այլ վայրերի դեպքերի մասին։ Մանավանդ Պիտերում, ուր շարժումը 1914 թվի ամռանն իր ձևերով 1905 թ. եր հիշեցնում, զգացվում եր իսկական բռնկում տեմպերամենտով, տեմպով և այլն։ 1914 թվին մեզանից ամենից շատ հոռետեսորեն տրամադրվածները հասկացան, վոր յերկրորդ հեղափոխությունը հեռու չե, ինչպես թվում եր մեզ առաջին հեղափոխությունից հետո ռեակցիայի տարիներին։

Իհարկե, տեսնում եյին այս բարիկադների վոչ միայն այս կողմում, այլ և այն կողմում։ Ահա թե ինչու ռուսական բուրժուազիան, իր ձեռքը վերցնելով պատերազմի եկոնոմիկան, անմիջապես մտահոգվեց նրանով, վորպեսզի իր կողմը գրավի բանվորական մասսային։ Նրա կողմից ստեղծված ռազմա-արդյունաբերական կոմիտեներում բուրժուազիայի նախաձեռնությունով բանվորների ներկայացուցիչներ մտցվեցին, ընդ սմին մեր կուսակցությունն ստիպված յեղավ այդ կոմիտեների մեջ բանվորների մտնելու դեմ պայքարել։ Մենք ապացուցում եյինք, վոր իմպերիալիստական պատերազմին մասնակցելը պրոլետարիատի համար միանգամայն անթույլատրելի բան ե։ Սակայն պրոլետարիատի առաջավոր մասի՝ Պիտերի պրոլետարիատի մեջ միայն հաջողվեց մեզ այդ ռազմա-արդյունաբերական կոմիտեյի մեջ մտցնելու առաջն առնել, այն ել վոչ վերջնականապես։ Այնտեղ հենց սկզբից հակա-պատերազմական ագիտացիա եր տարվում, և Վիբորգի շրջանը, դեռ Պետական Դումայի հրավիրումից առաջ, պատերազմը հայտարարելուց անմիջապես հետո հանդես յեկավ կոչով ընդդեմ պատերազմի,—իսկ հետո նրան հետևեց նաև Պիտերի կուսակցության կոմիտեն։ Չնայած այս ագիտացիային, միայն Պիտերում, այն ել փոքր մեծամասնությամբ՝ 91 ընդդեմ 80-ի հաջողվեց անցկացնել, վոր բանվորները հրաժարվեն ռազմա-արդյունաբե-

րական կոմիտեների մեջ մտնելուց: Մոսկվայի պրոլետարիատին չհաջողվեց այսպես ագիտացիայի յենթարկել, և նա մտավ ռազմա-արդյունաբերական կոմիտեների մեջ: Այսպիսով, բուրժուազիան՝ հակառակ բանվորական կուսակցության տրամադրությունների, կարելի յե ասել, նրա դիակի վրայով,— վորովհետև բանվորական կուսակցությունն այդ ժամանակ, հանձինս Դումայի իր ֆրակցիայի ձերբակալված եր և պետք ե գնդակահարության պատրաստվեր,—իրագործեց այն զոդումը բանվորների հետ, վորի մասին նա յերազում եր 1905 թվին: Ինքնակալության և բանվոր դասակարգի նկատմամբ բուրժուազիան կարծես թե իր ռեվանշն եր տանում 1905 թվից հետո: Հիմա յես ձեզ կպատմեմ, թե վորքան քիչ տեվողական եր այդ ռեվանշը:

Բուրժուազիայի հաշիվն այս անգամ ել սխալ դուրս յեկավ: Վորպեսզի հասկանանք, թե ինչու այդ պատահեց, պետք ե վերցնենք պատերազմի եկոնոմիկան մյուս կողմից: Մենք քիչ առաջ տեսանք պատերազմը, վորպես ռուսական արդյունաբերության վրա թափվող պտղաբեր մանանա: Սակայն սա նման եր այն գրգռիչ միջոցներին, վորոնք բարձրացնում են որգանիզմի կենսագործությունը կարճ ժամանակով, իսկ միևնույն ժամանակ հիմքում այդ որգանիզմը քայքայում և կործանում են: Այս խնդրին հենց մենք պետք ե անցնենք: Առաջինը, ինչ չեյին նախատեսել պատերազմի կազմակերպիչներն ընդհանրապես,—բացառությամբ անգլիացիների,— քիչ հեռատես մարդկանց կողմից, դա պատերազմի ազդեցությունն ե տրանսպորտի վրա: Սրա վրա մենք պետք ե հատուկ ուշադրություն դարձնենք, վորովհետև սրա մեջ, կարճ ասած, բոլոր գործերի արմատն ե, մանավանդ մեզ մոտ՝ Ռուսաստանում, ուր շնորհիվ մեր յերկրի ընդարձակ տարածության և համեմատաբար նոսր յերկաթուղացանցի, տրանսպորտը հատկապես կարևոր դեր ե խաղում, վորովհետև շնորհիվ հսկայական տարածությունների և մեր յերկաթուղագծի նոսրության, մեզանում շարժական կազմի ծանրաբեռնվածությունն ավելի մեծ ե, քան ուրիշ յերկրներում:

Յեվ ահա, յեթե վերցնենք պատերազմի ազդեցությունը և ռազմական եկոնոմիկան այս տեսակետից, հետևյալ պատկերը կստանանք. պատերազմն ստիպեց տրանսպորտի աշխատանքն ավելացնել հսկայական չափերով, վորքանով վոր յուրաքանչյուր խոշոր ռազմական գործողություն պահանջում ե զորքերի փոխադրություն: Ըստ եյության այդ ժամանակ վոչ միայն ռուսական ֆրոնտում, այլև ուրիշ ֆրոնտներում ամբողջ պատերազմը յերկաթուղային խաղ եր, վորով գերմանացիք, որինակ, ոգտվում եյին վիրտուոզների նման: Շնորհիվ յերկաթուղացանցի, վորը գերմանացիների մոտ ավելի յե զարգացած, քան թե մեզ մոտ, զինվորական կորպուսները պետք յեղած րոպեյին սնկի նման բուսնում եյին հակառակորդի առաջ: Յերեք որվա ընթացքում հարյուրավոր վերստերով փոխադրություններ եյին կատարվում: Յերկաթուղիներն արդի ստրատեգիայի անհրաժեշտ մասն են կազմում, սակայն սա պահանջում ե շարժիչ կազմի (վագոնների և այլն), վառելիքի և այլն հսկայական ծախսեր, այսինքն՝ յերկաթուղիներից շատ ավելի շատ աշխատանք եր պահանջում, քան թե խաղաղ ժամանակ: Յեթե մենք վերցնենք յերկաթուղային վագոնների շարժումը միլիարդ վագոն-վերստերով, հետևյալ թվերը կստանանք. 1913 թվի համար 1,9, 1914 թ. համար, վորի յերկրորդ կեսն ե միայն պատերազմական տարի—2,2, 1915 թվի համար՝

2,5 և 1916 թվի համար՝ 3 միլիարդից ավելի: Այսպիսով հավելումն ավելի քան $1^1/_2$ անգամ ե: Ահա ձեզ պատերազմի առաջին ազդեցությունը տրանսպորտի վրա: Տրանսպորտն ստիպված եր ավելի ինտենսիվ աշխատել: Համապատասխան ձևով մեծացավ իհարկե նաև վագոնների բեռնավորումը: 1913 թվին որական 58 հազար վագոն եր բեռնավորվում, 1914 թվին՝ $43^1/_2$ հազ. վագոն, 1915 թվին՝ 71 հազար վագոն և 1916 թվին՝ $91^1/_2$ հազար վագոն: Նույն համեմատությամբ մեծացավ իհարկե նաև վագոնների որական միջին շարժումը: 1913 թվին՝ 368 հազար վագոն-վերստ, 1914 թվին՝ 421 հազար վագ.-վերստ, 1915 թվին՝ 630 հազար վագ.-վերստ և 1916 թվին՝ մինչև 800 հազար վագ.-վերստ: Այսպիսով տրանսպորտն ավելի աշխույժ աշխատեց: Միանգամայն բնական ե սպասել, վոր նույն չափերով աճեց նաև տրանսպորտը և սպասարկող արդյունաբերությունը: Բայց այստեղ դուք բոլորովին այլ պատկեր եք տեսնում: Ինչպես ել վոր չլինի, պատերազմի ժամանակ ամենակարևորն արկերն են: Մեր բոլոր մեքենայագործարանները, վոր մինչ այժմ զգալի չափով տրանսպորտն եյին սպասարկում, ոգտագործվում եյին արկեր պատրաստելու համար: Յեվ ահա թե ինչ հետևանք ստացվեց: Սորմովսկու գործարանը շոգեշարժներ եր բաց թողնում—1913 թվին 117, 1914 թ.՝ 107, 1915 թ.՝ 110, միքիչ ավելի, 1916 թվին՝ 64, իսկ 1917 թվին՝ 55[1]: Տրանսպորտն սպասարկող, վագոնները նորոգող, շոգեշարժներ կառուցող ու նորոգող և այլն արդյունաբերությունը կրճատվեց, մինչդեռ այս տրանսպորտի աշխատանքն ավելի ու ավելի ուժեղանում եր: Բացի այդ, մեքենաշինարարական արդյունաբերությունը պետք ե ռազմականին հանձներ 300 միլիոն ռուբլու իր սարքավորումը,—մեքենաների, դազգյահների և այլն հսկայական քանակ, վորոնք առաջ մեքենաշինարարությունն եյին սպասարկում և, գլխավորապես, տրանսպորտը, հիմա սպասարկում եյին արկերի, հրետանու և այլն պատրաստությունը: Միանգամայն բնական ե, վոր այդ պետք ե անդրադառնար ծանր կերպով նորմալ յերկաթուղային յերթևեկության վրա:

1913 թվին ամսական միջին փոխադրությունը 100 ընդունելով, 1914 թվի հուլիսին փոխադրված ե հացի բեռների 72% 1913 թվի հուլիսի հետ համեմատած, ոգոստոսին՝ միայն 35%, սեպտեմբերին՝ 47%, հոկտեմբերին՝ 58%, նոյեմբերին՝ 53%: Վոչ մի անգամ հացի բեռների փոխադրությունը չի հասել մեզ մոտ խաղաղ ժամանակի նորմաներին՝ միշտ 60% ցածր պահպանվելով: Ահա շոշափելի որինակ տրանսպորտի քայքայման ազդեցության՝ բնակչության անմիջական հայթայթման վրա: Սրա հետևանքով, ինչպես կռահում եք, գները պետք ե աճեյին, և աճում եյին կատաստրոֆիկ արագությամբ: Յեթե վերցնենք Մոսկվայի շուկան և մսի գները, հետևյալ աղյուսակը կստանանք (ձեզ չդժվարացնելու համար յես բացարձակ թվեր չեմ վերցնի, այլ կբերեմ միայն տոկոսները). 1915 թվի հունվարի 27-ի թվերը 100 ընդունելով, մենք կստանանք փետրվարի 3-ի համար 119, իսկ փետրվարի 5-ի համար՝ 144: Դեռ մեկ ամիս ել չլրացած՝ գինը բարձրացավ մեկ և կես անգամ: Ահա թե ինչպես եր անդրադառնում պատերազմը կենսամթերքների գների վրա: Ձվի գինը 1914 թ. ապրիլից մինչև 1915 թվի

[1] Հիվանդ շոգեշարժների տոկոսը 1913 թվին 9-ից ավելի չեր, իսկ 1916 թվին՝ հասավ 13-ի, 1917 թվին՝ 23,4-ի:

ապրիլը $61\frac{1}{2}\%$ բարձրացավ։ Շաքարի գինը.—1914 թ. սեպտեմբերին—5ռ. 05 կոպ. փութը, 1914 թ. նոյեմբերին—5ռ. 40 կոպ., 1915 թվի մայիսին—6 ռ. 40 կոպ.։ Շաքարի գինն ամսեամիս աճում ե։ Այստեղ յես բերում եմ բոլոր մեծաքանակ վաճառքի գները, իսկ հատավաճառի ասպարեզում բարձրացումն ավելի մեծ եր։ Գների նման թռիչքների պայմաններում, բոլոր մանրավաճառները միշտ պահովում են իրենց և ավելի չեն առնում, քան նրանք կարող եյին առնել՝ սպասելով, վոր գներն ավելի ևս կբարձրանան, և նրանք ստիպված կլինեն նույն ապրանքն ավելի թանգ գնով առնել։ Հացի գները՝ սննդի ամենահիմնական մթերքի գները՝ հետևյալներն եյին. 1914 թ. հուլիսին հաճարի ալյուրն արժեր 1 ռ. 15 կոպ., ոգոստոսին՝ 1 ռ. 22 կոպ., սեպտեմբերին՝ 1 ռ. 18 կոպ., նոյեմբերին՝ 1 ռ. 15 կոպ. (բերքն ազդեց), իսկ արդեն 1915 թ. հուլիսին՝ 1 ռ. 43 կոպ., ոգոստոսին՝ 1 ռ. 48 կոպ., սեպտեմբերին՝ 1 ռ. 64 կոպ.։ Դուք տեսնում եք, վոր 1915 թվին նույնիսկ բերքը չոգնեց, և բերքի ամիսներին՝ սեպտեմբերին գինն այնուամենայնիվ բարձրացավ։ Մինչև այդ աստիճան տրանսպորտի քայքայվածությունն ու հացի փոխադրումների կրճատումն արտահայտվեց քաղաքների մատակարարման վրա։

Սրա պատճառով նախ և առաջ պակասեց ալյուրի մատակարարումը քաղաքներին և 1916 թվի նոյեմբերին մենք ունենք Լենինգրադի համար նորմալ մատակարարման 11%-ը միայն, 1916 դեկտեմբերին՝ 47% և միայն 1917 թ. հունվարին արհեստական միջոցներով հաջողվեց այդ թիվը մինչև 57% բարձրացնել։ Վորովհետև պետք ե արդարացի լինել նույնիսկ ամենամեծ սրիկաների նկատմամբ, չեմ կարող վորպես Ռասպուտինի գործնականության և խորամանկության օրինակ չբերել այն, վոր նա այդ նախատեսնում եր և յուրատեսակ աշխատում եր այս մասին նախազգուշացնել իր թագակիր հովանավորողներին։ Ալեքսանդրա Ֆեոդորովնայի նամակներից մեկում Նիկոլայ II-ին՝ մեզ գտնում ենք մի պատմություն այն մասին, թե ինչպես Ռասպուտինն ամբողջ գիշերը տեսիլք եր տեսնում, նրա աչքին յերևում եյին կայարաններ, գնացքներ, գործադուլներ, և սրա հետևանքով լույս տեսավ հրովարտակն այսպես կոչված «պարենավորման շաբաթների» մասին, այն մասին, վոր ամբողջ շաբաթվա ընթացքում վորոշ գծերով միայն կենսամթերքներ պետք ե տեղափոխել։ Այս 1915 թվին եր։ Արդեն 1915 թվին Ռասպուտինը նախատեսնում եր այն թույլ կողմը, վորը խորտակեց Ռոմանովների տոհմը 1917 թվի փետրվարին։ Միանգամայն բնական ե, վոր այս բոլոր փաստերը պետք ե վորոշակի կերպով ազդեյին նաև բանվորական մասսաների տրամադրության վրա։ Դուք հիշում եք, թե ինչ տոնով եյին խոսում ուսանողները քաղաքապետ Ադրիանովի հետ պատերազմի առաջին «գարնանային» ամիսներին, թեպետ պատերազմի այդ գարունը սեպտեմբեր ամսին եր։ Բայց ահա թե մի տարի անց, նույնիսկ պակաս՝ 1915 թվի ապրիլին ինչպես եյին խոսում այդ քաղաքապետի օգնականի հետ բանվորները. «Պրեոբրաժենսկու շուկայում կանանց բարձրացրած աղմուկի վրա ամբոխ հավաքվեց։ Բարձր տրամադրությունն անմիջապես հաղորդվեց վոստիկանությանը, և յերբ պ. Մոդլը սկսեց խիստ ձևով խոսել ամբոխի հետ, մի կին քարով խփեց նրան և անմիջապես ամբոխը դուրս հանեց նրան ավտոմոբիլից, ծեծում եր և դեպի գետը քարշ տալիս, ընդ սմին պ. Մոդլը խնդրում եր. «Ինչ եմ արել յես ձեզ, յեղբայրներ ներեցեք»... և այլն։ Զին-

վորներ կանչեցին, բայց կանայք ընդհուպ մոտեցան զինվորներին և սկսեցին աղաղակել. «Միթե դուք կանայք չունեք,—նրանց վիճակը նույնքան վատ ե, վորքան և մերը։ Արձակեցեք մեզ վրա, ձերոնց ել կգնդակահարեք»։ Նույնպիսի տեսարաններ են յեղել նաև Պրեսնայում, Գրուզինայում, Սիվցով-Վրաժկում, ուր ջարդեցին Զինկինի խանութի բոլոր ապակիներն այն պատճառով, վոր նա վոմանց մերժեց կաթ բաց թողնել, իսկ մյուսներին բաց եր թողնում։

Արդեն 1915 թվի գարնանը՝ պատերազմի այս հակառակ եկոնոմիկայի ազդեցության տակ՝ միանգամայն վորոշ տրամադրություն եր ստեղծվում։ Վորքանով վոր այս մասսան՝ թեպետ այն ժամանակ դեռ ամենախուլ ընդհատակյայից արդեն կազմակերպվում եր մեր՝ բոլշևիկներիս կողմից, այնքանով դա արտահայտվում եր նաև վորոշ կազմակերպված գործողություններում և ընդ սմին կառավարության համար չափազանց վտանգավոր ձևով։ Թե վոր աստիճանի խուլ ընդհատակյա չեր այն ժամանակ, յես միշտ մի փաստով եմ լուսաբանում,—թե ինչպես մեր կուսակցության Պիտերի կոմիտեն բառացի կերպով ճահիճում եր հավաքվում. Պիտերի մոտ շատ ճահիճներ կան, և դա միակ տեղն եր՝ անվտանգ լրտեսներից, կազակների հարձակումներից և այլն։ 1915 թվի վերջին արդեն մենք կարող եյինք պարծենալ խոշոր հաջողություններով անմիջապես ֆրոնտում։ Դա զրահանավ «Գանգուտ»-ի վրա պատահած նշանավոր դեպքն ե, ուր հայտնաբերվեց նավաստիների իսկական ապստամբություն։ Սրա հետևանքով յերկու ծովայիններ գնդակահարվեցին, մյուսները դատի հանձնվեցին և հետո թելիկներով—հետքերով խուզարկուները հասան մինչև համապատասխան հեղափոխական կազմակերպությունը։ Նա ձերբակալվեց 1915 թվի դեկտեմբերին, իսկ 1916 թվի աշնանը նրան դատում եյին։ Բնորոշ ե, վոր այդ ժամանակներին մասսաների տրամադրությունն այնքան բարձրացավ, վոր վոչ մեկին չհամարձակվեցին գնդակահարել, չնայած նրան, վոր ապստամբությունը նավատորմիղում, ապստամբության նախապատրաստումը պատերազմական ժամանակ, ռազմական տեսակետից, ամենածանր հանցագործությունն ե, և պետք եր մասսայական գնդակահարության սպասել, բայց վոչվոքին չհամարձակվեցին գնդակահարել, վորովհետև միայն այս ծովային կազմակերպության վրա կատարվող դատն առաջացրեց Պիտերում 130.000 բանվորների գործադուլ։ Գնդակահարության դեպքում պետք եր սպասել իսկական պայթյուն՝ Մոսկվայի հոկտեմբերյան գործադուլի նման, և կառավարությունը նահանջեց։ Հեռատեսությամբ տարածեցին բուրժուական մամուլի միջոցով, վոր դատում են 102 հոդվածով, ուր մահվան պատժի մասին խոսք չի կարող լինել։ Սոկոլով փաստաբանը, վոր նավաստիներին եր պաշտպանում, պատմում եր վոր 102 հոդվածից նահանջեցին 101-ին, վորով գնդակահարություն եր նախատեսնվում, հենց մասսաների մեջ հեղափոխական շարժման աճման պատճառով։ Այսպիսով, 1915 թվի ընթացքում արդեն, նրա վերջերին, բանվոր դասակարգի մեջ վորոշ հեղափոխական տրամադրություն հայտնաբերվեց, վորն արտահայտվում եր և՛ կազմակերպված ձևով՝ հանձինս նավաստիների շարժման, և՛ անկազմակերպ ձևով՝ հանձինս այն խառնակչությունների, վորոնց մասին յես ձեզ պատմեցի։

Պատերազմի այս հակառակ եկոնոմիկան բնականաբար բուրժուազիայի այն քաղաքականության դեմ եր գնում, վորը նրան կարծես թե հաջողվեց

ռազմա-արդյունաբերական կոմիտեների հետ։ 1916 թվի աշնանը լարվածությունն այնպիսի չափերի հասավ, վոր նույնիսկ պաշտպանողական մամուլը, այսինքն՝ սոցիալ-դեմոկրատական պաշտպանողական մամուլն սկսեց խոսել այսպես թե այնպես պատերազմը վերջացնելու անհրաժեշտության մասին՝ նախապես տապալելով ինքնակալությունը։ 1917 թ. հունվարին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների բաց թողած թռուցիկները կոչ եյին անում, վորպեսզի ժողովուրդն ինքը վերջացնի պատերազմը, վորովհետև ինքնակալությունը, յերևի, չի կարողանա ինքը վերջացնել այն։ Նույնիսկ պաշտպանողականների այս տրամադրությունը շատ բնորոշ ե, և այն անհրաժեշտ ե ընդգծել։ Չհամարձակվելով ուղղակի կերպով ապստամբվել պատերազմի դեմ, նրանք սկսեցին աստիճանաբար անցնել հեղափոխական պաշտպանողականության ուղին։

Այստեղ չափազանց բնորոշ են բանվորների տրամադրությունների մասին այն տեղեկությունները, վոր մենք ունենք Ռազմա-Արդյունաբերական Կոմիտեյի Բանվորական Խմբի բյուլլետեններում դեռևս 1916 թվի աշնանից. «Հոկտեմբերի սկզբից ամբողջ Պետերբուրգում լայն տարածում ստացան զանազան լուրեր Մոսկվայում, Խարկովում և ելի միքանի պրովինցիալ քաղաքներում տեղի ունեցող արտասովոր ինչ վոր դեպքերի մասին։ Միքանի քաղաքներից մասնավոր նամակներում հարցնում եյին. «Ի՞նչ ե կատարվում ձեզ մոտ Պետրոգրադում», այն ժամանակ Պետրոգրադում գեռ ևս վոչինչ չեր կատարվում։ Իսկ Պետրոգրադում ամեն կողմից Բանվորական Խումբը պաշարում են հուզումնալի հարցերով. «Ինչ ե լսվում Մոսկվայի մասին»։ Այն համառությունը, վորով «Մոսկվայի դեպքերի» լուրը բերնե բերան եր հաղորդվում, ընդգրկեց Պետրոգրադի բոլոր շրջանները, ստիպում եր Բանվորական Խմբին միքանի անգամ տեղեկանալու իրենց Մոսկվայի ընկերներից։ Յեվ ամեն անգամ պարզվում են, վոր այդ լուրերն իրականության չեն համապատասխանում»։ Մի շարք գործարաններից Բանվորական Խումբը տեղեկություններ եր ստանում բանվորների ծայր աստիճան բարձր, գրգռված տրամադրության մասին։ Այս տրամադրությունն այնպիսի լարվածության հասավ, վոր ըստ Բանվորական Խմբի թղթակիցների հաղորդագրության, բավական եր ամենաչնչին աղմուկը, թիթեղի վայր ընկնելը, վորպեսզի բանվորները կանգնեցնեն մեքենաները և դեպի յելքն շտապեն։ Միևնույն ժամանակ քաղաքում սկսեցին պտտվել ամենահրեշավոր լուրեր։ Ամենալուրջ դրություն եր ստեղծվում։ Նախահեղափոխական տրամադրությունը վորոշակի կերպով զգացվում եր, ինչպես նա զգացվում եր նաև 1905 թվին՝ մասսայական շարժման սկսվելուց առաջ, ինչպես նա զգացվում եր նաև Ֆրանսիական մեծ հեղափոխությունից առաջ՝ հանձինս, այսպես կոչված, «մեծ վախի», յերբ ամբողջ Ֆրանսիայում լուրեր եյին շրջում ավազակների մասին, վորոնք գալիս են, ազգաբնակչությունը հուզվում եր, այնինչ այդ լուրերն արդարացնող վոչ մի ռեալ փաստ չկար։ Ինչ շատ կարևոր ե,—այդ տրամադրությունը վոչ միայն բանվորների մեջ եր, այլ վորոշակի կերպով հաղորդվեց նաև զորքին։ «1916 թվի աշնանը Պետերբուրգում Լեսների գործարանի գործադուլի ժամանակ բանվորները գնացին մյուս գործարանները ևս կանգնեցնելու։ Յերևաց վոստիկանությունը, սկսեց ցրել։ Մանավանդ խոշոր, բազմամարդ բանվորական խմբեր կազմվեցին «Նոր Լեսներ» գործարանի առաջ։ Այս գործարանի կողքին եյին

գտնվում 181 պահեստի հետևակ գնդի զորանոցները։ Զինվորների և բանվորների հարաբերությունները չափազանց բարեկամական եյին։ Խռնված բանվորների մեջ զինվորներ կային։ Ասում եյին այն ժամանակ, վոր նրանց մեջ եր նաև ինչ վոր վիրավորված մի զինվոր և մեկն ել «գեորգիյեվսկի» շքանշանով։ Յերբ վոստիկանությունն սկսեց իր դաժանությունները և թրերով ու մտրակներով հարձակվեց ամբոխի վրա, հարևան զորանոցի զինվորներն ել չհամբերեցին, քանդեցին ցանկապատը և բանվորների հետ միասին ծեծեցին և ցրեցին վոստիկանությունը։ Իշխանությունը կազակներին կանչեց զինվորներին և բանվորներին ձերբակալելու համար։ Բայց կազակները չհամարձակվեցին գործել, նրանց ել հեռացրին։ Զինվորների քայլն իրարանցում առաջացրեց զինվորական իշխանությունների շրջաններում։ Զորանոցներն եյին գալիս իշխանության ամեն տեսակի ներկայացուցիչներ. սակայն 181 գնդի «խռովարարներին» կարողացան ձերբակալել միայն գիշերը, ստուգումից հետո։ Ձերբակալեցին 130 մարդ, և նրանց սպառնում եյին ռազմական դատարանին հանձնել»։

Ինձ թվում ե, այսպես ասած, այս տրամադրությունների նյութական բազան հայտնաբերել և տալ բանվոր դասակարգի դրության օբյեկտիվ բնութագրությունը Պիտերում այդ ամիսներում։ Դուք հիշում եք, յերբ յես բացատրում եյի ձեզ ընկ. Կ. Սիդորովի աղյուսակները, յես մատնանշեցի, վոր մեզանում բանվորական մասսայի մեջ ամենահեղափոխական ելեմենտներն եյին մի կողմից մետաղագործները, մյուս կողմից՝ ամենախոշոր ձեռնարկությունների բանվորները։ Նախ և առաջ բանվորների ընդհանուր մասսայի աճումը Պիտերում. 1914 թ. սեպտեմբեր—197.300, 1915 թ. սեպտեմբեր—248.000, 1916 թ. սեպտեմբեր—297.000, 1916 թ. հոկտեմբեր—305.000 և 1917 թ. հունվարին—մոտ 400.000, այսինքն՝ յերկու անգամ և ել ավելի 1914 թվի սեպտեմբերի համեմատ։ Ինչպե՞ս եյին բաշխված այս բանվորները։ Իհարկե, իրենց մասսայում նրանք մետաղագործներ եյին։ Սա դժվար չե կռահել, վորովհետև Պիտերը մետաղագործական արդյունաբերության գլխավոր կենտրոնն ե։ Մետաղագործների տոկոսը շատ բարձր եր, բոլոր բանվորների մոտ 70 % մետաղագործներն եյին կազմում։ Տոկոսն ըստ ձեռնարկությունների. հազարից ավելի բանվոր ունեցող հսկա ձեռնարկություններում զբաղված եր 76,7 %-ը, 10.000-ից ավելի բանվոր ունեցողներում՝ 22,8 %։ Այսպիսով, բանվորների այս հսկայական մասսայի ճնշող մեծամասնությունը՝ Պիտերում կենտրոնացած՝ մետաղագործներն ու խոշոր ձեռնարկությունների բանվորներն եյին։ Այսպիսի յեր այն բանվորական շարժման հողը, վորը վերջնականապես բռնկվեց 1917 թվի փետրվարին և վորը վորոշակի կերպով զգացվում եր արդեն 1916 թվի աշնանը։ Յեվ վորովհետև պրոլետարիատի մասսայական շարժումը յերբեք առանց ազդեցության չի մնում հարևան վոչ պրոլետարական խավերի, մանավանդ գյուղազգաց մանր-բուրժուազիայի վրա, նա չեր կարող չընդգրկել յերիտասարդությունը, ուսանողությունը։ 1917 թվի մարտի 12-ին Մոսկվայի ուսանողներն ըստ սովորականի Տատյանայի որն եյին տոնում և, ինչպես վշտով մատնանշում ե վոստիկանական զեկուցագիրը, բացառապես հեղափոխական յերգեր եյին յերգում։ Նրանց մոտ յեկավ նույն քաղաքապետի օգնականը և աղաչում եր գոնե մի անգամ «боже царя храни» յերգել, բայց նրան չեյին լսում։

ՏԱՍԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Դուք հիշում եք, վոր 1917 թվի գարնանը հեղափոխության բոլոր ելեմենտներն առկա եյին։ Հսկայական տնտեսական քայքայում կար, վորը տրանսպորտի քայքայումից սկսվեց, նույնպիսի հսկայական բանվորների կուտակում կար ցարական մայրաքաղաքներում և այն ել ամենահեղափոխական տիպի բանվորների՝ մետաղագործների, հսկա խոշոր ձեռնարկություններում զբաղված բանվորների։ Մի խոսքով՝ առկա եյին այն բոլոր պայմանները, վորոնք պակասում եյին հեղափոխության համար 1907—8 և հետագա տարիներում։ Մի պայման միայն բացակայում եր, և դուք կտեսնեք, վոր նա իր դերը խաղաց,—չկար այն կուսակցությունը, վորը բեմի վրա յեր 1907 թվին, վորն անցկացրեց առաջին հեղափոխությունը և վորը, ինչպես փորձը ցույց տվեց, կարող եր միայն անցկացնել յերկրորդ հեղափոխությունը։ Շնորհիվ այն բանի, վոր առաջին մոմենտին այդ կուսակցությունը չկար բեմի վրա, ստացվեց հին ռեժիմի յերկար, ութամսյա տագնապ, վորը յերկրին բավական թանգ նստեց, մանավանդ տնտեսական քայքայումը խորացնելու տեսակետից, և վորն անհրաժեշտ դարձրեց յերկրորդ վերահասությունը (ինչպես այդ յերբեմն պատահում ե,—յեթե անդամահատությունը չի հաջողվում, սկսվում ե բորբոքման պրոցեսը, յերկրորդ անգամն են վերահասում), մի վերահասություն, վորը, իհարկե, կարելի յեր խնայել։ Պատահեց այդ վոչ բոլորովին աստծու կամքով, այլ մասամբ նաև այն ուժերի գիտակցական հաշվառումով, վորոնք կառավարում եյին Ռուսաստանը և մեծ հոգատարությամբ 1907—1917 թ. թ. ժամանակամիջոցին վոչնչացնում եյին հենց բոլշևիկներին, վոչնչացնում եյին վոչ միայն անհատապես՝ փտեցնելով նրանց նկուղներում կամ սիբիրյան աքսորում, կամ արտասահման վտարելով, այլ և վոչնչացնում եյին իդեոլոգիապես։ Վոչ մի գրականություն չի յենթարկվել այնպիսի հալածանքների, ինչպես բոլշևիկյան գրականությունը։ Յերբ մենք բաց արինք Փարիզի պահնորդության արխիվը, շատ արտահայտիչ մի փաստաթուղթ գտանք, բոլշևիկյան գրականություն ռուսական մասսայի վրա թողած ազդեցության շատ խելամիտ և գրագետ մի բնութագրություն, վորն ինչ-վոր լրտես ե արել, գուցե և ինչ-վոր գրականագետ, վորը ռոճիկ եր ստանում վոստիկանության դեպարտամենտից։ Այնտեղ տրված եր այդ շրջանի մեր լեգալ և անլեգալ գրականության չափազանց գրագետ և խելամիտ մատենագրությունը՝ նրանց վնասակարության մատնանշումով։ Այսպիսով, գիտակից պայքար եր տարվում, և մինչև վերջին րոպեն, ինչպես կտեսնեք, Ռոմանովները, իսկ նրանց անկումից հետո, նրանց բարեկամներն արտասահմանում աշխատում եյին կանխել այդ աղետը՝ ռուսական տերրիտորիայի վրա Լենինի գլխավորությամբ

բոլշևիկյան կուսակցության հանդես գալը։ Յես արդեն շոշափեցի, ինչպես տեսնում եք, այն ուժը, վորը մենք վերլուծեցինք, յերբ առաջին հեղափոխությունն եյինք ուսումնասիրում։ Յեվ ինչպես այն ժամանակ մենք մի րոպեյով կանգ առանք այս հակադիր ուժի վրա և աշխատեցինք պարզել, թե ինչ եր նա իրենից ներկայացնում, նույնպես պետք ե վարվենք նաև հիմա։

Դուք հիշում եք, վոր 1905 թվի պոռթկումը շատ հեշտացել եր այն ձեղքվածքով, վորը գոյացավ ռուսական իմպերիալիզմի մեջ՝ շնորհիվ արդյունաբերական և առևտրական կապիտալների շահերի անտագոնիզմի։ Դուք հիշում եք, սակայն, վոր այդ անտագոնիզմն այնքան ել խոր չեր, և վոր խոր չեր նա այն պատճառով, վոր յերկու կապիտալներն ել շատ լավ եյին զգում այն վտանգը, վոր նրանց սպառնում ե մասսայի կողմից։ Այդ պատճառով նրանք մինչև վերջ չկռվեցին, այլ կոմպրոմիսով վերջացրին։ 1916—17 թ. ձմռան դրությունը հենց նրանով ել բնորոշվում ե, վոր այդ վտանգը, մասսայական պոռթկման վտանգը, միանգամից հեռացավ այդ խափանող ուժի տեսողության ասպարեզից՝ մեր իմպերիալիստական բուրժուազիայից՝ ինչպես կարելի յե բնորոշել այդ բլոկն ամբողջապես, առանց առանձնացնելու այդտեղից կալվածատերերին և ֆաբրիկանտներին, առևտրական կապիտալը և արդյունաբերական կապիտալը։ Թվում եր, վոր ստոլիպինշչինայի արյունոտ շրջանից հետո մասսայական շարժումը չի կարող այլևս բարձրանալ։ Յես չգիտեմ և չեմ կարող բացատրել, թե ինչպես կարող եր նման պատրանք ստեղծվել այն մարդկանց մեջ, վորոնք ապրել են 1914 թվի ամռան Պետերբուրգի բանվորական շարժումը, բայց վոր այդպիսի պատրանք յեղել ե, դա բացատրվում ե Միլյուկովի անկեղծ խոստովանությունով, վոր նա արավ Պալեոլոգին, մի խոստովանություն, վոր դուք կարող եք գտնել իմ հոդվածում։ «Մենք այդ բոլորովին չեյինք սպասում», ասաց Միլյուկովը։ Յեվ բուրժուական բարձր խավերի գործողության ամբողջ ձևը ցույց ե տալիս, վոր նրանք իրոք չեյին սպասում բանվորների մասսայական յելույթը։ Կրկնում եմ, դա հետագա վերլուծության գործ ե։ Մենք դեռ չպարզեցիք այդ հեղափոխության բոլոր մանրամասնությունները, թե ինչը բերեց ռուսական բուրժուազիային այդ տարորինակ աբերրացիային—խուսափմանը, թե մասսայական պոռթկումն անհնար ե։ Բայց ինքը փաստն առկա յե։ Այն ընդունեց Միլյուկովը, և նա թափանցում եր այն ժամանակվա իմպերիալիստական բուրժուազիայի վերին խավերի ամբողջ քաղաքականության միջով։ Չհամարձակվելով մասսայական շարժման պատճառով մինչև վերջը կռվել 1905—7 թ. թ., այստեղ նրանք գտան այդ վճռականությունը։ 1917 թվի փետրվարի հեղափոխությունը, իհարկե, չի առաջացված (թե ինչով եր նա առաջացած, դուք գիտեք), բայց հեշտացված ե վերին աստիճանի նրանով, վոր վերին խավերում այդ ժամանակ աննշան կռիվ եր տեղի ունենում այն մարդկանց միջև, վորոնք միանգամայն մոռացել եյին, վոր աշխարհիս յերեսին բանվորներ կան, հեղափոխական պրոլետարիատ կա, և վոր այդ պրոլետարիատը մի գեղեցիկ մոմենտում կռանի յերկու կռվողների ոձիքից և քաշ կտա նրանց այնպիսի մի տեղ, ուր նրանք չեն ցանկանում գնալ։

Սովորաբար այն, ինչ տեղի յեր ունենում 16—17 թ. թ. ձմռանը, պատկերացնում են, վորպես զուտ-պալատական վեճ։ Բայց անմիջական դիտողն արդեն, հենց նույն Պալեոլոգը, սքանչելիորեն տեսնում եր, վոր ար-

մասներն ավելի խորն են ընկած, վոր բացի պալատական շրջաններից այս վեճում շահագրգռված են վորոշ հասարակական ուժեր՝ հին արտահայտությամբ։ Դրությունը մարքսիստորեն վերլուծելով՝ մենք հեշտությամբ հայտնաբերում ենք, թե վորն եր հիմնական հակասությունը։ Արտաքինով սա կարծես թե պրոգրեսիվ բլոկի և ինքնակալության վեճ եր, յեթե կուզեք անհատապես՝ Միլյուկովի և Գուչկովի վեճը Ռասպուտինի հետ։ Պրոգրեսիվ բլոկը՝ դա բուրժուազիայի քաղաքական այն ներկայացուցչությունն եր, վորը փաստորեն իշխանությունն իր ձեռքն առավ 1915 թվին։ Ռազմական եկոնոմիկան անմիջականորեն բուրժուազիան իր ձեռքումն եր պահում «հատուկ խորհրդակցության» միջոցով, իսկ Դումայում ներկայացնում եր հատուկ մի բլոկ, վոր կադետներից մինչև նացիոնալիստներն եր գնում և պրոգրեսիվ բլոկ անունն եր կրում։ Կարծես թե մենամարտությունը հանդում եր մի կողմից այդ բլոկի և մյուս կողմից ինքնակալության միջև՝ հանձինս, գլխավորապես, Ռասպուտինի մենամարտության։ Սակայն սա, կրկնում եմ, միայն արտաքին թաղանթն եր... Իրականում հակասությունը շատ ավելի խորն եր։ Մենք այստեղ տեսնում ենք այն յերկու հակառակորդների վերջին մենամարտությունը, վորոնց պայքարը, ինչպես հիշում եք, կազմում ե XIX և XX դարի սկզբների ամբողջ ռուսական պատմության ֆոնը, կապիտալիզմի նույն յերկու տեսակների, վորոնց շահերը չեյին կարող ամբողջովին հաշտվել ռուսական հողի վրա։ Պատերազմի սկզբում, անկասկած, տիրապետում եր առևտրական կապիտալը։ Նեղուցների գրավման խնդիրը — դա առևտրա-կապիտալիստական խնդիր եր։ Դա Ռուսաստանի առևտրական ճանապարհների համար պայքարի միջադեպն եր։ Արդյունաբերական կապիտալը, ինչպես հիշում եք, առաջին ամիսներին բավական անտարբեր վերաբերվեց դեպի պատերազմը, բայց աստիճանաբար, քանի պարզվում եր, վոր պատերազմն սքանչելի շուկա յե, վորը շահավետ կերպով փոխարինում ե սովորական շուկային, վորն արդեն նեղվածք եր ռուսական արդյունաբերության համար, քանի, մյուս կողմից, ամեն մի արտածման դադարեցումը Ռուսաստանից խլում եր առևտրական կապիտալից պատերազմի ամբողջ հմայքը, այն հույսը, վոր պատերազմը 3—4 ամսից փառավոր հաղթանակով կվերջանա, չարդարացավ, 14 թվի բերքը կորավ, 15 թվի բերքը նույնպես կորավ, 16 թվի բերքը նույնպես չարտածվեց արտասահման, — քանի այս բոլորը տեղի յեր ունենում, առևտրական և արդյունաբերական կապիտալների շահերը պետք ե իրենց տեղերը փոխեյին։ Արդյունաբերական կապիտալը գնալով ավելի յեր գրավվում պատերազմի մեջ, առևտրական կապիտալը գնալով ավելի յեր տխրում և դառնորեն դատապարտում պատերազմը։ Սա արտահայտվեց պրոգրեսիվ բլոկի, վորը ներկայացնում եր, գլխավորապես, արդյունաբերական կապիտալը և պալատական շրջանների ազնվականությունը, փոխհարաբերություններում, վորը հնուց անտի Ռուսաստանում առևտրական կապիտալն եր ներկայացնում, վորովհետև կալվածատերը, ինչպես հիշում եք, առևտրական կապիտալի գործակալն եր։

Ռուսական հացն արտասահման արտածելու համար վերջապես հնարավորություն ստեղծելու նպատակով պատերազմը վերջացնելու անհրաժեշտությունն ավելի ու ավելի յեր գիտակցվում։ Ճիշտ ե, յերկու հանգամանք կային, վորոնք մեղմացնում եյին, այսպես ասած, առևտրական կապիտալի վիշտը։ Դա, նախ և առաջ, ռուսական հացի բերքատվության ավելի ու ավելի նվազումն եր. բերքը 1917 թվին 30—40% ընկավ՝ նայած թե ինչն եք վերցնում՝ ցորենը, թե հաճարը, և դա հացի գներն եր պահում, իսկ հետո կալվածատիրոջ վիշտը մեղմացնում եյին ռազմական մատակարարումները։ Բայց այսպես թե այնպես, վոչ միայն ակտիվ, այլ վորևե բալանսի ամեն մի բացակայություն, ամբողջ բալանսի պասսիվ բալանսի վերածվելը, պետք ե անհանգստացներ և այն ել վոչ այնքան մենակ առևտրական կապիտալը, վորքան ռուսական կուտակումներն ընդհանրապես։ Արդյունաբերական կապիտալը սրան թեթև եր վերաբերվում, քանի վոր նրա գրպանը հսկայական վաստակ եր լցվում, սակայն ընդհանրապես նույնիսկ ռուսական կապիտալիզմը վորոշ հարցականի տակ եր գտնվում։ Այս բոլորն ի մի վերցրած՝ պետք ե ընթացք տար պացիֆիստական այն տենդենցներին, վորոնք հենց պատերազմի սկզբից պատկերացնում եր իրեն Վիտտեն, վորը մեռավ 1915 թվին, բայց վորոնք պատերազմի սկզբում վոչ մի արձագանք չեյին գտնում։

Վոր 1914—17 թ.թ. պատերազմը (Ռուսաստանի համար 1914—17 թ.թ., իսկ արևմուտքի համար՝ 1914—18 թ. թ.), ինչպես և առանց բացառության բոլոր պատերազմները, մի կողմից բացահայտ պատերազմական գործողությունների մի շարք եր, և մյուս կողմից դիվանագիտական, գաղտնի քայլեր, դա ներկայումս վոչ մի կասկածի յենթակա չե։ Ինչպես այդ Ղրիմի պատերազմի ժամանակ եր, ինչպես այդ առաջ եր Նապոլեոնյան բոլոր պատերազմների ժամանակ, հաշտության հարցը գրեթե ռազմական գործողությունների սկսվելու համարյա թե հենց յերկրորդ որն եր դրված։ Արդեն 1914 թվի սեպտեմբերի հենց սկզբներին գերմանական կառավարությունը դիմում ե վարչապետ Վիլսոնին միջամտելու Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Անտանտայի հետ հաշտության բանակցություններ վարելու համար։ Կանգ չեմ առնի սրա վրա, ինքնըստինքյան շատ բնորոշ և հետաքրքիր միջադեպի վրա, թե ինչպես արտաքինով յերկու յերկվորյակներ՝ Գեորգ V և Նիկոլայ II իր բնում խեղդեցին հաշտության այս առաջին փորձը, վորը ծագեց պատերազմի սկսվելուց ընդամենը 1½ ամիս հետո։ Հետագայում այս փորձերը զանազան ճանապարհներով վերանորոգվում եյին և 1914—15 թ.թ. դեկտեմբեր—հունվար ամիսներին, (վորը հասկանալի յե դարձնում նեղուցների մասին համաձայնությունը մի կողմից Անգլիայի և Ֆրանսիայի և մյուս կողմից Ռուսաստանի միջև, 1915 թ. մարտի համաձայնությունը՝ Անգլիայի կողմից ուղղակի ատամների կրճտոցով ստորագրված։ Այդ կրճտոցը միանգամայն վորոշակի կերպով լսվում ե անգլիական մեմորանդումում), հետո 1915 թվի աշնանը, 1916 թվի ամռանը (Գերմանիայի փորձը բանակցություններ սկսելու Ճապոնիայի միջոցով)։ Մի խոսքով, այսպիսի փորձերի մի ամբողջ յերկար շարան ե ձգված ամբողջ պատերազմի ընթացքում։ Այդ Անտանտան ել չեր բացասում, վորքանով վոր նախաձեռնությունը Գերմանիայից եր գալիս, բայց նա համեստաբար լռում ե, թե արդյո՞ք Գերմանիան միշտ խուլ արձագանք եր գտնում, թե՞ ժամանակ առ ժամանակ Գերմանիան մարդիկ եր գտնում՝ հաշտության թեմայի մասին զրուցելու համար։ Ակներև ե, վոր մարդ եր գտնում հետը զրուցելու և, ի միջի այլոց, Ռուսաստանի հետ։ Արդեն 1915 թվի գարնանը մենք ունենք Ալեքսանդրա Ֆեոդորովնայի նամակն ուղղված իր ամուսնուն, վորի մեջ նա հայտնում ե, վոր Երնից (իր հարազատ յեղբայր Երնեստ Հեսսենս-

կուց) նամակ է ստացել, վորտեղ նա հայտնում է, վոր Ստոկհոլմ պիտի գա իր հավատարմատարը և վոր լավ կլիներ, յեթե այդ հավատարմատարի մոտ Նիկոլայն ուղարկեր և իր հավատարմատարին։ Նամակն Ալեքսանդրա Ֆեոդորովնային ուշացումով հասավ և նա անհանգստությամբ հարցնում է Նիկոլային. «Ի՞նչ անել։ Այդ հավատարմատարն արդեն նստած է Ստոկհոլմում, իսկ դու չկաս, դու ռազմակայանումն ես։ Ի սեր աստծո, կարգադրություն արա։ Յես վախենում եմ, վոր թյուրիմացություն դուրս գա և Երնին շատ դժգոհ մնա»։ Գործի էությունը, իհարկե, Երնիին վշտացնելումը չեր, այլ այն, վոր կխափանվի բանակցությունների փորձը, վորը հանձնարարված եր Երնիին։ Այս նամակը Նիկոլայն ստացավ Պերեմիշլը վերցնելու հաջորդ որը, վոր ամբողջ պատերազմի ընթացքում ռուսների տարած միակ խոշոր հաջողությունն եր, և Նիկոլայը շատ մարտական տրամադրություն ուներ. նա, ինչպես յերևում է, բացասաբար վերաբերվեց դեպի առաջարկը և մի գուցե սրա նման մի բան խորհուրդ տվեց, թե, «այլևս, սիրելիս, նամակներում այդ մասին մի գրիր»,—համենայն դեպս Ալեքսանդրյա Ֆեոդորովնայի հետագա նամակագրություններում մենք վոչ մի հիշատակում չենք հանդիպում յեղբոր նամակների մասին, բայց վոր նամակագրություն տարվում եր, դա վոչ մի կասկածի յենթակա չե։ Հնարավոր է, և վոչ միայն հնարավոր է, այլ նույնիսկ հաստատապես դրանք այն նամակներն եյին, վորոնք Նիկոլայը, ըստ իր հուշատետրի տվյալների, կարդում և այրում եր իր ձերբակալության առաջին որերը Ցարսկոյե Սելոյում։ Նրա հուշատետրում յերկու այսպիսի դիտողություն կա. «Քննում և այրում եյի թղթերը... Քննում և այրում եյի թղթերը»։ Կերենսկին «անզգուշությունն» ունեցավ թողնել Նիկոլայի ամբողջ անձնական արխիվը նրա տրամադրության տակ, փոխանակ այն կնքելու և, ինչպես հարկն է, նոր կառավարության տրամադրության տակ դնելու։ Յեվ ցարն այնպես մաքրեց իր արխիվը, վոր իր պատերազմի տարիների շրջանի «գաղտնի դիվանագիտության» փաստաթղթերը մեր ձեռքը չընկան։ Սակայն փաստաթղթերի բացակայության փոխարեն կան սպիտակ թելեր, վորոնցով կարված եյին այս կամ այն դեպքերը, և վորոնք չափազանց թափանցիկ են։ Որինակ, մի վոմն Վասիլչիկովա իշխանուհու ժամանումը Պետերբուրգ, վորին պալատական շրջաններում կրճատ ձևով «Մաշա» եյին կոչում, ցույց է տալիս, թե վոր աստիճանի նա մոտ եր,—իսկ մենք գիտենք, վոր նա գործուղված եր արտասահմանից վորոշ դիվանագիտական հանձնարարությամբ Գերմանիայի և Ավստրիայի վորոշ դիվանագիտական շրջաններից։ Վասիլչիկովան ապրում եր Ցարսկոյե Սելոյում, պալատից յերկու քայլ հեռավորության վրա, պալատական շենքում, և շատ եր ձանձրացնում Ալեքսանդրա Ֆեոդորովնային նրանով, վոր ուշադրությամբ հետևում եր Ռասպուտինի բոլոր այցելություններին։ Այս հանգամանքը շատ եր անհանգստացնում Ալեքսանդրա Ֆեոդորովնային և նա փորձեց մի կերպ նրան այդտեղից հեռացնել։ Վասիլչիկովային Պետերբուրգից արտաքսելու ռեալ պատճառներից մեկն՝ ամենից հավանականն այն հետապնդումն եր, վոր նա սահմանեց Ալեքսանդրովյան պալատի նկատմամբ՝ ամեն ինչին հետևելով «կատվի նման»՝ ինչպես Ալեքսանդրա Ֆեոդորովնան է արտահայտվում. նստած է,—ասում է,—և նայում է, թե ինչ է կատարվում մեզ մոտ։ Այսպես թե այնպես, այս անձնավորության հանդես գալը ևս շատ արտա-

հայտիչ է։ Պակաս արտահայտիչ չե նաև ապագա ներքին գործոց մինիստրի և պրեմյերության թեկնածուի, վորին ինքն Ալեքսանդրա Ֆեոդորովնան և Ռասպուտինն եյին առաջ քաշում—Ա. Դ. Պրոտոպոպովի այցելությունը, նրա այցը (կամ նրան արված այցը, դժվար է ասել, թե ով ում մոտ է այցի գնում, վորովհետև սրանք իրար հանդիպում եյին) Ստոկհոլմի գերմանական դեսպանության խորհրդատու Վարբուրգին մի դեպք է, վոր չհաջողվեց գաղտնի պահել և վորն իր արտահայտությունը գտավ ամբողջ մամուլում։ Այսպիսի դեպքեր պատահաբար չեն լինում, և ակներև է, վոր վոչ միայն Գերմանիան սուբյեկտիվորեն եր ցանկանում հաշտության բանակցություններ սկսել, այլ և օբյեկտիվորեն նա, այսպես թե այնպես, գտնում եր զրույցի համար ընկերներ, վորոնք նրա հետ զրուցում եյին հաշտության թեմայի շուրջը։

Մանրամասնությունները, դժբախտաբար, մենք չգիտենք։ Յես չգիտեմ, թե ինչու մենք մինչև որս չկարողացանք այդ բոլորը գերմանական արխիվից իմանալ։ Զափազանց հետաքրքիր է, վոր գերմանական հանրապետական կառավարության մերկացումները՝ նույնիսկ Կաուտսկու մասնակցությամբ՝ 1914 թվի վրա կանգ առան։ Իսկ թե ինչ պատահեց 1914 թվից հետո, այդ մենք չգիտենք։ Կարող եմ միայն փաստն արձանագրել այսպես թե այնպես, բանակցություններ յեղել են։ Հաշտության կողմնակից եր Ռուսաստանում, անկասկած, (այդ մենք փաստերով գիտենք) խոշորագույն մի դեմք, փաստորեն 1915 թվի աշնանից Ռուսաստանի ինքնակալը՝ Ռասպուտինը։ Ռասպուտինը,—յես համարձակվում եմ հռչակել ինձ «ծերունու» ջատագով, և այս իմաստով ամեն տեսակի ծաղրանքի յենթարկվելու,—այս կամպանիայի մեջ վերին խավերում, մանավանդ առևտրական կապիտալի կամպանիայում, այսինքն՝ ինքնակալության ամենաուժեղ գլուխն եր։ Զպետք է շփոթվել, վոր նա կիսագրագետ մուժիկ եր։ Նա սովորական մուժիկ չեր։ Նրա այդ արտասովորությունը նրանով արտահայտվեց, վոր նա հենց սկզբից պատերազմի դեմ եր։ Յերբ պատերազմն սկսվեց, նա հիվանդ պառկած եր Սիբիրում՝ բժշկվելով այն վերքից, վորը նրան հասցրեց Ֆեոնիա Գուսևան։ Նա այնտեղից հեռագիր ուղարկեց, ճիշտ է, վոչ բողոքի (դա, արդեն, չափազանց կլիներ), բայց ուր նա պատերազմը դժբախտություն եր համարում, անորոշ կերպով ակնարկում եր, վոր կան մարդիկ, վորոնք այդ դժբախտության մեջ են քաշում Նիկոլային և Ալեքսանդրային։ Նա, ակներև է, վոր գիտեր զինվորական կուսակցության և ռուսական գլխավոր շտաբի պրովոկատորական դերի մասին։ Նա վորոշ տխրությամբ հարցնում եր իրեն և իր հասցեակիրներին, թե կարո՞ղ են արդյոք ոգնել նրանք, ովքեր պատերազմ առաջացրին, և տեսնում եր, վոր նրանք չեն կարող ոգնել։ Յերբ Ռուսաստանը ջարդ ու փշուր յեղավ, արդեն 1915 թվի նոյեմբերին Ռասպուտինը վորոշակի ասում եր, վոր պատերազմը զուր սկսեցին, սերբերը չարժեն դրան, վոր, վերջ ի վերջո, նրանք նույնքան ապերախտ կլինեյին, վորքան և բուլղարացիք և այլն։ Դա մենք իմանում ենք Ալեքսանդրա Ֆեոդորովնայի Նիկոլային ուղղած նամակից։ Այսպիսով, վոչ մի կարիք չկար գերմանական փողերի, վորոնց մասին ակնարկում եր Պալեոլոգը։ Ռասպուտինին փող չեր հարկավոր, վորովհետև նրա տրամադրության տակ եր աշխարհիս ամենահարուստ մարդու դրամապանակը, առանց գերմանական փողերի յել բավարար չափով հիմք կար, վորպեսզի Ռասպուտինը Ռու-

սատանի կողմից հաշտության քաղաքականության կենտրոն դառնար։ Իսկ խաղաղության այս քաղաքականության հիմքը միանգամայն պարզ և վորոշակի կերպով հենց նույն ռուսական կապիտալիզմի օբյեկտիվ շահն եր կազմում, վորը և առաջ բերեց պատերազմը։ Ապրել առանց արտածման, եքսպորտ չունենալով, ապրել փակ արկղում, այդ չեր կարող տանել ռուսական կապիտալը։ Նա այդ չկարողացավ տանել Ղրիմի պատերազմի ժամանակ՝ XIX դարի կեսերին, չեր կարող և 1916—17 թվականների ձմռանը։ Նա չեր կարող հրաժարվել այդ պատերազմի գլխավոր մրցանակից՝ նեղուցներից, և, ըստ երևույթին, գերմանացիների հետ բոլոր բանակցությունները այս հարցով եյին խափանվում. Ինչպես վարվել նեղուցների հետ։ Տաճկաստանը Գերմանիայի դաշնակիցն եր, և Գերմանիան չեր համարձակվում զոհել Տաճկաստանը։

Բայց քանի պատերազմը յերկարում եր, Գերմանիայի դրությունը գընալով վատանում եր,—մենք գիտենք, վոր 1917 թվի վերջին Գերմանիայի դաշնակիցների՝ Ավստրիայի, Բուլղարիայի և Տաճկաստանի դրությունն անտանելի դարձավ, սրա մասին մենք գիտենք Չերնինի հիշողություններից Բրեստի հաշտության մասին. վորքան ավելի յեր վատանում Տաճկաստանի դրությունը, այնքան նա ավելի հակված եր այդ իմաստով զիջումներ անելու։ Յեվ 1916 թվի աշնանը Պետերբուրգում վորոշակի լուրեր եյին պըտտվում, վոր այսոր կամ վաղը հաշտություն կկնքվի հետևյալ հիմունքներով. Ռուսաստանը նեղուցները կստանա (պարզ չեր, թե ինչպես), բայց պատերազմից դուրս ե գալիս, սեպարատ հաշտություն ե կնքում Գերմանիայի հետ։ Սրա վրա եյին հիմնված նաև Գերմանիայի ղեկավար շրջանների հույսերը։ Այս մասին մենք քիչ թե շատ վստահելի տեղեկություններ ունենք նաև Ռուսաստանի փետրվարյան հեղափոխության շրջանից։ Փետրվարյան հեղափոխությունը գերմանական կապիտալիստական, գլխավորապես, ֆինանսական շրջանների վրա շատ ծանր տպավորություն թողեց։ Ինչպես մի բանկիր ե պատմում ռուսական տեղեկատուին. «Մենք հույս ունեյինք, վոր շատ շուտով հաշտություն կկնքվի, այդ հույսը մեզ մոտ գոլորշիացավ»։ Այն, վոր հեղափոխությունը փաստորեն մոտեցնում եր հաշտություն կնքելուն, բանկիրն այդ չեր կարող հասկանալ։ Թե ինչ հիման վրա կարող եր կայանալ գերման-ռոմանովյան հաշտությունը, այդ մասին չարժե գուշակություններ անել։ Յես ունեմ յենթադրություն, թե ինչ հիմք կարող եր այնտեղ լինել՝ հիմնված 1913 թվին Ռուսաստանի և Գերմանիայի միջև նեղուցների մասին յեղած բանակցությունների վրա, սակայն ձեր ուշադրությունը սրանով չեմ զբաղեցնի[1]։ Մի բան պարզ ե, վոր ինքնակալ Ռուսաստանի վերին խավերը հաշտության ճանապարհին եյին, և վոր այս ճանապարհին նա պետք ե ընդհարվեր այն ուժերի հետ, վորոնք այդ մոմենտին ամբողջ հույսը պատերազմի վրա եյին դրել։

Առևտրական կապիտալը պետք ե նորից, ինչպես այդ 1905 թվին եր, ընդհարվեր արդյունաբերական կապիտալի հետ։ Կրկնում եմ այն ժամանակ նրանք մինչև վերջ չկռվեցին, վորովհետև հաշվի եյին առնում մասսայական

[1]) Այն ժամանակ՝ համաձայն մամուլում յերևացած տեղեկությունների՝ Վիլհելմ II առաջարկում եր Նիկոլային նեղուցները նեյտրալ հայտարարել—իսկ նեյտրալիտետի պաշտպանությունը հանձնել Ռուսաստանին։ Սա ռուսական նավատորմիղը նեղուցների տեր եր դարձնում։

շարժումը։ Հիմա նրանք պատահմամբ մոռացան նրա մասին և վճռեցին մինչև վերջ կռվել։ Նիկոլայի պլանը մեզ հայտնի յե Կուրլովի հիշողություններից, վորն այդ պլանն իրեն ե վերագրում։ Թուցե Կուրլովը, թուցե և վոչ Կուրլովը, դա բոլորովին միևնույն ե, այդ պլանը կայանում եր նրանում, վորպեսզի ցրել Դուման, մանիֆեստով գյուղացիներին հողի հատումներ հայտարարել, այսինքն՝ մոտավորապես այն անցկացնել, ինչի մասին յերազում եր Տրեպովը 1905 թ. աշնանը, և միաժամանակ Ռուսաստանում ազգությունների իրավահավասարություն հայտարարել, վորպեսզի դրանով բավարարություն տալ հրեաներին, վորոնք ինքնակալության տեսակետից հեղափոխության գլխավոր ուժն եյին համարվում։ Ինչպես հայտնի յե, սպիտակգվարդիականները մինչև օրս էլ ռուսական հեղափոխությունն այդպես են գնահատում։ Յեվ ահա՝ իրավահավասարությունը հրեաներին, և հողի հատումները՝ գյուղացիներին—Նիկոլայի և նրա արբանյակների կարծիքով պետք ե մասսաների համակրանքն ինքնակալության կողմը դարձնեյին։ Այս ֆոնի վրա կարելի յեր ցրել Դուման և հաշտություն կնքել։ Ուրեմն տրվում եր հաշտություն, հող և ազգությունների իրավահավասարություն։ Այլևս ուրիշ ինչ ե հարկավոր։ Մտադրվում եյին այդ, ըստ յերևույթին, մարտ ամսին անել։ Գիտեր արդյոք այս մասին հակառակորդ կողմը, թե վոչ, բայց նա վորոշեց այս հարվածը կանխել հակահարվածով։ Հակահարվածը պետք ե բավական վճռական յեղույթում կայանար։ Պատերազմով շահագըրգռված եր, իհարկե, վոչ միայն արդյունաբերական կապիտալը, այլ և նրանով իրենց կարյերան ապահովող բարձրագույն սպայությունը։ Այդ պատճառով արդյունաբերական կապիտալը՝ հանձինս պրոգրեսիվ բլոկի, առանց դժվարության դաշնակիցներ գտավ հրամանատարական կազմի շարքերում։ Դավադրության մեջ եյին գրավվել շատ խոշոր ուժեր, մինչև իսկ գլխավոր շտաբի պետ՝ գեներալ Ալեկսեյեվը։ Այս հրամանատարական կազմն այն ժամանակ պրոգրեսիվ բլոկի շուրջը կազմված իսկական դավադրության ձեռներն եր, իսկ նրա ուղեղը կադետական կուսակցությունն եր։ Դավադրության մասին հայտնի յեր լայն շրջաններում։ Նրա մասին ընկ. Շլյապնիկովը վորոշակի կերպով պատմում ե իր գրքում։

«Այս դավադրությունը հայտնի յեր պրոգրեսիվ բլոկի վորոշ անձանց։ Մատնանշում եյին, վոր այս գործի առանցքին մոտ են կանգնած Ա. Ի. Կոնովալովը, Ա. Ի. Գուչկովը, մեծ իշխան Կիրիլլը և, կարծեմ, զինվորականներից գեներալ Կրիմովը՝ կոռնիլովյան ապստամբության մասնակիցը, վորն ինքնասպանություն գործեց Կերենսկու առանձնասենյակում նրա անհաջողությունից հետո։ Այս գործին տեղյակ եյին Ն. Ս. Չխեիձեն, Մ. Ի. Սկոբելևը, Ի. Ա. Չխենկելին, Ա. Ֆ. Կերենսկին։ Նրանք վոչ միայն տեղյակ եյին այս դավադրությանը, այլ մյուսների նման այս պալատական հեղաշրջումից եյին փրկությունն սպասում։ Կ. Ա. Գվոզդյովը՝ աշխատանքի նախկին մինիստրը պատմում եր ինձ հետագայում, վոր Ռազմա-Արդյունաբերական Կոմիտեյի կից իրենց գործիչների խմբի և Չխեիձեյի ֆրակցիայի միջև պառակտում առաջացավ՝ Պետական Դումայի բացման որը դուրս գալու կոչի հիման վրա։ Սկոբելևը բացարձակ կերպով իր արհամարհանքն եր արտահայտում վոչ միայն կոչի բովանդակության և պատերազմի հարցի դրվածքի առթիվ, այլ և նրա հանդես գալու փաստի առթիվ։ Դումայի մենշևիկները վախենում եյին, վոր ժողովրդական շարժումը կարող ե քանդել

պալատական հեղաշրջման պլանները։ Մենշևիկ-մարքսիստների նման վերաբերմունքը վկայում էր նրանց ծայրահեղ շփոթվածության մասին։ Յես անձամբ չեմ հիշում վոչ մի տեսակցություն Չխեիձեյի հետ, վորտեղ նա «շփոթված» չլիներ, բայց այդ շփոթվածությունն իր տրամաբանությունն ուներ, և, գուցե, նաև իր «գիծը»։ Պատերազմի ընթացքում Ֆրակցիան միանգամայն կտրվեց մասսայական բանվորական շարժումից և ամբողջովին բուրժուական ոպոզիցիայի բանակն ընկավ»։

Այսպիսով, ինչպես տեսնում եք, պրոգրեսիվ բլոկը վոչ պաշտոնական կերպով նույնիսկ ավելի ձախ էր գնում, քան կադետները և նրան մասնակցում էր առևտրա-արդյունաբերական կոմիտեների պաշտպանողական մենշևիկյան խումբը։ Սա արժե հիշատակել թեկուզ այն պատճառով, վոր այս ուղղությամբ հասցրվեց առաջին հարվածը հակառակ կողմից։

Ինքնըստինքյան հեղաշրջման սխեման շատ պարզ էր։ Նա կայանում էր նրանում, վոր ցարական գնացքի վրա, Նիկոլայի բանակ գնալու ժամանակ, պետք է հարձակվեր գեներալ Կրիմովն իր սպայական վաշտով, ձերբակալեր Նիկոլային և ստիպեր նրան հրաժարումը ստորագրել, իսկ յեթե նա հրաժարվի ստորագրելուց, ապա, ինչպես քաղաքավարի կերպով արտահայտվում է Դենիկինն իր հիշողություններում՝ «ֆիզիկապես նրան հեռացնել» և Նիկոլային այսպես ֆիզիկապես հեռացնելուց հետո, ցար հայտարարել փոքր Ալեկսեյին, իսկ ռեգենտ՝ Միխայիլ Ալեքսանդրովիչին (սա Նիկոլայի կրտսեր յեղբայրն էր), վորը հետագայում իրեն հանրապետական էր անվանում, իսկ այն ժամանակ, անկասկած, ամենաազատամիտն էր բոլոր մեծ իշխանների միջև։ Նա պետք է փաստորեն թագավոր դառնար, իսկ անվանապես թագավոր պետք է դառնար փոքրիկ և հիվանդ մի տղա, վորը չէր կարող, իհարկե, կառավարել։ Հետո պետք է նշանակվեր դումայական մինիստրությունը, այսինքն՝ պրոգրեսիվ բլոկի մինիստրությունը, և Ռուսաստանում պետք է սկսվեյին բուրժուական պարլամենտարիզմի յերանելի ժամանակները։ Այսպիսի սխեմա ուներ այս դավադրությունը։ Հակառակորդ կողմն այս մանրամասնությունները, ինչպես և մանրամասն չգիտեր պրոգրեսիվ բլոկը Նիկոլայի ծրագիրը—մենք այն հիմա իմացանք Կուրլովի հիշողություններից—հակառակորդ կողմն աղոտ կերպով կռահում էր, վոր ինչ-վոր բան է պատրաստվում, և մի շարք միջոցներ էր ձեռնարկում, վորպեսզի վերջնականապես հակառակորդի հախից գա։ Այս միջոցներից առաջինը Պրոտոպոպովի կատարած ձերբակալությունն էր, վորն արդեն նշանակված էր ներքին գործոց մինիստր և այն ժամանակ փաստորեն պրեմյեր էր, առևտրա-արդյունաբերական կոմիտեների բանվորական խմբի ձերբակալությունը։ Դա հենց ձուլումն էր պրոգրեսիվ բլոկի և մասսաների։ Յեվ այդ ձուլումը պետք էր հենց սկզբից վերացնել, հենց սկզբից քայքայել այդ կապը։ Հետագա քայլը Պետական Դումայի ցրումը պետք է լիներ։ Այս քայլը կատարվեց արդեն ավելի ուշ, հեղափոխության յեռուն շրջանում, և այդ պատճառով նշանակություն չունեցավ։ Ինչ վերաբերում է հրեաների իրավահավասարության և հողի մասին մանիֆեստներին, դա բոլորովին չհաջողվեց անել, վորովհետև Պիտերի բանվորները դրա համար ժամանակ չտվին։

Վերևում կատարվող այս խառնակչությունը չափազանց կարևոր է այն կատաստրոֆիկ հաջողությունը բացատրելու համար, վորն ունեցավ մարտ-

յան հեղափոխությունը։ Ինչու՞ ինքնակալությունն այդպես արագ թռավ, ինչու՞ տեղի չունեցավ այն, ինչ 1905 թվին տեղի ունեցավ, յերբ նա բավական յերկար դիմադրում էր։ Հենց այն պատճառով, վոր այն ժամանակ բոլոր նրանք, ովքեր անմիջականորեն տնորինում եյին, բոլորը պատրաստվում եյին այդ պալատական հեղաշրջման հաջողությանը։ Սրանով է բացատրվում այն անհավատալի փաստը, վոր Պետրոգրադը պահպանվում էր յերկրորդ կարգի պահեստի զինվորներով, այսինքն՝ ցարական բանակի ամենահեղափոխական, զորանոցային վարժությունից ամենից քիչ ընկճված զորամասերով։ Այնտեղ բացառապես մեծ քանակությամբ պահեստի զորամասեր եյին գտնվում։ Պետերբուրգում և նրա շրջակայքում կենտրոնացած էր մինչև 170,000 մարդ։ Զանազան ցուցմունքներից, վոր մենք ունենք զանազան տեղերում, դժվար չէ ընդհանուր պատկերը տալ, այսինքն, վոր սա ապագա բանակն էր, վորի վրա հույս ուներ հենվելու պալատական հեղաշրջումը։ Վոր այս 170,000-անոց մասսան կարող է բանվորների ձեռքն ընկնել, այդ մասին վոչ վոք չմտածեց, վորովհետև բանվորներին առհասարակ հաշվի չեյին առնում, նրանցից վոչինչ չեյին սպասում, վոչ մի հատուկ յելույթ,—թե ինչու, դա, կրկնում եմ, այնքան ել պարզ չէ։ Կանգ չեմ առնի սրա վրա։ Փաստ այն է, վոր բանվորների յելույթի համար չեյին պատրաստվում, այլ, մոտավորապես, այսպես եյին մտածում. ում վրա կարող է հենվել այս նոր իշխանությունը՝ ռեգենտ Միխայիլի և ցար Ալեկսեյի ու պրոգրեսիվ բլոկի մինիստրության իշխանությունը,—իհարկե, հենց այս յերիտասարդության վրա, վոր հենց նոր է վերցրված հասարակությունից, նրա տրամադրություններով ներշնչված։ Իսկ տրամադրություններն ինքնակալության նկատմամբ շատ թշնամական եյին։ Դուք հիշում եք, վոր նույնիսկ ուսանողներն իրենց Տատիանայի որն այն ժամանակ միայն հեղափոխական յերգեր եյին յերգում։ Ահա այս մասսայի վրա պետք է հենվեր նոր «հեղափոխական» իշխանությունը, և այդ պատճառով, կարող եք կռահել, թե ինչպես դառն հիասթափվել էր Միլյուկովը՝ տեսնելով այդ բանակի սվինները պրոգրեսիվ բլոկի դեմ ուղղված։ Յեվ ահա, յերբ արդեն ամեն ինչ յերկու կողմից ել պատրաստ էր,—մի կողմից պատրաստ էր Դումայի ցրումը, մյուս կողմից պետք է Նիկոլայի ձերբակալությունը հետևեր, մի դեպք, վորը նախատեսված էր որացուցային պլանով,—նրանք որացուցային պլան ունեյին և հենց մարտ ամսին պետք է տեղի ունենար Նիկոլայի հրաժարումը,—հենց այս ժամանակ տեղի ունեցավ պիտերյան պայթյունը, վորը միանգամայն անսպասելի յեր երկու կողմերի համար ել։ Վոչ վոք այդ չէր սպասում, վոչ սրանք և վոչ ել նրանք։ Դավադրությունը կիսով չափ միայն հաջողվեց։ Հաջողվեց միայն Ռասպուտինին հեռացնել։ Վոր Ռասպուտինին մեջ տեղից վերացնելը դավադրության մի մասն էր, դա անկասկած է, սակայն սա արթնացրեց միայն հակառակ կողմի ուշադրությունը, բայց դեռ վճռականապես և վոչ մի բանի չհանգավ, վորովհետև Ռասպուտինն ամբողջ սիստեմի փաստական և վոչ իրավաբանական պարագլուխն էր։ Իհարկե, Ռասպուտինի հեռացումը կհեշտացներ նաև հրաժարման ստորագրությունը և ամբողջ հետագա ծրագիրը, սակայն չհաջողվեց այդ սկսել անգամ, վորովհետև տեղի ունեցավ փետրվարյան հեղափոխությունը։

Ահա թե ինչը, ուրեմն, ահա թե ինչ պայմաններ նախապատրաստեցին Պիտերի ապստամբության այսպիսի արագ հաջողության հնարավորությունը,

մի հաջողություն, վորն առավել ևս բնորոշ է նրանով, վոր այդ ժամանակ նույնիսկ Պիտերի բոլշևիկները զինված ապստամբությունից տասը վերստով հեռու էյին։ Շլյապնիկովը խոստովանվում է իր հիշողություններում, վոր նա ամեն կերպ սաբոտաժի յեր յենթարկում բանվորներից ռազմական զորամասերի կազմակերպումը և բանվորների սպառազինումը։ Ճիշտ է, նա այդ նրանով է արդարացնում, վոր նա խորհուրդ եր տալիս բանվորներին պրոպագանդա տանել զինվորների մեջ և այն ժամանակ գործն ավելի հեշտ կգնա։ Սակայն զինվորների մեջ պրոպագանդա մղելը և բանվորների յելույթը, դա, ինչպես հիշում եք 1905 թվից, յերկու ակտ էյին, վորոնք պետք է իրար հետ ընթանային։ Յեվ, անկասկած է, վոր յեթե չլիներ բանվորների մասսայական, թեկուզ և անզեն, մերկ ձեռներով յելույթը Պիտերի փողոցներում փետրվարի վերջերին, ապա, իհարկե, զինվորները չէյին ներգրավվի այս շարժման մեջ։ Նրանք ներգրավվեցին բանվորական մասսայի կողմից։ Յեվ բնական է, վոր բանվորական մասսան էլ դրության տեր դարձավ հեղաշրջման հաջորդ իսկ որը՝ ի մեծ սարսափ յերկու շփոթված ու իրանց կորցրած կողմերի։

Վախենում եմ, վոր բոլոր մանրամասնությունների հետևանքով, վորոնցով յես ծանրաբեռնեցի այս դասախոսության առաջին մասը, կարող է հիմնականը վրիպել ձեր ուշադրությունից։ Դրությունն այսպես եր. մի կողմից՝ արդյունաբերական կապիտալը, վորն ուզում եր շարունակել պատերազմը և հանուն սրան տապալել Նիկոլային։ Մյուս կողմից՝ առևտրական կապիտալը, վորը մարմնավորվում եր բարձր ազնվականությունով, պալատական շրջաններով, իրեն իսկ Նիկոլայով և փաստորեն գլխավորվում եր Ռասպուտինով, վորն ուզում եր հաշտություն կնքել, վորովհետև պատերազմը կողպում եր այդ առևտրական կապիտալն ամեն կողմից պինդ ծածկված արկղի մեջ, և նրա գոյությունն ամեն մի իմաստից զրկում եր։ Ի՞նչ առևտրական կապիտալ կարող է լինել առանց հացի արտածման։ Յեվ ահա յերկու կապիտալների այս մենամարտի ամենայեռուն շրջանում, վոր վերջին մենամարտն եր ռուսական հողի վրա, հանդես յեկավ պրոլետարի մկանուտ ձեռքը և քաշ տվեց նրանց այնպիսի մի վայր, վոր պատրաստված եր նրանց համար հնուց անտի, վերին աստիճանի անհաճո մի վայր, և վորը վոչ մի կերպ չի կարելի խաղաղ, լուսավոր և հանգիստ վայր անվանել։ Հանգիստ նա գուցե և լիներ, սակայն բացի այս հատկություններից, ուրիշ պայմաններ չկային։ Առաջին րոպեյին, անկասկած, այս ամբողջ իմպերիալիստական վերին խավի ներկայացուցիչների՝ ինչպես առևտրական, նույնպես և արդյունաբերական կապիտալների՝ դրությունը հուսահատական եր։ Յեվ այս հուսահատությունն է զգացվում Միլյուկովի այն խոսակցության մեջ Պալեոլոգի հետ, վորը յես բերել եմ իմ հոդվածում և վորը կրկին չեմ կարդա։ Թվում եր, թե ամեն ինչ վերջացավ։ Մնում եր միայն ինքն իրեն մխիթարել, ինչպես և հետագայում անթիվ անգամ մխիթարում էյին իրենց՝ խաբելով արտասահմանին։ Արտասահմանում փորձում էյին գործն այնպես ներկայացնել, վոր հեղափոխությունը նույն պրոգրեսիվ բլոկի հաղթանակն եր, վորին չհաջողվեց մինչև վերջ հասցնել իր դավադրությունը, փորձում էյին հեղափոխությունը վորպես հայրենասիրության պոռթկում պատկերացնել ընդդեմ դավաճան Ալեքսանդրա Ֆեոդորովնայի և Նիկոլայի պացիֆիստական ինտրիգների. նկարագրում էյին, թե ինչպես գնդերն իրար յետևից

դալիս էյին Դումա իրենց լոյալ զգացումներն ու պատերազմը մինչև հաղթական վախճան հասցնելու հայրենավառ պատրաստակամությունն արտահայտելու Ռոձյանկոյի և Պետական Դումայի Կոմիտեյի առաջ։

Նախ և առաջ այդ միրաժը ցրելու համար լավ է կարդալ իրեն իսկ Ռոձյանկոյի հիշողությունները՝ գրված այժմ, նրա մահվան նախորյակին, 1921 թվին, ինչպես ասում են՝ թարմ գլխով։ Ահա թե ինչպես է պատմում Ռոձյանկոն։ «Փետրվարի 21-ին, այսինքն՝ հեղաշրջման առաջին որը, հայտնի չէ, թե ում կարգադրությամբ, Պետրոգրադի կայազորի զինվորներն սկսեցին ձերբակալություններ կատարել» (ձերբակալությունները կատարում եր վոչ թե մի վորևե իշխանություն, այլ Պետրոգրադի կայազորի զինվորները), «և ձերբակալված ու Դումա բերված հին ռեժիմի պաշտոնյաներից առաջինը Պետական Խորհրդի նախագահ Ի. Գ. Շչեգլովիտովն եր։ Նրան բերին ինձ մոտ մի խումբ զինվորներ, վորոնց յես ամենևին էլ չեյի ճանաչում, կարծեմ Պրեոբրաժենսկու գնդի զինվորներն էյին, յեթե հիշողությունս ինձ չի դավաճանում, և յերբ յես՝ զարմացած այս կամայականությունից, վորի համար վոչ մի կարգադրություն չեր տրված, հրավիրեցի Ի. Գ. Շչեգլովիտովին իմ առանձնասենյակը, զինվորները կտրականապես հրաժարվեցին նրան ինձ հանձնելուց, հայտարարելով, վոր կտանեն նրան Կերենսկու մոտ կամ Բանվորական Պատգամավորների Խորհուրդը։ Յերբ յես փորձեցի ցույց տալ իմ հեղինակությունը և խիստ կերպով հրամայեցի անմիջապես յենթարկվել իմ կարգադրությանը, զինվորները համախմբվեցին իրենց գերու շուրջը և ամենահանդուգն ձևով ցույց տվին ինձ իրենց հրացանները, վորից հետո առանց այլևայլության Շչեգլովիտովին տարան հայտնի չէ, թե ուր։

Այս միջադեպն առաջին առիթն եր իմ և Բանվորական Պատգամավորների Խորհրդի ընդհարման, բայց նա հարթվեց շնորհիվ այն բանի, վոր Ի. Գ. Շչեգլովիտովին ազատ կացուցել—նշանակում եր ուղղակի նրան ամբոխի ինքնադատաստանին հանձնել, այդ պատճառով նրան ժամանակավորապես պահեցին Պետական Դումայի մինիստրական պավիլիոնում, իսկ հետագայում Ժամանակավոր Կառավարության կարգադրությամբ Պետրոպավլովսկի բերդն ուղարկվեց»։

«Մարտի 2-ին Պետական Դումա, նրա նախագահի մոտ յեկավ Սեմյոնովսկու գունդն իր ամբողջ կազմով, բայց սպաների քիչ քանակով. իմ վողջույնի ճառից հետո ինձ աղմկալի ովացիա սարքեց, «կեցցեների» տակ ինձ իմ առանձնասենյակն ուղեկցեց, ուր այդ ժամանակ հավաքվել եր Պետական Դումայի Ժամանակավոր Կոմիտեն։

Բայց իմ ճառից հետո անմիջապես հանդես յեկած հռետորը՝ Պետական Դումայի անդամ Չխեիձեն աշխատում եր արատավորել Պետական Դումայի նախագահի ճառը, և խորհուրդ տվեց գնդին նորից պահանջել ինձ, վորպեսզի յես ճիշտ և վորոշակի կերպով արտահայտեմ իմ կարծիքը Ռուսաստանում դեմոկրատիկ հանրապետություն հաստատելու և հողային հարցը լուծելու մասին։ Յերբ յես դահլիճ յեկա Սեմյոնովսկի գնդի մոտ, զինվորների տրամադրությունն արդեն այն չեր, ինչ առաջ եր, այլ, ընդհակառակը, չափազանց ագրեսիվ եր։ Այնուամենայնիվ հաջողվեց Դումայի անդամ Չխեիձեյի ճառից հուզված գունդը հանգստացնել՝ հենվելով այն բանի վրա, վոր այս բոլոր հարցերը յենթակա յեն վոչ թե Պետական Դու-

մայի նախագահի և վոչ էլ ժամանակավոր Կառավարության, այլ Հիմնադիր Ժողովի լուծմանը:

Մարտի 3-ին նորից ցուցարարությամբ Պետական Դումա յեկած 2-րդ նավատորմիղային եկիպաժն իրեն ավելի ես ագրեսիվ եր պահում, և ուղեկցող սպաները՝ մեծ մասամբ յերիտասարդներ, նոր-նոր միչման[1]) դարձածներ՝ հենց այստեղ դահլիճում կրակոտ ճառեր եյին արտասանում, ընդ ամին նրանցից մեկն իմ բացակայությանն առանց այլևայլության հայտարարեց, վոր ինձ, վորպես ակնհայտնի «բուրժուայի» պետք է գնդակահարել, ինչ, ըստ յերևույթին, նավաստիները դեմ չեյին կատարելու»:

Այսպիսի ձև են ստանում Ռոձյանկոյին սարքվող ովացիաները, վորոնց մասին մենք կարդում եյինք ֆրանսիական լրագրերում, իրեն իսկ Ռոձյանկոյի շարադրության մեջ, դեպքից չորս տարի անց: Դուք տեսնում եք, վոր այդ ովացիաները չափազանց ինքնորինակ բնույթ ունեն: Միանգամայն պարզ է, վոր Պետերբուրգում այն ժամանակ իշխանությունը մասսան եր պահում և վոր իսկական տերն այդ մասսայի կազմակերպված վերին խավն եր՝ հանձինս Բանվորական Պատգամավորների Խորհրդի: Յես նմուշներ եմ բերել իմ հոդվածում: Յես կարող եմ մի այլ նմուշ բերել: Դուք գիտեք, վոր Նիկոլայի մոտ նրա հրաժարման համար մեկնել եյին Շուլգինը և Գուչկովը, բայց սկզբում Նիկոլայի հրաժարումը Պետերբուրգ բերելու այս բարձր պատվին ձգտում եր ինքը Ռոձյակոն և այդ նպատակով Պետական Դումայի նախագահի իշխանությունով ուզում եր գնացք ստանալ: Նրան գնացք չտվին: Նա ստիպված եր գնդապետին, իր ադյուտանտին ուղարկել Բանվորական Պատգամավորների Խորհուրդը գնացք խնդրելու, բայց Բանվորական Պատգամավորների Խորհուրդն էլ գնացք չտվեց, և այդ պատճառով Ռոձյանկոն չգնաց: Ասենք, Գուչկովն ու Շուլգինն էլ միայն սաբոտաժի շնորհիվ կարողացան մեկնել: Նրանք կայարան գնացին և այնտեղ մասնավոր ձևով մի ինչ-վոր ճարտարապետ նստեցրեց նրանց ինչ-վոր գնացք, այնպես վոր նրանք էլ Պետերբուրգից վոչ թե վորպես իսկական կառավարության ներկայացուցիչներ հանդիսավոր կերպով գնացին, այլ դիպվածով մի կերպ դուրս թռան:

Այսպիսով, Պիտերի տերը Բանվորական Պատգամավորների Խորհուրդն եր: Այն հարցին, թե կարո՞ղ եր արդյոք այս մոմենտին Պիտերում բանվորական կառավարություն կազմվել, պետք է պատասխանել ամենակատեգորիկ պնդումով. այո, յեթե Պետերբուրգում լիներ Լենինը, լիներ բոլշևիկյան վերին խավը, յեթե բոլշևիկներն էլ ի թիվս մյուսների այս հեղափոխությամբ հանկարծակիի բերված չլինեյին (վոր և նրանք բոլորն էլ միաձայն ընդունում են), ապա, իհարկե, կարելի յեր խնայել յերկրորդ հեղափոխությունը, վորն այնուամենայնիվ բավական շատ պրոլետարական արյուն արժեր, և միանգամից սահմանել այն ռեժիմը, վոր սահմանվեց մեզ մոտ 1917 թ. հոկտեմբերից հետո. յեթե այդ չպատահեց, ապա միայն շնորհիվ այն բանի, վոր այն ինտելիգենցիան, վորն անսպասելիորեն և մասամբ ակամայից հանդես յեկավ վերին խավերում, մասսայի անկազմակերպված մասի, այսինքն՝ Բանվորական Պատգամավորների Խորհրդի կազմակերպիչը հանդիսացավ՝ այդ ինտելիգենցիան զգալի չափով ոգնեց իրագործել պալատական հեղաշրջման այն ծրագիրը, վորը տապալվեց բանվորա-

[1]) Միչման—նավատորմի սպայական առաջին աստիճանը: Ծ. Խմբ.

կան հեղափոխության կողմից, իրագործել նրանից թեկուզ այն մասը, ինչ դեռ կարելի յեր: Նույնիսկ բոլշևիկյան Պիտերը, ըստ ընկ. Շլյապնիկովի, բոլշևիկներից, մենշևիկներից և եսերներից բաղկացած կոալիցիոն կառավարության տեսակետի վրա յեր կանգնած, այսինքն՝ այլ խոսքով ասած՝ այնպիսի կառավարության տեսակետի վրա, վորը յերբեք չեր կարող պրոլետարիատի և նույնիսկ չքավոր գյուղացիության շահերի արտահայտիչ համարվել, վորովհետև եսերները, բոլորի համար պարզ է, վոր այն ժամանակ էլ կուլակային մանր-բուրժուական կուսակցություն եյին: Նույնիսկ Պիտերի բոլշևիկները կոալիցիայի ձևով եյին պատկերացնում հեղափոխական կառավարությունը: Բայց չէ՞ վոր Պիտերի բոլշևիկներն այս ինտելիգենցիայի ծայրահեղ ձախ թևն եյին կազմում: Յեթե նրանք էլ կոալիցիայի կողմնակից եյին և այլ կերպ չեյին կարողանում պատկերացնել հեղափոխական կառավարությունը, ապա ի՞նչ պետք եր սպասել մենշևիկներից և եսերներից: Սրանք ուղղակի հայտարարում եյին, վոր յեթե կոալիցիայի մեջ չգրավել նաև կադետներին, ապա ամեն ինչ կորած է, ինչպես այդ գրել է Սուխանովը, վորն ուղղակի ասել է. «Ցարիզմին փոխարինող իշխանությունը կարող է միայն բուրժուական լինել: Տրեպովին և Ռասպուտինին պետք է և կարող են փոխարինել միայն «պրոգրեսիվ բլոկի» ղեկավարները: Նման վորոշման ընթացք պետք է բռնել: Այլապես հեղաշրջումը չի հաջողվի և հեղափոխությունը կկործանվի»:

Սուխանովի այս տողերը և միքանի այլ տողեր առաջացրին Իլյիչի շատ խիստ քննադատությունը Սուխանովի առթիվ՝ նրա մահվանից առաջ գրած հոդվածներից մեկում: Յես ինքս անձամբ վոչինչ վատ բան չեմ ուզում ասել Ն. Ն. Սուխանովի մասին, բայց բերում եմ նրա ցիտատը, վորպես այն ինտելիգենտական վերին խավի կարծիքի նմուշ, վորն ըստ անհրաժեշտության գլխավորում եր բանվորական շարժումը: Յեվ ահա Միլյուկովի մոտ, վորը նույն Սուխանովի նկարագրությամբ շփոթված տեսքով քայլում եր Տավրիկյան պալատում և բառացիորեն չգիտեր, թե ուր դնի գլուխը, յեկան վորպես Ռյուրիկի և նրա յեղբայրների մոտ, սկսեցին գլուխ խոնարհել և ասել. «յեկեք, տիրապետեցեք և իշխեցեք մեզ»: Բնականաբար Միլյուկովը հոգով բարձրացավ: Բանից դուրս է գալիս, վոր նա վոչ միայն պետք է, այլև՝ անհրաժեշտ: Յեվ Միլյուկովը, Գուչկովը, Լվովը և այլ «հեղափոխականներն» իրենց բարյացակամ համաձայնությունը հայտնեցին գլխավորելու ռուսական հեղափոխությունը, գլխավորելու այն նպատակի համար, վորը հետապնդում եր արդյունաբերական կապիտալն ամբողջ ժամանակամիջոցում, մի նպատակ՝ շարունակել պատերազմն ինչ գնով էլ վոր լինի: Ինչպես Ռասպուտինի պացիֆիզմի համար գերմանական փողերի կարիքը չկար, այնպես էլ Անտանտայի փողերի կարիքը չկար բացատրելու համար, թե ինչու ռուսական առաջին հեղափոխական կառավարությունը վճռականապես կանգնեց իմպերիալիստական պատերազմը մինչև իր հաղթական վախճանը շարունակելու տեսակետի վրա: Սա միանգամայն բնական է, այլ կերպ չեր էլ կարող լինել: Պալեոլոգը պատմում է, վոր նա հենց սկզբից նկատեց Կերենսկուն (Կերենսկուն, վորը Նիկոլայի դեմ պալատական դավադրության մասնակիցն եր,—հիշում եք այդ քաղվածքը Շլյապնիկովից), վորպես Անտանտայի համար ամենահարմար մի դեմք, վորի շուրջն Անտանտան կարող է կազմել միևնույն ժամանակ մասսաների

վստահությունը վայելող և իմպերիալիստական ճանապարհով, կամ ավելի ճիշտ Անտանտայի հետ դաշնակցած մինչև հաղթական վախճանի պատերազմը գնացող կառավարություն։ Այսպիսով, վոր այս ժամանակավոր կառավարությունը հին արտաքին քաղաքականությանը՝ Դարդանելը ներառյալ, հավատարիմ դուրս յեկավ, սա ինքնըստինքյան հասկանալի յեր։ Ճիշտ նույնպես ինքնըստինքյան հասկանալի յեր, վոր պլեբեյան հեղափոխությունը հակապատերազմյան հեղափոխություն եր նախ և առաջ։ Այդ չեր կարող չնկատել նույն Սուխանովը, վորը վորոշակի ասում ե, վոր փետրվարին Պետերբուրգում բոլոր միտինգներում հնչող նոտան եր «կորչի պատերազմը»։ Դա նա բացատրում եր Պետրոգրադի պրոլետարիատի «ցիմմերվալդյան դաստիարակությամբ», այսինքն՝ բացատրում եր, ինչպես և պետք եր սպասել՝ իդեալիստորեն, վորոշ գաղափարի տեսակետից։ Իսկ իրականում դա բացատրվում եր, իհարկե, նրանով, վոր ռուսական պրոլետարիատը վերջին հաշվով ավելի լավ եր արտացոլում ռուսական ժողովրդական տնտեսության շահերը, քան թե ռուսական բուրժուազիան։ Նա ավելի շատ եր շահագրգռված այդ տնտեսական փրկությունով։ Նա չեր կարող պարզ չհասկանալ, վոր պատերազմը կործանիչ ե այդ տնտեսության համար, վոր պատերազմը նրա քայքայումն ե։ Յեվ հանձինս պրոլետարիատի, այսպես ասած, բնազդաբար կործանվող ռուսական ժողովրդական տընտեսության ձայնն եր լսվում։ Ռուսական հողի այս գլխավոր աշխատավորը՝ ամենագիտակից՝ համենայն դեպս ուրիշներից լավ եր հասկանում, վոր այլես չի կարելի պատերազմել, վորովհետև դա լիակատար փլուզում ե նշանակում։ Յեվ այն, վոր պատերազմը յերկարում ե ևս ութ ամսով, ինչպես դուք կտեսնեք հաջորդ դասընթացքից՝ Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունից՝ ուժեղ չափով խորացրեց այս տնտեսական քայքայումը։ Յեթե պատերազմը փետրվարին վերջանար, քայքայումն ավելի փոքր կլիներ, և մենք մեր որացույցային պլանով կլինեյինք վոչ թե 24, այլ 27 թվականում՝ մեր արդյունաբերության և այլն դրության տեսակետից։ Պետք եր փրկել ռուսական ժողովրդական տնտեսությունը, և այդ փրկության համար հանդես յեկավ ռուսական պրոլետարիատը։ Սրանում ե, գործածելով հնացած արտահայտություն՝ նրա մեծ պատմական միսսիան ռուսական հեղափոխության մեջ։ Յեվ նա իրոք փրկեց այն։ Միայն պրոլետարիատի դիկտատուրան կարող եր այն իրագործել։

Այսպիսով, Պիտերի պրոլետարական մասսայի տրամադրությունը պատերազմի վերաբերմամբ միանգամայն վորոշ եր։ Պատրանք կարող եր լինել մնացած Ռուսաստանի նկատմամբ, և առանձնապես պատրանք կարող եր լինել բանակի նկատմամբ։ Յեվրոպական (անտանտային) ժուռնալիստները՝ խոսելով ռուսական հեղափոխության իմաստի և նշանակության մասին, առաջին տեղն եյին տալիս Պիտերի կայազորի ռուսական զինվորներին, իբր թե, հայրենասիրական ցույցերին։ Բայց դուք գիտեք իմ կարդացած Ռոձյանկոյի հիշողությունների քաղվածքներից, թե ինչումն եյին կայանում այդ հայրենասիրական ցույցերը Պիտերում։

Ինչպես եր տրամադրությունը ճակատում։ Նրա դրությունը պարզեց բանակների հրամանատարների կոնֆերանսը, վորը գումարվեց Պիտերում մայիսի 4-ին, այսինքն՝ մոտավորապես հեղափոխությունն սկսվելուց յերկու ամսից հետո։ Դա շատ ավելի շուտ եր, քան ծավալվեց բոլշևիկյան ագի-

տացիան։ Բոլշևիկյան ագիտացիայի առաջին հաջողությունը ֆաբգործկոմների առաջին կոնֆերանսն եր մայիսի 30-ին, առաջին ժողովը Ռուսաստանում՝ վոչ թե կուսակցական, այլ անկուսակցական, ուր ձայների ճնշող մեծամասնությամբ բոլշևիկյան բանաձև, Լենինի և Զինովևի բանաձևն ընդունեցին։ Իսկ բանակների հրամանատարների խորհրդակցությունը տեղի ունեցավ մայիսի 4-ին՝ բոլշևիկների այս առաջին հաղթանակից ավելի քան յերեք շաբաթ առաջ, և այն բոլորի հանրագումարը տվեց, ինչ տեղի չեր ունենում փետրվարից։ Ահա թե ինչու, յերբ մենք փորձում ենք ըստ գլխավոր հրամանատարների այս խորհրդակցության պատկերացնել ռուսական բանակի տրամադրությունը, մենք կարող ենք մի կողմ թողնել բոլշևիկյան ագիտացիան։ Նա դեռ ևս չկար, նա դեռ չեր ծավալվել, նա նույնիսկ Պիտերի պրոլետարիատին վերջնականապես չեր ընդգրկել, իսկ միևնույն ժամանակ ահա թե ինչ եր պատմում իր զինվորների տրամադրության մասին հարավ-արևմտյան ճակատի հրամանատար՝ գեներալ Բրուսիլովը. «Գնդերից մեկը հայտարարեց, վոր նա վոչ միայն հրաժարվում ե առաջխաղացումից, այլ ուզում ե ճակատից հեռանալ և տները ցրվել։ Կոմիտեներն այս շարժման դեմ գնացին, բայց նրանց հայտարարեցին, վոր նրանց կփոխարինեն։ Յես յերկար համոզում եյի գունդը, և յերբ հարցրի, թե համաձա՞յն են արդյոք ինձ հետ, ինձանից թույլտվություն խնդրեցին գրավոր պատասխան տալու։ Միքանի րոպեյից հետո ինձ մի պլակատ ներկայացրին. «Հաշտություն—ինչ գնով ել վոր լինի, կորչի պատերազմը»։

Հետագա զրույցի ժամանակ զինվորներից մեկը հայտարարեց. «ասված ե առանց աննեկսիայի, ել ինչնե՞րիս ե պետք այս սարը»։ Յես պատասխանեցի. «այս սարն ինձ ևս հարկավոր չե, բայց պետք ե հարվածել սարը գրավող թշնամուն»։

«Հետևանքն այն յեղավ, վոր ինձ խոսք տվին կանգնել, բայց առաջխաղացումից հրաժարվեցին՝ այսպես պատճառաբանելով. «մեր թշնամին լավն ե և հայտնեց մեզ, վոր առաջ չի շարժվի, յեթե մենք չշարժվենք։ Մեզ համար կարևոր ե տուն վերադառնալ՝ ազատությունից և հողից ոգտվելու համար. ել ինչու՞ այստեղ հաշմանդամ դառնանք»։

Սա պարզ մուժիկի պատճառաբանություն եր, վորը սակայն վկայում եր այն, վոր ճակատում չեյին ուզում պատերազմել։ Սա մի գնդին ե վերաբերում։ Բայց ահա Բրուսիլովն սկսում ե պատմել կորպուսի մասին. «Ականավոր կորպուսներից մեկը զորաճակատի պասսիվ շրջանն եր գրավեցնում, նրան ուզում եյին փոխադրել ավելի ակտիվ շրջան, բայց կորպուսը հրաժարվեց, ցանկանալով մնալ իր նախկին վայրում և միաժամանակ «բոլորին» հեռագրեր ուղարկեց»։

Հետո հանդես ե գալիս մի այլ գլխավոր հրամանատար՝ գեներալ Դրագոմիրովը։ «Տիրապետող տրամադրությունը բանակում հաշտության ծարավն ե։ Բանակում ժողովրդականություն հեշտությամբ կարող ե ձեռք բերել նա, ով հաշտություն առանց աննեկսիայի և ժողովուրդներին ինքնորոշում քարոզի։ Յուրահատուկ ձևով հասկանալով «առանց աննեկսիայի» լոզունգը, ի վիճակի չլինելով հասկանալ տարբեր ժողովուրդների դրությունը, խավար մասսան ավելի ու ավելի հաճախ հարց ե տալիս. «ինչու՞ մեր հայտարարությանը չի միանում մեր դաշնակիցների դեմոկրատիան»։ Հաշտության

ձգտումն այնքան ուժեղ է, վոր յեկող լրացումները հրաժարվում են զենք վերցնելուց,—«ինչներիս է պետք, մենք չենք պատրաստվում պատերազմել»։ Աշխատանքները կանգ առան։ Անհրաժեշտ է նույնիսկ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի չքայքայվեն խրամատները և ճանապարհները նորոգվեն»։

Հետո հանդես է գալիս յերրորդ գլխավոր հրամանատարը՝ գեներալ Շչերբաչյովը. «Նորերս նշանակված լինելով՝ յես կարողացա լինել ինձ յենթակա բոլոր ռուսական բանակներում և այն տպավորությունը, վոր յես ստացա զորքի բարոյական դրության և նրանց ռազմունակության մասին, զուգադիպում են նրան, ինչ նոր ձեզ մանրամասն պատմեցին։ Այս յերևույթի ամենագլխավոր պատճառը մասսաների անգրագիտությունն է»։

Յես բերում եմ գեներալական այս բոլոր բացատրությունները, դրանք ես բնորոշ են։ Թվում է, վոր շարքային մասսայի ցանկությունը, վորը բացատրություններ է պահանջում,—ինչու արևմտա-յեվրոպական դեմոկրատիաները չեն հայտարարում, վոր նրանք չեն ցանկանում աննեկսիաներ և կոնտրիբուցիաներ, միանգամայն խելացի հայտարարություն, բայց գեներալ Դրագոմիրովն այդ խավարով է բացատրում, իսկ գեներալ Շչերբաչյովը բացատրում է մասսաների անկիրթ լինելով։ «Իհարկե, մեր ժողովրդի մեղքը չէ, վոր նա անկիրթ է։ Սա ամբողջովին հին կառավարության մեղքն է, վորը լուսավորության հարցերին ներքին գործոց մինիստրության աչքերով էր նայում, բայց այն փաստերի հետ, վոր մասսաները դժվար են հասկանում մեր դրության լրջությունը, վոր նրանք սխալ են մեկնաբանում նույնիսկ ճիշտ գաղափարները, անհրաժեշտ է հաշվի նստել։ Շատ որինակներ չեմ բերի։ Յես կմատնանշեմ միայն ռուսական բանակի լավագույն դիվիզիայից մեկը, (դա, յերևի 16-րդ դիվիզիան է), վորը նախկին պատերազմներում «յերկաթե» կոչմանն արժանացավ և փայլուն կերպով պահպանում էր իր անցյալ փառքը նաև այս պատերազմի մեջ։ Կանգնած լինելով զորաճակատի ակտիվ շրջանում, այս դիվիզիան հրաժարվեց առաջխաղացման համար ճարտարապետական նախապատրաստական աշխատանքներ սկսելուց՝ պատճառաբանելով նրանով, վոր չի ցանկանում հարձակում սկսել։ Նման դեպք պատահեց նորերս նաև այս դիվիզիային հարևան մի այլ, նույնպիսի լավ հրաձիգ դիվիզիայում» և այլն։ Ուրիշ քաղվածքներ չեմ բերի, բայց յերեք հրամանատարներից մեկը պատմեց, թե «յերբ Դվինսկի մոտ գերմանացիք սկսեցին յեղբայրանալ գնդից գունդ, և սպաներից մեկն այդ արգելեց ու յեղբայրացումը խափանեց, այդ սպան ստիպված էր փախչել»։ Յեվ,—շարունակում է նա,—ամբողջ գիշերը նրա Պյատիգորսկի խմբի զինվորները Դվինսկ քաղաքում փնտրում էին նրան, վոր սպանեն։ Այս փաստը բնորոշ է հատկապես նրանով, վոր նա տեղի ունեցավ հեղափոխության առաջին իսկ որերին, կարծեմ, Պետերբուրգում պրոլետարիատի հաղթանակից մի շաբաթ հետո։ Այսպիսով, վոչ մի բոլշևիկյան ագիտացիա հարկավոր չէր, մի ագիտացիա, վորն, ինչպես ասում էին, գերմանացիների կողմից կաշառված էր և այլն նրա համար, վորպեսզի հակապատերազմյան տրամադրությունը լայն կերպով ծավալվեր ռազմաճակատում։

Սա դեռ քիչ է, մենք ունենք սրա ապացույցը նաև Նիկոլայի հուշատետրում. Նիկոլայը բացատրում է, թե ինչու նա ստորագրեց իր հրաժարումը, և նրա բացատրություններից մեկը, թե ինչու նա հրաժարվեց ցարական իշխանությունից, հետևյալն է. «զինվորներին ռազմաճակատում

պահելու համար»։ Ակներև է, վոր դեռևս Նիկոլայի հրաժարումից առաջ արդեն կար ֆրոնտից հեռանալու ձգտում, և Նիկոլային շրջապատող գեներալները հավատացնում էին նրան, վոր զինվորները չեն ուզում կռվել, վորովհետև,—չգիտեմ թե ինչպես էին նրանք նրան այդ ասում,– բայց կարող եմ յենթադրել, յերևի այսպես. ձերդ գերազանցություն, ասում են, վոր դուք գերմանացիների հետ փափսում եք և այլն։ Պետք է, վոր հաստատուն ազգային կառավարություն լինի, այլապես ռազմաճակատը կքայքայվի։ Այսպես թե այնպես, փաստն այն է, վոր արդեն Նիկոլայի հրաժարումից առաջ ճակատը քայքայվում էր, բանակը չէր ուզում պատերազմել, բանակը հաշտություն էր ուզում։ Այն ընկերը, վոր կկարդա ձեզ Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունը, ներածության մեջ, յերևի, կպատմի ձեզ, թե ինչպես Ժամանակավոր Կառավարության ամբողջ քաղաքականությունը 1917 թվի ամռանը վոչ այլ ինչ էր, յեթե վոչ պատերազմի դիակը գալվանացնելու հսկայական՝ յերբեմն հաջող փորձ։ Միլյուկովն ու Լվովը սրան քիչ էին ընդունակ, վորովհետև բոլորն էլ շատ լավ գիտեյին նրանց դարդանելյան համակրանքները։ Նրանց այս դարդանելյան համակրանքները բռնեցին և, ինչպես գիտեք, ապրիլ-մայիսին նրանց հեռացրեցին Գուչկովի և ուրիշների հետ։ Զուր չէր, վոր այն ժամանակ Պալեոլոգը Կերենսկուն մատնանշեց, և զուր չէր վոր ստեղծվեց կվազի-սոցիալիստական կառավարություն «սոցիալիստ» Կերենսկու գլխավորությամբ։ Այս կառավարությունն իր առաջին խնդիրը համարեց պատերազմի վերականգնումը։ Նա հենց նրա համար էլ ստեղծվեց, վորպեսզի վերանորոգի պատերազմը, և նա յել անմիջապես 1917 թվի առաջխաղացման նախապատրաստությունն սկսեց, վորն առաջին խթանը հանդիսացավ հուլիսյան որերի համար։ Պատերազմի վերանորոգումը—սա Կերենսկու կոալիցիոն կառավարության առաջին խնդիրն էր, նա հենց նրա համար էլ ստեղծված էր, վորպեսզի դուրս բերի բանակն այս դրությունից։ Այս է վկայում Կերենսկու նշանավոր նամակը Լլոյդ-Ջորջին, վոր յես հրապարակեցի «Вестник агитации и пропаганды»-ում։ Թույլ տվեք այն հիշեցնել։ Նա գրում է արդեն առաջխաղացումից հետո, նրա անհաջողությունից հետո, 1917 թվի սեպտեմբերին Լլոյդ-Ջորջին. «Վորքան էլ դժվար լինի Ռուսաստանի դրությունն ընդհանուր գործի տեսակետից (Կերենսկին ընդհանուր գործ ուներ Լլոյդ-Ջորջի հետ), մենք կարող ենք պնդել, վոր նա ավելի լավ է, քան թե անցյալ գարնանն էր (այսինքն՝ անմիջապես հեղափոխությունից հետո)։ Այն ժամանակ մեր ռազմաճակատում փաստորեն զինադադարի դրություն էր—«յեղբայրացման» պրոպագանդայի և զինվորական դիսցիպլինայի անկման հետևանքով։ Այս դրությունն ավելի ես անհանգստություն էր պատճառում, վոր գերմանացիք մեզ հետ հաշվի էին նստում՝ խուսափելով ամեն մի ռազմական գործողությունից մեր ճակատում և հույս ունենալով այս ձևով ազատված զինվորական ուժերը մեր դաշնակիցների դեմ հանելու։ Գիտակցելով դրության ամբողջ վտանգավորությունը, Ժամանակավոր Կառավարությունը վճռեց ինչ գնով էլ վոր լինի նրան վերջ տալ։ Մեր առաջխաղացումը՝ չնայած սկզբի հաջողությանը՝ անհաջողությամբ վերջացավ։ Այնուամենայնիվ, նրա գլխավոր նպատակը՝ վերջ դնել զինադադարի դրությանը և վերանորոգել պատերազմը (սա գլխավոր նպատակն է՝ վերականգնել պատերազմը) պետք է ընդունել մեծ զոհերի գնով ձեռք բերված նպատակ»։ Կերենսկու կոալիցիայի ամբողջ իմաստը նրանումն

եր, վորպեսզի պատերազմը վերականգնի, վորն ինքն իրեն եր վերջանում՝ շնորհիվ Պետրոգրադի պրոլետարիատի գիտակցական բողոքի՝ ընդդեմ պատերազմի և ֆրոնտում զինվորների չպատերազմելու անգիտակից, տարերային ցանկության։ Ահա թե ինչպիսի պատկեր եր, և ահա թե ինչու իր դրոշի վրա «Նախ և առաջ հաշտություն» հայտարարած կուսակցությունը, կամ, ավելի ճիշտ, ժողովուրդների պատերազմը դասակարգային պատերազմ դարձնելը և սոցիալիստական հեղափոխությունը,—ահա թե ինչու այս կուսակցությունն այդպիսի վախի առարկա յեր և այն ժամանակվա բոլոր գործող անձանց համար՝ ներառյալ և այն ժամանակվա «սոցիալիստներին», այդպիսի զզվանքի առարկա յեր, և ահա թե ինչու ամենաշտապ միջոցներ եյին ընձեռնվում, թեկուզ այդ կուսակցության վերին խավը՝ նրա շտաբը Ռուսաստան չթողնելու համար։

Յես պատմել եմ իմ մի հոդվածում, վորը, յերևի, բոլորդ չեք կարդացել, վոր Գերմանիայի վրայով, այսպես կոչված, «կնքված» վագոնում Լենինի ճանապարհորդության իմաստը հենց նրանումն եր, վոր նա փշրեց այդ բլոկադան ընդդեմ բոլշևիկների։ Վոր բոլշևիկներին չեյին թողնում, չեյին ուզում թողնել, սրա մասին յես ամենահեղինակավոր ապացույցներն ունեմ։ Այն ժամանակ յես աշխատում եյի Պարիզի Ազգային Գրադարանում։ Այնտեղ յես ստացա ընկ. Վլադիմիրովից առաջին լուրը փետրվարյան հեղափոխության մասին։ Նա բերեց և սեղանիս վրա վրեց «Information»-ի համարը—Նիկոլայի հրաժարման և այլ լուրերով։ Յեվ յերբ, մի յերեք շաբաթ անց յես նստած եյի իմ սեղանի առաջ և գրքերն եյի քրքրում, ըստ իմ սովորության, ինձ մոտ նստեց, յես կարող եմ այդ այստեղ ասել, Պողները—բավական հայտնի լեհական հրապարակախոս անտանտյան ուղղությամբ, վորն ինձ գրադարանից գիտեր, բայց չգիտեմ, գիտե՞ր արդյոք, վոր յես բոլշևիկ եմ, թե՞ վոչ։ Մենք նրա հետ միայն գրական հարցերի մասին եյինք խոսում՝ խուսափելով քաղաքական նյութերից։ Նա ինձ հարցրեց. «Ո՞վ ե Ալեքսինսկին»։ Յես շատ զարմացա, վոր նա չգիտե, թե ով ե Ալեքսինսկին։ Յես տվի այդ անձի բնութագրությունը։ Պողները դրանից հետո հանգստացավ և ասաց. «Այդ լավ ե, իսկ ինձ ասում եյին, վոր նա բոլշևիկ ե»։ «Իսկ ինչո՞ւ եյին ձեզ ասում, վոր նա բոլշևիկ ե»։ Այստեղ Պողները կմկմաց և ասաց. «Ինձ հանձնարարված ե միքանի ռուս եմիգրանտների քաղաքական դեմքը պարզել, վորոնք միջնորդում են Ռուսաստան անցնելու թույլտվություն ստանալու համար։ Մյուսներին յես քիչ թե շատ գիտեմ, իսկ ահա Ալեքսինսկին ինձ համար պարզ չե. կարծես թե վերջերս նա յելույթ ունեցավ հոգուտ պատերազմի։ Իսկ մյուս կողմից ասում են, վոր նա բոլշևիկ ե»։ Ըստ եյության մարդը խոստովանվեց, վոր կարգադրություն կա՝ «բոլշևիկներին Ռուսաստան չթողնել»։ Յեվ ահա, յերբ Լենինն անցավ Գերմանիայի վրայով, այն ժամանակ միանգամից կարծես թե սառույցը ջարդվեց։ Փարիզում մեզ անմիջապես դեսպանատուն հրավիրեցին և ասում են. Նավեր կան, վորոնք ձեզ կտանեն և այլն։ Իսկ միևնույն ժամանակ խոստացան մեզ ապրիլին, իսկ նավերը տարան ոգոստոսին, այսինքն վորքան հնարավոր ե ձգձգում եյին մեր մեկնումը։ Վոչ միայն Ալեքսինսկու մասին, այլ ավելի ձախ ուղղության մարդկանց մասին վոչ վոք վոչ մի տեղեկություն չեր հավաքում։ Վերին աստիճանի սիրալիր եյին։ Սա հենց զուգադիպում ե Լենինի անցնելու հետ Գերմանիայի վրայով։ Նրանք տեսան, վոր բոլշևիկ-

ներին Ռուսաստան չթողնել նրանք չեն կարող, և միանգամից փոխեցին իրենց տակտիկան։ Բոլշևիկները Ռուսաստան ընկան։

Թե ինչպես եյին նրանք գործում, դուք կիմանաք Հոկտեմբերյան հեղափոխության դասընթացքից, մասամբ դուք արդեն գիտեք, իհարկե։ Բայց յես չեմ կարող չընդգծել մի փաստ, վոր բոլշևիկների առաջ անմիջապես ծառացավ սոցիալիստական հեղափոխության պրոբլեմի փաստը, ծառացավ ոբյեկտիվորեն։ Այս փաստը պետք ե ընդգծել։ Սոցիալիստական հեղափոխությունը Լենինը չբերեց իր գլխում արտասահմանից։ Ընդհակառակը, մենք փաստաթուղթ ունենք, վորը վկայում ե, վոր Շվեյցարիայում, յերբ դեռ Լենինը ճիշտ տեղեկություններ չուներ այն մասին, թե ինչ ե կատարվում Պիտերում և Ռուսաստանում ընդհանրապես, քանի նա անջատված եր այս բոլորից լրագրային ստի պատով, նա ինքն ել բուրժուական հեղափոխությունը վերջացնելուց այն կողմ չեր գնում։ Այդ փաստաթուղթը նրա նամակն ե շվեյցարական բանվորներին՝ գրված Շվեյցարիայից մեկնելուց միքանի որ առաջ։ Այնտեղ նա ուղղակի ասում ե, վոր Ռուսաստանն ամենամանր բուրժուական յերկիրն ե Յեվրոպայում և, իհարկե, չի կարող սոցիալիստական հեղափոխության անմիջական բեմ լինել, բայց նա հույս ունի, վոր դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում խթան կհանդիսանա սոցիալիստական հեղափոխության համար Արևմուտքում։ Սովորական մի սքեմա, վոր կարող եք գտնել Մարքսի, Ենգելսի և ուրիշների—վերջացրած Պլեխանովով ու Ռոզա Լյուկսեմբուրգով—գրվածքներում։ Յեվ միայն Ստոկհոլմում ռուսական հեղափոխության ականատեսներին տեսնելով և իմանալով, թե ինչ ե իրոք կատարվում Ռուսաստանում, նա գրում ե իր նշանավոր թեզիսները, ուր կա սոցիալիստական հեղափոխությունը։ Ի՞նչ ե սոցիալիստական հեղափոխությունը։ Դա ըստ եյության արտադրության անցումն ե բանվորների ձեռքը։ Յես արդեն հիշատակել եմ, վոր ռուսական հեղափոխության ամբողջ իմաստը նրանումն եր, վոր պրոլետարիատը դուրս յեկավ պաշտպանելու պատերազմի կողմից քայքայվող ռուսական ժողովրդական տնտեսությունը։ Բայց գործն ավելի կոնկրետ եր, քան կարող ե թվալ իմ այս նախադասությունից։ Ահա մի քաղվածք 1917 թ. մայիսի 30-ին ֆաբզործարկոմների առաջին կոնֆերանսի պատգամավորի ճառից. «Փետրվարյան և մարտյան որերին,—ասում եր Վորոնկով բանվորը,—բանվորները թողին իրենց դազգյահները և փողոց դուրս յեկան, վորպեսզի միանգամ ընդ միշտ վերջ տան ցարիզմի բազմագլուխ ոձին։ Ֆաբրիկաներն ու գործարանները կանգ առան։ Հետո մի-յերկու շաբաթ անց, բանվորական մասսաները գործարանները վերադարձան։ Յեկան և տեսան, վոր շատ ձեռնարկություններ ադմինիստրացիան բախտի բերմունքին եր թողել»։

«Ստիպված յեղան այդ գործարաններում աշխատանք սկսել առանց ադմինիստրացիայի։ Բայց ինչպես։ Յեվ այստեղ գործարաններն անմիջապես գործարանային կոմիտեներ ընտրեցին, վորոնց ոգնությամբ սկսվեց նորմալ կյանքը ֆաբրիկաներում և գործարաններում»։

«Հետո հեղափոխությունն իր հունի մեջ մտավ և ավելի հանգիստ հոսեց։ Փախստականները տեսան, վոր բանվորներն այնքան ել արյունարբու չեն... Յեվ սկսեցին վերադառնալ գործարանները։ Նրանց մի մասին՝ միանգամայն չնչին և անհուսալի ռեակցիոն մասին՝ բանվորները թույլ չտվին աշխատանքի անցնելու։ Մյուսներին թույլատրեցին, բայց հենց այստեղ

նրանց ոգնականներ տվին գործարանային կոմիտեների անդամներից։ Եվ այսպիսով փաստացի հսկողություն սահմանվեց այն բոլորի վրա, ինչ կատարվում եր գործարանում»։

Արտադրության անցումը բանվորական մասսայի հսկողության ներքո սկզբում կատարվում եր տարերայնորեն, վորովհետև ֆաբրիկանները կանգ եյին առնում, իսկ բանվորները չեյին ուզում, վոր նրանք կանգ առնեն։ Դուք հետո կիմանաք Հոկտեմբերյան հեղափոխության դասընթացքից, վոր դա միջադեպ չեր, վոր դա յերկարատև պայքար եր, յերկարատև պրոցես եր 17 թվականի ամբողջ ամռան ընթացքում։ Ֆաբրիկանտները նախատեսնում եյին պատերազմի վերջը, տեսնում եյին, վոր պատերազմը տարերայնորեն վերջանում ե, իսկ պատերազմը, ինչպես գիտեք, գլխավոր շուկան եր։ Այդ պատճառով նրանք ձգտում են կրճատել արտադրությունը և գործարանները կոնսերվացիայի յենթարկել, վորպեսզի ավելի լավ որերի սպասեն և սկսեն արտադրությունը լրիվ ընթացքով, յերբ, այսպես ասած, ամեն ինչ կարգի կընկնի, այսինքն նրանց պատկերացումով՝ յերբ հեղափոխությունը կճնշվի։ Այս ֆոնի վրա ամենավառ միջադեպը Մոսկվայի ռազմա-արդյունաբերական կոմիտեյի նախագահի՝ Սմիրնովի հետ պատահած պատմությունն ե, վորն իր ֆաբրիկայում սիստեմատիկ կերպով թագցնում եր հումույթի պաշարը, իր ճարտարապետների ուռցրած կեղծ հաշվետվություններում ավելի հնացած եր ներկայացնում մեքենաները, քան նրանք իրոք եյին։ Մի խոսքով 1917 թվին մինչև հոկտեմբերը նրանք զբաղվում եյին իրենց արտադրության իսկական սաբոտաժով՝ ձգտելով կոնսերվացիայի յենթարկել իրենց գործարանները, վորովհետև վոչ մի հնարավորություն չեյին տեսնում շարունակելու արտադրությունն ոգուտով իրենց համար, իսկ նրանք արտադրությունը հենց նրա համար ել վարում եյին։ Վորովհետև բուրժուազիան արտադրությունը վարում ե վոչ թե առանց շահագիտական նպատակների, այլ ոգուտի համար։ Իսկ յեթե ձեռնարկությունն ոգուտ չի տալիս, բնական ե, վոր ձեռնարկուն՝ ձգտելով փրկել իր կապիտալը՝ դադարեցնում ե արտադրությունը։ Նա այդ անում եր մանր բաներով յուրաքանչյուր ճգնաժամի առթիվ, նա այդ անում եր նաև հսկայական ճգնաժամի շրջանում, վորը ռուսական հեղափոխություն ե կոչվում։ Եվ բանվորներն ստիպված եյին մի անգամ ևս միջամտել, վորպեսզի արտադրությունը շարունակվի, վորպեսզի խանգարեն ֆաբրիկանտին դադարեցնելու արտադրությունը։

Այսպիսով, փետրվարյան հեղափոխությունը վոչ միայն բանվորական հեղափոխություն եր, վոչ միայն պրոլետարական հեղափոխություն եր այն մասսայի սոցիալական կազմով, վորը գահընկեց արավ ինքնակալությունը և փաստորեն իշխանության գլուխն անցավ, այլ անխուսափելիորեն նաև սոցիալիստական հեղափոխություն եր՝ միանգամայն ոբյեկտիվ կերպով։ Վոչ թե Լենինը, կրկնում եմ, իր գլխում բերեց այդ սոցիալիստական հեղափոխությունն արտասահմանից, այլ Լենինի հանճարեղ գլուխը միայն ուրիշներից լավ և արագ կերպով ըմբռնեց դրությունը, հասկացավ, վոր նման պայմաններում, բացի ամբողջ տնտեսական պրոցեսը պրոլետարիատի ձեռքն անցնելուց, այսինքն՝ սոցիալիստական հեղափոխությունից, ինչպես մենք այդ հասկանում ենք, ուրիշ վոչինչ չի կարող լինել և վոչինչ այլ բան չի կարելի հնարել, վոր մոմենտի ոբյեկտիվ պայմաններով թելադրվում ե հենց այս սոցիալիստական հեղափոխությունը։ Եվ Լենինն ստիպած եր պայքար

մղել այդ հեղափոխության համար վոչ այնքան վորևե մասսաների հետ (յերկար ժամանակից հետո մասսաներ գտնվեցին մեր կուլակային ծայրամասերում, ինչպես Դոնի շրջանում, Կուբանում, Սիբիրում և այլն), այլ ստիպված եր մղել ինտելիգենցիայի դեմ, վորն սկզբում արհամարհում եր Միլյուկովին, իսկ յերբ Միլյուկովը տապալվեց, նույն տեղում որորվում եր, ինքը չեր համարձակվում նստել, և ուրիշներին ել չեր թողնում։ Ամենաբնորոշ միջադեպն այն եր, յերբ մենշևիկները՝ մեծամասնություն ստանալով առաջին գումարման Կենտրոնական Գործադիր Կոմիտեյում, այնուամենայնիվ իշխանությունը չվերցրին, այլ կառավարությունը կազմվեց Կերենսկու գլխավորությամբ։ Այս փաստը, յերբ մարդիկ մեծամասնություն ունենալով չեյին համարձակվում իշխանությունը վերցնել, չափազանց բնորոշ և նշանակալից ե այս շրջանի համար։ Պարզ ե, վոր վորևե իշխանություն պետք ե գար, վորն իր վրա վերցներ ամբողջ պատասխանատվությունն այն բոլորի համար, ինչ կատարվում եր, վորը համարձակվեր այն, ինչ կատարվում ե յերկրում, այսինքն՝ սոցիալիստական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխություն անվանել։ Այդ իշխանությունն ել իրագործեց մեր կոմունիստական կուսակցությունը։

1917 ԹՎԻ ՄԱՐՏԻ 12-Ը[1]

«Առավոտվա ժամը $8^1/_2$-ն եր, նոր եյի վերկացել անկողնուց, յերբ լսեցի տարորինակ, յերկարատև աղմուկ, վոր կարծես թե Ալեքսանդրյան կամուրջից եր լսվում: Նայում եմ. սովորաբար այնքան աղմկալի կամուրջը դատարկ ե: Բայց գրեթե նույն պահին կամուրջի մուտքի մոտ, Նևայի հակառակ կողմից խառնիխուռն ամբոխ ե յերևում կարմիր դրոշակներով, իսկ մյուս կողմից նրա դեմ ե շտապում մի գունդ: Թվում ե, թե վորտեղ վոր ե, ընդհարում կպատահի: Սակայն բոլորովին էլ վոչ՝ յերկու մասսաները ձուլվում են: Բանակը յեղբայրանում ե խռովության հետ» [2]:

Այսպես Անտանտայի դեսպաններից մեկն ականատես եր «արևելյան ռազմաճակատի» վերջավորության սկզբին: Վոր արևելյան ռազմաճակատը վերջանում եր, կասկած չեր կարող լինել հենց առաջին իսկ որերից: 13-ին արդեն այն ամբոխում, վորը շրջապատում եր Պալեոլոգին և նրա անգլիացի կոլեգային՝ Բյուկենենին «Կեցցե Ֆրանսիան», «Կեցցե Անգլիան» բացականչություններին անհաճո կերպով «Կեցցե Ինտերնացիոնալը», «Կեցցե խաղաղությունը» բացականչություններն եյին խառնվում: Յերկու շաբաթ անց՝ ֆրանսիական դեսպանին այցելեց նրա վաղեմի ծանոթը Ա. Ն. Բենուան՝ հայտնի նկարիչ և գեղարվեստի պատմաբան, այցելեց դիտավորյալ կերպով, վորպեսզի համոզի նրան, վոր «պատերազմը չի կարող այլևս շարունակվել: Պետք ե, վորքան կարելի յե, շուտ հաշտություն կնքել»: Իսկ նորից մի յերկու շաբաթ անց, Պալեոլոգը կարող եր արդեն այդ իր աշխարհիկ ծանոթներից լսել: «Պատրանքներ մի ստեղծեք ձեզ համար», ասում եր նրան յերեկվա «պալատական կանանցից» մեկը. «չնայած բոլոր պաշտոնական ֆրազներին, պատերազմը մեռավ: Հրաշքը միայն կարող ե հարություն տալ»:

Մենք կտեսնենք, թե ինչպես Պալեոլոգը հույս ուներ գտնելու—և մի րոպեյով գտավ—այդ հրաշագործին: Սրա համար մի ամսից ավելի ժամանակ պահանջվեց: Առաջին իսկ որերին մի բան պարզ եր, վոր միապետությունը նույնքան հաստատապես մեռավ, վորքան և պատերազմը: Դա սատակող բուրժուական մամուլի հորինվածքներից մեկն ե, թե իբր թե՝ մարտի 12-ին ընկավ «ինքնակալությունը»: Գործը շատ ավելի հեռու յեր գնում: «Մեծ իշխան Միխայել Ալեքսանդրովիչը,—պատմում ե իր հիշողություններում Ռոձյանկոն,—կտրականապես հարց տվեց ինձ, թե կարող եմ յես յե-

[1] Ներկա հոդվածն արտատպում եմ «Պրավդա»-յի 1924 թ. մարտի 12-ի համարից, վորովհետև վերջին դասախոսության մեջ հաճախ հիշատակություններ եմ անում այս հոդվածից, իսկ թերթի հիշյալ համարը վորոնելն ընթերցողների համար դժվար կլինի: Մ. Պ.

[2] Պալեոլոգ. «Ցարական Ռուսաստանը պատերազմի ժամանակ»: 1917 թ. մարտի 12-ին գրված մասը:

րաշխիք տալ նրա կյանքի համար, յեթե նա ընդունի գահը, և յես պետք ե նրան բացասական պատասխան տայի... Հնարավորություն չկար անգամ նրան գաղտնի կերպով Պետրոգրադից դուրս բերելու. վոչ մի ավտոմոբիլ բաց չեյին թողնի քաղաքից, ինչպես և դուրս չեյին թողնի և վոչ մի գնացք: Լավագույն լուսաբանություն կարող ե տալ հետևյալ փաստը. յերբ Ա. Ի. Գուչկովը Շուլգինի հետ վերադարձավ Պսկովից՝ իր հետ բերելով Նիկոլայ II հրաժարման ակտը հոգուտ իր յեղբոր, Գուչկովն անմիջապես գնաց յերկաթուղային բանվորների արհեստանոցները, հավաքեց նրանց և կարդալով հրաժարման ակտը՝ բացականչեց. «Կեցցե Միխայիլ կայսրը»,—բայց անմիջապես ձերբակալվեց բանվորների կողմից, վորոնք սպառնում եյին գնդակահարել նրան, և Գուչկովին մեծ դժվարությամբ հաջողվեց ազատել մոտագա գնդի հերթապահ վաշտի ոգնությամբ»: Սրանից յերկու որ հետո Պալեոլոգը Միլյուկովի մոտ եր, վորին նա գտավ «տասը տարով ծերացած» կադետների լիդերը համոզում եր ֆրանսիական դեսպանին, վոր վոչ նա, վոչ ել նրա բարեկամները բոլորովին ել չեյին ցանկանում այդ հեղափոխությունը: «Յես նույնիսկ չեյի նախատեսնում այն», ասաց Միլյուկովը (թանգարժեք խոստովանություն): «Բայց ժողովրդական կրքերն այնպես բորբոքվեցին (!) և դրությունն այնքան սարսափելի դժվար ե, վոր ստիպված են անմիջապես մեծ զիջումներ անել ժողովրդական խղճին»: Այս զիջումների շարքում առաջին տեղն եր բռնում ցարական մինիստրների և գեներալների ձերբակալությունը, իսկ հետո՝ «բոլոր կայսերական խորհրդանշանների վոչնչացումը»:

«Ուրեմն Ռոմանովների տոհմը կործանվե՞ց», հարցրեց Պալեոլոգը:

«Փաստորեն՝ այո, իրավաբանորեն՝ դեռ վոչ: Հիմնադիր ժողովը միայն իրավունք ունի փոխելու ռուսական սահմանադրությունը»:

Միլյուկովն այստեղ և յեթ հայտնեց, թե նա հույս ունի, վոր այդ հիմնադիր ժողովը գուցե կհաջողվի դեռ հետաձգել: «Բայց,—ավելացրեց նա,—սոցիալիստներն անմիջական ընտրություններ են պահանջում: Իսկ նրանք այնքա՜ն ուժեղ են, և դրությունն այնքա՜ն դժվար ե, այնքա՜ն դժվար» [1]:

Յեթե միայն նա գիտենար, վոր «սոցիալիստները» վոչնչից այնքան չեյին վախենում այդ րոպեյին, վորքան նրանից, վոր Միլյուկովը կարող ե իշխանությունից հրաժարվել: «Տրեպովին և Ռասպուտինին կարող են և պետք ե փոխարինեն միայն «պրոգրեսիվ բլոկի» ղեկավարները», գրում եր (դեռևս 1919 թվին) Ն. Ն. Սուխանովը: «Այլապես հեղաշրջումը չի հաջողվի և հեղափոխությունը կկործանվի»:

Ակներև ե, վոր «սոցիալիստներն» ուժեղ եյին վոչ թե իրենց, այլ ինչ վոր ոտար ուժով: Թե ում, դրա բավարար պատասխանը տալիս ե արդեն Գուչկովի հետ պատահած դեպքը: Տեղում քիչ թե շատ դիտող մարդու՝ նույնիսկ այլ յերկրացու համար դա բառացիորեն ակներև եր առաջին իսկ որվանից: Արդեն մարտի 12-ին Պալեոլոգը գրեց իր հուշատետրում, վոր «հանրապետության գաղափարը ժողովրդականություն ե վայելում Պետրոգրադի և Մոսկվայի բանվորական շրջաններում»: Յեթե այդ գաղափարը հաղթեց, մենք պարտական ենք դրանով վոչ թե, իհարկե, Պետրոգրադի առաջին Գործադիր Կոմիտեյի յերկչոտ «սոցիալիստներին», այլ նրանց, ովքեր «կեց-

[1] Պալեոլոգի հիշատակարանը՝ 17-ին մարտի:

ցե սահմանադրական ցարը» բացականչություններին պատասխանում եյին հազարավոր ձայներով՝ «Պատին դեմ տալ նրան»։

Միապետությանը մահացու հարված հասցրեց այն մասսան, վորին միապետությունը գնդակահարում եր 1905 թվի հունվարի 9-ին։ «Արյունոտ» կիրակին հասարակ սխալմունք չեր. դա ցարիզմի հուսահատ փորձն եր գնդացիրներով և հրացաններով գնդակահարել իր մահը։ Դատարկ զբաղմունք ե,—մահից գնդակահարություններով չես ազատվի։

Այժմ, հետևելով պատմական դեպքերի վազքին 20 տարվա ընթացքում, հեշտությամբ շոշափում ենք պատմության կմախքը։ Բանվոր դասակարգը գոյություն ուներ Ռուսաստանում հարյուր տարի։ Միշտ ել նրան արհամարհում եր ցարիզմը, և միշտ ել վախենում եր նրանից։ Սակայն կար մի խումբ, վորի ձեռքը ճակատագիրը դրել եր և՛ ցարիզմի, և՛ բուրժուազիայի գերեզմանափորի քլունգը։ Յեվ կարծես դիտավորյալ կերպով այդ խումբն ապրում և աճում եր ցարական պալատի հենց շեմքի մոտ։

Վաղուց սահմանված փաստ ե, վոր հեղափոխական բանվորական մասսայի առաջին շարքերում գնում եյին նախ և առաջ մետաղագործները և ապա խոշորագույն ձեռնարկությունների բանվորները։ Մինչդեռ տեկստիլ բանվորները 708 հազար բանվորից 1905 թվին 1296 հազար գործադուլավորներ տվին, մետաղագործները 252 հազար բանվորներից 811 հազար գործադուլավոր տվին. յուրաքանչյուր մետաղագործ այդ տարին $3^1/_2$ անգամ գործադուլ արավ, իսկ յուրաքանչյուր տեկստիլ բանվոր 2 անգամ ել գործադուլ չարավ։ Միևնույն ժամանակ 100-ից վոչ ավել բանվոր ունեցող ձեռնարկությունները տվին 109% գործադուլավորներ, իսկ 1000-ից ավելի բանվոր ունեցող ձեռնարկությունները՝ 232%—գրեթե $2^1/_2$ անգամ ավելի։

Առաջին և յերկրորդ հեղափոխությունների միջև ընկած ժամանակամիջոցն աչքի յե ընկնում ռուսական մետաղագործության արագ աճումով (171 մլ. փութ 1908 թվին և 282 մլ. փ. 1913 թվին), հենց Պետերբուրգի մարզի ձեռնարկությունների արագ խոշորացումով (1000-ից ավելի բանվորներ ունեցող ձեռնարկությունների թիվը 1910—14 թ. թ. ընթացքում աճել ե 40%-ով) և քաղաքական գործադուլային շարժման հսկայական աճումով. 1905 թվին 1 մլ. 800 հազար քաղաքական գործադուլավորներին ընկավ դեռևս միլիոնից ավելի տնտեսական գործադուլավոր։ Իսկ 1914 թ. վոչ լրիվ տարվա ընթացքում վերջիններիս թիվը ընդամենը 278 հազար եր, իսկ առաջինները՝ քաղաքական գործադուլավորները մեկ միլիոնից ավելի եյին (1.059.111)։ 1905 թվին մեկ «տնտեսական» գործադուլավորին 1,8 քաղաքական եր ընկնում, իսկ 1914 թվին մեկ «եկոնոմիստին» 3-ից ավելի «պոլիտիկ» եր ընկնում։

Պատերազմը շարժումն ավելի ու ավելի հեռու յեր քշում նույն ճանապարհով։ 1914 թվին Լենինգրադում հաշվում եյին 208.000 բանվորներ, 1915 թվի սեպտեմբերին՝ արդեն 248.000, իսկ 1916 թվի հոկտեմբերին՝ մինչև 400.000 մարդ։ Նրանցից 1000-ից ավելի բանվորներ ունեցող ձեռնարկություններում—76,7%։ Յեվ այդ բոլոր բանվորների 62%-ը մետաղագործներ եյին։

Այսպես անշեղորեն, ավելի և ավելի արագ աճում եր այն յերկաթե բռունցքը, վորը պետք ե իջներ «Ռոմանովների» գլխին։ Դժվար ե գտնել պատմական դիալեկտիկայի ավելի լավ նմուշ. կալվածատիրական ագարակը

կյանքի յե կոչում յերկաթուղին՝ ավելի ձեռնտու լայն յեվրոպական շուկային հասնելու համար. յերկաթուղին մետաղագործությունն ե ծնեցնում. մետաղագործությունն ստեղծում ե պրոլետարիատի ամենահեղափոխական զորամասը, վորը թաղում ե ամբողջ սիստեմի պապի պապին՝ կալվածատիրական ագարակը։ Վոր «Ռոմանովների» վերջը խոշոր հողատիրության վերջն ե նշանակում Ռուսաստանում, այդ առաջին րոպեյից չհասկացան, կարծեմ, մենակ եսերները։ «Շահագրգռված անձինք» այդ սքանչելիորեն հասկանում եյին։ Մարտի 20-ին արդեն Պալեոլոգն ամենաաշխարհիկ շրջանում, վորը միայն կարելի յեր գտնել «Պետրոգրադում» ամենուրեք հանդիպում եր «միայն անհանգստություն. նույն ահն ե բոլոր մտքերում՝ հողերի բաժանումը»։

«Այս անգամ ել չես ծլկվի», ասում եր իշխան Բ.-ին գեներալ Ս.-ն և նրանց շուրջը ծվծվացող աշխարհիկ գեղեցկուհիները։ «Իսկ ինչ պիտի անենք մենք առանց մեր կալվածքների յեկամուտների»։

Յեվ միայն նոր այցելուն՝ ավագ հեծելազորի սպան «մեծ կարմիր ժապավենը կրծքին» վորոշ չափով ցրեց խուճապը՝ հիշեցնելով, վոր նախ կան Ռոմանովների տան հողերը, իսկ հետո յեկեղեցիների և վանքերի հողերը. դեռ այժմս նրանք բավական են մուժիկի բողազը խծկելու համար։ Այս նույնքան հավատարիմ, վորքան և բարեպաշտ դատողությունը հանգստացրեց ազնիվ կամպանիային։

Մինչ այդ, նրանք արդեն լիովին յուրացրել եյին դեմոկրատիկ գաղափարախոսությունը, վորն արտահայտվում եր վոչ միայն կարմիր ժապավեններով։ Կոմս Կուտուզովը ճշտությամբ հաշվեց պրոլետարիատի քանակական հարաբերությունը Ռուսաստանի ազգաբնակության վոչ պրոլետարական ելեմենտներին—և չափազանց մխիթարական յեզրակացությունների հանգավ. 178 միլիոն գյուղացիների, կազակների, վաճառականների, չինովնիկների և ազնվականների հանդեպ կոմսը հաշվեց ընդամենը 1.200.000 բանվոր։ «Այդ մեկ միլիոն յերկու հարյուր հազար բանվորները հո չեն կարող մշտապես մեր տերերը լինել»։

Կոմսն զբաղվում եր այս հետազոտություններով դեռևս մարտի 18-ին։ Ինչպես տեսնում ենք, պրոլետարիատի դիկտատուրան մեզ մոտ ավելի հասակով ե, կան թե սովորաբար կարծում են—նրանց, ում գլխին նա իջավ, նրանք ել կարող են հավատալ։ Իրենց կաշվի վրա եյին զգում։ Յեվ վորոշ դասակարգի դիկտատուրային բնականաբար հետևում եր վորոշ կուսակցության դիկտատուրան։

Չորեքշաբթի, ապրիլի 18-ին Պալեոլոգը հանդիպեց Միլյուկովին՝ արդեն վոչ թե ծերացած, այլ 10 տարով ջահելացած։ Պայծառ դեմքով նա հայտնեց ֆրանսիական դեսպանին, վոր իբր թե, «յերեկ խորհրդի առաջ Լենինը կատարյալ պարտություն կրեց։ Նա պաշտպանում եր պացիֆիստական լոզունգներն այնպիսի չափազանցություններով, այնպիսի անամոթությամբ, այնպես անշնորհք կերպով, վոր ստիպված եր լռել և շվոցների տակ հեռացավ... Նա այլևս չի բարձրանա»։

«Յես պատասխանեցի ռուսերեն. «Տա աստված»։

«Բայց յես վախենում եմ,—ավելացնում ե Պալեոլոգը,—չի՞ խաբում արդյոք Միլյուկովին նրա լավատեսությունը։ Լենինի Ռուսաստան գալն ինձ պատկերացվում ե, վորպես ամենավտանգավոր փորձություն, վորին միայն կարող եր յենթարկվել ռուսական հեղափոխությունը»։

Լրջմիտ ֆրանսիացու վախը հիմք ուներ: Արդեն ապրիլի 21-ին նա ստիպված էր գրել. «Երբ անցյալ օրը Միլյուկովն ինձ համոզում էր, որ Լենինն անդառնալիորեն վարկաբեկեց իրեն խորհրդի առաջ իր չափազանցրած պարտությունով, նա ավելորդ անգամ իր լավատեսության զոհ դարձավ,—ընդհակառակը, Լենինի հեղինակությունը շատ աճեց վերջին օրերի ընթացքում: Ինչում չպետք է կասկածել, դա այն է, վոր նրան արդեն հաջողվեց իր շուրջն ու իր հրամանատարության տակ համախմբել բոլոր ամենախիզախ հեղափոխականներին. և նա հիմա ահեղ առաջնորդ դարձավ»:

Պալեոլոգն ստիպված էր շուտով Ռուսաստանից հեռանալ—Անտանտային հասած դժբախտությանն օգնելու յեկած ֆրանսիական «սոցիալիստները» (համենայն դեպս, ավելի քաջերը, քան թե նրանց ռուսաստանյան յեղբայրները) Պետրոգրադի սալոնների մշտական հաճախորդին չափազանց հնացած տիպ գտան հանրապետական Ֆրանսիան հանրապետական Ռուսաստանում ներկայացնելու համար: Այսպիսով նա չկարողացավ իր հուշատետրում գրել «խիզախ հեղափոխականների» իսկական բնութագրությունը: Նրանք հավաքվեցին Պիտերում մայիսի 30-ին և՝ սա առաջին ժողովն է Ռուսաստանում՝ ձայների ճնշող մեծամասնությամբ (335—421-ից) Լենինի և Զինովյևի բանաձևն ընդունեցին: Դա ֆաբրգործարկոմների առաջին կոնֆերանսն էր: Չնայած աջից և ձախից լսվող շվոցին ու հրհռոցին, պրոլետարիատը հաստատ քայլերով գնում էր դեպի իր առաջնորդը:

Հեղափոխությունը կանգնեցնել անկարելի էր, բայց կարելի էր վորոշ խոչընդոտներ հարուցել: Պալեոլոգը հպարտությամբ կարող էր նշել, վոր ամենից պինդը այնուամենայնիվ նա կարողացավ գտնել, վորքան էլ վատ գնահատեցին նրան Ալբեր Տոման ու իր միաբանները: Արդեն մարտի 15-ին, Նիկոլայի հրաժարման օրը նա գրում էր «յերիտասարդ պատգամավոր Կերենսկու՝ նոր ռեժիմի ամենաակտիվ և վճռական կազմակերպչի մասին: Նա մեծ ազդեցություն ունի Խորհրդի վրա: Մենք պետք է փորձենք գրավել այս մարդուն մեր գործի համար: Միայն նա կարող է համոզել Խորհրդին, թե ինչպես անհրաժեշտ է շարունակել պատերազմը և դաշնակցությանը (Անտանտային.—Մ. Պ.) աջակցել: Այդ պատճառով յես կհեռագրեմ Բրիանին (այն ժամանակվա պրեմյերը.— Մ. Պ.), վորպեսզի ներշնչեմ նրան այն միտքը, վոր անհրաժեշտ է ֆրանսիացի սոցիալիստների անմիջական կոչը Կերենսկու միջոցով ռուս սոցիալիստներին՝ կոչ անելով նրանց հայրենասիրությանը»:

«Կերենշչինան», ինչպես տեսնում եք, ավելի դժվար չէր նախագուշակել և հասկանալ, քան թե պրոլետարիատի դիկտատուրան, և հողի սոցիալիզացիան—և Լենինի իշխանության գլուխ անցնելը: Պետք էր միայն նայել վոչ թե բուրժուական լրագրներով խաբված քաղքենու աչքերով, այլ այնպիսի մի մարդու աչքերով, վորի պրոֆեսիան ուրիշներին խաբելն է:

Պրոլետարիատի դիկտատուրան «դե-ֆակտո» առկա չէր արդեն 1917 թ. մարտի 12 ին: Նրան անհրաժեշտ էր 8 ամիս, վորպեսզի իր համար «դե-յուրեն» նվաճի: Բայց դրա փոխարեն նա ինքն ստեղծեց իր այդ «դե-յուրեն»՝ առանց կադետական դասագրքերին դիմելու:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Առաջաբան 3

Առաջին դասախոսություն.—*Դասընթացքի պլանը: Արդիականություն և պատմություն: Մատերիալիստական մեթոդն ու արդիականությունը: Պատմական մատերիալիզմի հաջողությունները մեր օրերում: Ռուսական հեղափոխական շարժման հիմնական առանցքը. ինչպե՞ս է ծագել մեզանում ճորտատիրական իրավունքը: Գյուղացու պայքարն ինքնուրույն տնտեսության համար: Այդ պայքարի նշանակությունը մեր ժամանակի համար: Ի՞նչպես է հասկանում բուրժուազիան ռուսական հեղափոխության շարժումը: Այդ շարժման իրական իմաստը, վորպես առևտրական և արդյունաբերական կապիտալի պայքարի արտացոլում: Ճորտատիրական տնտեսությունը և ինքնակալությունը, վորպես առևտրական կապիտալիզմի շրջանի յերևույթ. յե՞րբ և ինչո՞ւ նրանք ավելորդ դարձան: «Գյուղացիների ազատագրության» իրական իմաստը: Դեկաբրիստների հեղափոխությունը վորպես պայքարի առաջին միջադեպը: Հացի արտածումը և ճորտատիրական իրավունքը: Յակուշկինի նախագիծը:* . . . . 5—21

Երկրորդ դասախոսություն.—*Ընկ. Մ. Ս. Ոլմինսկին և դեկաբրիստների հոբելյանը: Սպառվա՞ծ է արդյոք «դեկաբրիզմը» նրանով, ինչ տեղի ունեցավ 1825 թվի դեկտեմբերի 14-ին: Դեկաբրիստների հարավային խմբերը. «Միացյալ սլավոնները», նրանց դեմոկրատիզմը, նրանց աթեիզմը, նրանց նշանակությունը զինված ապստամբության մեջ: Պեստելը և հողի ազգայնացումը: Պեստելն ու կապիտալիզմը, Պեստելն ու ազնվականությունը: Վո՞ր դասակարգի շահերն էր ներկայացնում Պեստելը: Նրա քաղաքական ծրագիրը: Հյուսիսային ընկերությունը. նրա ծրագիրը. Մուրավյովի սահմանադրությունը: Նրա տակտիկան. Տրուբեցկոյի պլանը: Դեկտեմբերի 14-ի ցույցը և ժողովրդական մասսան. դեկտեմբերի 14-ի իրական իմաստը* . . . . 22—36

Երրորդ դասախոսություն.—*Հեղափոխական շարժումը դեկաբրիստներից հետո. տերրորն ու պրոպագանդան, այս ձևերի սաղմերը «դեկաբրիզմի» մեջ: XIX դարում Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքի սովորական հասկացողությունը, ինչ*

էր իրականում: Բանվորական հարցը և Նիկոլայ I. սոցիալիզմն ու «գյուղացիների ազատագրումը»: Բանվորական հարցը և հեղափոխական շարժումը. ռուսական սոցիալիզմի արմատները և նրա նախնական բնույթը: Ի՞նչն էր հեղափոխական շարժման օբյեկտիվ հիմքը և ինչպես էին պատկերացնում այդ այն ժամանակվա հեղափոխականները: Չերնիշևսկին և «կալվածատիրական գյուղացիներին» թռուցիկը. Չերնիշևսկու տնտեսական խորաթափանցությունը և նրա տակտիկայի զգուշությունը. Չերնիշևսկին, «Վելիկոռուսը» և մենշևիզմի սաղմերը: Բայլշևիկյան տրամադրությունների սաղմերը. «Յերիտասարդ Ռուսաստանը»: Մարքսիզմի սաղմերը. Տկաչյով, բակունինականներ, Նեչայեվ և Ծածկված հեղափոխության առաջին պլանը: Դեպի ժողովուրդը շարժման լոզունգը, նրա իրական ծագումը և այդ շարժման իրական նշանակությունը. Վ. Ն. Ֆիգների և Դեյչի հիշողությունները. 70-ական թվականների «բայլշևիկներն» ու «մենշևիկները» . . . 37—56

Չորրորդ դասախոսություն.—Խաբված գյուղացիների խռովության խաբված հույսերը. ինչու գյուղացիությունն անտարբեր էր դեպի սոցիալիստական պրոպագանդան: Կուլակը, նրա տնտեսական դրությունը բարենորոգումից հետո, նրա քաղաքական դեմքն ըստ Ենգելգարդտի: Գյուղական չքավորությունը ըստ Վ. Ն. Ֆիգների նկարագրության. պրոլետարի հոգեբանությունը և պռուպերի հոգեբանությունը: 70-ական թվականների բանվորական շարժումը և հեղափոխական կազմակերպությունները: «Ռուս բանվորների Հյուսիսային միությունը», Ստեփան Խալտուրինը. «Միության» խնդիրները: Զասլավսկին և Հարավ-ռուսական բանվորական միությունը. յերկու միությունների կենդանի կապը: Մարքսիստական աշխարհայացքի սաղմերը 70-ական թվականներին. Պլեխանովը և նրա «Հասարակության տնտեսական զարգացման օրենքը» հոդվածը: Շարժման տերրորիստական թեք. կողմորոշում բուրժուազիային: Ինչումն է տերրորի իրական իմաստն ու իրական նշանակությունը: Ի՞նչպես էր նա իրականում զարգանում: «Земля и Воля» և «Народная Воля»: Տերրորն ու բուրժուազիան. Նարոդովոլցիների միակ խնդիրն ըստ Ժելյաբովի: . . . . 57—76

Հինգերորդ դասախոսություն.—«Նարոդնայա Վոլյա»-ի մասսայական կազմակերպությունների փորձերը. ռազմական կազմակերպություն: Ժելյաբովի բանվորական ծրագիրը. նրա մարդարեյական գծերը: «Աշխատանքի ազատագրման» խմբակի ծրագրները, նրա վերաբերմունքը դեպի գյուղացիությունը: Բանվորական շարժման արտաքին պատկերը. Կ. Սիգորովի ազլուսակները. անհրաժեշտ ուղղումները: Ռուսական հեղափոխական շարժման յերեք շրջանները. իդեոլոգիայի նշանակությունը և ինտելիգենցիայի ազդեցությունը: Տարերային հեղափոխականությունը և բանվոր դասակարգի հեղափոխական իդեոլոգիան: Ռուսական պրոլետարիատի գյուղացիական արմատները. 80—90-ական թվականների ագրարային ճգնաժամը և նրա նշանակությունը: Գյուղական մանր բուրժուազիան և նրա տեղը հեղափոխության մեջ: . . . . . 77—94

Վեցերորդ դասախոսություն.—Բուրժուազիայի քաղաքականությունը և նրա տեղը հեղափոխական շարժման մեջ: Կապիտալիստական զարգացման ի՞նչ շրջան էր ապրում Ռուսաստանը հեղափոխության ժամանակ: Նիկոլայ II իմպերիալիստական ձգտումները: Իմպերիալիզմի բնորոշումն ըստ Հիլֆերդինգի և ըստ Լենինի. Ռուսաստանում սաղմնավորվող մենաշնորհված կապիտալիզմի օբյեկտիվ հատկանիշները 1905 թվի նախօրյակին, մաքսերը, տերրիտորիալ ախորժակները: Խոշոր բուրժուազիայի իդեոլոգիան իմպերիալիստական շրջանում. արդյունաբերական կապիտալը և ինքնակալությունը. Վիտտեյի շրջանը. վոսկի վալյուտան: Առևտրական կապիտալը, ակտիվ բալանսը և հացի գները: Առևտրական կապիտալի ռեանշը և հեռավոր-արևելյան քաղաքականությունը: Առևտրական կապիտալիզմի ռեակցիան ներքին քաղաքականության մեջ. Պլեհն և զուբատովշչինան: Զուբատովշչինան և արդյունաբերական կապիտալիզմը. «Ոսվոբոժդենիյե»-ն և «Ազատագրության Միությունը»․ կադետները և մասսայական շարժումը: . . . . 95—115

Յոթերորդ դասախոսություն.—Բայլշևիզմը և արդյունաբերական կապիտալի անհաջողությունը: Կադետական առասպելը ստոլիպինականության մասին, և ինչու էյինք մենք նրան հավատում: Առասպելը և իրականությունը. ստոլիպինականության իսկական իմաստը: Ստոլիպինի ագրարային օրենսդրությունը և արդյունաբերական կապիտալիզմը: Համայնքի քայքայումը: Հողատիրության անհատականացումը և պրոլետարիատի աճումը: Գյուղական մանր բուրժուազիայի աճումը: Պատասխաններ հարցերին. ինչպես պետք է հասկանալ բանվոր դասակարգի տարերային եկոնոմիզմը 1905 թվին. ինչ բան է «բուրժուազիան» և «սոցիալիստական» հեղափոխությունը. ինչպես կարող էր առևտրական-կապիտալը հաղթահարել արդյունաբերականին: Ի՞նչ էր ներկայացնում իրենից օբյեկտիվորեն կադետական կուսակցությունը: Առևտրական կապիտալի տիրապետության տնտեսական բազան: Ստոլիպինականության չնախատեսնված հետևանքները. հողային տիրապետության քայքայումը, կուլակային «լիբերալիզմի» և կուլակային շերտի աճումը, վորպես կապիտալիստական ուժի: 116—132

Ութերորդ դասախոսություն.—Ստոլիպինականության ազդեցությունն արդյունաբերական կապիտալիզմի զարգացման վրա. 1909—1913թ. թ. արդյունաբերական վերելքը: Տեղական կուտակման աճումը և ռուսական բուրժուազիայի քաղաքականապես խիզախանալը: Դրամի հակառակ կողմը. ներքին շուկայի նեղությունը. ակտիվ բալանսի անկայունությունը և նրա պատճառները. Ռուսաստանի և Գերմանիայի հացի մրցումը. «Նեղուցները»: Ռուսական իմպե-

իտալիզմի պատմությունը ճապոնական պատերազմից հետո. ռուս-ճապոնական համաձայնությունը: Ռուսաստանը, Անգլիան և Գերմանիան Մերձավոր Արևելքում: Նեղուցների համար կամպանիայի նախապատրաստությունը. 1908 թվի խորհրդակցությունը, սերբ-բուլղարական դաշնագիրը և 1912 թվի Բալկանյան պատերազմը, կոնֆլիկտ Լիման-ֆոն-Սանդերսի համար: Ռուս-անգլիական ծովային կոնվենցիան 1914 թ. Ավստրիայի բաժանման նախագծերը. երցհերցոգ Ֆերդինանդի սպանությունը և ռուսական գլխավոր շտաբի դերն այս գործում. ո՞վ էր 1914 թվի պատերազմի գլխավոր հանցավորը: . . . . *133—153*

Իններորդ դասախոսություն. —*Իմպերիալիստական պատերազմը և ռուսական բուրժուազիան. ժամուլի դերը. չերիտասարդության շովինիստական վոգևորությունը: Պատերազմը և արդյունաբերական կապիտալիզմը: Արկային ճգնաժամը և «Պաշտպանության հատուկ խորհրդակցությունը». բուրժուազիան թիկունքի տեր է և դառնում: Բանվորների հետ զոդման փորձերը. բանվորական շարժումը պատերազմից առաջ. ռազմա-արդյունաբերական կոմիտեները: Ռազմական եկոնոմիկայի հակառակ կողմը. տրանսպորտի քայքայումը: Գների աճումը և մասսաների տրամադրությունը: Հեղափոխական ագիտացիան և մասսայական շարժումը. բանվորները և զորքը: Պիտերի պրոլետարիատի տնտեսական բնութագրությունը փետրվարյան հեղափոխությունից առաջ. մանր բուրժուազիայի տրամադրությունները:* . . . . *154—167*

Տասներորդ դասախոսություն.— *Կառավարող դասակարգերի պարանքը 1916—1917 թ. թ. ձմռանը: Ռասպուտինն ու պրոգրեսիվ բլոկը. ինչումն է կոնֆլիկտի եյությունը: Արդյունաբերական և առևտրական կապիտալների դերերի փոփոխությունը՝ կապված պատերազմական անհաջողությունների հետ: Գաղտնի բանակցությունները Գերմանիայի հետ: Դավադրությունը և հակադավադրությունը. վերևում առաջացած խառնակչության նշանակությունը հեղափոխության հաջողության համար: Ի՞նչպես էր փորձում պատկերացնել փետրվարյան հեղափոխությունը բուրժուազիան և ի՞նչ էր նա իրականում: Հեղափոխությունը և պատերազմը. պրոլետարական մասսաների տրամադրությունը. տրամադրությունը ռազմաճակատում: Ժամանակավոր կառավարության փորձը վերանորոգելու պատերազմը: Պատերազմը և բոլշևիզմը: Ինչու ռուսական հեղափոխությունը պետք է սոցիալիստական դառնար:* . . . . *168—189*

«1917 թվի մարտի 12-ը»: *190*

ՀՍՍՌ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ССРА
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ